

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ  
ԳԻՐՔ 2**

**ԵՐԵՎԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**  
**2012**

ՀՏԴ 301:330(479.25):06  
ԳՄԴ 60.5+65.9(2Հ)  
Ս 783

Երաշխավորված է հրատարակության  
ՀՀ ԳԱԱ Ս. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհուրդ՝**

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
տնտեսագիտության թեկնածու  
տնտեսագիտության թեկնածու

**Յուրի Սուվարյան  
Վարդան Բոստանջյան  
Բենիամին Եղիազարյան  
Ռոբերտ Սարինյան  
Վիլեն Խաչատրյան  
Ալվարդ Զատիկյան  
Հայկ Մարկոսյան**

**Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր**

**ՎԱԿԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Ս 783

Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները  
Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի  
նյութեր) / ՀՀ ԳԱԱ Ս. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտ; Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ  
«Գիտություն» հրատ., 2012, գիրք 2.- 328 էջ:

Ժողովածուում ընդգրկվել են ՀՀ ԳԱԱ Ս. Քոթանյանի անվան տնտեսագի-  
տության ինստիտուտում անցկացված «Սոցիալ-տնտեսական զարգացման  
արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով հանրապե-  
տական գիտաժողովի մասնակիցների զեկուցումներն ու հոդվածները:

ՀՏԴ 301:330(479.25):06  
ԳՄԴ 60.5+65.9(2Հ)

ISBN 978-5-8080-0983-7

© ՀՀ ԳԱԱ Ս. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2012

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

<b>Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ք. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ</b>	Հարկային բեռի մակրոտնտեսական գնահատման մեթոդները Հայաստանում և արտերկրում .....	6
<b>Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ</b>	Դանդաղող տնտեսական աճի և աճող պարտքերի հիմնախնդիրները համաշխարհային տնտեսության մեջ .....	11
<b>Ա. ԱՆԱՆՅԱՆ, Մ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ</b>	Սթրես-թեստերի իրականացումը ոչ կյանքի ապահովագրական ընկերությունների համար .....	18
<b>Ն. ԱՓՅԱՆ</b>	Հարկային եկամուտները ՀՀ համայնքների բյուջեներում .....	23
<b>Ա. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ, Ք. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ</b>	Ծրագրային բյուջետավորման մոդելի ներդրման հարցի շուրջ .....	29
<b>Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ</b>	Սպառողական վարկավորման դեպքում վարկային ռիսկի վրա ազդող հիմնական գործոնները և դրանց հիման վրա սքորինգային համակարգի ձևավորումը ՀՀ-ում .....	33
<b>Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ</b>	ՀՀ-ում սպառողական վարկային պորթֆելի վարկային ռիսկի գնահատման մոդելը .....	39
<b>Ն. ԴԵՐՁՅԱՆ</b>	Կենտրոնական բանկերի դրամավարկային քաղաքականությունը՝ ֆինանսական ճգնաժամերի առաջացման պատճառ .....	42
<b>Ա. ԹԱՎԱԴՅԱՆ</b>	Գնաճի արդյունավետ կառավարման փուլերը .....	50
<b>Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ</b>	Համաշխարհային ֆինանսական համակարգի մարտահրավերները. իսլամական ֆինանսական համակարգի և հետճգնաժամային զարգացումների համատեքստում .....	56
<b>Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ</b>	Բյուջետային ծախսերի տեսական հիմքերը և դրանք պայմանավորող հիմնական գործոնները .....	68
<b>Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</b>	ՀՀ հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության գնահատման հիմնախնդիրները .....	72
<b>Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</b>	Մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը երկրի վճարային հաշվեկշռի վրա .....	80
<b>Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</b>	Արտաքին առևտրի պետական կարգավորման լծակները .....	83
<b>Թ. ՄԱՆՈՒԿՅԱՆ</b>	Բանկերի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա .....	89
<b>Թ. ՄԱՆՈՒԿՅԱՆ</b>	ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումների ընդհանուր բնութագիրը .....	93
<b>Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ</b>	Հարկային բեռի գնահատման անհրաժեշտությունը և հաշվարկման մեթոդական մոտեցումները .....	98
<b>Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ</b>	ՀՀ հարկային համակարգի արդյունավետության գնահատականը .....	101
<b>Վ. ԶԻՆԱՐՅԱՆ</b>	Պետական պարտքը և դրա կառավարման հիմնախնդիրները .....	106
<b>Ա. ՍԱՅԱԴՅԱՆ</b>	Հիփոթեքային վարկավորման ռիսկերը և դրանց նվազեցման ուղիները .....	110
<b>Ա. ՍԱՅԱԴՅԱՆ</b>	Հիփոթեքով գնվող բնակարանի զինը .....	114
<b>Դ. ՍԱՐԳՍՅԱՆ</b>	ՀՀ հարկային համակարգի արդյունավետության գնահատականը .....	117
<b>Դ. ՍԱՐԳՍՅԱՆ</b>	ՀՀ հարկային համակարգի վարչարարական կարողությունների ավելացման հիմնախնդիրները .....	123
<b>Ա. ՍԱՖԱՐՅԱՆ</b>	Իրացվելիության ռիսկի վերլուծության մեթոդաբանական առանձնահատկությունները ՀՀ բանկերում .....	129
<b>Ա. ՍԱՖԱՐՅԱՆ</b>	Իրացվելիության ռիսկի կառավարումը առևտրային բանկերում .....	134

<b>Գ. ՍԻՍՈՆՅԱՆ</b>	Ներքին աուդիտի դերը, լիազորությունները և պարտականությունները ՀՀ առևտրային բանկերում .....	140
<b>Գ. ՍԻՍՈՆՅԱՆ</b>	Առևտրային բանկերում ներքին աուդիտի արդյունավետությունը բարձրացնելու հետ կապված որոշ խնդիրներ .....	150
<b>И. АКОПЯН</b>	Проблемы обеспечения социальной направленности налоговой политики в Армении .....	156

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

<b>Հ. ԱՎԱԳՅԱՆ</b>	ՀՀ հանքավայրերի պիրիտը (FeS2) որպես օգտակար հանածո .....	162
<b>Հ. ԱՎԱԳՅԱՆ</b>	Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը .....	167
<b>Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ</b>	ՓՄՁ-ների ֆինանսավորման և ֆինանսատնտեսական ճգնաժամի փոխկապվածության հիմնահարցերի շուրջ .....	180
<b>Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ</b>	Առողջապահության տնտեսական արդյունավետության գնահատումը .....	184
<b>Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ</b>	Դիտողություններ առողջապահության ոլորտի վերաբերյալ .....	188
<b>Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ</b>	Արտահանման ռազմավարության մշակման արդի մեթոդաբանական հիմնախնդիրները՝ արտաքին միջավայրի գործոնների համատեքստում .....	191
<b>Թ. ԹՈՐՈՍՅԱՆ, Լ. ՍԱՐԳՍՅԱՆ</b>	Արտահանման խրախուսման միջազգային փորձի կիրառելիության հնարավորությունները ՀՀ-ում .....	197
<b>Շ. ԿՈՍՏԱՆՅԱՆ, Լ. ԱԶԱՏՅԱՆ</b>	Տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության հիմնահարցերը և կարգավորման ուղիները .....	205
<b>Շ. ԿՈՍՏԱՆՅԱՆ, Ռ. ԱԼՈՅԱՆ</b>	ՀՀ գյուղացիական տնտեսություններում վարելահողերի նպատակային չօգտագործման հիմնական գործոնների բացահայտման ուսումնասիրությունը և լուծման ուղիները .....	210
<b>Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</b>	Տնտեսական ճգնաժամի ազդեցությունն արտաքին առևտրի ոլորտում տարածաշրջանային զարգացումների վրա .....	216
<b>Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ</b>	ՀՀ գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության զարգացման և բարելավման հիմնական ուղղությունները .....	222
<b>Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ</b>	Ապրանքային նշանները տեխնոլոգիաների միջազգային փոխանցման համակարգում .....	228
<b>Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Հ. ՋՈՒՀԱՐՅԱՆ</b>	ՀՀ նորարարական ոլորտի կերպափոխումը միջազգային համադրումների համատեքստում .....	239
<b>Ս. ՄԿՐՏՉՅԱՆ</b>	ՀՀ կայուն զարգացման գերակա հենքային ինդիկատորները մակրոտնտեսական և լեռնամետալուրգիական արդյունաբերության մակարդակներով .....	246
<b>А. ЗАТИКЯН</b>	Особенности развития малого и среднего бизнеса в инновационной системе РА .....	253
<b>Т. ОГАНЯН</b>	Стратегическое планирование инновационных процессов промышленных предприятий Армении .....	259
<b>И. ТАРАНЯН</b>	Совершенствование системы финансирования дорожного хозяйства в РА ....	265

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

<b>Դ. ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ</b>	Համայնքների համաչափ զարգացումը որպես երկրի տնտեսության զարգացման կարևոր նախապայման .....	274
<b>Դ. ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ</b>	Համայնքների զարգացման անհամաչափության կրճատման միջազգային փորձի կիրառման հնարավորությունները ՀՀ-ում .....	280

**ՏԵՍԱԿԱՆ ԴԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՄՏԲԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

<b>Մ. ԱՂԱՅԱՆ</b>	Հայ տնտեսական ռոմանտիզմի պատմությունից .....	290
<b>Ն. ԱՂՈՆՑ</b>	Գլոբալացումը որպես նոր աշխարհի հարացույց .....	293
<b>Թ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</b>	Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման պատճառներն ու ազդեցությունն աշխարհում .....	296
<b>Ա. ՄԱԿԱՐՅԱՆ</b>	Ճգնաժամի մակրոտնտեսական ազդեցության գնահատման հայեցակարգային հիմքերը .....	304
<b>Կ. ՍԱՐԳՍՅԱՆ</b>	Ճգնաժամերի էությունը, տեսակները և դասակարգումը .....	308
<b>Կ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ա. ՍԱՐԳՍՅԱՆ</b>	Տնտեսական համակարգի զարգացման պարբերաշրջանները և դրանց առաջացման պատճառները .....	312
<b>Т. МАНАСЕРЯН</b>	Новый мировой экономический порядок: тенденции и развития .....	317

# ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԿԳԱԱ թղթակից անդամ, Վ.Գ.Դ., պրոֆեսոր  
ՆԿԳԱԱ Մ. Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն

## ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂՎԱՍԱՐՅԱՆ

ՆԿԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող, Վ.Գ.Թ.

## ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Հարկման արդյունավետության մակարդակի վերաբերյալ հետազոտող տնտեսագետների շրջանում դեռևս միասնական մոտեցում չկա և, դեռ ավելին, այն տարբեր դիրքերից է մեկնաբանվում տարբեր հեղինակների կողմից: Սակայն բոլորը կարևորում են հարկման արդյունավետության բարձրացումը, և տարակարծությունները հիմնականում պայմանավորված են դրա իրացման միջոցների և ուղղությունների հետ կապված հարցերով: Իհարկե, դա բնական է, քանի որ հարկման արդյունավետության մակարդակը մեծապես պայմանավորված է մի կողմից՝ ֆինանսական միջոցների նկատմամբ պետության ունեցած պահանջարկով և մյուս կողմից՝ հարկ վճարողների վճարունակությամբ: Հետևաբար, «հարկման արդյունավետություն» հասկացությունը որոշակի հակասություն է պարունակում՝ այնքանով, որ որքան մեծ լինի հարկ վճարողների հարկային բեռը, այնքան ամուր կլինի պետության ֆինանսական վիճակը, ու քիչ կլինեն բյուջեի հաշվեկշռման հիմնախնդիրները և ընդհակառակը: Սակայն շուկայական տնտեսությունում ունեցող երկրների հարկային քաղաքականության իրականացման փորձը հիմնավորել է, որ հարկային բեռի մեծացումը նոր հարկատեսակների սահմանման ու ներդրման, հարկի դրույքաչափի բարձրացման և հարկային արտոնությունների կրճատման միջոցով սկզբնական շրջանում ապահովում է հարկային եկամուտների որոշակի բարձր ցուցանիշներ: Սակայն հետագա տարիներին այդ դրական ցուցանիշներին հաջորդում է արտադրության ծավալների կտրուկ անկում և, միաժամանակ, չվերականգնվող են դառնում այն տնտեսական գործընթացները, որոնք ուղղակիորեն հանգեցնում են բյուջեում եկամուտների ծավալների կրճատմանը, այսինքն՝ արդարացի է այն կարգախոսը, որ «մեծ հարկը սպանում է հարկին»<sup>1</sup>: Մյուս կողմից կա տեսակետ այն մասին, որ «հարկային բեռի» նվազեցումը երկրի տնտեսությանը լուրջ վնասներ պատճառելու նախադրյալներ է ստեղծում (Մ.Ֆիշեր, Ռ.Դորնբուշ)<sup>2</sup>, կամ դա կիրառում են շատ վատ ու թույլ կառավարություն ունեցող երկրները: Որպես վերջինիս օրինակ հեղինակները (Ա.Վասիլևա և ուրիշներ) նշում են Վրաստանը և Տաջիկստանը, որտեղ հետագայում տեղի ունեցան հեղափոխություններ, և որտեղ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից «հարկային բեռը» ամենացածրն էր (Վրաստան՝ 13.1% և Տաջիկստան՝ 11.7%)<sup>3</sup>:

Այսպիսով, հասկացվում է, թե որքան կարևոր ու նույնքան էլ բարդ է «հարկային բեռի» սահմանաչափի ճիշտ որոշումը, քանի որ դրա միջոցով են տրվում հետևյալ հարցերի պատասխանները.

- արդյունավետ է արդյոք պետության հարկային համակարգը,

<sup>1</sup> Cebula, Richard J. (1997): "An Empirical Analysis of the Impact of Government Tax and Auditing Policies on the Size of the Underground Economy: The Case of the United States", 1993-94." American Journal of Economics and Sociology, 56:2, pp.173-185.

<sup>2</sup> Р. Дорнбуш. С. Фишер, "Макрочкономика". ИНФРА-М.1997, 69-72стр.

<sup>3</sup> Василева и другие, "Основной капитал предприятия", ИНФРА-М.2007, 12стр.

- որքանով է այն բավարարում պետության ֆինանսական պահանջները,
- նպաստում է արդյոք հարկ վճարողների տնտեսական ակտիվությանը,
- տնտեսվարման ի՞նչ ուղիներ են առաջարկվում ձեռնարկատիրական գործունեության ընդլայնման նպատակով:

Վերոհիշյալ հիմնահարցերի լուծման տարբեր մոտեցումներով են պայմանավորված «հարկային բեռի» սահմանաչափի շուրջ գոյություն ունեցող տարակարծությունները:

Տնտեսագետների մի մասը հարկային բեռի սահմանաչափի որոշման միջոց է առաջարկում, այսպես կոչված «կարմիր սահմանագծի կանոնը» (*Պ.Մոստովոյ և ուրիշներ*)<sup>1</sup>, որի համաձայն արդյունաբերական ձեռնարկություններից գանձվող հարկերի գումարը 3-5 տարի պետք է ընդհանուր շրջանառության նկատմամբ սահմանափակել որոշակի տոկոսաչափով: Հիշյալ հեղինակների կարծիքով նշված մոտեցման իրագործումը կնպաստի տնտեսության կայունության ապահովմանը և առաջարկի ու պահանջարկի իրական մակարդակների որոշմանը: Նշված մոտեցման կիրառումը արդարացված կարող է լինել այն երկրներում, որտեղ տնտեսությունում արդյունաբերությունը կունենա գերակշռող մասնաբաժին, ինչպես նաև որոշված կլինի այսպես կոչված «կարմիր սահմանագծի» չափը, որին նշված հեղինակները լուծումներ չեն առաջարկում: Բայց որպես խնդրի լուծման փորձ այն ուշադրության արժանի մոտեցում է: Այս մոտեցմանը նմանվող մոտեցման գործնականում կիրառման չհաջողված փորձ պետք է համարել Հայաստանի Հանրապետությունում հաստատագրված վճարների ու պարզեցված հարկի կիրառումը՝ որպես փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման խրախուսման միջոց, որը թեպետ նպաստեց գործարարությանը, բայց նշանակալիորեն խորացրեց հարկման բնագավառում առկա անարդարությունները: Ուստի, նման և դրան նմանվող մոտեցումների գործնականում կիրառումը նպատակահարմար չէ, քանի որ հարկային բեռի բաշխվածությունը պետք է լինի հավասարաչափ, որի դեպքում յուրաքանչյուրը կվճարի այդ բեռի իր «արդարացի» բաժինը, որպեսզի նվազագույնի հասցվեն հարկման արդարության և համընդհանրության սկզբունքների խախտումները:

Տնտեսագետների մի ուրիշ խումբ հարկային բեռի որոշման միջոց է առաջարկում «արդյունավետ դրույքաչափի» կիրառումը (*Յ.Պետրով, Ե.Եգորովա*), որի համաձայն այն պետք է հաշվարկել հարկի ընդհանուր գումարի և ձեռնարկությունում ստեղծված հավելյալ արժեքի հարաբերությամբ<sup>2</sup>:

Այս մեթոդաբանությամբ է բնութագրվում ընդհանուր հարկային ծանրության աստիճանը ներդրումների կատարման նպատակահարմարության տեսանկյունից, և դրանով առաջարկվում է հարկային արդյունավետ դրույքաչափի սահմանում շահույթի մինչև 58.9%-ի չափով: Տվյալ սահմանաչափը գերազանցելու դեպքում, ըստ հեղինակների, բացառվում է ներդրումային գործընթացների զարգացումն ընդհանրապես:

Նման մոտեցմամբ հարկադրույքի չափի որոշումը և կիրառումը արդարացված չեն, քանի որ միայն շահույթը ձեռնարկության ֆինանսական վիճակի իրական պատկերը չի կարող տալ: Բացի այդ՝ հարց է առաջանում, թե արդյո՞ք ձեռնարկության համար «արդյունավետ» համարվող դրույքաչափը ձեռնտու է նաև պետությանը և վերջինիս ֆինանսական միջոցների նկատմամբ ունեցած պահանջարկին, թե՞ ոչ: Այս հարցի պատասխանը «արդյունավետ դրույքաչափի» մեթոդը չի տալիս: Հետևաբար, այս մեթոդը ևս գործնական կիրառության առումով արդարացված չէ, մանավանդ որ, որպես կանոն, չեն հարկվում ու չեն նորմավորվում ձեռնարկությունների կողմից կատարվող ծախսերը, որոնք «ուռճացնելով» հնարավոր է նվազագույնի հասցնել շահույթի մեծությունը:

Հարկային «բեռի» սահմանման համար կիրառվում է նաև «հարկերի առաձգականության գործակիցը», որը բնութագրում է տնտեսական գործոնների (համախառն ներքին արդյունքի, ազգաբնակչության եկամուտների, մանրածախ կամ սպառողական գնի մակարդակի և այլնի)

<sup>1</sup> [http://www.westate.ru/germania/gerroom\\_nalogi.html](http://www.westate.ru/germania/gerroom_nalogi.html)

<sup>2</sup> Егорова Татьяна Николаевна. "Формирование эффективной бюджетно-налоговой системы в трансформационной экономике", 22-24 стр.

ազդեցությունը հարկերի ծավալների փոփոխությունների վրա: Այս գործակցով որոշվում է, թե յուրաքանչյուր մեկ միավոր փոփոխությունն ինչ ներգործություն է ունենալու բյուջե վճարվող հարկերի գումարների վրա:

Պետք է փաստել, որ բյուջեի մուտքերի պլանային կամ փաստացի տվյալներով «հարկային բեռի» հաշվարկումը որոշակի ճշգրտումների կարիք ունի այն առումով, որ հստակեցման կարիք ունի հենց ինքը՝ «հարկային բեռ» հասկացությունը: Բանն այն է, որ իրականում նշանակալիորեն միմյանցից տարբերվում են փաստացի (նաև պլանային) ու հաշվարկված հարկային պարտավորությունները: Փաստացի ու պլանային վճարումների նկատմամբ հաշվարկվածի շարունակական ու մեծ չափերով գերազանցումը հանգեցնում է հարկային ապառքների կուտակման, ինչպես նաև վկայում է հարկային ոչ ճիշտ քաղաքականություն իրականացնելու մասին, որի՝ իշխանությունների կողմից ընդունման փաստը հանդիսացան 1996-1997թթ. հարկային համաներումները: Հարկային ապառքները «հարկային բեռի» բաղկացուցիչ մասն են, և հարկատուների համար կարևոր է ոչ միայն այն, թե որքան վճարվեց բյուջե, այլև այն, թե որքան է նա ծանրաբեռնված հարկային պարտքերով: Ուստի «հարկային բեռը» պետք է ներառի նաև հարկային ապառքները, որոնց աճը վկայում է հարկային բեռի անարդարացիության մասին: Ինչպես երևում է գծապատկեր 4-ից, ապառքներն ունեն աճի միտում, 2007թ. կազմել են 86 270 մլն դրամ, իսկ 2010-ին՝ 103396 մլն դրամ, կտրուկ աճ է նկատվել 2008-ի համեմատ 2009 թվականին՝ կազմելով 101133 մլն դրամ (աճելով 3,4%-ով), որը պայմանավորված էր ֆինանսատնտեսական ճգնաժամով (աղյուսակ 1, գծապատկերներ 1-2):


**Աղյուսակ 1**

**Հարկային եկամուտների, ապառքի և դրանց հարաբերակցության ցուցանիշները 2007-2010թթ.**

Հարկային վարչարարության վերաբերյալ 2007-2010թթ. ամփոփ ցուցանիշներ									
Ցուցանիշ	Չափի միավոր	2007թ.		2008թ.		2009թ.		2010թ.	
		Հունվար-դեկտեմբեր	Միջին ամսական	Հունվար-դեկտեմբեր	Միջին ամսական	Հունվար-դեկտեմբեր	Միջին ամսական	Հունվար-դեկտեմբեր	Միջին ամսական
		1	2	3	4	5	6	7	
1	Հարկային մարմնի կողմից պետբյուջե հավաքագրված հարկային եկամուտներ	մլն դրամ	373 331,8	432 351,2	115,8	395 580,1	91,5	442 437,7	111,8
2	Ապառք	մլն դրամ	86 270,7	87 822,0	101,8	101 133,3	115,2	103 396,0	102,2
3	Ապառք/ընդհանուր հավաքագրված հարկային եկամուտներ, %	մլն դրամ	23,1	20,3	- 2,8	25,6	5,3	23,4	- 2,2


**Գծապատկեր 1**

**2007-2010թթ. ապառքի և հավաքագրված ընդհանուր հարկային եկամուտների ծավալները**





Ապառքի ծավալների աճի տեմպերը 2007-2010թթ.



Բացի պետության հանդեպ ունեցած հարկային պարտավորությունների կատարումից՝ հարկատուները լրացուցիչ միջոցներ և ժամանակ են ծախսում նաև հարկային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ հաշվարկների, հաշվետվությունների ու հայտարարագրերի լրացման, համակարգչային ծրագրերի ներդրման, խորհրդատվական ու փաստաբանական ծառայությունների ստացման և այլնի համար, որոնք բացասաբար են ազդում հարկատուների վճարունակության և պետական բյուջեի մուտքերի մակարդակի վրա: Այդ առումով անհրաժեշտ է կարևորել առանձին երկրների առաջավոր փորձի կիրառումը, երբ պետություններն իրենք են գնահատում և հարկատուներին իրազեկում հարկային հաշվետվությունների փոփոխությունների արդյունքում ունենալիք լրացուցիչ ծախսերի մասին:

Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում եկամտահարկի գանձման համակարգում ցանկացած լուրջ փոփոխություններ իրականացնելու ժամանակ պարտադիր հաշվարկվում է ժամանակի այն գնահատականը, որը պահանջվում է յուրաքանչյուր հարկատուից նոր կանոններով հարկային հայտարարագիր (դեկլարացիա) լրացնելու համար<sup>1</sup>: Մյուս կողմից՝ պետությունն իր հերթին հարկային եկամուտների հավաքագրումն իրականացնելու ընթացքում միջոցներ է ծախսում հարկային մարմինների պահպանման և հարկերի գանձման նկատմամբ վերահսկողության իրականացման, դատական համակարգի միջոցով անբարեխիղճ հարկատուներին պատասխանատվության ենթարկելու և այլնի համար, որոնց չարդարացված աճը սահմանափակում է ֆինանսական միջոցների նկատմամբ պետության ունեցած պահանջարկը:

Նշված երկու դեպքերում էլ կատարված լրացուցիչ ծախսերը հասարակության համար ֆինանսական միջոցների կորուստներ են, քանի դեռ հավաքագրված միջոցների օգտագործումը չի ապահովում գոնե համարժեք արդյունավետություն: Բայց նույնիսկ վերջին պայմանի ապահովման դեպքում նախընտրելի է, որ պետությունը նպաստի նվազագույնի հասցնելու այս ծախսերը, քանի որ այն անուղղակիորեն բխում է պետության շահերից և հարկման արդյունավետության բարձրացման պահանջներից: Սա այն դեպքն է, երբ պետական շահը անտաօրնիստական հակասության մեջ է մտնում ծանր «հարկային բեռի» հետ, և վերջինս «խարխլում է» պետականության հիմքերը:

Ուստի, առաջին հերթին, պետությունը պետք է շահագրգռված լինի յուրաքանչյուր առանձին վերցրած հարկատուի հարկային բեռի կարգավորմամբ, որի ուղիներ կարող են լինել հարկային լծակների ու գործիքների միջոցով հարկային բեռի տեղափոխումը ճյուղից ճյուղ, չունևորից ունևոր, արտադրությունից առևտուր, վնասաբեր, բայց անհրաժեշտ ձեռնարկությունից գերշահույթ ապահովող ձեռնարկություն և այլն, ինչպես նաև պետության կողմից հարկատուներին մատուցվող ծառայությունների բարելավումը՝ կապված հարկային օրենսդրության պարզաբանման ու հստակեցման, հարկատուներին աջակցելու և հարկային մարմինների նկատմամբ հարկատուների վստահությունն ամրապնդելու, հաշվետվությունների ներկայացման գործընթացը թեթևացնելու և այլնի հետ: Բացի վերոհիշյալներից՝ անհրաժեշտ է կարևորել նաև

<sup>1</sup> <http://www.360taxes.org/>

հարկ վճարողների ու հարկման օբյեկտների շրջանակների ընդլայնումը՝ ապահովելով հարկման համընդհանրության ու արդարության սկզբունքների կիրառումը, այսինքն՝ հարկման սկզբունքները պետք է փոխհամաձայնեցված գործեն ու միմյանց լրացնեն, որպեսզի հարկերին բնորոշ գործառույթներին «լիաթոք շնչելու» հնարավորություն տրվի:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հարկման արդյունավետությունը կարելի է սահմանել որպես հարկային եկամուտների նկատմամբ պետության ունեցած պահանջարկի այնպիսի ձևերի, մեթոդների ու մեխանիզմների միջոցով ապահովում, որոնք նվազագույնի են հասցնում պետության ու հարկատուների ծախսերի կորուստները՝ առանց վերջիններիս վարքագծի ձևափոխման:

Հարկման արդյունավետության գնահատականի հարցը ևս մինչև օրս շարունակում է վիճահարույց մնալ, այսինքն՝ հստակ չէ այն հարցի պատասխանը, թե հարկատուի եկամտի որ մասի գանձումն է արդյունավետ՝ 30, 40, թե՞ 50 տոկոսը: Այդ իսկ պատճառով հարկման արդյունավետության վերաբերյալ քննարկումները շատ հաճախ կառուցվում են միջազգային համեմատությունների վրա՝ հիմք ընդունելով մակրոտնտեսական մակարդակում պլանային կամ փաստացի վճարված հարկերի ընդհանուր գումարի և համախառն ներքին արդյունքի, իսկ միկրոմակարդակում՝ պլանային կամ փաստացի վճարված հարկերի ու համախառն եկամտի տոկոսային հարաբերակցության ցածրմիջները:

**Владимир Арутюнян  
Кристина Багдасарян**

### **Макроэкономические методы оценки налогового бремени в Армении и зарубежом**

#### **Аннотация**

Оценка эффективности налогового администрирования является спорным вопросом. Все доводы остаются невыявленными, в частности, какие ставки налогов эффективны для улучшения налогового администрирования. То есть, какова оптимальная ставка подоходного налога- 30%, 40% или 50%. Они остаются предметом дискуссии в РА и зарубежом.

**Vladimir Harutyunyan  
Kristine Baghdasaryan**

### **The Macroeconomic Methods of Tax Burden Assessment in Armenia and Abroad**

#### **Abstract**

Tax administration efficiency assessment remains a controversial issue. All arguments regarding efficient tax rates for improvising tax administration remain unjustified. The optimal rate of income tax (30%, 40% or 50%) remains a subject of this debate both in Armenia and abroad.

**ՎԱՆՈՒՄԻ ԶՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՄԳԱԹ թղթակից անդամ, ր. գ. դ., պրոֆեսոր  
ՄԳԱՄ. Բոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն*

**ՎԻԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*ՄԳԱՄ. Բոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող, ր. գ. թ., դոցենտ*

**ՂԱՆԴԱՂՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾԻ ԵՎ ԱՃՈՂ ՊԱՐՏՔԵՐԻ ԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Համաշխարհային տնտեսության վերջին զարգացումներն, ըստ էության, ունեն մի շարք խնդրահարույց կողմեր: Այդ հիմնախնդիրները կարելի է բաժանել երկու մասի, այն է՝ 2008թ. սկսած՝ կտրուկ նվազել են ՀՆԱ-ի աճի տեմպերը, և մյուս կողմից բավականին աճել են պետական պարտքերը: Այս տրամաբանությունն է նաև դրված ԱՄՅ-ի փորձագետների կողմից 2012թ. հոկտեմբերին հրապարակված Համաշխարհային տնտեսության հեռանկարները (WEO) զեկույցում: Այսինքն՝ աճող պարտքերի և տնտեսական աճի ցածր տեմպերի միջև առաջանում է մի մեծ ճեղքվածք, որը հաղթահարելը խիստ մեծ դժվարություններով կարող է պայմանավորված լինել: Չնայած այս ամենին պետք է նշել, որ համաշխարհային տնտեսության մեջ խոշոր դերակատարում ունեցող ինստիտուցիոնալ միավորները, հատկապես համաշխարհային դրամավարկային քաղաքականության բևեռներ համարվող բանկերը երբեք այսքան միասնական չեն եղել: Դա է վկայում նաև 2012թ. սեպտեմբերին ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի, Եվրոպական կենտրոնական, ճապոնիայի, Անգլիայի բանկերի կողմից իրականացված համատեղ քանակական մեղմման քաղաքականությունը: Այս բանկերը համաշխարհային տնտեսության մեջ շրջանառվող հիմնական արտարժույթների թողարկողներն են, և այն հանգամանքը, որ տեղի ունեցող «արտարժույթային պատերազմների» պարագայում դրանց բոլորի գործողություններն ունեին խթանող բնույթ, բավականին ողջունելի փաստ էր: Նման իրավիճակ գոյություն չուներ 2008-2009թթ., որի պատճառով իրականացվում էին տարբեր տարածաշրջաններում իրար հակասող քաղաքականություններ՝ խորացնելով տարածաշրջանային տնտեսությունների միջև առկա տնտեսական հակասությունները: Այսինքն՝ ԱՄՆ-ի կողմից իրականացվում էր մեղմ դրամավարկային քաղաքականություն, պահպանողական Եվրոպան՝ ավելի կոշտ դրամավարկային քաղաքականություն, իսկ զարգացող Ասիան՝ չցանկանալով դանդաղեցնել տնտեսության զարգացման տեմպերը, վարում էր արագ տնտեսական աճի տեմպերին համահունչ դրամավարկային քաղաքականություն: Այս երևույթն առաջացնում էր մի շարք տարածաշրջանային արտարժույթային և կապիտալ հոսքերի երևույթներ, որի արդյունքում առանձին երկրների տնտեսություններ հայտնվում էին այնպիսի իրավիճակում, որ սեփական երկրի արժույթը պաշտպանելու համար կիրառում էին կոշտ մեխանիզմներ: Այդ իսկ պատճառով խնդիրների լուծման միակ տարբերակը միասնականությունն էր, որին բավականին դժվարությամբ, բայց տարածաշրջանային մակարդակում արդեն հասել են առանձին տարածաշրջաններն ու խոշոր դերակատարում ունեցող պետությունները:

Այս խնդրի մյուս կողմը կապված է հարկաբյուջետային քաղաքականության հետ, որն, ի դեպ, համաշխարհային մակարդակում միասնականացնելը բավականին դժվար է, և զրեթե անհնար է միաժամանակ իրականացնել բարեփոխումներ կամ համաձայնեցված քաղաքականություն: Այստեղ կան խիստ ծանր հարկային բեռ ունեցող երկրներ, որոնք տնտեսական անկման պայմաններում ստիպված են դրանք ավելի ծանրացնել, և մյուս կողմից կան «հարկային դրախտներ», այսինքն՝ կապիտալի համար չեն ստեղծվել այնպիսի պայմաններ, որ դրանք նման իրավիճակներում մի երկրից մյուսը չհոսեն, իսկ արտարժույթի համար դա հնարավոր եղավ ապահովել:

Այս համատեքստում համաշխարհային հեղինակավոր կազմակերպությունները գրեթե ամեն անգամ վերանայում են համաշխարհային թողարկման կամ պայմանականորեն ասված համաշխարհային ՀՆԱ-ի տեմպերը, որ ԱՄՆ մասնագետները կանխատեսում են 2012թ. դրությամբ կլինի 3.3%, իսկ արդեն 2013թ.՝ 3.6%: Դա փաստում է այն տեսակետը, որ աճի տեմպերով դեռևս համաշխարհային տնտեսությունը չի կարողանում վերադառնալ 2007թ. մակարդակին, և մյուս կողմից համաշխարհային տնտեսության վերականգնումը խիստ դանդաղ է ընթանում, իսկ ճգնաժամը մարող ալիքի կամ թույլ պարբերաշրջանային բնույթ է կրում:

Տարածաշրջանային զարգացումները ցույց են տալիս, որ 2012թ. զարգացած երկրներում 2011թ. համեմատությամբ կնկատվեն տնտեսական աճի անկման միտումներ և կկազմի ընդամենը 1.3%: 2012թ. ամենավատ վիճակում կհայտնվեն Եվրոյի գոտում երկրները, ինչպես նաև ամբողջ Եվրոպական միության կազմում ընդգրկված երկրները, վերջինս այն տարածաշրջանն է, որտեղ գրանցվելու է տնտեսական անկում -0.4 և -0.2% համապատասխանաբար: Իսկ այդ տարածաշրջանի ՀՆԱ-ն աշխարհի ՀՆԱ-ի մոտ 25%-ն է կազմում, իսկ դա նշանակում է, որ համաշխարհային տնտեսության մեջ տնտեսական աճի անկման տեմպերը կլինեն անխուսափելի: 2012թ. բարեհաջող կլինի ասիական զարգացող երկրների և ընդհանրապես անցումային և զարգացած երկրների ու աֆրիկյան մայրցամաքի համար: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ ասիական տարածաշրջանն ամենաբարձր աճ ունեցող և դիմացկուն տարածաշրջանը գտնվեց ճգնաժամային և հետճգնաժամային ժամանակահատվածում, այնինչ Եվրոպան, ինչպես նաև ԱՊՀ երկրները դեռևս խիստ մեծ ջանքեր են ներդնում աճի բարձր տեմպեր ունենալու համար:

*Աղյուսակ 1*

**Աշխարհի տնտեսության թողարկման արդյունքները<sup>1</sup>**

(տարեկան տոկոսային փոփոխություն)

	Միջին							Կանխատեսումներ		
	1994-2003	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2017
Աշխարհ	3.4	5.3	5.4	2.8	-0.6	5.1	3.8	3.3	3.6	4.6
Զարգացած երկրներ	2.8	3.0	2.8	0.1	-3.5	3.0	1.6	1.3	1.5	2.6
ԱՄՆ	3.3	2.7	1.9	-0.3	-3.1	2.4	1.8	2.2	2.1	3.3
Եվրոյի գոտու երկրներ	2.2	3.2	3.0	0.4	-4.4	2.0	1.4	-0.4	0.2	1.7
Ճապոնիա	0.9	1.7	2.2	-1.0	-5.5	4.5	-0.8	2.2	1.2	1.1
Այլ զարգացած երկրներ <sup>1</sup>	3.8	3.9	4.2	0.9	-2.1	4.5	2.5	1.5	2.4	3.2
Անցումային շուկաներ և զարգացող տնտեսություններ	4.4	8.2	8.7	6.1	2.7	7.4	6.2	5.3	5.6	6.2
Կենտրոնական և Արևելյան Եվրոպա	3.4	6.4	5.4	3.2	-3.6	4.6	5.3	2.0	2.6	3.8
ԱՊՀ <sup>2</sup>	0.6	8.8	9.0	5.4	-6.4	4.8	4.9	4.0	4.1	4.1
Զարգացող Ասիայի երկրներ	7.0	10.3	11.4	7.9	7.0	9.5	7.8	6.7	7.2	7.7
Լատինական Ամերիկա և Կարիբներ	2.5	5.7	5.8	4.2	-1.5	6.2	4.5	3.2	3.9	4.0
Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	4.0	6.3	5.7	4.5	2.6	5.0	3.3	5.3	3.6	4.5
Ենթասահարային Աֆրիկա	4.0	6.4	7.1	5.6	2.8	5.3	5.1	5.0	5.7	5.8
Եվրոպական միություն	2.6	3.6	3.4	0.6	-4.2	2.1	1.6	-0.2	0.5	2.1
Աշխարհի տնտեսության թողարկման արժեքը (մլրդ դոլար)										
Շուկայական գներով	31,429	49,375	55,718	61,222	57,846	63,180	69,899	71,277	74,149	92,722
Համարժեքային զնոդունակության պարիտետով (PPP)	39,240	61,705	66,835	70,140	70,154	74,684	78,970	82,762	86,836	110,405

<sup>1</sup> Այս աղյուսակում «այլ զարգացած երկրներ» արտահայտության ներքո հասկացվում են բոլոր զարգացած երկրները՝ բացառությամբ ԱՄՆ-ի, Եվրոյի գոտու երկրների և Ճապոնիայի:

<sup>2</sup> Մոնղոլիան և Վրաստանը, որոնք ընդգրկված չեն ԱՊՀ երկրների շարքում, ընդգրկվել են այս խմբում աշխարհագրական դիրքի և տնտեսության կառուցվածքի նմանությունների պատճառով:

ԱՊՀ տարածաշրջանում տնտեսական աճի տեմպերը կկազմեն 4% նախորդ տարվա մոտ 5%-անոց աճի համեմատությամբ: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպան ևս հայտնվել է բավականին ծանր իրավիճակում, քանի որ 5.3%-անոց աճը 2012թ. կանխատեսումներով կկազմի 2.0%, որը բավականին բարձր անկման մասին է խոսում:

Այնուամենայնիվ, համաշխարհային տնտեսության աճի տեմպերի անկման միտումները չեն ազդել համարժեքային գնողունակության պարիտետով հաշված ՀՆԱ-ի միտումների անկման վրա, և 2012թ. աշխարհում ստեղծված արդյունքը կամ համաշխարհային թողարկումը կկազմի 82.8 տրլն դոլար, իսկ 2017թ.՝ 110.4 տրլն դոլար:

Այժմ առավել խորությամբ ներկայացնենք ԱՊՀ երկրների տնտեսական աճի միտումները: ԱՊՀ երկրների շարքում առաջատար դիրքեր ունի Թուրքմենստանը, որտեղ ՀՆԱ-ի աճի տեմպերը վերջին 6 տարիներին գրեթե միշտ գերազանցել են 10%-անոց մակարդակը, բացառություն է կազմել 2009թ.՝ 6.1% և 2010թ.՝ 9.2%: Սպասվում է նաև, որ 2012թ. այս երկրում աճը կկազմի 8.0%: Պետք է նշել, որ պայմանականորեն ԱՊՀ երկրների շարքում ԱՄՀ մասնագետների կողմից ընդգրկվել են նաև Վրաստանը և Մոնղոլիան, և հետաքրքիր է նաև, որ Մոնղոլիայում 2011թ. արձանագրվել է 17.5% տնտեսական աճ:

*Աղյուսակ 2*

**ԱՊՀ երկրների տնտեսական աճի միտումները<sup>1</sup>**  
(տարեկան տոկոսային փոփոխություն)

	Միջին										Կանխատեսումներ		
	1994-2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2017	
<i>ԱՊՀ</i>	0.6	8.2	6.7	8.8	9.0	5.4	-6.4	4.8	4.9	4.0	4.1	4.1	
Ռուսաստան	0.7	7.2	6.4	8.2	8.5	5.2	-7.8	4.3	4.3	3.7	3.8	3.8	
Բացառությամբ Ռուսաստանը	0.3	10.8	7.6	10.5	10.0	5.6	-3.1	6.0	6.2	4.7	4.8	4.9	
Հայաստան	7.5	10.5	14.1	13.2	13.7	6.9	-14.1	2.1	4.6	3.9	4.0	4.0	
Ադրբեջան	2.2	10.2	26.4	34.5	25.0	10.8	9.3	5.0	0.1	3.9	2.7	3.1	
Բելառուս	2.3	11.4	9.4	10.0	8.6	10.2	0.2	7.7	5.3	4.3	3.4	4.1	
Ղազախստան	2.1	9.6	9.7	10.7	8.9	3.2	1.2	7.3	7.5	5.5	5.7	6.3	
Ղրղզստան	1.1	7.0	-0.2	3.1	8.5	7.6	2.9	-0.5	5.7	1.0	8.5	5.0	
Մոլդովա	-3.1	7.4	7.5	4.8	3.0	7.8	-6.0	7.1	6.4	3.0	5.0	5.3	
Տաջիկստան	0.5	10.6	6.7	7.0	7.8	7.9	3.9	6.5	7.4	6.8	6.0	6.0	
Թուրքմենստան	4.3	14.7	13.0	11.0	11.1	14.7	6.1	9.2	14.7	8.0	7.7	8.0	
Ուկրաինա	-2.3	12.1	2.7	7.3	7.9	2.3	-14.8	4.1	5.2	3.0	3.5	3.5	
Ուզբեկստան	2.5	7.4	7.0	7.5	9.5	9.0	8.1	8.5	8.3	7.4	6.5	5.5	
Վրաստան	5.9	9.6	9.4	12.3	2.3	-3.8	6.3	7.0	6.5	5.5	5.5	5.9	
Մոնղոլիա	3.7	10.6	7.3	8.6	10.2	8.9	-1.3	6.4	17.5	12.7	15.7	9.7	

*Ծանոթություն.* Մոնղոլիան և Վրաստանը, որոնք ընդգրկված չեն ԱՊՀ երկրների շարքում, ընդգրկվել են այս խմբում աշխարհագրական դիրքի և տնտեսության կառուցվածքի նմանությունների պատճառով:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ ԱՊՀ ողջ տարածաշրջանում 2012թ. անկման ֆոնի վրա Հայաստանի կանխատեսվող ցուցանիշները բարձր են միայն Ռուսաստանից՝ 3.7%, Ղրղզստանից՝ 1%, Մոլդովայից և Ուկրաինայից՝ 3%, և հավասար են Ադրբեջանի տնտեսական աճին՝ 3.9%, վերջինս մեկ տարի առաջ ունեցել է գրեթե 0-ական աճ, այն պարագայում, երբ 2006թ. աճը կազմել էր 34.5%: Այս միտումները ստիպում են մտածել այն մասին, որ տարածաշրջանների առումով տնտեսապես ամենակայուն գործընկերներ կարելի է փնտրել միայն Ասիայի զարգացող երկրների շարքում, քանի որ կայունությունը շատ մեծ դեր կարող է խաղալ հետագա տնտեսական աճի և տարածաշրջանի առավել մրցունակ լինելու գործում: Ինչ վերաբերում է Հայաստանի տնտեսությանը, ապա այն առաջիկա տարիներին բեկումնային զարգացումներ չի ունենա, այլ կփորձի վերադարձնել այն կորուստները, որոնք ունեցավ 2009թ.՝ -14.1% տնտեսական անկման տեսքով:

<sup>1</sup> World Economic Outlook October 2012, Coping with High Debt and Sluggish Growth, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 210.

Ամփոփելով տնտեսական աճին առնչվող հատվածը՝ պետք է նշել, որ տնտեսական աճի կրճատման կամ նվազման միտումները փաստում են համաշխարհային տնտեսության մեջ առկա ռիսկերի, ամբողջական առաջարկի և միաժամանակ պահանջարկի կրճատման, ինչպես նաև տնտեսության իրական հատվածում դրամական միջոցների ոչ արդյունավետ օգտագործման մասին: Այն հանգամանքը, որ համաշխարհային մեծ դերակատարում ունեցող ֆինանսական ինստիտուտները փորձում են մոնետար եղանակներով խթանել տնտեսական աճը, այնքան էլ իրեն չի արդարացնում, և իրական տնտեսությունը հայտնվում է ոչ թե ներդրումներ իրականացնողների գործունեության, այլ սպեկուլյատիվ գործառնություններ իրականացնողների դաշտում: Այստեղ «Ջեյմս Տոբինի հարկի» (արտարժութային գործառնությունների հարկ՝ CTT<sup>1</sup>) գաղափարն է անմիջապես ծագում, այն է՝ հարկել սպեկուլյատիվ գործառնությունները (արտարժութային)՝ դրանով իսկ ստիպելով տեղափոխվել իրական տնտեսություն, մի գաղափար, որն այնքան մեծ կիրառություն կարող է գտնել տնտեսական աճ ապահովելու գործում: Այս գաղափարի հիմքում ընկած է եղել դեռևս Ջոն Մեյնարդ Բեյնսի կողմից առաջարկված ֆինանսական գործառնությունների հարկի (FTT<sup>2</sup>) գաղափարը:

Հաջորդ հիմնախնդիրը, որն անմիջականորեն կապված է տնտեսական աճի միջոցով կարգավորելու հետ, աճող պետական պարտքերն են: Այն պարագայում, երբ տնտեսությունը զրկվում է առաջանցիկ տնտեսական աճ ունենալու հնարավորություններից, իսկ այդ նույն ժամանակահատվածում դեռևս մարդկանց իներցիոն վարքագիծը պահպանվում է, խուսափել պարտքերն ավելացնելուց բավականին դժվար է: Եվրոպական երկրներում խնդրի այս կողմը բավականին լուրջ է արտահայտված, քանի որ առանձին երկրների կառավարությունները չեն կարողանում հասանելի դարձնել իրենց քաղաքացիներին այն գաղափարը, որ պետության հնարավորությունները բավարար չեն մինչճգնաժամային տնտեսական իրավիճակներին համահունչ բարեկեցության պայմաններ ապահովելու համար: Վերջինս ստիպում է ավելացնել պետական պարտքերը և հայտնվել ավելի ծանր իրավիճակում:

## Աղյուսակ 2

### Անցումային շուկաներ. կառավարության համախառն պարտքը<sup>3</sup>

(ՀՆԱ %)

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Արգենտինա	76.4	67.1	58.5	58.7	49.2	44.9	45.2	42.8	42.5	41.6	40.8	39.8
Բրազիլիա	66.7	65.2	63.5	66.9	65.2	64.9	64.1	61.2	58.9	57.3	55.0	54.0
Բուլղարիա	23.4	18.6	15.5	15.6	14.9	15.5	17.9	16.4	18.4	15.3	13.6	11.5
Չիլի	5.0	3.9	4.9	5.8	8.6	11.3	11.4	12.3	12.6	12.9	13.2	13.5
Չինաստան	16.2	19.6	17.0	17.7	33.5	25.8	22.2	19.6	17.3	15.0	12.6	10.1
Կոլումբիա	36.8	32.7	30.9	36.1	36.4	34.2	32.2	30.9	30.0	29.3	28.3	27.3
Եգիպտոս	90.3	80.2	70.2	73.0	73.2	76.4	79.7	81.1	78.5	75.0	69.4	63.8
Հունգարիա	65.9	67.0	72.9	79.7	81.3	80.6	74.0	74.2	75.3	75.9	76.3	76.6
Հնդկաստան	78.5	75.5	74.1	74.2	68.0	67.0	67.6	66.7	65.6	65.1	64.7	64.3
Ինդոնեզիա	39.0	35.1	33.2	28.6	26.9	24.5	23.9	22.2	20.9	19.8	18.9	18.2
Հորդանան	76.3	73.8	60.3	64.5	66.8	70.4	75.0	79.6	79.4	76.4	75.4	74.8
Ղազախստան	6.7	5.9	6.7	10.2	10.7	10.5	12.4	13.0	12.2	11.1	9.9	8.8
Քենիա	46.8	46.0	45.6	47.5	49.9	48.5	47.2	45.3	45.3	44.2	44.6	45.2
Լատվիա	9.9	7.8	17.2	32.9	39.9	37.8	37.4	40.6	38.5	35.0	35.7	33.3
Լիտվա	17.9	16.8	15.5	29.4	38.0	38.5	40.0	40.5	40.8	40.6	40.5	40.2
Մալայզիա	41.5	41.2	41.2	52.8	51.0	52.9	53.0	53.5	53.9	54.4	55.1	55.8
Մեքսիկա	37.9	37.6	43.0	44.5	42.9	43.8	43.1	43.2	43.2	43.1	43.0	42.9
Մարոկկո	59.4	54.6	48.2	48.0	51.3	54.3	58.1	58.9	59.1	58.5	57.2	55.1
Նիգերիա	11.8	12.8	11.6	15.2	15.5	17.3	14.7	15.4	15.9	15.8	14.9	13.7
Պաղեստին	58.6	55.9	60.5	61.5	61.6	60.2	62.4	63.0	61.6	59.5	57.8	56.4

<sup>1</sup> Currency transaction tax (CTT).

<sup>2</sup> Financial transaction tax (FTT).

<sup>3</sup> World Economic Outlook October 2012, Fiscal Monitor, Taking Stock, A Progress Report on Fiscal Adjustment, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 95.

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Պերու	33.1	30.4	25.0	28.4	24.6	20.9	19.6	18.3	17.6	17.0	16.7	16.3
Ֆիլիպիններ	51.6	44.6	44.2	44.3	43.5	41.9	41.5	39.7	38.1	36.7	35.3	34.0
Լեհաստան	47.7	45.0	47.1	50.9	54.8	56.3	55.1	55.3	55.0	54.6	53.4	52.5
Ռումինիա	12.6	12.7	13.6	23.8	31.2	33.0	34.6	34.5	33.7	32.9	32.1	31.3
ՌԴ	9.0	8.5	7.9	11.3	11.8	12.0	11.0	9.9	10.8	11.5	13.0	12.9
Սաուդյան Արաբիա	27.3	18.5	13.2	15.9	9.8	6.1	5.5	5.3	5.2	5.0	4.8	4.6
ՉԱՅ	32.6	28.3	27.4	31.5	35.3	38.8	41.2	43.3	44.9	45.2	44.2	41.9
Թաիլանդ	42.0	38.3	37.3	45.2	42.6	41.7	44.2	46.2	48.8	49.9	50.9	51.4
Թուրքիա	46.5	39.9	40.0	46.1	42.4	39.3	37.7	36.7	36.3	36.3	36.2	36.1
Ուկրաինա	14.8	12.3	20.5	35.4	40.5	36.0	35.2	35.1	35.0	35.2	35.0	34.7
<i>Միջինը</i>	36.9	35.5	33.6	36.1	40.5	37.0	34.8	33.1	31.8	30.4	29.0	27.6
Ասիա	34.4	34.9	31.5	31.3	40.7	34.7	32.1	30.0	28.1	26.3	24.5	22.7
Եվրոպա	27.1	24.1	24.2	30.5	30.5	28.9	26.9	25.9	26.1	26.0	26.5	26.2
Լատինական Ամերիկա	50.6	49.6	50.5	53.5	51.9	51.6	50.2	48.2	47.1	46.2	44.9	44.1
Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	78.4	71.1	62.3	64.8	66.7	69.9	73.9	75.4	73.5	70.8	66.7	62.5
G-20 անցումային	36.6	35.5	33.1	34.7	40.2	36.0	33.5	31.3	29.8	28.4	27.0	25.5

Աղբյուրը: ԱՄՅ անձնակազմի գնահատականներ և կանխատեսումներ:

Աղյուսակային տվյալները ցույց են տալիս, որ անցումային երկրների համախառն պարտքերն առաջիկա 5 տարիների ընթացքում հնարավոր է, որ նվազեն, սակայն այստեղ սցենարային զարգացումները ցույց չեն տրվում, և այս պարագայում աղյուսակում ներկայացված կանխատեսումներն ավելի շատ ցանկալի, այլ ոչ թե իրական կարելի է համարել: Կան անցումային տնտեսություն ունեցող երկրներ, որոնք իսկապես բավականին լավ վիճակում են, պայմանականորեն եթե փորձենք դասակարգել, ապա մինչև 25% պետական պարտք ունեցող երկրները կարելի է համարել ցածր ռիսկայնության գոտում, չնայած պետք է հաշվի առնել ոչ միայն պարտքի մեծությունը, այլև ավելի մեծ կարևորություն ունեցող ցուցանիշ, ինչպիսին է պարտքի սպասարկումը: Ցածր պետական պարտք ունեցող անցումային երկրների թվին են դասվում Բուլղարիան, Չիլին, Չինաստանը, Ղազախստանը, Նիգերիան, Ռուսաստանի Դաշնությունը և այլն: Հետաքրքիր է այն փաստը, որ մի շարք երկրներ էլ այդ սանդղակի մեջ կարող էին տեղավորվել 2006-2009թթ. ընթացքում, սակայն ճգնաժամը ստիպեց 2-3 անգամ ավելացնել իրենց պարտքերի մեծությունը: Հաջորդ խմբում կարելի է դասակարգել ՀՆԱ-ի 25-50% համախառն պարտք ունեցող երկրները, որոնք, ըստ էության, ավելի շատ են՝ Արգենտինա, Ինդոնեզիա, Լատվիա, Լիտվա, Ռումինիա և այլն: Բավականին ծանր է այն երկրների իրավիճակը, որոնց կառավարության պարտքերը գերազանցում են ՀՆԱ-ի 50%-ը: Այդպիսի անցումային երկրներից են Բրազիլիան, Եգիպտոսը, Հունգարիան և այլն: Իհարկե, կան երկրներ, որտեղ պարտքի միտումներն այնքան բարձր են, որ գերազանցում են ՀՆԱ-ի 100%-ը: Այդպիսի երկրներից են Հունաստանը, ճապոնիան, Իտալիան և այլն: Կարելի է պարզապես ասել, որ նման երկրները գտնվում են «վառողի տակառի» վրա և ամեն վայրկյան կարող են պայթել, այն է՝ հայտնվել ճգնաժամային իրավիճակում՝ մեծ վնաս հասցնելով նաև այդ երկրի տնտեսության հետ կապ ունեցող երկրներին: Սա նաև ստիպում է մի շարք երկրների «սթրես թեստերի» միջոցով քննարկել դեֆոլտային սցենարներ՝ պատկերացնելու համար բացասական հնարավոր զարգացումների ազդեցությունը:

Կարևոր է պատկերացնել նաև այն, որ պետական պարտքը կարող է ավելի մեծ լինել, քան միայն կառավարության պարտքը, այդ իսկ պատճառով ուսումնասիրվող ցուցանիշները երբեմն ավելի փոքր են, մյուս կողմից գոյություն ունի նաև զուտ պարտքի ցուցանիշ, որը կարելի է ասել ավելի ճիշտ պատկերացում է տալիս պետական պարտքի վերաբերյալ:

Այսպիսով, անցումային երկրների կառավարությունների պարտքերն ըստ տարածա-շրջանների առաջիկա տարիներին կունենան նվազման միտում. Ասիայում դրանք կգտնվեն

30%-ի շրջանակներում, Եվրոպայում՝ 25%-ի շրջանակներում, իսկ G-20-ի անցումային երկրների մոտ այն կկազմի 25-30%:

ԱՄՅ դասակարգմամբ Հայաստանը գտնվում է ցածր եկամուտներ ունեցող երկրների շարքում: Հետաքրքիր է այն փաստը, որ ցածր եկամուտներ ունեցող երկրների կառավարության համախառն պարտքի միջին ցուցանիշը մետ 10%-ով բարձր է անցումային երկրների համանուն ցուցանիշից: Հայաստանում կառավարության համախառն պարտքի ցուցանիշն առաջիկա տարիներին կունենա նվազման միտում և 35%-ից կիջնի մինչև 25%, սա լուրջ առաջընթաց կարող է հանդիսանալ, քանի որ կառավարության պարտքը միջին հաշվով տարեկան մոտ 2% կկրճատվի: Գրեթե նմանատիպ քաղաքականություն կիրականացվի նաև Վրաստանում:

**Աղյուսակ 3**

**Ցածր եկամուտներով երկրներ. կառավարության համախառն պարտքը<sup>1</sup>**

(ՀՆԱ %)

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Հայաստան	16.2	14.2	14.6	34.1	33.3	35.1	34.2	31.3	29.3	27.5	26.4	25.0
Բուլիվիա	55.2	40.5	37.2	40.0	38.5	34.7	34.8	33.7	32.6	31.6	30.6	29.4
Բուրկինա Ֆասո	22.6	22.0	23.6	26.1	27.1	29.3	28.1	26.5	25.4	24.7	24.2	24.4
Կամբոջա	32.7	30.6	27.5	28.9	29.1	28.5	28.5	28.1	28.3	27.8	27.1	26.2
Կամերուն	15.9	12.0	9.5	10.6	12.1	13.7	17.8	20.5	23.9	27.0	29.7	32.2
Չադ	29.6	26.0	23.6	30.5	25.8	27.0	23.4	24.2	24.9	26.3	27.6	28.8
Կոնգո ԴՀ	149.0	126.1	133.1	136.3	35.1	29.9	32.3	34.7	36.7	37.3	37.4	36.5
Կոնգո	98.8	98.0	68.1	57.2	23.9	22.5	23.0	21.6	19.6	16.6	15.0	13.2
Կոտ Դիվուար	84.2	75.6	75.3	66.5	66.4	67.9	62.6	61.6	60.3	56.4	52.3	48.6
Եթովպիա	39.0	36.8	30.5	25.1	27.6	25.9	22.2	23.2	23.8	23.9	24.1	24.2
Վրաստան	27.3	21.5	27.6	37.3	39.2	33.9	33.8	32.1	31.6	30.1	28.6	26.8
Գանա	26.2	31.0	33.6	36.2	46.3	43.4	44.9	41.1	38.0	36.9	35.5	36.1
Հայիթի	39.0	34.8	37.8	27.7	17.3	11.7	16.6	20.1	23.5	26.2	28.6	30.1
Հոնդուրաս	31.7	19.7	19.8	23.9	26.3	28.1	31.1	32.3	32.3	32.1	31.4	30.3
Լատվի ԺԴՀ	68.8	63.3	59.0	63.5	59.4	53.8	52.5	50.7	49.6	48.6	47.4	46.0
Մադագասկար	45.5	44.5	45.2	62.2	64.4	59.1	58.7	57.2	55.5	53.0	49.1	44.1
Մալի	20.3	21.7	21.6	24.2	29.5	30.6	30.1	27.9	28.2	28.8	29.5	27.2
Մոլդովա	30.0	24.0	18.8	28.6	26.2	23.2	22.4	20.7	19.0	17.5	16.1	15.7
Մոզամբիկ	53.6	41.9	42.1	41.6	41.1	36.8	42.0	46.2	48.9	49.2	49.5	49.1
Միանմար	72.1	66.5	54.1	55.5	53.0	53.5	43.5	40.3	38.6	37.6	36.8	36.1
Նեպալ	49.5	42.8	41.2	39.3	35.4	32.9	28.3	27.4	26.6	26.4	26.4	26.5
Նիկարագուա	114.9	84.2	76.6	82.1	79.9	70.7	63.5	58.3	54.8	50.9	47.5	45.0
Սենեգալ	21.8	23.5	23.9	34.2	35.7	40.8	46.1	47.6	48.3	48.5	48.6	48.5
Սուդան	80.8	76.7	69.4	72.5	74.0	74.1	112.1	116.3	115.1	112.5	110.2	106.7
Տանզանիա	49.8	36.3	36.0	39.0	42.7	45.4	46.8	48.8	50.3	50.3	50.1	49.4
Ուգանդա	72.5	23.6	22.1	22.2	27.0	33.3	36.2	38.9	41.9	44.0	45.2	44.1
Ուգբեկստան	21.3	15.8	12.7	11.0	10.0	9.1	8.8	8.6	8.6	8.7	8.8	9.0
Վիետնամ	41.8	44.6	42.9	51.2	54.0	50.4	50.4	50.6	50.8	50.5	50.2	49.9
Եմեն	40.8	40.4	36.4	49.8	40.9	42.4	44.9	45.1	47.4	48.8	50.3	51.5
Ջամբիա	29.8	26.7	23.5	26.9	25.8	26.0	28.0	28.5	28.6	28.8	29.0	29.1
<i>Միջինը</i>	49.3	44.0	41.1	44.1	42.8	41.1	42.5	41.8	41.5	41.0	40.5	39.9
Նավթ արդյունաբերող	40.8	41.2	37.8	44.7	43.0	41.5	43.0	43.8	44.7	44.9	45.3	45.5
Ասիա	47.4	47.9	44.6	50.1	50.8	48.4	45.7	45.1	44.7	44.2	43.8	43.3
Լատինական Ամերիկա	54.6	39.3	37.5	39.0	37.4	34.3	35.0	34.7	34.2	33.5	32.7	31.7
Ենթասահարային Աֆրիկա	49.2	41.5	39.5	39.7	35.9	35.1	36.2	36.6	37.0	36.8	36.4	36.0
Այլ երկրներ	49.7	45.8	40.9	46.3	45.6	43.5	51.5	48.9	47.8	46.8	46.0	45.0

Աղբյուրը. ԱՄՅ անճնակազմի գնահատականներ և կանխատեսումներ:

<sup>1</sup> World Economic Outlook October 2012, Fiscal Monitor, Taking Stock, A Progress Report on Fiscal Adjustment, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 98.



Խնդիրն այն է, որ ցածր եկամուտներ ունեցող երկիրը պարտքերի մարման հարցում կարող է ունենալ ավելի լուրջ խնդիրներ, որը ենթադրում է ավելի մեծ զգուշավորություն պետական պարտքերի ավելացման քաղաքականության ժամանակ:

Շատ երկրներ կարելի է ասել բավականին մոտ են այն սահմանագծին, որից հետո պարտքերի ավելացումը կարող է կործանարար լինել տնտեսության համար, այդ սահմանագծին բավականին մոտ է գտնվում նաև Հայաստանը: Վերջինս կարող է հանգեցնել նրան, որ մակրոտնտեսական քաղաքականության մեջ պետական պարտքի ավելացման միջոցով տնտեսության խթանման մեխանիզմը կամ գործիքը հնարավոր չի լինի օգտագործել:

Այսպիսով, պետք է հստակ պատկերացնել տնտեսական քաղաքականության ուղենիշները, քանի որ համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող ապագա զարգացումներն իրենց բացասական ազդեցությունը կթողնեն Հայաստանի տնտեսության վրա: Այս հանգամանքը պետք է ավելի զգոն դարձնի տնտեսական քաղաքականության հարցերում որոշումներ կայացնողներին, քանի որ Հայաստանի տնտեսական աճի տեմպերը ևս բարձր լինեն չեն կարող, իսկ այս պարագայում, հենվելով վերջինիս վրա, ավելացնել պետական պարտքը տնտեսության խթանման համար շատ վտանգավոր կարող է լինել:

**Владимир Арутюнян  
Вилен Хачатрян**

### **Проблемы замедленного экономического роста и растущих долгов в мировой экономике**

#### **Аннотация**

Таким образом, необходимо четко представить основные направления экономической политики, поскольку происходящие в мировой экономике процессы развития могут отрицательно повлиять на экономику Армении. В связи с этим, лица, принимающие решения в вопросах экономической политики, должны быть более осмотрительными, так как темпы роста в Армении также не могут быть высокими, а в данном случае, увеличение государственного долга в целях стимулирования экономики может быть очень опасным.

**Vladimir Harutyunyan  
Vilen Khachatryan**

### **Issues on Slowing Economic Growth and Increasing Debts in the Global Economy**

#### **Abstract**

Hence, considering economic policy directions is of high importance, since the future developments of the Global Economy will negatively impact the economy of Armenia. This fact needs to make Armenian economic policy makers more considerate, since economic growth rates of Armenia will not come back to the growth rates reported prior to crisis, and based on latter one increasing public debt to implement expansionary fiscal policy could be very dangerous.

**ՍՅՈՒՑ-ՔԵՍՏԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՉ ԿՅԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Ապահովագրական գործունեության իրականացման ժամանակ պետք է հաշվի առնել այն բոլոր հնարավոր սցենարները, որոնք կարող են վտանգել ապահովագրողի ֆինանսական կայունությունը ներկայում և ապագայում: Քանի որ գործունեության այս տեսակի արդյունքների կանխատեսման ժամանակ բարձր տեսակարար կշիռ ունի անորոշությունը, այդ պատճառով էլ անհրաժեշտ է այդ ընկերությունների գծով պարբերաբար իրականացնել սթրես-թեստեր:

Սթրես-թեստերի իրականացման արդյունքում ապահովագրողները հնարավորություն են ունենում որոշելու ապահովագրվող ռիսկերի այն սահմանաչափերը, որոնք կարելի է ընդունել ապահովագրության, իրենց վճարունակությունն ապահովելու համար անհրաժեշտ կապիտալի մեծությունը, ինչպես նաև այն անհրաժեշտ միջոցառումները, որոնք հարկավոր է իրականացնել իրենց՝ վերահսկողի և ապահովադիրների տեսանկյունից ռիսկերը անկառավարելի չհամարելու համար: Նշված գործընթացների իրականացման արդյունքում ապահովագրողները կարողանում են մշակել և կիրառել ապահովագրված ռիսկերի կառավարման այլընտրանքային ռազմավարություն, բարելավել ընկերության ներքին վերահսկողության համակարգը: Որոշ դեպքերում սթրես-թեստերի իրականացումը հանգեցնում է ապահովագրողի ռիսկերի կառավարման սկզբունքների հիմնովին փոփոխության:

Այսպիսով, մշված թեստերն իրականացվում են՝ հաշվի առնելով կոնկրետ ապահովագրողի գործունեության հետ կապված ռիսկերի առանձնահատկությունները, որոնք հնարավորություն են տալիս՝

- բացահայտելու ապահովագրողի գործունեության իրականացման հետ կապված ռիսկերն ու բարձրացնելու դրանց կառավարման մակարդակը.
- արժանահավատորեն գնահատելու կապիտալի համարժեքությունը ընկերության պարտավորությունների նկատմամբ.
- կանխատեսելու ընկերության ֆինանսական վիճակը տարբեր սթրեսային իրավիճակների դեպքում և այլն:

Կիրառվում են տարբեր թեստեր, մասնավորապես զգայունության և սցենարային, որոնք կարող են կիրառվել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միաժամանակ: Դրանց միջոցով վերլուծության են ենթարկվում անցանկալի, անբարենպաստ և անկանխատեսելի սթրեսային սցենարներ՝ կապված ապահովագրողի ֆինանսական, գործառնական, իրավական և այլ ռիսկերի հետ: Երկու մոտեցումն էլ կիրառվում են վերը նշված անբարենպաստ իրավիճակների ի հայտ գալու դեպքերի համար՝ ապահովագրողի խոցելիության մակարդակը որոշելու նպատակով, մասնավորապես.

- զգայունության թեստերի միջոցով վերլուծության է ենթարկվում մեկ կամ մի քանի կորելացված նմանատիպ ռիսկային գործոնների ազդեցությունը ապահովագրողի ապագա ֆինանսական վիճակի վրա.
- սցենարային թեստերի միջոցով իրականացվում է տարբեր ռիսկային գործոնների միաժամանակյա ազդեցության վերլուծություն, որոնք հաճախ կախված են արտաքին միջավայրի փոփոխություններից:

Սթրես-թեստերի իրականացման ժամանակ կիրառվում են մոդելավորման ստատիկ և դինամիկ, ինչպես նաև դետերմինիստիկ և ստոխաստիկ մոտեցումները, որոնց ընտրությունը

կախված է ապահովագրողի կողմից ռիսկի գնահատման և կառավարման սկզբունքներից: Մասնավորապես, ստատիկ մոդելավորման ժամանակ ապահովագրողի ֆինանսական դրու-թյունը կանխատեսվում է ֆիքսված պահի դրությամբ, մինչդեռ դինամիկ մոդելավորումը հաշվի է առնում զարգացումները որոշակի ժամանակահատվածում: Դետերմինիստիկ մոդելները վերլու-ծում են որոշակի սցենարի ֆինանսական ազդեցությունը, մինչդեռ ստոխաստիկ մոդելները նաև հաշվի են առնում տարբեր սցենարների տեղի ունենալու հավանականությունը:

Սթրես-թեստավորման գործնական կիրառման հիմնական բարդություններից են՝

- սթրեսի ենթարկվող ռիսկային գործոնների ընտրությունը.
- կիրառվելիք արժեքների սահմանաչափերի ընտրությունը.
- այն ժամանակաշրջանի ընտրությունը, որի համար իրականացվում է թեստը.
- արդյունքների իմաստալից վերլուծությունը և տեղեկացված դատողությունների կատարումը:

Յուրաքանչյուր ապահովագրող այս կամ այն տեսակի սթրես-թեստի իրականացման որոշում ընդունելիս պետք է դիտարկի իր գործունեության հետ կապված ռիսկերի առանձնահատկու-թյունները և դրանց բարդությունը: Թեստի բնույթը և բարդության աստիճանը որոշելու ժամա-նակ հաշվի են առնվում ապահովագրողի կողմից իրականացվող ապահովագրության դասերը և վկայագրերի վաճառքի համակարգը, դիրքը շուկայում, վճարունակության պահպանման խնդիրները, ներդրումային քաղաքականությունը, արտաքին տնտեսական միջավայրը և այլն:

### **ՀՀ ապահովագրական ընկերությունների համար իրականացված ապահովագրական ռիսկերի սթրես-թեստավորման մեթոդաբանությունն ու արդյունքները**

Կապիտալի համարժեքության սթրես-թեստի իրականացման տեսանկյունից ապահովա-գրական ընկերության ակտիվների վրա ազդեցություն ունեցող հիմնական ռիսկերն են ապահո-վագրականը, վարկայինը և արտարժուեայինը, որոնցից ամենամեծ և դժվար կանխատեսելին ապահովագրականն է: Ստորև ներկայացվում են ՀՀ ապահովագրական ընկերությունների համար իրականացված ապահովագրական ռիսկերի սթրես-թեստի մեթոդաբանությունը և արդյունքները: Մասնավորապես գնահատվել է ընտրված շուկային սցենարների դեպքում ապահովագրական ռիսկի ազդեցությունը ընկերության ակտիվների վրա առաջիկա մեկ տարվա ընթացքում: Սողելի հիմքում ընկած է Շվեդիայի ոչ կյանքի ապահովագրական ընկերություն-ների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից կիրառվող մեթոդաբանությունը: Այն վերանշակվել է՝ հաշվի առնելով ՀՀ ապահովագրական շուկայի առանձնահատկությունները: Հաշվարկի ընթացքում կիրառվել է ՀՀ-ում գործող յոթ ապահովա-գրական ընկերությունների կողմից իրականացվող ապահովագրության բոլոր դասերի գծով 2008թ.-ից մինչև 2012թ. առաջին եռամսյակը, ներառյալ ապահովագրական հատուցումների և պահանջների պահուստի, ինչպես նաև գործառնական ծախսերի վիճակագրությունը:

#### ***Մեթոդաբանության նկարագրությունը***

Վերլուծությունը ներառում է ընկերությունների հաշվեկշռի և՛ ակտիվները, և՛ պարտա-վորությունները: Ենթադրությունները կատարվում են այնպես, որպեսզի հնարավոր լինի 99.5 տոկոս հավանականությամբ կանխատեսել մեկ տարվա ընթացքում կապիտալի անհրաժեշտ ծավալը, որը կբավականացնի ընկերությունների կողմից ձևավորվող չվաստակած ապահո-վագրավճարների պահուստի և պահանջների պահուստի աճը, ինչպես նաև աղետի և ծախսերի ռիսկը ծածկելու համար:

#### ***Չվաստակած ապահովագրավճարների պահուստի աճի ռիսկի գծով կապիտալի անհրաժեշտ մեծության հաշվարկը***

Նշված պահուստի գծով դիտարկվում է երկու ռիսկային գործոն՝ *պարամետրի ռիսկ* և *տատանողականության ռիսկ*:

*Պարամետրի ռիսկ*ն ընկած է ապահովագրական ընկերությունների կողմից իրականացվող հատուցումների գնաճի և ապահովագրական պատահարների տեղի ունենալու հավանականու-

թյան հիմքում: Ապահովագրության պայմանագրերի գծով չլրացած օրերի միջին տևողությունը սովորաբար կազմում է 6 ամիս (բացառությամբ բեռների և աջակցության ապահովագրության դասերի, որոնց համար այն, համապատասխանաբար, կազմել է մեկ և երկու ամիս): Ենթադրվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության տարեկան 10% աճ և գնաճի 5 տոկոսային կետով աճ: Հետևաբար, i-րդ ապահովագրության դասի գծով պարամետրի ռիսկի անորոշությունը ( $4\mathcal{M}_i$ ) կկազմի՝

$$4\mathcal{M}_i = (10\% + 5\%) * 2O_i / 12 * 2U\mathcal{M}_i$$

որտեղ՝

$2O_i$  – i-րդ ապահովագրության դասի գծով չլրացած օրերի միջին տևողությունն է.

$2U\mathcal{M}_i$  – i-րդ ապահովագրության դասի գծով ձևավորված չվաստակած ապահովագրավճարների պահուստն է վերլուծվող ժամանակահատվածի սկզբի դրությամբ:

Ապահովագրության բոլոր դասերի գծով ընդհանուր պարամետրի ռիսկը յուրաքանչյուր ապահովագրության դասի գծով հաշվարկված պարամետրի ռիսկի հանրագումարն է:

*Տատանողականության ռիսկը* վերաբերում է ապահովագրական գործունեության արդյունքների անորոշությանը այն ժամանակահատվածի ընթացքում, որի համար ձևավորված է չվաստակած ապահովագրավճարների պահուստը: i-րդ ապահովագրության դասի համար տատանողականության ռիսկի գծով չվաստակած ապահովագրավճարների աճը ծածկող կապիտալի անհրաժեշտ ծավալը ( $4S_i$ ) հաշվարկվում է հետևյալ ցուցանիշների կիրառությամբ.

$n_i$  – առաջիկա 12 ամիսների ընթացքում i-րդ ապահովագրության դասի գծով ապահովագրական պատահարների կանխատեսվող ծավալը:  $n_i$  հաշվարկի ժամանակ հաշվի չեն առնվում ապահովագրողի կողմից մերժված ապահովագրական պահանջները, ապահովադրի կողմից ապահովագրական հատուցումից զրավոր հրաժարվելու դեպքերը, ինչպես նաև այն հայցերը, որոնցում վերաապահովագրողի մասնակցության բաժինը կազմել է 100%: Վերջիններս կանխատեսվել են ռեզրեսիայի միջոցով:

$m_i$  – առաջիկա 12 ամիսների ընթացքում ապահովագրական հատուցումների կանխատեսվող միջին ծավալը՝ նվազեցված վերաապահովագրողի մասնաբաժնի չափով: Այս դեպքում ևս հաշվի չեն առնվում ապահովագրողի կողմից մերժված ապահովագրական պահանջները, ապահովադրի կողմից ապահովագրական հատուցումից զրավոր հրաժարվելու դեպքերը:

$v_i$  – ապահովագրական պահանջների գումարի բաշխման վարիացիայի գործակիցը:  $n_i$  հաշվարկի ժամանակ հաշվի չեն առնվում ապահովագրողի կողմից մերժված ապահովագրական պահանջները, ապահովադրի կողմից ապահովագրական հատուցումից զրավոր հրաժարվելու դեպքերը, ինչպես նաև այն հայցերը, որոնցում վերաապահովագրողի մասնակցության բաժինը կազմել է 100%:

$4S_i$  – i-րդ հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$4S_i = 2,58 * \sqrt{\frac{n_i}{2}} * m_i * \sqrt{1 + v_i^2}$$

Իսկ ապահովագրության բոլոր դասերի գծով ընդհանուր տատանողականության ռիսկը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$4S = \sqrt{\sum_i 4S_i^2}$$

Չվաստակած ապահովագրավճարների պահուստի աճի ռիսկի գծով կապիտալի անհրաժեշտ մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$4_{2U\mathcal{M}} = \sqrt{4\mathcal{M}^2 + 4S^2}$$

### **Պահանջների պահուստի աճի ռիսկի գծով կապիտալի անհրաժեշտ մեծության հաշվարկը**

Նշված պահուստի գծով դիտարկվում է երեք ռիսկային գործոն՝ *ապահովագրական պահանջների գումար, հատուցումների գնաճ և վճարումների գրաֆիկ*: Պահանջների պահուստի աճի գծով ռիսկը գնահատվում է *հավելյալ վճարման գործակցի* տատանողականության ուսում-

նասիրությամբ: Հավելյալ վճարման գործակիցն ապահովագրական հատուցումների գծով ընդհանուր վնասի և վճարված ապահովագրական հատուցումների հարաբերակցությունն է:

Նշանակենք  $\sigma(\cdot)$ -ով ստանդարտ շեղումը և ՀՎԳ-ով՝ հավելյալ վճարման գործակիցը: Հետևաբար՝

$$\langle \text{ՀՎԳ} \rangle = \frac{\text{Ապահովագրական հատուցումների գծով ընդհանուր վնաս}}{\text{Վճարված ապահովագրական հատուցումներ}}$$

Պահանջների պահուստ = Ապահովագրական հատուցումների գծով ընդհանուր վնաս – Վճարված ապահովագրական հատուցումներ = Վճարված ապահովագրական հատուցումներ \*  $\sigma(\text{ՀՎԳ})$

Հաշվարկվել են ստանդարտ շեղումները  $\sigma_{iD}$  ապահովագրության յուրաքանչյուր դասի և եռանյայկի համար, որի ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական պատահարը: Ստանդարտ շեղումների գնահատականները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Ապահովագրության դաս (i)	Դժբախտ պատահարներից ապահովագրություն	Առողջություն ապահովագրություն	Ցանաքային տրանսպորտի ապահովագրություն	Բեռների ապահովագրություն	Հրդեհից և գույքին պատճառվող այլ վնասներից ապահովագրություն	Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատահանատվության ապահովագրություն	Ընդհանուր պատահանատվության ապահովագրություն	Երաշխիքի տրամադրում	Ֆինանսական վնասների ապահովագրություն	Աջակցության ապահովագրություն
0*	58.31	0.37	0.25	8.18	19.39	0.52	1.33	1.04	0.00	13.58
1	0.81	0.15	0.05	1.33	6.93	0.08	97.66	0.00	0.00	2.47
2	0.48	0.06	0.03	0.76	7.27	0.09	0.47	0.25		2.50
3	0.15	0.04	0.02	0.21	7.62	0.09	0.28	0.00		2.61
4		0.03	0.03		8.03	0.03		0.00		2.75
5		0.00	0.01		0.00			0.00		0.10
6		0.00								0.07
7		0.00								
8		0.00								

\* Այն եռանյայկն է, որի ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական պատահարը:

Իսկ ապահովագրության բոլոր դասերի գծով ընդհանուր տատանողականության ռիսկը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\sigma(\langle \text{ՀՎԳ} \rangle) = \sqrt{\sum_i \sigma_i^2}, \text{ որտեղ } \sigma_i = \sqrt{\sum_a \sigma_{ia}^2}$$

Պահանջների պահուստի աճի ռիսկի գծով կապիտալի անհրաժեշտ մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$U_{\text{ՊԱՀ}} = 2.58 * \sigma(\langle \text{ՀՎԳ} \rangle)$$

Իսկ ոչ կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերությունների ապահովագրական պահուստների աճի ռիսկի գծով անհրաժեշտ կապիտալի ծավալը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$U_{\text{ՊԱՀ}} = \sqrt{U_{2U\eta}^2 + U_{\eta U\zeta}^2 + U_{2U\eta} * U_{\eta U\zeta}}$$

### Ծախսերի ռիսկի գծով կապիտալի անհրաժեշտ մեծության հաշվարկը

Ծախսերի ռիսկի սթրես-սցենարի վերլուծության նպատակն է որոշել կապիտալի ծավալը, որը կպահանջվի ծածկել տարբեր պատճառներով ընկերության ծախսերի աճը 10%-ով: Ենթադրվում է, որ ընկերությունը կարող է նվազեցնել ծախսերի աճը և(կամ) բարձրացնել

եկամուտը 12 ամիս ժամանակահատվածի ընթացքում: Հետևաբար, համարվում է, որ այս մասով սթրես-թեստի կատարումը կրում է միայն ժամանակավոր բնույթ: Այդ պատճառով էլ այս ռիսկը հաշվարկվում է առանձին:

**Աղետի ռիսկի գծով կապիտալի անհրաժեշտ ծավալի մեծությունը**

Այս դեպքում գնահատվում են տվյալ երկրի համար ընտրված աղետների տեղի ունենալու դեպքում ընկերության կրած կորուստները վերաապահովագրողի մասնաբաժինը նվազեցնելուց հետո: ՀՀ-ի համար ընտրվել են երկու աղետներ՝ գույքային և անձնական վնասներ առաջացնող երկրաշարժ և համաճարակի ռիսկ: Աղետի ռիսկի գծով կապիտալի անհրաժեշտ ծավալի մեծությունը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$U_{\text{ուղետ}} = \sqrt{\sum_i U_{\text{երկ}}^2 + U_{\text{ՀՀ}}^2}$$

որտեղ  $U_{\text{երկ}}$ -ը և  $U_{\text{ՀՀ}}$ -ը, համապատասխանաբար, երկրաշարժի և համաճարակի ռիսկերի գծով ընկերության կրած զուտ կորուստներն են: Առանձին ապահովագրողի համար աղետի ռիսկի սթրես-թեստը կարող է նպաստել ընկերության վերաապահովագրության ծրագրի մշակմանը, իսկ ընդհանուր ապահովագրական շուկայի համար՝ ընդհանուր վերաապահովագրության ինստիտուտի ներդրման անհրաժեշտության հիմնավորմանը, իսկ հետագայում նաև՝ դրա ծավալների կանխատեսմանը:

Ստորև ներկայացվում է վերոնշյալ յուրաքանչյուր ռիսկի համար ընտրված շուկային սցենարի տեղի ունենալու դեպքում կանխատեսվող անհրաժեշտ կապիտալի չափը:

**Աղյուսակ 2**

Ապահովագրական ռիսկ, այդ թվում*	Կորուստի մեծություն (հազար դրամ)	Կորուստ/ Ընդհանուր նորմատիվային կապիտալ*
Չվաստակած ապահովագրավճարների և պահանջների պահուստի ռիսկ	3,008,119	24.1%
Ծախսերի ռիսկ	677,294	5.4%
Աղետի ռիսկ	32,741,902	262.6%
<b>Ընդամենը</b>	<b>36,427,315</b>	<b>292.1%</b>

\* 2012թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ ապահովագրական ընկերությունների ընդհանուր նորմատիվային կապիտալը կազմել է 12,468,734 հազար դրամ:

Բացառությամբ աղետի ռիսկի, կատարված սթրես-թեստի արդյունքում նշված շուկային սցենարների միաժամանակ տեղի ունենալու հետևանքով առաջիկա մեկ տարվա համար կանխատեսված կորուստի մեծությունը կազմում է 3,685,412 հազար դրամ կամ հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ ընդհանուր նորմատիվային կապիտալի 29.6%-ը: Իսկ միայն աղետի ռիսկի վերլուծության հետևանքով կանխատեսվող կորուստը մոտ 2.6 անգամ գերազանցում է ընդհանուր նորմատիվային կապիտալը:

Այսպիսով, ապահովագրական ընկերության սթրես-թեստավորման գործընթացի իրականացումը կառավարման անհրաժեշտ գործիքներից մեկն է, որը հնարավորություն է տալիս բացահայտելու ընկերության գործունեության ռիսկային ոլորտները, որոնք կարող են վտանգել իր ֆինանսական կայունությունը: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է պարբերաբար, առնվազն եռամսյակը մեկ, իրականացնել սթրես-թեստավորման գործընթացը և արդյունքների վերաբերյալ մանրամասն հաշվետվություն ներկայացնել կառավարման մարմիններին: Սթրես-թեստեր պետք է պարբերաբար իրականացվեն նաև ապահովագրական գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից, որպեսզի գնահատվի ապահովագրողի կողմից ֆինանսական կայունության և վճարունակության պահպանման մակարդակը հնարավոր վնասներ առաջանալու տարբեր սցենարների դեպքում:

**Աստիկ Անանյան  
Մարգարիտա Կիրակոսյան**

## **Стресс-тестирование для страховых компаний Армении**

### **Аннотация**

Стресс-тесты являются необходимым инструментом для страховой компании, с помощью которых страховщик может управлять своими рисками и поддерживать адекватные финансовые ресурсы для борьбы с этими рисками. Стресс-тесты могут быть использованы для выявления и количественной оценки влияния различных сценариев на будущее ожидаемое финансовое положение страховой компании.

Эта статья описывает стресс-тестирование для страховых компаний Армении.

**Astghik Ananyan  
Margarita Kirakosyan**

## **Stress testing for Armenian non-life insurance market companies**

### **Abstract**

Stress tests are a necessary tool in assisting an insurer to manage its risks and maintain adequate financial resources to deal with those risks. In the broad sense, stress tests can be used to identify and quantify the impact of different stress scenarios on an insurer's expected future financial position.

The paper describes stress testing of insurance risks and expense risk for Armenian non-life insurance market companies.

**ՆԱԻՐԱ ԱՓՅԱՆ**  
*պ. գ. թ., դոցենտ*

## **ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ ԻՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ**

Տեղական ինքնակառավարման համակարգ ստեղծելու գործում անցած 15 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունն ունեցել է որոշակի առաջընթաց: Սակայն հանրային ծառայությունների մատուցման համար բավարար ֆինանսական միջոցների բացակայության պայմաններում համայնքներն ի գործու չեն կյանքի կոչել իրենց ժողովրդավարական առաքելությունը, հանդես գալ որպես իշխանության կենտրոնացման հակակշիռ, արդյունավետ համագործակցել դոնոր և բարեգործական կազմակերպությունների հետ՝ անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացման և պահպանման համար:


Սեր երկրի երկաստիճան բյուջետային համակարգում առանցքային նշանակություն ունի պետական բյուջեն, և տրամաբանական է, որ պետական եկամուտների փաստացի հավաքագրումների ցուցանիշը մշտապես գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում՝ որպես երկրի առջև ծառայած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հաղթահարման երաշխիք: Զարգացման ներկա փուլում կառավարությունը կարևորում է ինչպես այդ եկամուտների մակարդակը, այնպես էլ դրանց ապահովմանն ուղղված վարչարարության ժամանակակից, անաչառ և հետևողական միջոցառումների իրականացումը: Շարունակվելու է պետական եկամուտների հավաքագրման վարչարարության արդյունավետության բարձրացումը, որը կլինի եկամտային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը<sup>1</sup>:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր 2012-2017թթ., էջ12:

Ձուգահեռաբար կարևորվում է նաև ՀՀ բյուջետային համակարգի երկրորդ մակարդակը՝ համայնքների բյուջեները՝ որպես Հայաստանի Հանրապետությունում տեղական ժողովրդավարության ամրապնդման, ապակենտրոնացման գործընթացների խորացման և, վերջին հաշվով, տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման ապահովման երաշխիք: Խոշոր և ֆինանսապես կայուն համայնքներ ունենալու պայմաններում բնակչությունն իր կենսագործունեության առաջնահերթ խնդիրները կարող է լուծել տեղերում: Ընդլայնված հնարավորություններով և մեծ պատասխանատվությամբ գործող տեղական ինքնակառավարման մարմիններ ունենալը բնակչությանը պատշաճ որակի հանրային ծառայություններով ապահովելու Հայաստանի կառավարության որդեգրած իրատեսական քաղաքականությունն է:

Պետական և համայնքային բյուջեների եկամուտների միջև զուգահեռներ գծելու անհրաժեշտություն չկա այն առումով, որ դրանք տարբեր հարթություններ են: Սակայն ակներև է մի փաստ, համաձայն որի ուշադրության առյուծի բաժնին արժանանում է պետական բյուջեն՝ եկամուտների հավաքագրման շեշտադրմամբ, իսկ համայնքների բյուջեները մնում են ստվերում: Ստորև ներկայացված գծապատկեր 1-ը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների եկամտային մասերի աճի տեմպերի մասին:


**Գծապատկեր 1**




Պետական բյուջեի եկամուտները համայնքների բյուջեների եկամուտների համեմատ ունեն աճի բացահայտ առաջանցիկ տեմպեր, բացառությամբ 2009 թվականին պետական բյուջեի եկամուտների նվազման փաստի, որը բացատրվում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի «հարվածով»: Նկատենք, որ համայնքների բյուջեները համեմատաբար ապահովագրված էին այդ տեսակ «հարվածից» հենց պետական բյուջեի շնորհիվ՝ կապված համայնքների բյուջեներին պետական բյուջեից հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հետ:

Խնդրահարույց ենք համարում ՀՀ պետական և համայնքների բյուջեների եկամուտներում հարկային եկամուտների տեսակարար կշիռներին վերաբերող հարցը (գծապատկերներ 2 և 3):

**Գծապատկեր 2**



**Գծապատկեր 3**





ՀՀ համայնքների բյուջեների եկամուտները 2009-2011 թթ.\*

(մլրդ դրամ)

Տարի	Դասակարգում	Ընդամենը եկամուտ	Հողի հարկ	Գույքահարկ	Տեղական տուրքեր	Պետական տուրքեր	Գույքի վարձակալությունից եկամուտներ	Այլ սեփական եկամուտներ
2011	Բյուջե	96,785	4,804.7	12,759	2,605.8	797.0	2,784.0	3,870.7
	Սեփական եկամուտներ		27,621.2					
	Գույքային հարկեր		17,563.69					
	Փաստացի	95,256	4,435	11,793.1	2,543.6	791.7	2,563.7	2,870.5
2010	Բյուջե	85,016	4,874.8	10,992.0	2,034.3	785.7	2,584.6	3,645.6
	Սեփական եկամուտներ		24,916.9					
	Գույքային հարկեր		15,866.8					
	Փաստացի	83,833	4,575.1	11,267.0	2,297.6	780.5	2,150.2	2,757.1
2009	Բյուջե	54,171	5,257.1	9,349.7	1,825.8	837.3	2,611.0	3,039.3
	Սեփական եկամուտներ		22,920.1					
	Գույքային հարկեր		14,606.7					
	Փաստացի	52,600	4,954.8	10,261.7	1,609.3	734.3	1,905.9	2,221.5
	Սեփական եկամուտներ		21,687.4					
	Գույքային հարկեր		15,216.5					

\* Տվյալները բերված են առանց պաշտոնական դրամաշնորհների:

ՀՀ պետական բյուջեի եկամուտներում հարկային եկամուտները կազմում են 74 %, իսկ համայնքների բյուջեների եկամուտներում՝ 19 %: Եթե պետական բյուջեում հնարավոր է ապահովել հարկային եկամուտների հավաքագրման այդպիսի «լուրջ» տեսակարար կշիռ, ապա կարծում ենք, որ այլ հավասար պայմաններում համայնքների բյուջեները կարող էին ցուցաբերել մոտարկված «վարքագիծ»: Այնինչ տեսնում ենք բևեռայնորեն տարբեր պատկերներ: Այս փաստը մտածելու տեղիք է տալիս բազում առումներով՝ տեղերում (համայնքներում) օրենսդրության բացերի, հարկային վարչարարության պատշաճ մակարդակի բացակայության, համայնքների բյուջեների նկատմամբ հարկատուների թերահավատության, համայնքների բնակչությանն անհրաժեշտ հանրային ծառայությունների ոչ պատշաճ մակարդակով և ծավալով մատուցման և այլն:

Աղյուսակ 1-ում բերված տվյալների<sup>1</sup> վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշակի ժամանակահատվածում՝ 2009-2011 թվականներին, ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների ինչպես ծրագրային, այնպես էլ փաստացի ցուցանիշներն աճի միտում են դրսևորել՝ համապատասխանաբար 54,171, 85,016, 96,785 մլրդ և 52,600, 83,833, 95,256 մլրդ դրամ: Սակայն փաստացի հավաքագրումները զիջում են ծրագրային ցուցանիշներին բոլոր 3 տարիների կտրվածքով:

Նկատենք, որ համայնքների բյուջեների 2010 և 2011 թթ. փաստացի սեփական եկամուտները կազմում են փաստացի ընդամենը եկամուտների 28.4 և 26.2 %-ը, որը այլ հավասար պայմաններում վկայում է մեր երկրում համայնքների բյուջեների սեփական սուղ ֆինանսական ռեսուրսների մասին: Վերջինս իր հերթին ենթադրում է ՏԻՄ-երի առջև ծառայած բազում չլուծված խնդիրների շարան և բնականաբար պետական բյուջեից ֆինանսապես կախյալ վիճակ, որը արժեզրկում է սեփական միջոցներով սեփական խնդիրները լուծելու ՏԻՄ-երի արժանապատիվ

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության <http://www.mta.gov.am/> կայքում տեղադրված տվյալների հիման վրա:

առաքելությունը: Այս առումով խիստ կարևորում ենք ֆինանսական ապակենտրոնացման հիմնախնդրի շարունակական լուծումը, որը հնարավորություն կընձեռի ֆինանսապես ուժեղացնելու ՏԻՄ-երը:

ՀՀ համայնքների բյուջեների սեփական եկամուտներում առյուծի բաժին են կազմում գույքային հարկերը՝ հողի հարկը և գույքահարկը՝ 2009-2012 թթ. կտրվածքով համապատասխանաբար 70.2 %, 66.5 % և 64.9 %:

Ապակենտրոնացման քաղաքականության կարևոր արդյունքներից մեկը տեղական հարկերի ինստիտուտի ներմուծումն էր, ինչպես նաև տեղական հարկերի հետ կապված վարչարարությունը որպես ՏԻՄ-երի պարտադիր լիազորություն սահմանելը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «բ» մասով<sup>1</sup> սահմանված են տեղական հարկերը՝ գույքահարկը, հողի հարկը և հյուրանոցային հարկը: Այլ օրենքներով կարող են սահմանվել այլ տեղական հարկատեսակներ: Նկատենք, որ հյուրանոցային հարկի մասին դեռևս չի ընդունվել համապատասխան օրենք: «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքների համապատասխանաբար 57-րդ և 281-րդ հոդվածներով որպես համայնքի բյուջեի եկամուտ սահմանված է տրանսպորտային միջոցների կայանատեղի հարկ, սակայն 2011 թվականի հուլիսի 30-ից գործողության մեջ է մտել «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքը<sup>2</sup>:

Ընթացիկ բյուջեների կատարման և նոր ապառքների չկուտակման հիմնախնդրի լուծումը մեծապես կախված է արդյունավետ վարչարարությունից այն առումով, որ իրատեսական բյուջեների կանխատեսումը թե՛ պետական և թե՛ համայնքի մակարդակում չի երաշխավորում դրանց կատարումը՝ առանց որոշակի խթանիչ լծակների կիրառման: Այս առումով կարևորվում է 2012 թվականի գարնանն ընդունված տեղական հարկերի մասին օրենսդրական փաթեթը<sup>3</sup>, որով բազմաթիվ հանվում են անհուսալի ապառքները՝ հնարավորություն ընձեռելով ձևավորել առավել իրատեսական բյուջեներ և ամբողջությամբ կատարել դրանք: Տեղական հարկերի ոչ պատշաճ հավաքագրումը հարվածում է համայնքին՝ նվազեցնելով համայնքի բյուջեի եկամուտները: Բյուջետային կարգապահությունն առանցքային նշանակություն ունի ինչպես պետական բյուջեի, այնպես էլ համայնքների բյուջեների կատարման հարցում:

Անհրաժեշտ է կիրառել այնպիսի հարկային գործիքներ, որոնցով կհարկվեն տեսանելի հարստության բոլոր ձևերը: Տեղական մակարդակում հարկային համակարգի հուսալի ներկայացուցիչներն են գույքային հարկերը՝ հողի հարկը և գույքահարկը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գույքահարկի որոշ բազաներ շարժական չեն, դրանց հարկումն արդյունավետ է:

Անշարժ գույքը, որին դասվում են հողը և շենքերը, շինությունները հողի հարկով և գույքահարկով առանձին-առանձին հարկելու փոխարեն կարելի է հարկել մեկ միասնական հարկով՝ անշարժ գույքի հարկով՝ գույքային հարկի բազան ձևավորելով որպես այժմ գործող հողի հարկի և գույքահարկի բազաների ամբողջություն: Որպեսզի այդ հարկերի հավաքագրումը տարելեղջին չկուտակվի, մինչև օգոստոս ամիսը վճարելու դեպքում հարկի ընդհանուր գումարը կարելի է նվազեցնել 10 %-ով:

Քննարկվող ենթատեքստում անհրաժեշտ է առանձնացնել շարժական գույք համարվող փոխադրամիջոցների գույքահարկը: Այսպիսով, գույքահարկի և հողի հարկի փոխարեն կունենանք հստակ տարանջատված գույքային հարկեր՝ անշարժ գույքի հարկ և շարժական գույքի՝ փոխադրամիջոցների գույքահարկ:

Հարստության բոլոր տեսանելի ձևերի հարկերը կարող են կայուն եկամուտներ ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների համար: Գույքային հարկերը տեղական լավ

<sup>1</sup> «Հարկերի մասին» ՀՀ օրենք, հոդված 12:

<sup>2</sup> Նշված, ինչպես նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքների համապատասխան հոդվածներից անհրաժեշտ է հանել նշված հարկատեսակը, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքների տեղական տուրքերին վերաբերող կետերում կատարել լրացում՝ ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տուրքի մասով:

<sup>3</sup> «Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին» ՀՕ-93-Ն, 10 ապրիլի 2012թ.,

«Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-95-Ն, 10 ապրիլի 2012թ.,

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-96-Ն, 10 ապրիլի 2012թ.:

հարկեր են, քանի որ թիրախը հարկման անշարժ բազան է (հողը և շենքը, շինությունները) և բացի այդ հարկ վճարողները բնակվում են այն տարածքում, որտեղ մատուցվում են ՏԻՄ-երի համապատասխան ծառայությունները: Համայնքի յուրաքանչյուր անդամ շահագրգիռ է համայնքի ողջ տարածքում գտնվող հարկման ենթակա գույքը հարկային դաշտ ներքաշելու գործում: Իրականում մարդիկ, երբեմն առանց գիտակցելու, իրենց գործողություններով նպաստում են վերոնշյալ հարկային բազայի մեծացմանը: Այսպես, բավականին հաճախ հանդիպող երևույթ է, երբ ապօրինի շինության համար համայնքի բնակիչները «բողոքում են», դրանով իսկ «իրագրելով» համապատասխան ատյաններին գույքահարկով հարկվող նոր օբյեկտի ի հայտ գալու մասին:

Չնայած բարելավումներին՝ գույքահարկի հավաքագրման ցուցանիշները շարունակում են մնալ խնդրահարույց: Շուկայական արժեքից զգալիորեն ցածր կադաստրային արժեքով գնահատման մեթոդի պատճառով գույքահարկից եկամուտների հավաքագրման ներուժը մնում է թիրախային: Անշարժ գույքի հարկման բարձր (3 միլիոն դրամ) շեմի պատճառով հարկումից ազատվում է գյուղական գույքի մեծ մասը: Գույքի պարբերական կադաստրային վերագնահատման համար օգտագործվում են գնահատման անիրատեսական գործակիցներ, որի հետևանքով արժեքն իրացված շուկայական արժեքի համեմատ զգալիորեն ավելի ցածր է ստացվում:

Անշարժ գույքից հարկի հավաքագրման ներուժը կարելի է բարձրացնել կադաստրային արժեքի որոշման բանաձևերը մոտարկելով վերջին շրջանում իրացված գույքի գործարքների փաստացի արժեքներին: Շուկայի հետ կապված վերագնահատումները հնարավոր է բարելավել, եթե անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչությունը հետևողականորեն գրառի գույքի իրացման բոլոր գործարքները՝ ներառելով գործարքի արժեքը և սեփականատիրոջ փոփոխությունը:

Մեր երկրում համայնքի բյուջեով նախատեսված գույքահարկի և հողի հարկի գծով եկամուտների մինչև 10%-ի չափով հայեցողական ազատումներ տրամադրելու՝ ՏԻՄ-երի իրավունքը խաթարում է գույքահարկի ներուժն այն պատճառով, որ հաճախ այդ արտոնությունը տրամադրվում է «ոչ ճիշտ հասցեներով», առավելապես դրանից օգտվում են մարդիկ, ովքեր ի վիճակի են վճարելու գույքային հարկերը: Արդյունքում համայնքի բնակիչների շրջանում սրվում է սոցիալական լարվածությունը, ուժեղանում է եկամուտների բևեռացումը, ձևավորվում է ՏԻՄ-երի նկատմամբ անվստահության մթնոլորտ: Այս առումով կարևորում ենք գույքահարկի գծով արտոնություններ տրամադրելու ՏԻՄ-երի հայեցողության բացառումը: Կարելի է գույքահարկի 3 միլիոն շենք իջեցնել մինչև 1 միլիոն դրամ, որի արդյունքում հարկման բազան կընդլայնվի, իսկ դրա փոխարեն հարկազատումը տեղաշարժել սոցիալապես անապահով դաշտ: Ինչ վերաբերում է զինծառայողների՝ գույքահարկից ազատումներին, դրանք կարելի է փոխարինել ավելի արդյունավետ և տեսանելի հասցեական սուբսիդիաներով:

Հայաստանը հին տրանսպորտային միջոցների «գերեզմանոցի» վերածելուց և դրա հետևանքով շրջակա միջավայրի աղտոտումից խուսափելու համար հարկ ենք համարում վերանայել տրանսպորտային միջոցի հնամալուց հետո հարկի հաշվեգրումը դադարեցնելու քաղաքականությունը: Միաժամանակ, նկատի ունենալով տեսանելի գույքը առավել մեծ չափով հարկելու անհրաժեշտությունը, կարելի է վերանայել բարձր արժեք ունեցող անշարժ և շարժական գույքի գծով գույքահարկի դրույքաչափերը:

Մասնավորապես, 2012 թվականից «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով 25.0 մլն դրամ և ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ և 4500 սմ<sup>3</sup> և ավելի շարժիչի աշխատանքային ծավալ ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաների ներմուծման դեպքում մաքսային արժեքի 20 տոկոսի չափով ակցիզային հարկ է վճարվում ՀՀ պետական բյուջե<sup>1</sup>:

Բնականաբար բարձր արժեք ունեցող անշարժ և շարժական գույքը հիմնականում կենտրոնացված է մայրաքաղաքում և մի քանի համայնքներում: Կարելի է համապատասխան համայնքներին դոտացիաների հատկացման տարբերակված մեխանիզմ մշակել: Նման մոտեց-

<sup>1</sup> «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-79, 2000թ., հոդված 5:

ման դեպքում, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն, պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը, որը կազմում է տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի ոչ պակաս, քան 4 տոկոսը, հիմնականում կբաշխվի մնացած «չքեղությանը առանձնապես աչքի չընկնող» համայնքների միջև:

Կարծում ենք՝ վերը նշված քաղաքականության իրականացումը կարող է օգտակար լինել հասարակության սոցիալական կնճիռը հարթելու գործընթացում: Վերջին հաշվով հարկային օրենսդրությունն ու վարչարարությունը այլ խնդիրների լուծմանը զուգահեռ պետք է ուղղված լինեն սոցիալական արդարության կնճիռը հարթելուն, սոցիալական անհավասարությունը մեղմելուն: «Օրենքի առջև հավասարությունը... միջոց է մարդկությանն ապահովելու ընդհանուր առմամբ առավելագույն օգուտով, որը նա կարող է դրանից ստանալ»<sup>1</sup>:

Պետական բյուջեից համայնքներին հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկման կարգի վերաբերյալ գոյություն ունեն շատ տարբեր հակասական մոտեցումներ, որոնք սակայն պահանջում են ելակետային բազմաթիվ տվյալների բազա, որոնց տիրապետելը որոշակի ծախսեր է ենթադրում, ինչն էլ այդ մոտեցումները հեռու է պահում կյանքի կոչվելուց:

«Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» 2007 թվականից ուժի մեջ մտած օրենքը (առաջին անգամ ՀՀ 2007 թվականի պետական բյուջեից փոխհատուցվել են համայնքների 2005թ. բյուջեների եկամուտների կորուստները) հնարավորություն է տալիս համայնքներին ստանալու համապատասխան փոխհատուցումներ օրենքով սահմանված դեպքերում պարտադիր վճարների գծով համայնքի բյուջեի եկամուտների կորուստների համար: Որպես այլ դոտացիա համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարները ներառվում են ֆինանսական համահարթեցման դոտացիաներում:

Ամփոփելով նշենք, որ անհրաժեշտություն ենք համարում ՀՀ համայնքների բյուջեների ֆինանսական ուժեղացման երկու հիմնական ճանապարհների (սեփական և ոչ սեփական) ռացիոնալ միահյուսումը՝ սեփականի շեշտադրմամբ:

**Наира Апян**

## **Налоговые доходы в местных бюджетах РА**

### **Аннотация**

Для развития системы местного самоуправления важное значение имеют местные бюджеты. Нехватка финансовых ресурсов является основной причиной невыполнения полномочий органами местного самоуправления. Налоговые доходы имеют ключевое значение в решении этой проблемы. В качестве решения проблемы предлагаются изменения в законодательстве и администрирования местных налогов.

**Naira Apyan**

## **Tax Revenue of the Local Community Budgets of Armenia**

### **Abstract**

Local community budgets play a crucial role for development of the self-government system. Lack of financial resources prevents the local self-government bodies to meet their goals. Hence, the tax revenue plays a crucial role in implementing various programs and initiatives by the local self-government bodies. The article proposes to undertake respective legislative changes and change local tax revenue administration processes.

<sup>1</sup> Людвиг фон Мизес, "Человеческая деятельность. Трактат по экономической теории", Челябинск, 2005, с.24.

**ԱՐՄԵՆ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ**

ՆԿԱՎԱՄԱՆ ԳՐԱԿԱՆԱԿՈՒՄԻ ՏՆՈՒՄԻ  
ԿՈՄԻՏԵ

**ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ**

ՆԿԱՎԱՄԱՆ ԳՐԱԿԱՆԱԿՈՒՄԻ ՏՆՈՒՄԻ  
ԿՈՄԻՏԵ

**ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՄՈՂԵԼԻ ՆԵՐՂՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Ծրագրային բյուջետավորումը պետական բյուջեի կազմման գործընթաց է, որն ուղղված է նպատակային ծրագրերի ֆինանսավորումից մինչև պետական ծախսերի հասցեականության ապահովմանը: Ընդ որում, ծրագրային բյուջետավորումը ծախսեր-եկամուտներ վերլուծության արդյունքում պետական ֆինանսների հասցեական վերաբաշխման գործընթաց է՝ հանրային ծառայությունների մատուցման բնագավառում դրանց արդյունավետությունը բարձրացնելու և կառավարչական որոշումներ ընդունելու գործընթացը պարզեցնելու համար:


Ծրագրային բյուջետավորման կառուցվածքը կարելի է ներկայացնել որպես պետական բյուջեի և պետության կողմից նշակված ռազմավարության փոխազդեցություն: Ուստի, ծրագրային կառուցվածքը ծախսերի հասցեական դասակարգման հիմքն է՝ պետության ռազմավարական նպատակներն իրականացնելու համար: Այսպիսով, ծրագրային բյուջետավորումը միջոց է և գործիք, որն օգտագործվում է պետական ֆինանսների կառավարման համակարգում և պատասխանում է հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ է ֆինանսավորումը,
2. ո՞րն է ֆինանսավորման մակարդակը,
3. Ինչպիսի՞ն է ֆինանսավորման արդյունքը:

Ծրագրային բյուջետավորման հիմքում ընկած է բյուջետային ծախսերի հիմնավորումը, որը կատարվում է տարբեր մեթոդներով: Այսպես, ստորև օգտագործվում է «վարից վեր» բյուջետավորման մեթոդը, իսկ ավանդական բյուջետավորման հիմքում ընկած է ճիշտ հակառակ մեթոդը (գծապատկեր 1):

*Գծապատկեր 1*


**Պետության ռազմավարական նպատակները**



- Չետևաբար՝ ծրագրային բյուջետավորման բազային մոդելի կարևորագույն տարրերն են՝
1. պետության ծախսերն ու դրանց տնտեսական բովանդակությունը, ինչպես նաև այդ ծախսերի իրականացման նպատակների ու արդյունքների վերաբերյալ հաշվառվող տեղեկատվությունը,
  2. այդ տեղեկատվության հաշվառում իրականացնելու համար պետական ֆինանսների, մասնավորապես՝ պետական ծախսերի քաղաքականության վերանայման անհրաժեշտությունը դրանց նկատմամբ հասցեական վերահսկողություն իրականացնելու համար,
  3. ծրագրային ծախսերի դասակարգման և դրանց հասցեականության նպատակադրում՝ ըստ խմբերի և ուղղվածության:

**Գծապատկեր 2**

**Ծրագրային բյուջետավորման գործընթացը բնութագրող տեղեկատվական հոսքերը**



Գծապատկեր 2-ում ցույց է տրված ծրագրային բյուջետավորման բազային մոդելի նկարագրությունը՝ հիմք ընդունելով սույն գործընթացը բնութագրող տեղեկատվական հոսքերի ներգրավման անհրաժեշտությունը: Օրինակ, մակարդակ 1-ում սահմանվում են ֆիսկալ քաղաքականության իրականացման համար չափանիշների, մակարդակ 2-ում՝ ծախսային քաղաքականությունն ու դրա առավելությունները, մակարդակ 3-ում որոշվում են պետական միջոցների վատնելու սահմաններն ու դրանց նորմատիվային դաշտը՝ համապատասխան պետական կառավարման մարմինների ծրագրային արդյունքների արդյունավետությունը գնահատելու և պետական ֆինանսավորման ուղղվածությունը հիմնավորելու համար, որոնք ամփոփվում են մակարդակ 4-ում: Մակարդակ 5-ում իրականացվում է ֆիսկալ պլանավորում տարեկան բյուջետավորման գործընթաց նախաձեռնելու նպատակով: Բացի այդ, վերջինիս դեպքում միաժամանակ իրականացվում է ֆինանսական ռեսուրսների վերաբաշխում՝ ըստ ծրագրերի և այն բնութագրող առանձին բաղկացուցիչ մասերի միջև:

Դասական բյուջետավորումը հիմնվում է բյուջեի ծախսերի հոդվածների վրա, ինչը վերահսկում է օգտագործվող ռեսուրսները, այլ ոչ թե ծրագրի արդյունքները: Բյուջեի պլանավորումը «վարից վեր» մեթոդով հնարավորություն չի ընձեռում խթանելու նոր քաղաքականություն և վերանայելու պետության գերակա ուղղությունները:

Փորձենք ամփոփ ներկայացնել ծրագրային բյուջետավորման մոդելի կառուցման սկզբունքները:

Ծրագրային բյուջետավորման հիմքում ընկած է *տեղեկատվության ապահովման սկզբունքը*, ինչը նշանակում է, որ բյուջետային նախաձեռնության փուլի ժամանակ վերանայվում են նպատակային ծրագրերի հիմնական արդյունքները: Վերջիններիս նպաստում են.

1. ծախսերի իրականացման գերակա ուղղությունների վերանայումը և բարելավումը, ինչը հնարավորություն է ընձեռում տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ իրականացնելու առավել արդյունավետ ֆինկալ քաղաքականություն:
2. Գործադիր մարմնի, մասնավորապես առավել ռազմավարական նշանակություն ունեցող նախարարությունների, գերատեսչությունների կողմից ծախսային քաղաքականության վերանայումը՝ դրանց գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար: Օրինակ՝ եթե որևէ նախարարության կողմից իրականացվող ծրագիրը չի բերում նախատեսված արդյունք կամ պահանջում է ավելացնել պլանավորված ծախսերը, այդ ծրագրով նախատեսված միջոցները պետք է հիմնավորվեն, հակառակ դեպքում վերադարձվում են պետական բյուջե:

Վերջինս նշանակում է, որ յուրաքանչյուր նախարարություն կամ գերատեսչություն ծրագրերի ֆինանսավորման համար պետք է իրականացնի հետևյալ հաջորդական քայլերը.

- մշակել ծրագրային նպատակների իրականացման արդյունքում ուղղակի արդյունքների և աշխատանքների փորձագիտական գնահատման տիպային տարբերակ,
- ներկայացնել ֆինանսների նախարարությանը ուղղակի արդյունքների և աշխատանքների փորձագիտական գնահատականներն ու դրանց հիմնավորումները բյուջեի կազմակերպման փուլի ժամանակ:

Ծրագրային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջին հերթին հաշվի է առնվում պարզ և մատչելի *տեղեկատվության ստացման սկզբունքը*: Վերջինս օգտագործվում է բարձր որակավորում ունեցող ծրագրի շահառուների կողմից՝ ուղղակի արդյունքների տնտեսական արդյունավետության մակարդակը բարձրացնելու համար: Ընդ որում, պետք է նշել, որ ֆինանսական և մարդկային ռեսուրսների սահմանափակվածության հիմնախնդիրը ենթադրում է բարձրացնել գործադիր մարմնի արտադրողականության մակարդակը մասնագիտական վերապատրաստման և ֆինանսավորման ծավալների ավելացման միջոցով՝ ծրագրով նախատեսված արդյունքներ ստանալու համար: Այլ խոսքով այդ հիմնախնդիրը կարգավորելու համար անհրաժեշտ է ներդնել պետական կառավարման համակարգում համակարգային գնահատման հստակ մեխանիզմ՝ հաշվի առնել հետևյալ տարրերը.

- սահմանել ծրագրի նպատակները և խնդիրները՝ հիմնավորելով վերջիններիս փոխազդեցության արդյունքում հասարակության և կառավարության գերակա պահանջումների բավարարման անհրաժեշտությունը,
- հիմնավորել ծրագրերի արդյունքները բնութագրող տեղեկատվական հոսքերի արդիականությունը տնտեսական քաղաքականության մշակման համատեքստում,
- խմբավորել ծրագրային արդյունքները և դրանք իրականացնող պետական մարմինների ցանկը, մասնավորապես վերահսկողություն սահմանել ծրագրի շահառուների կատարողականների և ստացված արդյունքների նկատմամբ,
- հիմնավորել ընթացիկ և կապիտալ (նախագծային) ծախսերի տնտեսագիտական բովանդակությունը ներքին աուդիտի ներդրման քաղաքականության միջոցով:

Բյուջետային ֆինանսավորման գերակա ուղղությունների վերանայման հարցում անհրաժեշտ է հաշվի առնել ծրագրերից սպասվող արդյունքների ստացման և բյուջետային գործըն-

թացների *ինտեգրման սկզբունքը*: Ընդ որում, վերջինիս համար առանցքային նշանակություն են ստանում հետևյալ տարրերը՝

- պետական ծախսերի հասցեականության և դրանց նկատմամբ մոնիթորինգ սահմանելու գործընթացի միջոցով,
- նոր ծրագրերի նախաձեռնության ժամանակ դրանց ֆինանսավորման քաղաքականության համակարգային ուսումնասիրություն,
- օրենսդիր և գործադիր մարմինների միջև կոմունիկացիոն կապերի զարգացում՝ ծրագրային բյուջետավորման արդյունավետության և պետական ծախսերի նկատմամբ խիստ վերահսկողություն սահմանելու համար: Բացի այդ, վերոգրյալ տարրերի ամբողջությունը կազմում է նորմատիվային և իրավական ակտերի, հանձնարարականների բովանդակությունը, որոնք ներկայացվում են հաշվետվությունների փաստաթղթային տեսքով: Առողջապահության, կրթության, տրանսպորտի և կապի, այլ ենթակառուցվածքային նախարարություններն իրավասու են բյուջետային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի և դրանց արդյունքների արդյունավետության ապահովման համար, ինչը նշանակում է հստակ պլանավորել բյուջետային պարբերաշրջանը՝ նպատակ ունենալով բարձրացնել բնակչության կենսամակարդակը: Բացի այդ, ելնելով ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրներից, մակրոտնտեսական քաղաքականության պլանավորումը հիմնական գործիքն է տնտեսության իրական հատվածի գերակա ուղղությունները սահմանելու, դրանց խնդիրները լուծելու, տնտեսական աճ ապահովելու և աղքատության մակարդակը կրճատելու հարցում: Իսկ եթե մակրոտնտեսական քաղաքականության և բյուջետային գործընթացի պլանավորումը առաջ է բերում որոշակի շեղումներ, ծրագրային բյուջետավորման առաջ քաշած խնդիրները ցանկալի արդյունքներ չեն կարող ապահովել:

Այսպես, բազմաթիվ երկրներում պետական ծախսային քաղաքականությունը պլանավորվում է երկարաժամկետ հատվածում (շուրջ 5-10 տարի), ինչը, վերջին հաշվով, պետական սոցիալական քաղաքականության իրականացման համար հիմքն է: Շատ հաճախ սոցիալական քաղաքականության և տնտեսական քաղաքականության նպատակներն և շահերը բախվում են, որոնց արդյունքում խարխլվում են բյուջետային քաղաքականության, մասնավորապես ծրագրային բյուջետավորման հիմքերը:

Այսպիսով, անփոփելիվ այս հոդվածի շրջանակներում առաջ քաշված հիմնախնդիրները, գտնում ենք, որ ծրագրային բյուջետավորման խթանումը պահանջում է ձևավորել առավել ճկուն գործադիր իշխանության համակարգ՝ նախարարություններ, գերատեսչություններ, որոնք պատասխանատվության կենթարկեն բյուջետային միջոցների օգտագործման և ծրագրերի շահառուների կատարողականների նկատմամբ: Ուստի, ծրագրային բյուջետավորման կառավարման ճկուն համակարգ ներդնելու և այն զարգացնելու համար առաջարկում ենք ձևավորել հետևյալ միջավայրը.

1. Ծրագրերի շահառուների արտադրողականությունը բարձրացնելու համար իրականացնել կադրերի մասնագիտական վերապատրաստման դասընթացներ՝ հիմք ընդունելով պետական ֆինանսավորման աղբյուրները:
2. Հիմք ընդունելով բարձրորակ մասնագետների առկայությունն այս ոլորտում՝ ծրագրերի ուղղակի արդյունքների արդյունավետության աստիճանի բարձրացումն ուղեկցվում է կոռուպցիոն ռիսկերի նվազեցմամբ այս ոլորտում աշխատանքի բարձր վարձատրություն սահմանելու միջոցով:
3. Վարչական գործընթացի ճկունության ապահովման համար անհրաժեշտ է վերանայել պետության կողմից իրականացվող քաղաքականությունը՝ առավել քիչ գերակա ուղղությունների ֆինանսավորումը նվազեցնելու և սպասվող արդյունքներ չապահովելու դեպքում:



**Армен Багдасарян  
Кристинэ Багдасарян**

## **О вопросах внедрения модели программного бюджетирования**

### **Аннотация**

Исходя из поставленных вопросов в пределах программного бюджетирования и новой модели, считаем, что для внедрения программного бюджетирования необходимо создать более гибкую систему исполнительной власти в лице министерств и ведомств несущей ответственность за использование средств, направленных на реализацию бюджетных программ, и за деятельностью бенефициантов бюджетных программ.

**Armen Baghdasaryan  
Krsitine Baghdasaryan**

## **On Program Budgeting Model Implementation Issues**

### **Abstract**

Taking into consideration the issues encountered in the program budgeting model, we think that the implementation of program budgeting requires more flexibility of the Executive Branch: ministries, agencies and offices will be responsible for the funds of budget programs and the activities of beneficiaries of these programs.

**ԱՐՄԱՆ ԲԱԳԾԱՐՅԱՆ  
ԵՊՏ ԿՐՍԻՏԻՆԵՅԱՆ**

## **ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՍՔՈՐԻՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ**

### **Վարկային ռիսկի վրա ազդող հիմնական գործոնները**

Ռիսկերի արդյունավետ կառավարման հիմքը դրանց որակյալ գնահատումն է, որի արդյունքում հնարավոր կլինի նույնականացնել, չափել ընթացիկ և պոտենցիալ կորուստների մակարդակը, ինչպես նաև բացահայտել ռիսկի մակարդակի վրա ազդող տարբեր գործոնների ազդեցության աստիճանը: Ընդ որում վարկային ռիսկի գնահատումը պետք է իրականացվի վարկավորման բոլոր գործընթացներում՝ պլանավորումից մինչև պարտավորության լրիվ մարում (դուրսգրում):

Սպառողական վարկերի վարկային ռիսկի վերլուծության ժամանակ հաճախ օգտագործում են պարտավորության ժամկետանց վիճակում գտնվելու տևողությունը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ֆիզիկական անձանց վարկային պարտավորությունների բուն դեֆոլտի ի հայտ գալը պարզ է դառնում միայն ժամկետանց օրերի ինչ-որ քանակ լրանալուց հետո, ընդ որում ժամկետանց օրերի աճելուն զուգընթաց աճում է նաև դեֆոլտի ենթարկվելու հավանականությունը: Բացի դրանից, ձևավորված ժամկետանց պարտավորությունները դեռ ենթակա են մարման (հետբերման), որից հետո արդեն կձևավորվեն վերջնական կորուստները: Օրինակ, ըստ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IAS 39)՝ ժամկետանց պարտավորությունների ծավալը համարվում է վարկային ռիսկի ցուցիչներից մեկը: Ժամկետանցության ի հայտ գալու վրա ազդեցություն են ունենում մի շարք գործոններ, որոնց ցանկը տարբեր մոտեցումների դեպքում բավականին բազմազան է: Այդ մոտեցումներում օգտագործվող գործոնները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի:

- գործոններ, որոնք արտահայտում են հաճախորդների բնութագրիչները (հեղինակություն, վարկային պատմություն, ունեցվածք, տնտեսական բարեկեցություն և այլն),
- գործոններ, որոնք արտահայտում են վարկերի բնութագրիչները (վարկի գումար, ժամկետ, նպատակ, ապահովվածության առկայություն և այլն):

Հաճախորդների վարկունակությունը գնահատելիս բանկերը սովորաբար հաշվի են առնում նաև նրանց բնութագիրը՝ հեղինակություն, պատասխանատվության աստիճան, պարտքի մարման պատրաստակամություն և ցանկություն: Բանկը նախ և առաջ փորձում է պարզել, թե՞ ինչպես է հաճախորդը վերաբերվել իր պարտավորություններին անցյալում, ունեցե՞լ է ուշացումներ, թե ոչ, այլ կերպ ասած՝ ծանոթանում է վարկային պատմությանը (հարցում վարկային բյուրոներ, ռեգիստրներ, այլ տեղեկատվական համակարգեր): Վարկային պատմությունը թույլ է տալիս հասկանալ հաճախորդի պատասխանատվության աստիճանը՝ ելնելով նրա վարկային պատմության երկարությունից և պարտավորությունների սպասարկման որակից: Որակյալ կամ դրական վարկային պատմության չափանիշները սովորաբար յուրաքանչյուր վարկավորող կազմակերպություն ինքն է սահմանում: ՀՀ բանկերի շրջանում, օրինակ, որպես այդպիսի չափանիշ հաճախ ընդունված է վերցնել 30 օրից ավել պարբերաբար ժամկետանցման բացակայությունը: Վարկավորող կազմակերպության համար շատ կարևոր է նաև հաճախորդի բարոյահոգեբանական պատկերը, որի մասին բանկը փորձում է պատկերացում կազմել անհատական հարցազրույցի միջոցով:

ՀՀ առևտրային բանկերում սպառողական վարկավորման ընթացքում ֆիզիկական անձանց ֆինանսական վիճակի մասին պատկերացում կազմելու համար օգտագործում են տրամադրվող վարկի և գործող վարկերի ամսական մարման գումարի և համախառն եկամուտների հարաբերակցությունը: Ինչքան փոքր է այդ հարաբերակցությունը, այնքան բարձր է գնահատվում հաճախորդի ֆինանսական վիճակը: Եթե իրավաբանական անձանց ֆինանսական կայունությունը գնահատվում է տնտեսական գործունեության արտաքին պայմանները բնութագրող ցուցանիշների (տնտեսական պայմաններ, մրցակցությունը տվյալ բնագավառում և այլն) և նրանց սեփական բնութագրիչների (կառավարման որակ, ակտիվների և պարտավորությունների մեծություն և այլն) հիման վրա, ապա ֆիզիկական անձանց դեպքում դիտարկվում են նրանց սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշները (սեռ, տարիք, որակավորում, տնային տնտեսության կազմ և այլն): Տվյալ պարագայում ֆիզիկական անձի կայունությունն արտահայտում է ֆինանսական վիճակի վատթարացմանը հանգեցնող տարբեր պատահարների և իրադարձությունների ազդեցության ենթարկվածության աստիճանը:

Դիտարկենք ֆիզիկական անձանց վարկավորման ընթացքում միջազգային պրակտիկայում օգտագործվող մոտեցումները և նրանցում կիրառվող ցուցանիշները: Դևիդ Դյուրանի (Кабушкин С.Н. Управление банковским кредитным риском, 2005, էջ 180-190) մեթոդիկայում վերոհիշյալ նպատակով օգտագործվում են հետևյալ գործոնները՝ սեռ, տարիք, տվյալ վայրում բնակության ժամկետ, մասնագիտություն, գործունեության ոլորտ, աշխատանքային փորձ տվյալ կազմակերպությունում, ֆինանսական ցուցանիշներ (բանկային հաշիվներ, անշարժ գույք, կյանքի ապահովագրության պայմանագրի առկայություն): Գերմանական վարկավորող կազմակերպությունները վերլուծության են ենթարկում հետևյալ ցուցանիշները (Прошкина И.С., 2005)՝ վարկային պատմություն (նախորդ վարկերի մարումների որակ), ամբողջ պարտավորությունը ստացվող եկամտով մարելու կարողություն, որակավորում, աշխատանքային փորձ վերջին աշխատավայրում, զբաղվածության ոլորտ, տարիք, ընտանեկան կարգավիճակ, խնամքի կարիք ունեցող ընտանիքի անդամների քանակ: Ֆրանսիական բանկերը հիմնվում են հետևյալ ցուցանիշների վրա (Прошкина И.С., 2005)՝ ֆինանսական գործարքում հաճախորդի մասնակցությունը (կանխավճար), ընտանեկան կարգավիճակ, տարիք, մասնագիտություն, աշխատանքային փորձ, տարեկան եկամտի մեծություն, անշարժ գույքի առկայություն, բանկային հաշվում գումարի մեծություն: Պարտավորությունների մարման մոտիվացիայի կանխատեսման ոլորտի ռուս հետազոտողներ Ի.Ի. Սեմյոնովան և Յ.Յ. Անդիևան հավաստում են, որ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները, հատկապես տարիքային և գենդերային բնու-

թագրիչները, եապես ազդում են վարկի վերադարձելիության հավանականության վրա (Семенова И.И., Андиева Е.Ю. О построении психологического профиля заёмщика для оценки рисков в сфере потребительского кредитования// Управление риском. 2008. стр. 54-60):

Այսպիսով, ներկայացվեցին սպառողական վարկավորման, կամ որ նույնն է ֆիզիկական անձանց վարկավորման ընթացքում վարկային ռիսկի վրա ազդող հիմնական գործոնները: Վերը թվարկված տարբեր երկրներում կիրառվող մոտեցումներում նշված գործոններից ոչ բոլորն են կիրառվում ՀՀ առևտրային բանկերում, մասնավորապես, սպառողական վարկեր տրամադրելիս ՀՀ առևտրային բանկերը որպես անհատական բնութագրիչներ դիտարկում են հետևյալ գործոնները՝ տարիք, սեռ, ընտանեկան կարգավիճակ, աշխատանքային փորձ վերջին աշխատավայրում, ընդհանուր աշխատանքային փորձ, գործունեության ոլորտ, սեփականության առկայություն, վարկային պատմություն: Ընդ որում ՀՀ բանկերը հիմնականում կարևորում են վարկային պատմությունը, մասնավորապես ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստրից և Աքրա վարկային բյուրոյից (ACRA, Armenian Credit Reporting Agency, վարկային բյուրո) ստացված վարկային պատմության վերաբերյալ զեկույցները: Վերը նշված գործոնների կիրառումը, սակայն, Հայաստանում հիմնականում սահմանափակվում է փորձագիտական եզրահանգումներով: Սպառողական վարկավորման ընթացքում առաջացող վարկային ռիսկի կառավարման համար միջազգային պրակտիկայում կիրառվում է վարկային սքորինգը (Credit Scoring): Այն վարկառուների՝ ըստ ռիսկայնության աստիճանի տարբերակման (դիֆերենցիացիայի) տեխնիկա է՝ հաշվի առնելով վարկառուների վարկային ռիսկի վրա ազդող գործոնների համախումբը: Վարկային սքորը (միավորը) հավաքական թվային գնահատական է, որը ստացվում է վարկառուի բնութագրիչների (համապատասխան կշիռների գնահատման միջոցով) վիճակագրորեն միավորման արդյունքում:

Միջազգային պրակտիկայում վարկային սքորինգի ամենատարածված մոդելը Լոգիթ ոչ գծային ռեգրեսիոն մոդելն է (Stepanova and Thomas, 2002): Լոգիթ մոդելը լավ պատկերացնելու համար վերցնենք  $y_i^*$  կախյալ փոփոխականը, որը գծայնորեն կախված է  $(x_{i1}, x_{i2}, \dots, x_{ik})^T = X_i^T$  փոփոխականներից և  $\varepsilon_i$  պատահական սխալից՝

$$y_i^* = X_i^T \beta + \varepsilon_i$$

Նաև վերցնենք  $y$  փոփոխականը, որը ընդունում է միայն 2 արժեք՝

$$y_i = \begin{cases} 1, & y_i^* > 0 \\ 0, & y_i^* < 0 \end{cases}$$

Օգտվելով վերոհիշյալ արտահայտություններից՝ պայմանական հավանականությունը, որ  $y_i = 1$ , կարող ենք գտնել հետևյալ ձևափոխություններով.

$$P(y_i = 1 | X_i^T) = P(X_i^T \beta + \varepsilon_i > 0 | X_i^T) = P(\varepsilon_i > -X_i^T \beta | X_i^T) = 1 - G(-X_i^T \beta) = G(X_i^T \beta) = p_i$$

$$P(y_i = 0 | x_i) = 1 - G(X_i^T \beta) = 1 - p_i$$

$G(x)$ -ը Լոգիստիկ բաշխման ֆունկցիան է.

$$p_i = P(y_i = 1 | X_i^T) = G(X_i^T \beta) = \frac{1}{1 + e^{-X_i^T \beta}} \quad (1)$$

Որտեղ  $p_i$ -ն դեֆոլտի<sup>1</sup> ենթարկվելու հավանականությունն է,  $(x_{i1}, x_{i2}, \dots, x_{ik})^T = X_i^T$ -ն  $i$ -րդ վարկառուի բնութագրիչներն են, իսկ  $\beta = (\beta_1, \beta_2, \dots, \beta_k)$ -ն  $X_i^T$ -ն բնութագրիչների համապատասխան գործակիցներն են:

(1)-ի ձևափոխությունների արդյունքում կստանանք.

$$\ln\left(\frac{p_i}{1 - p_i}\right) = x_{i1}\beta_1 + \dots + x_{ik}\beta_k$$

<sup>1</sup> Հետազոտության մեջ որպես դեֆոլտի պատահար վերցվում է 30 օր և ավելի ժամկետանց դառնալը:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ դեֆոլտի ենթարկման և չենթարկման հավանականությունների հարաբերության լոգարիթմը (արևմտյան գրականության մեջ այն անվանում են log-odds) պետք է գծային կախման մեջ լինի փոփոխականներից (գործոններից) յուրաքանչյուրի հետ: Այդ իսկ պատճառով գործոնների ընտրությունից առաջ բոլոր հնարավոր գործոնների համար անհրաժեշտ է ստուգել վերոհիշյալ հատկությունը՝ որպես դեֆոլտի հավանականության գնահատական վերցնելով դեֆոլտի հաճախականությունը: Այնուհետև անկախ փոփոխականների համապատասխան գործակիցները գնահատվում են առավելագույն ճշմարտանմանության մեթոդի օգնությամբ:

### Տվյալների ընտրությունը, հարմարեցումը և փորձի արդյունքները


Հետազոտության համար վերցվել են 10000 կարճաժամկետ (մինչև 2 տարի) 2010 և 2011 թվականների ընթացքում տրամադրված սպառողական վարկերի՝ վարկառուներից կազմված ընտրանք:

Տվյալների բազան, բացի վարկի բնութագրիչներից, պարունակում է նաև վարկառուի հետևյալ բնութագրիչները.

- Տարիք
- Սեռ
- Ընտանեկան կարգավիճակ
- ԱՔՌԱ նկարագրող Սքոր
- ԱՔՌԱ կանխատեսող Սքոր

Սքորինգային համակարգի գնահատման տեսանկյունից, իհարկե, ցանկալի է ավելի մեծ թվով տվյալների առկայություն, սակայն ՀՀ-ում բանկերը կարևորություն չեն տվել հետագա վիճակագրական վերլուծությունների իրականացմանը, այդ իսկ պատճառով նրանց բազաներում առկա են այն բնութագրիչները, որոնք բանկային ծրագրային ապահովումներում մուտքագրման պարտադիր դաշտեր են:

Վարկի բնութագրիչներից կարելի էր վերցնել նաև տոկոսադրույքի և վարկի գումարի մեծությունները, սակայն տոկոսադրույքի դեպքում այդ անելն իմաստ չէր ունենա, որովհետև կարճաժամկետ վարկեր տրամադրելիս բանկերը բոլորի համար սահմանում են նույն ստանդարտացված պայմանները: Իսկ ահա գումարի դեպքում խախտվում է դեֆոլտի հաճախականության և տվյալ փոփոխականի միջև գծային կախվածության պահանջը:



Վերջին երկու ցուցանիշները ԱՔՌԱ վարկային բյուրոյի արգասիքն են: **ԱՔՌԱ նկարագրող սքորը** բնութագրում է վարկառուի վարկային պատմության ներկա վիճակը՝ հաշվի առնելով այս պահին ունեցած վարկային բեռը, այս պահին կան երբևէ ունեցած ժամկետանց պարտավորությունները, վարկային պատմության երկարությունը և այլն: **Իսկ ԱՔՌԱ կանխատեսող սքորը** բնութագրում է վարկառուի կանխատեսող վարկարժանությունն առաջիկա ժամանակահատվածի համար՝ հաշվի առնելով նրա վարկային պատմության մոդելը, վարքագիծը և նմանատիպ վարկառուների նկարագիրը (ԱՔՌԱ-սքորի նկարագրություն, [http://acra.am/score\\_report.htm](http://acra.am/score_report.htm)): Տվյալների բազայում ԱՔՌԱ նկարագրող և կանխատեսող սքորերը (միավորները), ինչպես նաև

մյուս բնութագրիչները ներկայացված են տրամադրման պահի դրությամբ: Հետազոտության մեջ սակայն այս երկու փոփոխականներից կվերցվի միայն ԱՔՌԱ կանխատեսող սքորը, քանի որ նրանց միջև առկա է շատ բարձր կորելացվածություն (0.87, որը շատ մոտ է 1-ին): Նկատենք նաև, որ այս սքորների գնահատման ընթացքում չեն կիրառվել վարկառուների անձնական բնութագրիչները, և հաշվի են առնվել միայն նրանց վարկային պատմության ցուցանիշները:

Այսպիսով, մոդելի համար ունենք հետևյալ չորս փոփոխականները՝ տարիքային խումբ, սեռ, ընտանեկան կարգավիճակ, ԱՔՌԱ կանխատեսող սքոր, իսկ որպես պայմանական դեֆոլտ կվերցվի 1 տարվա ընթացքում 30 օր և ավելի ժամկետանց դառնալը:

Փոփոխականների ընտրությունից հետո անհրաժեշտ է նաև բազայից նախապես զտել հետևյալ բնորոշումներով վարկերը.

- ոչ ստանդարտ, անսովոր մեծ գումարով վարկերը,
- առաջին իսկ վճարման ուշացումներով վարկերը,
- գործառնական ռիսկի ազդեցությամբ (տեխնածին կամ մարդկային գործոններով պայմանավորված) ուշացումներով վարկերը,

Այսպիսով, Լոգիթ մոդելի կիրառությամբ մեկ տարվա ընթացքում 30 օր և ավելի ժամկետանց դառնալու հավանականությունը ( $p_i$ ) կլինի.

$$p_i = \frac{1}{1 + e^{-(Age*\beta_1 + sex*\beta_2 + Status*\beta_3 + Acra*\beta_4)}}$$

Փոփոխականների կողավորումները ներկայացված են աղյուսակ 1-ում, իսկ մոդելի գործակիցների գնահատման արդյունքները (գնահատումն իրականացվել է Statistica փաթեթի միջոցով)՝ աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 1**

Age		ACRA-score	
18-23	1	400-449	1
24-29	2	450-499	2
30-35	3	500-549	3
36-41	4	550-599	4
42-47	5	600-649	5
48-53	6	650-699	6
54-59	7	700-749	7
60-65	8	750-799	8
66-	9	800-850	9
Status		sex	
Ազատ	0	Արական	1
Անուսնացած	1	Իգական	2

**Աղյուսակ 2**

	$\beta$	Standard error	Wald's stat	p
Հաստատուն	0.141	0.1596	0.780	0.377
Կարգավիճակ	-0.150	0.0780	30.679	0.005
Սեռ	-0.509	0.0745	46.722	0.000
Տարիքային խումբ	-0.113	0.0205	30.231	0.000
ԱՔՌԱ-սքոր	-0.191	0.0218	76.787	0.000

Մոդելի թեստի արդյունքներից (Wald's test և p) տեսնում ենք նաև, որ ամենանշանակալի ազդեցություն ունի Աքռա կանխատեսող սքորը, իսկ հաստատուն գործակիցը կարելի է ընդհանրապես հաշվի չառնել:

Այսպիսով, գնահատված մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$p_i = \frac{1}{1 + e^{-(0.113*Age - 0.509*sex - 0.15*status - 0.191*ACRA)}}$$

Ձևափոխության արդյունքում ստացված  $\ln\left(\frac{p_i}{1-p_i}\right)$ -ն անվանում են Լոգ-սքոր.

$$\ln\left(\frac{p_i}{1-p_i}\right) = -0.113 * Age - 0.509 * sex - 0.15 * status - 0.191 * ACRA$$

Գործնականում, առանձին գործոնների ազդեցություններն ավելի տեսանելի դարձնելու նպատակով Լոգ-սքորն ընդունված է բերել ավելի մեծ մասշտաբի (օրինակ՝ 50 անգամ), և գործոնների յուրաքանչյուր արժեքի դեպքում միավորները որոշելու համար օգտվում են հետևյալ բանաձևից.

$$Score_{x_{ik}} = x_{ik}\beta_k * 50$$

Օրինակ, եթե ունենք 28 տարեկան արական սեռի անուսնացած վարկառու, որի ԱՔՌԱ կանխատեսող սքորը հավասար է 680-ի, ապա օգտվելով ստացված արդյունքներից՝ նրա վարկանիշը հավասար կլինի 110 միավորի, որին էլ համապատասխանում է 0.12 դեֆոլտի հավանականությունը:

Այսպիսով, ԱՔՌԱ ընկերության արդյունքը՝ ԱՔՌԱ նկարագրող սքորը դիտարկելով որպես մուտքային փոփոխական, վարկառուի անձնական բնութագրիչ-փոփոխականների ավելացմամբ հնարավոր եղավ ստանալ նոր վիճակագրորեն նշանակալի սքոր-գնահատականներ:

**Арман Барсегян**

### **Основные факторы, влияющие на кредитный риск в потребительском кредитовании и построении скоринговой системы в РА**

#### **Аннотация**

В данной статье обсуждены основные факторы, влияющие на уровень кредитного риска в потребительском кредитовании, представляя опыт зарубежных стран на этот вопрос. С использованием Логит-модели были получены кредитные скоры армянских заемщиков. В модели в первый раз было использовано АКРА СКОР (продукт кредитного бюро АКРА) в качестве входного переменного и вместе с индивидуальными характеристиками заемщиков были получены новые, статистически значимые кредитные скоры.

**Arman Barseghyan**

### **The Main Factors Affecting on Credit Risk in Consumer Lending and Development of Scoring System in RA**

#### **Abstract**

The main factors affecting the level of the credit risk of consumer lending are discussed in this paper, some approaches on this question by different countries are introduced. Logistic regression model is used to estimate credit scores of Armenian borrowers. For the first time Acra-score (the product of ACRA credit bureau) as an input variable of the model is used in the model, and statistically significant estimates were obtained using some individual characteristics of the borrowers.

### ՀՀ-ՈՒՄ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՓՖԵԼԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈԴԵԼԸ

Վերջին ժամանակներում գրեթե բոլոր ՀՀ առևտրային բանկերն իրենց ռազմավարական զարգացման գերակա ուղղությունն են համարում մանրածախ վարկավորումը, հատկապես ֆիզիկական անձանց կարճաժամկետ վարկերի տրամադրումը: ՀՀ առևտրային բանկերի վարկային պորթֆելներում նշված վարկատեսակի ծավալների ավելացմանը զուգընթաց մեծանում է նաև դրանց հետ կապված վարկային ռիսկի պատշաճ և ադեկվատ գնահատման կարևորությունը: Ընդ որում այս ենթատեքստում հատկապես կարևորվում է մանր սպառողական վարկերի հավաքական վարկային ռիսկի կամ պորթֆելի վարկային ռիսկի կառավարումը: Այս հոդվածում առաջարկվում է ՀՀ բանկերում մանր սպառողական վարկերից կազմված պորթֆելի վարկային ռիսկի գնահատումն իրականացնել մշակված մեթոդաբանության օգնությամբ:

Պորթֆելի վարկային ռիսկը գնահատելու համար, բնականաբար, նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ նրանում առկա առանձին վարկառուների վարկային ռիսկի մակարդակը՝ կախված իրենց անձնական բնութագրիչներից և այլ առանձնահատկություններից: Այդ առանձնահատկությունները հաշվի առնելու համար անհրաժեշտ է դիտարկվող վարկային պորթֆելը սեգմենտավորել՝ ստանալով վարկային ռիսկի մակարդակի տեսանկյունից հնարավորինս միատարր խմբեր: Սեգմենտավորումը կարելի է իրականացնել սբորինգային մոդելների կամ կլաստերային վերլուծությունների օգնությամբ (Мандель И.Д. Кластерный анализ, 2006): Սեգմենտավորման էությունն այն է, որ վարկառուների բնութագրիչների հիման վրա ամբողջ վարկառուների բազան բաժանվում է այնպիսի խմբերի, որոնց ներսում վարկառուները նախապես որոշված չափանիշների հիման վրա համարվում են նման և տարբերվում են ցանկացած այլ խմբի վարկառուներից: Վարկային պորթֆելի սեգմենտավորումը թույլ կտա գնահատել անմիջապես սեգմենտի համախառն վարկային ռիսկը, քանի որ ենթադրվում է, որ սեգմենտի ներսում վարկառուներն ունեն նույն վարքագիծը, հետևաբար և նույն վարկային ռիսկը:

Դիտարկենք  $L_0$  գումարի ներդրումից ստացված եկամուտը (ROC - Return on Capital). այն կարելի է ստանալ՝ դիտարկելով հետևյալ տարբերությունը.

$$ROC = L_0 - \sum_{t=1}^T \frac{P_t}{(1+q)^t} \quad (1)$$

որտեղ  $L_0$ -ն վարկային պարտավորության մեծությունն է,  $P_t$ -ն՝  $t$  ժամանակահատվածի ընթացքում պարտավորության կատարման հետևանքով դրամական հոսքի մեծությունը, իսկ  $q$ -ն՝ տրամադրված վարկի սկզբնական տոկոսադրույքը:

Որպես համախառն պորթֆելի վարկային ռիսկի ցուցանիշ առաջարկվում է վերցնել հենց ROC մեծությունը, որն ըստ էության պարտավորության հաշվեկշռային և ամորտիզացիոն արժեքների տարբերությունն է: Պարտավորության ամորտիզացիոն արժեքը վարկի ապագա դրամական հոսքերի դիսկոնտավորված արժեքն է՝ ի սկզբանե վարկը տրամադրած տոկոսադրույքով: Սակայն ROC մեծության հաշվարկի (1) բանաձևը տեղի ունի միայն այն դեպքում, երբ բոլոր վճարումները կկատարվեն 1 հավանականությամբ:

Ամբողջովին սպասարկված վարկերի համար (մինչև վերջնական մարումը կամ դուրսգրումը) ROC մեծության դուրսբերումը մեծ դժվարություն չի ներկայացնում, սակայն որպեսզի որոշենք վերոհիշյալ մեծությունը ժամանակի կամայական պահին, անհրաժեշտ է գնահատել պարտավորությունների մարումները սպասարկման ողջ ժամանակահատվածի համար: Սպառողական վարկերի ենթատեքստում դեֆոլտի ենթարկվելու մասին խոսելիս սովորաբար դիտարկում են վարկի՝ ժամկետանց վիճակում գտնվելու տևողությունը: Քանի որ ըստ «ՀՀ տարածքում

գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»՝ պարտավորությունների 271 օր և ավելի ժամկետանցի առկայությունը թույլ է տալիս տվյալ ակտիվը համարել անհուսալի և դուրս գրել (ճանաչել ծախս դրա 100%-ի չափով), ապա 271 օր ժամկետանցումը կամ 9 վճարումների ուշացումը այս հոդվածի ենթատեքստում կդիտարկվի որպես «դեֆոլտի վիճակ»:

Հաշվի առնելով վարկի տրամադրման ժամկետը և հնարավոր ժամկետանցի դեպքում դուրսգրման համար անհրաժեշտ ուշացված ամիսների քանակը՝ պորթֆելում բոլոր վարկերի դրսևորման համար առավելագույնը անհրաժեշտ է  $(N + K - 1)$  հատ փորձություն, որտեղ  $N$ -ը պայմանագրի գործողության ժամկետն է՝ արտահայտված ամիսներով, իսկ  $(K-1)$ -ը՝ դուրսգրման համար անհրաժեշտ ամիսների քանակը (այն մեր դեպքում հավասար է  $9-h$ ):

Ենթապորթֆելի դրամական հոսքերի կանխատեսման համար առաջարկվում է ներմուծել անցումային հավանականությունների հետևյալ  $10 \times 10$ -չափանի մատրիցը.

$$M^t = \begin{pmatrix} m_{11}^t & m_{12}^t & \dots & m_{1K}^t \\ m_{21}^t & m_{22}^t & \dots & m_{2K}^t \\ \dots & \dots & \dots & \dots \\ m_{K1}^t & m_{K2}^t & \dots & m_{KK}^t \end{pmatrix} \quad (2)$$

Որտեղ  $m_{ij}^t$ -ն ժամանակի  $t$  պահին  $t+1$  ժամանակահատվածում  $i$  վիճակից  $j$  վիճակին անցնելու հավանականությունն է: Հաճախորդների վարկային պարտավորությունների սպասարկումը կարելի է պատկերացնել որպես փորձությունների հաջորդականություն, որոնցից յուրաքանչյուրի ժամանակ ինչ-որ հավանականությամբ վարկառուն մասնակիորեն (ամբողջությամբ) կատարում է տվյալ ժամանակաշրջանում կուտակված պարտավորությունները կամ չի կատարում՝ անցնելով ժամկետանցի համապատասխան խումբ: Ինչպես արդեն նշվել էր, որպես միավոր ժամանակաշրջան կվերցնենք մեկ ամիսը, իսկ ժամանակի տարբեր պահերին վարկի վիճակները՝ ըստ ուշացրած վճարումների քանակի: Այսպիսով, վարկային պարտավորությունները ժամանակի  $t$  պահին կարող են գտնվել հետևյալ  $K$  վիճակներից որևէ մեկում.

- 1 վիճակ – առանց ուշացումների վարկ
- 2 վիճակ – մեկ ուշացված վճարումով վարկ
- 3 վիճակ – երկու ուշացված վճարումներով վարկ

....

$K$  վիճակ–  $(K-1)$  ուշացված վճարումներով վարկ (դեֆոլտի ենթարկվելու վիճակն է, որի դեպքում վարկը վերադարձնելու հավանականությունը շատ մոտ է  $0$ -ի):

Ներկայացնենք  $M^t$  մատրիցի որոշ տարրերի մեկնաբանությունները.

1. գլխավոր անկյունագծի ստորին հատվածում գտնվող տարրերը ( $m_{ij}^t, i > j$ ) արտահայտում են հավանականությունը, որ վարկից մարվել է մեկից ավելի վճարում, և այն կանցնի ավելի քիչ ժամկետանց վիճակ:
2. Գլխավոր անկյունագծի տարրերը ( $m_{ij}^t, i = j$ ) արտահայտում են վարկառուի վիճակը չփոփոխվելու հավանականությունը:
3.  $m_{ij}^t, i = j - 1$  տարրերը հավանականությունն են այն բանի, որ  $i$  վիճակում գտնվող վարկառուն չի կատարի պարտավորությունը և կանցնի ժամկետանց հաջորդ վիճակ:
4.  $m_{ij}^t, i < (j - 1)$  հավանականությունները հավասար են  $0$ -ի, քանի որ միավոր ժամանակահատվածում (մեկ ամսում) վարկը (վարկառուն) կարող է վատացնել վիճակը միայն մեկ ժամկետանց վճարումով:

Այդ դեպքում դիտարկվող պորթֆելը կարող ենք ներկայացնել  $S^t$  վեկտորի տեսքով.

$$S^t = (s_1^t, s_2^t, \dots, s_{10}^t) \quad (3)$$

Որտեղ  $s_i^t$ -ն ենթապորթֆելի գումարային արտահայտությամբ այն մասն է, որտեղ վարկառուները ժամանակի  $t$  պահին գտնվում են  $i$  վիճակում: Ստացվում է, որ մեկ ամիս անց



պորթֆելի այդ մասերը կարող են փոփոխվել, և ժամանակի  $t+1$  պահին պորթֆելը կդառնա  $S^{t+1}(S^t \xrightarrow{[t;t+1]} S^{t+1})$ :

Որպես  $M^t$  մատրիցի տարրերի գնահատականներ՝ առաջարկվում է վերցնել հետևյալ մեծությունը.

$$m_{ij}^t = \frac{S_{ij}^{t+1}}{S_i^t}$$

Որտեղ  $S_{ij}^{t+1}$ -ը իրենից ներկայացնում է պարտավորության մեծությունն է, որը ժամանակի  $t+1$  պահին գտնվում է  $j$  վիճակում,  $t$  պահին՝  $i$  վիճակում:

Հետևաբար հավանականությունը, որ  $i$  վիճակում գտնվող վարկառուն ժամանակի  $t$  պահին կկատարի նախատեսված (1 ամսվա) վճարումը, կարող ենք արտահայտել հետևյալ կերպ.

$$p_i^t = \left( 1 - \sum_j m_{ij}^t \right)$$

$t$  պահին գտնվող ենթապորթֆելի ընդհանուր միավոր ժամանակահատվածում կարող ենք գտնել հետևյալ բանաձևով.

$$(S^t - S^{t+1}) \cdot E = (S^t - S^t \cdot M^t) \cdot E = \sum_i S_i^t \cdot \left( 1 - \sum_j m_{ij}^t \right)$$

Որտեղ  $E$ -ն միավոր մատրիցն է:

Փաստորեն ունենալով անցումային հավանականությունների մատրիցը՝ գնահատված ժամանակի տարբեր պահերին՝ հնարավոր կլինի ստանալ մնացորդային ժամկետի ամիսների քանակով դրամական հոսքերի (վճարումների) սպասվելիք մեծությունները:

Միավոր ժամանակահատվածում ամբողջ դրամական հոսքերը ստանալու համար ներմուծենք  $D^t = (d_1^t, d_2^t, \dots, d_k^t)$  վեկտորը, որտեղ  $d_i^t$ -ն  $t$  ժամանակահատվածում ստացված տոկոսներն են, կոմիսիոն վճարները և տուգանքները: Դրանց վճարման հավանականությունը հավասար է պարտավորության մարման հավանականությանը, հետևաբար

$$S^{t+1} = (S^t + D^t) \cdot M^t$$

Ենթապորթֆելի ընդհանուր ամսական դրամական հոսքերը կլինեն.

$$G^t = \sum_i S_i^t \cdot \left( 1 - \sum_j m_{ij}^t \right) + \sum_i d_i^t \cdot \left( 1 - \sum_j m_{ij}^t \right)$$

Պարտավորության վիճակի և դրամական հոսքերի իտերացիոն հաշվարկը կատարվում է այնքան անգամ, մինչև ամբողջ պարտավորություններն ունենան իրենց դրսևորելու առավելագույն ժամանակը՝  $(N+K-1)$  անգամ:

Առաջարկվող մեթոդաբանության օգնությամբ յուրաքանչյուր սեգմենտի դրամական հոսքերն անհրաժեշտ է գնահատել առանձին-առանձին, ինչը թույլ կտա սեգմենտի միատարրության շնորհիվ ավելի ճշգրիտ արդյունքներ ստանալ: Յուրաքանչյուր սեգմենտի ժամանակի բոլոր պահերի համար ստացված դրամական հոսքերի օգնությամբ արդեն հնարավոր կլինի ստանալ ամբողջ վարկային պորթֆելի ROC մեծության գնահատականը:

$$ROC = \frac{1}{L} \left( L - \sum_{t=1}^T \frac{\sum_{\text{seg}=1}^M G_{\text{seg}}^t}{(1+q)^t} \right)$$

Որտեղ  $M$ -ը սեգմենտների քանակն է, իսկ  $G_{\text{seg}}^t$ -ը՝ սեգմենտի ամսական ընդհանուր դրամական հոսքերը:

Հարկ է նշել, որ դիտարկված մեթոդաբանությունը թույլ է տալիս գնահատել ոչ միայն գոյություն ունեցող պորթֆելի սպասվելիք եկամտաբերությունը, այլև նոր տրամադրվող վարկի ռիսկիայինությունը կամ հնարավոր գործարքի նպատակահարմարությունը, այդ իսկ պատ-

ճառով առաջարկվող մեթոդաբանությունը կարող է շատ լայն տարածում գտնել: Իմանալով պոտենցիալ վարկառուի վարկանիշը, այսինքն՝ պորթֆելի կոնկրետ սեգմենտի պատկանելությունը, հնարավոր կլինի կանխատեսել նրա դրամական հոսքերը սպասարկման ողջ ժամանակահատվածի համար:

**Арман Барсегян**

### **Модель Управления кредитного риска для портфеля потребительских кредитов**

#### **Аннотация**

В данной статье обсуждена важность управления кредитным риском на портфельном уровне в Армении. Предложена новая модель для управления кредитным портфелем потребительского кредитования, позволяющая оценить величину ROC (return on Capital - доход на капитал) в любой момент времени.

**Arman Barseghyan**

### **The Credit Risk Assessment Model of Consumer Credit Portfolio in RA**

#### **Abstract**

The importance of credit risk management on portfolio level in Armenia is discussed in this paper a new model for consumer credit portfolio management is proposed, allowing to estimate ROC (return on Capital) of the portfolio at any given time.

**ՆԱԻՐԱ ԴԵՐՁՅԱՆ**

*ՄՊՏՄ ասպիրանտ*

### **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԵՐԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԱՌԱՋԱՅՄԱՆ ՊԱՏՃԱՌ**

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, սկիզբ առնելով ԱՄՆ-ի անշարժ գույքի շուկայից և այնուհետև տարածվելով Եվրոպայի ֆինանսական շուկաներով, առաջացրեց մի շարք խնդիրներ դրամավարկային քաղաքականության վարման դասական մեթոդների ու մոտեցումների առջև՝ տնտեսագիտական բանավեճերի առարկա դարձնելով այն տեսակետը, թե դրամավարկային քաղաքականությունն է ճգնաժամի պատճառներից մեկը:

Դրամավարկային քաղաքականությունը տնտեսական ճգնաժամի պատճառ համարելու հիմնական ջատագովներից է հայտնի ամերիկացի տնտեսագետ, Նոբելյան մրցանակակիր Ժ.Ստիգլիցը: Այս տեսակետի կարևոր փաստարկ է ծառայում այն կարծիքը, որ ԱՄՆ-ի կողմից վարվող ցածր տոկոսադրույքների քաղաքականությունը 2001-2005 թվականներին խթանիչ ազդեցություն ունեցավ վարկային ակտիվության և մասնավորապես անշարժ գույքի շուկայում սպեկուլյատիվ «փուչիկի» առաջացման վրա: Վարկ ստանալու պայմանների թուլացմանը զուգահեռ՝ աճում էր նաև ստորադաս վարկավորման ծավալը ընդհանուր վարկային պորտֆելում: Այս պայմաններում վարկային ռեսուրսներն ուղղվում են սպեկուլյատիվ շահույթ ստանալու ուղղությամբ, որը տանում է անշարժ գույքի գների էլ ավելի բարձրացման: Խնդիրն ակնհայտ է դառնում, երբ անշարժ գույքի գները կտրուկ անկում են ապրում՝ պայմանավորված մակրոտնտեսական մեծ շոկերով, քանի որ անշարժ գույքի արժևորումը ոչ թե հիմնարար, տնտեսական ֆունդամենտալների աճի, այլ գների սպեկուլյատիվ աղճատման հետևանք է: 2006-ից 2008 թվականներին համաշխարհային տնտեսության նմանատիպ բացասական շոկ էր

նավթի և գյուղատնտեսական մթերքների գների բարձրացումը: Որպեսզի կանխվի գների այս աճի փոխանցումը դեպի գների ընդհանուր մակարդակի բարձրացում, առաջատար կենտրոնական բանկերն արձագանքեցին՝ բարձրացնելով բազային տոկոսադրույքները: Միջբանկային շուկայում տոկոսադրույքների բարձրացումն առաջացրեց վերջիններիս աճ նաև հիփոթեքային շուկայում, որը լուրջ սպառնալիք էր բնականոն վարկային մարումների համար: Այնուհետև, խոշորագույն բանկերի անկմամբ, ճգնաժամը փոխանցվեց բանկային ոլորտ: 2005 թվականի երկրորդ կեսից մինչև 2007 թվականի վերջը ԱՄՆ դաշնային պահուստային բանկը վարում էր զսպողական դրամավարկային քաղաքականություն՝ արտահայտված բազային կամ որ նույնն է դիսկոնտավորման<sup>1</sup> տոկոսադրույքների մակարդակի բարձրացմամբ: 2007 թվականի վերջին, ավելի ահագնացող ճգնաժամի պայմաններում, պահուստային բանկը հարկադրված էր թուլացնել քաղաքականությունը՝ իջեցնելով տոկոսադրույքները՝ որպեսզի մեղմի առաջացած ճգնաժամի հետևանքները: Եվրոպական կենտրոնական բանկը, ինչպես և այլ կենտրոնական բանկեր, իջեցրին տոկոսադրույքները փոխառության ծախսերը կրճատելու և տնտեսության իրացվելիությունը պահպանելու համար: Գնաճի նպատակադրման ռազմավարության կանոնից ելնելով՝ այն, ինչ կատարվում էր հիփոթեքային շուկայում, դուրս էր ռազմավարության հորիզոնից, ինչպես նաև կիրառվող դրամավարկային քաղաքականության պատասխանատվության շրջանակներից: Գնաճի նպատակադրման կողմնակիցների կարծիքով կենտրոնական բանկի պատասխանատվությունը ֆինանսական կայունության համար նվազագույնն է, այդ իսկ պատճառով վերջինս սահմանված չէ որպես ազգային բանկերի բացահայտ թիրախ: Նրանց հիմնավորմամբ ֆինանսական կայունությունը սովորաբար ապահովվում է տարբեր գործիքների՝ վերահսկողության և կարգավորման միջոցով, և դրամավարկային քաղաքականության խնդիր չէ:

Ճգնաժամերի ժամանակ կենտրոնական բանկերի դրամավարկային քաղաքականության նշանակության գնահատման տեսանկյունից այլ խնդիր է, թե ինչպես պետք է կենտրոնական բանկերն արձագանքեն ներդրումային ակտիվի չարդարացված գների աճին (ակտիվների շուկայի գնաճ), մասնավորապես անշարժ գույք կամ արժեթղթեր: Ավանդաբար, անշարժ գույքի շուկան անտեսվել է դրամավարկային քաղաքականության կանխատեսումներից: Զարգացած աշխարհում անշարժ գույքի և արժեթղթերի շուկաներում հաճախադեպ ճգնաժամերը գիտական շրջանակներում առաջացրել են աճող հետաքրքրություն կենտրոնական բանկերի կողմից սովյալ իրավիճակներում գնաճի կարգավորման նկատմամբ, քանզի ըստ էության նկարագրված երևույթը ներդրումային ակտիվների յուրահատուկ գնաճ է: Հարցն այն է, պե՞տք է արդյոք, որ բանկերն արձագանքեն ներդրումային ակտիվների գնաճին, դրանց՝ սպառողական ապրանքների գների վրա ազդեցությունից զատ: Որոշ հեղինակների կարծիքն է, որ կենտրոնական բանկերը պետք է սահմանափակեն ակտիվների գների «փուչիկները», քանզի վերջիններիս պայթելն առաջացնում է ֆինանսական անկայունություն: Նման պատճառաբանման հիմքն այն է, որ գների անբարենպաստ դինամիկան ներդրումային շուկաներում կարող է վտանգել կենտրոնական բանկերի որևէ նպատակներից մեկին հասնելուն:

Տեսաբանների հաջորդ խումբը՝ Դուլի (2010), Ռոուզ, Շպիգել (2009), քիչ կարևորելով դրամավարկային քաղաքականության դերը համաաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման գործում, տեսնում են որպես ճգնաժամի հիմնական պատճառ կարգավորման ձախողումները, որոշ ֆինանսական հաստատությունների աստիճանաբար վերածումը “too big to fail”<sup>2</sup> կարգավիճակով կառույցների, ճգնաժամին նախորդող մակրոտնտեսական իրավիճակը, մասնավորապես ցածր համաաշխարհային իրական տոկոսադրույքները գլոբալ անհավասարակշռությունների հետևանքով, «Մեծ չափավորությունը»<sup>3</sup> կայուն աճի և ցածր գնաճի դրսևորմամբ, որը տանում էր ռիսկի համակարգային թերագնահատման և ֆինանսական շուկաներում ցածր

<sup>1</sup> Ըստ ԱՄՆ միջազգային ֆինանսական վիճակագրության:

<sup>2</sup> Բառացի թարգմանած՝ «չափազանց մեծ սնանկանալ թողնելու համար»:

<sup>3</sup> Տնտեսագիտության մեջ «Մեծ չափավորություն», անգլերենում՝ the Great Moderation, հասկացությունը վերաբերում է գործարար պարբերաշրջանների տատանողականության կրճատմանը՝ սկսած 1980թթ. կեսերից՝ պայմանավորված զարգացած երկրներում ինստիտուցիոնալ և կառուցվածքային փոփոխություններով, որը դրսևորվում է ՀՆԱ-ի աճի, արդյունաբերական արտադրանքի, զբաղվածության և գործազրկության մակարդակի տատանողականության նվազմամբ:

ռիսկի հավելավճարի, ԱՄՆ-ի բնակարանային քաղաքականությունը ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար (ստորադաս վարկավորում) և այլն: Այլ դրդապատճառների թվում են նաև առևտրային և ներդրումային բանկերի՝ ֆինանսական լծակը<sup>1</sup> բարձրացնելու աղավաղված շարժառիթները՝ պայմանավորված թույլ վերահսկողությամբ, արժեթղթերի բրոքերների և ակտիվների ֆոնդերի կառավարիչների՝ չափազանց բարձր ռիսկեր ստանձնելու հակումները և ասիմետրիկ վարձատրության պայմանագրերը, ակտիվներով ապահովված արժեթղթերի ռիսկի գնահատման տեղեկատվական ասիմետրիայի խնդիրները, պոտենցիալ փոխկապակցված համակարգային ռիսկերի թերագնահատումը և այլն: Այս պատճառներից և ոչ մեկն առնչություն չունի դրամավարկային քաղաքականության հետ, բացառությամբ նրա, որ դրամավարկային քաղաքականությունը կարող էր նպաստել «Մեծ չափավորությանը»: Այսպես, սկսվելով ֆինանսական հատվածից (տնտեսական գործակալների շրջանում օրեցօր աճող անորոշություն, ակտիվների գների անկումներ, ֆինանսական հաստատությունների սնանկացումներ)՝ ճգնաժամը փոխանցվում է դեպի իրական հատված վարկային ուղիով: Իրական հատվածում ճգնաժամի հետևանքների դրսևորումն են դառնում ներդրումների նվազումը, գլխավորապես ֆինանսավորման հասանելիության սահմանափակության և աճող տոկոսադրույքների պատճառով, գործազրկության աճը և ՀՆԱ-ի հսկայական անկումը: Չնայած կառավարությունների և կենտրոնական բանկերի կողմից ձեռնարկված միջոցառումներին՝ մի շարք տնտեսություններ դեռևս շարունակում են կրել 2007-2009թթ. ֆինանսական ճգնաժամի հետևանքները:

Ջարգացնելով վերլուծությունը՝ հաջորդ քայլը հատկապես գնաճի նպատակադրման ռազմավարության արդյունավետության գնահատումն է ֆինանսական ճգնաժամերով պայմանավորված մարտահրավերների հաղթահարման գործում: Եթե գնաճի նպատակադրումը ընդունելի մեխանիզմ է դրամավարկային քաղաքականության համար համեմատաբար կայուն ժամանակաշրջաններում, ապա հարց է առաջանում դրա արդյունավետության վերաբերյալ ճգնաժամային իրավիճակներում: Ժամանակակից գիտական գրականության մեջ նմանատիպ վերլուծություններն այնքան էլ բազմաքանակ չեն: Նախքան ոլորտում կատարված աշխատանքներից մի քանիսին անդրադառնալը, համառոտ ներկայացնենք քաղաքականության զարգացման փուլերը:

Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական տվյալների համաձայն՝ 2012թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ գնաճի նպատակադրման ռազմավարություն կիրառում են աշխարհի 28 երկրներ: Առաջին երկիրը, որ կիրառել է գնաճի նպատակադրման ռազմավարություն, Նոր Զելանդիան է 1989թ. դեկտեմբերին: Երկրները, որոնք որդեգրելուց անմիջապես հետո դադարեցրին գնաճի նպատակադրումը, Ֆինլանդիան, Իսպանիան և Սլովակիայի Հանրապետությունն էին՝ պայմանավորված եվրոյի գոտուն անցմամբ: Հայաստանը, Չեխիայի Հանրապետությունը, Հունգարիան և Լեհաստանը որդեգրեցին գնաճի նպատակադրման ռազմավարությունը կենտրոնացված պլանային տնտեսությունից շուկայական տնտեսությունների անցման ժամանակ: Բազմաթիվ երկրներ էլ դեռևս գտնվում են այս ռազմավարության ներդրման գործընթացում՝ որդեգրելով դրա առանձին տարրեր, մասնավորապես Եվրոպական կենտրոնական բանկը, ԱՄՆ Դաշնային պահուստը, ճապոնիայի կենտրոնական բանկը, Շվեյցարիայի ազգային բանկը: Չնայած այս կենտրոնական բանկերի խնդիրների թվում է ցածր գնաճի ապահովումը, վերջիններս չեն հայտարարում բացահայտ քանակական թիրախներ կամ ունեն այլ նպատակներ, ինչպիսիք են՝ առավելագույն զբաղվածության խթանում, չափավոր երկարաժամկետ տոկոսադրույքների ապահովում՝ գների կայունության հետ համատեղ:

Գնաճի նպատակադրման նոր ռազմավարության լայն կիրառությունը պայմանավորված էր հիմնական այլընտրանքային գործիքի՝ փոխարժեքի նպատակադրման կենսունակության անկմամբ՝ կապված 1990-ականների մի շարք արժույթային ճգնաժամերի հետ: Մինչև 2005թ. գնաճի նպատակադրման տարբեր տեսակներ արդեն դարձել էին զարգացող երկրների ամենատարածված դրամավարկային քաղաքականության ռեժիմը: Դրամավարկային քաղաքականու-

<sup>1</sup> Ֆինանսական լծակը կամ ֆինանսական լծակի ուսը փոխառու կապիտալի հարաբերակցությունն է սեփական կապիտալին: Ֆինանսական լծակի ուսի էֆեկտ են անվանում փոխառու միջոցների օգտագործումը գործառնությունների ծավալի և շահույթի մակարդակի բարձրացման նպատակով՝ չունենալով դրա համար բավարար կապիտալ միջոցներ: Այս ցուցանիշը բնութագրում է ռիսկի, ֆինանսական կայունության աստիճանը:

թյան առավել հաճախ հիշատակվող թիրախներից են ցածր և կայուն գնաճը, բարձր և կայուն տնտեսական աճը և զբաղվածության մակարդակները, ֆինանսական շուկաների և ֆինանսական հաստատությունների, տոկոսադրույքների, արտաքին շուկաների կայունությունը: Երբեմն որոշ կենտրոնական բանկեր ընդունում են յուրահատուկ թիրախներ, ինչպես օրինակ՝ Անգլիայի բանկը, որի դեպքում նպատակը ազգային ֆինանսական համակարգի համաշխարհային խթանումն է: Այդուհանդերձ, որքան էլ բազմազան ու տարբեր լինեն այդ թիրախները, ամենատարածված և ընդունված նպատակը գների կայունության ապահովումն է: Գնաճի նպատակադրման ռազմավարության իրականացումը հիմնված է որոշակի սկզբունքների վրա, որոնք ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

*Աղյուսակ 1*

**Գնաճի նպատակադրման վեց սկզբունքները<sup>1</sup>**

1. Դրամավարկային քաղաքականության առաջնային դերը տնտեսության համար անվանական խարսխի ապահովումն է, երբ այլ նպատակների համար կշիռների սահմանում անհամադրելի չէ գնաճի և գնաճի սպասումների համար անվանական խարսխի հետ:
2. Արդյունավետ գնաճի նպատակադրման ռեժիմը պետք է ունենա բարենպաստ առաջնահերթ ազդեցություն բարեկեցության վրա՝ նվազեցնելով անորոշությունը, խարսխելով գնաճի սպասումները և նվազեցնելով վերելք-վայրէջք շրջափոխների դրսևորման հավանականությունը կամ խստությունը:
3. Գնաճի նպատակադրման ռեժիմի հաջողությունը մեծապես պայմանավորված է քաղաքականություններով, որոնք դարձնում են դրամավարկային քաղաքականության խնդիրները առավել հեշտ և վստահելի:
4. Դրամավարկային փոխանցումային մեխանիզմում ճեղքվածքների, ինչպես նաև գնաճի՝ իր թիրախից, արտադրությունը՝ իր պոտենցիալ մակարդակից շեղումների պատճառով, հնարավոր և ցանկալի չէ գնաճը պահպանել ճիշտ թիրախի մակարդակին, և պրակտիկայում գնաճի նպատակադրումը դառնում է գնաճի կանխատեսման նպատակադրում:
5. Ելնելով գնաճի թիրախների և այլ նպատակների միջև հակասություններից՝ կենտրոնական բանկերը պետք է ունենան պարզ նպատակներ և բավարար անկախություն՝ քաղաքական գործընթացներից այս նպատակներին հասնելու համար:
6. Պետք է լինեն մոնիթորինգի և հաշվետվողականության արդյունավետ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան ապահովելու կենտրոնական բանկերի վարքագծի համահունչ լինելը հայտարարված նպատակների հետ և դրամավարկային քաղաքականության ապահովումը ձևավորված փորձի հիման վրա:

Հայաստանի Հանրապետությունում, առաջինը ԱՊՀ երկրների շրջանում, գնաճի նպատակադրման ռազմավարությանն անցումը կատարվեց 2006թ. հունվարի 1-ից՝ հաջորդելով մինչ այդ կիրառվող փողի ազդեցատների նպատակադրման ռազմավարությանը, որը գործում էր 1994 թվականից: Նոր ռազմավարության անցման անհրաժեշտությունը, որի ժամանակ արդեն գործում է տոկոսադրույք - գնաճի կանխատեսված մակարդակ - գնաճ փոխանցման շղթան, պայմանավորված էր փողի ազդեցատներ-գնաճ կապի թուլացմամբ<sup>2</sup>:

Տնտեսական ճգնաժամների ընթացքում գնաճի նպատակադրման ռազմավարության արդյունավետության գնահատման փորձերից է Նյունանի և Հագենի աշխատությունը, որտեղ համեմատվում են նպատակադրող և գնաճի նպատակադրում չիրականացնող երկրներ 1978 և 1998 թթ. նավթի գների շոկի ժամանակ՝ հիմք ընդունելով երեք չափանիշներ.

- գնաճ,
- երկարաժամկետ տոկոսադրույքներ,
- միջբանկային շուկայում կարճաժամկետ տոկոսադրույքներ:

Օգտագործելով տարբերությունների մեթոդը՝ հեղինակները եզրակացնում են, որ գնաճի աճը, երկարաժամկետ և կարճաժամկետ տոկոսադրույքներն ավելի ցածր էին նպատակադրող երկրներում, չնայած բուն գնաճի ցուցանիշով տարբերությունը վիճակագրորեն էական չէր: Միշկինը և Շմիդտ-Յեբբելը (2007) նույնպես համեմատում են նավթի գների շոկերի ենթարկվող

<sup>1</sup> Չ.Ֆրիդման, Ջ. Լաքստոն, Ինչու՞ գնաճի նպատակադրում, ԱՄՆ, 2009:  
<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգը, աշխատանքային փաստաթուղթ, 2010թ.:

երկրների այս երկու խմբերը: Հիմնական հիպոթեզն այն է, որ եթե գնաճի նպատակադրումը բարձրացնում է վստահությունը կենտրոնական բանկերի նկատմամբ գների սպասումների խարսխման միջոցով, ապա նպատակադրում իրականացնող երկրների խումբն առավելություն պետք է ունենա գնաճի հարցում, և ավելի քիչ արտահայտված լինեն շուկի հետևանքները արտարժույթի փոխարժեքի միջոցով: Հիրավի, արդյունքները վկայում են հոգուտ նպատակադրում իրականացնող երկրների: Երկրների երկու խմբերի միջև տարբերությունների դե Կարվալյո Ֆիլյոյի (2010, 2011) վերլուծությունը համարվում է այս ոլորտում կատարված փոքրաթիվ նշանավոր աշխատանքներից մեկը: Մասնավորապես, այս աշխատության մեջ վերլուծվում է նպատակադրման ռազմավարություն որդեգրած երկրների արդյունավետությունը մյուս երկրների համեմատ՝ համեմատելով 51 երկրներ, ներառյալ 23 նպատակադրողներ, և բացահայտելով, որ վերջիններս առավել բարձր արդյունքներ են դրսևորել, քան իրենց համեմատական խումբ երկրները:

Մեկ այլ աշխատությունում՝ Ֆոլյո (2012), առաջարկվում է երկրների երկու խմբերի համեմատման բավականին խորը մոտեցում: Առաջին հերթին քննարկելով տեսական հիմքերը, թե ինչու նպատակադրող երկրները պետք է ավելի լավ դրսևորեն իրենց, հեղինակն անդրադառնում է էմպիրիկ տեսություններին, որտեղ նշվում է, որ.

- նպատակադրում իրականացնող երկրներն առավել լավ հսկողություն ունեն գնաճի նկատմամբ,
- ունեն առավել բարձր ֆիսկալ կանոնակարգվածության աստիճան,
- առավել կայուն փոխարժեք,
- ավելի մեծ արտարժույթի պահուստների կուտակումներ:

Գնաճի նպատակադրումը նաև խորհրդանշվում է կենտրոնական բանկերի առավել բարձր վստահությամբ, վարկունակությամբ և անհրաժեշտության դեպքում դրամավարկային քաղաքականության մեղմման առավել մեծ ճկունությամբ:

Այս առավելությունները, որոնք առկա են նպատակադրման ռազմավարության պայմաններում, կարող են մեծ դեր խաղալ ճգնաժամի ժամանակ: Որպես երկրների տնտեսական քաղաքականության արդյունավետության գնահատման չափանիշներ են ընդունվում հետևյալ երկու խումբ ցուցանիշները.

1. կենտրոնական բանկերի արդյունավետությունը՝ հիմնված գնաճի և տոկոսադրույքների վրա,
2. առավել ընդհանուր՝ ՀՆԱ-ի աճը:

Երկրորդ ցուցանիշի՝ ՀՆԱ-ի աճի դեպքում հեղինակի եզրակացությունն այն է, որ էական տարբերություն չկա զարգացող և զարգացած երկրների ընտրանքում: Կենտրոնական բանկերի գործունեությունը վերլուծվում է գնաճի, գնաճի տատանողականության, իրական և անվանական տոկոսադրույքների միջոցով: Հատկանշական է, որ ճգնաժամի ժամանակ կարգավորող մարմինների մտահոգությունը «դեֆլյացիայի ահ»-ն էր, ուստի գնաճը նվազեցնելու ուղղությամբ գնաճի նպատակադրման ռազմավարությունը գնահատելու փոխարեն, ինչն ընդունված է դասական գրականության մեջ, նպատակն այստեղ գնահատելն է, արդյոք գնաճ նպատակադրող երկրներն ավելի քիչ են ազդեցություն կրել ճգնաժամի ընթացքում գների ընդհանուր մակարդակի իջեցումից: Ճգնաժամի մեկ այլ հետևանք էր գնաճի տատանողականության աճը՝ ավելացող անորոշության հետևանքով:

Տոկոսադրույքների փոփոխության վերլուծության տեսանկյունից՝ նպատակադրման ռազմավարություն չկիրառող երկրներում միջինում իրական %-ադրույքը բարձրացել է 4.6%-ից մինչև 11.26% 2003-2008թթ. ընկած ժամանակահատվածում, մինչդեռ նույն ժամանակահատվածում գնաճի ռազմավարությունը կիրառող երկրների համար դրույքը 6.7% և 7% էր՝ վկայելով երկրների այս խմբում ավելի ցածր տատանողականության մասին:

Համաձայն որոշ հետազոտությունների (Տափսոբա (2010), Լուկոտտ (2012))՝ գնաճի նպատակադրումը խորհրդանշվում է առավել բարձր ֆիսկալ դիսցիպլինով, ուստի հավանական է, որ նպատակադրողները ճգնաժամ մուտք գործելին առավել ուժեղ ֆիսկալ քաղաքականությամբ,

հատկապես ավելի ցածր պարտքի մակարդակով: Սա էական տարբերություն էր ճգնաժամի ժամանակ, քանի որ գրականության մեջ ընդունված է այն կարծիքը, որ մեծ պետական պարտք ունեցող երկրները, հատկապես արտաքին կարճաժամկետ պարտք, համեմատաբար մեծ ազդեցություն են կրել 2008-2009 թթ. տնտեսական ցնցումներից: Սա նշանակում է, որ սկզբնապես մեծ պարտք ունեցող կառավարությունը բախվում է առավել շատ սահմանափակումների հետ, քանի որ վերջինս պարտքի սպասարկման ծանրության պատճառով ունակ չէ դիմելու ֆիսկալ խթանների՝ դժվարացնելով նոր պարտքի գործարկման հնարավորությունը: Քանի որ գնաճի նպատակադրումն ապահովում է առավել բարձր ֆիսկալ դիսցիպլին, նպատակադրողներն ունեն ավելի առողջ, կայուն ֆիսկալ քաղաքականություն նախաճգնաժամային շրջանում, իսկ այնուհետև՝ ճգնաժամի ընթացքում, անհրաժեշտ ճշգրտումների իրականացման ավելի մեծ ազատություն:

74 զարգացած և զարգացող երկրների, ներառյալ 23 նպատակադրողները 1985-2005 թթ. կատարված հետազոտության արդյունքների համաձայն՝ զարգացող երկրների համար գնաճի նպատակադրումը նվազեցնում է փոխարժեքի տատանողականությունը և ավելացնում արտաքին պահուստների կուտակումները: Չարգացած երկրների համար, ընդհակառակը, գնաճի նպատակադրումը խորհրդանշվում է փոխարժեքի տատանողականության աճով և արտաքին պահուստների փոքր պաշարներով: Ինչպես նշվում է Կալվոյի (2010), աշխատության մեջ, միջազգային պահուստները որոշակի դերակատարում ունեն ճգնաժամի ժամանակ, ի տարբերություն նորմալ ժամանակների, քանի որ բացակայում է վերջին ատյանի վարկատուի գործառույթը, և արտաքին պահուստները կենսական են դառնում կենտրոնական բանկերի համար<sup>1</sup>: Պահուստները կարող են նաև ծառայել որպես երաշխավորություն, մասնավորապես ճգնաժամի ժամանակ երկրի հիմնական արտադրական ոլորտների համար ներմուծվող կարևոր ապրանքատեսակների և ավելի ցածր տոկոսադրույքներով ֆինանսավորման համար, որի դեպքում պահուստը դիտվում է որպես երկրի վճարունակության երաշխիք: Ուստի, եթե գնաճի նպատակադրման ռազմավարությունը նպաստում է արտաքին պահուստների կուտակմանն ու փոխարժեքի կայունությանը, կամ, ավելի քիչ չափով, ընթացիկ հաշվի հավասարակշռությանն ու կապիտալ ներհոսքերի ընդհատումներին քիչ ենթարկվածությանը, նման ռազմավարություն ունեցող երկրներն առավելություն ունեն և առավել դիմացկուն են ճգնաժամային իրավիճակում: Ինչ վերաբերում է տոկոսադրույքների մակարդակին, դրանք պետք է միջինում ավելի բարձր լինեն նպատակադրման ռազմավարություն իրականացնող երկրների համար ճգնաժամին նախորդող տնտեսական վերելքների ժամանակ, քանի որ դրամավարկային քաղաքականությունը պետք է ավելի արձագանքող լինի աճող իրացվելիության և գնաճի նկատմամբ: Ենպիսիկ ուսումնասիրությունները պաշտպանում են այն տեսակետը, որ նպատակադրման ռազմավարությունը բարձրացնում է կենտրոնական բանկերի վարկունակությունը՝ մասնավորապես իջեցնելով գնաճի սպասումները: Այս իմաստով գնաճի նպատակադրումը հաջողությամբ միմյանցից տարանջատում է ներկա գնաճի սպասումները անցյալում գնաճի իրականացումներից: Գնաճի նպատակադրման դրամավարկային ռազմավարությունը հիմնված է կենտրոնական բանկերի անկախության, թափանցիկության և պատասխանատվության վրա, երեք բնութագրիչներ, որոնք ապահովում են ավելի վստահելի դրամավարկային քաղաքականություն: Բացի այդ, այս վստահությունը կարող է օգնել նաև դեֆլյացիայի դեմ պայքարի համաշխարհային ճգնաժամի ժամանակ: Ընդհանուր առմամբ, եթե նպատակադրող կենտրոնական բանկերն ավելի վարկունակ են, վերջիններս ավելի լավ պետք է դիմակայեին ֆինանսական ճգնաժամի տարբեր մարտահրավերներին:

Այդուհանդերձ, գնաճի նպատակադրումը սպասվող արդյունք կարող է ապահովել՝ պայմանավորված այդ քաղաքականությունը կիրառող երկրների մի շարք յուրահատկություններով: Այլ կերպ ասած՝ գնաճի նպատակադրման ազդեցությունը կարող է ոչ գծային կամ

<sup>1</sup> Նմանօրինակ մի գործարք էր արժութային սվոփը եվրոպական կենտրոնական բանկի և ԱՄՆ պահուստային համակարգի միջև՝ երաշխավորելու առաջինի համար բավարար դոլարի առկայությունը:

պայմանական լինել: Այս հիպոթեզը վերոնշյալ հեղինակներից մեկը՝ Ֆույոն, ստուգում է պայմանական կապերի հետևյալ տեսակների ուսումնասիրությամբ.

- գնաճի նպատակադրման ազդեցությունը կարող է կախված լինել երկրի տնտեսական զլոբալացման աստիճանից: Ֆինանսական ճգնաժամն առավել ազդում է տնտեսապես խիստ զլոբալացված երկրներին, որոնց վրա գնաճի նպատակադրման ազդեցությունն առավել ակնառու է:
- Գնաճի նպատակադրման ազդեցությունը կարող է կախված լինել երկրի պարտքի մակարդակից: Ճգնաժամն ավելի թեթև ազդեցություն կարող էր ունենալ քիչ պարտք ունեցող երկրների վրա, քանի որ գրականության մեջ առաջադրվում է գնաճի նպատակադրողների բարձր արդյունավետություն ֆիսկալ քաղաքականության ոլորտում:
- Գնաճի նպատակադրման ազդեցությունը կարող է պայմանավորված լինել արտարժույթի պահուստների համեմատական կարևորությամբ, այն իմաստով, որ, ինչպես արդեն քննարկվել է, պահուստները կարող են երկրներին օգնել ճգնաժամն առավել արագ հաղթահարելու՝ այդպիսով ապահովելով գնաճի նպատակադրմանը վերագրվող արդյունքները:
- Գնաճի նպատակադրման ազդեցությունը կարող է պայմանավորված լինել երկրների ֆինանսական զարգացմամբ, ինչպես նշվում է գրականության մեջ բավարար ֆինանսական զարգացածությունը անհրաժեշտ է դրամավարկային քաղաքականության արդյունավետության համար:

Լրացուցիչ հետազոտությունների արդյունքում եզրակացությունն այն է, որ վերը նշված գործոնները փոխկապակցված չեն գնաճի նպատակադրման հետ, բացառությամբ գնաճի նպատակադրման և արտարժույթի պահուստների միջև կապի՝ որքան շատ են պահուստները, այնքան ավելի լավ են նպատակադրողները դրսևորել իրենց ճգնաժամի ժամանակ:

Ուսումնասիրված գրականությունների արդյունքները ցույց են տալիս, որ նպատակադրում իրականացնող կենտրոնական բանկերն ավելի լավ են դրսևորել իրենց ճգնաժամի ժամանակ հատկապես իրական տոկոսադրույքների աճը և գնաճի տատանողականությունը կառավարելու գործում: Այնուամենայնիվ, արդյունքները ցույց չեն տալիս էական տարբերություններ երկու խմբերի միջև ՀՆԱ-ի աճի ցուցանիշով:

Առաջին հերթին պատճառը ճգնաժամի մասշտաբներն էին: Նման հետևանքներով ճգնաժամի դեպքում երկրները կարող են ազդվել՝ անկախ տնտեսության մեջ կիրառվող զանազան ռազմավարություններից: Ցանգարիդեսը (2010), ուսումնասիրելով ֆիքսված և ճկուն փոխարժեքային ռեժիմներ ունեցող երկրների միջև տարբերությունները ճգնաժամի ժամանակ, եզրակացնում է, որ ճկուն փոխարժեքի ռեժիմը, չնայած գրականության մեջ նշվող բազմաթիվ առավելություններին՝ որպես շուկայի կլանմանը նպաստող, որևէ առավելություն չէր տվել ճգնաժամի ընթացքում: Պատճառը շուկայի ուժգնությունն էր, որ անխտիր ազդել էր ամենազարգացած և ինտեգրված երկրներին:

Երկրորդ պատճառն այն է, բաց տնտեսություններն առավել մեծ ազդեցություն կրեցին ճգնաժամից: Գնաճի նպատակադրում իրականացնող տնտեսությունը տնտեսապես և ֆինանսապես ավելի բաց է, քան մյուսները: Սրանք այն գործոններն են, որոնք կարող են չեզոքացնել սկզբնական բարենպաստ մակրոտնտեսական պայմանները նպատակադրողների համար:

Որպես երրորդ խնդիր կարելի է նշել դրամավարկային քաղաքականությունների վարումը՝ վաղ 2000թթ. սկսած: Կենտրոնանալով միմիայն կամ առնվազն կարևորելով գնաճը և գնաճի նպատակադրումը հատկապես՝ կենտրոնական բանկերը մի կողմ են մղել ֆինանսական կայունությունը: Այս իմաստով ֆինանսական կարգավորման պակասը առավել խիստ կարող էր լինել նպատակադրողների մոտ՝ դարձնելով վերջիններիս ֆինանսական համակարգերը ավելի խոցելի: Որոշ հետազոտողներ՝ Ֆրապպա և Մետոնյեր (2010), գտնում են, որ գնաճի նպատակադրումն ունի դրական և ուժեղ ազդեցություն անշարժ գույքի իրական գների և գին-վարձավճար հարաբերակցության վրա: Ուստի եզրակացությունն այն է, որ այս խոցելիությունը չեզոքացնում է նախաճգնաժամային լավ մակրոտնտեսական պայմանների առավելությունները:



Գնաճի նպատակադրման և ֆինանսական կայունության միջև առկա հնարավոր կապի ուսումնասիրության առավել հիմնավոր հետազոտություններ են անհրաժեշտ:

Ամփոփելով մեջբերված բոլոր հետազոտությունների արդյունքներն ու վերադառնալով հիմնահարցին՝ արդյո՞ք գնաճի նպատակադրման ռազմավարությունը պետք է վերանայվի ֆինանսական ճգնաժամի վերջին զարգացումների լույսով, եզրակացությունն այն է, որ ռազմավարությունն ինքնին որևէ բացահայտ թերացում, առավել ևս հստակ դերակատարում չունեն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման և զարգացման հարցում: Ռազմավարությունն արդյունավետ է եղել ցածր գնաճի, գնաճային սպասումների խարսխման և գնաճային տատանումների նվազեցման գործում: Այսինքն՝ բոլոր այն ցուցանիշների, որոնք ի սկզբանե դրված են քաղաքականության առջև՝ նրա արդյունավետությունը գնահատելու համար:

**Наира Дердзян**

### **Монетарная политика центральных банков как причина возникновения финансовых кризисов**

#### **Аннотация**

Основной задачей данной статьи является рассмотрение взаимосвязи монетарной политики центральных банков с экономическими кризисами, а также оценивание эффективности монетарной политики в преодолении вызовов, брошенных финансовыми кризисами. В статье также обсуждаются мнения ведущих экономистов, существующие разногласия по поводу роли монетарной политики, в частности, все более популярной стратегии инфляционного таргетирования, в появлении экономических и финансовых потрясений и дисбалансов.

**Naira Derdzyan**

### **Monetary Policy of the Central Banks as the Cause-Root of Financial Crises**

#### **Abstract**

The main objective of the article is to review the linkages between monetary policy and economic crises, and assess the efficiency of monetary policy in overcoming challenges caused by financial turmoil as well. The article discusses the views of renowned economists, differences in views on the role of monetary policy, namely, the increasingly popular strategy of inflation targeting in causing economic and financial shocks and imbalances.

**ԳՆԱՃԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ**

Կենտրոնական բանկը վերաֆինանսավորման տոկոսադրույքը երկար ժամանակահատվածում պահում է անփոփոխ (2011թ. սեպտեմբերից 8%): Այս որոշումը ԿԲ-ն պայմանավորում է ՀՀ ներքին շուկայի՝ տարեսկզբից համեմատաբար կայուն վիճակով ու դրամավարկային քաղաքականության դրական արդյունքներով, համաշխարհային հիմնական ապրանքների գների նվազման միտմամբ և այն հանգամանքով, որ Եվրոպական կենտրոնական բանկն այս ցուցանիշը պահում է անփոփոխ՝ 0.46%<sup>1</sup>:

ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման այս քաղաքականությունն անփոփոխ է համեմատաբար կայուն շրջանում և ունի փաստացի բարձրացման միտում տնտեսության համար բացասական պայմաններում: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի շեմի բարձրացման դեպքում այն, փոքրացնելով դրամաշրջանառության և շուկայի գործարքների չափը և արագությունը, իհարկե զսպում է պահանջարկի գնաճը, սակայն ավելի երկար կտրվածքով խթանում է ծախքերի գնաճը: Այս գործոնն ունի հակառակ ազդեցություն շեմի իջեցման դեպքում: Ինչպես տեսնում ենք, վերաֆինանսավորման տոկոսադրույքի ազդեցությունը շուկայի վրա միանշանակ չէ:

Այնուհանդերձ, այս ցուցանիշի շեմի բարձրացումն ունի տնտեսության համար մեծ ռեզերվ բացասական և ոչ ցանկալի երևույթներն արագ և արդյունավետ զսպելու ժամանակ: Այս ռեզերվը, սակայն, օժտված է ըստ ժամանակի և շեմի սահմանով, որից հետո վերաֆինանսավորման տոկոսադրույքի ազդեցությունը դառնում է բացասական:

Կայուն տնտեսական և արտաքին գների համեմատաբար անփոփոխ իրավիճակում նպատակահարմար է վարել վերաֆինանսավորման տոկոսադրույքի սահուն իջեցման քաղաքականություն: Այս գործընթացը ոչ միայն կմեծացնի վերաֆինանսավորման տոկոսադրույքի **օգտակար ռեզերվը**՝ ավելի կառավարելի դարձնելով պոտենցիալ ռիսկերը տնտեսական ոչ բարենպաստ պայմաններում, այլև կթուլացնի վերաֆինանսավորման տոկոսադրույքի ներկա կապանքները տնտեսական աճի տեսանկյունից: Կիսանվի բանկային գործունեությունը և շուկան, ինչպես նաև կբարելավվի փողայնացման մակարդակը, որը բավականին ցածր է ՀՀ-ում փողի համեմատաբար մեծ պահանջարկի և ՀՀ դրամի ցածր առաջարկի պայմաններում: Փողայնացման մակարդակը ՀՀ-ում տատանվում է 25%-ի շրջանակներում<sup>2</sup>:

Այսպիսով, տնտեսության կայուն վիճակում վերաֆինանսավորման տոկոսադրույքի համեմատաբար փոքր լինելը հնարավորություն է տալիս նաև ստեղծելու էական օգտակար ռեզերվ, որը թույլ կտա որոշակի անկայուն վիճակում բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ որպես արագ ազդեցության նպատակային միջոց: Դրա հետ մեկտեղ այս քայլը կմեծացնի վերաֆինանսավորման տոկոսադրույքի և նրա տնտեսության համար կրիտիկական սահմանի միջակայքը: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի հարաբերական ցածր մակարդակը հնարավորություն է տալիս ճգնաժամային իրավիճակում ունենալու ավելի մեծ միջակայք մինչև այն շեմը, որից հետո տնտեսության աճի վրա վերաֆինանսավորման տոկոսադրույքն ունենում է բացասական ազդեցություն, որի հետևանքով նաև բանկային տոկոսադրույքները գերազանցում են տնտեսության միջին շահութաբերությունը, հատկապես իրական հատվածում, և դա իհարկե խոչընդոտում է տնտեսության զարգացումը:

Ինչպես ցույց է տալիս տարբեր երկրների վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի դինամիկան, որոշակի կապ կա գնաճի և վերաֆինանսավորման տոկոսադրույքի ցուցանիշի մակարդակների միջև՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը չի գերազանցում գնաճի տարեկան ցուցանիշը (տե՛ս աղյուսակ 1): Այս կապը բացատրվում է նրանով, որ տնտեսության

<sup>1</sup> ԿԲ 2012թ. սեպտեմբերի որոշմամբ տարածած հաղորդագրությամբ,  
[http://www.cba.am/AM/pmessagesannouncements/Minutes\\_04.09.2012.pdf](http://www.cba.am/AM/pmessagesannouncements/Minutes_04.09.2012.pdf),

<sup>2</sup> [http://noravank.am/upload/pdf/5.Ashot%20Tevikyan\\_21\\_Dar\\_01\\_2012.pdf](http://noravank.am/upload/pdf/5.Ashot%20Tevikyan_21_Dar_01_2012.pdf),

համար նպաստավոր է բանկային տոկոսադրույքների և միջին շահութաբերության օպտիմալ տարբերությունը, որն իհարկե ուղղակիորեն կախված է վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերությունից: Եթե վերաֆինանսավորման տոկոսադրույքը գերազանցում է միջին շահութաբերությունը հատկապես իրական հատվածում, կամ դրանց տարբերությունը բավարար չէ, ապա դա չի նպաստում տնտեսության զարգացմանը: Այսպիսով, երկարաժամկետ տնտեսական զարգացման առումով նպատակահարմար է, որ վերաֆինանսավորման տոկոսադրույքը լինի գնաճի մակարդակից ցածր կամ վերջինին հավասար մակարդակում: Իհարկե, եթե միջին շահութաբերությունն էապես գերազանցում է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ապա այդ պարագայում դա ոչ արդյունավետ դրամավարկային կառավարման դեպքում կարող է նպաստել ինքնաարագացող գնաճին: Զարգացման տարբեր աստիճաններ ունեցող համաշխարհային տնտեսությունները վերաֆինանսավորման կամ ռեպո տոկոսադրույքի ցուցանիշը սահմանում են ծրագրավորված գնաճի միջին մակարդակի սահմաններում, կամ, ինչպես երևում է աղյուսակում, այն տարեկան գնաճի փաստացի մակարդակից ցածր է: Նկատենք, որ վերաֆինանսավորման տոկոսադրույքն էապես ցածր է զարգացած, համաշխարհային ֆինանսական շուկաներով տնտեսություններում, որոնց փոխարժեքն ակտիվորեն կիրառվում է ոչ միայն տվյալ տնտեսության ներսում:

Չետևապես նաև այդ պատճառով վերաֆինանսավորման տոկոսադրույքն անհրաժեշտ է սահուն իջեցնել գնաճի մակարդակի սահմանին, առավել ևս եթե այն չի գերազանցում գնաճի օրենքով սահմանված մակարդակը: Այս դեպքում նպատակային է այն սահուն իջեցնել մինչև 5.5% սահմանները՝ իհարկե հաշվի առնելով այլ միջոցառումների արդյունավետությունը՝ ուղղված գնաճի կառավարելիության բարձրացմանը և գնաճի սեզոնայնության մեղմմանը:

*Աղյուսակ 1*

**Վերաֆինանսավորման (ռեպո) տոկոսադրույքի և գնաճի համեմատությունը մի շարք պետություններում**

<b>Պետություն</b>	<b>Ռեպո տոկոսադրույք (%)<sup>1</sup></b>	<b>Տարեկան գնաճ (2011, %)<sup>2</sup></b>	<b>Ռեպո և գնաճի տարբերություն</b>
<i>Հայաստան</i>	8	4.2	3.8
<i>Եվրոպական միություն</i>	0.75	3.0	-2.25
<i>ԱՄՆ</i>	0.25	2.7	-2.45
<i>Միացյալ Թագավորություն</i>	0.5 (2012թ), 5.0(2008թ) <sup>3</sup>	2.3	-1.8
<i>Ռուսաստան</i>	8.25	15.9	-7.65
<i>Ղազախստան</i>	5.5	16.4	-10.9
<i>Ուկրաինա</i>	7.5	15.6	-8.1
<i>Վրաստան</i>	5.57	9.2	-3.63
<i>Ադրբեջան</i>	5.25	16.7	-11.45
<i>Թուրքիա</i>	5.57	8.6	-3.03
<i>Չինաստան</i>	6.0	7.8	-1.8
<i>Լատվիա</i>	2.5	5.4	-2.9
<i>Լեհաստան</i>	4.75	3.2	1.55

<sup>1</sup> Տարբեր պետություններում կենտրոնական բանկերի տոկոսադրույքներն ունեն տարբեր անվանումներ, սակայն վերջինիս հաշվարկի և ազդեցության տարբերություններն էական չեն: <http://www.cbrates.com/>

<sup>2</sup> <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.DEFL.KD.ZG>

<sup>3</sup> <http://www.cbrates.com/england/index.htm>

Գնաճի կառավարումը նաև ունի իր սահմանափակումները, որոնք ոչ միայն պայմանավորված են շուկայական ներքին պատճառահետևանքային կապերով, նրա ուժեղ և թույլ կողմերով, այլ նաև ներմուծվող ապրանքների համաշխարհային գներով: Վերջինս, ի տարբերություն ներքին շուկայական փոփոխականների արտաքին միջավայրի տարր է և որպես այդպիսին հստակ կառավարելի չէ և կրում է որոշակի վտանգներ:

Ինչպես ցույց է տալիս մեր կողմից մշակված գնաճի վրա ազդող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կոռելյացիոն կապերի հավասարումը, էներգակիրների (բենզինի) գների միավոր աճը նախորդ ժամանակահատվածում հանգեցնում է 0,11 ՍԳԻ-ի աճին<sup>1</sup>: Այս ազդեցությունը թուլացնելու և հավասարակշռելու համար պետք է առաջին հերթին հավասարակշռել առևտրային հաշվեկշիռը՝ խթանելով արտահանումը, որը երկարաժամկետ կտրվածք ունեցող արդյունավետ պետական կառավարում ակնկալող խնդիր է: Նշենք նաև, որ հիմնականում միայն արտահանման աճով փոքր տնտեսությամբ երկրներում կարելի է նպաստել զբաղվածության էական աճին: Վերջինիս կարելի է հասնել երկարատև, հստակ արտահանման խթանման ծրագրով և սահուն երկարաժամկետ կտրվածքում իրականացված դրամի արժեզրկման քաղաքականությամբ:

Մեկ այլ խնդիր է Հայաստանի Հանրապետությունում գների աճի և նվազման հստակ սեզոնային միտումն է, որը լիարժեքորեն հաշվի չի առնվում: Սա ներքին միջավայրի թույլ կողմն է և ակնկալում է հստակ միջոցառումներ, գնաճի ճկուն և ժամանակային մոնիթորինգ ու վերահսկողություն:

Մեր տնտեսությանը բնորոշ է ցածր փողայնացման մակարդակը և հետևաբար՝ հարաբերականորեն բարձր դոլարայնացման մակարդակը: Փողայնացման մակարդակի բարելավման հստակ միջոցառումները կբավարարեն դրամի շուկայական պահանջարկը, դրա հետ մեկտեղ դա կնպաստի դոլարիզացիայի մակարդակի կրճատմանը: Դոլարիզացիայի համեմատաբար բարձր մակարդակը ՀՀ-ում մեծացնում է տնտեսական անորոշությունը և փոքրացնում գնաճի կառավարելիությունը: Տարադրամը, լինելով արտաքին միջավայրի տարր և ունենալով շրջանառության համեմատաբար բարձր ծավալներ ՀՀ-ում, բացասաբար է ազդում տնտեսության վրա, և ճգնաժամային պայմաններում այդ ազդեցությունը կարող է բերել անկայունության, ինչպես նաև դժվարացնել կառավարման արդյունավետությունը: Դոլարիզացիայի մակարդակը կարելի է կառավարել նպատակային փողայնացման մակարդակի մեծացմամբ՝ հաշվի առնելով դրամի սահուն և երկարատև արժեզրկման քաղաքականությունը:

Այսպիսով, անհրաժեշտ է ցուցաբերել երկարաժամկետ ուղղվածությամբ համակարգային մոտեցում՝ ապահովելով փոխկապակցված սահուն արժեզրկում: Վերջինս պետք է իրականացվի՝ սահմանելով միջակայք, որպեսզի տնտեսական սուբյեկտները գտնվեն կանխատեսելի միջավայրում, որը չի առաջացնի բացասական սպասումներ: Նպատակահարմար է նաև ֆինանսական ֆյուչերսային ինստիտուտի ավելի ինտենսիվ կիրառումը, որտեղ տնտեսական սուբյեկտները հնարավորություն ունեն ազդել գործարքի ապագա փոխարժեքի վրա: Հստակ **միջակայքային փոխարժեքը** կբարելավի առևտրային հաշվեկշիռը՝ խթանելով արտահանումը: Այս միջոցառումը կոնկրետ գնաճի կառավարման տեսանկյունից, ինչպես նաև ներմուծման գների դերը նվազեցնելու տեսանկյունից, կընդլայնի Կենտրոնական բանկի հնարավորությունները գնաճի կառավարման գործում: Քանի որ տարադրամն ունի էական դեր փոխարժեքի փոփոխման գործում, առաջարկվում է միջակայքային փոխարժեքը սահմանել՝ հաշվի առնելով փողի շուկայում մեծ կշիռ կազմող օտարերկրյա տարադրամը՝ համապատասխան իրենց կշռային հարաբերության: Այս դեպքում նպատակահարմար է ընտրել ԱՄՆ դոլարի, եվրոյի, ռուսական ռուբլու հարաբերական միջակայքային զամբյուղը: Իհարկե, այս զամբյուղը կրելու է միայն կանխատեսումային բնույթ և կարող է շտկման ենթարկվել՝ ելնելով իրավիճակից: Տվյալ

<sup>1</sup> *Աղասի Թավադյան*, Գնաճի վրա ազդող գործոնների գնահատման արդյունավետությունը, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա #6 (144) հունիս 2012, էջ 37:

միջակայքը նպատակահարմար է սահմանել հնարավորինս փոքր, սակայն այնպես, որպեսզի կատարման հավանականությունը լինի բարձր, ոչ նվազող:

Այսպիսով, համակարգային մոտեցումը գնաճի արդյունավետ կառավարման գործում անհրաժեշտ պայման է և չի կարող իրագործվել՝ առանց հաշվի առնելու այլ տնտեսական ցուցանիշների հետ իր փոխկապվածությունները: Գնաճի կառավարումը պետք է լինի ճկուն, որը հաշվի է առնում գնային միտումները, սեզոնայնությունը, գների իրական վիճակը և գների կանխատեսումները միջազգային շուկաներում, հատկապես էներգակիրների և հացահատիկի, ինչպեսև նրա համակարգային փոխկապվածությունն այլ կարևոր առանցքային տնտեսական ցուցանիշների հետ՝ վերաֆինանսավորման տոկոսադրույք, փողայնացման մակարդակ, փոխարժեք, առևտրային հաշվեկշիռ, միջին շահութաբերություն: Պետք է հաշվի առնվեն նաև տնտեսական մենաշնորհները, որոնք կարող են հակազդել ընդունված որոշումներին՝ նվազեցնելով նրանց արդյունավետությունը և տնտեսական ցուցանիշների փոխազդեցության մակարդակը:

Բացի որոշակի դրամավարկային քաղաքականության փոփոխությունից, այն պետք է ամրապնդել և ամրագրել օրենսդրորեն: Այս քայլը նպատակահարմար է կատարել 3 ուղղությամբ:

ա) Անհրաժեշտ է օրենքով ամրագրել ոչ միայն գնաճի նպատակային միջակայքը, այլ նաև տնտեսության հիմնական ցուցանիշների նպատակային միջակայքը: Տնտեսությունը գտնվում է համակարգային փոփոխության մշտական պայմաններում: Եթե գնաճը գտնվում է սահմանված միջակայքում ի հաշիվ կամ միաժամանակ տեղի ունեցող այլ տնտեսական ցուցանիշների ոչ ծրագրավորված, կտրուկ փոփոխության, դա հետագայում կարող է որոշակի ազդեցություն ունենալ գնաճի ցուցանիշի աճի վրա: Ընդհանուր ֆինանսական կայունության մասին օրենսդրական ակտերն արդյունավետ գործում են Միացյալ Թագավորությունում, Եվրամիությունում, ԱՄՆ-ում: Ֆինանսական կայունության վերաբերյալ դրույթ առկա է նաև Ռուսաստանի կենտրոնական բանկի մասին օրենքում<sup>1</sup>: Տվյալ տնտեսական ցուցանիշների մեջ նպատակահարմար է նշել նաև փոխարժեքը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Վերջինս, ինչպես ցույց է տալիս համաշխարհային պրակտիկան, պետք է լինի պլանավորված գնաճի մակարդակի միջակայքում կամ դրանից ցածր:

բ) Ծրագրում փոխարժեքի միջակայքի ներկայացում: Կենտրոնական բանկի ծրագրում, համաձայն «ՀՀ ԿԲ մասին» օրենքի, սահմանվել է փոխարժեքի մակարդակը, սակայն օրենքի փոփոխությունից հետո<sup>2</sup> այդ դրույթը հանվել է: ՀՀ-ում փոխարժեքը գործում է ազատ շուկայական պայմաններում և որպես այդպիսին չի կարող ճշգրիտ կանխատեսվել և կարգավորվել: Սակայն փոխարժեքը նպատակահարմար է կանխատեսել միջակայքում, որը, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, հնարավոր է և արդյունավետ: Սա նպատակային է նաև ընդհանուր տնտեսական կայունությունից ելնելով: Այն պետք է սահմանել ՀՀ-ում մեծ կշիռ կազմող տարադրամների զամբյուղի հիման վրա: Վերջինս պետք է հաշվարկված լինի նաև ըստ տարադրամների տեսակարար կշռի ՀՀ տնտեսությունում և ճշգրտված լինի ըստ փողայնացման մակարդակի ծրագրավորված փոփոխության: Տվյալ միջոցառման կիրառումը էական ազդեցություն կունենա ՀՀ տնտեսավարող սուբյեկտների վրա, որոնք ՀՀ փոքր և բաց շուկայի պայմաններում կգործեն ավելի կանխատեսելի վիճակում, դա նաև կնվազեցնի նրանց ռիսկերն արտասահմանյան շուկաներում, լինի դա թե՛ ներմուծումը, թե՛ արտահանումը: Մասնավորապես, ավելի կանխատեսելի կդարձնի էներգակիրների շուկան, որը շղթայական կերպով ազդում է գրեթե ամբողջ տնտեսության գների վրա:

գ) Գնաճի վրա ազդում են տարբեր տնտեսական ցուցանիշներ, որոնք խմբավորվել են ըստ տարբեր ազդեցության ոլորտների<sup>3</sup>: Գնաճի արդյունավետ կառավարումը բարձրացնելու համար նպատակահարմար է հստակեցնել այդ գործոնների կառավարումը համապատասխան

<sup>1</sup> [http://www.cbr.ru/today/status\\_functions/law\\_cb.pdf](http://www.cbr.ru/today/status_functions/law_cb.pdf)

<sup>2</sup> «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը, 6-րդ հոդված, 1996:

«ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-209, ընդունված է: 18.03.1998, ՀՕ-36-Ն, ընդունված է, 25.12.2006:

<sup>3</sup> *Աղասի Թավադյան*, Գնաճի վրա ազդող գործոնների համակարգումը, «21-րդ դար» N 2, 2011: [http://www.noravank.am/upload/pdf/4.Aghasi%20Tavadyan\\_02\\_2011.pdf](http://www.noravank.am/upload/pdf/4.Aghasi%20Tavadyan_02_2011.pdf)

նաբար ըստ տարբեր կառավարչական կառույցների և տնտեսական հանձնաժողովների: Հաշվի առնելով մեր զարգացող տնտեսության «փոքր շուկայի» որոշ ներմուծվող ապրանքների մենաշնորհային և կիսամենաշնորհային ազդեցությունը, հատկապես էներգակիրների, որը, ինչպես նշվեց, ունի շղթայական ազդեցություն ամբողջ տնտեսության վրա, նպատակահարմար է մրցակցային հանձնաժողովին հնարավորություն ընձեռել սահմանելու տվյալ գների վերին սահմանը: Վերջինս պետք է պարբերաբար անկողմնակալ վերանայվի՝ հաշվի առնելով տվյալ ապրանքների գների դինամիկան միջազգային շուկաներում: Տվյալ գործառույթը օրենսդրորեն պետք է ամրագրել ՀՀ մրցակցային պաշտպանության պետական հանձնաժողովին, քանզի կենտրոնական բանկը տվյալ առևտրային հաշվեկշռի իրավիճակում չի կարող լիարժեք կերպով կառավարել գնաճը և միաժամանակ ապրանքների և ծառայությունների գների վերին սահմանները:

Տնտեսության երկարատև զարգացման համար նպատակահարմար է ցածր գնաճ, սակայն դրան հասնելու համար, գնաճի արդյունավետ կառավարման տեսանկյունից, անհրաժեշտ են հաջորդական, համակարգված, փոխկապակցված քայլեր: Տնտեսության զարգացման ներկա իրավիճակում անհրաժեշտ է գնաճի կառավարման փուլային սկզբունք՝ հաշվի առնելով գնաճի փոխկապակցություններն այլ տնտեսական ցուցանիշների հետ<sup>1</sup>: Գնաճի արդյունավետ կառավարումը նպատակահարմար է ներկայացնել հետևյալ փուլերով.

1. համեմատաբար կայուն տնտեսական պայմաններում և գնաճի որոշակի սահմանի չգերազանցման պարագայում՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի շեմի իջեցում, որը կմեծացնի վերջինիս տնտեսական օգտակարության ռեզերվը և կօժանդակի տնտեսավարող սուբյեկտներին:

2. Չգերազանցելով յուրաքանչյուր տարվա համար «ՀՀ պետական բյուջեի» մասին ՀՀ օրենքով սահմանված գնաճի վերին սահմանը՝ նպաստել առևտրային հաշվեկշռի էական լավացմանը, այդ թվում՝ դրամի սահուն արժեզրկման միջոցով հաշվի առնելով փոխարժեքի փոխկապակցվածությունն արտահանման և ներմուծման հետ: Ապահովել դրամի կանխատեսման ավելի բարձր որակ՝ սահմանելով միջակայքային փոխարժեք:

Իհարկե, սահուն իրականացված արժեզրկումը կբերի որոշակի կառավարելի գնաճի, ինչպեսև վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը կհանգեցնի պահանջարկի մեծացմանը՝ առաջացնելով պահանջարկի գնաճ և հակառակ կողմից զսպելով ծախքերի գնաճը: Այնուամենայնիվ, այս քայլերի դեպքում գնաճը կառավարելի է, և դա կնպաստի ներքին տնտեսական ռեսուրսների աճին:

3. Պահպանելով հնարավորինս ցածր գնաճ՝ մեծացնել փողայնացման մակարդակը, ինչին նաև նպաստում է վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը: Նշենք նաև, որ այս քայլը դոլարիզացմանը հակազդող հիմնական միջոցն է, քանզի փողայնացման ցածր մակարդակի պայմաններում տնտեսությունում իր փողի պահանջը լրացնում է փոխարկելի տարադրամի միջոցով: Որպես թիրախ այստեղ կարող է ընտրվել Արևելյան Եվրոպայի երկրների փողայնացման միջին մակարդակը:

4. Առևտրային հաշվեկշռի և փողայնացման մակարդակի էական բարելավման գործընթացի պարագայում պահպանելով կայուն փոխարժեք՝ հասնել հնարավորինս կայուն ցածր գնաճի՝ առանց էական կառուցվածքային և սեզոնային տատանումների:

Այս փուլերի իրականացման արդյունքում կմեծանա Կենտրոնական բանկի դերը գների արդյունավետ կառավարման գործում: Կաճեն գների կայուն և երկարաժամկետ կարգավորման հնարավորությունները:

<sup>1</sup> [http://www.noravank.am/upload/pdf/4.Aghasi%20Tavadyan\\_02\\_2011.pdf](http://www.noravank.am/upload/pdf/4.Aghasi%20Tavadyan_02_2011.pdf)

## **Этапы эффективного управления инфляцией**

### **Аннотация**

В статье предлагается концепция полезного резерва ставки рефинансирования, которая позволит увеличить ее влияние на денежно-кредитные показатели, в первую очередь на инфляцию.

Обосновано, что долгосрочное устойчивое развитие требуют последовательные, скоординированные, взаимосвязанные шаги, которые будут принимать во внимание инфляцию и ее взаимосвязь с другими экономическими показателями. Нынешняя экономическая ситуация требует фазового контроля инфляции, которая будет учитывать взаимосвязь между инфляцией и другими экономическими показателями. Поэтапное управление инфляции позволит в долгосрочном плане иметь экономику с более управляемой стабильной и низкой инфляцией.

**Aghasi Tavadyan**

## **Stages of Efficient Inflation Management**

### **Abstract**

The concept of utility reserve of refinancing rate is proposed in the article, which will allow increasing its effect on monetary indicators, first of all on inflation.

It is substantiated that long term sustainable development requires sequential, coordinated, interrelated steps, which will take into consideration inflation and its feedback on other economic indicators. The current economic situation requires phase based control of inflation, which will consider interconnections between inflation and other economic indicators. Stepwise inflation management will allow us to have long term economy with more manageable stable and low inflation.

**ՀԱՄԱՇԽԱՐԻԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ.  
ԻՍԼԱՄԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՀԵՏՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ  
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Համաշխարհային տնտեսության ֆինանսական մարտահրավերները վերջին ժամանակներս բավականին շատ են, դրանք առնչվում են բանկային համակարգում առկա հիմնախնդիրներին, որոնք կապված են իրացվելիության, բարձր և որոշ երկրներում էլ անհավանական ցածր տոկոսադրույքների, ավանդների արտահոսքի, բանկային կապիտալը իրական տնտեսությունից կտրվելու և ներդրումների չվերածվելու հանգամանքների, միասնական կարգավորող և վերահսկող ֆինանսական ինստիտուտներ չունենալու, LIBOR տոկոսադրույքի հետ կապված սկանդալային բացահայտումների հետ և այլն: Համաշխարհային ֆինանսական համակարգը կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ, որոնք առանց ֆինանսատնտեսական ճգնաժամների բավականին դժվար է լինելու կարգավորել, վերջինս իր հետ բերելու է մի շարք երկրների ֆինանսական համակարգերի արմատական փոփոխություններ, առաջանալու են նոր վերահսկողական ինստիտուտներ, որոնց սկիզբը կարելի է ասել դրվել է Եվրոպայում:

Համաշխարհային տնտեսության ֆինանսական համակարգում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերն առնչվում են նաև կապիտալի շուկայում տեղի ունեցող փոփոխությունների, պետությունների կողմից կուտակված պահուստների, բանկերի ակտիվների ըստ տարածաշրջանների նվազման կամ աճի հետ և այլն: Հետաքրքիրն այն է, որ ելնելով առանձին երկրների տնտեսական իրավիճակից, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումներից՝ կարելի է նաև ենթադրություններ անել այս կամ այն տարածաշրջանի ճգնաժամի մեջ հայտնվելուց քաղած օգուտների մասին: Այսպես՝ աշխարհում ամենամեծ պահուստներ ունեցող երկիրը Չինաստանն է, և երբ նկատում ենք, թե ակտիվների գների անկման պարագայում ինչպես է այն օգտագործում իր արժույթային պահուստները, հասկանալի է դառնում, որ ռազմավարական քայլի է նմանվում Չինաստանի կողմից որևէ տարածաշրջանի չաջակցելն ու այնուհետև միավորումների և կլանումների միջոցով էժան ակտիվներ ձեռք բերելը և այլն: Դրանք քայլեր են, որոնք համաշխարհային տնտեսության մեջ փոխելու են զարգացումների վեկտորը:

Ուսումնասիրելով համաշխարհային ֆինանսական համակարգի հիմքը կազմող արժեթղթերի շուկայի կապիտալացման, ինչպես նաև բանկային ակտիվների ցուցանիշները և մյուս կողմից դրանք համադրելով ՀՆԱ-ի ցուցանիշների հետ՝ նկատում ենք մի շարք հետաքրքիր միտումներ և զարգացումներ, որոնք կան համաշխարհային տնտեսության մեջ և, չնայած այն հանգամանքին, որ ցուցանիշները 2012թ. ապրիլյան ԱՄՆ-ի զեկույցում բերված են 2010թ. դրությամբ, այնուամենայնիվ դրանք պատկերացում են տալիս աշխարհում տեղի ունեցող լուրջ զարգացումների մասին:



Կապիտալի շուկայի չափի վերաբերյալ ցուցանիշներ 2010<sup>1</sup>  
(մլրդ ԱՄՆ դոլար)

	ՉՆԱ	Ընդհանուր պահուստներ (-ուսիք) <sup>2</sup>	Արժեթղթերի շուկայի կապիտալացման	Պարտքի պարտատոմսեր <sup>3</sup>			Բանկերի ակտիվներ <sup>4</sup>	Պարտատոմսեր, բաժնետոմսեր և բանկերի ակտիվներ <sup>5</sup>	Պարտատոմսեր, բաժնետոմսեր և բանկերի ակտիվներ <sup>5</sup> (ՉՆԱ %)
				Հանրային	Սասնավոր	Ընդամենը			
Աշխարհ	63,074.9	9,644.8	54,562.2	41,274.2	53,289.7	94,563.9	107,774.7	256,900.9	407.3
Եվրոպական միություն <sup>1</sup>	15,171.6	431.5	10,150.0	10,392.9	20,741.3	31,134.2	45,273.1	86,557.4	570.5
Եվրոյի գոտու երկրներ	12,134.4	300.2	5,696.2	8,676.2	16,069.6	24,745.8	30,830.0	61,271.9	504.9
Հյուսիսային Ամերիկա	16,103.6	178.4	19,453.9	12,304.6	22,188.5	34,493.1	17,473.7	71,420.6	443.5
Կանադա	1,577.0	57.0	2,170.4	1,139.1	972.7	2,111.8	3,138.4	7,420.6	470.5
ԱՄՆ	14,526.6	121.4	17,283.5	11,165.5	21,215.8	32,381.3	14,335.3	64,000.0	440.6
Ճապոնիա	5,488.4	1,061.5	4,099.6	11,635.5	2,518.2	14,153.7	11,172.4	29,425.7	536.1
Թվարկված երկրներ									
<i>ԵՄ երկրներ</i>									
Ավստրիա	379.8	9.6	126.0	239.1	471.1	710.2	1,307.6	2,143.8	564.5
Բելգիա	470.2	16.5	269.3	437.3	701.7	1,139.0	1,546.9	2,955.2	628.5
Դանիա	312.0	73.5	244.2	123.0	674.9	797.9	1,147.4	2,189.5	701.8
Ֆինլանդիա	238.5	7.3	213.2	100.3	131.9	232.1	495.6	940.9	394.6
Ֆրանսիա	2,562.8	55.8	1,758.7	1,724.0	3,404.6	5,128.6	9,370.9	16,258.2	634.4
Գերմանիա	3,286.5	62.3	1,429.7	2,025.6	3,328.3	5,353.9	5,305.5	12,089.1	367.8
Հունաստան	305.4	1.3	67.6	382.5	302.9	685.3	591.4	1,344.3	440.1
Իռլանդիա	207.0	1.8	60.4	127.1	712.4	839.5	992.1	1,892.0	914.1
Իտալիա	2,060.9	47.7	598.4	2,186.8	2,170.6	4,357.4	3,261.8	8,217.7	398.7
Լյուքսեմբուրգ	53.4	0.7	101.1	5.4	90.6	96.0	1,024.1	1,221.2	2,285.6
Նիդեռլանդներ	780.7	18.5	327.2	408.8	1,911.4	2,320.3	2,608.9	5,256.3	673.3
Պորտուգալիա	229.0	3.7	87.8	178.1	357.6	535.7	717.9	1,341.4	585.8
Իսպանիա	1,395.0	19.1	631.7	795.5	2,462.9	3,258.3	3,377.8	7,267.8	521.0
Շվեդիա	462.1	42.6	596.6	170.6	648.8	819.4	702.0	2,117.9	458.3
Միացյալ Թագավորություն	2,263.1	68.3	3,613.1	1,423.1	3,348.1	4,771.2	12,593.7	20,978.0	927.0
<i>Ասիայի նոր զարգացող երկրներ<sup>6</sup></i>	1,896.6	1,167.6	5,059.4	774.1	1,084.5	1,858.5	4,261.4	11,179.3	589.4
<i>Անցումային երկրների տնտեսություններ<sup>7</sup></i>	21,636.6	6,299.4	12,535.8	5,456.6	3,374.2	8,830.8	22,839.4	44,206.0	204.3
<i>Այդ բոլորը՝</i>									
Ասիա	9,557.9	3,646.8	6,680.9	2,796.6	1,925.9	4,722.5	14,853.1	26,256.5	274.7
Լատինական Ամերիկա և Կարիբներ	4,900.3	632.9	2,669.5	1,664.2	992.3	2,656.5	3,476.5	8,802.5	179.6
Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	2,400.5	1,016.1	848.6	94.8	126.6	221.4	1,644.7	2,714.7	113.1
Ենթասահարային Աֆրիկա	1,043.6	157.8	727.1	144.8	100.4	245.1	650.9	1,623.1	155.5
Եվրոպա	3,734.2	845.8	1,609.8	756.3	229.0	985.3	2,214.2	4,809.3	128.8

Աղբյուրը՝ Փոխանակային կուրսերի համաշխարհային ֆեդերացիա, Միջազգային հաշվարկների բանկ (ՄՀԲ) (BIS), ԱՄՆ, Միջազգային ֆինանսական վիճակագրություն (ՄՖՎ) (IFS) և Աշխարհի տնտեսական զարգացումների տվյալների շտեմարան, 4 ապրիլի 2012թ.: ԴԴՀ, Բլումբերգ Լ.Գ.:

- <sup>1</sup> Այս համախմբված ցուցանիշն ընդգրկում է Դանիան, Շվեդիան և Միացյալ Թագավորությունը:
- <sup>2</sup> Տվյալները վերցված են ՄՖՎ-ից: Եվրոյի գոտու տվյալներն ընդգրկում են նաև համընդհանուր պահուստները (հանած ոսկու պահուստները), որոնք պահվում են Եվրոպական կենտրոնական բանկում:
- <sup>3</sup> Տվյալները վերցված են ՄՀԲ-ից: Տվյալներն ընդգրկում են միջազգային և ներքին պարտային պարտատոմսերը: Ցուցանիշների սահմանման համար վերցված է ՄՀԲ-ի Միջազգային ֆինանսական վիճակագրության ուղեցույցը:
- <sup>4</sup> Առևտրային բանկերի ընդհանուր ակտիվները ներառում են նաև լրացուցիչ պարտավորությունները: Ավստրիայի տվյալները վերցված են Ավստրիական ազգային բանկից, Իռլանդիայի տվյալները՝ Իռլանդիայի կենտրոնական բանկից, Լյուքսեմբուրգի տվյալները՝ Commission de Surveillance du Secteur Financier-ից, այն համադրում է առևտրային, խնայողական և մասնավոր բանկերը: Պորտուգալիայի տվյալները վերցված են Պորտուգալիայի բանկից:

<sup>1</sup> Global Financial Stability Report April 2012, The Quest for Lasting Stability, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 177.

<sup>5</sup> Արժեթղթերի շուկայի կապիտալացման, պարտքերի պարտատոմսերի և բանկային ակտիվների հանրագումարը: Հոնկոնգ, ՀԱՀ, Կորեա, Սինգապուր, Թայվան (Չինաստան):

<sup>6</sup> Այս ագրեգացված խումբն ընդգրկում է անցումային և զարգացող տնտեսությունները, որոնք սահմանված են WEO-ում:

Պետք է նշել, որ 2008թ. կեսերին սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո համաշխարհային տնտեսությունն իր վերականգնումը կարողացավ որոշ առումներով ապահովել 2010թ., որից հետո զարգացումները կրկին տանում են դեպի որոշակի անկում: Այս համատեքստում ֆինանսական համակարգում կատարելով որոշ համադրություններ՝ նկատում ենք, որ համաշխարհային ՀՆԱ-ն 2010թ. կազմել է 63 տրլն ԱՄՆ դոլար, իսկ ԱՄՆ-ի ՀՆԱ-ն՝ 14.5 տրլն ԱՄՆ դոլար: Ուսումնասիրելով արժեթղթերի շուկայի կապիտալիացման կամ կապիտալացման ցուցանիշները՝ նկատում ենք, որ ԱՄՆ-ը ունի 17.2 տրլն ԱՄՆ դոլար կապիտալացում, իսկ Եվրոպական միությունը՝ 10.1 տրլն ԱՄՆ դոլար, իսկ վերջինիս կեսից ավելին էլ՝ մոտ 5.7 տրլն ԱՄՆ դոլար, կազմում է Եվրոյի գոտու երկրների մասնաբաժինը: Այսինքն՝ արժեթղթերի շուկայի կապիտալացման տեսանկյունից՝ Եվրոպան ԱՄՆ-ի համար մրցակից չէ, իսկ հարցը դիտարկելով բանկային ակտիվների տեսանկյունից նկատում ենք, որ ԱՄՆ-ի բանկային ակտիվները կազմում են 14.3 տրլն ԱՄՆ դոլար, իսկ ԵՄ-ում դրանք 45.2 տրլն ԱՄՆ դոլար են, սա նշանակում է, որ բանկային համակարգը Եվրոպայում ավելի զարգացած է, իսկ կապիտալացվածություն, որպես այդպիսին արժեթղթերի շուկայում ավելի քիչ ունի, քան ԱՄՆ-ի տնտեսությունը: Այստեղ հարցն այն է, որ բանկերն իրենց ակտիվները մոտ 35 տրլն ԱՄՆ դոլարի չափով ԵՄ-ում պետք է կապիտալացման ենթարկեն, այսինքն՝ կապիտալով չապահովվածությունը խիստ վտանգավոր կարող է լինել ԵՄ տնտեսության համար: Այստեղ գուցե կարելի է նաև եզրակացնել, որ այս ցուցանիշների ներքո է թաքնված ԵՄ երկրներում սկիզբ առած բանկային ճգնաժամը, սակայն դրա հիմնավորումները տալը բավականին բարդ է:

Ամբողջ աշխարհում բանկային ակտիվները շատ ավելի շատ են, քան համաշխարհային ՀՆԱ-ն է, որից կարող ենք եզրակացնել, որ աշխարհը ղեկավարում են բանկերը, քանի որ նրանց ակտիվները 107.7 տրլն ԱՄՆ դոլար են կազմում, իսկ աշխարհի ՀՆԱ-ն՝ 63 տրլն ԱՄՆ դոլար: Իսկ եթե դիտարկում ենք պարտատոմսեր, բաժնետոմսեր և բանկերի ակտիվներ համախմբված ցուցանիշը, ապա նկատում ենք, որ այն կազմել է 2010թ. մոտ 257 տրլն ԱՄՆ դոլար: Նշված համախմբված ցուցանիշը Լյուքսեմբուրգում կազմում է ՀՆԱ-ի 2285%-ը, Դանիայում՝ ՀՆԱ-ի 701%-ը, իսկ Միացյալ Թագավորությունում՝ 927%-ը և այլն:

Վերլուծելով մեկ այլ հետաքրքիր ցուցանիշ, ինչպիսին են պարտքային պարտատոմսերը, որոնք բաժանվում են հանրային (պետական) և մասնավոր պարտքի պարտատոմսերի, նկատում ենք, որ դրանք 2010թ. կազմել են 94.5 տրլն ԱՄՆ դոլար, որից 41-ը՝ հանրային, իսկ 53-ը՝ մասնավոր: ԱՄՆ-ի տնտեսությունը, ընդհանուր առմամբ, ունի 32.3 տրլն ԱՄՆ դոլարի հասնող պարտքային պարտատոմսեր, նույն չափերի են համարյա հասնում ԵՄ-ի պարտքային պարտատոմսերը՝ 31.1 տրլն ԱՄՆ դոլար, որից Եվրոյի գոտում գտնվող երկրների մասնաբաժինը կազմում է 24.7 տրլն ԱՄՆ դոլար: Այս ցուցանիշն ունի աճի միտում, քանի որ աճում են նաև ԵՄ երկրների պարտքային պարտավորությունները, ինչպես նաև աճում են այս պարտատոմսերի համար վճարվելիք տոկոսադրույքները: Իհարկե, պետք է նշել, որ դրանք աճում են այնպիսի երկրներում, ինչպիսիք են Իսպանիան, Իտալիան, Հունաստանը, և եթե դրանք գերազանցում են 7%-անոց մակարդակը, պետությունը, որպես գործիք կորցնում է պարտատոմսերով իր պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու հնարավորությունը, սա, իհարկե, Հայաստանին չի վերաբերում, քանի որ Հայաստանում դրանք միշտ բարձր են եղել, բացառություն են կազմում 2005-2007թթ. ժամանակահատվածի որոշ եռամսյակներ:

Այս համատեքստում մեծ հետաքրքրություն են ներկայացնում աշխարհի միջնաժամկետ զարգացման բազելյան սցենարը և հատկապես տոկոսադրույքների հետ կապված հարցերը: Կանխատեսումները ցույց են տալիս, որ համաշխարհային ՀՆԱ-ի աճի տեմպերը 2012թ. կնվազեն մինչև 3.5%, որը նշանակում է համաշխարհային տնտեսության որոշակի սառեցում:

Իհարկե, 2014-17թթ. համար աճի տեմպերը հարաբերականորեն կլինեն բարձր և կկազմեն միջինում 4.5%, սակայն իրականում բավականին դժվար է կանխատեսել՝ ԵՄ երկրների պարտքային ճգնաժամի պայմաններում հնարավոր կլինի՞ արդյոք պահպանել նման տեմպեր ողջ համաշխարհային տնտեսության մակարդակով: Խնդիրներից է նաև այն, որ բազելյան սցենարով 2012թ. կլինի նաև խիստ բացասական տարի համաշխարհային առևտրի ծավալների անկման առումով, որը 2010թ. 12.9% աճի հետ համադրած կկազմի ընդամենը 4.0%: Անկման տեմպեր կնկատվեն և՛ արտահանման, և՛ ներմուծման բնագավառներում, իսկ ամենաշատը դրանից կտուժեն զարգացած երկրները, քանի որ զարգացած երկրներում 2012թ. կանխատեսվում է, որ արտահանման աճը կկազմի 2.3%, իսկ ներմուծման աճը՝ 1.8%: Իրենց դիրքերը հարաբերականորեն կայուն կպահեն զարգացող երկրները այն պարզ պատճառով, որ ներմուծման աճը 2012թ. կկազմի 8.4%, իսկ 2013թ. կնվազի մինչև 8.1%, իսկ արտահանումը 2012թ. կկազմի 6.6%:

Համաշխարհային տնտեսության մեջ բավականին հետաքրքիր միտումներ է դրսևորում իրական վեցամսյա LIBOR տոկոսադրույքը, այն 1994-2001թթ. ընթացքում միջինում տատանվել է 3.7%-ի շուրջ, իսկ 2002-2009թթ. ընթացքում իջել է մինչև 0.5%: Այժմ համաշխարհային մակարդակով 16 խոշորագույն բանկեր մեղադրվում են այս տոկոսադրույքի շուրջ համաձայնությունների և դրանց փոխհամաձայնության արդյունքում առավել բարձր մակարդակ սահմանելու մեջ: Նշենք, որ այն ձևավորվում է 18 բանկերի կողմից առաջարկվող տոկոսադրույքների միջինացման արդյունքում: Այժմ քննարկվում է նաև այս տոկոսադրույքը վերացնելու հարցը, սակայն կան դրա հետ կապված մի շարք դժվարություններ, ինչպես նաև այդ տոկոսադրույքի հետ են կապված ավելի քան 500 տրիլիոնի հասնող գումարներ և կարելի է ասել գրեթե ողջ դերիվատիվների շուկան, որը տարբեր հաշվարկներով գնահատվում է 500-1500 տրիլիոն ԱՄՆ դոլար, այսինքն՝ 1.5 կվադրիլիոնի հասնող գումար, որի գրոներն անգամ հաշվելը բավականին բարդ է:

Աշխարհի երկարաժամկետ իրական տոկոսադրույքը 2010թ. կազմել է 1.9%, 2011թ. իջել է մինչև 0.2%, իսկ 2012թ. այն միջինում կպահպանվի 0.7%-ի շրջանակներում: Սա նշանակում է, որ աշխարհն անցում է կատարել էժան փողերի քաղաքականության, այսինքն՝ դրամական միջոցները չեն ուղղվում տնտեսության իրական հատված, որի համար իջեցվում է նրանց փոխառնելու արժեքը, իսկ վերջինս արդեն, որոշակի պահից սկսած, մոտիվացիոն գործոն չէ՝ տնտեսական աճ ապահովելու համար: Սա է վկայում նաև Եվրոպական կենտրոնական բանկի կողմից 1%-ից մինչև 0.75%-ի իջեցված բանկերի ֆինանսավորման տոկոսադրույքը<sup>1</sup>: Արդեն բավականին երկար ժամանակ է, որ նման ցածր տոկոսադրույքների են անցել նաև ԱՄՆ-ի դաշնային պահուստային համակարգում՝ 0.25%<sup>2</sup>: Դեռ ավելին, բավականին շատ է խոսվում քանակական մեղմման երրորդ փուլի (QE 3) մասին: Իհարկե, նման քայլից հետո աշխարհում կավելանա դոլարի քանակությունը, և վերջինս գոնե ժամանակավորապես կկանխի դոլարի թանկացումը, սակայն մի շարք փորձագետներ պնդում են, որ դա կլինի կամ ԱՄՆ-ում տեղի ունեցող ընտրությունների նախօրյակին, կամ դրանից հետո:

Համաշխարհային տնտեսության միջնաժամկետ բազելյան սցենարով նաև նախատեսվում է, որ աճ է արձանագրվելու նաև պետական պարտքի սպասարկման բնագավառում, քանի որ պարտքի սպասարկման տոկոսը 2012թ. կհասնի 8.9%-ի, իսկ արդեն 2013թ. այն կմոտենա ընդհուպ 9.1% մակարդակի, այսինքն՝ միջին հաշվարկներով 2014-2017թթ. համար պետական պարտքի սպասարկումն անցումային և զարգացող երկրներում տարեկան կկազմի 9.2%:

<sup>1</sup> <http://www.ecb.int/home/html/index.en.html>

<sup>2</sup> <http://www.federalreserve.gov/newsevents/default.htm>

**Աշխարհի միջնաժամկետ բազեյան սցենարը<sup>1</sup>**

	Միջինը						Կանխատեսումներ	
	1994-2001	2002-2009	2010	2011	2012	2013	2010-13	2014-17
	Տարեկան տոկոսային փոփոխությունները							
Աշխարհի իրական ՀՆԱ							<b>4.2</b>	<b>4.5</b>
Ջարգացած երկրներ	3.1	1.4					2.1	2.6
Անցումային և զարգացող երկրներ	4.2	6.4	7.5	6.2	5.7	6.0	6.4	6.3
<i>Դասակարգումներ</i>								
<i>Ներուժային թողարկում</i>								
Հիմնական զարգացած երկրներ	2.5	1.9	0.9	1.2	1.3	1.4	1.2	1.6
Աշխարհի առևտրի ծավալը <sup>1</sup>	<b>7.4</b>	<b>4.4</b>	<b>12.9</b>	<b>5.8</b>	<b>4.0</b>	<b>5.6</b>	<b>7.0</b>	<b>6.3</b>
<i>Ներմուծում</i>								
Ջարգացած երկրներ	7.8	2.8	11.5	4.3	1.8	4.1	5.4	5.4
Անցումային և զարգացող երկրներ	6.7	8.8	15.3	8.8	8.4	8.1	10.1	7.8
<i>Արտահանում</i>								
Ջարգացած երկրներ	7.0	3.3	12.2	5.3	2.3	4.7	6.0	5.4
Անցումային և զարգացող երկրներ	8.6	7.5	14.7	6.7	6.6	7.2	8.7	7.7
<i>Առևտրի պայմաններ</i>								
Ջարգացած երկրներ	0.0	-0.1	-1.0	-1.7	-0.9	0.1	-0.9	-0.2
Անցումային և զարգացող երկրներ	0.2	1.5	2.0	3.2	0.6	-1.1	1.2	-1.0
<i>Աշխարհի գները ԱՄՆ դոլար</i>								
Արտադրողներ	-0.8	3.1	2.4	7.2	0.2	0.2	2.5	0.2
Նավթ	4.7	12.4	27.9	31.6	10.3	-4.1	15.5	-4.6
Ոչ վառելիքային առաջնային ապրանքներ	-1.4	6.7	26.3	17.8	-10.3	-2.1	6.9	-2.4
<i>Սպառողական գներ</i>								
Ջարգացած երկրներ	2.1	2.0	1.5	2.7	1.9	1.7	2.0	1.8
Անցումային և զարգացող երկրներ	23.3	6.4	6.1	7.1	6.2	5.6	6.2	4.7
<i>Տոկոսադրույք (%)</i>								
Իրական վեցամսյա LIBOR <sup>2</sup>	3.7	0.5	-0.6	-1.6	-0.1	0.1	-0.6	0.6
Աշխարհի երկարաժամկետ իրական տոկոսադրույք <sup>3</sup>	3.4	1.9	1.6	0.2	0.7	1.3	1.0	2.4
				ՀՆԱ տոկոսը				
<i>Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ</i>								
Ջարգացած երկրներ	-0.2	-0.8	-0.2	-0.2	-0.4	-0.2	-0.2	-0.3
Անցումային և զարգացող երկրներ	-0.6	2.9	1.9	1.9	1.7	1.3	1.7	0.8
<i>Ընդհանուր արտաքին պարտք</i>								
Անցումային և զարգացող երկրներ	36.9	29.8	25.2	23.8	23.7	23.6	24.0	22.7
<i>Պարտքի սպասարկում</i>								
Անցումային և զարգացող երկրներ	8.8	9.9	8.2	8.4	8.9	9.1	8.7	9.2

<sup>1</sup> Տվյալներն առնչվում են ապրանքների և ծառայությունների առևտրին:

<sup>2</sup> Լոնդոնի միջազգային բանկի (LIBOR) կողմից առաջարկվող տոկոսադրույքը (ԱՄՆ ավանդային տոկոսադրույքի փոփոխության և ԱՄՆ ՀՆԱ-ի դեֆլյատորի միջև տարբերություն):

<sup>3</sup> ՀՆԱ-ի կշռված միջինը 10 տարիների կտրվածքով և պետական պարտատոմսերի տոկոսադրույքները ԱՄՆ-ի, ճապոնիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Միացյալ Թագավորության և Կանադայի համար:

Համաշխարհային տնտեսության նմանատիպ զարգացումները և հատկապես ֆինանսական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները ստիպում են մտածել համաշխարհային ֆինանսական ճարտարապետության զարգացումների վերաբերյալ:

Բավականին լուրջ հետազոտություններ ֆինանսական համակարգերի և ամբողջ աշխարհի ֆինանսական զարգացման վերաբերյալ ունեն մասնաշխարհային տնտեսական համաժողովի մասնագետները, որոնք մշակել են աշխարհի ֆինանսական համակարգի զարգացման 4 հիմնական սցենարներ<sup>2</sup>, որոնք այն հավանական զարգացման մոդելներն են, որով ապագայում

<sup>1</sup> World Economic Outlook April 2012, Growth Resuming, Dangers Remain, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 220.

<sup>2</sup> The Future of the Global Financial System A Near-Term Outlook and Long-Term Scenarios, A World Economic Forum Report in collaboration with, Oliver Wyman, 2009, 82 p.

<https://members.weforum.org/pdf/scenarios/TheFutureoftheGlobalFinancialSystem.pdf>

շարժվելու է աշխարհի ֆինանսական համակարգը: Այսինքն՝ փորձ է արվել նախ գնահատական տալ աշխարհի ֆինանսական համակարգի զարգացման ներկա իրավիճակին և այնուհետև անդրադառնալ դրա երկարաժամկետ զարգացման հեռանկարներին:

Առաջին սցենարով նախատեսվում է, որ աշխարհը պետք է ընթանա ֆինանսական ռեգիոնալիզմի զարգացման սցենարով:

Երկրորդ սցենարով նախատեսվում է, որ աշխարհը կունենա վերակառուցված արևմտյան ցեմտրիզմի համակարգի վրա հիմնվող ֆինանսական համակարգ:

Երրորդ սցենարով նախատեսվում է, որ աշխարհի ֆինանսական համակարգը հիմնվելու է մասնատված հովանավորչության վրա:

Չորրորդ սցենարով նախատեսվում է, որ կունենանք բազմակողմ վերահաշվեկշռված կամ վերահավասարակշռված ֆինանսական համակարգ:

Այս համակարգերից յուրաքանչյուրը պահանջում է մանրակրկիտ ուսումնասիրություն, ինչպես նաև աշխարհի տնտեսությունների և ուժեղ ֆինանսական համակարգ ունեցող պետությունների դիրքային փոփոխությունների բացահայտում, քանի որ աշխարհի տնտեսության մեջ երկրների դիրքային փոփոխություններն են ստիպելու, որպեսզի աշխարհն անցում կատարի նոր ֆինանսական համակարգի, որտեղ իրենց դերակատարումը հաստատ ունենալու են երկրներ, որոնք մինչ այդ այնքան էլ աչքի չեն ընկել:

Այս համատեքստում բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում իսլամական աշխարհում ընդունված մոտեցումների հիման վրա իսլամական ֆինանսների ուսումնասիրությունը, որոնք կարծես թե յուրահատուկ լուծումներ են պարունակում աշխարհում ներկայումս սկիզբ առած ֆինանսական և պարտքային խնդիրների լուծման հարցում:

Այն հանգամանքը, որ իսլամական ֆինանսները և ինստիտուտները մեծ թափով աճ և զարգացում են ապահովում համաաշխարհային տնտեսության մեջ, արդեն հայտնի փաստ է: Այդ իսկ պատճառով ինչպես հասարակական և տնտեսական ամեն մի երևույթ, սա նույնպես խոր ուսումնասիրության կարիք ունի, քանի որ իսլամական աշխարհից շատ տնտեսագետներ մտածում են ուղորտում առկա հիմնախնդիրների բացահայտման լուծման և ֆինանսական համակարգի հետագա զարգացման մասին: Եվ հարցն այն է, որ կարծիքներն այս համակարգի վերաբերյալ շատ հակասական են և ոչ միանշանակ:

Իսլամական ֆինանսական համակարգի ընդդիմախոսները բաժանվում են երկու խմբի: Քննադատների մի մասը գտնում է, որ իսլամական ֆինանսական համակարգը պետք է հիմնվի շարիաթի օրենքների վրա, սակայն վերջինս խախտվում է, և վարկերի դիմաց ստանում են եկամուտներ, բավականին բարձր են հիփոթեքային վարկերի տոկոսադրույքները, բանկիրները ստանում են բավականին բարձր պարգևավճարներ (բոնուսներ) և այլն:

Չախակողմյան քննադատները կամ ընդդիմախոսները կցանկանային ազատականացնել կամ ավելի լիբերալ դարձնել իսլամական ֆինանսական համակարգը, որպեսզի այն ավելի շատ նմանվեր ավանդական ֆինանսական համակարգին, և վերացվեին իսլամական բարոյագիտության հետ կապված սահմանափակումները: Եվ ամենամեծ քննադատության է ենթարկվում կամ ստվեր է նետվում առանց տոկոսադրույքների իսլամական վարկերի վրա: Հարցն այն է, որ շարիաթի օրենքներով արգելվում է փոխառնված դրամի դիմաց հավելյալ դրամ վերցնելը: Սակայն հենց այս սկզբունքը մի շարք իսլամական երկրների (Թուրքիա, Ղազախստան և այլն) բանկային համակարգում չի պահպանվում, և վերջինս կոնկրետ իսլամական աշխարհի տեսանկյունից պարադոքսալ է, բայց փաստ:

Եվ այս համակարգի զարգացման կողմնակիցները չեն ցանկանում հրաժարվել «իսլամական ֆինանսներ» արտահայտությունից, այլ գտնում են, որ անհրաժեշտ է կատարելագործել վերջինիս գործնական կիրառությունը, քանի որ առաջին հերթին այն արդեն արմատավորվել է համաաշխարհային ֆինանսական համակարգում: Երկրորդ, դրա ֆունդամենտալ հիմքերը և

սկզբունքները վերցված են շարիաթից, որն ավելի քան 1400-ամյա պատմություն ունի, և մյուս կողմից, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, իսլամական տնտեսական մոդելն ավանդական տնտեսության հանդեպ մի շարք դեպքերում ցույց է տալիս իր առավելությունները: Եվ երրորդ, իսլամական ֆինանսական համակարգի զարգացման կողմնակիցները գտնում են, որ այն անհրաժեշտ է ամբողջությամբ համապատասխանեցնել Իսլամի սկզբունքներին: Սա դիտարկվում է նաև որպես կառուցողական մոտեցում, ինչպես նաև հետաքրքրական է, որ կրոնական արժեքներն ամբողջությամբ տեղափոխվում են տնտեսական համակարգ, այդպիսին են նաև հրեական բիզնեսի 67 ոսկյա կանոնները<sup>1</sup>, որոնք մեծամասամբ ունեն կրոնական հիմք:

Այս համատեքստում իսլամական աշխարհի տնտեսագետները տեսնում են իսլամական ֆինանսական համակարգի կատարելագործման մի շարք ասպեկտներ: Եվ բոլոր դեպքերում իսլամական ֆինանսական համակարգի հիմքը կազմող սկզբունքները պետք է փոփոխության չենթարկվեն, քանի որ դրանք ունեն ներդաշնակ տնտեսական աճի և հասարակության զարգացման մեծ ներուժ: Իսլամական ֆինանսական համակարգի սկզբունքների մեջ կա առանց տոկոսների պարտք տալու գաղափարը, որը շատ քիչ է հանդիպում: Այս սկզբունքը, եթե ներդրվի իսլամական բանկային համակարգում, ինչու չէ նաև աշխարհի մյուս բանկերում, կառաջացնի ամբողջ ֆինանսական համակարգում լուրջ հեղափոխություն: Սա կտանի նրան, որ ավանդական բանկային համակարգերին բնորոշ վարկատոկոսադրույթային «փուչիկների», բարձր տոկոսադրույթների կախվածության առաջացումը կվերանա, և բանկային համակարգը կվերածվի տնտեսական զարգացում ապահովող, այլ ոչ թե ցիկլային (պարբերաշրջանային) ճգնաժամեր առաջացնող ինստիտուտի: Բարձր տոկոսադրույթներով և ընդհանրապես տոկոսադրույթներով վարկերն առաջացնում են սոցիալ-տնտեսական ճգնաժամեր, խորացնում են սոցիալական անհավասարությունը հասարակության մեջ և սպառնում են տարբեր քաղաքակրթությունների:

Այստեղ առաջին միտքը, որ ծագում է, այն է, որ բանկային համակարգն առանց տոկոսադրույթների գոյություն ունենալ չի կարող և չի կարող զարգանալ: Սակայն հարցն ունի իր յուրահատուկ լուծումը, իսլամական բանկային համակարգը լուծումը տեսնում է տնտեսական երկու հզոր գաղափարների միավորման մեջ, այն է՝ վարկային (առանց եկամուտների) և ներդրումային (վերջնական եկամուտների ձևավորում) համախմբված գաղափարով ֆինանսավորման իրականացմամբ: Մյուս կողմից բանկային բոլոր հնարավոր ծառայությունները հաճախորդին պետք է մատուցվեն մեկ միասնական փաթեթով և կոնկրետ գումարի դիմաց, այստեղ կարելի է ասել զուգակցվում են շուկայական և ոչ շուկայական տնտեսություններում կիրառվող մոտեցումները, այսինքն՝ սկսում է գործել խառը մոդելը: Թվում է, թե այստեղ բախվում են համատեղելին և անհամատեղելին, սակայն ակնկալիք ունենալ վերջնական եկամուտներից և գործունեության անհաջողության պարագայում հսկայական տոկոսադրույթներով չժանրաբեռնել վարկառուներին և ռիսկը կիսել նրանց հետ, նշանակում է ունենալ ավելի մեծ հաջողությունների հասնելու հնարավորություններ: Այստեղ կարևոր նշանակություն է ստանում ներդրումների արդյունավետությունը, քանի որ արդյունավետ ներդրումների պարագայում բանկը շահագրգիռ կողմի է վերածվում ներդրումներն ավելացնելու առումով, քանի որ շահույթի կամ եկամուտների աճն իրեն ապահովում է լրացուցիչ եկամուտներ, և սկսում է գործել նաև շահութաբեր ոլորտներում մեծ ներդրումներ տեղաբաշխելու մոտեցումը: Այստեղ սկսում է գործել տնտեսության իրական հատվածը, քանի որ ոչ իրական հատվածը առանց տոկոսադրույթների պարզապես վերածվում է միջնորդի և մասնակցություն ունենալ այս գործընթացին իմաստ էլ չունի: Այսինքն՝ ֆինանսական ինստիտուտներն այս ասպարեզում անելիք չունեն, և սա դրական է այնքան, որքանով որ ֆինանսական ճգնաժամերի մի ամբողջ հատված այս մեխանիզմի կիրառումով կարող է կանխվել: Նման մոտեցումն իսկապես կարող է մեծ պահան-

<sup>1</sup> Абрамович М.Л., Бизнес по-еврейски: 67 золотых правил/ М.Л. Абрамович. – Изд. 6-е. – Постов н/Д: Феникс, 2007, 154с.

ջարկ առաջացնել իսլամական ֆինանսների նկատմամբ: Եվ եթե այս հարցին մոտենանք այն տեսանկյունից, որ ողջ Եվրոպայում պարտքային ճգնաժամն է տարածվում, մյուս կողմից այն վերածվում է նաև բանկային ճգնաժամի և այլն, ապա ակնհայտ է, որ միլիոնավոր մարդիկ կնախընտրեին գործ ունենալ նման բանկերի հետ: Իրական ժամանակակից համաշխարհային տնտեսության մեջ տարածված են սկզբունքորեն տարբեր երկու տնտեսական մոդելներ, մասնավորապես ֆինանսների տեսանկյունից, որոնք լինում են ավանդական և այլընտրանքային, որը երբեմն անվանում են նաև իսլամական: Իհարկե, դրանք խելացի ծախսելու հայեցակարգին առնչվող մոտեցումներ կան գրեթե բոլոր կրոններում՝ բուդդայականության, քրիստոնեության, մուսուլմանության մեջ և այլն, սակայն մեզ հետաքրքրում են առանձին ֆինանսական համակարգերը, որոնք գոյություն են ունեցել ներկայիս ավանդական համակարգից շատ դարեր առաջ: Իհարկե, այս համակարգերը համադրվում են նաև առանձին ֆինանսատնտեսական պարամետրերի կամ մրցակցության հիման վրա, և շատ դեպքերում հոգևոր արժեքները ֆինանսատնտեսական արժեքների հետ չեն համադրվում: Ավանդական ֆինանսական համակարգում գրեթե հոգևոր արժեքներ չկան, այլընտրանքային կամ իսլամական համակարգում դրանք ունեն ամուր հիմքեր, իսկ որոշ մոդելներում էլ դրանք միավորված կամ միախառնված են հանդես գալիս: Եթե փորձենք համադրել աշխարհում գոյություն ունեցող բոլոր տնտեսական մոդելները (անգլո-ամերիկյան, մայրցամաքային, սկանդինավյան, արևմտաեվրոպական, ճապոնական, չինական և այլն) և առաջին հերթին առանցք տանենք դրանց սոցիալական արդարության, տնտեսական կայունության տեսանկյուններից, ապա կնկատենք, որ դրանցից և ոչ մեկը չի կարող ապահովել հասարակության և տնտեսության ներդաշնակ զարգացումը: Եվ այս խնդրի հիմքում կա ոչ ներդաշնակ զարգացում, որի գլխավոր պատճառը «տոկոսամոլություն (процентомания)» կոչվող երևույթն է, ինչպես նաև հոգևոր և նյութական արժեքների հակադրությունը<sup>1</sup>: Իսկ թե ինչպիսի բացասական հետևանքներ ունի վերջինս, փորձենք այն ներկայացնել հետևյալ տեսանկյուններից:

- Տոկոսադրույքները մեծացնում են բանկիրների մոտիվացիան վարկերն ավելացնելու առումով, և շատ դեպքերում դրանք ունեն մեծ ռիսկայնություն, քանի որ նրանց հետագա պարզևատրումները ստիպում են մոռանալ ռիսկայնության մասին և աշխատել ավելի մեծ շահույթ ունենալու վրա: ԱՄՆ-ում սկիզբ առած հիփոթեքային ճգնաժամն ապացուցեց, թե ինչպիսի բացասական ազդեցություն կարող են ունենալ տոկոսադրույքները, որոնք հիմնվում են ընդլայնված պահանջարկի և առաջարկի անհամապատասխանության, բարձր շահույթների վրա և այլն: Այսինքն՝ եթե մարդկանց մոտ բացակայում է ներքին սահմանափակումը, նրանք կարող են ստեղծել «օճառի պղպջակներ», որոնք կարող են համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հիմք հանդիսանալ: Իսլամական բանկերը նպատակահարմար են գտնում, որ այս շուկայում աշխատեն առավել հումանիստական մոտեցումներով և անտոկոս վարկերով, ապահովելով խելամիտ գներ և բարենպաստ վերադարձման պայմաններ:
- Տոկոսադրույքներով ավանդներ, դրանք ավանդ ունեցողներին ապահովում են անաշխատ եկամուտներով, որոնք ավելացնում են մարդու եսամոլությունը և նրան հեռացնում հասարակության համար համընդհանուր մտածելակերպից: Եվ այսպիսի մտածելակերպն ազդում է նաև հասարակության վրա, որոնք կարող են լինել ամուսնության և ընտանիքի դերի և ծնելիության անկման տեսքով և այլն: Եվ պետք է նշել, որ չկա որևէ զարգացած պետություն, որտեղ ազգի ծերացում և ազգի ներկայացուցիչների թվի բացարձակ անկում գոյություն չունենա:

Վերոնշյալ խնդիրներն արտահայտվում են մի շարք երկրների ծերության կենսաթոշակների համակարգում, և այն մասնավոր և պետական հիմնադրամները, որոնք վճարում են

<sup>1</sup> Исламский банкинг излечит процентоманию, <http://dknews.kz/islamskijj-banking-izlechit-procentomaniyu.htm>

կենսաթոշակներ, ապագայում ազգաբնակչության ծերացման արդյունքում կանգնելու են ճգնաժամի առաջ, այսինքն՝ համաշխարհային տնտեսության հետագա զարգացման ընթացքը լուրջ ֆինանսական բարեփոխումներ չունենալու պարագայում տանելու է կենսաթոշակային հիմնադրամների սնանկացման կամ մասնակի ոչ վճարունակության, իսկ դա «կենսաթոշակային ճգնաժամի» սկիզբն է ազդարարելու:

Այս տեսանկյունից հասարակության և տնտեսության զարգացման առումով կարելի է ասել իսլամական երկրներն ունեն հաղթող կարգավիճակ, որը նաև ստեղծում է կոնֆլիկտային իրավիճակներ, օրինակ՝ Իսլամ դավանողների մեծաթիվ առկայությունը եվրոպական երկրներում և դա՝ որպես խնդրի դիտարկում: Եվ հետաքրքիրն այն է, որ մյուս տնտեսական մոդելների համեմատությամբ իսլամական տնտեսության մեջ կիրառվող սկզբունքները կարող են հասցնել նրան, որպեսզի հասարակության մեջ նվազագույնի հասցվեն նաև անհավասարությունը և հասարակական լարվածությունը, քանի որ այն ուղղված է ավելի մեծ չափով իրական տնտեսության աճին, ինչպես նաև ՀՆԱ-ի առավել օպտիմալ վերաբաշխմանը: Այսինքն՝ շուկայական տնտեսություն կառուցելու և տարբեր տնտեսական մոդելներ միախառնելու պարագայում այս տարրերի կամ մեխանիզմների կիրառությունը կարող է լուրջ տնտեսական արդյունավետություն ապահովել:

Համաշխարհային մի շարք կրոններում արժեքները շատ դեպքերում համընկնում են, իսկ դրանց կիրառությունը բիզնեսում շատ կարևոր է, քանի որ ազնվությունը, տնտեսական գործունեության մեջ արդարությունը չպահպանվելու դեպքում դրանք գործարար միջավայրի համար ունենում են ապակառուցողական բնույթ, որի հետևանքները հետագայում նկատելի են դառնում:

Մյուս կողմից ժամանակակից ֆինանսական շուկաները՝ վարկային, ֆոնդային, արժութային և այլն, դարձել են բարձր ռիսկային, ենթակա են անկայունության և ճգնաժամերի, որը կարելի է ասել բնակչության մեջ առաջացնում է վստահության կորուստ ավանդական ֆինանսական գործիքների և ինստիտուտների նկատմամբ, իսկ նման երևույթների մասսայականացումը հանգեցնում է արժութային ու բանկային ճգնաժամերի և այլն, որին ականատես ենք լինում Եվրոպայի մի շարք երկրներում (Հունաստան, Իսպանիա, Իտալիա և այլն) բանկերից հոսող ավանդների տեսքով: Այսինքն՝ տնտեսական զարգացումների արդյունքում հասել ենք վստահության ճգնաժամի, որն ազդարարում է համաշխարհային ֆինանսական համակարգում մեծ կառուցվածքային տեղաշարժերի սկզբի մասին:

Այս համատեքստում մի շարք բանկերի հաճախորդներ ամբողջ աշխարհում կարիք ունեն նոր, այլընտրանքային ծառայությունների, և պատահական չէ այն մեծ հետաքրքրությունը, որն առկա է իսլամական բանկային և ապահովագրական համակարգերի, ակցիաների, լիզինգի և այլ ֆինանսական գործիքների շուրջ:

Առանձին երկրների փորձը ցույց է տալիս, որ տվյալ երկրի կազմակերպությունների մեծամասնությունն այժմ հետաքրքրված է ոչ թե վարկերով և տոկոսադրույքներով, այլ ներդրումներով, այսինքն՝ ֆինանսական հատվածը, որն աշխարհում ճգնաժամ է ապրում, և շուտով չի մնա որևէ բանկ, որն ունի երեք «Ա» կամ «AAA» վարկանիշ, նշանակում է, որ համաշխարհային հանրությունը մեկ մակարդակով նվազեցնում է ֆինանսական ինստիտուտների նկատմամբ իր վստահությունը, սա են վկայում նաև Moody's<sup>1</sup> վարկանիշային կազմակերպության վերջին գնահատականները եվրոպական բանկերի վերաբերյալ, որտեղ, բացառությամբ Ֆինլանդիայի՝ մյուս երկրների նկատմամբ սպասելիքներն արդեն իսկ նեգատիվ կամ բացասական են:

<sup>1</sup> [http://www.moody.com/researchandratings/research-type/issuer-research/ratings-news/003004005/-/0/0/-/0/-/0/-/0/-/0/-/0/-/0/](http://www.moody.com/researchandratings/research-type/issuer-research/ratings-news/003004005/-/0/0/-/0/-/0/-/0/-/0/)



Հարկ է նշել, որ տոկոսադրույքները մեծամասամբ ազդում են նաև գների բարձր մակարդակի վրա, որը ստիպում է նաև կազմակերպություններին տվյալ տոկոսադրույքին համապատասխան, դեռ մի բան էլ ավելի բարձրացնել մատուցվող ծառայությունների և արտադրված ապրանքների գները, որ պարունակում է նաև ինֆլյացիոն ռիսկեր:

Վերջնական արդյունքում մոդիֆիկացված իսլամական ֆինանսական և բանկային համակարգը, որը մի շարք մասնագետներ կարծում են հնարավորություն կտա ընդլայնելու իսլամական աշխարհի կազմակերպությունների մրցունակությունը, բավականին խելամիտ է, և մյուս կողմից այս համակարգը կարող է ունենալ իրական տնտեսությանը և սոցիալական բարեկեցությանը աջակցող ուղղվածություն:

Համաշխարհային հանրության համար սրանք կարող են լուրջ ուսանելի դասեր լինել, այն պարզ պատճառով, որ աշխարհի ֆինանսական համակարգը սկսում է զարգանալ բազմադաշտ ֆինանսական համակարգով, օրինակ՝ խոսվում է արդեն Ասիայում «Ազիո» տեսակի դրամ ստեղծելու մասին, հնարավոր զարգացումներից կարող է լինել նաև ողջ իսլամական աշխարհի՝ մեկ դրամական միավորի շուրջ միավորումը և այլն: Սրանք ինտեգրացիոն մոտեցումներ են ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև կրոնական պատկանելությունից ելնելով: Սակայն մի բան պարզ է, որ տոկոսադրույքները և դրանց բարձր լինելը կործանարար ազդեցություն ունեն ցանկացած երկրի տնտեսության համար, զուցե խիստ կանոնների պահպանման պարագայում դրանք որոշ ժամանակ կարող են զարգացնել ֆինանսական համակարգը, սակայն դա նույնպես իր վտանգներն ունի համակարգային ֆինանսական ճգնաժամերի առումով:

Այս համատեքստում փորձենք ներկայացնել հայաստանյան փորձը և ֆինանսական համակարգի տոկոսադրույքների հիմնական ցուցանիշների համադրություններն ու վերլուծությունը:

Հայաստանում վերջին 10 տարիներին բավականին արագ տեմպերով աճել է բանկային համակարգի վարկեր/ՅՆԱ ցուցանիշը, որը 2003 թվականին կազմել է 6.6, իսկ արդեն 2011թ. հասել է 33.3-ի, որը փաստում է տնտեսության մեջ վարկային ակտիվների կտրուկ աճի մասին<sup>1</sup>: Այս ամենի հետ մեկտեղ բավականին բարձր են մնում վարկերի տոկոսադրույքները, դրանք ուսումնասիրելով՝ նկատում ենք, որ տնտեսության իրական հատվածի աճ ապահովելու տեսանկյունից ունեն խիստ կաշկանդող ազդեցություն: Ուսումնասիրելով ՀՀ ԿԲ-ի վարկերի տրամադրման ամսական տոկոսադրույքները՝ նկատում ենք, որ մեկ տարուց ավելի վարկերի 2005-2012թթ. միջին տոկոսադրույքները կազմել են ՀՀ դրամով վարկերի համար մոտ 17.5%, իսկ ԱՄՆ դոլարով վարկերի համար՝ մոտ 15%, իհարկե, դիտարկվող ժամանակահատվածի սկզբնական շրջանում ավելի բարձր են եղել դոլարով հատկացվող վարկերի տոկոսադրույքները, որոնք այժմ տատանվում են 13%-ի շրջանակներում: Հարցն այն է, որ երբ ուսումնասիրում ենք այս տոկոսադրույքների պարագայում ողջ վարկային պորտֆելն իր ճյուղային կառուցվածքով նկատում ենք, որ այս տոկոսադրույքները ՀՀ տնտեսության համար ունեն պարզապես կործանարար ազդեցություն: Ասածը հիմնավորելու համար ներկայացնենք վարկային ռեսուրսն ըստ առանձին ոլորտների: Ստացվում է այնպես, որ 2012թ. հունիս ամսվա դրությամբ Հայաստանում կա տրված 1.4 տրլն դրամի վարկ, որից ամենամեծ տեսակարար կշիռն ունեն արդյունաբերական վարկերը՝ մոտ 338 մլրդ դրամ, որին անմիջապես հետևում են առևտրի ոլորտի վարկերը՝ 327 մլրդ դրամ, իսկ վերջինիս հետևում են սպառողական վարկերը՝ 260 մլրդ դրամ: Այսինքն՝ ստացվում է, որ միայն առևտրի և սպառման ոլորտում կա տրված մոտ 588 մլրդ դրամի վարկ, որը ՀՀ տնտեսության վարկային պորտֆելի գերակշիռ մասն է կազմում: Այս վարկային ռեսուրսներն իրենց բնույթով միայն անուղղակի կարող են նպաստել արտադրության զարգացմանը, այսինքն՝ իրավիճակի բարդությունն այն է, որ վարկերն ուղղված են ոչ թե

<sup>1</sup> ՀՀ ֆինանսական համակարգին առնչվող տվյալները վերցված են ՀՀ ԿԲ կայքից: <http://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

տնտեսական գործունեության ֆինանսավորմանը, ավելացված արժեք ստեղծելուն, այլ սպառմանը, իսկ եթե հաշվի առնենք նաև խիստ բարձր տոկոսադրույքները, ապա պատկերն ամբողջական կդառնա այնքանով, որքանով որ այս վարկերը խիստ մեծ ռիսկայնություն ունեն իրենց մեջ: Իսկ օրինակ տնտեսության համար այնպիսի կարևորագույն ոլորտ, ինչպիսին գյուղատնտեսությունն է (ՀՆԱ-ի մեջ 20.3%-ով առաջին տեղում է), ընդամենը վարկավորման ծավալներով 6-րդ տեղում է՝ 93 մլրդ ցուցանիշով, որից մեկ քայլ առաջ է շինարարությունը՝ 103 մլրդ ցուցանիշով: Ստացվում է այնպես, որ ՀՀ բանկերն առավել մեծ պատրաստականություն են ցուցաբերում սպառողական վարկեր կամ առևտրային գործունեություն ֆինանսավորել, քան թե իրենց ռեսուրսներն ուղղել գյուղատնտեսության կամ շինարարության զարգացմանը: Այս ասպարեզում խիստ ուսանելի է Չինաստանի փորձը, որը ցանկալի ոլորտներում նվազեցնում է տոկոսադրույքները կամ պահուստավորման նորմաները և ֆինանսական ռեսուրսներն ուղղում այդ ոլորտ:

Հայաստանում տնտեսապես ակտիվ բնակչությունը 2010թ. կազմել է 1188 հազար մարդ, իսկ վերջին 2 տարում այդ թիվը դժվար թե շատ ավելացած լինի, և եթե այն համեմատում ենք մոտ 1.4 տրիլիոն դրամի հասնող վարկերի հետ, ապա նկատում ենք, որ մեկ աշխատողի հաշվով ունենք մոտ 1.2 մլն դրամի հասնող վարկ, իսկ միջին ամսական անվանական աշխատավարձը 2012թ. մայիսի դրությամբ կազմել է 114 հազար դրամ, այսինքն՝ յուրաքանչյուր աշխատող անձ Հայաստանում առնվազն տարեկան 20%-ով պետք է ավելացնի իր եկամուտները, կլինի դա աշխատավարձի, թե տարբեր տնտեսական գործունեություն ծավալելու տեսքով մարելու համար միայն վարկերի տոկոսները, որը գործնականում անհնար է: Վերջինս փաստում է, որ նման բարձր տոկոսադրույքները ՀՀ բանկային համակարգում տանելու են տնտեսության ճգնաժամի կամ ծանր սոցիալական իրավիճակում են հայտնվելու գործարարներն ու տնային տնտեսությունները:

Հայաստանում վարկերի տոկոսադրույքները շատ դեպքերում պայմանավորված են ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքներով, որոնք հիմա ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանվել են 8%, իսկ դրանցից առաջ ավելի բարձր էին և կազմում էին 8.5%, վերջիններս բավականին թանկ են դարձնում ՀՀ դրամը բանկերի համար, իսկ դա նշանակում է, որ ԿԲ-ն վարում է թանկ փողերի և գնողունակությունը չավելացնող քաղաքականություն:

Հայաստանի բանկային համակարգում ՀՀ դրամով ավանդների վերջին տարիների տոկոսադրույքները տատանվում են 10-11%-ի շրջանակներում, իսկ դա հանգեցնում է մի շարք ոլորտներում գործարար նախագծերի չիրականացմանը, այսինքն՝ մինչև 12-15% շահութաբերություն ապահովող ցանկացած գործունեություն նպատակահարմար է դադարեցնել և ավանդների տեսքով ստանալ եկամուտներ, իսկ դա նշանակում է՝ տնտեսության իրական հատվածը զրկվում է մի շարք լուրջ ծրագրերից և ներդրումներից, և դրանք ուղղվում են բանկային հատված, դրան ավելանում է մարժան և վարկերի ձևով կրկին մտնում տնտեսություն և հատկապես այն ոլորտները, որտեղ շահութաբերությունը բարձր է արդեն 20%-ից: Սա կարող է լուրջ խոչընդոտել տնտեսության զարգացումը, և իրական հատվածի փոխարեն կսկսի զարգանալ միայն բանկային և ֆինանսական հատվածը, ինչը և նկատելի է դառնում այն ցուցանիշից, որ ՀՀ բանկային համակարգի ակտիվները 2011թ. դրությամբ արդեն իսկ կազմում են ՀՆԱ-ի 54.1%-ը, իսկ դա ոչ թե բնականոն աճ է, այլ աճ՝ ապահովված իրական հատվածի հաշվին:

Աճի մյուս կաշկանդող գործոնի հիմքում ընկած է պետական պարտատոմսերի եկամտաբերության ցուցանիշը, որի աճի պարագայում տնտեսական ակտիվությունը նվազում է, այսպես մեկ տարվա պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը տատանվում է 9-11%-ի շրջանակներում, իսկ միջնաժամկետ պետական պարտատոմսերի միջին եկամտաբերությունը հասնում է 13-14%-ի, իսկ երկարաժամկետինը՝ 14-16%-ի, որն իսկապես տնտեսության

համար բացասական ազդեցություն ունի այն պարզ պատճառով, որ պետությունը բյուջեի պակասուրդի համար ստիպված է ներգրավել թանկ փողեր, և մյուս կողմից դա ևս կաշկանդում է գործարարությամբ զբաղվելու հնարավորությունները:

Այսպիսով, համաշխարհային տնտեսության մեջ կան մի շարք մարտահրավերներ, որոնք ունեն իրենց լուծումները, սակայն դրանց հասնելու ճանապարհին բավականին շատ են ֆինանսատնտեսական ճգնաժամերը: Աշխարհի զարգացման ընթացքը ստիպելու է մի շարք երկրների վերանայել իրենց ֆինանսական համակարգի զարգացման ուղղությունները, իսկ դա պետք է իրագործվի համատեղ և համագործակցության ճանապարհով, հակառակ դեպքում ֆինանսական համակարգերի զարգացման անհամաչափությունները ստիպելու են, որ աշխարհում տեղի ունենան ոչ համընթաց զարգացումներ: Հարկավոր է լինել ճկուն և կարողանալ գտնել ֆինանսական համակարգի և հասարակության համար սոցիալ-տնտեսական զարգացում ապահովող համաչափությունները:

**Вилен Хачатрян**

### **Вызовы мировой финансовой системы в контексте исламской финансовой системы и посткризисных развитий**

#### **Аннотация**

Таким образом, в мировой экономике существует ряд вызовов, они имеют свое решение, но на пути их реализации достаточно много финансово-экономических кризисов. Процесс мирового развития заставит ряд стран пересмотреть направления развития их финансовых систем, что должно быть осуществлено совместно и путем сотрудничества, в противном случае, несоразмерности развития финансовых систем приведут к тому, что в мире не произойдет параллельного развития. Необходимо обеспечить гибкость в вопросе гармонизации социально-экономического развития общества и финансовой системы.

**Vilen Khachatryan**

### **Challenges the Global Financial System Faces in the Context of Islamic Financial System and Post-Crisis Developments**

#### **Abstract**

The Global Financial System faces several challenges that could be resolved, however, many financial crises that occur repeatedly slow down and/or prevent that process. Global developments would force many nations to review growth patterns of own financial systems cooperatively; otherwise different stages of development of various systems would negatively affect each other. Policy makers need to design such a financial system that would ensure proportionate social and economic development.

**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ  
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**

Ընդհանուր առմամբ պետական ծախսերի տեսական հիմքերի ուսումնասիրությունը նախ և առաջ ենթադրում է դրա՝ որպես կարևոր տնտեսագիտական կատեգորիայի էության բացահայտում և վերլուծություն: Պետական ծախսերն, ըստ էության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սեփական գործառույթների իրականացման նպատակով կատարվող ծախսերն են: Լայն իմաստով դրանք որոշակի տնտեսական հարաբերություններ բնութագրող տնտեսագիտական կատոգորիաներ են: Նեղ իմաստով պետական ծախսերը որոշակի նպատակներով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օգտագործվող բյուջետային միջոցներն են:

Պետական ծախսերի՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի յուրահատկությունը պայմանավորված է տվյալ գործընթացում ծագող հարաբերությունների մասնակիցներից մեկի՝ պետության և նրա կողմից մատուցվող ծառայությունների առանձնահատուկ բնույթով: Այս առումով պետական ծախսերի տեսական հիմքերի պարզաբանումը նախ և առաջ ենթադրում է դրանց համակողմանի վերլուծություն: Ըստ էության պետական ֆինանսների տնտեսական բովանդակությունը ֆինանսական ռեսուրսների շարժի միջոցով ֆինանսական համապատասխան մեխանիզմների և գործիքների կիրառմամբ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտների ձևավորման և օգտագործման մեջ է: Այս տեսանկյունից պետական ծախսերը կարելի է սահմանել որպես ֆինանսական հարաբերությունների համակարգ, որոնք առաջանում են իշխանության մարմինների և իրավաբանական ու ֆիզիկական անձանց միջև սեփական գործառույթների իրականացման ֆինանսավորման գործընթացում: Այդ հարաբերությունների սուբյեկտների դերում հանդես են գալիս տարբեր մակարդակի իշխանության մարմինները, բյուջետային միջոցներ հատկացնողները և ստացողները, հանրային ծառայությունների արտադրության և բաշխման գործընթացում ներգրավված տնտեսավարող սուբյեկտները, ինչպես նաև այդ ծառայությունների սպառողները: Որպես օբյեկտ հանդես են գալիս հասարակական բարիքների արտադրության և տրամադրման նպատակով օգտագործվող բյուջետային համակարգում կենտրոնացված դրամական միջոցները:

Պետական ծախսերը ֆինանսաբյուջետային համակարգի կարևոր բաղկացուցիչներ են՝ կազմված միմյանց հետ փոխադարձ կապերի մեջ գտնվող և որոշակի ամբողջություն կազմող բազմաթիվ տարրերից: Այլ կերպ ասած, դա մի համակարգ է, որը կառուցված է հիերարխիկ սկզբունք: Դիտարկելով պետական ծախսերը որպես համակարգ՝ կարող ենք առանձնացնել դրան հատուկ հետևյալ բնութագրիչները:

1. Պետական ծախսերն ունեն ընդհանուր նպատակ և իրականացվում են պլանավորված կերպով: Պետական ծախսերի համակարգի գործունեության նպատակը համախառն ներքին արդյունքի բաշխման և վերաբաշխման միջոցով պետական իշխանության մարմինների կողմից հասարակական ծառայությունների արտադրության և տրամադրման գործընթացի ֆինանսական ապահովվածությունն է:
2. Պետական ծախսերի համակարգը կազմված է փոխկապակցված բաղադրիչներից, որոնք ձևավորում են որոշակի կառուցվածք: Որպես բաղադրիչներ հանդես են գալիս կոնկրետ ծախսերի տեսակները:
3. Պետական ծախսերը փոխկապակցված են արտաքին միջավայրի հետ, որը որոշակի երևույթների ամբողջություն է: Վերջինս ազդում է պետական ծախսերի վրա՝ միաժամանակ կրելով որոշակի փոփոխություններ:

Քննարկելով արտաքին միջավայրի ազդեցությունը պետական ծախսերի համակարգի վրա՝ կարելի է առանձնացնել 4 հիմնական սահմանափակումներ, որոնց միջոցով արտաքին միջավայրը ներգործում է պետական ծախսերի վրա:

- Ռեսուրսային սահմանափակումներ: Բյուջեի ծախսային մասը սահմանափակված է եկամտային մասով, որը համապատասխանաբար սահմանափակվում է համախառն ներքին արդյունքի ծավալներով և դրա որոշակի մասի գանձման հնարավորություններով:
- Տնտեսական սահմանափակումներ, որոնք կապված են շուկայական մեխանիզմի միջոցով ձևավորվող գների մակարդակի հետ: Իրականացնելով որոշակի ծախսեր հասարակական բարիքների արտադրության և տրամադրման նպատակով պետությունը շուկայական սեկտորից կատարում է գնումներ (ապրանքներ, ծառայություններ, աշխատանքներ և այլն), ինչի հետևանքով տնտեսությունում մեջ տեղի ունեցող գնային փոփոխություններն ազդում են պետական ծախսերի վրա:
- Իրավական սահմանափակումներ: Պետական ծախսերն իրականացվում են գործող իրավական ակտերի հիման վրա, որոնք էականորեն ներգործում են ծախսերի վրա՝ որոշակիորեն կողմնորոշելով դրանց շրջանակները:
- Քաղաքական սահմանափակումները կապված են տարբեր շահեր և հետաքրքրություններ ունեցող խմբերի գոյության և գործունեության հետ:

Պետական ծախսերի համակարգը՝ որպես բաց համակարգ, փոխհարաբերվում է արտաքին միջավայրի հետ փողի շարժի միջոցով: Բյուջետային հոսքերը իշխանության մարմինների կողմից տնտեսական ենթահամակարգերի վրա փոխներգործության միջոց են: Ընդ որում, մուտքը համակարգ իրականացվում է բյուջետային հատկացումների հաստատման, իսկ ելքը՝ ծախսերի ֆինանսավորման միջոցով:

Պետական ծախսերի իրականացման հետ կապված դրամական հոսքերը կարելի է տարանջատել մուտքայինի և ելքայինի, իսկ ըստ դրամական հոսքերի բաշխման հարցում իշխանության մարմնի ինքնուրույնության աստիճանի՝ ներքինի և արտաքինի: Մուտքային դրամական հոսքը օրենսդրորեն հաստատված բյուջետային հատկացումն է կոնկրետ գերատեսչությանը՝ որոշակի ծրագրի իրականացման համար: Հաստատված բյուջետային հատկացումը նշանակում է, որ կառավարման համապատասխան մարմնին վերապահված գործառույթներն ունեն ֆինանսական ապահովվածություն: Ելքային դրամական հոսքը իշխանության մարմինների կողմից ծախսերի ֆինանսավորմանն ուղղված միջոցներն են: Այլ կերպ ասած, մուտքային հոսքերը հաստատված, սակայն դեռևս չտրամադրված բյուջետային միջոցներն են, իսկ ելքային դրամական հոսքերն արդեն ֆինանսավորված ծախսերն են: Ներքին դրամական հոսքերն այն բյուջետային միջոցներն են, որոնք ինքնուրույնաբար բաշխվում են իշխանության համապատասխան մակարդակի կողմից՝ սեփական հայեցողությամբ: Արտաքին դրամական հոսքեր են այն միջոցները, որոնք տրամադրվում են այլ մակարդակի բյուջեից՝ կոնկրետ ծախսային ուղղությունների համար:

Ընդհանուր առմամբ պետական ծախսերի և բյուջեի էությունը որոշակիացվում է այդ կատեգորիաների ֆունկցիոնալ նշանակության միջոցով: Այս տեսանկյունից, պետական ֆինանսներն իրականացնում են երեք հիմնական գործառույթ.

1. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին եկամտային աղբյուրներով ապահովման գործառույթ՝ նրանց վերապահված ծախսային պարտավորությունների իրականացման համար,
2. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հասարակական բարիքների արտադրության և տրամադրման գործընթացի ֆինանսավորման գործառույթ,
3. վերահսկիչ գործառույթ:

Առաջին գործառույթը վերաբերում է բյուջեի եկամտային մասի ձևավորմանը, իսկ երկրորդը՝ ծախսային մասի օգտագործմանը: Վերահսկիչ գործառույթը բնորոշ է թե՛ եկամուտների ձևավորմանը, թե՛ ծախսերի իրականացմանը: Այսպիսով, կարող ենք նշել, որ պետական

ծախսերի գործառույթներն են հասարակական բարիքների արտադրության և տրամադրման գործընթացի ֆինանսավորումը և դրա նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Պետական ֆինանսական համակարգը կոչված է ապահովելու հասարակական բարիքների գծով գոյություն ունեցող պահանջումները՝ համապատասխան պետական ծառայություններ մատուցելու միջոցով: Դրանց համախառն արժեքը պայմանավորում է պետական եկամուտները և ծախսերը: Ակնհայտ է, որ վերջիններս անխզելիորեն կապված են միմյանց հետ: Առանց անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների առկայության պետությունը չի կարող ապահովել իրեն վերապահված գործառույթների պատշաճ իրականացումը: Միաժամանակ ծախսային կարիքների առկայությունն է պայմանավորում եկամուտների ձևավորման անհրաժեշտությունը: Պետական ֆինանսական համակարգը, ձևավորելով սեփական եկամուտներն ու դրանց հաշվին իրականացնելով անհրաժեշտ ծախսերը, ունի մեկ հիմնական նպատակ՝ արտադրել հասարակական բարիքներ և դրանք տրամադրել պետական ծառայությունների տեսքով, որոնց համախառն արժեքն էլ պայմանավորում է պետական ծախսերի մեծությունը:

Ինչպես արդեն նշեցինք, չնայած այն հանգամանքին, որ առանց եկամուտների հնարավոր չէ իրականացնել ծախսեր, այդուհանդերձ բյուջետային ծախսերն ունեն առաջնային նշանակություն: Բյուջետային ծախսերի միջոցով պետությունն իրականացնում է իր ֆունկցիոնալ պարտականությունները՝ ուղղված հասարակական պահանջումների բավարարմանը: Եթե բյուջետային եկամուտները պետական քաղաքականության իրականացման միջոց են, ապա ծախսերը՝ որպես արտադրված հասարակական բարիքների արժեքային գնահատական և պետական քաղաքականության հիմնական նպատակ:

Պետական ծախսերի տնտեսագիտական բովանդակությունը մանրամասն ուսումնասիրված է L. Կոսսի աշխատություններում, որը ծախսերը բնորոշում է որպես իշխանության իրավասու մարմինների կողմից պետության պահանջումների բավարարման հիմնական միջոց: Նրա կարծիքով տնտեսական արդյունքների տեսանկյունից պետական ծախսերը լինում են երկու տեսակ՝ արտադրողական և ոչ արտադրողական: Առաջիններն այն ծախսերն են, որոնք կամ ավելացնում են պետության գույքային հնարավորությունները, կամ ամրապնդում են մասնավոր սեկտորի տնտեսական հիմքերը: Ոչ արտադրողական ծախսերը նրանք են, որոնք չեն տալիս նշված արդյունքներից ոչ մեկը, սակայն նաև անօգուտ չեն<sup>1</sup>:

Բյուջետային ծախսերը խիստ բազմատեսակ են ըստ իրենց տնտեսական բովանդակության, աղբյուրի և ֆինանսավորման եղանակի, սակայն կազմում են մեկ ընդհանուր համակարգ: Քննարկելով պետական ծախսերի համակարգի խնդիրները՝ պետք է նկատի ունենալ մեկ կարևոր հանգամանք, որ դրանց գոյությունը պայմանավորված է հասարակական բարիքների նկատմամբ առկա պահանջումներով, և որոնց արտադրողը պետությունն է: Հայտնի է, որ պետական ծախսերն իրականացվում են պետական իշխանության մարմինների կողմից սեփական գործառույթների կատարման ընթացքում: Որպես կանոն, մի շարք հասարակական բարիքների արտադրության և տրամադրման գործում պետությունն ունի մենաշնորհ: Այս տեսանկյունից պետությունը տնտեսական գործընթացների կարևորագույն մասնակիցներից մեկն է, որը ներգործում է երկրի տնտեսական զարգացման վրա՝ հանդես գալով որպես արտադրող և ներդրումներ իրականացնող, ինչպես նաև եկամուտների բաշխման և վերաբաշխման գործընթացի մասնակից: Դրանով հանդերձ, պետությունն ուղղակի և անուղղակի ներգործության միջոցով ազդում է համախառն ներքին արդյունքի ստեղծման, բաշխման և սպառման վրա:

Հայտնի է, որ պետության առաջացման հիմնական պատճառներից մեկը հասարակության կողմից հանրային բարիքների նկատմամբ առկա պահանջարկն էր: Դրանք, ըստ էության, չեն կարող արտադրվել մասնավոր սեկտորի կողմից, կամ էլ հասարակության անդամները չեն կարող ձեռք բերել ուղղակի փոխանակության միջոցով: Հենց հասարակական բարիքների յուրահատկությունը պայմանավորեց պետության առաջացման անհրաժեշտությունը, որի գործունեությունը հիմնված է ոչ թե համարժեք փոխանակման, այլ հարկադրանքի մեխանիզմի վրա: Բնականաբար, պետության ձևավորման սկզբնական փուլերում վերջինիս վերապահված

<sup>1</sup> Косс Л. Основы финансовой науки. М.: 1990 г. стр. 20.

գործառույթների շրջանակը բավականաչափ նեղ էր և հիմնականում սահմանափակվում էր անվտանգության և կարգուկանոնի ապահովմամբ: Սակայն ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց մեծացավ նաև պետության դերը, ընդլայնվեց նրա կողմից իրականացվող գործառույթների շրջանակը, և պետությունն արդեն սկսեց հանդես գալ որպես տնտեսական գործընթացների կարևոր մասնակից: Տնտեսական ճգնաժամերի առաջացումը ի հայտ բերեց շուկայի անկատարությունը և հիմնավորեց կայունության ապահովման գործում պետության մասնակցության անհրաժեշտությունը: 20-րդ դարի 50-70-ական թվականներն աչքի ընկան հասարակական վերարտադրության գործընթացում պետության ազդեցության ուժեղացմամբ: Բարեկեցության տեսության<sup>1</sup> զարգացման դրսևորումներ էին անվճար կրթության և առողջապահության ծրագրերը, ինչը որոշ դեպքերում հանգեցրեց պետական ծախսերի ուռճացմանը, բյուջետային դեֆիցիտի ավելացմանը, կառավարման համակարգի ծախսերի մեծացմանը և, ընդհանուր առմամբ, պետական հատվածի արդյունավետության նվազմանը: Պետական պարտքի աճը, դրա սպասարկմանն ուղղվող ծախսերի ավելացումը և դրանցով պայմանավորված հարկային բեռի ավելացումը հասարակական բարիքների որակի նկատմամբ հասարակության ցածր բավարարվածության պայմաններում վկայությունն էին այն բանի, որ ճգնաժամային երևույթները հատուկ են ոչ միայն մասնավոր, այլ նաև պետական հատվածներին:

Ֆունկցիոնալ ֆինանսների տեսությանը, որի հիմնադիրները համարում էին, որ պետությունը, սեփական ֆունկցիաների իրականացման համար ծախսելով ռեսուրսները, չպետք է մտածի պետական պարտքի և բյուջետային դեֆիցիտի չափերի մասին, փոխարինելու եկավ հաշվեկշռված ֆինանսների տեսությունը, համաձայն որի պետական իշխանությունը պարտավոր է ապահովել բյուջեի հաշվեկշռվածությունը և թույլ չտա տնտեսությանը չափից շատ միջամտություն, քանի որ դա կարող է խախտել շուկայական հավասարակշռությունը և հանգեցնել պետական պարտքի անկառավարելի աճին<sup>2</sup>: Միաժամանակ, տարբեր մասնագետներ և վերլուծաբաններ հանդես էին գալիս պետական սեկտորի բաժնի և ընդհանրապես պետական ծախսերի կրճատման օգտին: Մասնավորապես, որոշ տեսակետների համաձայն, պետական ծախսերը չպետք է գերազանցեն ՅՆԱ-ի 25-26 տոկոսը<sup>3</sup>: Այս առումով, տեսաբանների կողմից առաջ քաշվող հիմնական հարցն այն է, թե պետությունն ինչ ծավալի միջոցներ կարող է վերցնել տնտեսությունից պետական ծախսերի իրականացման համար: Որպես կանոն, պետական միջամտության հիմնական բնութագրիչը համախառն ներքին արդյունքի նկատմամբ բյուջետային ծախսերի չափաբաժինն է տոկոսային արտահայտությամբ: Ջարգացած և զարգացող մի շարք երկրներում այն տատանվում է 37-58 տոկոսի սահմաններում: Նման լայն տիրույթը թույլ է տալիս պնդել, որ բյուջեի միջոցով վերաբաշխվող միջոցների բաժինը ուղղակի ներգործություն չունի երկրի տնտեսության զարգացման վրա:

Ընդհանրացնելով տնտեսական գործընթացներին պետության մասնակցության խնդիրը՝ կարելի է անել հետևյալ հետևությունները.

- պետության մասնակցությունն անհրաժեշտ է բնակչությանը հասարակական բարիքների տրամադրման համար,
- պետության ներկայությունը նպատակահարմար է այնտեղ, որտեղ առավել ցայտուն է դրսևորվում շուկայի անկատարությունը,
- պետությունը պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի այն հասարակական բարիքների տրամադրման վրա, որոնք կապված են հասարակության անդամների միջև եկամուտների վերաբաշխման հետ,

<sup>1</sup> Гэлбрейт Дж. Новое индустриальное общество. М.: 1969г. Гэлбрейт Дж. Экономические теории и цели общества. М.: 1976г. Хансен Э. Экономические циклы и национальный доход. М.: 1959г.

<sup>2</sup> Аткинсон Э., Стиглиц Д. Лекции по экономической теории государственного сектора М.: 1995г. Стиглиц Д. Экономика государственного сектора. М. 1997 г. Станковская И., Стрелец И. Экономическая теория для бизнес школ. М.: 2005.

<sup>3</sup> Илларионов А. Бремя государства. Вопросы экономики. 1996г. N 9.

- պետությունը կարող է իր վրա վերցնել գործունեության այն ոլորտները, որոնցում պետական տնտեսավարման առանձնահատկությունները դրականորեն են դրսևորվում ծառայությունների մատուցման գործընթացում:

Ըստ էության, հենց այդ գործոններով էլ պայմանավորված են պետական ծախսերի համակարգի անհրաժեշտությունը և դրա կառավարման առանձնահատկությունները: Այլ կերպ ասած, պետական ծախսերի ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնական թիրախ պետք է լինի հասարակական բարիքների նկատմամբ գոյություն ունեցող պահանջարկի բավարարումը:

**Геворг Киракосян**

## **Теоретические основы бюджетных расходов и определяющие их факторы**

### **Аннотация**

В статье обсуждаются теоретические основы расходов государственного бюджета и основные факторы, определяющие направления их формирования и осуществления. Рассмотрены те ограничения, которые существуют при планировании расходов государственного бюджета и представлены их основные проявления.

**Gevorg Kirakosyan**

## **Theoretical Principles of the State Budget Expenditure and Factors Determining Expenditure Directions**

### **Abstract**

The article discusses theoretical principles of the state budget expenditure, factors that determine expenditure directions and influence implementation. The article addresses the restrictions that exist in the planning of the state budget expenditure and presents main influence areas of these limitations.

### **ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրթեր գիտաշխատող*

## **ՀՀ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի սկիզբ առնելուց ի վեր աշխարհի գրեթե բոլոր երկրները, սկսած 2008թ. վերջից, սկսեցին նշակել և իրականացնել մի շարք հակաճգնաժամային միջոցառումներ: Այդ միջոցառումներն իրենց ընդգրկվածության շրջանակներով բազմազան էին և բաժանվում էին երկու խոշոր խմբերի՝ դրամական և ոչ դրամական բնույթի միջոցառումներ: Եվ ինչպես ցույց տվեց հետագա տարիների ընթացքը, դրանք շատ դեպքերում չկարողացան ծառայել իրենց նպատակներին, որն էլ ի հայտ բերեց մի շարք և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ սոցիալական հետևանքներ: Այդ իսկ պատճառով մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հանգամանքը, թե իրականացված հակաճգնաժամային միջոցառումներն իրենց բնույթով ինչքանով էին արդյունավետ, և դրանց իրագործումն ինչի հանգեցրեց: Այս համատեքստում կարևոր նշանակություն են ստանում մի շարք մոտեցումներ, այն է՝ այդ միջոցառումների համադրելիությունն առանձին երկրների միջև, միջոցառումների արդյունավետության գնահատման չափանիշները, ցուցանիշները, համաթվերը, ինչու չէ՞ նաև այն արդյունքային գնահատականները,



որոնք սուբյեկտիվ կերպով տրվում են հասարակության կողմից: Նշված հիմնահարցերը շատ մեծ կարևորություն և արդիականություն ունեն այն պարզ պատճառով, որ դրանից է նաև կախված տվյալ միջոցառումներն իրականացնող կառավարությունների վերընտրվելու կամ հասարակության կողմից հետագա սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացումն այս կամ այն պետական գործիչներին վստահելու հարցը:

Ինչպես ցույց է տալիս եվրոպական մի շարք երկրների փորձը, տնտեսական բարդ իրավիճակներում հակաճգնաժամային արդյունավետ քաղաքականություն չիրականացրած կառավարությունները ստիպված եղան ընտրություններում պարտություն կրել, և սա այն գնահատականն էր, որ հասարակությունը տվեց Հունաստանի, Իտալիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի պետական քաղաքականություն իրականացնող իշխանական ուժերին: Նույնը չենք կարող ասել ՀՀ-ի կամ Ռուսաստանի Դաշնության մասին, քանի որ այստեղ իշխանությունները փոփոխության չենթարկվեցին: Սակայն քաղաքական հարթությունից տնտեսական և կոնկրետ ցուցանիշներով գնահատականներ տալը շատ ավելի մեծ և կարևոր նշանակություն է ստանում այս պարագայում, այդ իսկ պատճառով փորձենք դիտարկել վերոնշյալ հիմնահարցերի տնտեսական շրջանակները:

Դիտարկելով հակաճգնաժամային միջոցառումները՝ նկատում ենք, որ ոչ բոլոր դեպքերում են դրանք լինում արդյունավետ: Եվ ամեն անգամ հանդիպելով Մեծ քսանյակի (G 20) երկրները, սկզբում Վաշինգտոնում (2008թ. նոյեմբեր), հետո Լոնդոնում (2009թ. ապրիլ), այնուհետև Փիթսբուրգում (2009թ. սեպտեմբեր), Տորոնտո (2010թ. հունիս), Սեուլ (2010թ. նոյեմբեր), Լոս Կաբոս, Մեքսիկա (2012 հունիս)<sup>1</sup> և այլն տալիս էին իրենց գնահատականները ճգնաժամի հաղթահարման համար իրականացված միջոցառումների վերաբերյալ, սակայն դրանք ոչ միշտ են գոհացուցիչ:

Շատ դեպքերում ոչ ճիշտ գնահատականներ են տրվում նաև ճգնաժամի վերաբերյալ առանձին երկրների կառավարությունների կողմից, քանի որ նշվում է, որ հակաճգնաժամային միջոցառումներն ապահովել են որոշակի արդյունքներ, սակայն թվային տվյալների և հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ուսումնասիրությունը խոսում է այլ բանի մասին: Սա շատ դեպքերում արվում է հասարակության մեջ բացասական զգացումներ չառաջացնելու համար, քանի որ մի շարք դեպքերում մենք նկատում ենք, թե Ֆիչ (Fitch<sup>2</sup>) և Մուդի (Moody's<sup>3</sup>) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրված գնահատականներն ինչպես կարող են մեկ հայտարարությամբ տապալել բորսայական համակարգի ինդեքսները: Իհարկե, այս կազմակերպությունների կողմից տրված վարկանիշները երբեմն համարվում են սուբյեկտիվ, և ենթադրվում է, որ դրանք, ունենալով ամերիկյան ծագում, ավելի խիստ գնահատականներ են տալիս եվրոպական երկրների ֆինանսական կազմակերպություններին: Այս խնդրի լուծման համար եվրոպան փորձում է ստեղծել նաև իր սեփական վարկանիշային կազմակերպությունները, սակայն դրանք չեն կարող միանգամից ունենալ այն հեղինակությունը, ինչ-որ տարիների ընթացքում կուտակել են վերոնշյալ երկու վարկանիշային հսկաները, և չնայած այն հանգամանքին, որ աշխարհում կան ավելի քան 70 վարկանիշային կազմակերպություններ, այնուամենայնիվ ֆինանսական աշխարհի համար այս երկու կազմակերպությունների գնահատականները խիստ մեծ կարևորություն և նշանակություն ունեն:

Համաաշխարհային տնտեսության վերաբերյալ համաթվերի միջոցով կան գնահատականներ տալու բազմաթիվ եղանակներ, որոնցով գնահատվում են ձեռնարկատիրությամբ զբաղվելու, մրցունակության, տնտեսական ազատության, զլրբալացվածության, երկրների կոռումպացվածության դիրքերը և այլն: Սակայն, որպես այդպիսին, այդ համաթվերից ոչ մեկը ճգնաժամի դեմ պայքարի արդյունավետության գնահատման գործում կիրառական նշանակություն ունենալ չի կարող: Այդ համաթվերի միջոցով տրված գնահատականներն ունեն անուղղակի բնույթ և կարող են արձանագրել այս կամ այն ոլորտում նկատված բարեփոխումները, սակայն այն փաստը, որ դա արվել է կոնկրետ հակաճգնաժամային միջոցառումների արդյունքում. ոչ մի համաթիվ չի արձանագրում:

<sup>1</sup> <http://www.g20.utoronto.ca/summits/index.html>

<sup>2</sup> <http://www.fitchratings.com>

<sup>3</sup> <http://www.moody.com/>

Բայց և այնպես 2008-2009թթ. ընթացքում ճգնաժամի գնահատման վերաբերյալ համաթվերի կամ ինդեքսների մշակման փորձեր արվել են: Այդպիսի փորձ է արվել միջազգային հետազոտական ցանցի WIN (Worldwide Independent Network) կողմից և մշակվել է «ճգնաժամի համաթիվ» (Crisis Index)<sup>1</sup>:

2009թ. WIN-ի կողմից սոցիոլոգիական հարցումներ են անցկացվել ավելի քան 14555 հարցվողներից աշխարհի 17 երկրներում, այդ թվում նաև՝ «Մեծ ութնյակի»՝ Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ և BRIC<sup>2</sup> երկրներում (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան և Չինաստան):

Հարցադրումների հիման վրա երկրները բաժանվել են երեք խմբի՝ պայմանավորված լավատեսության մակարդակով:

**Աղյուսակ 1**

**Երկրների դասակարգումն ըստ ճգնաժամի համաթիվ<sup>3</sup>**

<i>Ամենալավատեսներ</i>	<i>Չեզոքներ</i>	<i>Ամենաքիչ լավատեսներ</i>
Բրազիլիա	Ավստրալիա	Ֆրանսիա
Չինաստան	Կանադա	Գերմանիա
Հնդկաստան	Կորեա	Իսլանդիա
Նիդեռլանդներ	Իտալիա	Ճապոնիա
Շվեյցարիա	Ռուսաստան	Մեծ Բրիտանիա
ԱՄՆ	Իսպանիա	

Պետք է նշել, որ ցանկացած հարցման արդյունքներ ունեն սուբյեկտիվ բնույթ, սակայն այս դեպքում սուբյեկտիվիզմի մակարդակը բավականին բարձր է, որը պայմանավորված է արժեքային համակարգով, որը ձևավորվել է այս կամ այն երկրում:

Հետազոտությունից պարզ է դառնում, որ սկեպտիկ և վատատեսական մտածելակերպն արդյունաբերական զարգացած երկրներին բնորոշ է, որն էլ թույլ է տալիս անդրադառնալ այն հանգամանքին, որ ճգնաժամի վերաբերյալ լավատեսական վերաբերմունքը դեռևս չի խոսում տնտեսության իրական վիճակի մասին: Շատ դեպքերում նաև լավատեսության գործոնը պայմանավորված է եկամուտների մեծությամբ, օրինակ՝ արդյունաբերական զարգացած երկրներում կորստի մակարդակը շատ ավելի բարձր է, քանի որ մարդիկ կորցնում են իրենց եկամուտների հսկայական մասը, իսկ թույլ զարգացած կամ զարգացող երկրներում կորուստների ծավալի հարաբերական փոքրությամբ է պայմանավորված լավատեսությունը:

Այնուհանդերձ, յուրաքանչյուր սոցիոլոգիական հետազոտություն առավել օբյեկտիվ է, երբ դրան կից օգտագործվում է նաև մաթեմատիկական գործիքակազմ, որն էլ ավելի մեծ արժեք և թվային հիմնավորվածություն է հաղորդում հետազոտվող նյութին: Այդպիսի համաթվի օրինակ է ՓԵԿ<sup>4</sup> ռուսական կազմակերպության փորձագետների կողմից մշակված «Հակաճգնաժամային արդյունավետության համաթիվը»:

Այստեղ հարց է առաջանում. ի՞նչ նպատակ ունեն ճգնաժամային արդյունավետության համաթվի մշակումը և դրա հաշվարկումը, եթե կա մեկ այլ ցուցանիշ, ինչպիսին, օրինակ, ՀՆԱ-ն է կամ տնտեսական ակտիվության ցուցանիշը (SUS), որոնք նույն հաջողությամբ կարելի է օգտագործել տնտեսության վերաբերյալ գնահատական տալու համար: Բայց և այնպես գնահատական տալ տնտեսության վերաբերյալ ՀՆԱ-ի ծավալի կամ ՀՆԱ-ի աճի տեմպի միջոցով չենք կարող, քանի որ եթե այդ պարագայում փորձենք գնահատել ՀՀ կառավարության գործունեությունը, կստացվի այնպես, որ վերջին մի քանի տարիներին միջինը 10% տնտեսական աճ ունեցող երկիրը

<sup>1</sup> <http://www.winmr.com>, <http://www.legemarketing.com/documents/SPCLM/091142ENG.pdf>  
<sup>2</sup> BRIC- Brazil, Russia, India, China. Այժմ արդեն կիրառվում է BRICS տարբերակը, քանի որ այս շարքին ավելացել է նաև Հարավ-աֆրիկյան Հանրապետությունը: Այս տերմինի հեղինակն է համարվում հայտնի տնտեսագետ Ջիմ Օ'նիլը:  
<sup>3</sup> <http://www.legemarketing.com/documents/SPCLM/091142ENG.pdf>  
<sup>4</sup> [www.fb.k.ru](http://www.fb.k.ru)

ճգնաժամի պայմաններում հայտնվել է 0-ական աճի, դեռ ավելին՝ ամենախոր անկման կետում ունեցել է -18.4% ՀՆԱ-ի անկում, իսկ 2009թ. ամփոփել է -14.1% անկումով: Այսինքն՝ ստացվում է այնպես, որ նախատեսվող 9% տնտեսական աճը, որը ենթադրվում էր մինչ ճգնաժամն ընկած ժամանակաշրջանում, որ պետք է ունենար Հայաստանը, ի չիք է դարձել: Դեռ ավելին դրան էլ գումարվել է հսկայական անկում: Գնահատական տալով կարելի է ասել, որ պոտենցիալ (ներու-ժային) ՀՆԱ-ն կրճատվել է 1/4-1/3 անգամ:

Շատ դեպքերում կենտրոնանալ միայն տնտեսական նշանակություն ունեցող ցուցանիշների, հատկապես մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության միտումների վրա և դրանով փորձել բացահայտել հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետությունը, այնքան էլ ճիշտ չէ, քանի որ վերջնական արդյունքում դրանք պետք է ստանան իրենց սոցիալական արտահայտությունը և սոցիալական ոլորտին զարգացման պետք է տանեն, ինչպես օրինակ՝ իրական աշխատավարձերի բարձրացման, գործազրկության մակարդակի կրճատման կամ բնակչության դրամական եկամուտների քվանտիլային և դեցիլային բաշխվածության հարթեցման հարցերում և այլն: Վերոնշյալ ցուցանիշների և ՀՆԱ-ի միջև դինամիկ փոփոխությունները շատ դեպքերում կոռելյացված չեն, և փոխկապակցվածությունն էլ երբեմն բացակայում է: Այս ամենը խոսում է այն մասին, որ ճգնաժամի իրական ազդեցությունների և դրանց բացասական հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների արդյունքների պատկերացման համար անհրաժեշտ է ընդլայնել այն ցուցանիշների շրջանակը, որոնք անհրաժեշտ են սոցիալ-տնտեսական փոփոխությունների իրական դինամիկական պատկերացնելու համար:

Այստեղ մեկ այլ հարց է ի հայտ գալիս. եթե կարելի է տնտեսության և հատկապես հակաճգնաժամային միջոցառումների վերաբերյալ պատկերացում կազմել այդ ցուցանիշների միջոցով, ապա ինչո՞ւ չչարժվել այդ ճանապարհով: Այստեղ կա մեկ առանցքային պատասխան, այն է՝ ցուցանիշները շատ դեպքերում ունեն տարբեր ուղղվածություն, և մեկ ցուցանիշը բարելավվում է, իսկ մյուսը՝ ոչ, ապա այդ դեպքում գնահատական տալ տնտեսության վերաբերյալ բավականին բարդ է, քանի որ սուբյեկտիվ մոտեցման տարրը բավականին շատ է: Այս պարագայում ավելի բարդ իրավիճակի առաջ է կանգնում վերլուծություն իրականացնողը, երբ առաջանում է տարբեր երկրները համադրելու խնդիրը, քանի որ տարբեր ցուցանիշներով երկրների դիրքերը տարբեր են, որը և համադրական վերլուծություն ներկայացնելու կամ որևէ երկրի հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության գնահատման հնարավորություն չի տալիս:

Այստեղ, իհարկե, խնդիր է առաջանում մշակել այնպիսի համադրելի ցուցանիշ կամ համաթիվ, որը հնարավորություն կտա համադրելի դարձնելու երկրների ցուցանիշները, իսկ «Հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության համաթիվը» կարծեք թե հնարավորություն է տալիս լուծելու այդ խնդիրը:

Հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության ինտեգրալային համաթվի (*Anti-crisis effectiveness index*) կառուցման համար ռուս փորձագետներն առաջարկում են հաշվի առնել հիմնական տնտեսական և սոցիալական ցուցանիշները, որոնք կարող են օգտագործվել առանձին երկրների տնտեսությունների համեմատության համար: Եվ այդ ցուցանիշները պետք է ցույց տան հիմնական սոցիալական և տնտեսական գործընթացների փոփոխությունները, քանի որ ճգնաժամների ազդեցության շրջանակները տարածվում են գրեթե բոլոր ոլորտներում<sup>1</sup>: Այդ համատեքստում փոփոխվում են ոչ միայն գները, արտադրության և առևտրի ծավալները, այլ նաև փոփոխության է ենթարկվում տնտեսության սոցիալական բնույթը: Այդ իսկ պատճառով ճգնաժամի բնորոշման, ինչպես նաև տնտեսության վերականգնման համար հարկավոր է ուսումնասիրել կյանքի բոլոր ոլորտները, որտեղ կան օպերատիվ վիճակագրական տվյալներ: Այս հարցին եթե նայենք մաթեմատիկական տեսանկյունից, ապա բավականին մեծ թվով վիճակագրական տվյալներ ընդգրկելով՝ երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնորոշելիս կարող են առաջանալ դժվարություններ: Սակայն ժամանակակից ծրագրային ապահովվածության պայմաններում հաշվարկների խնդիրը հեշտությամբ լուծվում է, և ցուցանիշների միջև կոռելյացիոն կախվածությունները հեշտու-

<sup>1</sup> Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում, -եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 120-123:

թյամբ հաշվարկվում են, իսկ երբ գործակիցը մոտ է 0.75-ի կամ բարձր է դրանից, նշանակում է, որ դիտարկվող ցուցանիշների միջև առկա է հստակ կախվածություն: Շատ դեպքերում այս համաթվի հաշվարկման դժվարությունները կարող են պայմանավորված լինել մի շարք երկրների կամ ընդհանուր վիճակագրական կոմիտեների կողմից մշակված մեթոդաբանությունների ոչ համադրելիությամբ, այսինքն՝ համադրելի վիճակագրական տվյալների կիրառությունը հավաստի արդյունքներ և համադրելի ու համեմատելի ցուցանիշներ ստանալու գրավականն է: Այսպես, երբեմն տարբերություններ գոյություն ունեն ԱՄՆ-ի, Եվրոյի գոտու երկրների և ԱՊՀ վիճակագրական կոմիտեների կողմից հաշվարկվող ցուցանիշների միջև, օրինակ՝ երկրներ կան, որոնք կիրառում են ԱՀՀ (Ազգային հաշիվների համակարգ) 1993-ը, իսկ որոշ երկրներ՝ ԵՀՀ (Եվրոպական հաշիվների համակարգ) 1995-ը և այլն: Այս հանգամանքը շատ լուրջ ազդեցություն է թողել նաև վերոնշյալ ինդեքսի հաշվարկման մեջ որոշ ցուցանիշներ բացառելու, այսինքն՝ հաշվարկման մեթոդաբանությունների տարբերության պատճառով չընդգրկելու համար:

Արդյունքում համաթիվը կառուցվել է հետևյալ խումբ ցուցանիշների հիման վրա:

*Մակրոտնտեսական ցուցանիշներ.*

- ՀՆԱ-համախառն ներքին արդյունք,
- հիմնական կապիտալում ներդրումներ,
- միջազգային (ոսկու և արտարժույթի) պահուստներ:

*Տնտեսության իրական հատված.*

- արդյունաբերական արտադրանքի ծավալը,
- գյուղատնտեսական արտադրանքի ծավալը,
- մանրածախ առևտրի ծավալը,
- արտաքին առևտրաշրջանառություն,
- ներմուծում,
- արտահանում:

*Գների դինամիկան.*

- ՍԳԻ-սպառողական գների ինդեքս,
- արդյունաբերողների կամ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս,

*Սոցիալական ոլորտ.*

- գործազրկության մակարդակ,
- իրական աշխատավարձ:

*Ֆինանսական ոլորտ.*

- ֆոնդային ինդեքս (համաթիվ):

Հարկ ենք համարում նշել, որ **համաթվի հաշվարկման ժամանակ օգտագործվել են վերոնշյալ վիճակագրական ցուցանիշների տոկոսային փոփոխությունները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ համեմատած:** Ակնհայտ է նաև, որ ընտրված ցուցանիշների փոփոխությունը տարբեր մակարդակներով է բնորոշում ճգնաժամի դեմ պայքարելու հաջողվածության մակարդակը: Դրա համար անհրաժեշտ է դրանցից յուրաքանչյուրին տալ իր կշիռը: Դուրս բերվող հակաճգնաժամային արդյունավետության համադրելի ինդեքսն ընտրված ցուցանիշների գումարային փոփոխությունն է (փոփոխության գումարը)՝ վերցված համապատասխան կշիռներով:

$$I = \sum_{i=1}^n w_i \tilde{X}_i$$

որտեղ  $I$  -ն հակաճգնաժամային արդյունավետության համաթիվն է,

$\tilde{X}_i$  -ն  $i$  -րդ ցուցանիշի փոփոխությունն է՝ հաշվարկված համադրելի միավորներով,

$w_i$  -ն՝  $i$  -րդ ցուցանիշի կշռի փոփոխությունը, որով նա մտնում է համաթվի մեջ:

Այս համաթիվը հաշվարկվում է 2008թ. հուլիսի 1-ից, որը հնարավորություն է տվել բացահայտելու ֆինանսատնտեսական ճգնաժամի դեմ պայքարի միջոցառումների արդյունավետությունը՝ սկսած ճգնաժամի ծագման պահից, երբ տարբեր երկրներ գտնվում էին ճգնաժամի

ազդեցության տարբեր մակարդակներում: Սակայն հետագայում համաթվի հաշվարկներ ՓԵԿ<sup>1</sup> ռուսական կազմակերպության փորձագետների կողմից չեն արվել:

Աղյուսակ 2

**Հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության համաթվի փոփոխության միտումները 01.08.2008-01.07.2009 թթ.<sup>2</sup>**

	2008						2009					
	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Ռուսաստանի Ղազնություն	1.111	1.066	0.102	-0.443	0.032	-0.247	-0.600	-1.048	-0.258	-1.048	-0.891	-0.172
Ուկրաինա	0.840	0.794	1.712	-0.345	-1.252	-1.087	-1.083	-0.819	-1.269	-2.661	-1.739	-0.539
Ղազախստան	0.408	0.161	0.477	1.090	0.147	0.955	0.059	-0.696	0.199	0.248	-0.803	-0.046
Ֆրանսիա	-0.341	-0.434	-0.500	-0.146	0.109	-0.210	0.480	0.295	0.103	0.412	0.681	0.155
Կանադա	-0.358	-0.352	-0.491	-0.030	0.631	0.239	0.346	0.533	0.440	0.719	0.606	0.069
Գերմանիա	-0.457	-0.421	-0.473	-0.126	0.054	0.134	0.192	0.418	0.374	0.555	0.564	0.122
Մեծ Բրիտանիա	-0.458	-0.484	-0.504	-0.039	0.368	0.119	0.523	0.898	0.398	1.193	1.049	0.279
ԱՄՆ	-0.745	-0.331	-0.324	0.038	-0.088	0.097	0.084	0.398	0.012	0.581	0.533	0.133

Հետաքրքիրն այն է, որ ճգնաժամի ծագման ժամանակ, այսինքն՝ 2008թ. հուլիսին ամենալավ դիրքերում է եղել Ռուսաստանը, իսկ վերջին տեղում՝ ԱՄՆ-ը, որտեղից սկիզբ էր առել ճգնաժամը, ուղիղ մեկ տարի հետո՝ 2009թ. հուլիսին, Ռուսաստանը գտնվում էր դիտարկվող երկրների շարքում վերջից երկրորդ տեղում, իսկ ճգնաժամային արդյունավետության համաթվի աղյուսակը գլխավորում էր Մեծ Բրիտանիան: Ռուսաստանի տնտեսության համար անկունային ամենավատ կետերը եղել են 2009թ. փետրվար և ապրիլ ամիսները: Շատ դեպքերում կարելի է նաև սա կապել միջոցառումների իրականացման ժամանակային լազի հետ, հատկապես, եթե դրանք հարկաբյուջետային ոլորտում արվող փոփոխություններ են, քանի որ տեսականորեն հայտնի է և գործնականում էլ ապացուցված, որ իրականում դրամավարկային քաղաքականության ժամանակային լազն (խզում) ավելի կարճ է, քան հարկաբյուջետային քաղաքականության ժամանակային լազը: Դիտարկվող երկրների շարքում որպես տնտեսապես ամենակայուն երկիր կարելի է համարել Մեծ Բրիտանիան, որը մի շարք այլ համաթվերով և բարձր դիրքեր է գրավում և անգամ գերազանցել է ԱՄՆ-ին, օրինակ՝ ֆինանսական զարգացածության համաթվով այն ևս աշխարհում առաջինն է: Բավականին ծանր իրավիճակում է հայտնվել Ուկրաինան, որի դիրքերը խիստ թուլացել են, քանի որ տնտեսական անկայունությանը զուգարկվել են նաև զազային ճգնաժամը, քաղաքական անկայունությունը, և բավականին հոռետեսական կանխատեսումներ կային նաև ԱՄՆ-ի զեկույցում՝ -14% ՀՆԱ-ի անկում 2009-ին: Գերմանիայի, Կանադայի և Ֆրանսիայի տնտեսությունների համաթվերը ևս դրական են, սակայն այս երկրներում կարելի է ասել տնտեսական ճգնաժամի հարվածի առավել ուժգին մասը տնտեսությունն իր վրա զգացել է 2008թ. վերջին եռամսյակում: Կայուն տնտեսությունների թվին է պատկանում նաև Ղազախստանը, որի տնտեսական ցուցանիշները ԱՊՀ երկրների շարքում լավագույններից են, սակայն միջոցառումների արդյունավետությունը համաթվի միջոցով հստակ չի արտացոլում դրանց տատանողական բնույթը: Իհարկե, այսպես կարելի է շատ ավելի մանրամասն վերլուծել և՛ առանձին երկրների միջոցառումները, և՛ հակաճգնաժամային ծրագրերը՝ փորձելով նաև դրանց միջև անցկացնել համեմատության առանցքներ:

Հարկ ենք համարում նշել, որ համաշխարհային պրակտիկայում առաջին անգամ կիրառված այս համաթիվը, որը նպատակ ուներ համադրել առանձին երկրների կողմից իրականացվող հակա-

<sup>1</sup> www.fbk.ru

<sup>2</sup> [http://www.fbk.ru/library/research\\_library/list/11/10/](http://www.fbk.ru/library/research_library/list/11/10/)

ճգնաժամային միջոցառումների արդյունավետությունը, կարողացավ հասնել իր առջև դրված նպատակին՝ առանձին խնդիրների լուծման միջոցով: Սակայն այս համաթվի հնարավորություններն այսքանով չեն սահմանափակվում, քանի որ կարելի է օպերատիվ տվյալների ճիշտ և ժամանակին ստանալու պարագայում առավել արդյունավետ կատարել մեծաթիվ երկրների համադրություններ՝ պատկերացում կազմելու համար նրանց կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ:

Հայաստանի տնտեսության մեջ հակաճգնաժամային միջոցառումների այս համաթվի կիրառությունը և համադրությունը բավականին դժվար է, քանի որ ֆինանսական հատվածը, որի արտացոլումը տրվում է ֆոնդային բորսայի ինդեքսների միջոցով, ՀՀ տնտեսության իրական պատկերը չի արտացոլում, այդ իսկ պատճառով արդեն ընդհանուր տրամաբանությունից շեղվում ենք: Մյուս կողմից, ՀՀ տնտեսության մեջ պաշտոնական հրապարակվող գործազրկության մակարդակը շատ դեպքերում ունի վիճարկելի բնույթ և էական փոփոխությունների չի ենթարկվում, այսինքն՝ փորձել հակաճգնաժամային միջոցառումները կապել գործազրկության մակարդակի անկման հետ բավականին դժվար է: Այստեղ հարցերն ունեն առավել խորացված բնույթ, քանի որ իրական պատկերը կարող է տալ օրինակ ՀՀ բնակչության և զբաղվածության հարաբերակցության ցուցանիշը, այն էլ այն պարագայում, երբ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության հետ կապված հիմնահարցերը կարգավորվեն: Մյուս կարևորագույն խնդիրներից է նաև դառնում այս պարագայում ՀՀ-ում առկա բնակչության թիվը, որը մի շարք գնահատականներով հստակ չի արտացոլում միգրացիոն հոսքերի ցուցանիշը, այսինքն՝ գնահատական տալ զբաղվածության խնդիրների վերաբերյալ հակաճգնաժամային կառավարման միջոցառումների արդյունավետության տեսանկյունից բավականին բարդ է, քանի որ գոյություն ունեն հայեցակարգային հիմնախնդիրներ՝ առանց որոնց լուծման գնահատականներ տալը պարզապես իրատեսական չէ: Սոցիալական ոլորտի մյուս ցուցանիշը, որն ընդգրկված է համաթվում, իրական աշխատավարձի ցուցանիշն է, որը ՀՀ-ում ունի դինամիկ աճի միտում, չնայած ԱՊՀ երկրների շարքում ցածր աշխատավարձերի շարքում ընդգրկված երկրների թվին է դասվում Հայաստանը: Սակայն խնդիրն այն է, որ ՀՀ-ում իրական աշխատավարձերի աճի և արտադրողականության կամ ավելացված արժեքի ստեղծման միջև կոռելացվածությունը բացակայում է, այսինքն՝ եթե անգամ աշխատավարձերը բարձրանում են, դրանց հիմքում ստեղծված արդյունքը չէ, այլ պարզապես անվանական աճը, որը կրկին տնտեսական զարգացման շահերից չի բխում:

ՀՀ տնտեսության մեջ ուսումնասիրելով ՀՆԱ-ի անկման տեմպերը ճգնաժամային և հետճգնաժամային զարգացումների համատեքստում՝ կարող ենք փաստել, որ ամենամեծ ՀՆԱ-ի անկում ունեցած երկրների հնգյակում հայտնված երկրի հակաճգնաժամային միջոցառումները պարզապես անհնար է դրական գնահատել, քանի որ աշխարհի 210-ից ավելի երկրների համեմատությունն արդեն իսկ բավարար պայման է: Ինչ վերաբերում է հիմնական կապիտալ ներդրումներին, դրանք բավականին մեծ անկում են արձանագրել ճգնաժամային 2009թ., որը ևս խոսում է տնտեսության նկատմամբ անվտանգության մասին: ՀՀ միջազգային (ոսկու և արտարժույթի) պահուստները, որոնք գտնվում են ՀՀ ԿԲ-ի տնօրինության տակ, 2009թ. ավելացել են, սակայն հետաքրքիրն այն է, որ դրանք 2008թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում, ինչպես նաև 2009թ. մինչև մարտ ընկած ժամանակահատվածը կտրուկ կերպով նվազել են, քանի որ ՀՀ ԿԲ-ն, փորձելով թույլ չտալ դրամի արժեզրկում, անընդհատ տնտեսության մեջ կատարել է դոլարային ինտերվենցիաներ՝ դրանով իսկ նվազեցնելով դոլարային պահուստները (ինչ վերաբերում է ոսկով պահուստներին, ապա դրանք ՀՀ ԿԲ-ի կողմից վաճառվել են, և Հայաստանը ոսկով պահուստներ չունի): Հետագայում ներգրավելով մոտ 1.5 մլրդ դոլարի հասնող պետական արտաքին պարտքեր, դրանք տեղաբաշխվել են նաև ՀՀ ԿԲ-ի պահուստներում, և դրանք 2009թ. հասցվել են մոտ 2 մլրդ դոլարի, որը կարելի է համարել որոշակի անվտանգության բարձիկ ՀՀ տնտեսության համար, սակայն վարկային ռեսուրսներով ապահովել պահուստների աճ և համարել, որ տնտեսությունը գտնվում է կայուն վիճակում, այնքան էլ ճիշտ չէ: Այն հանգամանքը, որ ՀՀ ԿԲ-ի կողմից բավականին երկար ժամանակ վարվել է կարգավորվող արժույթային կոշտ քաղաքականություն, բավականին մեծ վնասներ է հասցրել ՀՀ տնտեսությանը, այստեղ դրական միտումն այն է, որ դրանով իսկ կատարվել է ՀՀ ԿԲ-ի հիմնական գործառույթը՝ գների ցածր մակարդակի պահպանումը, որը տեղի է ունեցել տնտեսական աճ

ապահովող խթանող քաղաքականության բացակայության և մյուս կողմից բնակչության և ստացվող տրանսֆերտների ցածր գնողունակությունն ապահովելու միջոցով: Իսկ եթե հաշվի առնենք, որ համաշխարհային տնտեսության մեջ 2009թ. տեղի ունեցող երևույթները տարան նրան, որ տեղի ունեցավ հիմնական հումքային մետաղների գների անկում, ապա այս համատեքստում ամբողջ աշխարհում ինֆլյացիոն ռիսկերը գտնվում էին ցածր մակարդակի վրա, իսկ այդ գործոնը չօգտագործվեց ՀՀ տնտեսության մեջ անկման տեմպերը կանխելու համար, այսինքն՝ այստեղ ևս ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականությունն արդյունավետ համարել չի կարելի:

Ինչ վերաբերում է տնտեսության առանձին ճյուղերի վերաբերյալ հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետությանն առնչվող գնահատականներ տալուն, ապա 10-40% անկում գրանցած ոլորտներում պարզապես պետք է արձանագրել, որ գոյություն չի ունեցել ներուժ՝ ճգնաժամին դիմակայելու համար: Հատկապես շինարարությունում, արդյունաբերությունում և այլն: Ներմուծման, արտահանման, մի խոսքով՝ արտաքին առևտրաշրջանառության ծավալների կրճատման տեմպերը ևս աննախադեպ էին: Այսինքն՝ ՀՀ տնտեսությունն ունեցել է պարզապես սպեկուլյատիվ գործունեության վրա հիմնված ուղղվածություն, իսկ ճգնաժամն այս պարագայում ամենամեծ ազդեցությունը կարող է ունենալ այդ տարրերի վրա, այն, որ նյութական արդյունքներ ստեղծելը, արտաքին շուկաներում մասնաբաժին ունենալը ճգնաժամերին դիմակայելու առավել մեծ հնարավորություններ են ընձեռում, դրանք ՀՀ տնտեսության համար պարզապես բացակայում էին:

Իհարկե, ՀՀ տնտեսության գնահատականը կարելի է տալ նաև կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների տեսանկյունից, ինչպես նաև առանձին-առանձին քննարկել ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ցանկն ըստ 16 հիմնական կետերի, սակայն պետք է նշել, որ այդ միջոցառումների մեծ մասն ուներ երկարաժամկետ ժամանակահատվածում իրագործելու գաղափարական հենք, որն էլ հարցերը տեղափոխում է ոչ թե հակաճգնաժամային միջոցառումների դաշտ, այլ երկարաժամկետ և հետճգնաժամային զարգացումների հարթություն:

**Анна Арутюнян**

## **Проблемы оценки эффективности антикризисных мероприятий РА**

### **Аннотация**

С наступлением мирового экономического кризиса все страны мира, начиная с конца 2008 года, приступили к разработке и реализации ряда антикризисных мероприятий. Эти мероприятия по степени охвата отличались многообразием и подразделялись на две большие группы: мероприятия финансового и нефинансового характера. Однако, как показал дальнейший ход развития, они во многих случаях не послужили своим целям, что и привело к ряду политических, экономических и социальных последствий.

**Anna Harutyunyan**

## **Issues on Assessment of Efficiency of Anti-Crisis Programs and Measures in Armenia**

### **Abstract**

After the beginning of the Global Financial Crisis nearly all countries of the world, since the end of 2008, have stated designing and implementing several anti-crisis programs and measures. The programs were very diverse and were divided into 2 broad groups: monetary and non-monetary. However, many of them couldn't meet the objectives they were designed to in the years to come, thus causing political, economic and social consequences.

**ՍԱԿՐՈՏՆԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՐԿՐԻ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՎՐԱ**

Առանձնահատուկ ուշադրության է արժանի վճարային հաշվեկշռի վրա մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցության վերլուծությունը: Այն վկայում է, որ գործնականում բոլոր ֆինանսական ցուցանիշները որոշակիորեն ազդում են երկրի վճարային հաշվեկշռի վրա: Դրանց մանրամասն և տարողունակ վերլուծության փոխարեն դիտարկենք միայն առավել հաճախ օգտագործվող հիմնական այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ ազգային եկամուտը, տոկոսադրույքների մակարդակը, դրամի էմիսիայի մեծությունն ու ծավալները: Դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը կախված է կոնկրետ իրավիճակից և կարող է գնահատվել ոչ միանշանակ:

Զարտադրված, ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերում (դեբետ) կամ տրամադրում (կրեդիտ) հողվածն առնչվում է արտոնագրերի, հեղինակային իրավունքների, լիցենզիաների գնման հետ: Այստեղ անհրաժեշտ է տարբերել այդ ակտիվների օգտագործման իրավունքի գնումը դրանց նկատմամբ սեփականության իրավունքի գնումից: Օգտագործման իրավունքի դիմաց կատարված վճարները գրանցվում են ծառայություններ հաշվի «արտոնագրային վճարներ և հեղինակային հոնորարներ» ենթահոդվածում, և միայն սեփականության իրավունքի գնման դեպքում՝ կապիտալի հաշվում: Ֆինանսական հաշիվն ընդգրկում է արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սեփականության իրավունքի փոփոխման հետ կապված գործարքները: Ֆինանսական ակտիվների հետ գործարքները ներառում են իրական ռեսուրսի փոխանակում /ֆինանսականով – գործարքի մի կողմը գրանցվում է ընթացիկ հաշվում, մյուսը՝ ֆինանսական հաշվում/, չարտադրված, ոչ ֆինանսական ակտիվի փոխանակում ֆինանսականով /գործարքի մի կողմը գրանցվում է կապիտալի հաշվում, մյուսը՝ ֆինանսական հաշվում/, ֆինանսական ակտիվի փոխանակում ֆինանսականով /գործարքի երկու կողմն էլ գրանցվում են ֆինանսական հաշվում/, ֆինանսական ակտիվի փոխանցում առանց փոխհատուցման /գործարքի մի կողմը գրանցվում է կա՛մ ընթացիկ, կա՛մ կապիտալ տրանսֆերտներում, իսկ մյուսը՝ ֆինանսական հաշվում/, ֆինանսական հաշվում գործարքները դասակարգվում են ըստ ֆունկցիոնալ կատեգորիաների՝ (ա) ուղղակի ներդրումներ, (բ) պորտֆելային ներդրումներ, (գ) այլ ներդրումներ և (դ) ռեզերվային ակտիվներ:

Ուղղակի ներդրումային կապիտալի բաղադրիչներն են բաժնետիրական կապիտալը, վերաներդրված շահույթը և միջֆիրմային պարտքը: Վերաներդրված եկամուտը ձեռնարկության չբաշխված շահույթում ուղղակի ներդրողի բաժինն է: Միջֆիրմային պարտքը ուղղակի ներդրողի և ուղղակի ներդրման ձեռնարկության միջև միջոցների տրամադրումն է ու ստացումը:

Պորտֆելային ներդրումները ներառում են ինչպես կապիտալի մասնակցության գործիքներ՝ բաժնետոմս, այնպես էլ պարտքի հանձնառության գործիքներ՝ պարտատոմսեր, փողի շուկայի գործիքներ, ֆինանսական ածանցյալներ: Պորտֆելային ներդրումներում ներառվող գործիքների առանձնահատկությունը դրանց՝ կազմակերպված շուկաներում (բորսաներում) առք ու վաճառքի օբյեկտ հանդիսանալն է, ինչը ներդրողին հնարավորություն է տալիս կապիտալը մի գործիքից փոխանցելու մեկ այլ գործիքի՝ անկախ դրանց ժամկետի հասունացման հանգամանքից: Այլ ներդրումները գլխավորապես ներառում են վարկերը, այդ թվում՝ առևտրային վարկերը և կանխիկ դրամական միջոցներն ու ավանդները: Պահուստային ակտիվները բաղկացած են այն արտաքին ակտիվներից, որոնք անմիջականորեն գտնվում են մոնետար իշխանությունների վերահսկողության ներքո և կարող են օգտագործվել վճարումների պակա-



սորըը ֆինանսավորելու համար կամ ազգային արժույթի փոխարժեքը կարգավորելու նպատակով արտարժույթի շուկայում ներխուժումներ կատարելու համար կամ համանման այլ նպատակներով: Պահուստային ակտիվները ներառում են մոնետար ոսկին, փոխառության հատուկ իրավունքները (SDR), Արժույթի միջազգային հիմնադրամում պահուստային դիրքը, արտարժույթային ակտիվները (արտարժույթ, պետական արժեթղթեր):

Վճարային հաշվեկշռի կարգավորման հարցում կարևոր դեր ունեն նաև փողի շուկայի գործիքները: Փողի շուկան պարտքի գործիքների կարճաժամկետ (նվազ, քան մեկ տարին) շուկան է: Պարտքի գործիքներ են բանկային ակցեպտը, առևտրային թղթերը, ավանդային վկայագրերը, գանձապետական մուրհակները: Բանկային ակցեպտը բանկի կողմից տրված երաշխիք է՝ վճարելու գումարը: Երբ արտահանման դիմաց ներմուծողը վճարելու է ոչ թե նախապես, այլ որոշ ժամանակ անց, ապա արտահանողը կարող է պահանջել, որ ներմուծողի պարտամուրհակը ակցեպտվի բանկի կողմից: Այդ դեպքում, եթե ներմուծողը հրաժարվի վճարելուց, ապա նրա փոխարեն կվճարի բանկը: Առևտրային թղթերը կարճաժամկետ պարտատոմսեր են, որ թողարկվում են ընկերությունների, բանկերի և այլ հաստատությունների կողմից՝ վարկավորման ընթացիկ կարիքները բավարարելու նպատակով: Ավանդային վկայագիրը բանկի կողմից թողարկված պարտավորություն է, որը վկայում է ավանդի առկայությունը և խոստումը՝ սահմանված ժամկետը լրանալուց հետո վերադարձնել ավանդը և վճարել տոկոսները: Ավանդային վկայագրերը կարող են շրջանառվել երկրորդային շուկայում: Գանձապետական մուրհակը կառավարության կողմից թողարկված կարճաժամկետ, տոկոս չբերող պարտատոմս է: Այն վաճառվում է զեղչով՝ հաշվի առնելով ընթացիկ տոկոսադրույքը, և մարվում է անվանական արժեքով: Ֆինանսական ածանցյալն արժեթուղթ է, որի արժեքը որոշվում է նրա հիմքում ընկած ակտիվի փաստացի կամ ակնկալվող արժեքով: Այդպիսի ակտիվներ կարող են լինել ապրանքը, արժեթուղթը կամ արժույթը: Ֆինանսական ածանցյալներ են ֆյուչերսը, օպցիոնը և սվոփը: Իսկ առևտրային վարկը վաճառողից գնորդին տրամադրվող վարկն է, երբ առաքված ապրանքների դիմաց գնորդը վճարում է ոչ թե անմիջապես, այլ որոշ ժամանակ անց: Սպառողական ապրանքների դեպքում վճարումը կարող է տեղի ունենալ մի քանի շաբաթ կամ ամիս անց, իսկ կապիտալ ապրանքների դեպքում, երբեմն, մի քանի տարի անց:

Չնայած փաստացի անհավասարակշռություններին, երկրի վճարային հաշվեկշիռը միշտ հավասարակշռված է: Ընդհանրապես վճարային հաշվեկշռի ավելցուկ/պակասորդ հասկացությունը հիմնվում է այն մոտեցման վրա, թե հաշիվները կարելի է տարանջատել ինքնուրույն (այլ կերպ՝ գծից վեր) և ոչ ինքնուրույն (գծից վար) հաշիվների: Այդ մոտեցման համաձայն՝ հաշիվները համարվում են ինքնուրույն, եթե նրանցում ներառվող գործարքներն իրականացվում են՝ անկախ վճարային հաշվեկշռի այլ հաշիվներից: Իսկ ոչ ինքնուրույն են այն հաշիվները, որոնցում ներառվող գործարքները կատարվում են ինքնուրույն հաշիվների ստացումների և վճարումների ավելցուկը կամ պակասորդը ֆինանսավորելու համար: Արդյունքում ընդունված է սահմանել, որ վճարային հաշվեկշիռը ավելցուկով է, երբ ինքնուրույն ստացումները գերազանցում են ինքնուրույն վճարումները, և պակասորդով է, երբ ինքնուրույն ստացումները փոքր են ինքնուրույն վճարումներից: Իսկ քանի պաշտոնական պահուստները, որ տնօրինվում են կենտրոնական բանկի կողմից, կարող են օգտագործվել վճարումների անհավասարակշռությունը կամ ազգային արժույթի փոխարժեքի տատանումը մեղմելու նպատակով, ապա պաշտոնական պահուստներն ընդունված է համարել ոչ ինքնուրույն հաշիվ:

Հարկ է նշել, որ վերը նշված չափորոշիչներն ու սկզբունքները կիրառվում են ոչ միայն Հայաստանի, այլև Արցախի վճարային հաշվեկշիռները ձևավորելու և դրանք կարգավորելու գործընթացներում: Արցախի պետական վիճակագրական աշխատանքների՝ 2012թ. ծրագրի շրջանակում Արցախի ազգային վիճակագրական ծառայության կողմից պարբերաբար հրապարակվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վճարային հաշվեկշիռը» վիճակագրական ժողովածուներում ներկայացվում են տվյալ տարվա և նախորդ տարիների վճարային հաշվեկշիռների հոդվածների փոփոխությունները: Ինչպես և մյուս երկրներում, Արցախի

վճարային հաշվեկշիռը վիճակագրական հաշվետվություն է, որում համակարգված տեսքով արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանում պետության արտաքին տնտեսական գործառնություններն այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ: Վճարային հաշվեկշիռն արտահայտում է երկրի հաշվեկշռվածության վիճակը, որն իր հերթին ազդում է ներքին հաշվեկշռվածության և տնտեսության կայունության վրա: ԼՂՀ վճարային հաշվեկշռի կազմման համար հիմք են հանդիսանում ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայությունից ստացված ապրանքների ներմուծման և արտահանման, տնտեսավարող սուբյեկտներից, բանկային համակարգից և այլ պետական մարմիններից ստացված տվյալները, կիրառվել են Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված մեթոդաբանական սկզբունքները: Այսպես օրինակ՝ 2011թ. ԼՂՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 59927.5 մլն դրամ, որը 2010թ. համեմատ աճել է 28.1 տոկոսով<sup>1</sup>: Ընթացիկ հաշվի պակասուրդի աճը նախորդ տարվա համեմատ հիմնականում պայմանավորված է ապրանքների և ծառայությունների գծով հաշվեկշռի պակասուրդի աճով: Ապրանքների գծով բացասական հաշվեկշիռը 2011թ. 2010թ. համեմատ աճել է 16.3 տոկոսով, ինչը ապրանքների արտահանման ծավալի 6.4 տոկոս աճի պարագայում (1791.0 մլն դրամ) ներմուծման ծավալի 13.5 տոկոս (13368.7 մլն դրամ) աճի հետևանք է: Ծառայությունների գծով հաշվեկշիռը կազմել է -7796.9 մլն դրամ, որը հիմնականում տրանսպորտային ծառայությունների և ճանապարհորդության գծով բացասական հաշվեկշիռների ու շինարարական ծառայությունների գծով դրական հաշվեկշռի ազդեցության արդյունք է: Եկամուտների հաշվեկշիռը կազմել է -2550.0 մլն դրամ, իսկ ընթացիկ տրանսֆերտների հաշվեկշիռը՝ 32975.2 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 17.4 տոկոսով:

Կապիտալի հաշվի հաշվեկշիռը 2011թ. կազմել է 8935.3 մլն դրամ և 2010թ. համեմատ աճել է 50.6 տոկոսով: Կապիտալի հաշիվը գոյացել է միայն կապիտալ տրանսֆերտներից: Պետական կառավարման հատվածի կապիտալ տրանսֆերտները 2011թ. կազմել են 6787.0 մլն դրամ կամ ընդհանուր տրանսֆերտների 76.0 տոկոսը (2010թ. համեմատ աճել է 58.1 տոկոսով):

Մասնավոր հատվածի կապիտալ տրանսֆերտների գումարը 2011թ. կազմել է 2148.4 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ աճել է 31.1 տոկոսով: Ֆինանսական հաշվի դրական հաշվեկշիռը 2011թ. կազմել է 50661.0 մլն դրամ: Օտարերկրյա ուղղակի ներդրումները մեկ շնչի հաշվով 2011թ. կազմել են 39363.1 դրամ՝ 2010թ. 47017.4 դրամի փոխարեն, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են համապատասխանաբար՝ 4.2 տոկոս և 5.7 տոկոս:

**Давид Арутюнян**

## **Воздействие макроэкономических показателей на платежный баланс страны**

### **Аннотация**

Состояние баланса платежей страны сильно зависит от эффективного использования традиционных и новых подходов к вопросам макроэкономического регулирования. Одним из уроков глобального финансового кризиса считается необходимость преобразования классических подходов и методов финансового регулирования типичных для либеральных экономик. Более того, каждая страна создает свои собственные модели экономического развития и использует эффективные элементы макроэкономического регулирования для гармонизации государственного вмешательства. В эпоху экономической глобализации, углубления и расширения международных финансовых отношений, Армении необходимо решить вопросы экономической стабилизации и внедрения эффективных методов и моделей регулирования баланса платежей страны.

<sup>1</sup> [http://www.stat-nkr.am/index.php?option=com\\_content&view=article&id=224%3A---2011&catid=37%3A2011-01-11-10-56-37&Itemid=10&lang=hy](http://www.stat-nkr.am/index.php?option=com_content&view=article&id=224%3A---2011&catid=37%3A2011-01-11-10-56-37&Itemid=10&lang=hy)

## The Impact of Macroeconomic Indicators on the Balance of Payments of the Country

### Abstract

The state of country's balance of payments strongly depends on efficient use of traditional and new approaches to the issues macroeconomic regulation. One of the lessons of global financial crisis is considered to be the need to transform classic approaches and methods of financial regulation typical for liberal economies. It becomes obvious that in global economy no more pure liberal economic models may be used. Each country will try to create its' own model of economic development by using and harmonizing competitive, liberal and based on government intervention efficient elements of macroeconomic regulation. During the era of economic globalization, deepening and expanding the international financial relations, Armenia need to solve the issues of economic stabilization and implementation of efficient methods and models of regulating country's balance of payments.

### ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ.

### ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԼԾԱԿՆԵՐԸ

Արտաքին առևտրի զարգացման արդի խնդիրներից է այնպիսի արդյունավետ առևտրային քաղաքականության իրականացումը, որը հարկերի, լրավճարների և առևտրային արգելքների տարբեր ձևերի միջոցով ազդում է ներմուծման կամ արտահանման ծավալների վրա: Արտաքին առևտրի պետական կարգավորման հիմնական լծակներն են արտաքին առևտրի սակագնային և ոչ սակագնային կարգավորումները:

Արտաքին առևտրի պետական կարգավորման հիմնական դասական լծակները մաքսային սակագներն են: Մաքսային սակագինը մաքսատուրքերի համակարգված դրույքացանկն է: Մաքսատուրքն ապրանքների ներմուծման կամ արտահանման համար սահմանվող մաքսային վճարն է, որը վճարվում է պետության մաքսային սահմանի վրա: Ներմուծվող ապրանքների համար պետության կողմից սահմանվող մաքսային սակագները բարձրացնում են այդ ապրանքների գները: Ներմուծողը, վճարելով մաքսատուրքը, ապրանքն իրացնում է տվյալ ապրանքի դիմաց վճարած միջազգային գնի և սակագնի գումարի չափով, այսինքն՝ տվյալ ապրանքի համար ներքին գինը ձևավորվում է հետևյալ ձևով.

**Երկրի ներքին գին = համաշխարհային գին x (1+ սակագնային դրույքաչափ):**

Մաքսային սակագների սահմանումից շահում են և՛ տեղական արտադրողները, որոնք իրենց ապրանքների գները նույնպես բարձրացնում են, և՛ պետությունը, որը ստանում է լրացուցիչ եկամուտներ: Սակայն այդ սակագների սահմանումից սպառողները կորցնում են ավելի շատ, քան շահում են ներքին արտադրողները, և պետությունը, այսինքն՝ ընդհանուր առմամբ հասարակությունը կորուստներ է կրում կատարված ավելորդ ծախսերի չափով: Այնուհանդերձ, ներմուծման մաքսային սակագինը ոչ միայն նպաստում է պետության եկամուտների ավելացմանը, այլև պաշտպանում է տեղական արտադրությունը օտարերկրյա մրցակցությունից: Այդ է պատճառը, որ սակագները որոշ ժամանակահատվածում կտրուկ ավելանում են, հետագայում՝ նվազում:

Սովորաբար բոլոր երկրները սակագների բարձրացման քաղաքականություն իրականացնում են ճգնաժամային իրավիճակներում: Այդ քաղաքականությունը նպաստում է հայրենական արտադրանքի իրացմանը: Սակայն դա գործում է միայն կարճ ժամանակահատվածում, քանի որ մյուս երկրները, որպես պատասխան քայլ, նույնպես կոփմեն այդ քաղաքականությանը, որի արդյունքում միջազգային առևտրում կառաջանան զգալի խոչընդոտներ, կվերանա արտաքին մրցակցության բարերար ազդեցությունը տնտեսության զարգացման վրա, և արդյունքում բոլոր երկրների տնտեսական աճի տեմպերը կկրճատվեն:

Մաքսատուրքերը դասակարգվում են հետևյալ չափանիշներով՝ ըստ ապրանքների շրջանառության ուղղվածության, ըստ դրույքաչափերի, ըստ ազդեցության աստիճանի և ըստ տնտեսական բնույթի:

Ըստ ապրանքների շրջանառության ուղղվածության՝ տարբերում են *ներմուծվող, արտահանվող և տարանցիկ ապրանքներից զանձվող մաքսատուրքեր*: Ներմուծման վրա սահմանվող տուրքերն ավելի կիրառական են, որոնց միջոցով նախ պաշտպանվում են հայրենական արտադրողների շահերը, և երկրորդ՝ ավելանում են բյուջեի եկամուտները: Արտահանման վրա սահմանվող տուրքերը խոչընդոտում են հայրենական արտադրանքի մուտքն արտասահմանյան շուկաներ և հիմնականում կիրառվում են, երբ տվյալ երկրում նկատվում է այս կամ այն արտադրանքի պակասուրդ:

Տարանցիկ տուրքը համեմատաբար քիչ կիրառություն ունի և ապրանքների վրա սահմանվում է այն դեպքում, երբ դրանք տվյալ երկրի տարածքով մի երկրից մեկ ուրիշ երկիր են փոխադրվում: Այս տուրքը կիրառվում է նաև մի քանի պետությունների տարածքով տրանսպորտային միջոցների շարժման դեպքում: Սովորաբար տարանցիկ փոխադրումը ոչ մի հարկման ենթակա չէ, բացառությամբ այդ տարանցիկ շարժումն ապահովող, սպասարկող ծառայություններից զանձվող վճարների (օրինակ՝ ճանապարհից օգտվելու համար զանձվող վճար):

Ըստ դրույքաչափերի՝ տարբերում են իրավական ակտերով սահմանվող *բարձր մաքսատուրքեր*, պայմանագրերով սահմանվող *ցածր մաքսատուրքեր և արտոնյալ մաքսատուրքեր*:

Ըստ ազդեցության աստիճանի՝ լինում են *արտոնյալ և խտրական մաքսատուրքեր*: Արտոնյալ մաքսատուրքերը սահմանվում են նվազագույն դրույքաչափից էլ ցածր մակարդակով ստեղծելով առևտրի բարենպաստ պայմաններ: Խտրական տուրքերը սահմանվում են շատ բարձր դրույքաչափերով: Դրանք լինում են *պատասխան, փոխհատուցման և հակադեմպինգային*: Պատասխան տուրքերը կարող են տարածվել ամբողջ առևտրի կամ առանձին ապրանքների վրա և օգտագործվում են գործարարի տնտեսական գործունեության սահմանները կրճատելու նպատակով: Փոխհատուցման տուրքը գների տարբերության փոխհատուցման միջոցով հավասարակշռում է տեղական և ներմուծված ապրանքների ծավալները: Հակադեմպինգային տուրքը սահմանվում է ներմուծման վրա: Դրանով հարկվում են այն ապրանքները, որոնք ներմուծվում են համաշխարհային գներից կամ ներմուծող երկրի ներքին գներից ցածր գներով:

Ըստ տնտեսական բնույթի՝ տարբերում են *հարկաբյուջետային, հովանավորչական և հակազավթողական տուրքեր*: Հարկաբյուջետային տուրքերն ապահովում են եկամուտների առավելագույն հնարավոր հոսքը պետական գանձարան, ինչպես օրինակ՝ ներմուծման մաքսատուրքն այն ապրանքի վրա, որը տվյալ երկրում չի արտադրվում: Հովանավորչական տուրքերը կիրառվում են հայրենական արտադրությունն օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու համար, ինչպես նաև տնտեսության առանձին ոլորտների զարգացման նպատակով: Ներքին շուկայում մենաշնորհային գների դեպքում բարձր ներմուծման մաքսատուրքերը կարող են ունենալ հակազավթողական բնույթ, քանի որ նպաստում են հակադեմպինգին:

Չնայած ներմուծման և արտահանման սակագները տնտեսապես նպատակահարմար չեն, սակայն դրանց սահմանումը հետապնդում է սոցիալական, քաղաքական և պաշտպանական նպատակներ: Մաքսատուրքերի կիրառման կողմնակիցները բերում են հետևյալ փաստարկները.

- սոցիալական որևէ դասի օգնելու անհրաժեշտությունը: Դրան կարելի է հասնել զանձված մաքսատուրքերի հաշվին պետական ծախսեր կատարելու, առանձին արտադրողներին

աջակցելու նպատակով պետական լրավճարներ տրամադրելու, ինչպես նաև արտադրական ենթակառուցվածքների ստեղծման համար ներդրումներ կատարելու միջոցով:

- Շքեղության ապրանքների ներմուծումը սահմանափակելու անհրաժեշտությունը, որը կարելի է իրականացնել դրանց ներմուծման վրա տուրքեր սահմանելու միջոցով:
- Երկրի արդյունաբերության երիտասարդ ճյուղերը խթանելու մղումը:
- Պետության եկամուտները մեծացնելու մղումը հատկապես այն երկրներում, որտեղ դեռևս չի ձևավորվել կառավարման և հաշվառման հատուկ համակարգ, որի հետևանքով պետությունը նպատակահարմար է գտնում ապրանքների հաշվառումը և մաքսատուրքերի գանձումն իրականացնել մաքսային սահմանի վրա:

Շատ հաճախ երկրներն արտաքին առևտրի և հատկապես ներմուծման վրա ազդելու համար իրականացնում են ոչ տնտեսական միջոցառումներ կամ ոչ սակագնային կարգավորում: Դրանք բաժանվում են երկու խմբի.

1. Միջոցներ, որոնք ուղղված են ներմուծման ուղղակի սահմանափակմանը: Դրանք են՝ քվոտաները, արտոնագրերը, ներմուծման ավանդները, հակադեմպինգային ու փոխհատուցման տուրքերը:
2. Վարչական բնույթի միջոցներ, որոնք անուղղակի են ազդում առևտրի սահմանափակման վրա, բայց տալիս են համանման արդյունք: Դրանք են՝ մաքսային ձևակերպումները, տեխնիկական նորմերն ու ստանդարտները, փաթեթավորման ու նակնիշավորման պահանջները:

Ոչ սակագնային կարգավորման ամենատարածված միջոցներից մեկը արտաքին առևտրային գործունեության քանակական սահմանափակումն է, որն իրականացվում է քվոտավորման և արտոնագրման միջոցով:

Քվոտաները արտահանվող կամ ներմուծվող ապրանքների վրա ֆիզիկական կամ արժեքային սահմանափակումներն են որոշակի ժամանակահատվածի համար: Քվոտա սահմանելիս տեղի է ունենում էմբարգո, այսինքն՝ արտահանման կամ ներմուծման ծավալների վրա արգելք, որը այս կամ այն ապրանքի հոսքերի վրա հսկողության միջոց է: Ներմուծման վրա քվոտայի սահմանումը երկրի տնտեսության վրա թողնում է նույն ազդեցությունը, ինչ ներմուծման վրա՝ մաքսատուրքի սահմանումը:

Ներմուծման քվոտաների սահմանումը նպատակ ունի նաև պաշտպանելու հայրենական արտադրությունն օտարերկրյա մրցակցությունից, իսկ արտահանման քվոտաները կիրառվում են հազվադեպ, հիմնականում ապրանքների մեծ պակասուրդի դեպքում կամ քաղաքական այս կամ այն նպատակի իրականացման համար: Քվոտաներ սահմանելու դեպքում ապրանքները ներմուծվում են առանց մաքսատուրքերի գանձման, իսկ հաստատված չափից ավել ներմուծման դեպքում գանձվում են բարձր տուրքեր:

Քվոտաների ամենատարածված ձևերից են *գլոբալ* և *անհատական* քվոտաները: Գլոբալ քվոտան սահմանում է ներմուծման կամ արտահանման ծավալներն արժեքային կամ բնաիրային արտահայտությամբ, որոշակի ժամանակաշրջանի համար և ներմուծողներին (արտահանողներին) տալիս է արտաքին առևտրային գործընկեր երկրի ընտրության հնարավորություն:

Ի տարբերություն գլոբալ քվոտայի՝ անհատական քվոտայի չափը տարբերակվում է ըստ երկրների: Միջազգային պրակտիկայում օգտագործվում է ներմուծման վրա սահմանվող անհատական քվոտաների երկու տեսակ: Մի տեսակը կարող է ձևավորվել գլոբալ քվոտայի հիման վրա այն դեպքում, երբ այդ քվոտայի շրջանակներում ապրանքները բաշխվում են երկրների միջև՝ նախորդ ժամանակաշրջանում ներմուծման աշխարհագրական կառուցվածքում իրենց ունեցած բաժնին համամասնորեն: Նման բաշխման դեպքում առաջնությունը երբեմն տրվում է, այսպես կոչված, ավանդական մատակարարներին: Երկրների միջև քվոտայի բաշխման մյուս տարբերակի դեպքում առաջնությունը տրվում է այն պետություններին, որոնք իրենց վրա են վերցնում տվյալ երկրից ապրանքներ ներմուծելու փոխադարձ պարտավորություններ: Քանի որ նման պարտավորություններն ամրագրվում են միջպետական համաձայնագրերում,

ապա այդ դեպքում անհատական քվտան ընդունում է երկկողմանի քվտայի բնույթ՝ պայմանագրային սկզբունքների հիման վրա:

Արտաքին առևտրային գործունեության կարգավորման մեջ կիրառվում են նաև *սեզոնային* քվտաներ, որոնք հիմնականում սահմանվում են գյուղատնտեսական մթերքների ներմուծման վրա որոշակի ժամանակաշրջանի համար:

Քվտաները դասակարգվում են նաև ըստ հետևյալ խմբերի.

- *ընդհանուր քվտաներ*, որոնք սահմանվում են պետական կարիքների համար, օրինակ՝ տարածաշրջանային և աճուրդային քվտաները,
- *բնական քվտաներ*՝ կապված նավահանգիստներում նավթային պահեստների, նավթամուղների թողունակության սահմանափակման հետ և այլն,
- *բացառիկ քվտաներ*, որոնք սահմանվում են պետության կողմից բացառիկ դեպքերի համար՝ կապված երկրի ազգային անվտանգության ապահովման, ներքին շուկայի պաշտպանության և միջազգային պարտավորությունների կատարման հետ:

Գոյություն ունեն նաև *սակագնային* քվտաներ: Սակագնային քվտան առանց մաքսատուրքի և (կամ) նվազեցված դրույքաչափերով մաքսատուրքով որոշակի քանակությամբ ապրանքների ներմուծման թույլտվությունն է: Իսկ սահմանված սակագնային քվտայից ավել ապրանքների ներմուծման դեպքում կիրառվում են սովորական դրույքաչափերով մաքսատուրքեր:

Արտաքին առևտրային գործունեության քանակական սահմանափակման մեկ այլ ձև է *արտոնագրումը*: Այն արտաքին առևտրային գործունեություն իրականացնելու համար լիազորված պետական մարմինների կողմից կիրառվող սահմանափակումն է իրավունքի կամ թույլտվության տրամադրման միջոցով: Արտոնագրում սահմանվում է ապրանքների արտահանման և ներմուծման կարգը, ինչպես նաև տրվում է որոշակի ծավալի ապրանքների արտահանման (ներմուծման) թույլտվություն: Վերջինս նեղ իմաստով կապված է քվտավորման հետ:

Ժամանակակից արտաքին առևտրային գործունեության պրակտիկայում տարբերում են արտոնագրի երկու հիմնական տեսակ՝ *զլխավոր և անհատական*:

Գլխավոր արտոնագիրը, որը հրապարակվում է պաշտոնական տեղեկագրերում, ցանկացած անձի թույլ է տալիս արտոնագրում նշված ապրանքները ներմուծել (արտահանել) առանց որևէ քանակական կամ արժեքային սահմանափակման՝ եռամսյակի, կիսամսյակի կամ տարվա ընթացքում:

Ներմուծման կամ արտահանման միանվագ թույլտվությունը կոչվում է անհատական արտոնագիր: Նման արտոնագիր տրվում է որպես միանգամյա թույլտվություն՝ ապրանքի կոնկրետ տեսակի (երբեմն երկու-երեք տեսակի, բայց նույն ապրանքախմբի համար) առևտրային գործարքի համար: Անհատական արտոնագրում նշվում են դրա ստացողի, ապրանքի քանակի, գնի և ապրանքի ծագման երկրի մասին տվյալներ: Այն չի կարող փոխանցվել մեկ այլ ներմուծողի (արտահանողի) և ունի գործողության սահմանափակ ժամկետ (սովորաբար մեկ տարի):

Նորմատիվաիրավական ակտերում, որտեղ սահմանվում է արտաքին առևտրային գործունեության իրականացման կարգը, կարող են հստակորեն տրվել անհատական (միանգամյա) և գլխավոր արտոնագրերի ձևակերպումները: Արտոնագրի տրման և ձևակերպման փաստաթղթերի համար գանձվում է սահմանված վճար (արտոնագրային տուրք)՝ հաշվարկված նվազագույն աշխատավարձի հիման վրա:

Համաշխարհային գների փոփոխության հետ կապված, ներքին գների փոփոխությունից խուսափելու համար, օգտագործվում են *փոխհատուցման գանձումներ*, որոնց մեծությունը հավասար է ապրանքի արտահանման ցածր գնի և ներքին շուկայում բարձր գնի տարբերությանը: Փոխհատուցման գանձումները կարող են օգտագործվել մաքսատուրքերի փոխարեն, և դրանց բնորոշ է ինքնաբերաբար փոփոխությունը: Եթե ներքին շուկայում գները կայուն են, իսկ համաշխարհային շուկայում փոխվում են, ապա փոխհատուցման գանձումները փոխվում են համաշխարհային գների փոփոխության չափով՝ հակառակ ուղղությամբ: Դրանով այս գանձումները տարբերվում են տուրքերից, որոնք կայուն են: Իսկ եթե համաշխարհային գինը

կայուն է, ապա փոխհատուցման գանձումները կախված են ներքին գներից, իսկ ներքին գները՝ կիրառվող տուրքերի մեծությունից: Փոխհատուցման գանձումների ինքնաբերաբար փոփոխելիությունը դժվարացնում է օտարերկրյա ապրանքների մուտքը ներքին շուկա:

*Ներմուծման ավանդները* որոշակի գումարի փոխանցումներ են հատուկ հաշիվ՝ ներմուծման արժեքի որոշակի համամասնությամբ: Որոշ ժամանակ անց այդ գումարները վերադարձվում են առանց տոկոսների վճարման: Արդյունքում առաջանում են լրացուցիչ ծախսեր, քանի որ ներմուծողները ստիպված են փոխառություններ վերցնել ներմուծման ավանդների համար: Լրացուցիչ ծախսերի փոխհատուցման հետևանքով բարձրանում է ներմուծվող ապրանքի գինը, որն էլ հանգեցնում է պահանջարկի կրճատմանը, հետևաբար նաև՝ ներմուծման նվազմանը: Հաճախ ներմուծման ավանդներն օգտագործվում են վճարային հաշվեկշռի բարելավման համար՝ կրճատելով ներմուծումը:

Համաշխարհային առևտրում շրջակա միջավայրի և առողջության պահպանումը առևտրային արգելք չէ, բայց անուղղակիորեն կարող է օգտագործվել այդ նպատակով: Ներմուծվող ապրանքները պետք է բավարարեն որոշակի տեխնիկական պահանջների, որոնք լրացուցիչ ծախսեր են առաջացնում ներմուծողների համար՝ կապված տեխնոլոգիայի փոփոխության և համապատասխան որակի հավաստագրի ստացման հետ:

Լրացուցիչ վճարներ են համարվում տարբեր վարչական, մաքսային, դրոշմային, վիճակագրական, սահմանային վճարները, որոնք նպաստում են ներմուծման կրճատմանը:

Պետությունը կարող է սահմանել նաև արժուքային սահմանափակումներ, այսինքն՝ որոշում է արժույթի օգտագործման եղանակները, միջոցները և պարտադրում է արժույթով վճարումներ կատարելու թույլտվություն ստանալ: Արդյունքը նույնն է, ինչ քանակական սահմանափակման դեպքում:

Արտաքին առևտրում կարող են օգտագործվել նաև այլ ոչ սակագնային սահմանափակումներ, ինչպես օրինակ՝ պետական մենաշնորհն արտաքին առևտրում, տեղական հումքի պարտադիր օգտագործման պահանջը, որը կրճատում է ներմուծվող հումքի նկատմամբ պահանջարկը:

Արտահանման խթանման և ապրանքների մրցունակության բարձրացման համար պետության կողմից ձեռնարկություններին տրվում են *արտահանման լրավճարներ* (առավելապես փողային արտահայտությամբ), որոնք հնարավորություն են տալիս իջեցնելու արտահանվող ապրանքների գները՝ առանց ձեռնարկությունների եկամուտների կրճատման: Այդ լրավճարներն արտահանողին տրվում են տարբեր ձևերով՝ ներքին և միջազգային գների տարբերության չափով (եթե ներքին գները բարձր են), արտահանողի որոշակի ծախսերի ֆինանսավորմամբ, որոշ արտոնությունների սահմանման ձևով (հարկային արտոնություններ, արագացված ամորտիզացիայի թույլտվություն և այլն): Պետությունը կարող է փոխառություն տալ արտահանողներին՝ առանց տոկոսի կամ տոկոսային և ժամանակային արտոնություններով: Քանի որ արտահանման լրավճարներն ավելացնում են ապրանքների արտահոսքը, ապա արտահանվող ապրանքների ներքին գները բարձրանում են: Սպառողների վրա է ընկնում այն լրացուցիչ հարկերի բեռը, որոնք պահանջվում են արտահանման լրավճարների ֆինանսավորման համար: Միաժամանակ այդ լրավճարները նպաստում են ներքին շուկայի կայունացմանը և կարող են բարելավել երկրի դիրքը համաշխարհային առևտրում:

Աշխարհի բազմաթիվ երկրների զարգացման փորձը ցույց է տալիս, որ նրանց կողմից իրականացված արտաքին առևտրի կարգավորման ոչ տնտեսական միջոցները խոչընդոտում են արտաքին առևտրի շրջանառությունը: Օրինակ, Եվրոպայում քանակական սահմանափակումները տնտեսական ճգնաժամի տարիներին (1929-1933թթ.) հովանավորչական քաղաքականության լավագույն գործիքներն էին: Այդ շրջանում գյուղատնտեսական հումքի և մթերքների գներն ավելի մեծ չափով էին նվազել, քան պատրաստի արդյունաբերական արտադրանքի գները: Եվ շատ ագրարային երկրներ, վճարային հաշվեկշռի պակասուրդի կրճատման նպատակով, սկսեցին իրենց ապրանքները իջեցված գներով արտահանել Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրներ: Մի շարք երկրներում, օրինակ՝ Ֆրանսիայում և Գերմանիայում, սկսվեց

սուր մրցակցային պայքար օտարերկրյա ու ազգային արտադրության գյուղատնտեսական մթերքների միջև, և մաքսային սակագները չկանխեցին գյուղատնտեսական մթերքների ներմուծումը: Այս պայմաններում զարգացած երկրները սկսեցին կիրառել ավելի արդյունավետ միջոցներ, որոնցից էին ներմուծվող ապրանքների քանակական սահմանափակումները:

Իսկ ԱՄՆ-ում ոչ սակագնային միջոցներից մեծ տարածում ուներ արտոնագրումը: Սակայն քանակական սահմանափակումներն ԱՄՆ-ին թույլ չէին տալիս մուտք գործել եվրոպական երկրների շուկաներ, և 1945-1949թթ. դրանց վերացման փորձեր արվեցին: Արդյունքում եվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպությունը մի շարք որոշումներ ընդունեց (1949-1951թթ.), ըստ որոնց՝ քանակական սահմանափակումներից ազատվում էին այն ապրանքները, որոնք պետք է կազմեին երկրների միջև մասնավոր հատվածի շրջանառության 75%-ը: 1962թ. քանակական սահմանափակումները վերացան նաև մասնավոր ներմուծողների 90-95%-ի համար: Բացի այդ, 1968թ. քանակական սահմանափակումներն ամբողջությամբ վերացան Առևտրային միության երկրների միջև:

Այսպիսով, քանակական սահմանափակումներով սահմանվում են ձեռնարկության՝ արտաքին շուկա դուրս գալու պայմանները: Արտաքին առևտրային գործունեության վարչական կարգավորումն արդարացված չէ, այն անհրաժեշտ է միայն արտակարգ իրավիճակներում, երբ պետք է կենտրոնացնել արժույթային ռեսուրսների ծախսերը և մուտքերը, տնտեսական կարևորագույն ճյուղերն ապահովել պակասուրդային հումքով և նյութերով: Սակայն շուկայական տնտեսության պայմաններում երկրի տնտեսության զարգացման համար առաջնայինն արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման տնտեսական միջոցներն են:

Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ այն երկրները, որոնք իրականացրել են ազատ առևտուր և հետևում են միջազգային տնտեսական կազմակերպությունների կանոններին, այժմ գտնվում են զարգացման ավելի բարձր մակարդակի վրա:

Հայաստանի Հանրապետությունը, օգտագործելով համաշխարհային փորձը՝ որոշակի առանձնահատկություններ ունի արտաքին առևտրի քաղաքականության բնագավառում:

**Давид Арутюнян**

## **Государственные средства регулирования внешней торговли**

### **Аннотация**

Состояние баланса платежей страны сильно зависит от торгового баланса (текущий счет), а также эффективное использование традиционных и новых подходов к вопросам, связанным с регулированием внешней торговли. Один из уроков глобального финансового кризиса считается необходимость преобразования классических подходов и методов финансового регулирования типичных для либеральных экономик. Это становится очевидным, что в мировой экономике не более чисто либеральной экономической модели могут быть использованы. Каждая страна создает свои собственные модели экономического развития на основе государственного вмешательства эффективных элементов регулирования внешней торговли. В эпоху экономической глобализации, углубления и расширения международных финансовых отношений, Армении необходимо решить вопросы экономической стабилизации и внедрения эффективных методов и моделей регулирования внешнеторгового баланса страны.

**Davit Harutyunyan**

## **Government Means of Regulating Foreign Trade**

### **Abstract**

The state of country's balance of payments strongly depends on trade balance (current account), as well as efficient use of traditional and new approaches to the issues related to the regulation of foreign trade. One of the lessons of global financial crisis is considered to be the need to transform classic approaches and methods of financial regulation typical for liberal economies. It



becomes obvious that in global economy no more pure liberal economic models may be used. Each country will try to create its' own model of economic development by using and harmonizing competitive, liberal and based on government intervention efficient elements of foreign trade regulation. During the era of economic globalization, deepening and expanding the international financial relations, Armenia need to solve the issues of economic stabilization and implementation of efficient methods and models of regulating country's foreign trade balance.

**ԹԱՄԱՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ**


*ՆԳԱՍ Մ. Լոթսանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

**ԲԱՆԿԵՐԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԴՅ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

ԴՅ տնտեսության առողջ զարգացման համար էական դեր ունի կայուն ֆինանսական համակարգը, որն աշխարհի մի շարք երկրներում Կենտրոնական բանկի գլխավոր խնդիրներից մեկն է, այն ապահովվում է ֆինանսական հաստատությունների արդյունավետ գործունեության շնորհիվ, այդ թվում և բանկերի: Հայաստանի բանկային համակարգին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 91.1%<sup>1</sup>-ը, ուստի Հայաստանի ֆինանսական կայունության գնահատման տեսանկյունից առավելապես կարևորվում են բանկային համակարգի գործունեության ռիսկայնության բացահայտումն ու գնահատումը: Ապահովագրական, արժեթղթերի շուկաների մասնակիցների, ինչպես նաև ֆինանսական համակարգի մյուս հաստատությունների մասնաբաժինը բանկային համակարգի համեմատ բավականին փոքր է, և Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության վրա դրանց գործունեության ազդեցությունը մեծ չէ:

*Գծապատկեր 1*

*Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքն ըստ ֆինանսական հաստատությունների*



Բանկերն այնպիսի տնտեսական կառույցներ են, որոնց հիմնական գործունեությունը ազատ դրամական միջոցների հավաքագրումն է, վարկերի տրամադրումը, դրամական հաշվարկների կատարումը, թղթադրամների և տարբեր արժեթղթերի թողարկումը:

Սկզբնական շրջանում բանկերը կատարում էին միջնորդի դեր՝ վճարումներ և վարկեր տրամադրելու համար: Հետագայում բացի միջնորդի դեր կատարելուց բանկերն սկսում են իրականացնել նաև ավելի բարդ գործողություններ, ինչը հանգեցնում է բանկերի գործառնությունների ընդլայնմանը, և դրանք վեր են ածվում հատուկ ձեռնարկությունների: Վերջիններս

<sup>1</sup> ԴՅ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն 2012, էջ 36:

շահույթ են ստանում արտադրության ընթացքում ստեղծված հավելյալ արդյունքի վերաբաշխման շնորհիվ: Բանկերի տնտեսական դերը հասարակական պահանջմունքների բավարարման գործում բավականին մեծ է: Շնորհիվ բանկի ճկուն գործունեության դրամական միջոցները վերաբաշխվում են տնտեսության տարբեր ոլորտների ու արտադրությունների միջև: Բանկերը կարևոր տնտեսական դեր են խաղում շրջանառության ծախսերի տնտեսման գործում: Այսպես, մետաղադրամները փոխարինում են թղթադրամներով, կանխիկ հաշվարկները՝ անկանխիկ հաշվարկներով, հաշվարկները կենտրոնացվում և արագացվում են:

Ժամանակակից պայմաններում բանկերի տնտեսական դերը հետզհետե ավելի է ուժեղանում, որովհետև ձևավորվում են տարբեր կարգի բաժնետիրական ընկերություններ, որոնք սկզբնական շրջանում ֆինանսավորման խիստ կարիք են զգում:

Այսպիսով, բանկերը, կատարելով դրամական միջոցների վերաբաշխման գործողություն, կենտրոնացնում են ժամանակավորապես ազատ դրամական միջոցները: Այդ ճանապարհով էլ ձևավորվում են տնտեսության վարկավորման ֆոնդերը, և իրականացվում են կարճաժամկետ ու երկարաժամկետ վարկավորումները, ինչպես նաև բնակչության պահանջմունքների բավարարման համար սպառողական վարկերը:


Բանկը կարող է կատարել հետևյալ գործառնությունները.

- ներգրավել և տեղաբաշխել դրամական ավանդներ,
- ներգրավել և տրամադրել վարկեր,
- ֆինանսավորել կապիտալ ներդրումներ,
- թողարկել, գնել, վաճառել և հաշվառել վճարային փաստաթղթեր և արժեթղթեր,
- գնել և վաճառել արտարժույթ,
- մատուցել խորհրդատվական ծառայություններ և այլն:

Բանկի իրականացրած ակտիվային գործառնությունների առյուծի բաժինը պատկանում է վարկային գործառնություններին՝ 2011թ. կազմելով ընդհանուր ակտիվների 58%-ը:

## Գծապատկեր 2

Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքն առ 31.12.2011<sup>1</sup>



Տնտեսության մեջ շատ մեծ է վարկերի դերը, դրանց միջոցով ինչպես ապահովվում է բանկերի եկամուտը, այնպես էլ իրականացվում է տնտեսության մեջ կապիտալի վերաբաշխումը:


2011թ. բանկերը բարձր ակտիվություն են ցուցաբերել վարկային շուկայում՝ պայմանավորված հետճգնաժամային ժամանակահատվածում տնտեսության իրական հատվածի աստիճանական վերականգնմամբ և տրանսֆերտների աճով: Բանկերի ակտիվ վարկավորմանը նպաստել են նաև բանկերի կողմից իրավաբանական անձանց վարկավորման խթանմանն ուղղված քայլերը, ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի կտրուկ տատանումների բացակայությունը և կառավարության «Գյուղատնտեսության վարկավորման սուբսիդավորման ծրագրի» մեկնարկը:

<sup>1</sup> ՀՀ Բանկերի միություն, «ՀՀ Բանկային համակարգի 2011թ. գործունեության ամփոփում»:

Հաշվետու տարում ևս պահպանվել է ֆիզիկական անձանց նկատմամբ իրավաբանական անձանց վարկավորման առաջանցիկ աճի միտումը:

Գծապատկեր 3

**Ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում<sup>1</sup>**



Տնտեսության վրա բանկային համակարգի ազդեցությունը ներկայացվում է ֆինանսական միջնորդության ցուցանիշով, որն էլ իր հերթին արտահայտվում է վարկեր/ՅՆԱ և ակտիվներ/ՅՆԱ փոփոխականների միջոցով և ցույց է տալիս, թե բանկային համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում, և կապիտալի վերաբաշխումը տնտեսության տարբեր ճյուղերում որքանով է իրականացվում բանկերի միջոցով:

2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ֆինանսական միջնորդությունն արտահայտվել է հետևյալ ցուցանիշներով՝ բանկային ակտիվներն աճեցին, դրան զուգահեռ արձանագրվեց անվանական ՅՆԱ-ի կրճատում, ինչի արդյունքում բանկային համակարգի ակտիվների և ՅՆԱ-ի հարաբերակցությունն այդ տարի աճեց 14 տոկոսային կետով՝ կազմելով 42,7%: Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՅՆԱ-ի հարաբերակցությունն ավելացել է 5,9 տոկոսային կետով՝ կազմելով 23,7%<sup>2</sup>:

2010 թվականին նախորդ տարվա համեմատ դիտարկվել են հետևյալ փոփոխությունները՝ անվանական ՅՆԱ-ի աճ է գրանցվել, դրան զուգընթաց աճել է նաև բանկային ակտիվների ծավալը, և ակտիվներ/ՅՆԱ ցուցանիշը կազմել է 44,5%, վարկեր/ՅՆԱ-ն՝ 27,1%:

2011 թվականին մեր երկրի բանկային համակարգի ակտիվների և ՅՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշն ավելացել է 9.6 տոկոսային կետով և կազմել է 54.1%, իսկ բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՅՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշը ավելացել է 6.3 տոկոսային կետով և կազմել 31.6% (աղյուսակ 1): Ծիշտ է, նախորդ տարվա համեմատ՝ մի քանի տոկոսային կետով աճ կա, սակայն ՀՀ բանկային համակարգի ներգրավվածությունը տնտեսության մեջ մնում է շատ ցածր մակարդակի վրա, ինչը նշանակում է, որ մեր ֆինանսական կապիտալն ուղղակի չի մասնակցում իրական տնտեսության մեջ, համեմատության համար նշենք, որ ԱՄՆ-ում այդ ցուցանիշը 230% է: Այս ցուցանիշով աշխարհում անգերազանցելի բարձր արդյունք ունի Կենտրոնական և Արևելյան Եվրոպան (ԿԱԵ) և 2011թ. ընդհանուր բանկային համակարգի ակտիվներ և ՅՆԱ հարաբերակցությունը կազմել է 269%, Հունգարիայում, Չեխիայում և Սլովակիայում այս ցուցանիշը տատանվում է 120%-140%-ի սահմաններում, Ռումինիայում, Ռուսաստանի Դաշնությունում և Ուկրաինայում՝ 70-80%<sup>3</sup>: Վարկեր/ՅՆԱ հարաբերակցությունը ՌԴ-ում 43% է, այս ցուցանիշը ԿԱԵ երկրներում 30% -ից բարձր է:

<sup>1</sup> ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն 2012, էջ 39:  
<sup>2</sup> ՀՀ ԿԲ Դրամավարկային և ֆինանսական հաշվետվություն 2012թ.:  
<sup>3</sup> CEE Banking sector report, 2012.

2012 թվականի առաջին կիսամյակի ընթացքում, անվանական ՀՆԱ-ի աճին զուգընթաց, դիտարկվել է բանկային ակտիվների առաջանցիկ աճ, ինչի արդյունքում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը կիսամյակի վերջում կազմել է 57,9%: ՀՆԱ-ի նկատմամբ վարկերի առաջանցիկ աճի հետևանքով վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 37,1%:


*Աղյուսակ 1*

**Բանկային համակարգի ակտիվներ/ ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2000-2011թթ.<sup>1</sup>, %**

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Բանկային համակարգի ակտիվներ / ՀՆԱ	22.8	19.8	18.4	17.6	19.1	19.6	19.7	24.3	28.7	42.7	44.5	54.1
Բանկային համակարգի վարկեր / ՀՆԱ	9.6	7.1	6.7	6.6	7.5	8.7	9.2	13.5	17.8	23.7	27.1	33.3

*Գծապատկեր 4*

**ՀՀ ֆինանսական միջնորդության ցուցանիշը 2000-2011թթ.**



Ֆինանսական միջնորդության ցուցանիշներն են նաև բանկային համակարգի ավանդների և վարկերի միջին տոկոսադրույքները: Բանկային համակարգում առկա տոկոսադրույքի ռիսկը ներկայումս գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա: Վերջին տարիներին վարկերի և ավանդների շուկայական տոկոսադրույքները ցուցաբերել են նվազման վարքագիծ (աղյուսակ 2):

*Աղյուսակ 2*

**Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի և ավանդների միջին տոկոսադրույքները 2008-2011թթ.<sup>2</sup>, %**

	Վարկերի միջին տոկոսադրույք		Ավանդների միջին տոկոսադրույք	
	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
2008	16.5	13.83	7.71	6.59
2009	18.79	13.19	8.1	6.17
2010	18.9	12.28	8.76	5.31
2011	17.69	12.21	10.29	6.14

<sup>1</sup> ՀՀ ԿԲ Դրամավարկային և ֆինանսական հաշվետվություն 2012թ. «Բանկային համակարգի ակտիվներ/ ՀՆԱ/ վարկեր/ՀՆԱ»:

<sup>2</sup> ՀՀ ԿԲ Դրամավարկային և ֆինանսական հաշվետվություն 2012թ. «Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներ (ամսական), Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքներ (ամսական)»:

**Влияние банков на экономику РА**

**Аннотация**

В статье рассматривается влияние банковской системы на экономику Армении, которая представлена индикатором финансового посредничества.

Индикатор финансового посредничества показал устойчивые тенденции роста в период 2010-2011 годов, однако участие банковской системы в экономике остается на очень низком уровне. В этом контексте продолжающегося экономического роста и роста доходов населения, упрощение процедуры кредитования можно рассматривать как случай углубления финансового посредничества.

**Tamara Manukyan**

**The Impact of Banks on the Economy of Armenia**

**Abstract**

The article reviews the impact of banking system on the economy of Armenia, which is presented with the indicator of financial intermediation.

Financial intermediation indicator revealed stable growth trends in the period 2010-2011, however the banking system remains at a very low level of involvement in the economy. In this context, the continued economic growth and growth of income of population, simplification of lending procedures may be considered as a case of deepening of financial intermediation.

**ԹԱՄԱՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան  
փնտրեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

**ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Վարկային շուկան ֆինանսական միջնորդների հետ հարաբերությունների համակարգ է, և հիմնական միջնորդներն են առևտրային բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները և գրավատները: Այս առումով ՀՀ վարկային շուկան բնութագրելիս կարևորվում է, թե ինչ մակարդակի վրա է գտնվում ֆինանսական միջնորդությունը, ինչպես նաև վերլուծել այս ինստիտուտների կողմից տրամադրված վարկային ներդրումները:

Բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը դեռևս գտնվում է ցածր մակարդակի վրա, չնայած այն վերջին տարիներին ցուցաբերում է աճի միտումներ. 2002թ. բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրած վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը կազմել է 6.7%, իսկ 2011թ.՝ 33.3%<sup>1</sup>:

Առևտրային բանկերի հիմնական բնութագրիչները՝

- Բանկային համակարգում չկա կենտրոնացում
- Որևէ բանկ չունի շուկայում գերիշխող դիրք
- Չկան պետական մասնակցությամբ բանկեր
- 21 առևտրային բանկերից 3-ը բաց բաժնետիրական ընկերություններ են
- Չափահաս բնակչության 51%-ն ունի բանկային հաշիվներ
  - 2006–ին՝ 30%

<sup>1</sup> ՀՀ ԿԲ Դրամավարկային և ֆինանսական հաշվետվություն 2012թ. «Բանկային համակարգի ակտիվներ/ ՀՆԱ/ վարկեր/ՀՆԱ»:

- 2000-ին՝ 13%
- Շրջանառվող պլաստիկ քարտերն են՝
  - VISA, MasteCard, American Express, Diners Club, ArCa և այլն:

2011 թվականի տարեվերջին ՀՀ տարածքում գործել են 21 բանկեր՝ 466 մասնաճյուղերով (նախորդ տարվա համեմատ մասնաճյուղերի թիվն աճել է 35-ով կամ 8%-ով), մասնաճյուղերի 42%-ը տեղակայված է Երևան քաղաքում, աշխատակիցների թիվը՝ 10059 աշխատող. նախորդ տարվա համեմատ աճել է 912-ով, կամ 10%-ով, ընդ որում բոլոր բանկերը գործել են ընդհանուր վերահսկողության դաշտում: Յուրաքանչյուր 100 000 բնակչին ընկնում է 14 մասնաճյուղ, յուրաքանչյուր 100 000 բնակչին ընկնում է 0.64 բանկ<sup>1</sup>:

Հայաստանի բանկային ոլորտի մրցակցային առավելությունները՝

- Կայունություն
- Խիստ և լավ կանոնակարգված վերահսկողություն
- Թափանցիկություն
- Շարունակական բարձր աճ
- Բարձր եկամտաբերություն
- Կորպորատիվ կառավարման կայուն հիմքեր
- Բանկային ակտիվների բարձր լիկվիդայնություն և նպաստավոր պայմաններ՝ ներդրումներն այլ շուկաներ տեղափոխելու համար
- Մակրոտնտեսական ցուցանիշների շարունակական աճի կայուն հիմքեր

2011 թվականին արձանագրվել է բանկային համակարգի ընդհանուր կապիտալի, պարտավորությունների և ակտիվների աճ:

*Աղյուսակ 1*

**Բանկային համակարգի ակտիվների, պարտավորությունների և կապիտալի մեծությունը (հազար դրամ)<sup>2</sup>**


	31.12.2010	31.12.2011	2011թ. տոկոսային աճ
Ակտիվներ	1 560 472 467	2 066 722 761	32,4%
Պարտավորություններ	1 241 521 006	1 710 796 794	37,8%
Կապիտալ	318 951 461	355 925 967	11,6%

Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերը ցուցաբերել են կայուն աճի միտումներ. 2011 թ. ընթացքում տնտեսությանը տրամադրված վարկերն ավելացել են 36.2 %-ով (2010 թ.՝ 26.3% աճ): Չնայած հաշվետու տարում բանկային համակարգի վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշի զգալի աճին՝ ֆինանսական միջնորդության (վարկեր/ՀՆԱ ցուցանիշ) ներկայիս մակարդակի պայմաններում դեռևս կան մեծաթիվ պոտենցիալ վարկառուներ: Այս համատեքստում տնտեսական աճի և բնակչության եկամուտների շարունակական աճի, վարկավորման ընթացակարգերի հետագա դյուրինացման պարագայում կարող են դիտարկվել վարկավորման ընդլայնում և ֆինանսական միջնորդության խորացում: Բանկային համակարգի վարկերի աճի տեմպը 3.8 տոկոսային կետով գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, ինչի արդյունքում ընդհանուր ակտիվներում վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 1.6 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 58.6%: Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2009 թվականից հետո վարկային ներդրումների աճով ՀՀ-ն հարևան երկրներից զիջում է միայն Բելառուսին:

<sup>1</sup> ՀՀ Բանկերի միություն, «Հայաստանի բանկային համակարգը 2011թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ»:

<sup>2</sup> ՀՀ ԿԲ ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները:

Վարկային ներդրումների տարեկան աճը<sup>1</sup>



ՀՀ բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված ընդհանուր վարկերում արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը 2000թ.-ից մինչև 2008թ. ցուցաբերում էր նվազման միտումներ. 83%-ից նվազել է՝ հասնելով 38%-ի: 2009-ից մինչև 2012 թվականի օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում ցուցաբերել է աճի բարձր տեմպ. աճել է 12 տոկոսային կետով՝ կազմելով 64% (2012թ. օգոստոս): 2012թ. օգոստոս ամսվա դրությամբ ընդհանուր վարկերի ծավալը կազմում է 1 506 002 մլն դրամ, այդ թվում արտարժույթային վարկերը՝ 964 362 մլն դրամ, դրամային՝ 541 640 մլն դրամ:

Աղյուսակ 2

ՀՀ բանկերի դրամային և արտարժույթային վարկերի ծավալները 2000-2012թթ. (2012թ. օգոստոս) (ժամանակահատվածի վերջ, մլն ՀՀ դրամ)<sup>2</sup>

Վարկեր	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Ռեզիդենտների	101,650	86,001	88,863	102,096	137,344	185,841	238,461	423,218	627,936	715,900	905,495	1,226,620	1,462,977
Դրամով	17,097	14,696	20,023	32,528	43,234	74,530	118,673	258,169	388,215	350,427	393,100	483,654	529,240
Արտարժույթով	84,554	71,305	68,840	69,568	94,109	111,311	119,787	165,049	239,722	365,473	512,395	742,966	933,737
Ոչ ռեզիդենտների	3,393	587	5,123	5,440	6,163	8,577	4,995	2,829	6,429	33,653	43,644	42,169	43,025
Դրամով	260	1	3	2,588	850	323	207	1,127	3,600	11,108	10,541	11,350	12,400
Արտարժույթով	3,134	587	5,120	2,852	5,313	8,255	4,789	1,702	2,829	22,545	33,102	30,819	30,625
Դրամով վարկեր	17,356	14,696	20,025	35,117	44,084	74,852	118,880	259,296	391,815	361,535	403,641	495,004	541,640
Արտարժույթով վարկեր	87,687	71,892	73,960	72,420	99,422	119,566	124,576	166,750	242,551	388,018	545,497	773,785	964,362
Ընդամենը վարկեր	105,044	86,588	93,985	107,536	143,506	194,418	243,456	426,047	634,366	749,552	949,139	1,268,789	1,506,002
Դրամով վարկեր /ընդհանուր վարկեր, %	17	17	21	33	31	39	49	61	62	48	43	39	36
Արտարժույթով վարկեր/ընդհանուր վարկեր, %	83	83	79	67	69	61	51	39	38	52	57	61	64


<sup>1</sup> ՀՀ ԿԲ Ֆինանսական կայունության հաշվետվություն 2012, էջ 38:  
<sup>2</sup> ՀՀ ԿԲ Դրամավարկային և ֆինանսական հաշվետվություն 2012թ.:

Դրանով վարկային ներդրումները 2011 թվականին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 22,6 տոկոսով, բայց քանի որ արտարժուրային վարկերն ավելի շատ են աճել նախորդ տարվա համեմատությամբ՝ 41%-ով, որի արդյունքում դրանով վարկային ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում կրճատվել է 4 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 39 %: 2011թ. ընթացքում բանկային համակարգի վարկային ներդրումները (վարկային ներդրումներում ներառվում են տնտեսության վարկերը, լիզինգը, ֆակտորինգը և բանկերում տեղաբաշխված վարկերն ու ավանդները) ավելացել են 33%-ով կամ 319,6 մլրդ դրամով և կազմել 1268,7 մլրդ դրամ, ընդ որում ոչ ռեզիդենտների վարկային ներդրումները կրճատվել են 3%-ով կամ 1,4 մլրդ դրամով և կազմել 42,1 մլրդ դրամ, իսկ ռեզիդենտների վարկային ներդրումներն աճել են՝ 35%-ով կամ 321,1 մլրդ դրամով և կազմել 1226,6 մլրդ դրամ (աղյուսակ 2):

Հաշվետու տարում՝ 2011թ., տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ (արդյունաբերության ճյուղերը դիտարկվել են որպես մեկ համընդհանուր ճյուղ): Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքում 2011 թվականին ամենախոշոր աճ է արձանագրվել տրանսպորտի և կապի ոլորտի վարկերում՝ 65.7 և առևտրի ոլորտի վարկերում՝ 49%:

**Գծապատկեր 2**

**ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների 2007-2012թթ. (ժամանակահատվածի վերջ, մլն ՀՀ դրամ)<sup>1</sup>**



Հատկանշական է, որ տնտեսության կայացման և զարգացման պայմաններում այսօր երկարաժամկետ վարկերի պահանջարկը հետզհետե ավելանում է: Վարկային ներդրումներում երկարաժամկետ (1տարի և ավելի ժամկետայնությամբ) վարկերի տեսակարար կշիռը վերջին տարիներին էապես աճել է՝ հիմնականում պայմանավորված սպառողական վարկերի ժամկետայնության մեծացմամբ:

Հաշվետու տարում վարկային ներդրումներում երկարաժամկետ (1 տարի և ավելի ժամկետայնությամբ) վարկերի տեսակարար կշիռը բավականաչափ աճել է՝ կազմելով 76.1%: Այս երկարաժամկետ վարկերը միջին հաշվով տատանվում են 3 տարի մարման ժամկետայնության

<sup>1</sup> ՀՀ ԿԲ Դրամավարկային և ֆինանսական հաշվետվություն 2012թ.:



շրջանակներում (այսինքն՝ տնտեսության մեջ ձևավորվել է ավելի երկար ժամկետայնությամբ վարկերի պահանջ):

Ուեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի աճի համեմատությամբ գյուղատնտեսական, տրանսպորտի և կապի ու առևտրային վարկերի առաջանցիկ աճի տեմպերը հանգեցրել են այդ վարկերի տեսակարար կշռի մեծացմանը: Նման միտումների պահպանման դեպքում ապագայում կբարձրանա վարկային ներդրումների ճյուղային կենտրոնացվածության մակարդակը: Կենտրոնացվածությունը որոշվում է Յերֆինդալ-Յիրշմանի կենտրոնացվածության գործակցի միջոցով, որով ստացված արդյունքները տատանվում են 0-ից 1-ի միջակայքում, և որքան այն մոտ է 0-ին, այնքան համարվում է նվազ կենտրոնացված:

*Աղյուսակ 3*

**Կենտրոնացվածության Յերֆինդալ-Յիրշմանի գործակից<sup>1</sup>**

<b>Ցուցանիշներ</b>	<b>31.12.08</b>	<b>31.12.09</b>	<b>31.12.10</b>	<b>31.12.11</b>
Ընդհանուր ակտիվներ	0.07	0.07	0.07	0.07
Ընդհանուր պարտավորություններ	0.07	0.07	0.07	0.07
Ընդհանուր կապիտալ	0.06	0.06	0.06	0.06

Աղբյուրը՝ ԶԶ ԿԲ:

Ըստ Յերֆինդալ-Յիրշմանի՝ տարբեր ամփոփ բնութագրիչների (ակտիվներ, պարտավորություններ, վարկեր, ավանդներ, կապիտալ) գործակիցների՝ համակարգի կենտրոնացվածությունը պահպանվել է ցածր մակարդակի վրա, ինչը սահմանափակում է ֆինանսական կայունության վրա կենտրոնացվածության ռիսկի հավանականությունը:

**Тамара Манукян**

**Общая характеристика кредитных вложений в коммерческих банках РА**

**Аннотация**

В статье рассматриваются уровень участия коммерческих банков на кредитном рынке РА, а также предоставляемые кредиты по отраслям экономики, срокам, валютам и по динамике их изменения.

Кредиты, предоставленные экономике банковской системой, показывают стабильные тенденции роста в период 2000-2011, но есть еще много потенциальных заемщиков, а в случае дальнейшего упрощения процедур кредитования может возникнуть расширение объема кредитов.

**Tamara Manukyan**

**General Characteristics of Credit Investments in Commercial Banks of Armenia**

**Abstract**

The article reviews the participation rate of commercial banks in the loan market of Armenia as well as the provided loans by branches of the economy, terms, currencies and the dynamics of their change.

The loans provided by the banking system to the economy show stable growth trends in the period 2000-2011, but there are still many potential borrowers and in case the further facilitation of lending procedures the expansion of loans volume may accrue.

<sup>1</sup> ԶԶ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն 2012, էջ 37:

## **ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Յուրաքանչյուր երկրում կիրառվող հարկային քաղաքականության արդյունավետությունից մեծապես կախված է ինչպես երկրի տնտեսական զարգացման տեմպը, այնպես էլ բնակչության կենսամակարդակի բարձրացումը, հետևաբար նաև երկրի սոցիալական վիճակը: Այս տեսանկյունից հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմքում արտասահմանյան և հայրենական տեսաբանները տեսնում են հարկային բեռի ծանրության կրճատումը, որը, նրանց կարծիքով, տնտեսվարող սուբյեկտների ներդրումային ներուժը մեծացնելով, խթանում է տնտեսության աճը, կրճատում ստվերային տնտեսության ծավալները՝ դրանով իսկ ուղղակիորեն ազդելով պետական բյուջե հարկային մուտքերի աճին և նպաստելով հասարակության անդամների բարգավաճման հնարավորությունների մեծացմանը:

Բնականաբար հարկային բեռի ուսումնասիրությանը բազմիցս անդրադարձել են բազմաթիվ տեսաբաններ՝ այդ թվում հայ տեսաբաններ: Այսպես, Վ. Հարությունյանի կարծիքով ՀՀ-ում ստվերային տնտեսության աճը (ըստ տարբեր գնահատականների՝ այն կազմում է ՀՀ տնտեսության 40-60%-ը) պայմանավորված է նախ և առաջ կիրառվող հարկային քաղաքականությամբ, որի արդյունքում հարկային բեռը չափազանց ծանր է, ինչը ստիպում է տնտեսվարող սուբյեկտին մտնել ստվեր և նվազեցնել հարկային վճարումների ծավալը. «Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ նախկին Խորհրդային Միության երկրների մեջ Հայաստանը համախառն ներքին արդյունքի կազմում հարկային եկամուտների ցուցանիշով գրավում է նախավերջին տեղը Վրաստանից առաջ և էականորեն զիջում է ԱՊՀ երկրների միջին ցուցանիշին (24.8 %), իսկ Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) Հայաստանում հարկային եկամուտների մակարդակը գնահատել է շատ ցածր»<sup>1</sup>: Այսինքն՝ հեղինակն անուղղակիորեն հարկային քաղաքականության առանցքը համարում է «հարկային բեռը»:

Մեկ այլ հեղինակի՝ Ա.Սաֆարյանի կարծիքով. «Հանրապետությունում պետական բյուջեի եկամտային մասի ձևավորման ժամանակ պետք է հաշվի առնել այն, որ իրականացվող հարկային քաղաքականությունը դեռևս շատ հեռու է կատարյալ լինելուց: Տնտեսական նոր հարաբերություններին անցման փուլի համար հարկային բեռը բավականաչափ բարձր է, օրենսդրությունը խիստ բարդ է»<sup>2</sup>: Ըստ հեղինակի՝ ՀՀ-ում հարկային բեռը բավականաչափ ծանր է, չնայած տնտեսությունը գտնվում է անցումային շրջանում:

Հարկային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերի, մասնավորապես հարկային բեռի ուսումնասիրությանն անդրադարձել է նաև մեկ այլ տեսաբան՝ Մ. Մարկոսյանը. «...ինչպիսի հարկային քաղաքականություն էլ ընտրված լինի պետության կողմից, հարկային քաղաքականության դերի բնութագրման առավել ընդհանրացնող ցուցանիշ է հարկային ծանրությունը կամ բեռը: Հարկային բեռի ցուցանիշը համարվում է նաև պետության հարկային քաղաքականության կարևոր չափորոշիչ»<sup>3</sup>: Հեղինակի կարծիքով այս ցուցանիշի միջոցով տրվում են այնպիսի հիմնահարցերի պատասխանները, ինչպիսիք են պետության հարկային համակարգի արդյունավետությունը, պետության ֆինանսական պահանջների բավարարման աստիճանը, հարկատուների տնտեսական ակտիվության խթանումը և ձեռնարկատիրական գործունեության շրջանակների ընդլայնման նպատակով տնտեսվարման ուղիների առաջադրումը:

<sup>1</sup> Վ. Հարությունյան, Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Ե. 2003, էջ 110:  
<sup>2</sup> Ա. Սաֆարյան, Հարկաբյուջետային կարգավորման կատարելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Ե. 2001, էջ 7:  
<sup>3</sup> Ա. Մ. Մարկոսյան, Հարկային բեռի կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում: Տնտեսագիտության թեկնածուի ատենախոսության սեղմագիր, Ե. 2004թ., էջ 13:

Հարկային բեռի գնահատման անհրաժեշտությունից բխում է «հարկային բեռի» ցուցանիշի հաշվարկման արդյունավետ մեթոդների ընտրությունը, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինի առավելագույն արժանահավատ պատկերացում կազմել տվյալ երկրում առկա հարկային բեռի մասին, որի վրա կարող է կառուցվել ինչպես երկրի արդյունավետ հարկային համակարգը, այնպես էլ մշակվել հարկային ինքնուրույն քաղաքականությունը, որոնց հնարավորություններն իրենց հերթին պետք է պայմանավորեն երկրում իրականացվող բյուջետային քաղաքականության սահմանները:

Ներկայումս միջազգային պրակտիկայում, այդ թվում նաև ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության սկզբունքների համաձայն, ընդունված է հարկային բեռի հաշվարկման հետևյալ ցուցանիշը՝ հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը: Բնականաբար, ՀՀ կառավարության կողմից ամրագրված հարկային քաղաքականության ուղղվածությունը տարեցտարի պետական բյուջե հարկերի ձևով մուտքագրվող համախառն ներքին արդյունքի ավելի մեծ մասնաբաժին ավելացնելն է: Ներքոհիշյալ թիվ 1 աղյուսակում ներկայացվում են նշված մեթոդով ՀՀ հարկային բեռի փոփոխությունները վերջին տարիների կտրվածքով:

*Աղյուսակ 1*

**ՀՀ «հարկային բեռը» 2008-2010 թվականների կտրվածքով**

Ցուցանիշները	2000թ.	2008թ.	2009թ.	2010թ.
1. ՀՆԱ, մլրդ դրամ	1031.3	3568.2	3141.7	3501.6
2. Պետական բյուջեի հարկային եկամուտներ, մլրդ դրամ	143.6	432.4	395.6	442.4
3. «Հարկային բեռը» (2տ:1տ)×100%	13.9%	12.1%	12.6%	12.6%

Աղյուսակի տվյալները ցույց են տալի, որ հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերությունը 2000, 2008-2010թթ. ընթացքում գտնվել է 13.9, 12.1-12.6 տոկոսի սահմաններում: Ընդ որում, առավելագույն մակարդակը տեղ է գտել 2000թ.՝ 13.9 տոկոսի չափով, իսկ նվազագույնը՝ 2008թ.՝ 12.1 տոկոս:

Բոլոր դեպքերում «հարկային բեռի» հաշվարկային ցուցանիշները կրկին նկատելիորեն զիջում են ավելի վաղ բերված ԱՊՀ երկրների նույն ցուցանիշի մակարդակներին՝ 24.8:

Որոշ տնտեսագետներ, ինչպես արդեն նշվել է, նման իրավիճակի հիմնական պատճառ համարում են ստվերային տնտեսության աճը, մյուսները՝ կիրառվող հարկերի բարձր դրույքաչափերը, թեև դրանք մեկը մյուսից բխող պատճառներ են: Սակայն մենք համամիտ չենք նման կարծիքի հետ, որովհետև, ի տարբերություն շատ երկրների (օրինակ՝ Ֆրանսիայում կիրառվում է մոտ 60 հարկատեսակ և պարտադիր վճար, իսկ ՌԴ-ում՝ 30) ՀՀ-ում կիրառվող հարկատեսակների քանակը քիչ է՝ ընդամենը 6 հարկատեսակ և 3 պարտադիր վճար, և դրույքաչափերն էլ բարձր չեն: Օրինակ՝ ՌԴ-ում ԱԱՀ-ի դրույքաչափերը տատանվում են 10-30%-ի սահմաններում, իսկ ՀՀ-ում 20% է, բոլոր զարգացած երկրներում եկամտահարկի դրույքաչափերը շատ ավելի բարձր են՝ մինչև 30%-40%, քան ՀՀ-ում՝ 10-20% և այլն: Մեր կարծիքով, հարկային բեռի ծանրությունը պետք է դիտել բյուջետային ֆինանսավորման համատեքստում: Երբ հարկային ծանր բեռի պայմաններում թե՛ տնտեսվարող սուբյեկտը և թե՛ ֆիզիկական անձը պետական միջոցների հաշվին շատ ավելի մեծ «օգնություն», ավելի շուտ աջակցություն է ստանում, ապա այդ բեռը զգալիորեն թեթևանում է: Այս տեսանկյունից ՀՀ ձեռնարկատերերը պետական հովանավորչություն, աջակցություն կարելի է ասել համարյա չեն ստանում, բայց դրա հետ մեկտեղ նրանց դեմ կիրառվում է կոշտ հարկային վարչարարություն:

Նման մոտեցում պետք է ցուցաբերվի նաև ֆիզիկական անձանց հարկային բեռի հաշվարկման դեպքում: Միայն վերջին տարիներին ՀՀ բյուջեն ունի հիմնականում սոցիալական ուղղվածություն, և ծախսային ուղղություններում գերակշռում է սոցիալական բնույթի ծախսային ուղղությունը՝ 28% բոլոր ծախսերի նկատմամբ, մասնավորապես պետությունն իր վրա է վերցրել բնակչության ամբուլատոր բուժօգնության ծախսերը, ընդլայնվել են պետպատվերի շրջանակները: Սակայն այս բոլոր միջոցառումներն իրենց ծախսային ծավալներով (նկատի

ունենք տեսակարար կշիռները) շատ ավելի հեռու են զարգացած երկրների սոցիալական ծրագրերի ֆինանսավորման ծավալներից :

Ելնելով վերոհիշյալից՝ առաջարկում ենք վերը նշված «հարկային բեռի» ցուցանիշը համադրել պետական միջոցների հաշվին ՀՆԱ-ի ֆինանսավորման ծավալների (պետական բյուջեից տնտեսության իրական հատվածին տրամադրվող միջոցների ծավալի) ու սոցիալական ուղղության ծախսերի գումարի և ՀՆԱ-ի հարաբերակցության հետ, որպեսզի որոշվի, թե որքանով է հարկային բեռի ծանրությունը թեթևանում պետական միջնաժամկետ ծրագրերի ֆինանսավորմամբ: Մեր կարծիքով նման մոտեցումն առավել ճիշտ է արտացոլում տվյալ երկրի հարկային բեռի մակարդակը: Նման ձևով կարելի է գնահատել ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց հարկային բեռի մակարդակը:

Իրավաբանական անձանց տարբեր բյուջեներ վճարված հարկերի հանրագումարի և դրանց համախառն եկամտի հարաբերակցությունը պետք է համադրել բյուջեներից տնտեսության իրական հատվածին (քանի որ այս հատվածում է ստեղծվում ՀՆԱ-ն) հատկացված միջոցների և ՀՆԱ-ի հարաբերակցության հետ:

Իսկ ֆիզիկական անձանց հարկային բեռի գնահատման համար անհրաժեշտ է նրանց կողմից վճարված հարկերի հանրագումարի և իրենց համախառն եկամտի հարաբերակցությունը համադրել պետության կողմից ֆինանսավորվող սոցիալական ծախսերի և նրանց համախառն եկամտի հարաբերակցության հետ:

Հարկային բեռի հաշվարկման նման մոտեցումը հնարավորություն կտա որոշելու, թե հարկային բեռի որ մասն է ծածկվում պետական աջակցության, այսինքն՝ ֆինանսավորման շնորհիվ: Մեր կարծիքով սրա մեջ է առավելապես հարկային բեռի ծանրության թեթևացումը, այլ ոչ թե հարկային դրույքաչափերի իջեցման կամ գանձվող հարկատեսակների քանակի նվազեցման մեջ: Հենց սրանով էլ պայմանավորված է զարգացած երկրների հարկային քաղաքականության արդյունավետությունը, երբ որոշ երկրներում հարկային գանձումները հաճախ կազմում են տնտեսվարող սուբյեկտի կամ ֆիզիկական անձի համախառն եկամտի որոշ դեպքերում նույնիսկ 50%-ը գերակշռող մասը, սակայն վերջիններս այդքան սուր չեն զգում հարկային բեռի ծանրությունը, քանի որ այն բավականին թեթևանում է պետական ֆինանսական աջակցության շնորհիվ:

**Давид Мурадян**

## **Необходимость оценки налогового бремени и расчета методологических подходов**

### **Аннотация**

Снижение тяжести налогового бремени на самом деле может иметь прямое влияние на рост налоговых доходов, способствуя экономическому росту и сокращая размеры теневой экономики. В статье отражены экономическое значение и вопросы расчета показателя «Налоговое бремя». Определяется общий подход для различия калькуляции «Налогового бремени».

**Davit Muradyan**

## **The Need to Assess Tax Burden and the Calculation of Methodological Approaches**

### **Abstract**

In fact, reduction of the weight of the tax burden may have a direct impact on the growth of tax revenue to promote economic growth and reduce the size of shadow economy. The article describes the economic meaning and the calculation problems of "Tax Burden." The common approach to various "Tax Burden" calculation methods is defined.

**ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ**

ՄԺԾԾ առանցքային հարցերից են պետական եկամուտների քաղաքականության ուղղվածությունը և դրանց կանխատեսելիությունը միջնաժամկետ հեռանկարում: Պետական ծախսերը ներքին ֆինանսական ռեսուրսներով ապահովելու պահանջը, ինչպես և նախորդ տարիներին, պետական եկամուտների քաղաքականության հիմնական խնդիրն է, որի լուծումը հնարավորություն է ընձեռում կառավարությանը, ի հաշիվ սեփական ռեսուրսների, իրականացնելու արդյունավետ, խթանող ծախսային քաղաքականություն: Այս թիրախի հասանելիության տեսանկյունից առավել ընդգծվում է հարկային քաղաքականության դերը, քանի որ պետական եկամուտների գերակշիռ մասը կազմում են հարկային եկամուտներն ու պետական տուրքերը:

Պետք է փաստել, որ ժամանակակից գլոբալացման արդյունքում, երբ երկրների միջև զարգացել են ոչ միայն արտաքին առևտրի հարաբերությունները, այլ նաև կապիտալի շարժը մի երկրից մյուսը միաձուլել է տարբեր երկրների ներդրումային հարաբերությունները, ինչպես վարկային, այնպես էլ ուղղակի ներդրումների ձևով: Իսկ դա անխուսափելիորեն կապված է, ինչպես ընդգծել են վերոհիշյալ տեսաբանները, հարկային քաղաքականության դրսևորման հետ: Այսինքն՝ խիստ անհրաժեշտություն է առաջանում կոորդինացնել տարբեր երկրների հարկային քաղաքականությունները, որպեսզի ձեռնարկատերերը, որոնք գործունեություն են ծավալում մի շարք երկրներում, չհանդիպեն խոչընդոտների ի դեմս տարբեր երկրներում գործող ներդրումային պայմանների, այդ թվում նաև հարկավորման տարբեր պայմանների: *Ներկայումս մենք չենք կարող հիմնականում մատնանշել մի երկիր, որն իրականացնում է անկախ հարկաբյուջետային, դրամավարկային, ներդրումային քաղաքականություն:*

Վերոհիշյալի վառ օրինակն է միջազգային տարբեր կազմակերպությունների ստեղծումը, որոնք հենց կոչված են իրականացնել տարբեր երկրներում տնտեսավարման իրավիճակների համահարթեցում, միասնականացում: Օրինակ՝ ԱՄՆ-ն կոորդինացնում, համաձայնեցնում է անդամ երկրների դրամավարկային քաղաքականությունները, ինչը կարևոր նշանակություն ունի նաև հարկային քաղաքականության մշակման տեսանկյունից: ԱՀԿ-ն, որդեգրելով այսպես կոչված «խտրականության բացառման» սկզբունքը, պարտադրում է անդամ երկրներին իրականացնել համարյա միևնույն (ինքնուրույն թողնելով միայն հարկային, մաքսային դրույքաչափերի միջակայքում մանրելու հնարավորությունը) մաքսային և հարկային քաղաքականությունը մասնավորապես տարբեր երկրների ապրանքատեսակների նկատմամբ: Իսկ Եվրախորհուրդը անդամության հիմնական պայման համարում է երկրներում գործող օրենքների, այդ թվում նաև տնտեսական օրենքների համապատասխանեցումը ժողովրդավարությանը: Այսպիսով, *գլոբալացման արդյունքում տարբեր երկրների հարկային քաղաքականությունները միջազգային մասշտաբով միասնականացվում, համահարթեցվում են, որոշ դեպքերում նույնիսկ ի վնաս որևէ կոնկրետ երկրի շահերի:* ՀՀ հարկային քաղաքականության հիմքում էլ է դրված զարգացած երկրներում ընդունված նոր դասականների տեսությանը համահունչ մոնետարիստական տեսությունը, այն է՝ ցածր դրույքաչափերի կիրառում, հարկային արտոնությունների կրճատում, ձեռնարկատիրության և ունևոր խավերի հարկային բեռի թեթևացում, տնտեսությանը պետության կողմից միջամտման բացառում, ուղղակի հարկատեսակների գերակշռում անուղղակիների նկատմամբ և այլն:

Ներկայումս, համաձայն վերոնշյալ տեսության, ՀՀ-ում գործում է փոքր քանակի ընդամենը 6 հարկատեսակներ, 4 պարտադիր վճարներ, կիրառվում են համեմատաբար ցածր դրույքաչափեր, օրինակ՝ միջազգային պրակտիկայում կիրառվում է ԱՄՆ-ի մինչև 30% դրույքաչափ, ՀՀ-ում՝ 20%, շահութահարկի մինչև 40%-ի նկատմամբ ՀՀ-ում կիրառվում է 20% դրույքաչափ, նույնը վերաբերում է եկամտահարկին, և իհարկե սահմանված են հարկային նվազագույն

արտոնություններ: Սակայն ՀՀ հարկային համակարգում անուղղակիների հարկատեսակները գերակշռում են ուղղակիներին:

Առավել մանրամասն վերջին երեք տարիների կտրվածքով ՀՀ պետական բյուջեի եկամուտների կազմի և կառուցվածքի (տե՛ս աղյուսակ 3) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկային եկամուտները կազմում են վերջինիս ընդհանուր եկամուտների մոտ 76 տոկոսը: Ինչպես տեսնում ենք, պարտադիր սոցիալական վճարները կազմում են ընդհանուր եկամուտների մոտ 14%-ը: Սակայն պետք է նշել, որ ՀՀ «կենսաթոշակային ապահովագրության մասին» նոր օրենքի ուժի մեջ մտնելուց հետո պարտադիր սոցապ վճարների մեծ մասը կուղղվի համապատասխան ներդրումային հիմնադրամներ, և պետական եկամուտների կառուցվածքում հարկերը կկազմեն բացարձակ գերակշիռ բաղկացուցիչը: Վերոհիշյալը ապացույցն է այն անվիճելի փաստի, որ հարկերը, կատարելով ֆիսկալ գործառույթը, պետական ֆինանսական միջոցների ձևավորման հիմնական աղբյուրն են, որով և պայմանավորված է հարկային քաղաքականության գերակա դերը պետական հարկաբյուջետային քաղաքականության ենթատեքստում:

*Աղյուսակ 1*

**2009-2011 թվականների ՀՀ պետական բյուջեի եկամուտների կազմի և կառուցվածքի փոփոխությունները (մլրդ դրամներով)<sup>1</sup>**

<b>Եկամտատեսակը</b>	<b>2009թ.</b>	<b>2010թ.</b>	<b>2011թ.</b>
Պետական բյուջեի եկամուտներ, որից`	905.4	742.1	852.4
<i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	100	100	100
1. Հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	855.9	675.2	773.4
<i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	94.5	91	90.7
1.1. Հարկային եկամուտներ և պետական տուրք	727.5	570	650.0
<i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	76.3	76.8	76.2
1.2. Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	128.4	105.2	123.4
<i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	9.5	14.1	14.5
2. Պաշտոնական դրամաշնորհներ	34.7	42	56.0
<i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	14.2	5.6	6.5
3. Այլ եկամուտներ	14.8	24.4	22.9
<i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	1.6	3.3	2.7

Հարկային համակարգի զնահատման տեսանկյունից կարևորվում է նաև հարկատեսակների կառուցվածքի ուսումնասիրությունը` ըստ դրանց բնույթի, ուղղակի և անուղղակի հարկատեսակների:

Վերջին տարիների կտրվածքով ՀՀ պետական բյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների կազմի և կառուցվածքի հետազոտության արդյունքում (տե՛ս աղյուսակ 2) կարելի է փաստել, որ գերակշռող հարկատեսակը ԱԱՀ-ն է, որը անուղղակի հարկատեսակ է և կազմում է ընդհանուր եկամուտների 42-56%-ը: Հատկապես ԱԱՀ-ի մասնաբաժինը պետական եկամուտների ձևավորման գործընթացում գերակշռող է դառնում ճգնաժամային իրավիճակներում, օրինակ` շեշտակի աճ է նկատվել 2009թ.-ին 2007թ. համեմատ ընդհանուր հարկային եկամուտների 49%-ից դարձել է 56.6%, այսինքն` աճել է մոտ 8%-ով: Բնականաբար, երբ տնտեսական աճը անկում է ապրում, և մեծանում է գործազրկության մակարդակը, նվազում է այնպիսի հարկատեսակների հավաքագրումը, ինչպիսիք են` շահութահարկը` համապատասխանաբար 14.9% -12.9%, եկամտահարկը` համապատասխանաբար 9.2% -8.5%, չնայած վերջինիս գծով հետագայում նկատվել է աճի միտում:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. ընթացքում: Ե. 2010թ., էլեկ. տարբ., էջ 110-111: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. ընթացքում: Ե. 2011թ., էլեկ. տարբ., էջ 106: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. ընթացքում: Ե. 2012թ., էլեկ. տարբ., էջ 107-108 :

Հարկային համակարգի գնահատման տեսանկյունից նպատակահարմար է ուսումնասիրել նաև ուղղակի և անուղղակի հարկատեսակների կառուցվածքը պետական բյուջե եկամուտների նկատմամբ, ինչի համար կազմվել է նաև աղյուսակ թիվ 3-ը: Անուղղակի հարկերի կազմում ընդգրկել ենք ԱԱՀ-ն, ակցիզային հարկը, մաքսատուրքը, պարզեցված հարկը (չնայած վերջինս ուղղակի և անուղղակի հարկատեսակներին փոխարինող հարկատեսակ է, սակայն իր բնույթով բազմաթիվ տնտեսագետների կարծիքով վեր է ածվել անուղղակի հարկատեսակի՝ սահմանվելով շրջանառության նկատմամբ): Ուղղակի հարկատեսակների կազմում ներառել ենք շահութահարկը, եկամտահարկը, բնապահպանական և բնօգտագործման պարտադիր վճարները, իսկ ինչ վերաբերում է հաստատագրված վճարներին, ապա միանշանակ դրանք չեն կարող համարվել ո՛չ ուղղակի և ո՛չ էլ անուղղակի հարկ և ընդգրկվել են այլ եկամուտների կազմում:

Աղյուսակ 2

**2007-2011թթ. ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկերի կազմի և կառուցվածքի փոփոխություններ (մլրդ դրամներով)<sup>1</sup>**

Ցուցանիշներ	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
1. Հարկային եկամուտներ <i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ այդ թվում</i>	483.7 <i>100</i>	598.8 <i>100</i>	503.3 <i>100</i>	574.1 <i>100</i>	630.1 <i>100</i>
2. Անուղղակի հարկեր <i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	323.5 <i>66.9</i>	418.2 <i>69.8</i>	328.2 <i>65.2</i>	388.4 <i>67.7</i>	391.2 <i>62.1</i>
3. Ուղղակի հարկեր <i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	131.5 <i>27.2</i>	139.9 <i>23.4</i>	141.0 <i>28</i>	151.7 <i>26.4</i>	178.9 <i>28.4</i>
4. Այլ հարկային եկամուտներ <i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	28.7 <i>5.9</i>	40.7 <i>6.8</i>	33.8 <i>6.7</i>	32.0 <i>5.6</i>	48.0 <i>7.6</i>

Ինչպես երևում է աղյուսակից, ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտների գերակշռող մասը կազմում են անուղղակի հարկատեսակները՝ ընդհանուրի մոտ 65%-ը, և տարիների ընթացքում այդ հարաբերակցությունն էական փոփոխության չի ենթարկվել: Իսկ ուղղակի հարկատեսակները կազմում են ընդհանուր եկամուտների մոտ 27%-ը, այլ եկամուտները՝ մոտ 6-8%-ը:

ՀՀ հարկային համակարգի արդյունավետության գնահատման ենթատեքստում նպատակահարմար է նաև համեմատել տարբեր հարկատեսակների կառուցվածքը այլ երկրներում առկա նմանատիպ կառուցվածքների հետ: Այդ նպատակով կազմվել է թիվ 3 աղյուսակը:

Աղյուսակ 3

**Եվրոպական միության երկրների և Հայաստանի Հանրապետության բյուջեներում առանձին հարկատեսակների տեսակարար կշիռները (տոկոսներով)<sup>2</sup>**

Հարկատեսակները	Տեսակարար կշիռը ԵՄ երկրներում	Հանրապետությունում տեսակարար կշիռները		
		2009թ.	2010թ.	2011թ.
Անձնական հարկատեսակներ	40	9.6	10.6	10.5
Կորպորատիվ շահութահարկեր	10	12.9	11.1	12.6
Սոցիալական վճարներ	30	16.5	15	16.3
Ավելացված արժեքի հարկ	10	56.6	43.1	42
Մաքսատուրք	5	4	4.2	4.5
Այլ հարկեր	5	10.0	12.0	26.5.0

Առաջին հերթին անհրաժեշտ է նկատել, որ ԵՄ երկրներում գերակշռում են ուղղակի հարկերը՝ անձնական եկամուտների և շահույթի նկատմամբ, ինչպես նաև սոցիալական մուծում-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2007թ. ընթացքում, Ե. 2008թ., էլեկ. տարբ., էջ 110-111: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008թ. ընթացքում, Ե. 2009թ., էլեկ. տարբ., էջ 106: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. ընթացքում, Ե. 2011թ., էլեկ. տարբ., էջ 107-108:

<sup>2</sup> Финансы. Под ред. В.В.Ковалева М. 2004. С. 81:

ները: Դրանք կազմում են բյուջեների 80 տոկոսը: Մինչդեռ դրան զուգահեռ հանրապետության այդ ցուցանիշներն արտացոլող տողերի հանրագումարը 2009թ. կազմել է ընդհանուրի 28, 2010թ.՝ 26.4 և 2011թ.՝ 28.4 տոկոսը:

Դրական պետք է դիտել այն, որ ԵՄ երկրների բյուջեներում շահութահարկը կազմում է 10 տոկոս, մինչդեռ ԳՀ-ում 2009-2011թթ. այդ հարկատեսակից մուտքերը կազմել են համապատասխանաբար 11.1 և 12.6 տոկոս: Հանրապետությունում մաքսատուրքն ունի մոտավորապես նույն տեսակարար կշիռը, ինչ ԵՄ երկրներում է:

ԵՄ երկրների բյուջեների եկամուտների նկատմամբ հիմնական տարբերությունը վերաբերում է ավելացված արժեքի հարկին: Ի տարբերություն ԵՄ երկրների (10 տոկոս)՝ հանրապետությունում այս հարկատեսակն ըստ տարիների կազմում է հարկերի և վճարների 42-56 տոկոսը: Նկատելի է տարբերությունը նաև սոցիալական պարտադիր վճարների գծով՝ 30 տոկոսի փոխարեն հանրապետությունում հավաքագրվում են շուրջ 17 տոկոս սոցիալական վճարներ: Սակայն պետք է նշել, որ ԵՄ-ի սոցիալական վճարների կազմում ընդգրկված են նաև բժշկական ապահովագրության պարտադիր վճարները, որոնք դեռևս ԳՀ-ում չեն կիրառվում, չնայած մոտ ապագայում նախատեսվում է համապատասխան օրենքի ընդունում: Բնականաբար այս ցուցանիշը մեր երկրում և ԵՄ-ում տարբեր բովանդակություն ունեն, և համեմատությունը պետք է կատարել որոշակի վերապահումով:

Անուղղակի հարկերի գերակշռումը ուղղակիի նկատմամբ մեկ անգամ ևս ապացուցում է այն փաստը, որ տնտեսական զարգացումը և բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները, այն է տնտեսավարող սուբյեկտների համար շահույթի, իսկ անհատների համար՝ անձնական եկամուտների մեծությունը դեռևս հեռու են բավարար, առավել ևս կատարյալ համարվելուց, և հետևաբար դրանց նկատմամբ հաշվարկված հարկերն էլ չեն կարող հանդիսանալ պետական բյուջեի եկամուտների ձևավորման հիմնական աղբյուր, ինչպես զարգացած շատ երկրներում: Այդ պատճառով պետական բյուջեն համապատասխան եկամուտներով համալրման հիմնական աղբյուրը ցավոք սրտի ԳՀ-ում անուղղակի հարկերն են: Ըստ էության ԳՀ հարկային քաղաքականության հիմնական նպատակի իրականացումը՝ բնակչության կենսամակարդակի բարձրացումը, այսինքն՝ առաջին հերթին նրանց եկամուտների հարատև աճի ապահովումը չի իրագործվում (բազմաթիվ միջազգային կազմակերպությունների գնահատմամբ ԳՀ-ում դեռևս բարձր է աղքատության, գործազրկության մակարդակը, ցածր է անձնական եկամուտների մակարդակը և այլն), չնայած այն հանգամանքին, որ դրանց ծավալների աճ է նկատվում: Այս տեսանկյունից, ինչպես նաև տնտեսական աճի ապահովման բնագավառում ԳՀ հարկային քաղաքականությունը կարելի է ասել անարդյունավետ է կամ լավագույն դեպքում ցածր արդյունավետություն է դրսևորում:

Այսպես, ՀՆԱ-ի շարունակական աճի պայմաններում վերջինս արտադրող կազմակերպությունների ֆինանսական արդյունքի՝ շահույթի ծավալների աճի տեմպերը բավարար չեն ոչ միայն ապահովելու պետության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համալրումը, այլև հենց իրենց կազմակերպությունների ինքնաֆինանսավորման համար, այսինքն՝ ներդրումային միջոցների սուղ հնարավորություն են ապահովում, որովհետև շահույթը շուկայական տնտեսավարման պայմաններում ներդրումներ կատարելու միակ աղբյուրն է:

Ամփոփելով վերոհիշյալ ուսումնասիրության արդյունքները՝ պետք է փաստել, որ *ԳՀ-ում կիրառվող հարկային քաղաքականությունը, ինչի հիմքում ընկած է միջազգային կազմակերպությունների կողմից պարտադրված մոնետարիստական տեսությունը (տնտեսության զարգացմանը պետության միջամտության բացառում, ցածր հարկային բեռ կորպորացիաների և ունևոր խավի նկատմամբ, նվազագույն հարկային արտոնությունների կիրառում, ուղղակի հարկատեսակների գերակշռում) առանց հաշվի առնելու մեր երկրի զարգացման առանձնահատկությունները՝ բնակչության գերակշռող մասի եկամուտների անհամեմատ ցածր մակարդակ, գործազրկության բարձր տեսակարար կշիռ, տնտեսավարող սուբյեկտների սուղ ֆինանսական հնարավորություններ՝ տրանսնացիոնալ հզոր կազմակերպությունների հետ մրցակցելու համար, անարդյունավետ է:* Քանի որ մեր հանրապետության նման նոր զարգացող երկրներում թերզարգացած տնտեսությամբ և սոցիալական սուր խնդիրների առկայության պայմաններում պետական եկամուտների համալրման գործընթացում շեշտադրումը դնել ուղղակի հարկատե-



սակների վրա, իրատեսական չէ: Այդ մասին են վկայում վերը ներկայացված ցուցանիշները: Նման իրավիճակում պետությունը անխուսափելիորեն պետք է մասնակցի տնտեսության անմիջական ֆինանսավորման գործընթացին, այսինքն՝ ուղղակի ներդրումների ձևով, այլ ոչ թե վարկավորմամբ՝ հիմնականում միջազգային վարկերի հաշվին, որը բնականաբար մեծացնում է արտադրության և իրացման ծախսերը և մեր արտադրանքը դարձնում անմրցունակ: Որպեսզի տնտեսավարող սուբյեկտները մեղմացնեն վարկային բեռը, կրճատում են աշխատողներին վճարվող եկամուտները կամ անցնում են ստվերային տնտեսության վարմանը, իսկ պետությունը ստիպված պետական համապատասխան ֆինանսական միջոցների համալրման համար շեշտադրումը դնում է անուղղակի հարկատեսակների վրա: Այստեղից հետևություն, որ գլոբալացման արդյունքում տարբեր տնտեսական և սոցիալական իրավիճակներում գտնվող երկրներում հարկաբյուջետային, մասնավորապես հարկային քաղաքականությունների միասնականացումն անարդյունավետ է հատկապես թերզարգացած երկրների համար: ՀՀ կառավարությունը պետք է հնարավորինս դիմակայի միջազգային կազմակերպությունների ճնշումներին, որոնք վնասաբեր են երկրի համար:

Ըստ “Aerplac” կազմակերպության տվյալների՝ սույն թվականի հուլիսի 28-ին հաղորդագրությանը ԱՄՆ-ն նորից առաջարկում է ՀՀ կառավարությանը լրացուցիչ մի շարք փոփոխություններ կատարել հարկային քաղաքականության բնագավառում, մասնավորապես վերացնել դիզելային վառելիքի նկատմամբ կիրառվող ԱՄՆ-ի արտոնությունը, բարձրացնել ակցիզային հարկի դրույքաչափերը: Չնայած ՀՀ կառավարության մերժմանը՝ նրանք առաջարկում են հետագայում իրականացնել նշված փոփոխությունները, իսկ 2015թ., ըստ ընդունված հարկային ռազմավարության, կվերանայվեն նաև զինծառայողների և գյուղացիական տնտեսությունների եկամտահարկի արտոնությունները, որոնք իհարկե սոցիալական լուրջ խնդիրներ կստեղծեն, իսկ դիզելային վառելիքի նկատմամբ կիրառվող ԱՄՆ-ի արտոնության վերացումը կբարձրացնի շինարարական, գյուղատնտեսական, որոնք իմիջիայլոց գերակա ոլորտներ են համարվում առաջիկա տարիների, աշխատանքների արժեքը, քանի որ այդ ոլորտներում են հիմնականում գործում այն տրանսպորտային միջոցները և մեխանիզմները, որոնք օգտագործում են դիզելային վառելիք: Այսինքն՝ ԱՄՆ-ին բոլորովին չի հետաքրքրում ՀՀ այն ճյուղերի զարգացումը, որոնք ՀՀ-ում ներկայումս աճի միտում ունեն, և ոչ էլ երկրում սոցիալական վիճակի հիմնախնդիրները: Նրանց հիմնականում հետաքրքրում է ՀՀ-ում կիրառվող հարկային քաղաքականությունը հնարավորինս հարմարեցնել իրենց կողմից որդեգրված մոնետարիստական տեսությանը, այն է՝ կրճատել հարկային արտոնությունների քանակը, նույնիսկ տվյալ երկրի շահերին ի վնաս:

**Давид Мурадян**

## **Оценка эффективности налоговой системы РА**

### **Аннотация**

В статье представлены теоретические основы разработки и реализации налоговой политики РА, показана эффективность ее применения. Изучено и выявлено влияние глобализации на содержание налоговой политики в разных странах. Проанализирован состав и структура налоговых доходов за последние 3 года, в результате чего выявлены, в частности, изменения соотношений прямых и косвенных налогов и их причины.

**Davit Muradyan**

## **Tax System Efficiency Assessment in Armenia**

### **Abstract**

The article presents theoretical principles for the development and implementation of tax policy in Armenia, and justifies the efficiency using them. The influence of globalization on the essence of fiscal policy in different countries has been studied and identified. Composition and structure of the tax revenue in 2009-2011 have been analyzed, which, in particular, identify changes in direct and indirect taxes to the budgeted ratios and their causes.

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Դարեր շարունակ պետական պարտքը եղել է համաշխարհային ֆինանսատնտեսական համակարգի անբաժանելի մասը: 20-րդ դարում տեղի ունեցած միջազգային տնտեսական հարաբերությունների թռիչքային զարգացումներ, որոնք կապված էին մարդկության առաջ ծառայած համընդհանուր լուծումներ պահանջող հիմնախնդիրների հետ: Դրա հետևանքով փոփոխության ենթարկվեցին պարտքային կապիտալի միջազգային տեղաշարժի քանակական և որակական բնութագրիչները: Միջազգային պարտքային հարաբերությունները հանդիսացան գլոբալացման գործընթացի շարժիչ ուժերից մեկը: Իրենց հերթին միջազգային վարկային կազմակերպությունները վերջին 50 տարիների ընթացքում դարձան պարտքային հարաբերությունների կազմավորման ինստիտուտներ: Անհնար է տնտեսությունը պատկերացնել առանց փոխատվական կապիտալի շուկայի, որը ժամանակակից պայմաններում տնտեսական հարաբերությունների անհրաժեշտ գործիքներից մեկն է: Քանի որ դրամական միջոցները չեն կարող միաժամանակ մատչելի լինել տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար, դրանցից շատերը, ունենալով սուղ միջոցներ և ցանկանալով ապահովել անխափան տնտեսական գործունեություն, այդ միջոցները ձեռք են բերում ներգրավման ճանապարհով՝ առաջացնելով փոխատվական հարաբերություններ:

Փոխատվական կապիտալի միջազգային շուկայի շրջանակներում մեկ երկրի կառավարությունը, բանկերը կամ մասնավոր ընկերությունները, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունները միջոցներ են տրամադրում այլ երկրի կառավարությանը, բանկերին և մասնավոր ընկերություններին: Տվյալ դեպքում վարկատուի և վարկառուի դերում հանդես են գալիս ոչ թե անհատները, այլ մասնավոր կառույցները, պետական հիմնարկներն ու կառավարությունը և, իհարկե, միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունները:

Արտաքին պարտքի հիմնախնդիրները համաշխարհային տնտեսության մեջ կարևորագույն լուծում պահանջող խնդիրներից են: Բազմաթիվ երկրների տնտեսական վիճակը բնութագրվում է պետական պարտքի բավականին մեծ ծավալներով, ինչպես նաև դրա սպասարկման՝ մարման և տոկոսավճարների բարձր մակարդակով: Այդ իսկ պատճառով պետական պարտքի պետական կառավարման ճիշտ մոտեցումը մեծ նշանակություն ունի արդի պայմաններում: Պարտապան են գրեթե բոլոր երկրները, այդ թվում՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ֆրանսիան և այլն: Սակայն եթե զարգացած երկրները սովորաբար լրիվ վճարունակ են, ապա շատ զարգացող երկրների համար արտաքին պարտքը մեծ դժվարություններ է ներկայացնում: Դրանք մտնում են պարտքային օղակի մեջ, երբ չեն կարողանում մարել նույնիսկ տոկոսադրույքները և միջոցներ են փոխառում պարտքի սպասարկման համար: Այս դեպքում եթե արտաքին պարտքը գերազանցում է ՀՆԱ-ի 60%-ը, կամ պարտքի սպասարկման ծախսերը գերազանցում են արտահանման 40%-ը, ապա դրությունը վտանգավոր է համարվում: Աշխարհում գրեթե չկա պետություն, որը չունենա ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պարտք: Առաջին շարքում դասվում են որպես կանոն զարգացած երկրները, երկրորդին՝ զարգացող երկրները:

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը (ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները) պայմանավորված է բյուջեի պակասորդի ֆինանսավորման ներքին աղբյուրների սահմանափակության պայմաններում արտաքին միջոցների ներգրավման անհրաժեշտությամբ: Խորհրդային Միության փլուզման հետևանքով անկախություն ձեռք բերած երկրներն առնչվեցին բազմաթիվ նոր խնդիրների, դրանցում նշանակալից տեղ ունեն արտաքին պարտքի ձևավորումն ու կառավարումը: Այդ երկրներում տիրող տնտեսական ծանր վիճակը, նախկին տնտեսական կապերի խզումն անխուսափելիորեն ստեղծեցին արտասահմանից ֆինանսական միջոցներ ձեռք բերելու անհրաժեշ-

տություն: Բացառություն չկազմեց նաև Հայաստանի Հանրապետությունը, որը միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկեր վերցրեց՝ տնտեսական անկախությունից առաջացած վիճակը բարելավելու համար: ՀՀ արտաքին պետական պարտքը սկսեց ձևավորվել 20-րդ դարի 90-ական թվականների սկզբին՝ արտաքին փոխառությունների ներգրավմամբ: Անհրաժեշտություն առաջացավ նաև ստեղծել արտաքին պարտքի կառավարման համակարգ: Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի արդյունավետ կառավարումն աստիճանաբար դարձավ երկրի տնտեսական և քաղաքական կյանքի կարևոր հիմնախնդիրներից մեկը՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության արտաքին վարկերի ներգրավման ծավալի աճով, ինչպես նաև դրա սպասարկման (մարման և տոկոսավճարի) ծախսերի մեծացմամբ: Արտաքին պարտքի տեսքով միջոցների ներգրավումը հնարավորություն է տալիս մեծ ներդրումներ կատարելու, քան թույլ են տալիս երկրի ներքին հնարավորությունները, և նպատակ ունի խթանել ազգային տնտեսության աշխուժացումը՝ հիմքեր ստեղծելով հետագայում ներքին արտադրության և արտահանման աճի համար: 2008 թվականին սկիզբ առած ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում հակաճգնաժամային միջոցառումների պատճառով շեշտակիորեն աճեցին բազմաթիվ երկրներում պետական պարտքի կուտակած ծավալները: Որոշ մասնագետներ գտնում են, որ այս երևույթը վտանգավոր է այն պարզ պատճառով, որ կարող է հանգեցնել մեկ այլ ճգնաժամի՝ «պարտքային ճգնաժամի»<sup>1</sup>:

Ֆինանսատնտեսական ճգնաժամը վերջին տարիներին պայմանավորված է համաշխարհային տնտեսությունում անհամամասնությամբ, ինստիտուցիոնալ ոլորտում թերություններով, մրցակցության ուժեղացմամբ և երկրների փոխադարձ կապվածությամբ՝ գլոբալացման հետևանքների արագացմամբ: Եթե նախկինում այս հարցը մտահոգում էր հիմնականում աղքատ կամ ցածր եկամուտ ունեցող երկրներին, այժմ այն խնդրահարույց է այնպիսի զարգացած երկրներին, ինչպիսիք են Հունաստանը, Պորտուգալիան, Իսպանիան և Իռլանդիան:

Ինչպես հայտնի, է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հիմնական հարվածն ընկավ 2009 թվականի վրա, որը սկսեց ԱՄՆ-ի հիպոթեքային շուկայից, այնուհետև տարածվեց ամբողջ աշխարհի վրա: Որոշ գնահատականներով այս ճգնաժամը ամենախորն էր 30-ական թթ. մեծ դեպրեսիայի ժամանակներից ի վեր: Գնաժամը հարվածեց բոլոր երկրներին, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետությանը: Այս աննախադեպ ճգնաժամին պատրաստ չէին ո՛չ երկրի կառավարությունը, ո՛չ էլ մասնավոր հատվածները: Նման պայմաններում պարտքի խելամիտ կառավարումը կարևոր դեր է խաղում պետական հատվածի ֆինանսների կառավարման գործընթացում: Սա ավելի կարևոր նշանակություն է ձեռք բերում փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրների համար, երբ ներքին տնտեսությունն ունի ռեսուրսների սահմանափակվածություն, իսկ տնտեսական աճին նպաստող հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնելու համար կառավարությունը պարտադրված է լինում պարտք ներգրավել: Հետևաբար, նման իրավիճակում կառավարությունը պետք է վստահ լինի, որ փոխառության քաղաքականությունն ապագայում չի բերի անկայուն դիրքի, չի մեծացնի ֆինանսավորման ծախսերը մինչև անընդունելի և ծայրահեղ մակարդակի, կամ էլ երկիրը չի դարձնի խոցելի արտաքին աշխարհի զարգացումներից: Սա պահանջում է պարտքի կառավարման գործում համակարգի կիրառում, որը բարենպաստ պայմաններում կարող է նվազեցնել բացասական ազդեցությունները և մեղմել հավանական ռիսկերը<sup>2</sup>:

Հստակ ռազմավարությունը կարող է օգնել նվազեցնել չափից ավելի փոխառությունների բեռը (դրանց առնչվող ծախսերն ու ռիսկերը)՝ հնարավորություն տալով քաղաքականություն մշակողներին ընտրել ծախսերի և ռիսկերի մի շարք տարբերակներից արդյունավետը:

<sup>1</sup> Վ.Լ. Հարությունյան, Վ. Խաչատրյան, «Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում»: -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2010, էջ 142:

<sup>2</sup> [http://www.minfin.am/up/macroid/DSA\\_12.10..pdf](http://www.minfin.am/up/macroid/DSA_12.10..pdf)

**ՀՀ կառավարության արտաքին պետական պարտքի հիմնական ցուցանիշները  
2009-2014թթ.(մլն ԱՄՆ դոլար)<sup>1</sup>**

	2009թ. փաստ.	2010թ. փաստ.	2011թ. ծրագր.	2012թ. ուղեմշ.	2013թ. ուղեմշ.	2014թ. ուղեմշ.
Կառավարության արտաքին պարտք (ԿԱՊ)	2,465.9	2,736.4	3,106.7	3,368.8	3,597.1	3,841.8
%ՀՆԱ-ի նկատմամբ	29.7	28.4	29.7	29.1	29.5	28.6
Պարտքի ներկա արժեք	1,833.9	2,092.6	2,414.7	2,628.7	2,848.3	3,062.9
% ՀՆԱ-ի նկատմամբ	22.1	21.7	23.1	23.1	23.0	22.8
Ընթացիկ ԿԱՊ	45.0	63.2	79.4	126.5	228.6	196.6
Ընթացիկ ԿԱՊ. Պետական բյուջեի ծախսեր(%)	1.5	2.5	2.8	4.6	7.8	6.1
Ընթացիկ ԿԱՊ. պետական բյուջեի սեփական եկամուտներ ( %)	2.1	3.2	3.6	5.3	8.7	6.8
Տոկոսավճար	24.1	38.2	50.8	55.2	55.0	54.1
Տոկոսավճար. պետական բյուջեի ծախսեր(%)	0.8	1.5	1.8	2.0	1.9	1.7
Միջին տոկոսադրույք(%)	1.0	1.5	1.9	1.8	1.6	1.5
Միջին ժամկետայնություն (տարի)	14	13	12	12	12	11
Լողացող տոկոսադրույքներով տեսակարար կշիռ(%)	27.8	28.2	33.7	30.5	36.3	39.5

Ինչպես երևում է վերը նշված տվյալներից, Հայաստանի Հանրապետության պետական պարտքի էական աճը պետք է ստիպի կառավարությանը խստացնել ռիսկերի կառավարման թույլատրելի սահմանային ցուցանիշները: Այս առումով առաջնային նշանակություն է ստանում հատկապես վերաֆինանսավորման, տոկոսադրույքի, փոխարժեքի ու գործառնական ռիսկերի կառավարումը: Արտաքին պարտքի գծով հատկապես կարևորություն պետք է տրվի վերաֆինանսավորման, տոկոսադրույքի և փոխարժեքի ռիսկերին:

Պարտքի տնտեսական կայունությունը վճարունակության և իրացվելիության հանրագումարն է, կամ երկրի կարողությունն առանց պարտքի վերաձևակերպման, ժամկետների խախտման և տնտեսական աճը վտանգելու ամբողջությամբ կատարել իր ընթացիկ և ապագա պարտքային պարտավորությունները: Այսինքն՝ անկախ պարտքի մակարդակից, պետությունը կարողանում է լիարժեք իրականացնել իր գործառնությունները, նպաստել բարձր տնտեսական աճին և միաժամանակ պատշաճ կատարել պարտքի գծով ստանձնած պարտավորությունները: Ծգնաժամի պայմաններում պարտքի կառավարումը ստացել է ամբողջովին նոր տնտեսական արտացոլում, այն դիտարկվում է որպես պարտքի արդյունավետ կառավարման նպատակով հատուկ ռազմավարության իրագործման և կիրառման գործընթաց, որը պետք է բավարարի կառավարության ֆինանսական պահանջումները, իսկ ավելի հստակ ծախսեր-ռիսկ հարաբերակցության ընդունելի նորման՝ հաշվի առնելով պարտքի կառավարման հետ կապված այլ նպատակներ, ինչպիսիք են՝ պետական պարտատոմսերի ամբողջ շուկայի ձևավորումը, վարկային միջոցներով մարտավարական առևտրի իրականացումը, պետության կանխիկ դրամի արդյունավետ կառավարումը և այլն:

Պարտքի կառավարումն ինքնանպատակ չէ: Արտաքին պարտքի ռազմավարությունը հետապնդում է մի քանի հիմնական նպատակ.

1. անհրաժեշտ է հստակ սահմանել կառավարման նպատակները և ձևավորել վերջիններիս իրականացմանն աջակցող աշխատանքային միջավայր (ինստիտուտներ, ապարատներ), ընտրել պետական վարկային զամբյուղի կառավարման օպտիմալ քաղաքականություն՝

<sup>1</sup> ՀՀ կենտրոնական բանկի արտաքին ակտիվների կանխատեսումների համար օգտագործվել են ՀՀ ՖՆ կանխատեսումները:

հիմնված ռիսկերի և ծախսերի արդյունավետ հարաբերակցություն տվյալների և տեղեկատվության փոխանցման համապատասխան համակարգերի վրա:

2. Պետք է համոզվել, որ ցանկացած պարտքային գործարք իրականացվում է նախապես սահմանված պորտֆելային քաղաքականության համաձայն և առավելագույն արդյունավետությամբ:

3. Ձևավորել հաշվետվությունների հստակ տարանջատում պարտքի կառավարման միավորների միջև:

Պարտքի կառավարումը նվազագույնը պետք է բավարարի պետական փոխատվական պահանջումները՝ ներքին, թե արտաքին: Երբեմն, կախված պետության զարգացման աստիճանից, այն կարող է ներառել լիազորությունների պարտքային երաշխիքների տրամադրում, արտարժույթային սպեկուլյատիվ գործարքների իրականացում և այլն: Արտաքին պետական պարտքի կառավարումը ընդհանուր և բազմափուլ գործընթաց է, որտեղ առանձնանում են ներգրավման, օգտագործման, մարման և սպասարկման փուլերը, և դրանցից յուրաքանչյուրի կառավարումը կարևոր նշանակություն ունի արտաքին պետական պարտքի համալիր կառավարումն ապահովելու տեսանկյունից:

**Владимир Чинарян**

### **Государственный долг и его управление**

#### **Аннотация**

Финансовый кризис США постепенно начал распространяться по всему миру. И в этих условиях очень важно знать как управлять государственным долгом. Уже ясно, что долговые отношения считаются движущей силой процесса глобализации. В статье были изучены проблемы внешнего государственного долга, подходы и стратегии управления им после воздействия всемирного финансового кризиса.

**Vladimir Chinaryan**

### **External Public Debt and Issues on Its Management**

#### **Abstract**

The Global Financial Crisis started in the United States and gradually was transmitted to other countries, stressing the importance of management of external public debt. The article presents issues on the management of external public debt that reported tremendous increase owing to the negative impact of the Global Financial Crisis, and proposes approaches to the debt management, and offers solutions.

**ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ  
ԵՎ ԴՐԱՆՑ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Ինչպես և բանկային ցանկացած գործառնություն, հիփոթեքային վարկավորումը ևս զերծ չէ ռիսկերից: Ռիսկերն այստեղ կարող են ի հայտ գալ տարբեր պատճառներով՝ տնտեսական, ինֆլյացիոն, արժութային, հարկային, ինչպես նաև կարող են պայմանավորված լինել այս շուկային առավելապես վտանգավոր՝ քաղաքական շարժառիթներով: Վերջիններիս աղբյուր են մակրոտնտեսական իրավիճակը, բնակչության կենսամակարդակը, պետության ֆինանսավարկային քաղաքականությունը, անշարժ գույքի գների դինամիկան: Հիփոթեքային ռիսկերի գնահատումն ու նվազեցումը ցանկացած վարկատուի գործունեության անհրաժեշտ նախապայմաններն են և հիփոթեքային մենեջմենթի հիմքը:

Հիփոթեքային վարկավորման շուկայում ամենից տարածված ռիսկերն են.

1. վարկային,
2. տոկոսային,
3. իրացվելիության:

Քննարկենք դրանք առանձին-առանձին:

1. Վարկային ռիսկը փոխառուի կողմից վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելն է: Վարկային ռիսկից լիովին խուսափելն անհնար է, ուստի անհրաժեշտ են ուղիներ ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ: Վարկային ռիսկերի նվազեցման դասական միջոցներից մեկը փոխառուի կողմից գույքի գրավադրումն է, սակայն գրավը պարզապես լրացուցիչ ապահովության միջոց է, որը լիարժեք երաշխիք չէ վարկատուին խնդիրներից զերծ մնալու, իսկ վարկի խնդրահարույց դառնալու պատճառներից մեկը վարկային ռիսկերի կառավարման ընթացքում ծագող վարկի և գրավի միջև ռեֆլեքսիվ փոխադարձ կապն է, որն առաջին անգամ համակարգային ձևով վերլուծվել է Ջ. Սորոսի կողմից<sup>1</sup>: Վարկատուների համար կարևոր է պարզապես պահպանել խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում թույլատրելի մակարդակի վրա (համաշխարհային պրակտիկայում ընդունված է ոչ ավել, քան 5%)<sup>2</sup>: Վարկային ռիսկի նվազեցմանը նպաստում են.

- անշարժ գույքի արժեքի և վարկառուի վարկունակության ճիշտ գնահատումը,
- բռնագանձման պրոցեսում արդյունավետ մեխանիզմների կիրառումը,
- անշարժ գույքի սեփականության և գրավի իրավունքի հուսալի համակարգը,
- կառավարության երաշխավորությունների ներգրավումը հիփոթեքային վարկավորման պրոցեսներում (օրինակ՝ արտոնյալ պայմաններով բնակարանների գնման հիփոթեքի ժամանակ),
- ռեզերվային ֆոնդերի ստեղծումը,
- հիփոթեքային վարկերի ապահովագրությունը:

2. Տոկոսային ռիսկը կորուստների ի հայտ գալու հնարավորությունն է փոխառուների կողմից վճարվող տոկոսադրույքների բարձրացման արդյունքում: Տոկոսային ռիսկն ի հայտ է գալիս նրա արդյունքում, որ հնարավոր չէ կոնկրետ հաշվարկել ո՛չ իրական տոկոսադրույքի մեծությունը, ո՛չ ժամկետը և ո՛չ էլ հնարավոր տատանումները: Դա իր հերթին բերում է ներդրումներից շահույթի անկման, երբեմն նույնիսկ վնասի:

3. Իրացվելիության ռիսկի առաջացման պատճառը շուկայական կոնյունկտուրայի՝ տոկոսադրույքների, արժութային կուրսերի, արժեթղթերի շուկայի փոփոխությունն է, ավանդների մասսայական հետստացումը, բանկերի ակտիվների և պարտավորությունների մարման ժամ-

<sup>1</sup> Копейкин А., Пенкина И., Американская модель ипотечного кредитования //Рынок ценных бумаг, 1999, № 8.

<sup>2</sup> Բանկային գործ (395), գլխ. խմբագիր՝ Բագրատ Ասատրյան, Երևան 2004:

կետների անհամապատասխանությունը, բանկերի ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը և այլն: Այս ռիսկի նվազեցման համար անհրաժեշտ է վարկատուների համար հստակեցնել իրենց անհրաժեշտ միջոցների պահանջարկը և տարանջատել դրանք ըստ կառուցվածքի ու ժամկետայնության: Ժամկետայնության տեսանկյունից կարևոր է նաև ճիշտ որոշել այն ժամանակահատվածը, որի համար նպատակահարմար է տրամադրել վարկերը: Ժամկետներն անհրաժեշտ է այնպես ընտրել, որպեսզի վարկի վերջնական մարման պահին գրավի գինը չլինի չափազանց ցածր, հակառակ դեպքում վարկառուն կնախընտրի պարզապես չվերադարձնել վարկը: Ժամկետների ճիշտ գնահատման հիմնահարցը առավելապես բարդանում է բարձր ինֆլացիոն պայմաններում, քանի որ կտրուկ մեծ գնաճը կարող է այնքան նվազեցնել բանկի կողմից ստացվող տոկոսային եկամուտը, որ վերջինս հավասարազոր լինի ֆինանսական կորուստների<sup>1</sup>:

Հիփոթեքային վարկավորման ռիսկերը ստիպում են ստեղծել հակակշռող կայունացնող մեխանիզմներ: Դրանցից թերևս ամենակարևորը ապահովագրությունն է: Հիփոթեքային շուկան առանց ապահովագրական ծառայությունների գոյատևել չի կարող, որովհետև ապահովագրության ինստիտուտը հնարավորություն է տալիս նվազեցնելու կամ վերաբաշխելու հիմնական հիփոթեքային ռիսկերը՝ ապահովելով հիփոթեքի ինստիտուտի առողջ գործունեությունը: Համաշխարհային պրակտիկայում տարածված են ապահովագրության հետևյալ տեսակները.

- փոխառուի կյանքը (այդ թվում և առողջությունը),
- գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի ապահովագրությունը վնասվածքներից և կործանումից (ապահովագրությունն իրականացնում է անշարժ գույքի սեփականատերը: Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ապահովագրական փոխհատուցումը ստանում է կամ վարկատուն, կամ փոխառուն: Տվյալ գումարը պետք է ուղղվի գրավի առարկայի վերականգնմանը, այլ ոչ թե հիփոթեքային պարտավորության մարմանը),
- հիփոթեքի գծով առկա պարտավորության ապահովագրությունը (ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում, այն է՝ փոխառուն հրաժարվում է կամ ի վիճակի չէ մարել պարտավորությունը, տվյալ պարտավորության մարումն իր վրա է վերցնում ապահովագրական ընկերությունը),
- անշարժ գույքը գնահատողի պատասխանատվության ապահովագրություն:

Հիփոթեքային վարկավորման համակարգը շուկայի իրավիճակի գնահատման յուրահատուկ ցուցիչ է: Գնաժամի ի հայտ գալուն պես հիփոթեքային վարկերի տրամադրման ծավալները կրճատվեցին առաջին հերթին, իսկ վարկատուները սկսեցին նորից գնահատել և ուսումնասիրել հիփոթեքային ռիսկերը:

Ենթադրենք մի իրավիճակ, որտեղ անհատը գնել է բնակարան հիփոթեքային վարկի միջոցով, այնուհետև վերջինիս մոտ ի հայտ են եկել ֆինանսական խնդիրներ: Գաղտնիք չէ, որ, ի վերջո, վարկատուն վերադարձնելու է իր հանդեպ ունեցած պարտավորությունը բնակարանի՝ գրավի առարկայի իրացման միջոցով: Իսկ եթե իրացումից ստացված գումարը բավարար չլինի առկա պարտավորության մարմանը, ապա փոխառուն պարտավոր է վարկատուի հանդեպ իր ունեցած նաև այլ գույքերով<sup>2</sup>: Ընդ որում՝ նման պրակտիկա գոյություն չունի արևմտյան զարգացած պետություններում, ինչի արդյունքում հիփոթեքային վարկը դառնում է բավական ռիսկային պոտենցիալ փոխառուների համար:

Այդուհանդերձ առկա ռիսկերի պատճառով հիփոթեքից խուսափել անհիմաստ է և նույնիսկ անհնարին: Պարզապես անհրաժեշտ է ռիսկերը հասցնել նվազագույնի: Հետևյալ մի քանի մոտեցումներն այն հիմնական սկզբունքներն են, որոնք կիրառելի են ամբողջ աշխարհում հիփոթեքային վարկավորումը առավելապես ոչ ռիսկային դարձնելու նպատակով<sup>3</sup>.

<sup>1</sup> Трошин А.Н., Фомкина В.И., Финансы, денежное обращение и кредит. Москва. 2000. с. 84.

Уткин Э. Риск – менеджмент. Москва. ЭКМОС. 1998, с. 125.

<sup>2</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Գրավի իրավունք, Հոդված 251:

<sup>3</sup> <http://www.homefortress.ru> Ипотечные риски.

1. անշարժ գույքի գնահատման պրոցեսում մասնագիտական բարձր ունակությունների և իրական շուկայական կանխատեսումների կիրառում, որպեսզի վարկը չմարվելու դեպքում գույքի իրացումից ստացված գումարը լինի նախապես կանխատեսվածի չափ: Սակայն հարկ է այստեղ նշել, որ «հսկայական գրավ ծիծաղելի վարկի դիմաց» սկզբունքով առաջնորդվելը ճիշտ չէ, քանի որ դա բերում է վարկերի նկատմամբ պահանջարկի նվազման:
2. Վարկի ապահովագրության պրակտիկա: Այս դեպքում վարկառուն, բացի հիփոթեքային վարկի գծով վճարումներից, վճարում է նաև ապահովագրավճարներ. փոխարենը անաշխատունակության կամ այլ ծանր հանգամանքների ի հայտ գալու դեպքում ապահովագրողը պատասխանատվություն է ստանձնում վճարել վարկառուի փոխարեն:
3. Վարկի վերաֆինանսավորում. այս դեպքում փոխառուն նորից վարկավորվում է արդեն մեկ այլ վարկատու կազմակերպությունից, ամբողջությամբ մարում է առաջինի հանդեպ ունեցած իր պարտավորությունը և սկսում արդեն մարել նոր պարտավորությունը: Նոր վարկի գումարն արդեն փոքր է նախորդից, իսկ մարման վերջնաժամկետը՝ ավելի երկար, այսպիսով, նոր՝ «երկարաժամկետ» վարկի հաշվին փոխառուն նվազեցնում է իր ամենամսյա մարման գումարի չափը: Իհարկե, այստեղ առկա են բազմաթիվ դժվարություններ նոր՝ զուգահեռ վարկ ստանալու հետ կապված:
4. Վարկի վերակազմավորում. վերջինիս արդյունքում վարկառուն ստանում է մայր գումարի և տոկոսագումարների վճարման տարկետման իրավունք, սակայն պարտավորության չափը բնականորեն աճում է նոր տոկոսների կուտակմամբ:

Վերոնշյալ մեթոդներից յուրաքանչյուրը կբերի հիփոթեքային ռիսկերի նվազեցման, և ամենևին էլ պարտադիր չէ հրաժարվել հիփոթեքային վարկից նույնիսկ ճգնաժամային պայմաններում:

Յուրաքանչյուր բանկ ակտիվների հնարավոր կորուստները ծածկելու նպատակով վարում է առանձին հաշիվներ ընդհանուր և հատուկ պահուստների համար<sup>1</sup>: Ուսումնասիրելով ոլորտում առկա ռիսկերը՝ առաջարկում ենք, որպեսզի Ազգային հիփոթեքային ընկերությունը, ստանձնելով շուկայի զարգացման պատասխանատվությունը<sup>2</sup>, հանդես գա հետևյալ առաջարկությամբ. ԶԶ Կենտրոնական բանկը մեղմացնի հիփոթեքի գծով բանկերի ձևավորած ակտիվների մասով պարտադիր պահուստի մեծությունը, եթե բանկերը (վարկային կազմակերպությունները) օգտվեն լրացուցիչ ապահովագրությունից: Ապահովագրական պայմանագիրը այս պարագայում պետք է ծածկի կամ փոխառուի պատասխանատվությունը, կամ վարկային կազմակերպության գործառնական ռիսկը, ինչի վերջնական արդյունքներն ըստ էության նույնն են: Ապահովագրության այս երկու տարատեսակներն էլ այժմ իրականացվում են բացառապես կանավոր սկզբունքներով, և միայն հաճախորդի կյանքի և հիփոթեքային վարկի ապահովման միջոց հանդիսացող գույքի/գույքերի ապահովագրությունն է այսօր հայաստանյան հիփոթեքային շուկայում պարտադիր:

Ներկայումս հիփոթեքային վարկավորման շուկայում գործում են ապահովագրության մի քանի տարատեսակներ ևս, օրինակ՝ վարկառուի կյանքի և առողջության ապահովագրություն, կամ վերջինիս տիտղոսի՝ սեփականության իրավունքի ապահովագրություն: Ազգային հիփոթեքային ընկերությունն այստեղ պետք է շահագրգռված լինի, որպեսզի նման ոչ պարտադիր ապահովագրության պայմանագրերի առկայության դեպքում, ինչպիսիք են վարկառուի պատասխանատվության ապահովագրությունը, կամ վարկատու կազմակերպության գործառնական ռիսկի ապահովագրությունը, Կենտրոնական բանկը սկսի տարբերակել նման վարկերի նկատմամբ հնարավոր կորուստներից պարտադիր պահուստավորման իր պահանջները: Արդյունքում սա կառաջացնի առևտրային բանկերի կողմից «ապահովագրված» հիփոթեքային վարկեր տեղաբաշխելու պատրաստակամություն:

Առաջարկում ենք նաև ապահովագրական ընկերությունների համար սահմանել չափանիշներ, որոնցից կախված ապահովագրության ձևակերպման ընթացքում արդեն առևտրային

<sup>1</sup> ԶԶ Կենտրոնական բանկ, ԶԶ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ:  
<sup>2</sup> www.nmc.am / առաքելությունը և նպատակները:



բանկերը (վարկային կազմակերպությունները) կարող են հավակնել պահուստավորման պահանջների մեղմացման: Որպես նման չափանիշ առաջարկում ենք կիրառել վարկանիշային կազմակերպությունների կողմից տվյալ ապահովագրական ընկերությանը շնորհված վարկանիշը կամ վերջինիս բացակայության դեպքում անկախ աուդիտորական եզրակացությունը: Բացի այդ առաջարկում ենք նաև լրացուցիչ ապահովագրության առկայության դեպքում կիրառել կապիտալի համարժեքության ավելի մեղմ գործակից, օրինակ՝ 0,7:

Ակնհայտ է, որ հիփոթեքային շուկայի ընդլայնման հետ մեկտեղ աճում են նաև ռիսկերը, դրան են նպաստում նաև բանկերի կամ վարկային կազմակերպությունների ղեկավարների անձնական եկամուտների և տրամադրվելիք վարկերի միջև առկա ուղիղ կապը և շուկայում առյուծի բաժինը ստանալու՝ բանկերի կողմից մղվող պայքարը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ լրացուցիչ ապահովագրության ներդրումը թույլ կտա ապահովել պահուստավորման և կապիտալի համարժեքության ավելի ճկուն նորմատիվներ, ինչի արդյունքում բանկերին հնարավորություն կտրվի ընդլայնել հիփոթեքային վարկավորման ծավալները զոյացած ազատ միջոցների հաշվին՝ ապահովելով ռիսկերի կառավարման պատշաճ մակարդակ: Կարծում ենք՝ սա միաժամանակ թույլ կտա լուծել այնպիսի մի կարևորագույն խնդիր, ինչպիսին է անշարժ գույքի գնման հիփոթեքային վարկի նվազագույն կանխավճարի շեմի իջեցումը, քանի որ կանխավճարը վարկատուի համար ոչ այլ ինչ է, քան ևս մեկ շատ կարևոր անվտանգության բարձիկ, որը վարկատուն պատրաստ կլինի «զոհաբերել»՝ ունենալով պարտավորության կատարման մեկ այլ ոչ պակաս հուսալի երաշխիք: Ցավոք, ներկայումս ոչ պարտադիր ապահովագրության տեսակները Հայաստանում տարածված չեն: Հուսանք, որ մոտ ապագայում վերջիններս կդառնան շատ ավելի մատչելի և պահանջված:

**Артур Саядян**

## **Риски ипотечного кредитования и их смягчение**

### **Аннотация**

В статье кратко представлены все основные виды рисков на рынке ипотечного кредитования. Для избежания указанных рисков возникает необходимость создания эффективной системы страхования и ипотечного рынка, для создания механизмов, влияющих на их взаимосвязь.

Заключение содержит предложение по использованию методов, упомянутых в статье. В частности, правительство должно поощрять использование ипотеки у населения с уменьшением обязательных, установленных законом, резервов и норму достаточности капитала.

**Artur Sayadyan**

## **The Risks of Mortgage Lending Possible Mitigation**

### **Abstract**

The article briefly shows all the main types of risks in the mortgage lender market. To avoid the mentioned risks there is a necessity for an efficient insurance system of the mortgage lender market and for the creation of mechanisms affecting there interrelations.

The article proposes application of several methods. In particular, the government needs to promote receiving mortgages loans by households, by easing capital adequacy norm and mandatory statutory reserve.

**ՀԻՓՈՔԵՔԱՅԻՆ ՎԱՐԿՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳԻՆԸ**

Հիփոթեքային վարկը թեև միջոց է բնակարանային խնդրի լուծման, այնուամենայնիվ վարկային բեռը բավականին բարձր է և էապես ազդում է վարկավորված ընտանիքի բարեկեցությանը: Այս էմպիրիկ հետազոտության նպատակն է ցույց տալ, թե արդյոք ավելի ճիշտ է փոխառել մեծ գումար երկար տարիների մարման ժամկետով, թե՞ փորձել խնայել մի քանի տարիների ընթացքում, իսկ այնուհետև հիփոթեքով գնել բնակարան՝ ներդնելով ավելի մեծ կանխավճար և վարկավորվելով ավելի կարճ ժամանակահատվածով: Նախապես հայտարարենք, որ հիփոթեքային վարկը շատ ավելի ձեռնտու է այն դեպքում, երբ կանխավճարի չափը կազմում է 45-50%, իսկ վարկի տևողությունը ոչ ավել, քան 8 տարի<sup>1</sup>:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ բնակարանի ձեռքբերումը երկարաժամկետ հիփոթեքային վարկով, մեղմ ասած, այնքան էլ շահավետ չէ: Մենք կդիտարկենք 2 սցենար: Առաջին դեպքում գնվում է բնակարան 20% կանխավճարով և 10 տարի մարման ժամկետով: Երկրորդ դեպքում որոշում է կայացվում խնայել 3 տարիների ընթացքում և մեծացնել կանխավճարի չափը՝ հասցնելով այն 50%-ի: Այս դեպքում հիփոթեքային վարկը դառնում է ավելի կարճաժամկետ, իսկ այն տարիները, որոնց ընթացքում պոտենցիալ վարկառուն հրաժարվում է հիփոթեքային վարկից՝ նախընտրելով խնայել, կարող է պարզապես վարձակալել բնակարան:

Այսօր գերիշխող է այն միտքը, որ լավ է միանգամից գնել բնակարան և վճարել արդեն սեփական բնակարանի դիմաց, քան վարձակալել այն և վճարել վարձավճարներ, սակայն ներքոնշյալ հետազոտությունը ցույց կտա, որ բանկին ի վերջո վճարվում է շատ ավելի մեծ գումար, քան վարձակալության դիմաց: Ոմանց մոտ էլ կարծրացած է այն հոգեբանական վախը, որ բնակարանների գները միանշանակորեն աճելու են, և լավ է օգտվել հիփոթեքից այսօր, քան վաղը, այսինքն՝ այն տոկոսագումարները, որոնք փոխառուները վճարում են բանկերին գների հետագա աճի ռիսկը չեզոքացնելու գինն է: Իբրև հակափաստարկ նշենք, որ ներքոնշյալ հետազոտությունը ցույց կտա, որ դժվար թե գներն աճեն վարկատուներին վճարվող տոկոսագումարներից ավելի շատ: Չպետք է մոռանալ, որ ամբողջ աշխարհում այսօր առկա ճգնաժամային երևույթների հիմնական պատճառներից մեկն էլ հենց այս շուկան էր, ուստի մոտ ապագայում համաշխարհային անշարժ գույքի շուկաներում էական գների աճ դժվար թե գրանցվի:

Մեր հաշվարկների համար վերցնենք բնակարան Երևան քաղաքում 40 մլն դրամ արժողությամբ: Վերցնենք այսօր շուկայում առաջարկվող կանխավճարի նվազագույն մեծությունը, այն է՝ շուրջ 20% կամ 8 մլն դրամ: Հիփոթեքային վարկը կկազմի 32 մլն դրամ, իսկ ժամկետը ընդունենք 10 տարի (120 ամիս): Շատերը կարծում են, թե երկարաժամկետ հիփոթեքային վարկը շատ ավելի ձեռնտու է, քանի որ ամսական մարումներն ավելի քիչ են: Որպես հիփոթեքային վարկի տոկոսադրույք վերցնենք 14%: Իհարկե, վարկավորվել ավելի ցածր տոկոսադրույքով, սակայն նման էժան հիփոթեքային վարկերի առաջարկն այնքան էլ մեծ չէ: Ենթադրենք տվյալ վարկառուն ի վիճակի է յուրաքանչյուր ամիս վճարել 497 հազար դրամ հիփոթեքային վարկի դիմաց (հենց այդքան են կազմում հիփոթեքային վարկի ամսական մարումները), սակայն այս գումարի մեջ մտնում է նաև այն «հնարավոր» ռենտան, քանի որ բնակարանի ձեռքբերումից հետո ռենտա այլևս պետք չէ վճարել:

Միաժամանակ դիտարկենք այլընտրանքային տարբերակ՝ ամսական 250 հազար դրամով բնակարանի վարձակալություն, իսկ մնացած 247 հազար դրամը ուղղել կուտակային խնայողական ավանդի՝ տարեկան 8% տոկոսադրույքով: Այս պարագայում մենք կարող ենք ենթադրել,

<sup>1</sup> Разумова И.А. Ипотечное кредитование-СПб.; Питер 2009.- 71 с.


որ 8 մլն դրամ կանխավճարը նույնպես կարող ենք ներդնել ավանդային հաշվին: Երեք տարի անց պոտենցիալ վարկառու կտիրապետի 20 մլն դրամ կապիտալի և հնարավորություն կունենա ձեռք բերել բնակարան՝ իր արժեքի 50%-ի չափով կանխավճար կատարելով և ընդամենը չորս և կես տարի մարման ժամկետով: Թվային այս օրինակը վերցված է պատահական ընտրանքով: Իբրև նմանօրինակ վերլուծության հիմք կարող են ծառայել ցանկացած թվային տվյալներ: Ընդ որում, որքան ավելի «ձեռնտու» թվեր ընտրվեն, այնքան ավելի լավ ֆինանսական իրավիճակ կստացվի:

Այժմն դիտարկենք վերը ներկայացված օրինակն ավելի մանրամասն. առաջին սցենարում որոշում է կայացվում բնակարանը գնել հիփոթեքային վարկի միջոցով: Ամսական վարկի մարման չափը կկազմի 496 հազար 850 ՀՀ դրամ: Առաջին տարում փոխառուն բանկին վճարելու է 4 մլն 381 հազար դրամ տոկոս՝ մարելով վարկի կապիտալ գումարից ընդամենը 1 մլն 581 հազար դրամ: Ահա այսպիսին է իրական պատկերը, երկրորդ և երրորդ տարիների ընթացքում մարելու է համապատասխանաբար 4 մլն 145 հազար և 3 մլն 873 հազար դրամի տոկոս՝ կատարելով ընդամենը 1 մլն 817 հազար և 2 մլն 88 հազար դրամի կապիտալ գումարից մարում:

Քննարկենք երկրորդ իրավիճակը. խնայում ենք երեք տարիների ընթացքում և մեծացնում սկզբնական կանխավճարը: Երեք տարիների ընթացքում պոտենցիալ վարկառուն գնելու փոխարեն նախընտրում է վարձակալել բնակարան, իսկ վարկի ամսական մարումների և ամսավարձի դրական տարբերությունը կուտակվում է բանկային ավանդային հաշվին ու դիցուք տարեկան 8% տոկոսադուրյով, և միայն 20 մլն դրամ խնայողություն կուտակվելուն պես ստանում հիփոթեքային վարկ: Ամսական 250 հազար դրամ վարձավճարի դեպքում տարեկան վարձակալական ծախսերը կազմում են 3 մլն դրամ, բացի այդ յուրաքանչյուր ամիս մեր տնօրինման տակ է լրացուցիչ մոտ 247 հազար դրամ, որն էլ հենց յուրաքանչյուր ամիս համալրելու է կուտակային ավանդային հաշվի: Ավանդային հաշվի սկզբնական 8 մլն դրամ մնացորդի և ամենամսյա 247 հազար դրամի համալրման դեպքում ընդամենը մեկ տարի հետո կկուտակվի շուրջ 775 հազար դրամի տոկոսագումար, երկու տարի անց՝ 1 մլն 085 հազար դրամի տոկոսագումար, իսկ երեք տարի անց՝ 1 մլն 421 հազար դրամի տոկոսագումար: Արդյունքում երեք տարի անց կկուտակվի 20 մլն դրամ գումար, որը կազմում է անշարժ գույքի արժեքի 50 %-ը: Ընդ որում՝ սկզբնական կանխավճարի մեծացումը մինչև 50% թույլ կտա կրճատել հիփոթեքային վարկի մարման ժամկետը 10-ից 4,5 տարի՝ պահպանելով վարկի ամսական մարումների 497 հազար դրամ շեմը: Սա իր հերթին զգալիորեն կկրճատի հիփոթեքային վարկի գծով իրականացվելիք տոկոսային ծախսը:

Այժմ դիտարկենք վերը նշված երկու իրավիճակները համեմատության մեջ: Առաջին ապշեցուցիչ փաստն այն է, որ առաջին տարվա ընթացքում վարկի գծով վճարվում է 4 մլն 381 հազար դրամի տոկոս, մինչդեռ վարձակալության դիմաց ընդամենը 3 մլն դրամ:

Երկրորդ ապշեցուցիչ փաստն այն է, որ առաջին իրավիճակում վարկառուի բարեկեցության մակարդակը յուրաքանչյուր ամիս նվազում է 370 հազար դրամով (վարկատու կազմակերպությանը վճարվող տոկոսներն են), իսկ երկրորդ սցենարում արդեն բարեկեցության մակարդակն ամեն ամիս աճում է 350 հազար դրամով (խնայողական հաշվին ամեն ամիս մուտք արվող գումարը և կուտակվող տոկոսները): Վերոնշյալ տարբերությունը ցույց է տրված ստորև բերված գծապատկերում:



Գծապատկեր 1-ում 0-ից ներքև ընկած մագցված հատվածը ցույց է տալիս, թե ինչպես է անկում ապրում անհատի բարեկեցության մակարդակը: Առաջին երեք տարիներին նա աղքատանում է 12 մլն 700 հազար դրամով: 0-ից վեր գտնվող մագցված հատվածն ընդհակառակը ցույց է տալիս, թե ինչպես է անհատի կապիտալն աճում 12 մլն 500 հազար դրամով: Ընդ որում՝ հատկանշական է տարբերության չափը:

Այժմ կատարենք առաջին և երկրորդ իրավիճակների տոկոսային ընդհանուր ծախսերի համեմատություն: Առաջին սցենարում տոկոսային ծախսերը կազմում են 27 մլն 600 հազար դրամ կամ մայր գումարի 86%-ը: Երկրորդ սցենարում արդեն տոկոսային ծախսը կկազմի մոտ 7 մլն դրամ կամ մայր գումարի շուրջ 35%-ը, ինչպես նաև այն 9 մլն դրամը, որը 3 տարիների ընթացքում պետք է վճարվի իբրև վարձավճար: Այսինքն՝ հանրագումարային առումով այս տարբերակով ծախսերը կկազմեն շուրջ 16 մլն դրամ, նախկին 27-ի փոխարեն: Համաձայնենք, որ տարբերությունն էական է: Իհարկե, երկրորդ սցենարը եսպես պարունակում է անշարժ գույքի գների բարձրացման ռիսկը: Այնուամենայնիվ, եթե առաջին երեք տարիների ընթացքում համաձայն առաջին սցենարի, բանկին վճարվում է ընդհանուր առմամբ 12 մլն 700 հազար դրամ, ապա երկրորդ սցենարի համաձայն՝ բարեկեցության մակարդակը կաճի 12 մլն 500 հազար դրամով: Այսինքն՝ տարբերությունը կազմում է 25 մլն 200 հազար դրամ: Համաձայնենք, որ երեք տարիների ընթացքում հավանական չէ, որ բնակարանների գները կաճեն 63%-ով, և քանի որ մենք արդեն ապացուցեցինք, որ երկու տարբերակների հանրագումարային տարբերությունը կազմում է ավելի քան 25 մլն դրամ, ապա ակնհայտ է, որ այդ ռիսկի չեզոքացման դիմաց վճարվող գումարն անհիմաստ է:

Վերը նկարագրված փաստացի օրինակից ելնելով՝ առաջարկում ենք հնարավորության դեպքում միշտ նվազագույնի հասցնել հիփոթեքային վարկի գումարը և մաքսիմալացնել կանխավճարի չափը, առավելագույնս նվազեցնել վարկի մարման ժամկետը: Վարկավորվելիս երբեք պետք չէ առաջնորդվել վայրկենական ծագած կարիքներով, անհրաժեշտ է ուղղորդվել երկարաժամկետ հատվածի վրա: Բոլոր ժամանակներում պետք է մտածել ընտանիքի ֆինանսական կայունության, ինչպես նաև չկանխատեսված ծախսերի մասին: Փորձը վկայում է, որ ինչքան փոքր է անհատների ֆինանսական անվտանգության բարձիկը, այնքան ավելի մեծ կախվածության մեջ են վերջիններս հայտնվում ֆինանսական ինստիտուտներից, իսկ սա էլ իր հերթին բերում է մեծ սոցիալական խնդիրների: Ֆինանսական «գրագիտությունը» թույլ է տալիս հաղթել այս անհավասար պայքարում:

Էմպիրիկ այս հետազոտությունը ամենևին նպատակ չունի զսպելու հիփոթեքային վարկ վերցնելու մարդկանց ցանկությունը, այն պարզապես ցույց է տալիս, թե ինչպես պլանավորել և ճիշտ կառուցել ընտանեկան բյուջեն: Գրագետ մոտեցման դեպքում միանշանակորեն հնարավոր է գտնել արդյունավետ տարբերակ: Հաշվելու կարողություն չունեցողները երբեմն չափազանց թանկ գին են վճարում հիփոթեքով վերցված բնակարանի դիմաց:

## Цена квартиры приобретенной ипотекой

### Аннотация

Основной целью данной работы является представление элементарного метода расчета, который поможет потенциальным заемщикам сэкономить огромные суммы денег и посоветовать, как правильно управлять ипотечным кредитом.

В этой статье описаны два сценария, с которыми сталкиваются почти все люди, но не все правильно выбирают решение данного вопроса. В первом случае потенциальный кредитор приобретает недвижимость с долгосрочным ипотечным кредитом и небольшим депозитом, а во втором случае тот же заемщик может снять квартиру на некоторое время, накопить половину стоимости имущества и купить его на ипотечный кредит с большим депозитом и в два раза укороченным сроком.

Artur Sayadyan

## The Price of Apartments Purchased With Mortgage

### Abstract

The main objective of the article is to present basic calculation methods, which will help the potential mortgage loan takers to save huge amount of money and advise them on how correctly to handle the loan.

The article provides two scenarios that almost everyone faces in his/her life, however, not all choose the right solution. Under the first scenario, the potential mortgage taker is granted a long-term loan with small deposit, while under the second scenario the same potential mortgage taker may rent an apartment for a while, then accumulate the half of the property value as a deposit, and take mortgage in two times shorter period.

### ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏՊԳԱՄ Քոթանյանի անվան  
փնտրեսազոյությունների ինստիտուտի հայցորդ

## ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Հարկային ոլորտը ներկայումս վերածվել է պետական քաղաքականության ամենամեծ հասարակական հնչեղությունն ունեցող բաղադրիչներից մեկի<sup>1</sup>: Դա է պատճառը, որ հարկային համակարգի բարեփոխումների հիմքում դիտվում են ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական և տնտեսական բազմաթիվ գործոններ: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ընդհանուր եկամուտների գերակշիռ մասը ավանդաբար կազմել և կազմում են հարկային եկամուտները: Այդուսակ 1-ում ներկայացված տվյալները հաստատում են, որ պետական բյուջեի եկամուտների գերակշիռ մասն ապահովվում է հարկային եկամուտների հաշվին: Պետական բյուջեի հարկային եկամուտները 2003-2011թթ. աճել են գրեթե 3 անգամ 212.2 մլրդ դրամից հասնելով 631.6 մլրդ դրամի, այն դեպքում, երբ ՀՆԱ-ն նույն ժամանակահատվածում աճել է 2.32 անգամ 1624.6 մլրդ դրամից հասնելով 3776.4 մլրդ դրամի: Հարկային եկամուտների կառուցվածքում ընդգրկված հարկատեսակների գծով եկամուտների միջինից մեծ աճի տեմպ է արձանագրվել ավելացված արժեքի հարկի (3.05 անգամ), շահութահարկի (5.55 անգամ), եկամտահարկի (4.84 անգամ) և մաքսային տուրքի մասով (3.38 անգամ): Հարկային եկամուտների առանձին տեսակների փոփոխության դինամիկայից պարզ է դառնում, որ հարկային

<sup>1</sup> Перонко И.А., Красницкий В.Л. Налоговое администрирование // Налоговый вестник. -2000.-№10.-С. 23.

եկամուտների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում անուղղակի հարկերը՝ ԱԱՀ-ն և ակցիզային հարկը, հետևաբար հիմնական հարկային բեռը հանրապետությունում ընկած է վերջնական սպառողի վրա:

Միաժամանակ՝ աճ է արձանագրվել նաև պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հավաքագրումների գծով: Եթե 2003թ. հավաքագրված պետական տուրքերի մեծությունը կազմել է 15.2 մլրդ դրամ, ապա 2011թ.՝ 22.4 մլրդ դրամ, ինչը նշանակում է, որ քննարկվող ժամանակահատվածում աճը կազմել է 1.47 անգամ: Պարտադիր սոցիալական ապահովության վճարների հավաքագրումների՝ 2003թ. ցուցանիշը կազմել է 44.7 մլրդ դրամ, իսկ 2011թ.՝ 123.4 մլրդ դրամ կամ աճել է շուրջ 2.76 անգամ: Քննարկված հաշվարկային ցուցանիշները վկայությունն են այն բանի, որ Հայաստանում հարկային եկամուտների դերը պետական բյուջեի եկամտային մասի ապահովման գործում վերջին տասնամյակում աճել է, ինչը նշանակում է, որ աճել է նաև հարկային համակարգի և հարկային վարչարարության դերը:

*Աղյուսակ 1*

**ՀՀ ՀՆԱ-ն և պետական բյուջեի հարկային եկամուտները 2003-2011թթ. (մլրդ դրամ)<sup>1</sup>**

	Տարիներ									
	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2011/ 2003
<b>ՀՆԱ</b>	<b>1624.6</b>	<b>1907.9</b>	<b>2242.9</b>	<b>2656.2</b>	<b>3149.3</b>	<b>3568.2</b>	<b>3141.7</b>	<b>3460.2</b>	<b>3776.4</b>	<b>2.32</b>
<b>Պետական բյուջեի եկամուտներ</b>	<b>336.7</b>	<b>353.0</b>	<b>438.6</b>	<b>517.5</b>	<b>676.5</b>	<b>785.4</b>	<b>690.0</b>	<b>780.5</b>	<b>848.1</b>	<b>2.52</b>
<b>Հարկային եկամուտներ, ընդամենը</b>	<b>212.2</b>	<b>250.1</b>	<b>304.3</b>	<b>366.2</b>	<b>483.7</b>	<b>598.8</b>	<b>503.3</b>	<b>574.1</b>	<b>631.6</b>	<b>2.98</b>
այդ թվում՝										
ավելացված արժեքի հարկ	107.8	117.9	146.8	165.9	248.0	318.3	254.2	301.7	328.5	3.05
շահութահարկ	17.6	32.0	46.6	65.3	75.5	86.2	80.8	77.8	97.8	5.55
եկամտահարկ	16.8	20.4	26.6	35.5	46.8	53.7	60.2	73.9	81.2	4.84
ակցիզային հարկ	39.1	40.7	38.6	39.9	41.5	45.9	42.8	48.1	39.4	1.01
գույքահարկ	0.1	-0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	-
հողի հարկ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	-
մաքսային տուրք	10.7	12.5	16.5	18.3	24.0	37.3	25.1	29.4	36.3	3.38
հաստատագրված վճարներ	8.0	11.7	13.0	15.1	17.9	20.3	23.8	22.0	20.7	2.59
բնական պաշարների										
օգտագործման և շրջակա	5.6	3.5	4.8	11.7	9.2	10.0	6.1	9.1	12.2	2.18
միջավայրի վճարներ										
պարզեցված հարկ	5.0	7.2	6.7	7.7	10.0	6.7	0.3	0.0	0.0	-
այլ հարկային եկամուտներ	1.6	4.4	4.6	6.8	10.7	20.3	19.0	20.0	15.5	9.44
<b>Պետական տուրքեր</b>	<b>15.2</b>	<b>16.9</b>	<b>17.2</b>	<b>18.9</b>	<b>21.9</b>	<b>22.3</b>	<b>19.0</b>	<b>20.0</b>	<b>22.4</b>	<b>1.47</b>
<b>Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ</b>	<b>44.7</b>	<b>50.8</b>	<b>63.9</b>	<b>76.0</b>	<b>88.5</b>	<b>105.0</b>	<b>102.9</b>	<b>105.3</b>	<b>123.4</b>	<b>2.76</b>

\* Համադրելիության ապահովման նպատակով 2003-2007թթ. ՀՀ պետական բյուջեի եկամուտներն ավելացել են պարտադիր սոցիալական ապահովության վճարների մեծության չափով, քանզի մինչ 2008թ. դրանք արտացոլվում էին առանձին բյուջեում:

<sup>1</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2011: Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2011, 624 էջ: (<http://www.armstat.am>), Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2008: Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2011, 589 էջ: (<http://www.armstat.am>), Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2012, 281 էջ, ՀՆԱ-ի տվյալները՝ ՀՀ ԱԿԾ պաշտոնական կայք (<http://armstat.am/am/?nid=126&id=01001>)

ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը 2003-2011թթ., %<sup>1</sup>

	Տարիներ								
	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
<b>Պետական բյուջեի եկամուտներ</b>	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
<b>Հարկային եկամուտներ, ընդամենը</b>	63.0	70.8	69.4	70.8	71.5	76.2	72.9	73.6	74.5
այդ թվում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ավելացված արժեքի հարկ	32.0	33.4	33.5	32.1	36.7	40.5	36.8	38.7	38.7
շահութահարկ	5.2	9.1	10.6	12.6	11.2	11.0	11.7	10.0	11.5
եկամտահարկ	5.0	5.8	6.1	6.9	6.9	6.8	8.7	9.5	9.6
ակցիզային հարկ	11.6	11.5	8.8	7.7	6.1	5.8	6.2	6.2	4.6
գույքահարկ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
հողի հարկ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
մաքսային տուրք	3.2	3.5	3.8	3.5	3.5	4.7	3.6	3.8	4.3
հաստատագրված վճարներ	2.4	3.3	3.0	2.9	2.6	2.6	3.5	2.8	2.4
բնական պաշարների օգտագործման և չրջակա միջավայրի պահպանման համար վճարներ	1.7	1.0	1.1	2.3	1.4	1.3	0.9	1.2	1.4
պարզեցված հարկ	1.5	2.0	1.5	1.5	1.5	0.9	0.0	0.0	0.0
այլ հարկային եկամուտներ	0.5	1.2	1.1	1.3	1.6	2.6	2.8	2.6	1.8
<b>Պետական տուրքեր</b>	4.5	4.8	3.9	3.7	3.2	2.8	2.8	2.6	2.6
<b>Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ</b>	13.3	14.4	14.6	14.7	13.1	13.4	14.9	13.5	14.6

Աղյուսակ 2-ում ներկայացված է ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը: Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում 2003-2011թթ. հարկային եկամուտների մասնաբաժինն անընդհատ աճել է՝ 2003թ. 63.0%-ից 2011թ. հասնելով 74.5%-ի: Եթե նույն ժամանակահատվածում աճել է նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասնաբաժինը՝ 2003թ. 13.3%-ից 2011թ. հասնելով 14.6%-ի, ապա նույնը չի կարելի ասել պետական տուրքերի մասին. քննարկվող ժամանակահատվածում վերջինիս մասնաբաժինը 2003թ. 4.5%-ից նվազել է մինչև 2.6%:

Եթե դիտարկենք հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների համատեղ մասնաբաժինը պետական բյուջեի հարկային եկամուտների ապահովման գործում, ապա աճն ավելի ակնհայտ է. 2003թ. նշված 3 խումբ եկամուտների ընդհանուր մասնաբաժինը կազմել է 80.8%, իսկ 2011թ.՝ 91.7%: Նշենք, որ զարգացած կապիտալիստական երկրներում հարկերի և տուրքերի միջոցով ձևավորվում է բյուջեի եկամուտների միայն 60-70%-ը<sup>2</sup>:

Հարկային համակարգի արդյունավետության գնահատականներից մեկը կապված է հարկային եկամուտների հավաքագրված մեծությունը ՀՆԱ-ին հետ համեմատելու մեթոդաբանության հետ: Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցության ուսումնասիրությունն ու ստացված արդյունքների՝ զարգացած երկրների հետ համադրումը: Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ վերջին տասնամյակում պետական բյուջեի եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերության ցուցանիշն ընդհանուր առմամբ աճի միտում է ցուցաբերել՝ 2004թ. 18.5% արժեքից 2011թ. կազմելով 22.5%:

Պետական բյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների միջոցով ձևավորվող եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերությունն ընդհանուր առմամբ

<sup>1</sup> Աղյուսակը կառուցված է աղյուսակ 1-ի հիման վրա

<sup>2</sup> Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, դասագիրք/ Լ. Բաղանյան, Կ. Աբգարյան, Ա. Սալմազարյան և ուրիշներ, - Եր., Զանգակ-97, 2007, էջ 147:

նույնպես աճի միտում է ցուցաբերել: Սակայն եթե հարկերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասով այդ հարաբերակցությունն աճել է, ապա տուրքերի մասով՝ նվազել: Հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերությունը 2003թ. կազմել է 13.1%, 2011թ.՝ արդեն 16.7%: Պարտադիր սոցիալական ապահովության վճարների և ՀՆԱ-ի հարաբերությունը 2003թ. կազմել է 2.8%, 2011թ.՝ արդեն 3.3%: Մինչդեռ տուրքերի և ՀՆԱ-ի հարաբերակցության 2003թ. 0.9% ցուցանիշը 2011թ. նվազել է մինչև 0.6%:

Աղյուսակ 3

**ՀՀ պետական բյուջեի և հարկային եկամուտների հարաբերությունը ՀՆԱ-ին, %<sup>1</sup>**

	Տարիներ									
	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	
<b>ՀՆԱ</b>	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
<b>Պետական բյուջեի եկամուտներ</b>	20.7	18.5	19.6	19.5	21.5	22.0	22.0	22.6	22.5	
<b>Հարկային եկամուտներ, ընդամենը</b>	13.1	13.1	13.6	13.8	15.4	16.8	16.0	16.6	16.7	
այդ թվում										
ավելացված արժեքի հարկ	6.6	6.2	6.5	6.2	7.9	8.9	8.1	8.7	8.7	
շահութահարկ	1.1	1.7	2.1	2.5	2.4	2.4	2.6	2.2	2.6	
եկամտահարկ	1.0	1.1	1.2	1.3	1.5	1.5	1.9	2.1	2.2	
ակցիզային հարկ	2.4	2.1	1.7	1.5	1.3	1.3	1.4	1.4	1.0	
գույքահարկ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
հողի հարկ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
մաքսային տուրք	0.7	0.7	0.7	0.7	0.8	1.0	0.8	0.8	1.0	
հաստատագրված վճարներ	0.5	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.8	0.6	0.5	
բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման վճարներ	0.3	0.2	0.2	0.4	0.3	0.3	0.2	0.3	0.3	
պարզեցված հարկ	0.3	0.4	0.3	0.3	0.3	0.2	0.0	0.0	0.0	
այլ հարկային եկամուտներ	0.1	0.2	0.2	0.3	0.3	0.6	0.6	0.6	0.4	
<b>Պետական տուրքեր</b>	0.9	0.9	0.8	0.7	0.7	0.6	0.6	0.6	0.6	
<b>Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ</b>	2.8	2.7	2.8	2.9	2.8	2.9	3.3	3.0	3.3	

Ընդհանուր առմամբ պետական բյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների միջոցով ձևավորվող եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերությունը 2003թ. կազմել է 16.8%, իսկ 2011թ.՝ 20.6%: Համեմատության համար նշենք, որ այդ ցուցանիշը Ռուսաստանում կազմում է 28-30%, Մերձբալթյան հանրապետություններում՝ 30-35%<sup>2</sup>: Եվրամիության երկրներում այս ցուցանիշը Չեխիայում կազմել է 36.2%, Բուլղարիայում՝ 34.4%, Հունգարիայում՝ 37.2%, Ֆրանսիայում՝ 44.2%, Իտալիայում՝ 42.3% և այլն: Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության միջին ցուցանիշը Եվրամիության 27 երկրների համար կազմում է մոտ 40%, որը գրեթե 2 անգամ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նույն ցուցանիշը:

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում էական առաջընթաց հարկային համակարգի կատարելագործման, հարկազանձման մեխանիզմների բարելավման ուղղությամբ չի իրականացվել, ինչն արտահայտվում է հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերության՝ զարգացած և զարգացող երկրների համեմատ ցածր ցուցանիշով: Վերոնշյալ վերլուծությունները վկայում են նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության, հարկային վարչարարության ու հարկազանձման մեխանիզմների արդյունավետության բարձրացման անհրաժեշտության մասին:

<sup>1</sup> Աղյուսակը կառուցված է աղյուսակ 1-ի հիման վրա:  
<sup>2</sup> Paying Taxes 2011: The global picture (<http://www.pwc.com/payingtaxes>).



Այս համատեքստում մեծ հետաքրքրություն է ներկայացնում հարկային մարմնի կողմից իրականացված հարկային վարչարարության արդյունավետության պարզաբանման հարցը: Ներկայումս այն որոշվում է որպես պլանավորված հարկային եկամուտների ապահովման կարողություն: 2007-2011թթ. ՀՀ պետական բյուջեի կատարողականի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և հավաքագրման կատարողականը 2007-2011թթ.<sup>1</sup>

	2007	2008	2009	2010	2011
<b>ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>					
Պլան	490.21	746.01	905.40	742.14	852.44
ճշտված պլան	562.27	803.66	925.90	772.96	883.15
Փաստացի	588.04	785.36	690.00	780.44	880.85
Կատարողական (%)	104.60%	97.70%	74.50%	101.00%	99.70%
<i>այդ թվում՝</i>					
<b>Հարկային եկամուտներ և պետական տուրքեր</b>					
Պլան	458.83	575.09	727.45	570.00	650.00
ճշտված պլան	489.04	596.92	730.00	580.55	653.53
Փաստացի	505.54	598.79	522.36	594.10	653.96
Կատարողական (%)	103.37%	100.30%	71.60%	102.30%	100.10%
<b>Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ</b>					
Պլան	106.69	104.90	128.41	105.23	123.44
ճշտված պլան	106.69	104.90	128.41	105.23	123.44
Փաստացի	109.25	105.00	102.90	105.34	123.45
Կատարողական (%)	102.40%	100.10%	80.10%	100.10%	100.00%
<b>Պաշտոնական դրամաշնորհներ</b>					
Պլան	15.13	34.93	34.71	42.50	56.00
ճշտված պլան	28.42	38.98	37.21	47.58	64.65
Փաստացի	24.50	14.98	21.70	30.59	59.42
Կատարողական (%)	86.20%	38.40%	58.30%	64.30%	91.90%
<b>Այլ եկամուտներ</b>					
Պլան	16.25	9.04	14.82	24.40	23.00
ճշտված պլան	44.80	40.16	30.28	39.59	41.53
Փաստացի	58.00	44.28	43.03	50.42	44.03
Կատարողական (%)	129.48%	110.30%	142.10%	127.30%	106.00%

Աղյուսակ 4-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ հարկային եկամուտների և պետական տուրքերի պլանավորված մեծության ապահովման տեսանկյունից հարկային մարմինների իրականացրած վարչարարությունն արդյունավետ է, քանզի, ընդհանուր առմամբ, ապահովել է 100 և ավելի տոկոս կատարողական: Բացառություն է կազմում 2009թ., երբ կատարողականը կազմել է ընդամենը 71.6 %, ինչը սակայն պայմանավորված էր համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների լավատեսական կանխատեսումներով: Նույնը կարելի է ասել պարտադիր սոցիալական ապահովության վճարների առումով, որտեղ ևս, բացառությամբ 2009թ., արձանագրվել է 100 և ավելի տոկոս կատարողական:

Աղյուսակներ 3-ում և 4-ում ներկայացված տվյալները հետաքրքիր են այն առումով, որ հարկային համակարգի ցածր արդյունավետության, այն է՝ հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերության ցածր ցուցանիշը համադրում են հարկային եկամուտների, ըստ էության, գերազանց կատարողականի հետ: Այս համադրությունը վեր է հանում հարկային համակարգի հիմնական բացթողումը. հարկային եկամուտների պլանավորված մեծությունները չեն համա-

<sup>1</sup> Պետական բյուջեի կատարման 2007-2011թթ. տարեկան հաշվետվություններ (<http://www.mfe.am>), ՀՀ օրենքը ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին, ՀՕ-184Ն, ՀՀՊՏ 2006.12.22/65(520) Հոդ.1344: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2008: Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2011, 589 էջ, (<http://www.armstat.am>):

պատասխանում տնտեսության իրական հնարավորություններին, իսկ հարկային համակարգն իր վարչարարական հնարավորություններով ունակ չէ ապահովել բարձր կատարողական: Արձանագրված կատարողականի բարձր ցուցանիշները հնարավոր է եղել ապահովել միայն ցածր պլանային մեծությունների շնորհիվ: Հարկային համակարգի հետագա զարգացման և հարկային վարչարարության բարձր մակարդակի ապահովումը ենթադրում է հարկային ներուժի գնահատման նոր եղանակների կիրառում, ինչն իր հերթին ենթադրում է հարկային համակարգի կարողությունների գնահատում և բարեփոխումներ: Հակառակ դեպքում հարկային եկամուտների պլանային և փաստացի մեծությունները զարգացած երկրների համեմատությամբ շարունակելու են ցածր մնալ՝ սահմանափակելով նաև պետական ընդլայնող քաղաքականության հնարավորությունները, իսկ պլանային մեծությունների մեխանիկական ընդլայնումը հանգեցնելու է կամ կատարողականի բացասական դինամիկայի, կամ հարկային բեռի անհամաչափ բաշխման երևույթների խորացման:

**Davit Sargsyan**

## **Efficiency Assessment of the Armenian Tax System**

### **Abstract**

Traditionally, tax revenue comprised and still comprises the largest share in total revenue of the state budget of Armenia. In 2011, the state budget revenue to GDP ratio was 22.5%, while in developed countries the ratio was about 40%. Meanwhile, the performance of tax authorities was at 100% and above (in terms of collection of projected tax revenue). High performance of tax authorities and low state budget revenue to GDP ratio allow us to conclude that projected tax revenue don't reflect the real capacities of the economy. Future improvement of the tax system of Armenia requires application of new methods for estimating projected tax revenues, and continuous reforms.

**Давид Саркисян**

## **Оценка эффективности налоговой системы РА**

### **Аннотация**

Преобладающую долю общих доходов государственного бюджета РА традиционно составляли и составляют налоговые доходы. В 2011г. показатель соотношения доходов государственного бюджета к ВВП составил 22,5%, в том случае, когда в развитых странах этот показатель составляет около 40%. Одновременно налоговые органы обеспечили 100 и более процентов исполнения запланированных налоговых доходов. Зафиксированный высокий показатель исполнения и низкий уровень доли налоговых доходов к ВВП дает основание для вывода о том, что запланированная величина налоговых доходов не соответствует реальным возможностям экономики. Дальнейшее развитие налоговой системы предполагает применение новых методов оценки налогового потенциала и последовательное реформирование налоговой системы.

### **ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՎԱՐՉԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հարկերի վերաբաշխիչ գործառույթի վրա մեծ ազդեցություն ունեն հարկային վարչարարության որակն ու պետական քաղաքականության սոցիալ-տնտեսական ուղղվածությունը: Դա նշանակում է, որ ինչքան մեծ են հանրային բարիքների նկատմամբ հասարակության պահանջն ու պետության ստանձնած պարտավորությունը, այնքան մեծ պետք է լինի նաև հարկատուների վրա դրված մակրոտնտեսական հարկային բեռը: Բնական է, որ հարկերի հավաքելիության մակարդակը չի կարելի ավելացնել միայն հարկային բեռի նվազեցման շնորհիվ: Հարկերի հավաքելիության մակարդակի վրա հարկային բեռից բացի ազդում են նաև մակրոտնտեսական շատ գործոններ<sup>1</sup>: Այնուամենայնիվ, հարկերի հավաքելիության մակարդակի ապահովման գործում կարևորագույն նշանակություն ունեցող գործոններից մեկը հարկային վարչարարության որակն է, որն էլ հենց ապահովում է պլանավորված բյուջետային հարկային եկամուտների ապահովման ամբողջ գործընթացը: Այս առումով հարկային համակարգի շարունակական կատարելագործումն այն միակ ուղին է, որ կարող է ապահովել տնտեսական գործունեության իրականացման հարմարավետ միջավայր, նպաստել դրա մասշտաբների և, հետևաբար, նաև հարկվող բազայի հետագա ընդլայնմանը, ինչը, զուգակցվելով հարկային իրավախախտումների մակարդակի նվազման հետ, պետական զարգացման անփոխարինելի գրավականներից է:

Սակայն պետական կառավարման համակարգի անարդյունավետությունը հանգեցնում է հավաքագրվող հարկային եկամուտների վատմանը, իսկ հարկային համակարգի թերացումները՝ հարկային բեռի անհավասար բաշխմանն ու հարկային համակարգի պահպանման ծախսերի ուճանգմանը, ինչը հանգեցնում է հարկային համակարգի և պետության տնտեսական քաղաքականության հանդեպ հասարակության վստահության անկմանը՝ իր բոլոր բացասական հետևանքներով: Այսինքն՝ հարկային համակարգի կարողություններն ուղղակիորեն և անուղղակիորեն ազդեցություն են թողնում ոչ միայն հարկային բեռի հավասարաչափ բաշխման, այլև պետական միջոցների օգտագործման արդյունավետության ավելացման վրա, հետևաբար հարկային վարչարարության կարողությունների գնահատման և ավելացման խնդիրները շարունակաբար գտնվում են ինչպես տնտեսագետների, այնպես էլ պետական կառավարման համակարգում ներգրավված մասնագետների ուշադրության կենտրոնում:

Հայաստանում իրականացված «ՀՀ ԿԱ ՀՊԾ վարչարարական կարողությունների գնահատման» ծրագրի նպատակը ՀՀ հարկային մարմնի կարողությունների ուժեղ և թույլ կողմերի բացահայտումն է: Արդյունքները ցույց են տվել հարկային մարմնի վարչարարական հնարավորությունների վրա ինչպես դրականորեն, այնպես էլ բացասաբար ազդող գործոնները<sup>2</sup>: «ՀՀ ԿԱ ՀՊԾ վարչարարական կարողությունների գնահատման» աշխատանքների արդյունքում դրանց փաստացի գնահատումների արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում: Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ հարկային մարմնի վարչական կարողությունների գնահատման արդյունքները, ըստ տարբեր բնագավառների, խիստ տարբերակված արժեքներ ունեն:

<sup>1</sup> Измайлов А.Т. Направления развития налогового администрирования в России. - М.: Оргсервис - 2000, 2005. - С. 82.  
<sup>2</sup> «ՀՀ ԿԱ ՀՊԾ վարչարարական կարողությունների գնահատման» ծրագրի հաշվետվություն: Ահարոն Պարադիզյան, N GEG-1-00-04-00005-00 տեխնիկական առաջադրանք, Երևան 2007, 450 էջ:

**ՀՀ ԿԱ ՀՊԾ վարչարարական կարողությունների գնահատման հիմնական արդյունքները<sup>1</sup>**

Գործոնների խմբավորումներ	Միավոր		Շեղումներ		
	Փաստացի	ԵՄ	Բացարձակ շեղումը	Նվաճած մակարդակը, %	Շեղման կառուցվածքը, %
<b>1-ին խումբ. Շրջանակներ, կառուցվածք և հիմքեր</b>					
1. Հարկային մարմնի ընդհանուր շրջանակ	39.9	75	35.07	53.24	8.5%
2. Կառուցվածքը և կազմակերպումը	44.5	75	30.45	59.4	7.4%
3. Հարկային օրենսդրություն	62.2	80	17.76	77.79	4.3%
<b>2-րդ խումբ. Մարդկային ռեսուրսներ և վարքագծային հարցեր</b>					
4. Էթիկա	33.4	85	51.56	39.35	12.5%
5. Մարդկային ռեսուրսների կառավարում	28.4	75	46.61	37.85	11.3%
<b>3-րդ խումբ. Համակարգեր և աշխատանքներ</b>					
6. Եկամուտների հավաքագրում և հարկադիր կիրարկում	57.3	75	17.67	76.44	4.3%
7. Հարկային ստուգում	38.7	70	31.31	55.27	7.6%
8. Վարչական համագործակցություն և փոխաջակցություն	40.8	70	29.25	58.22	7.1%
9. Հարկային խարդախություն և հարկերից խուսափում	37.9	70	32.147	54.08	7.8%
<b>4-րդ խումբ. Հարկ վճարողների սպասարկում</b>					
10. Հարկատուների իրավունքներն ու պարտականությունները	51.6	60	8.41	85.98	2.0%
11. Հարկատուների տվյալների կառավարման համակարգեր	42.3	75	32.69	56.42	7.9%
12. Հարկերի (ինքնուրույն) կամավոր վճարում	43.5	60	16.54	72.44	4.0%
<b>5-րդ խումբ. Օժանդակություն</b>					
13. Տեղեկատվական տեխնոլոգիաներ (SS)	36.9	60	23.09	61.51	5.6%
14. Հաղորդակցություն	29.2	70	40.78	41.74	9.9%
<b>ԸՆԴԱՍԵՆԸ (ըստ բոլոր 5 խմբերի)</b>	<b>586.7</b>	<b>1000</b>	<b>413.34</b>	<b>58.67</b>	<b>100.0%</b>

Այսպես, գնահատման արդյունքում պարզվել է, որ հարկային վարչարարության կարողությունների լավագույն գնահատականին են արժանացել «Հարկատուների իրավունքներն ու պարտականությունները» բաժինը՝ ԵՄ մակարդակի 86.0%, «Հարկային օրենսդրություն» բաժինը՝ ԵՄ մակարդակի 77.8%, և «Եկամուտների հավաքագրում և հարկադիր կիրարկում» բաժինը՝ ԵՄ մակարդակի 76.0% արժեքներով: Առավել ցածր միավորներ հավաքած երեք բաժիններն են «Մարդկային ռեսուրսների կառավարում»՝ ԵՄ մակարդակի 37.9%, «Էթիկա»՝ ԵՄ մակարդակի 39.4% և «Հաղորդակցություն»՝ ԵՄ մակարդակի 41.7%: ԵՄ մակարդակից հետ մնալու կառուցվածքում ևս հենց այս վերջին երեք բաժիններն ունեն առավել մեծ բացասական դերակատարումը, «Էթիկա»՝ 12.5%, «Մարդկային ռեսուրսների կառավարում»՝ 11.3% և «Հաղորդակցություն»՝ 9.9%:

Ի տարբերություն Հայաստանի՝ ԵՄ-ի ամենաբարձր միավորներ պահանջարկած բաժինների շարքում, բացի «Հարկային օրենսդրություն» բաժնից, առկա է նաև «Էթիկա» խումբը: Կարելի է համարել, որ ԵՄ-ի նախապատվություններն են իրավական ու հասարակական կարգերը, իսկ հայաստանյան հարկային վարչարարության նախապատվություններն են, օրենքն ու հարկազանձումը: Այլ կերպ ասած, ԵՄ-ում կարևորվում է հարկային մարմնի և հարկատուների՝ հավասար իրավական և էթիկական հարթություններում լինելը, իսկ հայաստանյան վարչարարությունն ունի արտահայտված «ուժային» պատկեր: Ընդհանուր առմամբ ՀՀ հարկային մարմնի վարչարարական կարողությունների ընդհանուր գնահատականը ԵՄ չափանիշների համեմատ կազմել է 58.67 տոկոս<sup>2</sup>:

Ինչպես պարզ համեմատությամբ կարելի է համոզվել, ՀՀ հարկային մարմնի հարկային վարչարարության իրականացման կարողությունների գնահատականը լիովին համապատասխանում է հավաքագրվող հարկերի և ՀՆԱ-ի հարաբերության արձանագրված մեծությանը:


<sup>1</sup> ՀՀ ԿԱ ՀՊԾ վարչարարական կարողությունների գնահատման ծրագրի հաշվետվություն: Ահարոն Պարադիգմա, N GEG-1-00-04-00005-00 տեխնիկական առաջադրանք, Երևան 2007, 450 էջ:  
<sup>2</sup> «ՀՀ ԿԱ ՀՊԾ վարչարարական կարողությունների գնահատման» ծրագրի հաշվետվություն: Ահարոն Պարադիգմա, N GEG-1-00-04-00005-00 տեխնիկական առաջադրանք, Երևան 2007, էջ 30, 450 էջ:

Եթե հարկային վարչարարությունների կարողությունները կազմում են ԵՄ ցանկալի մակարդակի 58.6%-ը, ապա ՀՀ հավաքագրվող հարկերի և ՀՆԱ-ի հարաբերության արձանագրված արժեքը՝ 20-21%, կազմում է ԵՄ համանման ցուցանիշի մոտավորապես 50%-ը (Եվրոպական երկրների միջին ցուցանիշը կազմում է 39-40%): Դա նշանակում է, որ Հայաստանում հավաքագրվող հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերության ցուցանիշի բարելավումը ենթադրում է հարկային համակարգի բարեփոխումներ և հարկային վարչարարության կարողությունների ավելացում:

Հարկային վարչարարության կարողությունների ամրապնդման և հարկային համակարգի բարեփոխման ուղղությամբ ներկայումս իրականացվում է հարկային վարչարարության 2012-2014թթ. ռազմավարությունը, որն, ըստ էության, հանդես է գալիս որպես հարկային վարչարարության ռազմավարության 2-րդ ծրագիր. Ընդ որում, ի տարբերություն հարկային վարչարարության ռազմավարության 1-ին ծրագրի, ավելի «համեստ» նպատակադրումներ է պարունակում: Որպես թիրախային առաջադրանքներ՝ դրանում ներառված են 4 նպատակներ (գծանկար 2):

*Գծանկար 1*

**Հարկային ծառայության՝ 2012-2014թթ. ռազմավարական նպատակները<sup>1</sup>**



**1. Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում:** Որպես 2012-2014թթ. հարկային համակարգի բարեփոխումների առաջնահերթություն հանդես է գալիս հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացումը: Դրանում կարևորվում են հարկային մարմնի և հարկատուների գործընկերության սկզբունքի ամրապնդումը, հարկ վճարողներին էլեկտրոնային ծառայություններ մատուցելու համակարգի ընդլայնումը, հարկ վճարողների իրազեկման համակարգի ներդրմամբ առանց դիտավորության հարկային իրավախախտումների կանխարգելումը, հարկատուների կարիքների գնահատումն ու դրանց իրագործումը, հարկային մարմնի աշխատանքի թափանցիկությունը, հարկ վճարողների նկատմամբ միանման սկզբունքների կիրառումը, ինչի արդյունքում հարկային մարմին - հարկ վճարող հարաբերությունները հնարավոր կլինի տեղափոխել բուլորովին նոր՝ գործընկերային հարթություն:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային վարչարարության 2012-2014 թվականների ռազմավարություն, հաստատված՝ ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 23-ի N 195-Ն որոշմամբ:

**2. Հարկային մարմնի հիմնական բիզնես-գործընթացների վերակազմակերպում:** Հարկային համակարգերի բարեփոխումների հիմքում ընկած են նաև մասնավոր հատվածում հաջողության արժանացած բիզնես-գործընթացները հարկային մարմնում կիրառելու հնարավորությունները: Այս ուղղությամբ կարևորվում են հարկային մարմնի բիզնես-գործընթացների կառավարման գործում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, ավտոմատացված հարկային տեղեկատվական վերլուծական համակարգի ստեղծումը, ներքին կառավարման արդյունավետ համակարգի մշակումը՝ տարածքային հարկային տեսչությունների գործառույթների հստակեցման և կատարելագործման միջոցով:

**3. Հարկային հսկողության ժամանակակից մեխանիզմների ներդրում:** Հարկերի կամավոր վճարման սկզբունքը հարկային մարմնի և հարկատուների գործընկերության դրսևորումներից է, այնուամենայնիվ, անաչառ հարկային վարչարարությունն ու անպարտաճանաչ հարկատուների՝ հարկային թերի պարտավորությունների կատարմամբ առաջացած մրցակցային առավելությունները կասեցնելը ենթադրում է հսկողական աշխատունակ գործառույթների ներդրում, ինչը նպատակ ունի հարկային ստուգումների գործընթացը դարձնել առավել հասցեական: Այս ուղղությամբ կարևորվում են կամերալ ուսումնասիրությունների զարգացած համակարգի ներդրումը, հարկերից խուսափելու դեպքերի բացահայտման մեխանիզմների կատարելագործումը, բացահայտված դեպքերի կանխարգելիչ հետևանքների ավելացման նպատակով բացահայտված դեպքերի լայնորեն լուսաբանումը և այլն:

**4. Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում, ներքին հսկողության մեխանիզմների կատարելագործում:** Հարկային մարմինն առաջիկա տարիների բարեփոխումների հիմքում դրված նպատակների իրագործման համար կարիք ունի որակյալ անձնակազմի, ինչը կօգնի բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը, բարձրացնել հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակը, հարկ վճարողների գոհունակությունը: Սակայն որակյալ մարդկային ռեսուրսներն ինքնին չեն ստեղծվում. դրանք ձևավորվում են հետևողական և նպատակասլաց աշխատանքի արդյունքում, ինչը ենթադրում է մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի անընդհատ բարելավում: Այս ուղղությամբ կարևորվում են հարկային ծառայողների հատուկ ուսումնական կենտրոններում վերապատրաստումը, նյութական և ոչ նյութական խրախուսման միջոցների կիրառումը, ներքին աուդիտի համակարգի ներդրումը և այլն:

Ներկայումս ՀՀ հարկային համակարգում ներդրվել է հարկ վճարողներին էլեկտրոնային ծառայություններ մատուցելու համակարգ, որը զարգացման և ընդլայնման հսկան հորիզոններ ունի: Առաջիկա տարիների աշխատանքը պետք է հասցնի նրան, որ հարկային մարմնի «էլեկտրոնային գրասենյակում» հնարավոր լինի կատարել և վերահսկել հարկային մարմնի հետ կատարվող բոլոր փոխհարաբերությունները՝ հարկերի էլեկտրոնային վճարումներից մինչև դիմումների էլեկտրոնային ներկայացում, տեղեկանքների ստացում և այլն: Հարկային համակարգի կարևորագույն առաքելություններից մեկը պետք է լինի այն, որ հարկատուներին հնարավորություն տա կանխարգելելու առանց դիտավորության հարկային իրավախախտումները: Հարկատուն ոչ մի պարագայում չպետք է հետապնդվի և պատժվի հարկային մարմնի աշխատանքի վերաբերյալ դժգոհությունների, նկատառումների և առաջարկների համար, ինչի արդյունքում հարկային մարմին - հարկ վճարող հարաբերությունները հնարավոր կլինի տեղափոխել բոլորովին նոր՝ գործընկերային հարթություն:

Ցանկացած համակարգի կառավարման գործում կարևորագույն նշանակություն ունի ներքին կառավարման արդյունավետ համակարգի ստեղծումը, այլապես կառավարման կազմակերպմանն ուղղվող ռեսուրսների մի ստվար զանգված ուղղակի կփոշիանա: Այս առումով խիստ կարևոր է շարունակել հարկային մարմնի ներքին կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերը, բիզնես-գործընթացների կառավարման գործում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը: Անհրաժեշտ է քննարկել և տնտեսական նպատակահարմարության գնահատական տալ այնպիսի հարցերի, ինչպիսիք են տարածքային հարկային տեսչությունների գործառույթների հստակեցումը, հարկ վճարողների սպասարկման

գործառույթների սպասարկման կենտրոններում կենտրոնացումը, տարածքային հարկային տեսչությունների կառուցվածքի կատարելագործումը, ինչպես նաև տարածքային հարկային տեսչությունների քանակի կրճատման նպատակահարմարությունը:

Հարկերի կամավոր վճարման սկզբունքը հարկային մարմնի և հարկատուների գործընկերության դրսևորումներից է: Անաչառ հարկային վարչարարությունն ու անպարտաճանաչ հարկատուների՝ հարկային թերի պարտավորությունների կատարմամբ առաջացած մրցակցային առավելությունները կասեցնելը ենթադրում է հսկողական աշխատունակ գործառույթների ներդրում, ինչը նպատակ ունի հարկային ստուգումների գործընթացը դարձնել առավել հասցեական: Թե՛ հարկատուները և թե՛ հարկային տեսուչները պետք է վստահ լինեն, որ անշեղորեն գործում է ոչ բարեխիղճ հարկ վճարողների պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը: Նման հարկային հարաբերությունների կառուցման պարագայում յուրաքանչյուր հարկ վճարող վստահ կլինի նաև, որ իր հարկային պարտավորությունների ամբողջական կատարումն ամենաշահեկան և ձեռնտու տարբերակն է, որի դեպքում հարկային պարտավորությունները միշտ ավելի պակաս կլինեն, քան նույն այդ պարտավորությունների և տուժանքների հանրագումարը:

Հայտնի է, որ հարկային ստուգումները հարկատուներին ամենից շատ անհանգստացնող միջոցառումներն են: Հետևաբար՝ չափազանց կարևոր է կամերալ ուսումնասիրությունների զարգացած համակարգի ներդրումը, ինչը հնարավորություն կտա հարկային մի շարք իրավախախտումների վերաբերյալ հնարավոր տեղեկատվությունը մշակելու առանց հարկատուի մասնակցության: Այս առումով կարևոր է, որպեսզի հարկային մարմինը մեծացնի հարկ վճարողի հարկային պարտավորությունների վերաբերյալ վերլուծությունների իրականացումը՝ ըստ դրանց կառուցվածքի, մեծության, առաջացման պատճառների: Կամերալ ուսումնասիրությունների արդյունքները հիմք չեն կարող հանդիսանալ հարկային իրավախախտման վարչական արձանագրման համար, սակայն հարկատուի համար հնարավոր բացթողումների բացահայտման և կանխարգելման լավ ուղեցույց են:

Ներկայումս հասարակության՝ հարկային ոլորտի վերաբերյալ ամենահուզող հարցերից մեկն այն կարծիքի տարածվածությունն է, որ Հայաստանում առկա են հարկերի վճարումից խուսափելու բազմաթիվ դեպքեր: Այս առումով հարկերից խուսափելու դեպքերի բացահայտման մեխանիզմների կատարելագործումը հասարակական պահանջ է, որը պետք է կյանքի կոչվի հարկային մարմնի կողմից: Հասարակական պահանջի բավարարման և բացահայտված դեպքերի կանխարգելիչ հետևանքների ավելացման նպատակով բացահայտված դեպքերը պետք է լայնորեն մատուցվեն հասարակությանը՝ անկախ դրանցում ներգրավված անձանց պաշտոնական դիրքից և հասարակական հնչեղության մեծությունից: Այլապես հնարավոր չէ բարձրացնել հասարակության վստահությունը հարկային մարմնի նկատմամբ, ինչն իր բացասական հետևանքները կունենա նաև գործարար միջավայրում՝ խեղաթյուրելով հարկային մարմնի և հարկատուների գործընկերության հայեցակարգը:

Այսպիսով, ներկայացված միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր կլինի բարելավել Հայաստանում հարկային համակարգի կարողությունները: Վերը նշված միջոցառումների իրագործման արդյունքում հնարավորություն կընձեռվի կառուցելու վստահության վրա հիմնված հարկային հարաբերություններ, ապահովելու հարկային մարմնի գործունեության թափանցիկությունը, բարելավելու հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակը և ձևավորելու հարկային մարմնի և հարկատուների գործընկերության միջավայր:

**Issues on Strengthening Administrative Capacities  
of the Tax System of Armenia**

**Abstract**

Administrative capacities of the tax system affect directly and indirectly not only equal distribution of the tax burden, but also use of the state budget revenue with higher efficiency. In assessing administrative capacities of the Armenian tax authorities according to the EU standards we assigned the score of 58.67%. In order to strengthen capacities of the tax administration and undertake tax reforms, currently Tax Administration Strategy 2012-2014 is being implemented. Thus, implementation of designed programs and/or measures will ensure trust-based taxpayer-tax authorities relations building, transparency of performance of tax authorities; increase the quality of services provided to taxpayers; and will establish strong partnership among tax authorities and taxpayers.

**Давид Саркисян**

**Проблемы увеличения административных мощностей  
налоговой системы РА**

**Аннотация**

Административные мощности налоговой системы непосредственно и опосредованно влияют не только на равномерное распределение налоговой нагрузки, но также и на увеличение эффективности использования государственных ресурсов. В результате оценки административной мощности налоговых органов РА выяснилось, что общая оценка мощности налогового администрирования в республике, по сравнению с критериями ЕС, составила 58,67 процентов. Для укрепления административных мощностей и реформирования налоговой системы, в настоящее время осуществляется стратегия налогового администрирования на 2012-2014 годы. В результате реализации предусмотренных мероприятий, станет возможным построить основанные на доверии налоговые отношения, обеспечить прозрачность деятельности налогового органа, улучшить качество оказываемых налогоплательщикам услуг и сформировать благоприятную среду сотрудничества налогового органа и налогоплательщиков.



**ԻՐԱԾՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՅ ԲԱՆԿԵՐՈՒՄ**

Իրացվելիության ռիսկի վերլուծությունն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են ինչպես իրացվելիության՝ որպես տնտեսական կատեգորիայի բնորոշ առանձնահատկությունների, այնպես էլ այն ժամանակաշրջանի առանձնահատկությունների հետ, որի համար կատարվում է տվյալ վերլուծությունը: Պատահական չէ այն հանգամանքը, որ իրացվելիության վերլուծությունը կատարվում է ինչպես նորմալ, այնպես էլ արտակարգ իրավիճակների համար, և առևտրային բանկերն ունենում են իրացվելիության ռիսկի կառավարման տարբեր սցենարներ:

Իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանության հաջորդ էական առանձնահատկությունն այն է, որ անհրաժեշտ է սահմանել ռիսկի ընդունելի չափը՝ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվների օպտիմալ մեծությունները: Միանշանակ է այն փաստը, որ երկու ծայրահեղ տարբերակներն էլ հավասարապես վտանգավոր իրավիճակներ են բնութագրում: Այսպես, օրինակ՝ ԶԶ ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվային սահմանաչափերին (ներկայումս ընթացիկ իրացվելիության նորմատիվի սահմանաչափը սահմանված է 15%, իսկ ընթացիկ իրացվելիության սահմանաչափը՝ 60%)<sup>1</sup> պերմանենտ մոտ գտնվելը վկայում է այն մասին, որ առևտրային բանկն ունի բարձր իրացվելի ակտիվների պակաս: Այն դեպքում, երբ իրացվելիության նորմատիվների փաստացի մեծությունները շատ բարձր են ԶԶ ԿԲ-ի սահմանած նորմատիվային սահմանաչափերից, նշանակում է, որ բանկում ակտիվների գերակշիռ մասը կազմում են բարձր իրացվելի ակտիվները, և բանկը չի կատարում իր առաքելությունը, այսինքն՝ բանկային գործունեություն (ավանդների ներգրավում-վարկերի տրամադրում), ունի ներգրավված միջոցների արդյունավետ տեղաբաշխման լուրջ հիմնախնդիր, որի արդյունքում նվազում է եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը:

Իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանության մյուս առանցքային առանձնահատկությունն այն է, որ առնչվում է բանկի եկամտաբերությանը: Այստեղ պետք է նկատի ունենալ հետևյալ տրամաբանությունը: Այս պարագայում բանկերը կանգնում են իրացվելիություն-եկամտաբերություն երկրորդային առջև: Եկամտաբերության բարձրացման, ներգրավված միջոցները բարձր եկամտաբերություն ապահովող ակտիվներում տեղաբաշխումը հակասության մեջ է բավարար արագ իրացվելի կամ յուրացվելի ակտիվներ ունենալու հետ: Հետևաբար՝ խիստ կարևորվում է եկամտաբերություն/իրացվելիություն օպտիմալ հարաբերակցության պահպանումը: Այս տեսանկյունից իրացվելիության ռիսկի կառավարումը կապվում է նաև ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի կառավարման հետ:

Իրացվելիության ռիսկի կառավարման առանձնահատկություն պետք է համարել նաև այն, որ անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել առանձին ակտիվների բարձր իրացվելիության գնահատման հարցում: Միանշանակ է այն փաստը, որ ինչպես միևնույն շուկայում, այնպես էլ տարբեր շուկաներում, առավել ևս տարբեր ժամանակային հատվածներում միևնույն ակտիվներն ունեն իրացվելիության տարբեր մակարդակներ: Պատահական չէ այն հանգամանքը, որ միևնույն ակտիվներն ունեն ռիսկայնության տարբեր կշիռներ տարբեր երկրներում: Օրինակ, ամենաբարձր իրացվելիություն ունեցող այնպիսի ակտիվի համար, ինչպիսին է կանխիկ դրամական միջոցը, որը ԶԶ ԿԲ-ի դասակարգմամբ ունի 0% ռիսկի կշիռ, ՌԴ Ռուսաստանի բանկը սիմվոլիկ սահմանել է 2% ռիսկի կշիռ: Նույնը վերաբերում է պետական արժեթղթերին: Ընդհանրապես, ռիսկի կշիռների վերաբերյալ հարցադրումները պարբերաբար

<sup>1</sup> Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, կանոնակարգ 2:

ավելի սուր դրսևորումներ են ստանում ֆինանսական ճգնաժամերից հետո: Օրինակ, Բազել 3 համաձայնագիրը, հաշվի առնելով վերջին ֆինանսական ճգնաժամի դասերը, առանձնահատուկ մոտեցում է առաջարկում ակտիվների իրացվելիության գնահատման հարցում:

Իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանության հաջորդ առանձնահատկությունը կապվում է այն հանգամանքի հետ, որ Հայաստանն ընդգծված տրանսֆերտներ ստացող երկիր է և հատկապես դրամական փոխանցումների ինտենսիվ համակարգում ընդգրկված բանկերում, որոնց եկամուտների կազմում կայուն ձևով որոշակի տեսակարար կշիռ են կազմում դրամական փոխանցումներից ստացված ոչ տոկոսային եկամուտները՝ միջնորդավճարները: Նմանօրինակ բանկերն ունեն մշտական դրամական միջոցների ներհոսք և արտահոսք, որոնք առանձնակի վերլուծության կարիք ունեն, մասնավորապես սեզոնայնության, միգրացիոն հոսքերի ակտիվացման և այլ փոփոխականների հետ կորելյացիոն կապերի բացահայտման տեսանկյունից: Այս կարգի բանկերը պետք է միաժամանակ մոնիթորինգի ենթարկեն այն երկրների մակրոտնտեսական իրավիճակները, որտեղից կատարվում են դրամական փոխանցումները՝ մշակելով հնարավոր տարբեր սցենարներ այդ երկրների տնտեսական վիճակի զարգացումների վերաբերյալ: Այս հանգամանքը խիստ կարևոր է նրանով, որ վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանում դրսևորվեց նաև հատկապես ԱՄՆ-ից, Եվրոպայից և ՌԴ-ից ստացվող տրանսֆերտների կտրուկ կրճատմամբ: Արդյունքում կրճատվեցին որոշ բանկերի կողմից ստացվող միջնորդավճարները (եկամուտները), որը իրացվելիության խնդիրների սրացման պատճառ հանդիսացավ: Հետևաբար, ըստ երկրների դրամական միջոցների ներհոսքի կենտրոնացումներ ունեցող բանկերն իրացվելիության ռիսկի կառավարման հարցում պետք է առանցքային ուշադրություն դարձնեն դրամական միջոցների ներհոսք ապահովող երկրների ֆինանսատնտեսական զարգացումների միտումներին՝ պատրաստ լինելով իրավիճակի վատթարացման դեպքում դրամական միջոցների ներհոսքի կտրուկ կրճատման սցենարին:

Իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանական լուրջ հիմնախնդիր է բանկի նշանակալից մասնակիցների, ինչպես նաև խոշոր ավանդատուների (անուղղակի նշանակալից մասնակիցներ) և վարկառուների վերլուծությունը: Բանկային գործունեության տեսանկյունից վերոհիշյալ կատեգորիաներն ինքնին լուրջ ռիսկեր են պարունակում, սակայն այդ ռիսկերը կրկնապատկվում են իրացվելիության տեսանկյունից: Ուղղակի նշանակալից մասնակիցների դերն ու նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրացվելիության ռիսկի կառավարման տեսանկյունից առանձնահատուկ է բանկի սեփականատերերի, առավել ևս նշանակալից սեփականատերերի դերակատարությունը: Պատահական չէ այն հանգամանքը, որ իրացվելիության ռիսկի վերլուծության ժամանակ առանձնացվում է բաժնետերերի բիզնեսի առանձնահատկությունը՝ կանխիկ դրամական հոսքերի շրջանառության տեսանկյունից: Իսկ նշանակալից մասնակիցներն էական առաքելություն ունեն, քանի որ հատկապես բանկի համար ֆորսմաժորային իրավիճակներում կարևորվում է այդ բաժնետերերի դիրքորոշումը՝ որպես դրամական առաջնային ներարկումներ կատարողների: Թերևս սա է պատճառը, որ ՀՀ ԿԲ-ն, ինչպես նաև տարբեր երկրների ԿԲ-եր, ներմուծել են բանկերում նշանակալից մասնակցության ձեռքբերման համար ԿԲ-ի կողմից նախնական համաձայնություն տալու ինստիտուտը, որպեսզի ԿԲ-ն վերլուծի նշանակալից մասնակիցների նաև իրացվելիության հարցում կարողությունները:

Նմանօրինակ ռիսկեր են պարունակում նաև խոշոր ավանդատուները, ովքեր, ինչպես ընդունված է անվանել իրենց՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի իրավունքով համարվում են անուղղակի նշանակալից մասնակիցներ<sup>1</sup>: Ինչպես միջազգային պրակտիկայում, այնպես էլ հայկական իրականության մեջ եղել են դեպքեր, երբ բանկերը կանգնել են իրացվելիության լուրջ հիմնախնդիրների առջև՝ կապված այն հանգամանքի հետ, որ խոշոր ավանդատուները սպառնացել են տվյալ բանկից հանել իրենց ավանդները: Խնդիրն այն է, որ իրականում խոշոր ավանդների միաժամանակյա արտահոսքը կարող է անգամ հանգեցնել բանկի անվճարունակության կամ սնանկության: Սա է պատճառը, որ բանկերը ներկայումս հաճախ խոշոր հաճա-

<sup>1</sup> ՀՀ օրենքը բանկերի և բանկային գործունեության մասին:

խորդների հետ տարվող աշխատանքների համար առանձին ստորաբաժանումներ են առանձնացնում:

Իրացվելիության տեսանկյունից պակաս ռիսկային չեն նաև խոշոր վարկառուները: Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի սահմանումը տեսականորեն սահմանափակում է կապիտալի հնգապատիկ չափով հնարավոր կորստի հավանականությունը: Այդուհանդերձ, խոշոր վարկառուների կողմից պարտավորությունների դեֆոլտը կարող է իրացվելիության լուրջ հիմնախնդիրներ առաջացնել յուրաքանչյուր բանկի համար: Հայաստանի պարագայում խոշոր վարկեր տրամադրելն առանձնահատուկ ռիսկեր է պարունակում, քանի որ հայկական ներդրումային դաշտը որոշ բանկերի կապիտալի նկատմամբ խոշոր վարկերի արդյունավետ բիզնես միջավայր չի ապահովում: Հետևաբար միանշանակ է այն փաստը, որ հայկական մակրոմիջավայրում խոշոր վարկերը կրկնակի ռիսկային են համարվում, որոնց վերադարձելիությունը լուրջ վտանգներ է պարունակում:

Նշենք, որ վերջին տասը տարիների ընթացքում (2002թ. սկսած) ՀՀ բանկային համակարգի համար բնութագրական է եղել խոշոր պարտավորությունների աճը ինչպես ծավալային, այնպես էլ հարաբերական (խոշոր պարտավորությունների տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորությունների մեջ) առումով: Այդուհանդերձ, 2011թ. տարեվերջին տարեսկզբի համեմատությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում խոշոր պարտավորությունների տեսակարար կշիռը նվազել է 0,4 տոկոսային կետով և կազմել է 27,2%<sup>1</sup>:

Ամփոփելով վերը ներկայացվածը՝ հարկ է նշել, որ խոշոր հաճախորդներ ունեցող բանկերն իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանական առանձնահատկություններ ունեն՝ հնարավոր տարաբնույթ սցենարների մշակման առումով:

Իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանության առանձնահատկություն կարելի է համարել բանկի կողմից սպասարկվող հաճախորդների բիզնեսի ոլորտի ուղղվածությունը: Միանշանակ է այն փաստը, որ յուրաքանչյուր բանկի համար դրամական միջոցների ներհոսքի ապահովումը կապված է նաև սպասարկվող հաճախորդների հետ: Այս տեսանկյունից կայուն իրացվելիություն ապահովելու համար անհրաժեշտ է դիվերսիֆիկացնել հաճախորդներին ըստ գործունեության ոլորտների և ճյուղերի՝ գյուղատնտեսություն, արդյունաբերություն, շինարարություն, առևտուր, սպասարկում և այլն: Վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը առաջին հերթին բավական լուրջ վնասներ պատճառեց նախ այն ճյուղերին, որոնք այսպես կոչված ինտեգրված էին միջազգային շուկաներում: Օրինակ, հանքարդյունաբերությունը, կապված պղնձի և մոլիբդենի միջազգային գների կտրուկ անկման հետ լուրջ, վնասներ կրեցին, որոնք դոմինոյի էֆեկտով տարածվեցին այն բանկերի վրա, որոնք սպասարկում էին այդ ձեռնարկություններին: Առանձնահատուկ վնաս կրեց նաև շինարարական բիզնեսը: Այսպիսով, հաճախորդների ֆոկուսի ռիսկ պարունակող բանկերն իրացվելիության ռիսկի կառավարման առումով պետք է ձգտեն դիվերսիֆիկացնել հաճախորդներին կամ էլ իրացվելիության ռիսկի կառավարման հնարավոր սցենարների մշակման ժամանակ առանձնահատուկ կարևորել հաճախորդի բիզնեսի ոլորտի կամ ճյուղի հնարավոր տարաբնույթ զարգացումները:

Իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանական վերը ներկայացված տրամաբանությունը հավասարապես պետք է տարածել բանկի կողմից սպասարկվող հաճախորդների վրա՝ ըստ

- տարածաշրջանների և երկրների պատկանելության,
- ներմուծման կամ արտահանման գործունեության,
- հիմնական գործունեության արժույթի,
- այսպես կոչված երկար-կարճ փողերով գործարքների առկայության,
- ֆինանսական, բանկային, արդյունաբերական խմբի մեջ ընդգրկվածության,
- հաշվարկների (կանխիկ-անկանխիկ) իրականացման և այլ տեսակների:

Վերը թվարկված գործոններից յուրաքանչյուրն ունի իր ուրույն դերն ու նշանակությունը

<sup>1</sup> Ֆինանսական կայունության հաշվետվություն, ՀՀ ԿԲ, 2012:

բանկի իրացվելիության ռիսկի կառավարման բնագավառում և առանձին իրավիճակներում կարող են առանցքային ազդեցություն ունենալ բանկի իրացվելիության ռիսկի մեծության վրա:

Իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանական մյուս առանձնահատկությունն այն է, որ դա հաճախ նույնականացվում է ակտիվների և պասիվների կառավարման հետ: Պատահական չէ այն փաստը, որ իրացվելիության կառավարման տրամաբանությունը հանգում է բանկի ակտիվների և պասիվների կառավարման հետ: Այսինքն, իրացվելիության ռիսկի արդյունավետ կառավարումը ենթադրում է բանկի ակտիվների և պարտավորությունների օպտիմալ կազմի և կառուցվածքի պահպանում:

Եվ վերջապես իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանության առանձնահատկությունն այն է, որ այն միաժամանակ խաչվում է համարյա բոլոր ռիսկերի տեսակների հետ: Այլ կերպ ասած, իրացվելիության ռիսկի բարձրացման հիմք կարող են հանդիսանալ հավասարապես վարկային, տոկոսադրույքի, արտարժույթային, գործառնական, գնային, իրավական, երկրի, բարի համբավի ռիսկի տեսակները: Յետևաբար, կարևորվում է այն հանգամանքը, որպեսզի վերը թվարկված ռիսկերի տեսակներն իրենց առանձին դրսևորումներով որպես գործոններ հաշվի առնվեն իրացվելիության ռիսկի կառավարման ցանկացած մոդելի մշակման ժամանակ:

Իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանական առանձնահատկություն է նաև այն, որ առկա է կախվածություն ռիսկի կառավարման գործիքակազմի և ժամանակային պարբերականության միջև: Այլ կերպ ասած իրացվելիության ռիսկի կառավարման գործիքակազմը նկատելի փոփոխվում է՝ կախված այն հանգամանքից, թե մշակվում է իրացվելիության կառավարման ժամային, օրական, ամսական, եռամսյակային թե ավելի երկարատև ժամանակահատվածի մոդել: Ինչ խոսք, այս պարագայում կարևորվում է այն, թե բանկն ինքնուրույն որ ժամանակային հատվածին է առաջնությունը տալիս, եթե իհարկե բացակայում է ԿԲ-ի կողմից սահմանված որևէ ինպերատիվ նորմ: Կան երկրներ, որտեղ ԿԲ-ի կողմից սահմանված է իրացվելիության կառավարման օրական հաշվետվությունների ներկայացման պահանջ: Սակայն երկրների գերակշռե մասը սահմանափակվում է միջին ամսական կտրվածքով իրացվելիության նորմատիվների սահմանաչափերի պահպանման պահանջով:

Իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանության առանձնահատկություն է նաև այն, որ պետք է դա հաշվի առնել բանկի ստրատեգիական զարգացման ծրագրերի մշակման ժամանակ: Այսինքն, բանկի հեռանկարային բիզնես ծրագրերում հստակ պետք է ուրվագծվի իրացվելիության ռիսկի կառավարման մոդելը, որը կարող է քանակական չափման ենթարկվել: Օրինակ, եթե տեսականորեն ու գործնականում ռիսկերի մյուս տեսակները դժվարությամբ են տրվում քանակական գնահատման, ապա իրացվելիության ռիսկը հնարավոր է մոտավոր գնահատման ենթարկել և տալ իրատեսականության աստիճանը: Նշենք, որ բանկի ստրատեգիական զարգացման ծրագրերը համարժեք են իրացվելիության ռիսկի կառավարման երկարաժամկետ մոդելների հետ:

Իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանությունն անբաժանելի է վիճակագրությունից և այլ կազմակերպությունների տվյալների օգտագործումից: Մասնավորապես իրացվելիության ռիսկի մեթոդաբանության վիճակագրական ասպեկտը կապվում է առանձին տվյալների պատմական շարքերի հետ: Բավարար պատմական շարքերի առկայությունն ինքնին բացահայտում է միտումներ և տրենդներ, որոնք այլ հավասար պայմանների դեպքում կարելի է տարածել էքստրապոլյացիայի մեթոդի օգնությամբ ապագա կանխատեսումներ կատարելու նպատակով: Այս պարագայում կարևորվում են հատկապես յուրաքանչյուր բանկի համար անհատական պատմական շարքերի տվյալների բազայի ձևավորումը և դրանց հիման վրա համապատասխան եզրահանգումների կատարումը:

Իրացվելիության ռիսկի արդյունավետ կառավարումը ենթադրում է նաև այլ կազմակերպությունների տվյալների կիրառություն: Մասնավորապես, իրացվելիության ռիսկի կառավարման ժամանակ կարող են կիրառել վարկանշող կազմակերպությունների կողմից հրապարակվող ռեյտինգների կիրառությունը տարբեր հաճախորդների նկատմամբ: Մասնավորապես, ռեյտինգները խիստ կարևոր են, օրինակ, պարտատոմսերի, թղթակցային հաշիվների մնացորդների,

տեղաբաշխված ավանդների իրացվելիության մակարդակը գնահատելու համար: Ընդհանրապես, ակտիվի իրացվելիությունը գնահատելու նպատակով կարելի է օգտագործել ցանկացած տեղեկատվություն, որը կարող է օգտակար լինել: Օրինակ, շատ բանկեր գաղտնի են պահում այն տեղեկատվությունը, համաձայն որի իրենք գնահատում են այս կամ այն հաճախորդին, երկիրը և այլն:

Սթրես-թեստերը նույնպես իրացվելիության ռիսկի գնահատման մեթոդներ են: Մասնավորապես այս պարագայում կարևորվում է այսպես կոչված իրավիճակի իրատեսական շիկացումը՝ էսկալացիան: Հարկ է անընդհատ ուժգնացնել իրավիճակի վատթարացումը, ընդհուպ մինչև արտաքին մակրո և ներքին միկրո ցուցանիշների հնարավոր վատթարացումը՝ նպատակ ունենալով մշակել համարժեք արդյունավետ գործիքակազմ: Որպես կանոն, իրացվելիության սթրես-թեստերի կամ շոկային սցենարների դեպքում կիրառվում են իրավիճակի էսկալացիայի հետևյալ հնարավոր տարբերակներն առանձին-առանձին կամ միաժամանակ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ/ժամկետային ավանդների 25%-ի մարում: Նշենք, որ ՀՀ ԿԲ-ի կողմից նույնպես ՀՀ բանկային համակարգի իրացվելիության ռիսկի գնահատման ժամանակ պարբերաբար կիրառվում է սթրես սցենարների մեթոդաբանությունը: Ընդ որում, ՀՀ բանկային համակարգի սթրես թեստավորման տվյալները վկայում են այն մասին, որ ֆիզիկական անձանց ժամկետային և ցպահանջ միջոցների անգամ միաժամանակյա 25%-անոց մարման դեպքում ՀՀ բանկային համակարգը մնում է իրացվելիության նորմատիվային դաշտի շրջանակներում: Ինչ խոսք, խիստ կարևոր է նման սթրես սցենարների կիրառությունը ոչ միայն ամբողջ բանկային համակարգի, այլև առանձին առևտրային բանկերի կտրվածքով: Մասնավորապես, նույն սցենարի դեպքում ՀՀ 8 առևտրային բանկերի կողմից խախտվում են իրացվելիության նորմատիվները<sup>1</sup>:

Վերջնահաշվում իրացվելիության ռիսկի կառավարման ժամանակ կարևորվում է հետևյալ հարցերի պատասխանը՝ երբ և ինչ գործիք, ինչու և ինչքան ժամանակով ու ինչքան ծավալով:

**Алберт Сафарян**

### **Особенности методологии анализа ликвидности в банках Республики Армении**

#### **Аннотация**

Управление риска ликвидности в коммерческих банках РА, связанных с различием макроэкономической среды, имеет ключевое значение. В этой связи, управление риска ликвидности должно учитывать влияние как внешних так и внутренних факторов.

Во время управления риском ликвидности, необходимо учитывать как сохранение главных экономических нормативов Центрального Банка РА, так и реализацию различных стресс-сценариев. Управление рисками ликвидности имеет ключевое значение для обеспечения продолжительности бизнеса.

**Albert Safaryan**

### **Methodological Peculiarities of Liquidity Risk Analysis in the Commercial Banks of Armenia**

#### **Abstract**

The management of liquidity risk in commercial banks that considers different factors of the macroeconomic environment of Armenia is of vital importance. Therefore, liquidity risk management should take into consideration both internal and external factors, compilation to the main norms of the Central Bank, and implementation of various stress-testing principles as well. Liquidity risk management is of high significance to ensure continues growth of the business.

<sup>1</sup> Ֆինանսական կայունության հաշվետվություն, ՀՀ ԿԲ, 2012:

## **ԻՐԱԳՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ**

Իրացվելիության ռիսկը բանկային առանցքային ռիսկերից մեկն է, որի կառավարման արդյունավետությունից մեծապես կախված է յուրաքանչյուր բանկի ֆինանսական կայունությունը: Պատահական չէ, որ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բանկի անվճարունակության պնդումներից է, եթե բանկն ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները<sup>1</sup>: Ըստ էության իրացվելիության ռիսկը նույնացվում է բանկի անվճարունակության, սնանկության հետ: Վերջնահաշվում, բանկերի ֆինանսական վիճակի վատթարացման, անվճարունակության և սնանկության հայկական փորձը ցույց է տալիս, որ ընդգծված կորելացիոն կապ գոյություն ունի իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվների խախտումների և սնանկության միջև: Իրացվելիության նորմատիվների սահմանաչափերի խախտումները լուրջ նախանշանային բարոմետրեր են, որոնք վկայում են բանկի ֆինանսական վիճակի վատթարացման մասին:

ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) կողմից տրված է իրացվելիության ռիսկի հետևյալ սահմանումը. «Իրացվելիության ռիսկն այն ներկա կամ ապագա հավանականությունն է, երբ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն առանց լրացուցիչ կորուստներ կրելու, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա»<sup>2</sup>: Միևնույն ժամանակ ընդունվում է, որ վերոհիշյալ սահմանումը շատ ընդհանուր բնույթ է կրում, և յուրաքանչյուր բանկ կարող է ներքին օգտագործման համար տալ իրացվելիության ռիսկի սեփական սահմանումը՝ գործունեության առանձնահատկություններից ելնելով:

Իրացվելիության հիմնախնդիրը գործնականում ունենում է ամենատարբեր դրսևորումներ: Օրինակ, իրացվելիության հիմնախնդրի (տվյալ պարագայում՝ դրամական միջոցների սակավության) մասին կարող են վկայել անգամ բանկերի հեռախոսային հարցումներն այն ավանդատուներին, որոնց ավանդի մարման ժամկետը մոտ ապագայում լրանում է՝ հաճախորդի մտադրություններն ավանդը հետ ստանալու կամ ժամկետը երկարաձգելու վերաբերյալ ճշգրտելու նպատակով:

Դրամական միջոցների պակասի դեպքում որոշ բանկեր բարձրացնում են ներգրավվող դրամական միջոցների (ցպահանջ, ժամկետային ավանդային, ընթացիկ հաշիվներ) նկատմամբ առաջարկվող տոկոսադրույքները: Փաստորեն, շուկայականից բարձր տոկոսադրույքների առաջարկը որոշ դեպքերում խիստ վտանգավոր է, քանի որ նպատակ ունի ներգրավել լրացուցիչ դրամական միջոցներ՝ հասարակայնության որոշ շրջանակների (բարձր եկամուտներ խոստանալով) մոլորեցնելու միջոցով:

Դրամական միջոցների պակասի մասին կարող են վկայել նաև ԿԲ-ի կողմից սահմանված պարտադիր պահուստավորման հիմնական տնտեսական նորմատիվի պարբերաբար խախտումները: Այս դեպքում բանկը դրամական միջոցների ներգրավման միջոցով կատարում է իր պարտավորություններն այլ պարտատերերի նկատմամբ՝ չկատարելով իր հիմնական պարտականությունը՝ ներգրավված դրամական միջոցների դիմաց պահուստավորում ԿԲ-ում:

Իրացվելիության հիմնախնդրի մասին կարելի է դատել՝ վերլուծության ենթարկելով բանկի ակտիվների կառուցվածքը: Օրինակ՝ ոչ ընթացիկ ակտիվների տեսակարար կշռի շարունակական ավելացումը կարող է իրացվելիության լուրջ հիմնախնդիր առաջացնել:

<sup>1</sup> «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենք, հոդված 2:

<sup>2</sup> ՀՀ ԿԲ նախագահի՝ 16.02.2011թ. որոշումը «Իրացվելիության ռիսկի կառավարման ձեռնարկը» հավանության արժանացնելու վերաբերյալ, ներածություն:

Իրացվելիության ռիսկի առանձնահատկություններից մեկն այն է, որ կարող է դրսևորվել այսպես կոչված «դոմինոյի էֆեկտի» արդյունքում: Օրինակ, համակարգային մի բանկի սնանկությունը, որտեղ կենտրոնացած են մի շարք բանկերի թղթակցային հաշիվների խոշոր գումարներ, կարող է լուրջ ազդեցություն ունենալ թղթակից բանկերի ֆինանսական վիճակի վրա:

Նույն տրամաբանությամբ իրացվելիության ռիսկը կարող է փոխանցվել երկրի կամ քաղաքական ռիսկից: Բանկերը թղթակցային հարաբերություններ կառուցելիս զգուշավորություն պետք է ցուցաբերեն ոչ միայն թղթակից բանկերի, այլ նաև երկրների ընտրության հարցում: Թերևս սա է պատճառը, որ բանկային պրակտիկայում ընդունված գործարար սովորույթի համաձայն, տարբեր երկրների ԿԲ-ները վերահսկողության նպատակներով սահմանում են օֆշորային տարածքների ցանկ, որտեղ գրանցված բանկերի հետ արգելվում է թղթակցային հարաբերությունների վարումը<sup>1</sup>:

Իրացվելիության ռիսկի ուսումնասիրություններն անմիջականորեն կապվում են դրամական միջոցների ներգրավման հնարավորությունների հետ: Իրացվելիության ժամանակավոր ու կարճատև հիմնախնդիրներ կարող են ունենալ բոլոր բանկերը, և այստեղ կարևորվում է այն հանգամանքը, թե որքանով է բանկը վայելում այն սուբյեկտների վստահությունը, որոնք դրամական միջոցների ներգրավման աղբյուրներ են: Բանկերի կողմից դրամական միջոցների ներգրավման աղբյուրները սահմանափակ են, իսկ ժամանակի կոնկրետ պահի դրությամբ այդ աղբյուրները նույնպես կարող են դրամական միջոցների ավելցուկ չունենալ:

Բանկերի իրացվելիության ռիսկի վերլուծությունը պետք է սկսել բանկի՝ դրամական միջոցներ ներգրավելու հնարավոր աղբյուրների ուսումնասիրությունից, և կարևոր է աղբյուրների առաջնահերթության սահմանումը: Յուրաքանչյուր բանկի համար դրամական միջոցների ներգրավման հնարավոր աղբյուրներն են<sup>2</sup>.

1. Բանկի սեփականատերերը (հիմնադիրները, մասնակիցները, փայտերերը, բաժնետերերը): Իրացվելիության տեսանկյունից կարևորվում է այն հանգամանքը, թե ովքեր են բանկի իրական տերերը, ինչ բիզնես են ներկայացնում, արդյոք ունեն՞ դրամական միջոցներ ներգրավելու մշտական հնարավորություններ, թե՞ ոչ: Հայտնի վարկանիշային կազմակերպությունները բանկերի վարկանիշները սահմանելիս նկատի են ունենում նաև բանկի՝ հզոր ֆինանսարդյունաբերական խմբի անդամ լինելու հանգամանքը:

2. Բանկի հաճախորդները՝ իրավաբանական և ֆիզիկական անձինք: Հատկապես այս հանգամանքը անմիջական փոխկապվածություն ունի բանկի նկատմամբ վստահության հետ: Որքան բարձր անուն ունի բանկը հասարակության մեջ՝ որպես ֆինանսապես կայուն և հզոր բանկ, այնքան, այլ հավասար պայմանների դեպքում, շատ հաճախորդներ կունենա տվյալ բանկը: Ասվածի դասական դրսևորումն է այն, որ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն, առաջարկելով ավանդների ամենացածր տոկոսադրույքները, տարիներ շարունակ ավանդային բազայի մեծությամբ առաջատար դիրքեր է զբաղեցնում բանկային համակարգում: Մյուս կողմից, հայկական իրականության մեջ բնակչությունը փողերը շատ հաճախ վստահում է այն բանկերին, որտեղ աշխատում են իրենց ընկերները, ծանոթները կամ բարեկամները:

3. Միջբանկային շուկան: Բանկերը կարող են միմյանցից նույնպես դրամական միջոցներ ներգրավել: Այս տեսանկյունից միջբանկային շուկան ամենաակտիվ գործող շուկաներից է և լայն հնարավորություն է ընձեռում տարբեր գործիքների միջոցով դրամական միջոցներ ներգրավելու (վարկ, ռեպո համաձայնագիր, սվոփ, օվերնայթ և այլն):

4. Տարբեր միջազգային ծրագրերով (WB, KFW, ռուսական վարկ և այլն) դրամական միջոցների ներգրավումը, որոնք վերջնահաշվում տրամադրվում են ԿԲ-ի կողմից:

5. ԿԲ-ից վարկերի ներգրավումը: Որպես կանոն, այս տարբերակը գործում է այն դեպքում, երբ վերը ներկայացված բոլոր հնարավոր աղբյուրներն ակտիվ չեն գործում, և բանկը ստիպված

<sup>1</sup> ՀՀ ԿԲ խորհրդի՝ 08.01.2003թ. «Չեղնագործիայի Հանրապետության կողմից լիցենզավորված բանկերում կամ ֆինանսավարկային կազմակերպություններում, ինչպես նաև դրանց համար թղթակցային և այլ հաշիվներ բացելը արգելելու մասին» թիվ 05-Ն որոշում, «Նաուրուի Հանրապետության կողմից լիցենզավորված բանկերում կամ ֆինանսավարկային կազմակերպություններում, ինչպես նաև դրանց համար թղթակցային և այլ հաշիվներ բացելը արգելելու մասին» թիվ 06-Ն որոշում:

<sup>2</sup> Դրամական միջոցների ներգրավման աղբյուրները ներկայացված են ըստ ներգրավման հնարավոր առաջնահերթության:

է լինում դիմելու վերջին ատյանի վարկատուին՝ ԿԲ-ին: Ինչ խոսք, ԿԲ-ն է որոշում կայացնում տվյալ բանկին վարկ տրամադրել, թե՞ ոչ, քանի որ ավելի հաճախ ԿԲ-ից վարկ ստանալու հայտը լուրջ ազդանշան է տվյալ բանկի ֆինանսական վիճակով զբաղվելու համար: Նշենք, որ ԿԲ-ն կարող է տրամադրել նաև համակարգային վարկ, որի նպատակը համակարգային ճգնաժամից խուսափելն է, երբ առանձին համակարգային բանկի սնանկությունը կարող է լուրջ հետևանքներ առաջացնել այլ բանկերում նույնպես:

Իրացվելիության ռիսկի վերլուծության տեսանկյունից կարևորվում են ակտիվների որակի դիտարկումը և հատկապես բարձր իրացվելի ակտիվների (ԲԻԱ) սահմանումը: ԲԻԱ սահմանումը տարբեր երկրներում, ընդհանրությունների հետ մեկտեղ, ունի նաև առանձնահատկություններ՝ պայմանավորված ռիսկերի կառավարման ոլորտում ձևավորված պատմամշակութային միտումներով: Այդուհանդերձ, ակտիվի բարձր իրացվելիությունը ենթադրում է երկու՝ միմյանց հետ փոխադրված չափորոշիչ: Առաջին՝ արագ իրացնելու հնարավորություն, երկրորդ՝ արժեքի կորստի բացակայությունը:

ՀՀ ԿԲ «Իրացվելիության ռիսկի կառավարման ձեռնարկում» տրված է ԲԻԱ հետևյալ սահմանումը. «Ակտիվները համարվում են բարձր իրացվելի, եթե դրանք կարող են հեշտությամբ և անմիջապես փոխարկվել կանխիկ դրամի իրենց արժեքի փոքր կորստով կամ առանց որևէ կորստի»<sup>1</sup>:

ՀՀ ԿԲ սահմանած կարգի համաձայն՝ ներկայումս ԲԻԱ են համարվում՝

- կանխիկ դրամական միջոցները (ներառյալ ճանապարհին և բանկումատներում գտնվողները), կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը
- ԿԲ-ում թղթակցային հաշվի միջոցները, ներդրված ավանդները
- Բանկային ոսկին (ներառյալ ճանապարհին գտնվող)
- ՀՀ ՖՆ-ի կողմից թողարկված փոխանցելի մուրհակները, ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերը և ԿԲ-ի թողարկած արժեթղթերը
- ԿԲ կողմից Գ- և բարձր վարկանիշ ստացած կազմակերպությունների արժեթղթերը
- Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված Ա+(Ա1) և բարձր վարկանիշ ունեցող պետությունների պետական գանձապետական պարտատոմսերը և կորպորատիվ պարտատոմսերը
- Ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում թղթակցային հաշիվները<sup>2</sup>

Նշենք, որ 2011թ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվների աճը (32%) 6 տոկոսային կետով գերազանցել է ԲԻԱ-երի աճը (26%)<sup>3</sup>:

ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանվել են իրացվելիության երկու՝ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվներ: Վերջիններիս նպատակն է բանկերի համար բավարար և կառավարելի իրացվելիություն ապահովելու նպատակով ԲԻԱ սահմանաչափերի հաստատումը:

Ընդհանուր իրացվելիության նորմատիվը հաշվարկվում է որպես ԲԻԱ-երի և ընդհանուր ակտիվների հարաբերակցություն (սահմանաչափը՝ 15%):

Ընթացիկ իրացվելիության նորմատիվը հաշվարկվում է որպես ԲԻԱ-երի և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցություն (սահմանաչափը՝ 60%):

ՀՀ բանկային համակարգի իրացվելիության նորմատիվների փաստացի մեծությունները վերջին տարիներին ներկայացված են ներքոհիշյալ աղյուսակում՝

*Աղյուսակ 3<sup>4</sup>*

	31.12.2009	31.12.2010	31.12.2011
Ընդհանուր իրացվելիության ցուցանիշ	34.4%	29.5%	27.9%
Ընթացիկ իրացվելիության ցուցանիշ	140.8%	131.5%	120.8%

<sup>1</sup> ՀՀ ԿԲ նախագահի՝ 16.02.2011թ. որոշումը «Իրացվելիության ռիսկի կառավարման ձեռնարկը» հավանության արժանացնելու վերաբերյալ, հավելված 2:

<sup>2</sup> Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, կանոնակարգ 2:

<sup>3</sup> ՀՀ բանկային համակարգը: Ջարգացում, կարգավորում, վերահսկողություն, ՀՀ ԿԲ, 2012:

<sup>4</sup> ՀՀ բանկային համակարգը: Ջարգացում, կարգավորում, վերահսկողություն, ՀՀ ԿԲ, 2012:



Ըստ էության իրացվելիության երկու նորմատիվներն էլ համարյա կրկնակի չափով կատարվում են:

ՀՀ բանկային համակարգի համար արդեն բավական երկար ժամանակահատված բնութագրական է միայն ավելցուկային իրացվելիությունը: Սա վկայում է, որ իրացվելիության ռիսկը բանկերում գտնվում է կառավարելիության շրջանակներում: ՀՀ ԿԲ-ն, վերլուծելով առևտրային բանկերի իրացվելիության նորմատիվների պատմական շարքերը, 2007թ. որոշում կայացրեց նվազեցնել և՛ ընդհանուր (20%-ից՝ 15%), և՛ ընթացիկ (80%-ից՝ 60%) իրացվելիության նորմատիվների սահմանաչափերը<sup>1</sup>:

Իրացվելիության տեսանկյունից հարկ է նկատի ունենալ կարևորագույն մեկ հանգամանք ևս: Արտաքուստ տպավորություն է ստեղծվում, թե ԲԻԱ-երի բարձր տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվների մեջ ապահովում է բանկի բարձր իրացվելիությունը: Սակայն, իրացվելիության նորմատիվների խիստ բարձր մակարդակը վատ նախանշան է բանկի համար այն պարզ տրամաբանությամբ, որ ԲԻԱ-երի մեծ տեսակարար կշիռը վկայում է բանկի ակտիվների կազմում ոչ եկամտաբեր ակտիվների բարձր տեսակարար կշռի մասին: Վերջինս վկայում է այն մասին, որ բանկն ըստ էության բանկային գործունեություն (ավանդների ներգրավում-վարկերի տրամադրում) չի իրականացնում, ունի միջոցների արդյունավետ տեղաբաշխման լուրջ խնդիր, որն արտահայտվում է ավելցուկային իրացվելիությամբ: Պատահական չէ, որ գործնականում իրացվելիության բարձր մակարդակ ունենում են այն բանկերը, որոնք ֆինանսական վիճակի բարելավման նպատակով պայմանագրային հարաբերությունների մեջ են ԿԲ-ի հետ, և դրանց համար բանկային գործունեության սահմանափակումներ են նախատեսված, որն էլ կանխիկ դրամական միջոցների ավելացման պատճառ է դառնում:

Ինչպես վկայում են ռուսական ֆինանսական ճգնաժամի դասերը՝ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվների պահպանումը ռիսկից ապահովագրման անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է, և խիստ կարևոր է խորքային վերլուծությունների իրականացումը ԿԲ-երի կողմից՝ սուբյեկտիվ դատողությունների լայն կիրառմամբ: Սա է պատճառը, որ իրացվելիության ռիսկի կառավարման վերլուծության և գնահատման ժամանակ կիրառվում են բազմաթիվ այլ գործիքներ նույնպես, օրինակ՝ սթրես-թեսթեր, իրացվելիության ճեղքվածի (GAP) մոդելը, իրացվելիության պատմական շարքերի վերլուծության մեթոդները և այլն:

Իրացվելիության գնահատման սթրես-թեսթերի տնտեսագիտական բովանդակությունը կայանում է նրանում, որ հնարավոր տարաբնույթ սցենարներ են կիրառվում բանկի նկատմամբ, օրինակ, 10-25-35% ավանդատուների միաժամանակյա ավանդները հետ պահանջելու տարբերակը, կամ էլ ակտիվների մասով՝ 15-25-35% վարկառուների կողմից դեֆոլտի հայտարարումը: Նման սցենարներով ճշգրտվում է բանկի դիմակայունության մակարդակը:

Իրացվելիության ռիսկի կառավարման կարևորագույն գործիքներից է նաև իրացվելիության ճեղքվածքի կառավարումը՝ GAP մոդելով: Այս գործիքի առանձնահատկությունն այն է, որ ակտիվներն ու պարտավորությունները համադրվում են ըստ մարման ժամկետների, և հաշվարկվում է յուրաքանչյուր կոնկրետ պահի դրությամբ դիսկրետ իրացվելիության ճեղքվածքը (դրական կամ բացասական): Միաժամանակ հաշվարկվում է կուտակային GAP-ը, որը աճողական առումով ցուցադրում է բանկի իրացվելիության ճեղքվածքը: Նշենք, որ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված է հատուկ հաշվետվական ձև, որը ամսական կտրվածքով բացահայտում է բանկի ներգրաված և տեղաբաշխած միջոցներն ըստ ժամկետայնության<sup>2</sup>:

Այդուհանդերձ, GAP մեթոդաբանության դեպքում իրականացվում է ակտիվների և պարտավորությունների համադրում ըստ ժամկետայնության, որպեսզի կանխատեսվի իրացվելիության ապագա պահանջը: GAP մոդելով իրականացվում է իրացվելիության գնահատում կոնկրետ պահի դրությամբ, և հետևաբար այս մեթոդաբանության հիմնական թերությունն այն է, որ հաշվի

<sup>1</sup> Ֆինանսական կայունության հաշվետվություն, ՀՀ ԿԲ, 2012թ.:

<sup>2</sup> Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը, կանոնակարգ 3:

չի առնում ապագայի հնարավոր փոփոխությունները՝ ինչպես կապված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային մեծությունների տատանումների, այնպես էլ ակտիվները սահմանված ժամկետներում հետ չստանալու հավանականության հետ:

Գործնականում կիրառություն է ստացել նաև իրացվելիության պատմական շարքերի վերլուծության մեթոդը: Համաձայն այս մեթոդաբանության՝ հավաքագրվում են իրացվելիության ճեղքվածքների դինամիկայի պատմական շարքերը և դրանց օգնությամբ է գնահատվում այն, թե որքանով է բանկն ապահովում ակնթարթային և մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ ակտիվների և պարտավորությունների իրացվելիությունը դիտարկվող բոլոր ժամանակաշրջաններում: Հետևաբար, այս դեպքում գնահատվում է նաև բանկի պոտենցիալ կարողությունն իրացվելիության ռիսկի կառավարման հարցում: Մասնավորապես, բանկի իրացվելիության ճեղքվածքը կարող է լինել բացասական, սակայն բանկի ակնթարթային և մինչև 90 օր իրացվելիության ճեղքվածքների պատմական շարքերը լինեն դրական, որը վկայում է բանկի իրացվելիության ճկուն կառավարման մասին:

Վերը ներկայացված գործիքակազմն օգնում է բանկերին իրատեսական գնահատական տալ իրացվելիության հիմնախնդիրների ժամանակային կտրվածքով և առանձնացնել հատկապես ռիսկային շրջանները: Նման վերլուծությունների իրականացումն օգնում է բանկերին յուրաքանչյուր կոնկրետ ժամանակահատվածի համար իրացվելիության բարելավման համար համապատասխան գործառնություններ իրականացնել, օրինակ, արժեթղթեր գնել/վաճառել, ավելացնել/պակասեցնել թղթակցային հաշիվների մնացորդները, կնքել ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ և այլն:

Իրացվելիության ռիսկի կառավարման լրջագույն հարցերից մեկը իրացվելիության կառավարման ժամկետի որոշումն է: Միջազգային պրակտիկայում առկա են իրացվելիության ժամային, օրական, շաբաթական, ամսական կառավարման տարբերակներ:

Իրացվելիության ռիսկի կառավարման ժամկետայնության հետ մեկտեղ կարևորվում է այն հանգամանքը, թե առևտրային բանկի որ կառուցվածքային ստորաբաժանումն է ի վիճակի ամենաարդյունավետ ձևով կառավարելու իրացվելիության ռիսկը: Որոշ բանկերում այս խնդիրը դրված է կոնկրետ գանձապետարանի, ռիսկերի կառավարման ստորաբաժանման, իսկ որոշ բանկերում էլ իրացվելիության ռիսկի կառավարման համար համագործակցում են գանձապետարանը, վարկային և ավանդային գործառնությունների ստորաբաժանումները միաժամանակ:

Իրացվելիության ռիսկի կառավարման տեսանկյունից էական է դրամական միջոցների հոսքերի մասին ֆինանսական հաշվետվության վերլուծությունը, որը միակ հաշվետվությունն է, որը կազմվում է ոչ թե հաշվեգրման, այլ դրամարկղային մեթոդով: Տնտեսական վերլուծաբանների և տնտեսական որոշումներ կայացնողների համար կարևոր նշանակություն ունի բանկի դրամական միջոցների հոսքերի դրական կամ բացասական լինելը:

Միջազգային տնտեսության մեջ տեղի ունեցած վերջին իրադարձությունները (հատկապես ամերիկյան էներգետիկ «Էներոն» կազմակերպության բաժնետոմսերի շուկայական արժեքի կտրուկ անկումը) մեկ անգամ ևս համոզիչ ապացուցում են, որ անգամ հայտնի աուդիտորական կամ վարկանիշային կազմակերպությունների համար դժվար է կանխատեսել կազմակերպությունների սրընթաց սնանկությունը: Մինչդեռ, դրամական հոսքերի հաշվետվության և իրացվելիության ռիսկի հիմնավոր վերլուծությունը բավական մեծ տեղեկատվություն է պարունակում:

Կարևորելով իրացվելիության ռիսկի կառավարման նշանակությունը՝ նշենք, որ նախկինում բանկային վերահսկողության Բազեյան կոմիտեն ընդհանրապես չէր զբաղվում բանկային իրացվելիության հիմնախնդիրներով՝ դրանց հնարավոր լուծումները թողնելով ազգային կարգավորող մարմինների հայեցողությանը: Սակայն ֆինանսական շուկաներում ընթացիկ դինամիկ փոփոխությունները, ինչպես նաև դրանց հնարավոր հետևանքների կառավարման հրատապությունը հաշվի առնելով՝ Բազեյան կոմիտեն ներկայումս բավական լուրջ դիտարկումներ է իրականացնում իրացվելիության կառավարման բնագավառում և այդ վերլուծությունների արդյունքում ներկայացնում հիմնավոր առաջարկություններ և երաշխավորություններ: Մասնավորապես, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի դասերի հիման վրա Բազեյան

Կոմիտեի կողմից առաջարկվում է իրացվելիության ծածկույթի (Liquidity coverage ratio, LCR) և զուտ կայուն ֆինանսավորման (Net stable funding ratio, NSFR) գործակիցների կիրառությունը:

**Алберт Сафарян**

## **Управление риском ликвидности в коммерческих банках**

### **Аннотация**

С целью стабильного развития современной финансово-банковской системы, главным становится эффективное управление банковскими рисками. Среди банковских рисков важнейшее значение имеет риск ликвидности. Международная практика свидетельствует о том, что управление рисками ликвидности имеет ряд взаимосвязанных особенностей.

Оптимальное управление рисками ликвидности связывается как с функционированием известных инструментов, так и с детальным анализом явлений, которые действуют на практике. С этой точки зрения, очень важно выявление проблемы ликвидности и ее управления.

**Albert Safaryan**

## **Liquidity Risk Management in Commercial Banks**

### **Abstract**

Efficient risk management in banks is crucial for sustainable growth of the modern financial and banking system. Among various banking risks, liquidity risk is of particular importance. International practice shows that liquidity risk management has various interconnected characteristics. Efficient liquidity risk management is not only related to the effective use of popular tools but also to the detailed analysis of diverse practical applications. From this point of view, early detection and management of the liquidity issues is extremely important.

**ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԴԵՐՈՒ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԵՎ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԿՐՈՒՄԻ ԲԱՆԿԵՐՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում օրըստօրե զարգացող գործընթացներում խիստ կարևորվում է նրա արդյունավետ վերահսկողությունը: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն պայմանների բավարարումից բացի՝ անհրաժեշտ է բանկի ներքին աուդիտից պահանջել ներքին հսկողության կատարելագործում և արդյունավետ գործունեության ապահովվածություն<sup>1</sup>: «Բանկերի և բանկային գործունեության» օրենքով սահմանվում են բանկի կառավարման մարմինների մասով նվազագույն պահանջները, որոնցով պարտադիր պաշտոններ են համարվում գործադիր տնօրենը, գլխավոր հաշվապահը, ինչպես նաև ներքին աուդիտի վարչության կազմը, որոնց դերն ու պարտականությունները հստակեցվում են<sup>2</sup>: Համաձայն կորպորատիվ կառավարման հայեցակարգի՝ ներքին աուդիտը ենթարկվում է խորհրդին: Ներկայումս բանկային կառավարման տեսական և պրակտիկ բնագավառներում վերահսկողության և ներքին հսկողության մասով դեռևս չլուծված խնդիրներից է բանկերից վերահսկող մարմիններին՝ առաջին հերթին ինսպեկտորներին տրվող տեղեկատվության խեղաթյուրումը: Այդ իսկ պատճառով բանկի ներքին աուդիտորները, խնդրի հայտնաբերման դեպքում անմիջապես պետք է հայտնեն բանկի խորհրդին և ՀՀ ԿԲ-ին՝ խախտումների մասով, այլապես ներքին աուդիտորները, համաձայն օրենքի, կարող են կրել պատժամիջոցներ<sup>3</sup>: Բացի այդ, համարում ենք, որ ներքին աուդիտը բանկում պետք է իրականացվի անընդհատության սկզբունքով: Բանկի ներքին աուդիտորների ֆունկցիաները օրենքով, տարբեր նորմատիվ իրավական ակտերով ներկայացված է կցկտուր կերպով: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում ավելի հստակեցնել նրանց դերը, պարտականությունները, հաջողության հասնելու ուղիները և աշխատանքի որակի բարձրացման խնդիրները:

**Ի՞նչ է ներքին աուդիտը:**

- Ներքին աուդիտը բանկի անապահով վիճակին և անսպասելի պատահարների դեպքում առաջին պաշտպանությունն է ցուցաբերում:
- Այն շարունակական և անաչառ գնահատական է տրամադրում բանկում իրականացվող շարունակական գործընթացների արժանահավատության, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ:
- Ներքին աուդիտը գնահատական է տրամադրում բանկի խորհրդին՝ բանկի գործունեության վերաբերյալ, իրականացնում է խորհրդատվական գործունեություն, որի նպատակն է արժեք ավելացնել և բարելավել կազմակերպության գործունեությունը:
- Այն օգնում է կազմակերպությանը՝ հասնելու իր նպատակներին համակարգված, կարգապահ մոտեցմամբ՝ գնահատելով և բարելավելով ռիսկերի կառավարման, վերահսկման, ղեկավարման արդյունավետությունը:

Ներքին աուդիտը պատասխանատվություն է կրում հետևյալ սպեցիֆիկ նպատակների համար.<sup>4</sup>

<sup>1</sup> Положение о Службе внутреннего контроля ОАО АКБ “Смолевич” (Новая редакция, (Утверждено Решением Совета банка, Протокол # 8 от 13 апреля 2004г.

<sup>2</sup> «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքը, հոդված 21, կետ 3:

<sup>3</sup> Բանկերում կորպորատիվ կառավարման հայեցակարգը, [www.cba.am](http://www.cba.am), էջ 9:

<sup>4</sup> National Bank of Belgium, Auditcharter 2001, Approved by the Board of Directors on 15 June 2005.

- Բոլոր ստորաբաժանումներում կատարելագործել կազմակերպության ռիսկերի ճանաչումը, դրանց չափումը,
- Ռիսկերի անկախ գնահատում իրականացնել և վերահսկողական քաղաքականություն մշակել,
- Խորհրդին և ստորաբաժանումների ղեկավարներին խորհուրդներ և առաջարկություններ ներկայացնել ներքին հսկողության համակարգի կատարելագործման համար, քանի որ ներքին հսկողությունը բանկի կողմից իրականացվող գործընթաց է, որը հնարավորություն է տալիս հասնելու սահմանված նպատակներին և գործելու կարգապահորեն, օրենքներին համապատասխան ու կանոնակարգված<sup>1</sup>:


**Ի՞նչ է անհրաժեշտ ներքին աուդիտին:**

- Բանկի ներքին աուդիտի աշխատակիցները պետք է ունենան բազմակողմանի փորձ և հմտություններ, բանկի ռազմավարության, գործընթացների, ներքին աուդիտի ստանդարտների և միջազգային լավագույն փորձերի մասին խորը իմացություն, տեղեկատվական տեխնոլոգիաների մասով փորձ և հասկացողություն, ֆինանսական և գործառնական բնագավառներում գործընթացները ճիշտ իրականացնելու և բարելավելու գիտելիքներ և հմտություններ, հաղորդակցման և խնդիրների ներկայացման ունակություններ, ինչպես նաև մասնագիտական որակավորում:
- Ներքին աուդիտորները պետք է լինեն որակավորված հաշվապահության, աուդիտի, տնտեսագիտության, ֆինանսների, վիճակագրության, տեղեկատվական տեխնոլոգիաների, հարկերի, օրենքների, շրջակա միջավայրի և այնպիսի բնագավառների մասին, որոնք նրանք կհանդիպեն ներքին աուդիտի գործունեության ժամանակ:

Ներքին աուդիտի գործունեության արդյունավետությունը կախված է որոշ հանգամանքներից: Այն պետք է շարունակաբար զարգացնի բիզնեսը հասկանալու հմտությունը, պետք է լինի առավելագույնս անաչառ, հետևի գործընթացների համարժեքությանը, պետք է արժեք ավելացնի բանկում իրականացվող աշխատանքներին: Ներքին աուդիտը պետք է ունենա ռիսկերի ճանաչման և պլանավորման ուժեղ մեթոդոլոգիա և համաձայն դրա տրամադրի բարձրորակ սպասարկում, պետք է կիրառի որոշակի տեխնոլոգիաներ, որպեսզի հասնի ներքին աուդիտի կողմից կատարված աշխատանքների ապահովության պահպանմանը, պետք է կիրառի համապատասխան շրջանակ, որով կորոշվի ներքին աուդիտի աշխատանքը, այն պետք է զարգացնի և կառուցի համապատասխան հարաբերություններ իր հիմնական գործընկերների հետ:

Աուդիտորները պետք է ստեղծեն կազմակերպությանը արժեք ավելացնելու պատկեր, այլ ոչ թե լինեն միայն հետազոտողներ: Աուդիտորները պետք է տիրապետեն ուժեղ լսողական և միջանձնային հմտությունների: Նրանք պետք է զգույշ լինեն որոշակի տոնով խոսելուց կազմակերպության տարբեր մակարդակներում, տարբեր տիպի անհատների հետ աշխատելիս: Աուդիտորները պետք է տեղյակ լինեն, թե նրանց պահվածքը ինչպես կազդի աուդիտի ենթարկվողների վրա:

<sup>1</sup> [www.Slavinvest.ru/ru/about\\_dokum/orgvnutrkontr](http://www.Slavinvest.ru/ru/about_dokum/orgvnutrkontr).



Շատ արդյունավետ լինելու համար ներքին աուդիտորները պետք կարողանան ցուցաբերել՝

- Արդյունավետ բանավոր և գրավոր շփվելու հմտություններ:
- Ամուր միջանձնային հարաբերություններ:
- Լավ սովորեցնելու և խուճբն առաջնորդելու հմտություններ:
- Կարողություն՝ ազդելու բոլոր մակարդակների վրա:
- Արդյունավետ բանավոր և գրավոր շփվելու հմտություններ:
- Ամուր միջանձնային հարաբերություններ:
- Լավ սովորեցնելու և խուճբն առաջնորդելու հմտություններ:
- Կարողություն՝ ազդելու բոլոր մակարդակների վրա:

**Ներքին աուդիտի առաքելությունը:** Ներքին աուդիտը իր կողմից կատարած ստուգումների, հետազոտությունների արդյունքում բանկի տնօրենների խորհրդին տրամադրում է անկախ և օբյեկտիվ գնահատականներ գործընթացների հետևանքների, արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործընթացների, կարգերի, կանոնակարգերի և այլ վերահսկողական քայլերի վերաբերյալ:

**Ներքին աուդիտի նպատակները:** Աջակցել բանկի բաժնետերերին և ղեկավարությանը հասնելու բանկի նպատակներին՝ առաջարկելով ձևավորված լուծումներ, որոնք կնպաստեն ռիսկերի հետևանքները կանխելուն, ներքին վերահսկողությանը՝ ապահովելով ֆինանսական տեղեկատվության հուսալիությունն ու համարժեք բացահայտումը: Ներքին աուդիտը պաշտպանում է բանկի հեղինակությունը և բաժնետերերի, աշխատակիցների և հաճախորդների շահերը:

**Ներքին աուդիտի ստուգման ոլորտները:**

1. Ներքին աուդիտը հետևում է բանկի ռազմավարության զարգացմանը հետևյալ կերպով՝
  - 1.1. Արդյո՞ք բանկի ռազմավարությունը թարմացվում է պարբերաբար և հաստատվում համապատասխան մակարդակներում:
  - 1.2. Արդյո՞ք գլխամասի և ստորաբաժանումների ռազմավարությունը համահունչ է բանկի ղեկավարության ընդհանուր ռազմավարության հետ:
  - 1.3. Արդյոք հատուկ սահմանված մեթոդներ կան, որպեսզի տեղի ունեցող իրադարձությունների ռիսկայնությունը չափվեն:
  - 1.4. Արդյո՞ք ռազմավարությունները հստակ կապակցված են միմյանց հետ բոլոր մակարդակներում:
2. Ներքին աուդիտը հետևում է բանկային ծառայությունների ստեղծմանն ու զարգացմանը հետևյալ կերպով՝
  - 2.1. Արդյո՞ք նոր ծառայությունները և համակարգերը զարգանում են բանկի ռազմավարական նպատակներին համապատասխան և հաստատվում են համապատասխան

- մակարդակներում, և արդյո՞ք բանկային համակարգի զարգացումը վերահսկվում և հաստատվում է մինչև դրա իրականացումը:
- 2.2. Արդյո՞ք նոր պրոդուկտներն ու ծառայությունները աջակցող ենթակառուցվածքները կատարելագործվում են մինչև դրանք գործի դնելը:
  3. Ներքին աուդիտը հետևում է սպասարկող անձնակազմին/Front office, որոնք վաճառում են ծառայությունները հետևյալ կերպ:
    - 3.1. Ստուգում է գործարքների եկամտաբերության համադրելիությունը նպատակների հետ:
    - 3.2. Ստուգում է պայմանագրային պարտավորությունների կարգերին և սահմանաչափերին համապատասխան լինելը, համալիր ֆինանսական գործարքների հաստատված լինելը համապատասխան կայացրած որոշումների մակարդակներում՝ կախված իրենց պոտենցիալ ազդեցությունից բանկի հեղինակության վրա:
    - 3.3. Ստուգում է լիազորագրային (ֆիդուցիար) պարտականությունների գաղափարի հասկանալիությունն ու ընդունելի լինելը այն ղեկավարների կողմից, որոնք պատասխանատվություն են կրում հաճախորդների ակտիվներով գործարքներ իրականացնելիս:
  4. Ներքին աուդիտը հետևում է ծառայությունների և պրոդուկտների առաքման գործընթացին, որը հետգործառնությունների բաժնի /Back office պատասխանատվության տակ է, օրինակ արդյո՞ք.
    - 4.1. Հասարակական, ֆինանսական և նյութական ռեսուրսները օգտագործվում են տնտեսելով, հետևողականորեն և արդյունավետ:
    - 4.2. Գործարքների շարունակականությունը պատահարի դեպքում ապահովագրված է վերականգողական ծրագրերով:
    - 4.3. Տեղեկատվական համակարգն օժանդակող տեխնոլոգիաները վստահելի են, բարձրորակ և բիզնեսի կարիքներին մրցակցայնորեն են արձագանքում:
    - 4.4. Բանկի պայմանագրային պարտականությունները և այլ գործարքները ճշգրիտ են և ամբողջովին ձևակերպված գրանցամատյաններում:
  5. Ներքին աուդիտը հետևում է վաճառքից հետո ծառայությունների մատուցման գործընթացին, օրինակ արդյո՞ք.
    - 5.1. Հաճախորդի պահանջները իրականացվում է բարձր մակարդակով:
    - 5.2. Տեղեկատվության նկատմամբ պահանջին արձագանքվում է ժամանակին՝ հաշվի առնելով դրա տնտեսումը, հետևողականությունն ու արդյունավետությունը:
  6. Վերահսկողություն անելու հետ մեկտեղ ներքին աուդիտի պարտականությունների մեջ է մտնում նաև ռիսկերի մոնիթորինգ իրականացնելը /Middle office, օրինակ արդյո՞ք.
    - 6.1. Կառավարչական և ֆինանսական տեղեկատվությունը կազմվում և տրամադրվում է վստահելի և ժամանակին: Ընդունված հաշվապահական սկզբունքները, ներառյալ վերահսկող մարմինների հաշվապահական պահանջները ճշգրիտ են կատարվում:
    - 6.2. Բանկի ակտիվների ինտեգրվածությունը երաշխավորված է:
    - 6.3. Ռիսկերը կառավարվում են արժանահավատորեն՝ ընդունված կարգերին և ընթացակարգերին համաձայն:
    - 6.4. Ռիսկերի կառավարման մասով բոլոր հաշվետվությունները պատրաստվում են անկախ, վստահելի և զտված՝ օգտվելով հաստատված մեթոդոլոգիաներից: Վարկերի վարկանշումը ճիշտ է, պահուստավորումը՝ համարժեք, իսկ հաշիվները, որոնք համարվում են բարձր ռիսկային, խիստ մոնիթորինգի են ենթարկվում:
    - 6.5. Բանկի կորպորատիվ կառավարումը բավարարում է վերահսկողների պահանջները:
    - 6.6. Բանկը կանխատեսվող ռիսկերի նվազեցնելով իր միջոցները տեղաբաշխելու համակարգ ունի:
    - 6.7. Համապատասխան ընթացակարգեր և կողմնակի արարողակարգերը ֆունկցիոնալ են և անկախ:

**Աուդիտի ամբողջություն:** Աուդիտին ենթակա բնագավառները պետք է հաշվարկել բացահայտելու համար, թե որ ոլորտներն են անհրաժեշտ ներառել պլանավորման գործընթացում: Այսօրվա իրականության մեջ ՀՀ բանկային համակարգում ներքին աուդիտի ստորաբաժանումները բանկը աուդիտ են անում հետևյալ սկզբունքով.

1. Ջարգացնում են աուդիտի ենթարկվող բնագավառների տարրերը կազմակերպությունում:
2. Իրականացնում են այդ տարրերի ռիսկերի գնահատում՝ հիմնվելով ներքին աուդիտի կողմից իրականացվող ռիսկերի գնահատման վրա:
3. Գնահատում են աուդիտ իրականացնելու համար նախատեսված բնագավառները (բարձր, միջին, ցածր):
4. Մշակում են աուդիտ իրականացնելու համար նախատեսված բնագավառների տարբեր էլեմենտներ՝ հիմնվելով ներքին աուդիտի կողմից կատարված ռիսկերի գնահատման վրա:
5. Վարկանշում են աուդիտի բնագավառները (բարձր, միջին, ցածր):
6. Ընտրում են ամենաբարձր վարկանշված բնագավառներն աուդիտի համար (այն դառնում է աուդիտի տարեկան պլանի նախագծի մի մաս):
7. Քննարկում են այն ղեկավարության հետ:
8. Հաստատում են պլանն աուդիտի հանձնաժողովի հետ (հնարավորություն ընձեռնելով նրանց տեղյակ լինելու այն մասին, թե որ ոլորտներն են պատրաստվում աուդիտ անել):
9. Աուդիտ են անում վերահսկման գործիքներն աուդիտի ենթարկվելու համար ընտրված այն բնագավառներում, որտեղ բարձր է ռիսկը:

Ավելի նոր մոտեցումը, որը համապատասխանում է միջազգային չափանիշներին հետևյալն է<sup>1</sup>.

1. Սկսել այն ռիսկերից, որոնք վերաբերում են ընդհանուր կազմակերպությանը:
2. Վերանայել բարձր վարկանշված ռիսկերը և սահմանել՝ արդյո՞ք հնարավոր են դրանք աուդիտ անել:
3. Ընտրել աուդիտի համար ամենառիսկային ոլորտները:
4. Քննարկել այն ղեկավարության հետ:
5. Հաստատել պլանը աուդիտի հանձնաժողովի հետ:
6. Գնահատել՝ արդյոք կառավարման գործընթացները կարողանում են հաղթահարել ավելի կարևոր ռիսկերը:
7. Երաշխիք տրամադրել վերոնշյալների մասին ղեկավարությանը և խորհրդին:

Աուդիտի ամբողջության գաղափարը շատ կարևոր է, այնուամենայնիվ միայն հիմնվելով մասնաճյուղերի, ստորաբաժանումների, ծառայությունների և սպասարկման համակարգերի վրա այժմ կարևոր է նաև մտածել կազմակերպության ռիսկերի, կառավարման հսկողության և պատասխանատվության մասին:

Ռիսկերի գնահատման վրա հիմնված աուդիտորական մոտեցումը տրամադրում է կարևոր վարկանիշներ, որոնցով երևում է, թե արդյոք ներքին աուդիտի աշխատանքը կազմված է տարբեր գործընթացների ռիսկերի, ադմինիստրատիվ և բիզնես գործընթացների հիման վրա: Այս առաջնային վարկանիշները սահմանում են յուրաքանչյուր աուդիտի հաճախականությունը, ինչպես նաև ներքին աուդիտի աշխատանքային պլանը, որը կազմվում է 3 տարով:

Ներքին աուդիտը պետք է հաշվետվություն տրամադրի կատարած աշխատանքների և վարչության լիազորության իրականացման մասին, ինչպես նաև վերահսկի այլ անձանց մուտքը իր փաստաթղթերին, սահմանափակի դրանց հասանելիության մասով մարդկանց ցանկը: Բոլոր անհրաժեշտ քայլերը պետք է ձեռնարկվեն, որպեսզի պահպանվի բանկային գաղտնիքը: Ներքին աուդիտը իրավաբանական խորհրդատուի կարծիքը պետք է հարցնի, մինչև ինչ-որ մեկին, օրինակ արտաքին աուդիտորներին կամ այլ վերահսկողներին, թույլ տա իրենց փաստաթղթերը՝ ներառյալ հաշվետվությունները ուսումնասիրել:

Ներքին աուդիտն իր հերթին իրավունք ունի ուղղակիորեն հաղորդակցվել բանկի մասնագետների և ղեկավարների հետ, հասանելիության իրավունք ունի բոլոր փաստա-

<sup>1</sup> Risk-Based Audit Plan 2011/12–2013/14, Office of the Privacy Commissioner of Canada, Final Report, March 29, 2011.



թղթերին, ձևակերպումներին և տվյալներին և կարող է պահանջել աշխատակիցներից իրեն տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը: Ի լրումն՝ ներքին աուդիտը կարող է ցանկացած ժամանակ չալանավորած հանդիպումներ պահանջել աուդիտի հանձնաժողովի հետ:

Այսօր բանկերի առջև խնդիր է դրված անցում կատարել նորագույն, միջազգայնորեն ընդունված ստանդարտների, որոնցից հայտի են Ներքին աուդիտի մասնագիտական հմտությունների միջազգային ստանդարտների ինստիտուտի կողմից մշակված ստանդարտները: Համաձայն այս ստանդարտների ներքին աուդիտը պետք է իրականացնի իր գործողությունների ծրագրի անկախ գնահատում առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ<sup>1</sup>: Ներքին աուդիտը պետք է իրականացնի պարբերական, անկախ վերանայում ներքին աուդիտի ֆունկցիաների արդյունավետության և արդյունքների մասով և մասնագիտական ստանդարտների մասով առնվազն հինգ տարին մեկ: Ներքին աուդիտի կանոնակարգը պետք է պարբերաբար վերանայվի աուդիտի հանձնաժողովի կողմից: Հիմնավոր փոփոխությունները պետք է հաստատվեն տնօրենների խորհրդի կողմից՝ համաձայն աուդիտի հանձնաժողովի հանձնարարականի:

**Հետազոտությունների բնագավառներ:** Ներքին աուդիտի լիազորությունը ավելի շատ ոչ թե վերահսկելն է, այլ արդյունքների գնահատումը, այն ուղղակի պատասխանատվություն չի կրում այն գործընթացների մասով, որոնք ուսումնասիրում է: Այս նպատակով իր աշխատանքներն ու կարծիքները ոչ մի կերպ չեն մեղմացնում ղեկավարների պարտականությունները՝ ներառյալ պարտականությունը իրականացնելու և ուղղումներ անելու նպատակով ետստուգում անելուն: Այնուամենայնիվ, այն բոլոր դեպքերում որոնց մասով առաջարկություններ են արվել, Ներքին աուդիտի լիազորությունն է իրականացնել անկախ գնահատում այն նախաձեռնությունների մասով, որոնք սահմանել են ղեկավարները, որպեսզի խնդիրներ լուծեն և այդ խնդիրների լուծման ժամանակացույցը կազմեն:

**Ապահովվածություն:** Ներքին աուդիտը պատասխանատու է կորպորատիվ անվտանգության համար: Կորպորատիվ անվտանգությունը հաստատում է ուղղվածություն և արարողակարգեր՝ ի դեմս ֆիզիկական անվտանգության շենք-շինությունների և բանկի այլ ակտիվների համար, այն իրականացնում է հետազոտություններ հանցավոր իրադարձությունները կանխելու համար: Ներքին աուդիտն աջակցում է բանկի և նրա մասնաճյուղերի գործունեության բոլոր շերտերին, որպեսզի կարողանան կատարել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենքի պահանջները:

**Խորհրդատվական ծառայություններ:** Ղեկավարության պահանջով ներքին աուդիտը աջակցություն և խորհրդատվություն է տրամադրում գործառնական ստորաբաժանումներին, Գլխամասի բաժիններին և մասնաճյուղերին խոշոր նախագծերի իրականացման ընթացքում (կառուցվածքային փոփոխություններ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, նախագծեր, մուտք նոր շուկաներ և այլն): Այն կարող է նաև ռեսուրսներ տրամադրել որոշակի ուսումնասիրություններ կատարելու համար: Այնուամենայնիվ նման աջակցությունների և խորհրդատվության մատակարարումը երբեք չի կարող փոխզիջման ենթարկել կամ ընկալվել որպես ներքին աուդիտի նպատակայնության փոխզիջում, կամ միջամտելով իր կարողություններով իրականացնել աուդիտի աշխատանք այն մասերում, որոնք իրենցից հսկայական ռիսկ են ներկայացնում:

**Արտաքին աուդիտի հետ հարաբերություններ:** Ներքին աուդիտն իր աշխատանքը կորդինացնում է բաժնետերերի հետ այնպես, որպեսզի ապահովի ամուր համագործակցություն կողմերի միջև և օպտիմիզացնի միջամտությունը: Պարբերաբար հանդիպումներ պետք է տեղի ունենան ներքին աուդիտի և արտաքին աուդիտի միջև՝ քննարկելու համար ընդհանուր հետաքրքրությունները: Ներքին աուդիտի և արտաքին աուդիտի աշխատանքները պետք է կորդինացվեն միմյանց հետ՝ օգնելու համընդհանուր աուդիտի գործունեության համարժեքությունը ճանաչելուն և նվազեցնելու նույն գործը անելու հավանականությունը: Արտաքին աուդիտը պետք է անխափան մուտք ու ելք ունենա ներքին աուդիտի բոլոր պլաններին, փաստաթղթերին և հաշվետվություններին:

<sup>1</sup> Chief auditi executives – appointment, performance, evaluation and termination, IPPF practice guide, page 3, may 2010.

**Վերահսկող մարմինների հետ հարաբերությունները:** Ներքին աուդիտը ուղղակիորեն կապի մեջ է գտնվում վերահսկող մարմինների հետ և ապահովում է տեղեկատվական և հաղորդակցման գործընթացների հստակությունը:

**Հաշվետվական պարտականություններ:** Տարեկան մեկ անգամ կոմիտեն վերանայում է ներքին աուդիտի լիազորությունները, ինչպես նաև նրա կողմից իրականացվող գործընթացների բնույթն ու շրջանակները, դիտարկում է աուդիտի արդյունքները և համոզվում, որ բոլոր անհրաժեշտ քայլերը ձեռնարկվել են առաջարկություններին համապատասխան: Ներքին աուդիտը նաև հաշվետու է աուդիտի հանձնաժողովին ցանկացած մասնաճյուղի մասով:

Ներքին աուդիտի աշխատանքային պլանը և գործընթացները իրականացնելու համար պահանջվող ռեսուրսները հաստատվում են տարեկան կամ անհրաժեշտության դեպքում՝ եռամսյակային և էական առաջարկություններ են արվում, որոնք նախկինում հաշվի չեն առնվել:

**Ներքին աուդիտի կանոնակարգի նպատակը:** Ներքին աուդիտը անկախ և օբյեկտիվորեն վերահսկում և խորհրդատվական ծառայություն է մատուցում, որոնցով հավաստում է գործադիր տնօրենին և տնօրենների խորհրդին, որ կազմակերպության ֆինանսական և գործառնական հսկողությունները այնպես են կազմակերպված, որ զսպեն սպառնացող ռիսկերը և արդունավետ կերպով հասնեն կազմակերպության նպատակներին: Այն նաև նպաստում է բարելավվելու բիզնեսի կատարողականը:

**Ներքին աուդիտի կանոնադրությունը անկախության մասով:** Անկախությունը կարևոր է ներքին աուդիտի գործունեության արդյունավետության համար: Ներքին աուդիտորները պետք է ուղղակի իրավասություն կամ պարտականություն չունենան այն գործընթացների մասով, որոնք ստուգում են:

**Ներքին աուդիտի կանոնակարգ – իրավասություններ և գաղտնիություն:**

1. Ներքին աուդիտորները պետք է անարգել մուտք գործեն բոլոր գործընթացների, ծրագրերի, տեղեկատվության մեջ՝ իրենց պարտականություններն իականացնելու նպատակով:
2. Բոլոր տվյալներն ու տեղեկատվությունը պետք է օգտագործեն իրենց գործունեությունն իրականացնելու համար:
3. Ներքին աուդիտի անձնակազմը և ղեկավարությունը պատասխանատու և հաշվետու են ձեռք բերված տեղեկատվության գաղտնիության համար:

**Դերն ու պարտականությունները:** Ներքին աուդիտի դերի և պարտականությունների մեջ են մտնում ներքին ֆինանսական և գործառնական վերահսկողության արդյունավետությունն ու համարժեքությունը գնահատելը, ներառյալ SS համակարգի հսկողությունը, համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, իրավական պահանջներին, կազմակերպության քաղաքականությանն ու ընթացակարգերին, գրանցումների համակարգին, կազմակերպության ակտիվների օգտագործմանը և վերահսկման մեխանիզմներին, գործընթացների բարելավմանը:

**Խորհրդատվական գործունեություն:** Խորհրդատվություն տրամադրել նոր համակարգերի և գործընթացների զարգացման համար, ներառյալ դրանց համապատասխան վերահսկումը, աջակցել ղեկավարությանը ճանաչելու ռիսկերն՝ այդ թվում խարդախության ռիսկը և զարգացնել ռիսկերի մոնիթորինգը և ռիսկերի մեղմացման ռազմավարությունը, աջակցել գործընթացներին, օրինակ, աջակցել աուդիտի հանձնաժողովին լիազորելու իր պարտականությունները, մոնիթորինգ անելու համաձայնեցված առաջարկությունների իրականացման մասով, տարածելու ավելի լավ փորձ ու դասեր՝ ձեռք բերված աուդիտորական գործունեության շնորհիվ:

**Ստանդարտներ:** Ներքին աուդիտի գործունեությունը պետք է վարել համաձայն համապատասխան այնպիսի մասնագիտական ստանդարտների, ինչպիսիք են.

1. IIA ստանդարտները – Ներքին աուդիտորների միջազգային ստանդարտները:
2. ISACA ստանդարտները - Տեղեկատվական համակարգի և վերահսկման ասոցացիա:
3. Մասնագիտացված հաշվապահական մարմինների ստանդարտները ISACA-ի կողմից:

**Պլանավորում:** Ներքին աուդիտը պետք է պատրաստի և տրամադրի ներքին աուդիտի ռազմավարական պլանը ներքին աուդիտի հանձնաժողովին՝ հավանության արժանացնելու և հաստատելու համար: Այն պետք է հաշվետվություն տրամադրի յուրաքանչյուր աուդիտի հանձ-

նաժողովի ժամանակ աուդիտի տարեկան պլանի իրականացման, համաձայնեցված արտաքին և ներքին առաջարկությունների իրականացման մասով: Ներքին աուդիտը պետք է պլան կազմի սահմանելու համար՝ արդյո՞ք ներքին աուդիտի գործունեությունը համահունչ է կազմակերպության նպատակների հետ:

Ներքին աուդիտը պետք է հաշվի առնի կազմակերպության ռիսկերի կառավարման շրջանակը՝ ներառյալ ղեկավարության կողմից սահմանած ռիսկի ախորժակը՝ կազմակերպության տարբեր գործընթացների համար: Եթե շրջանակը գոյություն չունի, ներքին աուդիտի վարչության պետը իր դատողությամբ որոշում է կազմակերպության ռիսկերը՝ այդ մասին խորհրդակցելով ավագ ղեկավարության և խորհրդի հետ:

Պլանը պետք է պատրաստվի և փաստաթղթավորվի յուրաքանչյուր աուդիտի համար, որը պետք է ներառի ստուգման նպատակները, շրջանակները, ժամկետները, ռեսուրսների տեղաբաշխումը:

Աուդիտի պլանավորման գործընթացում, ներքին աուդիտորները պետք է որոշեն, թե ինչ նպատակով է տվյալ ոլորտը ստուգվում, ինչ միջոցներով են տեղի ունեցող գործողությունները վերահսկվում, ստուգման ենթակա ոլորտի նշանակալից ռիսկերը, նրա նպատակները, ռեսուրսները, գործողությունները իրենց գործունեության մեջ, ռիսկերի կառավարման և վերահսկման գործընթացների արդյունավետությունը և համարժեք համապատասխան վերահսկման շրջանակը կամ մոդելը, նշանակալից բարելավումներ կատարելու հնարավորությունները տվյալ գործունեության ռիսկերի կառավարման և վերահսկման գործընթացում:

Յուրաքանչյուր աուդիտի համար պետք է սահմանվեն նպատակներ, օրինակ.

1. Ներքին աուդիտորները պետք է իրականացնեն աուդիտի ենթարկվող գործառույթների հետ կապված ռիսկերի նախնական գնահատում: Աուդիտի նպատակները պետք է համահունչ լինեն գնահատման արդյունքներին:
2. Աուդիտի նպատակները սահմանելիս՝ ներքին աուդիտորները պետք է գնահատեն էական սխալների, խարդախությունների, անհամապատասխանությունների և այլ ռիսկային գործոնների ի հայտ գալու հավանականությունը:
3. Հսկողության մեխանիզմները գնահատելու համար անհրաժեշտ են համապատասխան չափորոշիչներ: Ներքին աուդիտը պետք է պարզի, թե նպատակների և խնդիրների ապահովումը գնահատելու համար ղեկավարության կողմից սահմանված չափորոշիչները որքանով են համարժեք: Չափորոշիչները համարժեք գնահատվելու դեպքում ներքին աուդիտորները պետք է դրանք կիրառեն սեփական գնահատումների ժամանակ: Ոչ համարժեք գնահատվելու դեպքում ներքին աուդիտորները պետք է աշխատեն ղեկավարության հետ՝ այլ համարժեք գնահատման չափորոշիչներ մշակելու համար:

**Ներքին աուդիտի ստուգման շրջանակները:** Հաստատված շրջանակը պետք է բավարարի ստուգման նպատակներին: Ստուգման շրջանակը պետք է ներառի համապատասխան համակարգերի դիտարկումները, գրանցված տվյալները, աշխատակազմը, գույքը, ներառյալ այն որը երրորդ կողմի հսկողության տակ է:

**Աուդիտի ռեսուրսների տեղաբաշխում:** Աուդիտի նպատակներին հասնելու համար ներքին աուդիտորները պետք է նախատեսեն բավարար ռեսուրսներ՝ հիմնվելով յուրաքանչյուր աուդիտի բնույթի, բարդության, ժամանակային սահմանափակումների և առկա ռեսուրսների գնահատականների վրա:

**Աուդիտ աշխատանքային ծրագիրը:** Ներքին աուդիտորները պետք է փաստաթղթային տեսքով կազմեն աշխատանքային ծրագրեր, որոնք հնարավորություն կտան հասնելու աուդիտի նպատակներին:

- Աշխատանքային ծրագրով պետք է սահմանվեն աուդիտի ընթացքում տեղեկատվության բացահայտման, վերլուծության, գնահատման և փաստաթղթավորման ընթացակարգերը: Աշխատանքային ծրագիրը հաստատվում է նախքան աուդիտի սկիզբը, իսկ դրանում կատարվող ցանկացած փոփոխություն հաստատվում է ողջամիտ ժամկետներում:

- Խորհրդատվական առաջադրանքների աշխատանքային ծրագրերը կարող են տարբերվել իրենց ձևով և բովանդակությամբ՝ պայմանավորված առաջադրանքի բնույթով: Անհրաժեշտ է ժամանակ և ջանքեր տրամադրել աուդիտը պլանավորելու և փաստաթղթավորելու համար

Ռազմավարական պլանավորումը սկսվում է կազմակերպության նպատակներից և ռիսկերից: Ստուգման ժամանակ պետք է սկսել գործունեության նպատակներից և այն ռիսկերից, որոնք կարող են խոչընդոտել հասնելու նպատակներին: Պետք է հասկանալ գործունեության ռիսկերի կառավարումը և հսկողության գործընթացը, պետք է նպատակ դնել բարելավելու գործունեության ռիսկերի կառավարումը և հսկողության գործընթացը:

Ստուգման պլանավորման ընթացքում պետք է հաշվի առնել ռիսկերը և հսկողությունները, համապատասխանությունը քաղաքականություններին, օրենքներին, կարգերին, տեղեկատվության հուսալիությունն ու ամբողջականությունը՝ պաշտպանելով ակտիվները և ռեսուրսների արդյունավետ կիրառությունը:

**Ստուգման նպատակները:** Պետք է հստակ հասկանալ, թե ինչի են փորձում հասնել աուդիտի ընթացքում: Արդյո՞ք պլանավորումը ուղղված է աուդիտի ենթարկված գործունեության նպատակներին և դրանց հետ կապված ռիսկերին, և արդյո՞ք անհրաժեշտ է որոշել նպատակների շրջանակները:

Աուդիտի եզրափակման ժամանակ պետք է երաշխավորել աուդիտի հանձնաժողովին, որ հիմնական հսկողության գործիքները արդյունավետ են գործում:

**Ստուգման շրջանակները:** Պետք է սահմանել, թե ինչ է անհրաժեշտ հասնելու համար աուդիտի նպատակներին, ինչ տվյալների վրա պետք է ուշադրություն դարձնել, ում հետ պետք է հարցազրույց ունենալ, ինչ վայրեր պետք է այցելել:

**Աուդիտի ռեսուրսների տեղաբաշխում:** Հիմնվելով աուդիտի պլանի, նպատակների և ստուգման համար սահմանված շրջանակի վրա պետք է սահմանել, թե քանի ժամ է անհրաժեշտ աուդիտն իրականացնելու համար: Ենթադրենք աշխատողների կարողությունները հասանելի են: Կարիք կա՞ արդյոք դրսից ներգրավելու լրացուցիչ ռեսուրսներ, եթե այո, ապա արդյո՞ք համապատասխան բյուջե կա հատկացված այդ նպատակով:

**Ստուգման աշխատանքային ծրագիրը:** Սա այն է, թե ինչ պետք է խնդրել աուդիտորներին կատարել. այն կպահանջի ձևավորել տեստային պլաններ, ստուգման մեթոդներ, չափեր և այլն:

Աշխատանքային ծրագիրը պետք է մանրամասնի՝ ինչ մակարդակի ՏՏ աուդիտի աջակցություն է անհրաժեշտ համակարգչային աջակցությամբ աուդիտի տեխնիկայի համար, եթե շարունակական մոնիթորինգն է այդտեղ աշխատում:

**Աուդիտի իրականացում:** Ներքին աուդիտորները պետք է հավաքեն, վերլուծեն, գնահատեն և փաստաթղթավորեն բավարար տեղեկատվություն՝ աուդիտի նպատակներին հասնելու համար:

**Տեղեկատվության հավաքագրում:** Ներքին աուդիտորները պետք է ձեռք բերեն բավարար քանակությամբ հուսալի օգտակար և համապատասխան տեղեկատվություն՝ աուդիտի նպատակներին հասնելու համար: Բավարար ծավալի տեղեկատվությունը փաստացի է, համարժեք և հանոզիչ, եթե խելամիտ և տեղեկացված անձը հանգի այն նույն եզրակացություններին, ինչին որ աուդիտորը: Հուսալի տեղեկատվությունն համապատասխան մեթոդների կիրառման միջոցով ձեռք բերվող լավագույն տեղեկությունն է: Համապատասխան տեղեկատվությունը նպաստում է առաջադրանքի շրջանակներում կատարված դիտարկումների իրականացմանն ու առաջարկություններ ներկայացնելուն, ինչպես նաև համահունչ է առաջադրանքի նպատակներին: Օգտակար տեղեկատվությունը կազմակերպությանն օգնում է իրագործել սեփական նպատակները Այսպիսով աուդիտ իրականացնելիս շատ կարևոր է ձեռք բերել փաստացի, համարժեք, հանոզիչ, հուսալի, համապատասխան, օգտակար տեղեկատվություն

Վերոնշյալից ելնելով, կարելի է ենթադրել, որ ներքին աուդիտի գործունեությունը մեծապես կախված է աշխատանքի ճիշտ պլանավորումից և արդյունավետ կազմակերպումից: Որակյալ ռեսուրսները, ռիսկերի չափման հիման վրա իրականացվող աուդիտի ճիշտ մեթոդոլո-

գիայի ընտրությունը, միջազգային ստանդարտների համապատասխան կիրառությունը ներքին աուդիտին մեծապես կաջակցեն աշխատանքի արդյունավետության բարձրացման հարցում:

**Гоар Симонян**

### **Роль, полномочия и обязанности внутреннего аудита**

#### **Аннотация**

По мере развития финансового рынка в Армении и его интеграции в общемировую сферу финансовых услуг, все больше будет возрастать роль внутреннего аудита - независимой экспертизы и анализа финансовой отчетности предприятий, банков, организаций, учреждений и других субъектов рыночных отношений. Данный процесс будет также усиливаться по мере открытия филиалов. В некоторых банках службы внутреннего аудита существуют на протяжении нескольких десятков лет, а сотрудничество с внешними аудиторскими фирмами носит долгосрочный, а зачастую и партнерский характер.

Таким образом, для того, чтобы быть уверенным в том, что банк работает устойчиво и надежно, управляющие совместно со специалистами аудита должны обеспечить внедрение систем контроля, которые бы показывали, в какой степени служащие выполняют свои обязанности в соответствии с политикой и процедурами банка, а также насколько их действия соответствуют законодательству. Системы контроля могут включать в себя системы аудита, анализа качества активов, создание и оценку управления финансовыми рисками. Надежный план внутреннего аудита и правильная стратегия помогут внутреннему аудиту работать эффективно.

**Gohar Simonyan**

### **The Role, Responsibilities and Authority of the Internal Audit in the Commercial Banks of Armenia**

#### **Abstract**

The role of internal audit and his independent expertise and analyses of financial reports will be increased due to the development of financial market of Armenia and his integration into the worldwide financial services. This issue will be strengthened while opening new branches. The internal audit service already exists for several years in certain banks, and cooperation with external audit companies has a long-term and partnership character.

Herewith to be assured that a bank is sustainable and reliable the management together with audit specialists should insure the internal control system contributions which will show in which level the employees of the bank implement their responsibilities and work compliance with law. The system of control can include the system of audit, analyses of assets quality creation and evaluation of financial risk management. Internal audit reliable plan and accurate strategy will help internal audit to work efficiently.

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՌԴԻՏԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ  
ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՅԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ**

Առևտրային բանկերում հիմնական խնդիրը ներքին աուդիտի կազմի ճիշտ ձևավորումն է, որը շատ հարցերում որոշում է տվյալ ոլորտի արդյունավետությունը:

Համաշխարհային պրակտիկայում հստակեցված են ներքին աուդիտի դերը, դիրքն ու գործառույթները ներքին հսկողության համակարգում: Ներքին աուդիտի հիմնական դերը առևտրային բանկերում ներքին հսկողության գործող համակարգի արդյունավետության գնահատումն է:

Այսօր տվյալ ստորաբաժանման գործունեությունը չի կարելի համարել արդյունավետ: Տարբեր պատճառներ կան պայմանավորված այդ իրավիճակի հետ: Կանգ առնենք հիմնական գործոնների վրա:

Ամենից առաջ անհրաժեշտ է տարանջատել ներքին հսկողության համակարգի և ներքին աուդիտի գործառույթները: Ներքին աուդիտի հինգ հիմնական նպատակներ կան, որոնք են.

- Տեղեկատվության ամբողջականություն և հուսալիությունը:
- Համապատասխանություն քաղաքականությանը, նախագծին, արարողակարգերին և օրենքին:
- Ակտիվների պահպանման ապահովումը:
- Ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու տնտեսումը:
- Կազմակերպության ստորաբաժանումների նպատակներին ու խնդիրներին հասնելը:

Վերափոխելով և ընդլայնելով կիրառության շրջանակը՝ ներքին հսկողությունը 20-րդ դարի վերջում վերածվել է ռիսկերի հսկողության գործիքի, որտեղ նրա գործառույթները միահյուսվում են ռիսկերի կառավարման գործառույթի՝ ռիսկերի կառավարման հետ:

Այսպիսով, ներքին հսկողությունը կազմակերպության գործունեության դիտարկման և ստուգման համակարգ է, որը նպատակ ունի գնահատել կառավարչական որոշումների հիմնավորվածության և արդյունավետության մակարդակը, ոչ բարենպաստ իրավիճակները և շեղումները, ղեկավարությանը ժամանակին իրազեկել ռիսկերի վերացմանը, նվազեցմանը և կառավարմանը վերաբերող տեղեկատվությունը՝ կառավարչական որոշումների կայացման համար:

Ներքին հսկողության պահանջների միասնականացման պատմության ժամանակակից փուլը սկսվել է 1985թ.՝ ԱՄՆ-ում: Ստեղծվել էր ոչ արժանահավատ ֆինանսական հաշվետվությունների դեմ պայքարի Ազգային կոմիտե, որը հայտնի է իր առաջին նախագահ Ս.Տրեդուեի անունով, որպես Տրեդուեի հանձնաժողով: Իրենց կողմից թողարկված 1987 թվականի հաշվետվությունը, բացի այլ ցուցումներից, կոչ էր անում միավորել ջանքերը՝ պայմանավորվածություն ձեռք բերելով ներքին հսկողության հիմնական հասկացությունների միասնականությունը ապահովելու համար: Հիմնվելով այդ առաջարկության վրա՝ աշխատանքային խումբը, Տրեդուեի կոմիտեի հովանավորող կազմակերպությունների հովանավորության ներքո, իրականացրել է ներքին հսկողությանը վերաբերող տվյալ ժամանակաշրջանում առկա գրականության ուսումնասիրություն: Այդ աշխատանքների արդյունքները հասարակությանը ներկայացվել են 1992թ. «Ներքին հսկողության ինտեգրված հայեցակարգ» վերնագրով: Այդ փաստաթուղթը կարճ ընդունված է անվանել COSO-ի հայեցակարգ, COSO-ի մոդել կամ պարզապես՝ COSO<sup>1</sup>:

<sup>1</sup> Об организации внутреннего контроля в кредитных организациях и банковских группах [Электронный ресурс] : Положение Банка России от 16.12.2003 г. № 242-П. – сайт Банка России. – Режим доступа: <http://www.cbr.ru/publ/vestnik>. Загл. с экрана.

COSO մոդելի առավել հետևողական կիրառողներից է բանկային հսկողության Բազելյան հանձնաժողովը: 1998թ. այն թողարկել է 2 կարևորագույն փաստաթուղթ՝ «Ներքին հսկողության համակարգի գնահատման հիմունքներ» և «Բանկերում ներքին հսկողության համակարգի կազմակերպման հիմունքները», որոնք ուղղված են գնահատելու բանկերում ներքին հսկողության արդյունավետությունը: Բազելյան հանձնաժողովը վերահսկող բոլոր մարմինների համար առաջարկել է սկզբունքների հավաքածու, համաձայն որի, պետք է կառուցվի բանկի ներքին հսկողության համակարգերի համապատասխանության գնահատումը բոլոր հաշվեկշռային և ետհաշվեկշռային գործիքների մասով: 2000թ. հուլիս և 2001թ. օգոստոս ամիսներին հրատարակվել էին նաև «Վարկային կազմակերպություններում ներքին աուդիտը և կարգավորող մարմինների հարաբերությունները ներքին և արտաքին աուդիտորների հետ», ինչպես նաև «Բանկերում ներքին աուդիտը և կարգավորող մարմինների ու աուդիտորների փոխհարաբերությունները» փաստաթղթերը:

Բանկային վերահսկողության Բազելյան հանձնաժողովի ցուցումներին համապատասխան, ներքին հսկողության համակարգը բաղկացած է հետևյալ հինգ փոխկապակցված բաղադրիչներից.

1. Կառավարչական հսկողություն և հսկողության մշակույթ:
2. Ռիսկերի բացահայտում և գնահատում:
3. Հսկողության իրականացում և իրավասությունների տարանջատում:
4. Տեղեկատվություն և փոխազդեցություն:
5. Մոնիթորինգ և թերությունների ուղղում:

Այսպիսով, առաջնորդվելով տվյալ մոդելով, կազմակերպության նպատակը պետք է լինի ոչ թե այնպիսի հսկողության մեխանիզմի ստեղծումը, որն ամբողջությամբ կերաշխավորի շեղումների, սխալների և ոչ արդյունավետ աշխատանքի բացակայությունը, այլև այնպիսի համակարգի ձևավորումը, որը հնարավորություն կտա այդ խնդիրները ժամանակին բացահայտել և վերացնել՝ նպաստելով աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Սակայն, նույնիսկ ներքին հսկողության լավ կառուցված և կազմակերպված համակարգն անհրաժեշտություն ունի գնահատելու իր արդյունավետությունը՝ ինչպես իր առջև դրված խնդիրների իրագործման, այնպես և տնտեսման տեսանկյունից: Այդ նպատակներին էլ ծառայում է ներքին աուդիտը:


Արևելքի երկրներում ներքին աուդիտը ձևավորվել է 20-րդ դարի սկզբին և զարգացման մեծ ազդակներ է ստացել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ ի պատասխան ընկերությունների ապակենտրոնացման և գործարքների ծավալների մեծացման: 1941թ. ԱՄՆ-ում ստեղծվել էր ներքին աուդիտորների ինստիտուտ՝ ներքին աուդիտորների մասնագիտացված ասոցիացիա, որը նպատակ էր հետապնդում ներքին աուդիտորի մասնագիտությունը զարգացնել և դարձնել հանրաճանաչ, ինչպես նաև մշակել ներքին աուդիտի գործունեության ստանդարտներ:

Ռուսաստանի Դաշնության աուդիտորական գործունեության կանոններում (ստանդարտներում) տրվում է ներքին աուդիտի հետևյալ սահմանումը. Ներքին աուդիտը տնտեսական սուբյեկտի վրա կազմակերպված, սեփականատերերի շահերին ուղղված և իր ներքին փաստաթղթերով կանոնակարգվող հսկողության համակարգ է՝ հաշվապահական հաշվառման վարման սահմանված կանոնների պահպանման և ներքին հսկողության համակարգի գործունեության հուսալիության նկատմամբ: Ռուսաստանում ներքին աուդիտի ծառայությունը ոչ վաղեմի երևույթ է: Սակայն նշված ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը առաջին հերթին որոշվում է ոչ թե գոյություն ունենալու ժամկետով, այլ նրանով, թե որքանով է գրագետ կազմակերպված նրա կառուցվածքը:

Պրակտիկայում գոյություն ունի ներքին աուդիտի ծառայության կազմակերպման 2 հիմնական մոտեցում. առաջինը հետևյալն է<sup>1</sup>.

1. Ներքին աուդիտը նպատակաուղղված է կազմակերպությունում ստեղծել և պահպանել ներքին հսկողության արդյունավետ համակարգ, տարբեր ռիսկերի բացահայտում և նվազեցում կազմակերպության համար: Այս դեպքում ներքին աուդիտի ծառայությունը հաշվետու է ընկերության բաժնետերերին՝ հանդես գալով որպես աուդիտորական հանձնաժողով:

*Գծանկար 1*



Աուդիտորական հանձնաժողովը ընտրվում է տարեկան ժողովում: Ընտրության գործընթացը նույնն է, ինչ տնօրենների խորհրդի համար, սակայն որոշ երկրներում գոյություն ունեն լրացուցիչ պահանջներ: Օրինակ պահանջվում է, որպեսզի աուդիտորական հանձնաժողովի անդամների 2/3-ը ունենան բարձրագույն ֆինանսական կամ հաշվապահական կրթություն: Այսպիսի մոտեցման դեպքում ներքին աուդիտը անկախ է կազմակերպության գործառնության ղեկավարությունից:

Անկասկած, անաչառությունն ու անկախությունը որակավորումներ են, որոնք տարբերում են ներքին աուդիտի ծառայությունը այլ ստորաբաժանումների ծառայություններից: Խոսքը գնում է կազմակերպչական անկախության մասին, ինչը մեծապես կախված է տվյալ ստորաբաժանման ենթակայության մակարդակից:


Տրեդվեի կոմիտեն հովանավորող հանձնաժողովը (COSO) կազմակերպության ռիսկերի կառավարման հայեցակարգային հիմունքներում նշում է, որ ներքին աուդիտի ստորաբաժանումը կազմակերպվում է այնպես, որպեսզի ապահովի կազմակերպության գործունեության գնահատման անաչառությունը և անսահմանափակ մուտքը բարձրագույն ղեկավարության ու տնօրենների խորհրդի աուդիտորական հանձնաժողովի մոտ, իսկ գլխավոր աուդիտորի ենթակայության մակարդակը (կազմակերպության ներսում) պետք է հնարավորություն տա ներքին աուդիտի ստորաբաժանումը իրեն վերապահված գործառնությունները իրականացնել արդյունավետ: Այդ խնդրի լուծմանն առավելապես համապատասխանում է ներքին աուդիտի ենթակայությունը կազմակերպության տնօրենների խորհրդին (աուդիտի կոմիտեին): Որպեսզի, ներքին աուդիտը հնարավորություն ունենա իրականացնել իր առջև դրված պարտականությունները, նրա ղեկավարը պետք է հաշվետու լինի կազմակերպության համապատասխան մակարդակի ղեկավարին:

2. Աուդիտի կազմակերպման երկրորդ մոտեցումը հետևյալն է. ներքին աուդիտի գործունեությունն ուղղված է ֆինանսական հաշվետվությունների և հաշվապահական գործընթացների ստուգմանը, կազմակերպության ակտիվների պահպանմանը: Դրա հետ մեկտեղ, ներքին աուդիտի ստորաբաժանումը հանդիսանում է ֆինանսական բաժնի ստորաբաժանում, իսկ ներքին աուդիտի ղեկավարը ենթակա է կազմակերպության կամ ստորաբաժանման ֆինանսական տնօրենին (գծանկար 2):

<sup>1</sup> Викторов, П. Служба внутреннего аудита – ресурс эффективной работы современного совета директоров, 2010 год [Электронный ресурс] / П. Викторов. – сайт Института внутренних аудиторов. Режим доступа: [http://www.iaa.ru/inner\\_auditor/publication/member\\_articles](http://www.iaa.ru/inner_auditor/publication/member_articles), Загл. с экрана.



**Ներքին աուդիտի ծառայության կազմակերպում (2-րդ մոտեցում)**



Առաջին մոտեցումը բնորոշ է ՀՀ-ի առևտրային բանկերի մեծամասնությանը համար: Աուդիտը ֆորմալ կախվածության մեջ է կազմակերպության ֆունկցիոնալ ղեկավարից, որը պատասխանատվություն է կրում ներքին հսկողության համակարգի վիճակի համար:

Համապատասխանաբար առաջին դեպքում ներքին աուդիտը հանդիսանում է բարձրագույն ղեկավարության «աչքերն ու ականջները», իսկ երկրորդ դեպքում՝ կազմակերպության ֆինանսական ղեկավարության «աչքերն ու ականջները»:

Ցավոք, ՀՀ ԿԲ նորմատիվ փաստաթղթերում շատ հստակ չի սահմանվում ներքին աուդիտի տեղն ու դերը: Օրենսդրորեն ամրագրված չեն աուդիտորական հանձնաժողովի պարտականություններն ու գործառույթները: Շատ դեպքերում *ներքին հսկողություն* և *ներքին աուդիտ* տերմինները օգտագործվում են համարժեք: Այս իրավիճակում, առևտրային բանկերի ղեկավարությունը ներքին աուդիտը հաճախ օգտագործում է որպես ռիսկերի հսկողության գործիք (ինչը պետք է ապահովի ներքին հսկողության համակարգը), և ոչ թե որպես ամբողջ համակարգի գնահատման գործիք: Կազմակերպչականորեն, շատ բանկերի ներքին աուդիտի ծառայություններն ընդգրկված են ներքին հսկողության ծառայության կազմում, որոնց գործառույթների մեջ ընդգրկված է ռիսկերի հսկողության կազմակերպումը: Ելնելով դրանից՝ տվյալ համակարգի և կառուցվածքի գնահատման օբյեկտիվությունը աուդիտորների մոտ գրեթե բացակայում է:

Ներքին աուդիտի օրենսդրորեն անկախ լինելու ոչ բավարար պահանջները հնարավորություն չեն տալիս ՀՀ առևտրային բանկերին ակտիվորեն օգտագործելու իրենց գործունեության արդյունքները որպես բանկի ներքին հսկողության համակարգի գնահատական: Բազելյան հանձնաժողովը «Բանկերի ներքին հսկողության համակարգը. կազմակերպման սկզբունքները» հրատարակման մեջ հսկող մարմիններին առաջարկում է օգտագործել տարբեր մեթոդներ, այդ թվում՝ եթե ներքին աուդիտի ծառայության աշխատանքի որակը գնահատվում է բավարար, ներքին աուդիտորների հաշվետվությունները կարող են օգտագործվել որպես նախնական նյութ՝ բանկում հսկողության հետ կապված խնդիրների բացահայտման համար»<sup>1</sup>:

Ենթադրվում է, որ այս իրավիճակի լուծումը մեծապես կախված է ներքին աուդիտի կարգավիճակի օրենսդրորեն ամրապնդումով և աուդիտորական հանձնաժողովի ինստիտուտի ներդրումով:

Ներքին աուդիտը արտացոլում է գոյություն ունեցող հսկողության համակարգը և դրա արդյունավետությունը՝ օգնելով ղեկավարներին ստանալ արժանահավատ տեղեկատվություն բանկի ակտիվների օգտագործման վերաբերյալ՝ հետագայում համապատասխան որոշումների կայացման և թերությունների վերացմանը ուղղված հստակ գործողությունների իրականացման համար: Բացի այդ, այն զբաղված է բաց թողնված սխալների պատճառների ու հետևանքների

<sup>1</sup> О рекомендациях Базельского комитета по банковскому надзору [Электронный ресурс]: Письмо Банка России от 10.07.2001 г. № 87-Т. сайт Банка России. Режим доступа: <http://www.cbr.ru/publ/vestnik>. Загл. с экрана.

վերլուծությամբ և բացահայտմամբ, իրատեսական և իրագործելի առաջարկությունների մշակմամբ, ինչպես նաև դրանց հետագա վերացմանն ուղղված գործողությունների ընթացքի վերահսկմամբ: Աուդիտը չի կարող համարվել ավարտված այնքան ժամանակ, մինչև ներդրված չլինեն աուդիտորական առաջարկությունները և վերացվեն բացահայտված թերացումները:

ՀՀ առևտրային բանկերում ներքին աուդիտը, մեծամասամբ, շարունակում է արտաքին աուդիտը, այսինքն, մեծամասամբ ուղղված է ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության, գործընթացների սահմանված կարգերին և կանոններին համապատասխանության, հարկերի հաշվարկման և վճարման ճիշտ լինելու հաստատմանը: Հաճախ ՀՀ առևտրային բանկերի ղեկավարությունը ներքին աուդիտը դիտարկում է որպես լավ հայտնի Ռեվիզիա բառի ժամանակակից անվանմամբ, որի հիմնական խնդիրն է կազմակերպության ակտիվների պահպանության ապահովման ստուգումը, պակասորդների և գողությունների բացահայտումն ու վերացումը: Որպես նման մոտեցման հետևանք՝ ներքին աուդիտը կենտրոնանում է ոչ թե առկա գործընթացների կատարելագործման հնարավորությունների բացահայտման ուղղությամբ, այլ թերացումների և մեղավորների բացահայտման ուղղությամբ: Այս իրավիճակը հաճախ առաջանում է այն դեպքերում, երբ չի ապահովվում ներքին աուդիտի բավարար անկախությունը բանկի գործադիր ղեկավարությունից:

Մյուս պատճառը, որով աուդիտորների գործունեությունը հանգում է գործընթացների սահմանված պահանջներին համապատասխանության ստուգմանը, հանդիսանում է իրենց ոչ բավարար որակավորման մակարդակը: Հաճախ, ներքին աուդիտում աշխատում են կամ այլ ստորաբաժանումների նախկին մասնագետները (վարկավորման վարչություն, ծրագրավորող, բանկային քարտերի սպասարկման բաժին), կամ նախկին արտաքին աուդիտորները:

Միջազգային պրակտիկայում ներքին աուդիտի կազմակերպման տարբերակ է աուսուրսինգի կազմակերպումը, այսինքն՝ ներքին աուդիտի ֆունկցիաների մասնակի կամ ամբողջական փոխանցումը մասնագիտացված կազմակերպությանը կամ արտաքին խորհրդատուին:

Այլ եղանակ է՝ կոսուրսինգը: Նպատակը այն է, որպեսզի ստեղծվի ներքին աուդիտի ստորաբաժանում՝ վարկային կազմակերպության շրջանակներում, իսկ որոշ դեպքերում՝ ներգրավեն մասնագիտացված կազմակերպությունների մասնագետների կամ արտաքին խորհրդատուի:

Աուսուրսինգի և կոսուրսինգի օգտագործման պոտենցիալ առավելություններն ընդգրկում են՝<sup>1</sup>

- Տարբեր ոլորտներում մասնագետների ծառայություններից օգտվելու հնարավորություն:
- Բարձր որակավորված աուդիտորական կադրերին հասանելիություն:
- Աուդիտորական ռեսուրսների ներգրավման ճկունության ապահովում (օրինակ նոր համակարգերի ներդրման դեպքում, կամ ոչ պլանային աուդիտ իրականացնելու ժամանակ, անհրաժեշտություն չի լինի ընդլայնել ներքին աուդիտորների կազմը, կամ այլ նախագծերից ռեսուրսների շեղումը):
- Առաջադիմական տեխնոլոգիաներին և նոր աուդիտորական մեթոդիկաներին հասանելիությունը:

Այսպիսով գոյություն ունեն իրական հնարավորություններ՝ բարձրացնելու ներքին աուդիտի գործունեության արդյունավետությունը առևտրային բանկերում: Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ այսօր շատ երկրներում օրենսդրորեն սահմանված է հատուկ կառուցվածքային միավորների ստեղծումը, որոնք իրականացնում են ներքին աուդիտ միայն առևտրային բանկերի համար: Չնայած որ ֆինանսական միջնորդների և ֆինանսական շուկայի մասնակիցների գործունեությունը խստիվ կանոնակարգվում է, ո՛չ ապահովագրական ընկերությունները, ո՛չ վարկային կազմակերպությունները, ո՛չ ներդրումային ֆոնդերը պարտավոր չեն ձևավորել ներքին աուդիտի ստորաբաժանումներ: Շատ երկրներում կազմակերպությունների համար պահանջ է առաջանում ունենալ նման ստորաբաժանումներ, եթե դուրս են գալիս միջազգային ֆինանսական շուկա: Միջազգային բորսաների մեծամասնությունը արժեթղթերի թողարկողներից, հրապարակային ֆինանսական հաշվետուներից պահանջում են աուդիտորական հանձ-

<sup>1</sup> Соколов, Б. Н. Внутренний контроль в коммерческой организации (организация, методики, практика) / Б. Н. Соколов. – М.: РОФЕР, 2006. – 250 с.

նաժողովի հաշվետվությունը ներքին հսկողության համակարգի գործունեության արդյունավետության վերաբերյալ: Հետևաբար, ներքին աուդիտի արդյունավետության բարձրացման խնդիրները, ՀՀ-ում միջազգային ֆինանսական շուկայում ակտիվ ընգրկվելու պարագայում, ապագայում կստանան ավելի մեծ արդիականություն:

**Гоар Симонян**

### **Некоторые задачи повышения эффективности внутреннего аудита в коммерческих банках**

#### **Аннотация**

Растущий интерес к внутреннему аудиту обусловлен тем, что внутренний аудит является одним из немногих доступных и в то же время недооцененных ресурсов, правильное использование которого может повысить эффективность банковской деятельности. Внутренний аудит – это неотъемлемая часть отлаженного корпоративного управления.

Для анализа продуктивности аудита следует использовать качественные и количественные показатели. Они должны определять динамику выполнения годового плана по внутреннему аудиту. Кроме того, система показателей должна позволить оценить степень удовлетворенности заказчиков (клиентов) от выполненной аудиторами работы. Стоит отметить, что подход к повышению качества внутреннего аудита должен быть комплексным. Только выполнение всех вышеперечисленных мероприятий будет в наибольшей степени способствовать совершенствованию работы банка.

**Gohar Simonyan**

### **Some Issues on increasing the Efficiency of Internal Audit in Commercial Banks of Armenia**

#### **Abstract**

The growing interest in internal audit is due that, the internal audit is one of the few available and at the same time, under-appreciated resource, the proper use of which can increase the efficiency of the banking activity.

Qualitative and quantitative indicators should be used to analyze the efficiency of the audit. They should identify the dynamics of implementation of the annual internal audit plan. In addition, a system of indicators should allow assessing customers' (clients') degree of satisfaction to the execution of the auditors. It should be noted that the approach to improve the quality of internal audit should be comprehensive. Only the performance of all of the activities mentioned above will be best to promote the improvement of the banking activity.

## **ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ СОЦИАЛЬНОЙ НАПРАВЛЕННОСТИ НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ В АРМЕНИИ**

В условиях низких темпов экономического развития Армении, роста инфляции, высокого уровня безработицы, неблагоприятной экологической ситуации в республике, все более углубляется социальная поляризация, выражающаяся в формировании прослойки очень богатых и очень бедных людей на фоне малочисленного среднего класса. Низкий уровень оплаты труда, высокий уровень безработицы обуславливают распространение нищеты со всеми вытекающими последствиями. В сложившихся условиях стоит задача реализации эффективной социальной политики, основой которой является политика занятости и политика доходов. И если политика занятости в большой мере зависит от общеэкономической стратегии государства, поскольку она сопряжена с его структурной и инвестиционной политикой и требует определенного отрезка времени, то политика доходов во многом зависит от структуры государственных расходов, выработанной концепции социальной справедливости, и, наконец, от разумной налоговой политики.

Социальная справедливость, определяемая как равенство возможностей людей, должна стать неотъемлемой частью успешной стратегии сокращения бедности в любой стране. Каждая страна имеет свои доминирующие принципы социальной справедливости, зависящие от национальных особенностей, уровня развития экономики, геополитического положения. Политика соблюдения принципов социальной справедливости может существенно сократить неравенство, причем важным является не только обеспечение равенства доходов, но и расширение доступа беднейших слоев населения к услугам здравоохранения, образования, рынкам труда и капитала.

Постсоветские страны, которые при старой системе были воспитаны на принципах эгалитаризма (уравнительном принципе реализации понятия социальной справедливости), на начальном этапе переходного периода с трудом воспринимали рыночные принципы справедливости. В дальнейшем было признано, что отсутствие регулирующих функций государства может привести к резкой поляризации социального положения различных слоев населения и к повышению социальной напряженности в обществе. Исходя из того, что рыночное распределение доходов без всякого вмешательства государства не дает гарантированного уровня благосостояния населения, в XX веке и в настоящее время в развитых странах все более распространяются концепции и доктрины, возлагающие на государство задачу обеспечения таких прав человека, как право на определенный стандарт благосостояния. Особую популярность приобрели теория и практика "социального рыночного хозяйства", означающие широкие социальные мероприятия, проводимые государством. Социальная политика, выступающая как составная часть мероприятий, проводимых государством в целях регулирования условий общественного производства в целом, тесно увязана с экономической ситуацией в стране.

Финансово-экономический кризис имел пагубное влияние на социальную ситуацию в Армении, повысив долю бедного населения. Фактически в 2009 году, согласно данным Национальной статистической службы страны, доля бедных составила около трети всего населения. При этом значительная доля среднего класса находится также весьма близко к черте бедности. Если учесть, что минимальная потребительская корзина взрослого человека, по данным за 2009 год составившая 25877 драмов, фактически является

заниженной суммой, то при реальной оценке за чертой бедности окажется гораздо большее количество – около 40% населения. По данным статистической отчетности РА уровень бедности составлял в 2008 году 27,2%, в 2009 году 33,6 %, а в 2010 году 34,9%, численность бедняков составляла соответственно – 815;2, 1019, и 1058 тысяч человек.

Согласно опубликованным данным НСС РА на июль 2011г. размер минимальной продовольственной корзины составил 21330 драмов (57,6 долл.США), а размер потребительской корзины - 33060 драмов (89 долл.США). Анализ данных о среднемесячной заработной плате в странах СНГ в декабре 2011г. показал, что Армения по этому показателю занимает одно из последних мест (377долл. США) после Кыргызстана и Таджикистана. При этом следует отметить, что заработок высокооплачиваемых работников (их ежемесячная заработная плата составляет более миллиона драмов) искажает картину средней заработной платы в республике. В то же время фактором, смягчающим социальную ситуацию в стране, является рост притока частных трансфертов. Так, в первом квартале 2012 года их объем увеличился по сравнению с аналогичным периодом 2011года на 10,3 % и это несколько улучшило материальное положение определенной части населения.

В современных условиях роль государственной финансовой политики, призванной осуществлять возможно более справедливое распределение материальных и финансовых ресурсов, значительно возрастает. При этом ограниченные возможности государственных финансовых ресурсов требуют поиска наиболее оптимальных решений в их распределении и перераспределении, в первую очередь повышения минимального уровня заработной платы. По существу низкие заработные платы означают низкую платежеспособность населения в целом, что в конечном счете ведет к снижению объемов товарооборота и темпов развития экономики в целом. В этой связи отметим, что правительство в своей программе на предстоящие 5 лет предусматривает повысить уровень минимальной заработной платы как минимум вдвое, а уровень средней трудовой пенсии до 125-135% по сравнению с чертой бедности, обеспечить сокращение бедности на 8-10 процентных пункта, создать более 100 тысяч рабочих мест. Однако это пока еще благие намерения, а на сегодняшний день реальность такова, что инфляционные процессы привели к фактическому снижению реальной заработной платы.

Через политику установления определенной структуры бюджетных расходов и через налоговую политику государство реализует свое право на осуществление социальной политики посредством перераспределения денежных средств, оказание материальной помощи социально уязвимым группам населения. Особую роль играет налоговая система, позволяющая через дифференциацию налогов осуществлять политику выравнивания доходов (установление необлагаемого минимума, прогрессивную шкалу обложения по подоходному налогу и др.).

Анализ действующей в республике налоговой системы приводит к выводу о том, что она в недостаточной мере выполняет функцию социальной справедливости. Во-первых, нельзя считать справедливым тот факт, что часть находящихся в “тени” налогоплательщиков оказывается в выгодном положении и не участвует в социальных программах государства. Во-вторых, несовершенна сама структура налогов: явное преобладание ценообразующих налогов, особенно налога на добавленную стоимость, что свидетельствует о нарушении принципа социальной справедливости. Отметим, что, согласно проекту Государственного бюджета на 2012 год, более 50% доходной части бюджета предусмотрено обеспечивать за счет косвенных налогов, то есть за счет рядовых налогоплательщиков.

С точки зрения социальной справедливости необходимо придерживаться следующих двух принципов налогообложения: полный охват налогами всех субъектов и взимание более высокого налога с субъектов, получающих более высокие доходы. Фактически налогообложение физических лиц выступает в качестве самостоятельного рычага формиро-

вания, распределения и перераспределения доходов, то есть представляет собой одно из направлений социальной политики государства. В целях защиты интересов малоимущих граждан и недопущения снижения уровня благосостояния ниже предельно допустимого в данных конкретных условиях государство устанавливает пороговый минимум в доходах, не облагаемый налогом. При этом повышение размера минимальной заработной платы и связанное с ним увеличение расходной части бюджета требуют компенсации неизбежных потерь путем увеличения прогрессивности подоходного налога, доведения его хотя бы до уровня развитых стран (примерно до 40% - 50%). Кроме того, необходимо повышение уровня необлагаемого дохода хотя бы до уровня минимальной потребительской корзины. Надо учесть также, что при нынешних размерах теневой экономики основными плательщиками данного налога являются законопослушные работники бюджетной сферы, что является проявлением социальной несправедливости.

Важен также учет при налогообложении семейного фактора и иждивенческой нагрузки. Как вариант, возможно налогообложение по конечным семейным доходам, с учетом социально-демографического состава и размера семьи (домохозяйств). Кроме того, необходимо постепенно переходить к принципу тотального декларирования доходов, как это практикуется во всем цивилизованном мире.

Таким образом, перед республикой стоит задача совершенствования налога на доходы физических лиц, которая должна решаться с учетом высокой доли социально необеспеченного населения и высокого уровня неучтенной рабочей силы, а также необходимости увеличения налоговых доходов в части рассматриваемого налога и ее более значительной дифференциации в зависимости от уровня доходов.

В развитых странах основными направлениями совершенствования налога на доходы физических лиц является применение развитой системы налоговых льгот (считается, что социально ориентированная система налоговых скидок стимулирует трудоспособных налогоплательщиков к легальному увеличению своих доходов и снижает их стремление к уклонению от налога) и совершенствование прогрессивной шкалы ставок налога. В России, где действует плоская шкала налогообложения физических лиц -13%, все еще идут дискуссии по вопросу перехода к прогрессивной шкале налогообложения. Сторонники сохранения плоской шкалы считают, что введение прогрессивной шкалы по налогу на доходы физических лиц является преждевременным главным образом из-за низких доходов большей части населения и возможности разрастания теневой экономики<sup>1</sup>.

В Армении необходимо сохранить прогрессивную систему налогообложения, но при этом в конструкцию налога следует ввести необлагаемый минимум в размере среднего по республике минимального прожиточного минимума, что, естественно, приведет к существенному снижению начисленной налоговыми органами суммы налоговых платежей по этому виду налога. Это потребует компенсации данных потерь путем повышения ставки налога, однако такое повышение должно коснуться только группы населения с максимальным уровнем доходов.

Согласно данным статистической отчетности относительно подоходного налога за 2009-2010 годы по новым независимым государствам наименьший показатель отношения подоходного налога к валовому внутреннему продукту после Киргизии (1,4%) зафиксирован в Армении - 1,5% при том, что в Армении в эти годы наивысшая ставка подоходного налога составляла 20%, а в Киргизии и Казахстане установлена единая ставка -10%<sup>2</sup>. Таким образом, Армения по этому показателю занимает последнее место среди названных государств (учитывая минимальную и максимальную ставки налогообложения). Как было указано выше, единая ставка установлена также в России и наиболее распространенным

<sup>1</sup> Бескоровая Н. Проблемы налогообложения доходов физических лиц в Российской Федерации и пути их решения. "Финансы и кредит", 12, 2012г., с.24.

<sup>2</sup> [http: taxservice.am](http://taxservice.am)

является мнение о необходимости внедрения там прогрессивной шкалы налогообложения.

Приведенные данные свидетельствуют о низкой собираемости подоходного налога в Армении. Производительность рассматриваемого налога в Армении составляет 0,08%, что является самым низким показателем среди прочих новых независимых государств. Для сравнения укажем, что соответствующий показатель составляет в Азербайджане 0,50%, в Грузии 0,11%, в Беларуси, где также действует единый налог (12 %) - 0,27%, в Казахстане - 0,17%, в России-0,31%, Украине – 0,32 %, а среднее значение по всем республикам составляет 0,22%. Следовательно, в республике требует неотложного решения вопрос повышения уровня собираемости и производительности подоходного налога.

Последние изменения в налоговом законодательстве не коснулись такого важного с точки зрения регулирования материального положения населения налога, как налог на имущество физических лиц. Одной из мотивировок правительства при этом явилось признание сложности осуществления указанных изменений, в частности в связи с трудностью оценки и переоценки недвижимого имущества. Открытым остается также вопрос налогообложения антиквариата, различных коллекций, ювелирных изделий, рынок которых в республике, как известно, непрозрачен.

Рынок недвижимости в первую очередь нуждается в правильных методиках оценки, позволяющих наиболее точно и оперативно оценить объекты, обеспечивая снижение кредитного риска, а во-вторых, предъявляет требования к комплексности такой методики, позволяющей учитывать не только восстановительную, ликвидационную или остаточную стоимость, но и инвестиционную, базирующуюся на принципах эффективного использования недвижимости и сбалансированного соотношения затрат и доходов при ее развитии.

В Армении действует 2 вида поимущественного налога – налог на имущество и налог на землю. Объектом налогообложения по налогу на имущество считается недвижимое имущество, включающее 1) строения жилого назначения, в том числе частный жилой дом, квартира в многоквартирном доме, садовый домик (дача), 2) многоквартирное жилое здание, 3) нежилая площадь в многоквартирном доме, 3) гаражи и др., а также движимое имущество (транспортные средства)- автомобильный, водный транспорт и мотоциклы. Ставки налога на имущество для строений жилого назначения, а также указанных в пунктах 2 и 3 объектов установлены в размерах от 0% (при стоимости до 3 млн. драмов) до суммы 127100млн. драмов плюс 1% с части, превышающей 40млн. драмов – в случае превышения последней суммы.

Анализ данных по бюджетным поступлениям свидетельствует о крайне низком удельном весе налога на имущество как физических, так и юридических лиц в общей сумме налоговых доходов (менее 1%), причем по данным за первый квартал 2012г., по сравнению с тем же периодом 2011г. этот показатель даже снизился. Между тем упомянутый налог обладает рядом преимуществ как в смысле возможности наполнения бюджета, так и с точки зрения использования его стимулирующих рычагов.

К числу преимуществ имущественных налогов можно отнести то обстоятельство, что по данному налогу налогоплательщикам труднее уклоняться от его уплаты, чем по налогам, связанным с доходами или по косвенным налогам. Преимуществом имущественного налога можно признать также тот факт, что база обложения его по размерам заметно превосходит базы налогообложения по другим видам налогов, поэтому даже незначительное повышение ставки налога на более дорогостоящее имущество может дать дополнительные поступления в доходы бюджета. Кроме того, в отличие от ряда других налогов, имущественные налоги обеспечивают поступление в бюджет независимо от результатов деятельности хозяйствующих субъектов и доходов физических лиц. И наконец, указанный налог в состоянии выполнять функции социального выравнивания (например, более льготные ставки налога в

отношении социального жилья и прогрессирующие ставки в отношении дорогостоящего жилья и транспортных средств).

Еще одним доводом в пользу налога на имущество является то, что средства по нему поступают в местные бюджеты (по физическим лицам с октября 2003г., по юридическим лицам – с января 2004г.). Это обстоятельство еще более актуализирует вопрос упорядочения ставок по данному налогу, поскольку содействует активизации и расширению возможностей местных органов власти в деле выполнения региональных социальных программ. Отметим, что поступление налогов в территориальные бюджеты сложилось исторически и обусловлено тем, что недвижимое имущество имеет четкую территориальную принадлежность, что упрощает администрирование соответствующего налога на территориальном уровне и в результате повышает заинтересованность территории в наиболее полном поступлении этих сумм в местный бюджет.

Таким образом, несмотря на незначительные объемы поступлений имущественных налогов, в особенности налога на имущество физических лиц, они обладают высоким налоговым потенциалом и рычагами стимулирования. Недостаточный объем поступлений этого налога вызван, в частности, проблемами его собираемости, связанными с тем, что налоговой базой по имущественным налогам является только то имущество, на которое зарегистрировано право собственности. Вместе с тем проблемой является то, что этот налог уплачивается с остаточной стоимости основных фондов, в то время, как в мире общепринята практика взимания с рыночной стоимости имущества. Следовательно, необходимо создать кадастр объектов недвижимости и собственников этих объектов, разработать методику массовой оценки, которая позволит определять стоимость объектов собственности, приближенную к рыночной стоимости, а также определить принципиальные подходы к формированию налоговой базы. При этом оценка налоговой базы должна осуществляться с помощью достаточно гибких механизмов, с учетом как местных условий, так и той проблемы, чтобы она не подорвала бы рынок жилья.

Изучение зарубежного опыта показывает, что в развитых странах ставка налога на недвижимость довольно высокая и взимается он с рыночной стоимости жилья. В США, например, ставка налога составляет 2-6% от рыночной стоимости жилья. В Великобритании ставка равна 1% от рыночной стоимости жилья, но при этом действует система вычетов (недвижимость стоимостью до 120 тыс. фунтов стерлингов налогом вообще не облагается). Что касается России, то в настоящее время проводятся работы по формированию соответствующих кадастров, а также по разработке системы, которая позволит взимать данный налог исходя из рыночной стоимости облагаемого имущества с необлагаемым минимумом для семей с низкими доходами. В Армении также стоит вопрос о совершенствовании порядка учета и оценки данного налога.

Отдельным объектом имущественного налога является движимое имущество, то есть на транспортные средства, причем данный объект имеет тенденцию к росту в связи с постоянным увеличением количества транспортных средств, в частности дорогостоящих иномарок. Перспективы увеличения поступлений налогов от движимого имущества связаны также с последним постановлением правительства о том, что с 2012 года подлежат обложению акцизным налогом также импортируемые легковые автомобили таможенной стоимостью 25 млн. драмов и выше или сроком выпуска до 2 лет – по ставке 20% от таможенной стоимости. С начала текущего года наряду с действующими подакцизными товарами подлежат обложению акцизным налогом моторное масло по ставке 10% от отпускной цены (без НДС и акцизов) в случае местного производства, а при импорте – по ставке 10% от таможенной стоимости.

Проблемы, связанные с социальной защитой населения, имеют непосредственную связь также с отчислениями на социальное обеспечение. Высокий уровень неучтенной



рабочей силы получил широкое распространение во внебюджетных организациях, где работодатели стремятся всячески сократить отчисления в социальные фонды, поскольку эти платежи заметно ухудшают финансовое положение этих организаций, приводя к увеличению издержек и уменьшению полученной прибыли.

Как известно, уровень поступлений по социальному страхованию в первую очередь зависит от уровня экономического развития данной страны, а также законодательного поля и административных возможностей органа, реализующего данную операцию. Так, в США он составляет 7%, в Германии – 15,5%, Латвии – 9%, в Армении – 3,6%. Очевидно, что низкий уровень экономического развития в Армении является основной причиной незначительного уровня отчислений на социальное страхование. В настоящее время в Армении разработан новый порядок, согласно которому с 1 января 2013 года вводится единый подоходный налог, причем работодатели будут выплачивать его в электронном виде. Ныне действующие подоходный налог и социальные выплаты будут объединены в единый налог, основанный на прогрессивной шкале. При уровне заработной платы до 120 тыс. драмов в месяц единая ставка составит 24,4%, а в случае превышения данного размера – 26%. Проблема состоит в том, чтобы данное изменение не отразилось бы на реальной заработной плате работников. Кроме того, следует учесть, что у значительной части работающих (это в первую очередь касается работников бюджетной сферы) месячный заработок составляет до 100 тыс. драмов, что делает логичным дополнение данной шкалы более заниженной ставкой налога при уровне заработной платы до 100 тыс. драмов.

Таким образом, только через осуществление комплекса мероприятий, направленных на совершенствование налоговой политики, повышение доли прямых налогов в общих налоговых поступлениях возможно будет обеспечить усиление социальной направленности государственной финансовой политики, усиление стимулирующих функций налога.

**Իրինա Հակոբյան**

**Հարկային քաղաքականության սոցիալական ուղղվածության  
ապահովման հիմնահարցերը Հայաստանում**

**Ամփոփագիր**

Հոդվածում քննարկվում են ՀՀ-ում առկա սոցիալական արդարության հիմնախնդիրները, վերլուծվում է երկրում վարվող հարկային քաղաքականության դերը, հատկապես այն հարկատեսակների գծով, որոնք ունեն սոցիալական անհավասարության մեղմման պոտենցիալ՝ եկամտահարկ, գույքահարկ, սոցիալական վճարներ:

**Irina Hakobyan**

**Issues on Ensuring Social Function of Tax Policy in Armenia**

**Abstract**

The article considers the principles of social justice that are in effect at the present in the Republic of Armenia. The article also analyses the role of state taxation policy in regulating and equalising profits of private citizens. The article, in particular, concentrates on taxes that potentially promote equalising social welfare-income tax, property tax, welfare of private citizens.

# ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

## ՀՐԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի բաժնի վարիչ, երկր. հանք. գիտ. դոկտոր

### ՀՀ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՊԻՐԻՏԸ (FeS<sub>2</sub>) ՈՐՊԵՍ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈ

Պիրիտը (FeS<sub>2</sub>) մինչ այժմ դիտարկվել է որպես ոչ հանքային օգտակար հանածո: Դրանից չեն կորզվել ոչ դրա բյուրեղային ցանցը կազմող երկաթը և ոչ էլ զուգակցվող (հարակից) բազմաթիվ տարրերից որևէ մեկը: Պիրիտը միշտ դիտարկվել է որպես ծծմբաթթվի արտադրության հումք՝ դրանից ծծմբային գազերի տեսքով կորզվել է ծծումբը, որն էլ ներդրվել է ծծմբաթթվի արտադրության մեջ: Սակայն, սրանից մոտ երկու տասնյակ տարի առաջ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիայում մշակված տեխնոլոգիայի շնորհիվ հնարավորություն է ընձեռվել պիրիտից կորզել ոչ միայն ծծումբը, այլև երկաթը, որն էլ պիտանի է դառնում ինչպես որակյալ թուջի, այնպես էլ պողպատի ծուլման համար:

Մեր մոլորակի բոլոր երկրների, այդ թվում նաև Հայաստանի, մետաղական օգտակար հանածոների հանքավայրերում պիրիտ հանքանյութը տարածված է շատ ավելի շատ (թե՛ պարունակության, և թե՛ քանակային առումով), քան հիմնական օգտակար համարվող հանքանյութերը, նույնիսկ դրանք բոլորը միասին: Ամենուրեք պիրիտի բյուրեղային ցանցը կազմող ծծմբից ու երկաթից բացի, պիրիտի մեջ հայտնաբերվել են մոտ երկու տասնյակի հասնող այլ տարրեր՝ ոսկի, արծաթ, պլատին, պալադիում, օսմիում, իրիդիում, ռենիում, կապար, ցինկ, պղինձ, կադմիում, վանադիում, կոբալտ, սելեն, տելուր, բիսմութ, մկնդեղ, մոլիբդեն, գալիում, գերմանիում, ինդիում և այլն:

Մի տեղ՝ կապված հանքայնացման կազմավորման հետ, օրինակ. երկաթաքարային կազմավորման հանքավայրերում, պիրիտի մեջ տարածված են լինում վանադիումը, կոբալտը, տիտանը, քրոմը, սելենը, տելուրը, բիսմութը և այլն, մեկ այլ տեղ՝ օրինակ. ոսկի-բազմամետաղային կազմավորման հանքավայրերում՝ պղինձը, կապարը, ցինկը, կադմիումը, սելենը, տելուրը, բիսմութը, գալիումը, գերմանիումը, ինդիումը և այլն:

Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիայի կողմից մշակված տեխնոլոգիայով հնարավոր է դարձել պիրիտից կորզել նաև կորզելի պարունակություններով տարածված հարակից բաղադրիչներից շատերը, հատկապես ազնիվ մետաղները, սելենը, տելուրը և այլն:

Հայաստանի Հանրապետության հանքավայրերում պիրիտը շատ տարածված է բոլոր կազմավորումների հանքաքարերում և ամենուրեք այն, իր քանակով, գերազանցում է հիմնական հանքանյութերին, նույնիսկ մի քանիսին միասին վերցրած: Եվ, բանն այն է, որ հանքավայրերի շահագործման գործում պիրիտը չի դիտարկվում որպես օգտակար հանածո և չի կորզվում: Այն հիմնականում՝ գերակշիռ մեծամասնությամբ թափվում է պոչամբարներ՝ իր հետ տանելով ոչ միայն սեփական ծծումբ և երկաթ տարրերը, այլև հարակից տարածված շատ ու շատ արժեքավոր (շատ ավելի արժեքավոր, քան սեփական) տարրերը: Գիշտ է, պիրիտ հանքանյութի մի փոքրիկ, շատ փոքրիկ մասը ֆլոտացիոն եղանակով հանքահարստացման գործընթացում անցնում է հիմնական համարվող օգտակար տարրերի խտանյութերի մեջ (պղինձի, մոլիբդենի, կապարի, ցինկի), բայց և այնպես դրա գերակշիռ մասը (>90%-ից) թափվում է պոչամբարներ և պատճառ դառնում շրջակա միջավայրի ապակամման և թունավորման:

Այժմ տեսնենք, թե ՀՀ շահագործվող մի քանի հանքավայրերում պիրիտ հանքանյութը ինչպես է տարածված և ինչ օգտակար հարակից բաղադրիչներ է պարունակում, որոնք էլ պիրիտի հետ միասին թափվում են պոչամբարներ:

**Քաջարանի պղնձամոլիբդենային կազմավորման հանքավայրի** հաշվեկշռային պաշարներում պիրիտի քանակը (հաշվարկված ծծումբ տարրի և հիմնական մետաղների անալիզների տվյալներով) կազմում է 20,9 մլն տ, իսկ ոչ հաշվեկշռային պաշարներում՝ 20,0 մլն տ, այն պարագայում, երբ հիմնական օգտակար համարվող պղինձ և մոլիբդեն տարրերի խալկոպիրիտ և մոլիբդենիտ հանքանյութերի քանակները. հաշվեկշռային պաշարներում կազմում են. խալկոպիրիտին՝ 15,166 մլն տ, մոլիբդենիտին՝ 1,214 մլն տ, համատեղ՝ 16,38 մլն տ, իսկ արտահաշվեկշռային պաշարներում. խալկոպիրիտին՝ 15,67 մլն տ, մոլիբդենիտին՝ 1,101 մլն տ, համատեղ՝ 16,771 մլն տ:

Ինչպես տեսնում ենք, պիրիտ հանքանյութը Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրում իր քանակով 1,28 անգամ գերազանցում է հիմնական պղինձ և մոլիբդեն տարրերի հանքանյութերին համատեղ վերցրած:

Քաջարանի հանքավայրի պիրիտ հանքանյութում ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտաշխատող Գ.Փիջյանի<sup>1</sup> հետազոտությունների արդյունքով հայտնաբերվել են. ռենիում՝ 0,00015% պարունակությամբ, սելեն՝ 0,001%-ից մինչև 0,029% (միջինը՝ 0,0079%), տելուր՝ 0,0001%-ից մինչև 0,06% (միջինը՝ 0,0047%), բիսմութ՝ 0,001%-ից մինչև 0,022% (միջինը՝ 0,0063%), արծաթ՝ 0,001%-ից մինչև 0,008% (միջինը՝ 0,0042%): Ինչպես տեսնում ենք, այլ օգտակար տարրերի, հատկապես ոսկու և պլատինոիդների, մասին այստեղ խոսք չկա: Հանդգված ենք, որ այդ տարրերի գծով պարունակումը Գ.Փիջյանի կողմից անալիզներ չեն կատարվել, հակառակ դեպքում հեղինակը կգրեր, որ այդ «տարրերը չեն հայտնաբերվել», կամ «դրանց պարունակություններն այնքան փոքր են, որ դրանք անտեսվում են»: Եվ, քանի որ այդպես գրված չէ, մենք լիիրավ իրավունք ունենք մտածելու, որ դրանց գծով անալիզներ չեն կատարվել:

Վերը բերված տվյալների հիման վրա մեր կողմից հաշվարկվել են, որ.

Հաշվեկշռային պաշարներում առկա 20,9 մլն տ պիրիտում պարունակվում են. ծծումբ՝ 11,16 մլն տ, երկաթ՝ 9,74 մլն տ, ռենիում՝ 31,350տ, սելեն՝ 1651տ, տելուր՝ 982,3տ, բիսմութ՝ 13167,0տ, արծաթ՝ 877,8տ:

Արտահաշվեկշռային պաշարներում առկա 20,0 մլն տ պիրիտում պարունակվում են. ծծումբ՝ 10,680 մլն տ, երկաթ՝ 9,320 մլն տ, ռենիում՝ 30տ, սելեն՝ 1580տ, տելուր՝ 940տ, բիսմութ՝ 12600տ, արծաթ՝ 840տ:

Հաշվեկշռային պաշարների պիրիտի հետ պոչամբարներ թափվող տարրերի արժեքը նախաճգնաժամային տարվա (2007թ.) գներով կարող էր կազմել 11,337 մլրդ դոլար, իսկ արտահաշվեկշռային պաշարների պիրիտի հետ՝ 10,849 մլրդ դոլար:

Դրանից բացի, Քաջարանի հանքավայրի հաշվեկշռային պաշարների մեջ առկա պիրիտի պոչամբարներ թափվելու միջոցով այսուհետ բնական միջավայր կթափվեն ևս խիստ վտանգավոր՝ 9,324 մլն տ ծանր մետաղներ և 2633տ թունահարույց հատկություններով օժտված տարրեր՝ սելեն և տելուր:

**Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի** 01.01.2010թ. դրությամբ մնացած հաշվեկշռային պաշարներում (54813 հազ.տ հանքաքարերում) պիրիտ հանքանյութի քանակը կազմում է 728018տ, իսկ 113,67 մլն տ արտահաշվեկշռային պաշարներում ու կանխատեսումային ռեսուրսներում՝ 1.373.232տ: Պիրիտի քանակը հիմնական պղինձ և մոլիբդեն օգտակար տարրերի՝ խալկոպիրիտ և մոլիբդենիտ տարրերի քանակին գերազանցում է մոտ 1,2 անգամ:

Նույն հեղինակի (Գ.Փիջյանի) տվյալներով Ագարակի հանքավայրի պիրիտի մեջ հարակից բաղադրիչների պարունակությունները կազմում են. ռենիումին՝ 0,00003% սելենին՝ 0,0054%, տելուրին՝ 0,0026%, բիսմութին՝ 0,0043%, գերմանիումին՝ 0,00026%, արծաթին՝ 0,0003%: Ինչպես արդեն նշվել է, Ագարակի հանքավայրի պիրիտի նմուշներում այլ տարրերի, հատկապես ոսկու և պլատինոիդների գծով անալիզներ չեն կատարվել, հետևապես պիրիտի հետ պոչամբարներ թափվող տարրերի լիարժեք գնահատականը տալ չենք կարող (կողմնորոշվելու ենք նրանցով, ինչ որ ունենք):

<sup>1</sup> Пиджян Г.О., Медно-молибденовая формация руд Армянской ССР. Ереван: Изд. АН АрмССР, 1975. 309 с.

Ագարակի հանքավայրի հաշվեկշռային պաշարներում առկա 728018տ պիրիտում պարունակվում են. ծծումբ՝ 388762տ, երկաթ՝ 339256տ, ռենիում՝ 0,22տ, սելեն՝ 39,3տ, տելուր՝ 18,93տ, քիսմուտ՝ 21,84տ, գերմանիում՝ 1,9տ, արծաթ՝ 2,18տ:

Արտահաշվեկշռային պաշարներում և կանխատեսումային ռեսուրսներում առկա 1.373.232տ պիրիտում պարունակվում են. ծծումբ՝ 733306տ, երկաթ՝ 639926տ, ռենիում՝ 0,41տ, սելեն՝ 74,15տ, տելուր՝ 35,70տ, քիսմուտ՝ 59,05տ, գերմանիում՝ 3,57տ, արծաթ՝ 4,12տ:

Ագարակի հանքավայրի հաշվեկշռային պաշարներում առկա 728018տ պիրիտի հետ պոչամբարներ թափվող տարրերի արժեքը կարող է կազմել 363,751 մլն դոլար, իսկ արտահաշվեկշռային պաշարներում և կանխատեսումային ռեսուրսներում առկա 1373232տ պիրիտի հետ՝ 686,518 մլն դոլար:

Այն բոլոր վտանգավոր տարրերին, որոնք մինչ այժմ թափվել են պոչամբարներ, սրանից հետո կավելանան. ծանր մետաղներ՝ 673912տ, թունահարույց տարրեր՝ 168տ:

**Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում**, որը պատրաստվում է շահագործման, հաշվեկշռային պաշարներում առկա պիրիտի քանակը՝ հաշվարկված ծծումբ տարրի և հիմնական պղինձ և մոլիբդեն տարրերի անալիզների հիման վրա, կազմում է 28,6 մլն տ: Պղնձի և մոլիբդենի խալկոպիրիտ և մոլիբդենիտ հանքանյութերի քանակը այս հանքավայրում կազմում է. խալկոպիրիտին՝ 4708261տ, մոլիբդենիտին՝ 165360տ, երկու հիմնական հանքանյութերի քանակը համատեղ կազմում է 4873621տ: Պարզվում է, որ պիրիտ հանքանյութի քանակը 5,87 անգամ գերազանցում է հիմնական օգտակար տարրերի հանքանյութերի քանակին համատեղ վերցրած:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի P<sub>1</sub> կատեգորիայի կանխատեսումային ռեսուրսներում (հանքաքարերին՝ 308,85 մլն տ, մոլիբդենին՝ 79,63 հազ.տ, պղնձին՝ 1005 հազ.տ) պիրիտ հանքանյութի քանակը կազմում է 19,3 մլն տ:

Կարծում ենք, ավելի շատ համոզված ենք, որ Թեղուտի հանքավայրում կշահագործվեն միայն հաշվեկշռային պաշարները և այն էլ բարբարոսաբար ու խիստ հապճեպ: Հետևաբար՝ պիրիտի հետ կապված մեր հաշվարկները կատարում ենք հաշվեկշռային պաշարներից ելնելով:

Գ.Փիջյանի տվյալներով Թեղուտի հանքավայրի պիրիտի մեջ սելենի պարունակությունը կազմում է 20 գ/տ, իսկ տելուրին՝ 14 գ/տ: Այլ տարրերի գծով անալիզներ չեն կատարվել, հետևապես մեր հաշվարկների համար հիմք ենք ընդունում այն տվյալները, որոնք ունենք:

Թեղուտի հանքավայրի հաշվեկշռային պաշարների շահագործման հետևանքով (25-30 տարի հետո) պոչամբարներում կունենանք ավելի քան 28 մլն տ պիրիտի թափոններ, որոնց մեջ էլ կլինեն. սելեն՝ 572,8տ, տելուր՝ 401տ: 28 մլն տ պիրիտի մեջ ծծմբի քանակը կլինի 15,0 մլն տ, իսկ երկաթին՝ 13 մլն տ:

Թեղուտի հանքավայրի շահագործման հետևանքով պոչամբարներ թափվող պիրիտ հանքանյութի հիմնական ծծումբ և երկաթ բաղադրիչների և հարակից՝ սելեն և տելուր տարրերի արժեքը 2007թ.՝ նախաճգնաժամային տարվա գներով, կարող է կազմել 13,726 մլրդ դոլար, այն պարագայում, երբ հիմնական պղինձ և մոլիբդեն օգտակար տարրերի 100%-ով կորզելու (որը՝ Քաջարան և Ագարակ նույնանման հանքավայրերի շահագործման փորձը ցույց է տվել, որ դա բոլորովին անհնար է և լավագույն դեպքում կարող է կազմել 80%) պարագայում դրանց արժեքը կարող է կազմել 17,33 մլրդ դոլար (իրական կորզման՝ 80%-ով, պարագայում դրանց արժեքը կարող է կազմել 13,84 մլրդ դոլար, այսինքն՝ համարյա այնքան, որքան պիրիտ կթափվի պոչամբարներ): Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ այդ պիրիտի մեջ էլ կարող են լինել (համոզված ենք, որ անպայման կլինեն) կորզելի պարունակություններով ազնիվ մետաղներ և շատ այլ տարրեր, ապա այդ գումարը կարող է լինել շատ ավելի մեծ:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ երկաթը՝ թերկորզման հետևանքով պոչամբարներ թափվող պղնձի հետ միասին, պատկանում է ծանր մետաղների թվին և խիստ վտանգավոր է կենդանական աշխարհի համար: Սելենն ու տելուրն էլ պատկանում են թունահարույց տարրերի թվին նույնիսկ իրենց միացությունների տեսքով և դարձյալ խիստ վտանգավոր են:

**Շահունյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրում** պիրիտի քանակը որոշված չէ: Որոշված չէ նաև ծծմբի ընդհանուր քանակը, որպեսզի մենք կարողանանք հաշվարկել պիրիտի քանակը: Այդ իսկ պատճառով էլ պիրիտի քանակը մենք պայմանականորեն ընդունում ենք հավասար հիմնական՝ պղնձի, կապարի և ցինկի հանքանյութերի քանակին, գիտենալով, որ ՀՀ բոլոր կազմավորումների հանքավայրերում, բացառությամբ երկաթի հանքավայրերի, պիրիտի քանակը մշտապես գերազանցում է նույնիսկ 2-3 հիմնական տարրերի հանքանյութերի քանակին համատեղ: Եվ այսպես. պիրիտի քանակը Շահունյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրում ընդունում ենք.

- հաշվեկշռային պաշարներում՝ 790170տ,
- կանխատեսումային ռեսուրսներում՝ 457540տ,
- ընդհանուրը (հաշվեկշռային պաշարներում և կանխատեսումային ռեսուրսներում համատեղ)՝ 1.247.710տ:

Է.Խաչատրյանի<sup>1</sup> հետազոտություններով Շահունյանի հանքավայրի պիրիտի մեջ սելենի պարունակությունը տատանվում է 0,003%-ից մինչև 0,008%-ի սահմաններում (միջին պարունակությունն ընդունվում է 0,0055%), տելուրի՝ 0,001%-ից մինչև 0,0023 տոկոսի սահմաններում (միջինն ընդունվում է 0,00165%): Այլ տարրերի գծով անալիզներ չեն կատարվել, և Շահունյանի հանքավայրի պիրիտի մեջ ազնիվ մետաղների պարունակությունների վերաբերյալ տվյալներ չունենք: Սակայն դա բոլորովին էլ չի նշանակում, որ այդ պիրիտի մեջ ազնիվ մետաղներ, հատկապես ոսկի և արծաթ չկան: Նշենք, որ Շ.Ամիրյանի<sup>2</sup> տվյալներով Շահունյանի հանքավայրի նմանակ Արմանիսի ոսկի-բազմամետաղային կազմավորման հանքավայրի պիրիտի մեջ ոսկու պարունակությունը տատանվում է 1,5-ից մինչև 30 գ/տ-ի սահմաններում, իսկ արծաթինը՝ 7,5-ից մինչև 400 գ/տ-ի սահմաններում:

Շահունյանի հանքավայրի հանքաքարերում պիրիտ հանքանյութի հետ կապված սելենի քանակը կազմում է 68,62տ, իսկ տելուրինը՝ 20,6տ: Պիրիտ հանքանյութի հիմնական տարրերի քանակները կազմում են. ծծմբինը՝ 666280տ, երկաթինը՝ 581430տ: Եվ այսպես, Շահունյանի հանքավայրի հաշվեկշռային պաշարների և կանխատեսումային ռեսուրսների շահագործման հետևանքով պոչամբարներ թափվող պիրիտի արժեքը (հարակից բաղադրիչներով հանդերձ) կարող է կազմել 613,484 մլն դոլար:

Ծանոթություն. Եթե Շահունյանի հանքավայրի պիրիտի վրա պայմանականորեն տարածենք Արմանիսի հանքավայրի պիրիտի ոսկու և արծաթի պարունակությունները, ապա ոսկու քանակը Շահունյանի հանքավայրի պիրիտի մեջ կարող է կազմել 19651կգ, իսկ արծաթինը՝ 254,2տ և այդ պարագայում Շահունյանի հանքավայրից պոչամբարներ թափվող պիրիտի արժեքը կարող է մեծանալ 733,4 մլն դոլարով:

**Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրում**, որն այժմ պատրաստվում և համարյա պատրաստ է շահագործման, պիրիտի քանակը դարձյալ պայմանականորեն ընդունված է հավասար հիմնական տարրերի՝ պղնձի, կապարի և ցինկի, հանքանյութերի գումարային քանակին, այսինքն՝ 2.078.730տ: Հանքավայրի երկրաբանական նկարագրությունից պարզվում է, որ պիրիտի իրական քանակությունը Արմանիսի հանքավայրում կարող է կրկնակի ու եռակի անգամ ավելին լինել, սակայն մեր հաշվարկների համար հիմք ենք ընդունում բերված տվյալները:

Շ.Ամիրյանի տվյալներով Արմանիսի հանքավայրի պիրիտի մեջ հայտնաբերված տարրերի միջին պարունակությունները կազմում են. սելենինը՝ 28 գ/տ, տելուրինը՝ 12 գ/տ, փսմուտինը՝ 95 գ/տ, գալիումինը՝ 15 գ/տ, ինդիումինը՝ 10 գ/տ, կադմիումինը՝ 20 գ/տ, արծաթինը՝ 203,75 գ/տ, ոսկունը՝ 15,75 գ/տ: Պիրիտի հետ կապված տարրերի քանակը Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրում (բերված տվյալների հիման վրա հաշվարկված) կազմում են.

<sup>1</sup> Хачатурян Э.А., Минералогия, геохимия и генезис руд колчеданной формации Армянской ССР. Ереван: Изд. АН АрмССР, 1977. 318 с.  
<sup>2</sup> Амирян Ш.О., Пиджян Г.О. Арманиское медно-полиметаллическое месторождение. Изв. АН Арм ССР. "Науки о Земле", 1983, №6, с. 30-45. Амирян Ш.О., Пиджян Г.О., Фармазян А.С. Минеральный состав руд и характер распределения главных рудообразующих редких, благородных элементов в рудах Арманиского медно-полиметаллического месторождения. Библ. ИГН АН Арм ССР. Ереван, 1985, 10 с.

սելենինը՝ 58,2տ, տելուրինը՝ 24,94տ, բիսմութինը՝ 197,48տ, գալիումինը՝ 31,18տ, ինդիումինը՝ 20,79տ, կադմիումինը՝ 41,58տ, ոսկունը՝ 32743կգ, արծաթինը՝ 423,54տ: Պիրիտի հիմնական ծծումբ և երկաթ տարրերի քանակները կազմում են. ծծմբինը՝ 1,11 մլն տ, երկաթինը՝ 0,968 մլն տ:

Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործման հետևանքով պոչամբարներ թափվող պիրիտի արժեքը՝ հարակից տարրերով հանդերձ, կարող է կազմել 2,2734 մլրդ դոլար, որից ոսկու բաժինը կարող է կազմել 1,0314 մլրդ դոլար:

Այլ՝ փոքր և մեծ հանքավայրերի համար տվյալներ չենք բերում, քանի որ ամենուրեք պատկերը նույնն է՝ փոքր հանքավայրերում պիրիտի չկորզման հետևանքով տեղի ունեցող կորստի քանակը կլինի փոքր, մեծ հանքավայրերում՝ մեծ:

Բավարարվելով բերված տվյալներով ցանկանում ենք անցնել առաջարկություններին: Հիմք ընդունելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջների այն մասը, որն ասում է. «Հանքավայրերը պետք է շահագործվեն համլիր», այսինքն՝ պետք է կորզվեն բոլոր օգտակար տարրերը:

Առաջարկվում է.

1. պիրիտ հանքանյութը դիտարկել որպես օգտակար հանածո և անպայման կորզել հանքաքարերից,
2. այն հանքավայրերում, որտեղ որոշված է ծծմբի ընդհանուր (և միջին) պարունակությունը և հիմնական օգտակար տարրերի քանակը, որոնց հիման վրա հնարավոր է մոտավորապես հաշվարկել պիրիտ հանքանյութի քանակը, բայց որոշված չեն պիրիտի մեջ հնարավոր բոլոր օգտակար տարրերի պարունակությունները, կատարել լրահետազոտական աշխատանքներ՝ հանքավայրի տարբեր մասերից և տարբեր ծագման պիրիտներից վերցնել նմուշներ և դրանք տալ քիմիական անալիզի հնարավոր բոլոր օգտակար հարակից տարրերի պարունակությունները որոշելու գծով,
3. այն հանքավայրերում, որտեղ հնարավոր չէ հաշվարկել պիրիտի քանակը, քանի որ չկա ծծմբի ընդհանուր պարունակությունը և, պիրիտի մեջ որոշված չեն բոլոր հնարավոր օգտակար տարրերի պարունակությունները, կատարել լրահետախուզական և հետազոտական աշխատանքներ՝ նշված թերությունները վերացնելու համար,
4. պահանջվող բոլոր տվյալներն ունենալուց հետո, բոլոր տիպերի (բոլոր առաջացումների) պիրիտներից վերցնել ոչ մեծածավալ տեխնոլոգիական նմուշներ և դրանք տալ ՀՀ ԳԱԱ Կապանի մետալուրգիայի և հանքահարստացման լաբորատորիային մետալուրգիական հետազոտություններ կատարելու՝ պիրիտից օգտակար տարրերի կորզման տեխնոլոգիական հնարավորություններն ու պարամետրերը որոշելու համար:

Բնական միջավայրն անաղարտ պահելու, լեռնահանքային ձեռնարկությունների արդյունավետությունը բարձրացնելու, հազարավոր նոր աշխատատեղեր ստեղծելու համար անհրաժեշտ է նույն՝ Կապանի լաբորատորիայում մշակել.

1. հանքահարստացման նորագույն տեխնոլոգիաներ, որոնց արդյունքով հնարավոր լինի բոլոր օգտակար տարրերի, այդ թվում նաև պիրիտի, կորզումները հանքաքարերից խտանյութերի մեջ հասցնել 94-95%-ի՝ 60-70%-ի փոխարեն,
2. մետալուրգիական նորագույն տեխնոլոգիաներ խտանյութերից բոլոր (հնարավորինս մեծ թվով) կորզելի պարունակություններով օգտակար տարրերի բարձր տոկոսներով (98-99) կորզելու գծով, որոնք հիմք կարող են հանդիսանալ մետալուրգիական գործարանների նախագծման և կառուցման համար:

**Грачик Авакян**

## **Пирит месторождений РА в качестве полезного ископаемого**

### **Аннотация**

Пирит до сих пор рассматривался в качестве нерудного полезного ископаемого. Он всегда рассматривался в качестве сырья для производства серной кислоты и никогда из

него не извлекался его основной второй компонент железо, а также другие полезные компоненты, сопутствующие железу и сере. Технологией, разработанной Капанской лабораторией обогащения и металлургии НАН РА, стало возможно из пирита с высокими процентами (90-96) извлечь как образующие его кристаллическую решетку основные компоненты – серу и железо–, так и содержащиеся в извлекаемых количествах сопутствующие компоненты – благородные металлы, селен, теллур и др. Во всех формациях месторождений Республики Армения наряду с основными полезными элементами повсюду распространен минерал пирит, который по своему количеству преобладает над основными элементами. По этой причине предлагается пирит рассматривать в качестве полезного ископаемого и в процессе эксплуатации месторождений извлечь данный минерал. В результате этого значительно может быть очищена природная среда и получены полезные элементы стоимостью в миллион долларов.

**Hrachik Avagyan**

## **Pyrite of Armenian Mines as a Mineral**

### **Abstract**

Pyrite has been so far considered as a non-mineral useful element: raw material for the production of sulfuric acid. The second component of pyrite, iron, and the other components such as gold, silver, selenium, tellurium, and etc. were not extracted.

The article proposes to consider pyrite as a useful element of mineral origin and to extract it in higher quantities in mine exploiting and ore enrichment processes; to extract sulfur and iron and other components: precious metals, selenium, tellurium, rhenium, and etc. in metallurgical production processes for the extraction of which the respective technology has been developed in Armenia.

### **ՀՐԱՀԻԿ ԱՎԱԳՅԱՆ**

*ՆԳԱՎ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի բաժնի վարիչ, երկր. հանք. գիտ. դոկտոր*

## **ՊԻՐԻՏԻ ՊՈՆԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄՔԻՆԱՏԻ ՀԱՆՔԱՅԱՐՍԱՑՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ**

Պոչամքներ են անվանվում հանքաքարերի առաջնային մշակման՝ հանքահարստացման, օգտակար տարրերի կորզման հետևանքով առաջացած՝ փշրված ու մանրացված, աղքատ հանքաքարերի մնացուկները, իսկ դրանց թափոնակույտերը երկրի մակերևույթի ինչ-որ տարածքում անվանվում են պոչամբարներ:

Հանրահայտ է, որ հանքաքարերի առաջնային մշակման ժամանակ օգտակար տարրերի ամբողջական (100%-ով) կորզումը դեռևս հնարավոր չէ: Մի տեղ այդ կորզումը կազմում է օգտակար տարրերի սկզբնական քանակի 92-96%-ը, մեկ այլ տեղ՝ 80-85%-ը, երրորդում՝ 70-75%-ը և այլն: Եվ, այդ դեպքում, հանքաքարերի սկզբնական մշակումից և օգտակար տարրերի որոշակի քանակների կորզումից հետո մնացած աղքատ հանքաքարերը փշրված ու մանրացված վիճակով թափվում են պոչամբարներ, որոնք էլ իրենց հետ պոչամբարներ են տանում ոչ միայն հիմնական հանքանյութերի չկորզված մնացուկները, այլև դրանց հետ հարակից տարածված տարրերի որոշակի քանակներ:

Օգտակար հանաժողովների կորուստներ են տեղի ունենում նաև (և հատկապես) դրանց արդյունահանման ժամանակ: Հաշվարկները ցույց են տվել, որ օգտակար հանաժողովների հանքաքարերի միջին կորուստները բոլոր տիպերի օգտակար հանաժողովների արդյունահանման ժամանակ կազմում են մոտ 25% (մի մասը մնում է ընդերքում, մյուսը՝ մակաբացման աշխատանքների ընթացքում ծածկող «դատարկ» ապարների հետ միասին հեռացվում է թափոնակույտեր և անվերադարձ կորսվում):

Առավել ցավալի է, որ նյութական ու ֆիզիկական մեծ ծախսերի գնով արդյունահանված հանքաքարերից օգտակար տարրերի մեծամեծ կորուստներ են տեղի ունենում հանքաքարերի սկզբնական մշակման՝ հանքահարստացման գործընթացներում:

Դրա վառ ապացույցներից է Հայաստանի խոշորագույն հանքավայրերից մեկի՝ Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի, շահագործման հետևանքով առաջացող կորուստները:

Ստացված խտանյութերի վերամշակման մետալուրգիական գործարան (գործարաններ) չունենալու պատճառով և, շահագործված չլինելով պղնձի և մոլիբդենի հետ հարակից տարածված շատ կարևոր և շատ արժեքավոր տարրերի՝ ռենիումի, ոսկու, արծաթի, սելենի, տելուրի, բիսմութի, ծծմբի, երկաթի և այլնի, խտանյութերի մեջ կորզման հարցերով, նպատակամղված լինելով միայն ու միայն հիմնական երկու տարրերի՝ պղնձի և մոլիբդենի կորզմանը, միևնույն ժամանակ հանքահարստացման գործող եղանակների անկատարության հետևանքով Քաջարանի հանքաքարերից պոչամբարներ են թափվում բնության կողմից միլիոնավոր տարիների ընթացքում մասնիկ առ մասնիկ հավաքված ու կուտակված օգտակար տարրերի զգալի քանակներ: Դա է պատճառը, որ Ջանգեզուրի հանքահարստացուցիչ կոմբինատի շրջակայքում արդեն իսկ գոյացել են թափոնապոչերի (պոչանքների) չորս ձեռակերտ «հանքավայրեր» և, հետագայում, այդպես շարունակվելու պարագայում, կարող են առաջանալ ևս տասնչորսը, քսանչորսը, իրենց տակ ծածկելով հսկայական տարածքներ և առաջացնելով էկոլոգիական աղետների բազմաթիվ օջախներ:

Դրանց հետևանքներն էլ շատ ավելի սարսափելի են լինում, քան կարելի է ենթադրել: Այսպես, օրինակ, համակարգչային ինտերնետ (Panorama.am)<sup>1</sup> աղբյուրը մեզ տեղեկացնում է, որ՝ «ԳԱԱ «Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների» կենտրոնի տնօրեն Արմեն Սաղաթեյանն այսօր կայացած էկոլոգիական քննարկման ժամանակ, խոսելով Քաջարանի էկոլոգիական վիճակի մասին, նշեց, որ փոշու մեջ հայտնաբերվել են հիպերտոքսիկանտներ: Մասնագետները դրանց աղբյուրը գտել են պոչամբարներում: Դրանք, ի դեպ, ժամանակին եղել են քաղաքի տարածքում, այնուհետև հարթեցրել ու բնակելի են դարձրել: Մասնագետներն այդտեղ հայտնաբերել են սնդիկ և կադմիում, որոնք ծանր մետաղներից ամենավտանգավորներն են համարվում»:

«Դրանից հետո պարզեցինք, որ պոչանքները ներքաշվել են գյուղատնտեսական գործունեության մեջ: Այստեղ աճեցվող գյուղմթերքներում, մասնավորապես կարտոֆիլում, լոբիում ու կանաչեղենում, հայտնաբերվել են սնդիկի մնացորդներ: Բացի այդ պոչամբարների զգալի մասն օգտագործվում է որպես արոտավայր», – ասաց Ա.Սաղաթեյանը:

«Ուսումնասիրության ենթարկելով քաղաքի տարբեր պոչամբարներում արածող կովերի կաթի բաղադրությունը, մասնագետները պարզել են, որ այնտեղ առկա է սնդիկի, կադմիումի, մկնդեղի, իսկ հիմնական մայրուղուն հարակից տարածքներում արածող կովերի կաթում՝ նաև կապարի մնացորդներ»:

«Հետազոտվել են նաև Քաջարանի 12 և հարակից Լեռնաձոր գյուղի 5 երեխայի առողջական վիճակը: Քաջարանի երեխաների 70%-ի մոտ մազերում մկնդեղի գերխտություն կա, բոլորի մոտ կա կադմիումի, նիկելի, պղնձի գերազանցություններ, իսկ 4 երեխայի մոտ սնդիկի գերխտություն է հայտնաբերվել»:

«Քաջարանի քաղաքապետարանն իր միջոցներով այդ երեխաներին բուժման է ուղարկել ու պարզվել է, որ նրանց մոտ լուրջ առողջական խնդիրներ կան», – ասաց Ա.Սաղաթեյանն ու ավելացրեց, «այդ քաղաքում կարելի է անգեմ աչքով նկատել անենիա հիվանդությունը»:

<sup>1</sup> Panorama.am



«Առավել վատ վիճակ մասնագետները գրանցել են Սյունիքի գյուղական համայնքներում, որտեղ որևէ մաքուր սննդամթերք չի աճում, յուրաքանչյուրում առկա են տարբեր մետաղների գերնորմատիվային ցուցանիշներ»:

Գ.Փիջյանի<sup>1</sup> տվյալներով Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքաքարերում հիմնական օգտակար տարրերի հետ համատեղ հայտնաբերվել են ռենիում, սելեն, տելուր, բիսմուտ, գերմանիում, արծաթ, կապար: Տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ պարոն Փիջյանի հետազոտություններով Քաջարանի պղնձի խալկոպիրիտ և ծծմբի հրաքարի պիրիտ հանքանյութերում չի հայտնաբերվել մեծ տարածում և բավականին բարձր պարունակություններ ունեցող ոսկին: Գ.Փիջյանի մոտ այս փաստը, կարծես թե, դարձել է օրինաչափություն (կարծում ենք, պարոն Փիջյանը ոսկու առկայության մասին չի մտածել և այդ ուղղությամբ նմուշներն անալիզի չի ներկայացրել): Ինչևհետ, գրվածը բոլորովին չի նսեմացնում Գ.Փիջյանի կատարած աշխատանքի բովանդակությունը, որի տվյալներով Քաջարանի հանքավայրում հիմնական պղինձ, մոլիբդեն տարրերի հանքանյութերում, ինչպես նաև հիմնական համարվող ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութում հարակից տարածված (զուգակցվող) օգտակար տարրերի պարունակությունները կազմում են.

մոլիբդենի մոլիբդենիտ հանքանյութում ռենիումի պարունակությունը տատանվում է 0,019-ից մինչև 0,243% սահմաններում, միջին պարունակությունը 127 նմուշների տվյալներով կազմում է 0,04043%, սելենինը՝ 0,009-ից մինչև 0,128%, միջին պարունակությունը 136 նմուշների տվյալներով կազմում է 0,0352%, տելուրինը՝ 0,0005-ից մինչև 0,058%, միջին պարունակությունը 136 նմուշների տվյալներով կազմում է 0,00777%, բիսմուտինը՝ 0,001-ից մինչև 0,016%, միջին պարունակությունը 11 նմուշների տվյալներով կազմում է 0,0031%,

պղնձի խալկոպիրիտ հանքանյութում ռենիումինը՝ 0,00015%, սելենինը՝ 0,003-ից մինչև 0,048%, միջին պարունակությունը 98 նմուշների տվյալներով կազմում է 0,0206%, տելուրինը՝ 0,0002-ից մինչև 0,22%, միջինը 97 նմուշների տվյալներով կազմում է 0,0055%, բիսմուտինը՝ 0,001-ից մինչև 0,048%, միջինը 18 նմուշների տվյալներով՝ 0,0109%, արծաթինը՝ 0,005-ից մինչև 0,0375%, միջինը 7 նմուշների տվյալներով՝ 0,0168%,

ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութում ռենիումի պարունակությունը կազմում է 0,00015%, սելենինը՝ 0,001-ից մինչև 0,029%, միջինը 56 նմուշների տվյալներով՝ 0,0079%, տելուրինը՝ 0,0001-ից մինչև 0,06%, միջինը 56 նմուշների տվյալներով՝ 0,0047%, բիսմուտինը՝ 0,001-ից մինչև 0,022%, միջինը 11 նմուշների տվյալներով՝ 0,0063%, արծաթինը՝ 0,001-ից մինչև 0,008%, միջինը 11 նմուշների տվյալներով՝ 0,0042%:

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի երկարամյա մանրազնի հետախուզության և հետազոտության արդյունքով ճշտվել են այդ հանքավայրի հանքաքարերի և հանքաքարերում պարունակվող ինչպես հիմնական տարրերի (պղնձի և մոլիբդենի), այնպես էլ դրանց հետ հարակից տարածված և հազվագյուտ տարրերի՝ ոսկու, արծաթի, ռենիումի, սելենի, տելուրի և բիսմուտի պարունակություններն ու պաշարները, ինչպես նաև հայտնաբերվել են բազմաթիվ նորանոր տարրեր, և մեր կողմից գնահատվել են դրանց ռեսուրսները:

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարները՝ հաստատված 2006թ. հոկտեմբերին, կազմել են.

- հանքաքարերինը՝ (B+C<sub>1</sub> կատեգորիաների)՝ 2.230.763,6 հազ.տ
- պղնձինը՝ 5250,34 հազ.տ
- մոլիբդենինը՝ 727800,2տ
- ոսկունը՝ 59010,59կգ
- արծաթինը՝ 3314,07տ
- ռենիումինը՝ 372,59տ
- բիսմուտինը՝ 1411,12տ

<sup>1</sup> Пиджян Г.О., Медно-молибденовая формация руд Армянской ССР. Ереван, Изд. АН Арм.ССР, 1975, 309с.

- սելենիդը՝ 3365,34տ
- տելուրիդը՝ 372,59տ

Արտահաշվեկշռային պաշարները կազմում են. հանքաքարերիդը՝ 3.071.051 հազ.տ, պղնձիդը՝ 5425,91 հազ.տ, մոլիբդենիդը՝ 660.110տ, ոսկունը՝ 62601,98կգ, արծաթիդը՝ 4865,82տ, ռենիումիդը՝ 304,4տ, քիսմոսիդը՝ 4762,4տ, սելենիդը՝ 3948,15տ, տելուրիդը՝ 3487,85տ:

Պ.Ալոյանի<sup>1</sup> տվյալներով Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքաքարերում հայտնաբերվել են հանքավայրի պաշարների հաշվեկշռում տեղ չգտած այնպիսի արժեքավոր օգտակար տարրեր, որպիսիք են՝ վանադիումը, տիտանը, երկաթը, սկանդիումը և պլատինոիդների խմբի ռուտենիում, ռոդիում, պալադիում, օսմիում, իրիդիում, պլատին տարրերը: Պ.Ալոյանը նշում է, որ 749 խմբակային նմուշների տվյալներով վանադիումի միջին պարունակությունը Քաջարանի արդյունաբերական հանքաքարերում կազմում է 198 գ/տ, իսկ մագնետիտ հանքանյութիդը՝ 1,0% (երկաթ մետաղիդը՝ 0,72%): Բերված տվյալների համաձայն վանադիումի և մագնետիտ հանքանյութի պաշարները Քաջարանի հաշվեկշռային պաշարներում կազմել են՝ վանադիումիդը՝ 441.691տ, մագնետիտ հանքանյութիդը՝ 22.307.636տ, որի մեջ երկաթ մետաղիդը՝ 16.061.498տ: Արտահաշվեկշռային պաշարներում վանադիումի քանակը կազմում է 608068տ, մագնետիտ հանքանյութիդը՝ 30.710.510տ, որի մեջ երկաթ մետաղիդը՝ 22.111.567տ:

Պ.Ալոյանի տվյալներով Քաջարանի հանքաքարերում սկանդիում մետաղի պարունակությունը կազմում է 5,36 գ/տ, հետևապես Քաջարանի հաշվեկշռային պաշարներում սկանդիումի քանակը կազմել է 11.957տ, իսկ արտահաշվեկշռային պաշարներում՝ 16.461տ:

Այժմ քննարկենք տարբեր տարիներից՝ սկսած նախկին ԽՍՀՄ-ի վերջին երեք տարիներից, Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից հանքահարստացման գործընթացներում հանքաքարերից օգտակար տարրերի կորզման և դրանց թերկորզման հետևանքով պոչամբարներ թափված ծանր մետաղների և թունավոր տարրերի հիմնահարցերը:

1988-1990թթ. 3 տարիների ընթացքում Քաջարանի հանքավայրի ընդերքից արդյունահանվել է 25,34 մլն տ հանքաքար, որի հարստացումից ստացվել են.

- պղնձի խտանյութ՝ 237298 տ, որի մեջ պղնձ մետաղի քանակը կազմել է 42000 տ (պղնձի միջին պարունակությունը խտանյութում կազմել է 17,7%),
- մոլիբդենի խտանյութ՝ 22249 տ, որի մեջ մոլիբդեն մետաղի քանակը կազմել է 11438,7 տ (մոլիբդենի միջին պարունակությունը խտանյութում կազմել է 51,41%):

Արդյունահանված 25,34 մլն տ հանքաքարերում կորզման ենթակա մետաղների քանակը կազմել է. պղնձիդը՝ 57973 տ, մոլիբդենիդը՝ 14051 տ (պղնձի միջին պարունակությունը արդյունահանված հանքաքարերում կազմել է 0,2288%, մոլիբդենիդը՝ 0,05545%): Օգտակար հիմնական տարրերի կորուստները հանքահարստացման գործընթացներում կազմել են.

- պղնձիդը՝ 57973 – 42000 = 15973 տ, որը կազմել է կորզման ենթակա պղնձի 27,5%-ը (կորզումը կազմել է 72,5%),
- մոլիբդենիդը՝ 14051 – 11438,7 = 2612,3 տ, որը կազմել է կորզման ենթակա մոլիբդենի 18,6%-ը (կորզումը կազմել է 81,4%):

1988-1990թթ. արդյունահանված և մշակված 25,34 մլն տ հանքաքարերում պղնձից և մոլիբդենից բացի կորզման ենթակա տարրերի քանակները կազմել են.

- ոսկունը՝ 709,5կգ, արծաթիդը՝ 39,53տ, ռենիումիդը՝ 4,56տ, սելենիդը՝ 41,05տ, տելուրիդը՝ 34,21տ, քիսմոսիդը՝ 50,68տ, վանադիումիդը՝ 5017տ, սկանդիումիդը՝ 119,1տ, ծծմբիդը՝ 212850տ, երկաթիդը՝ 140000+182450=322450տ (182450տ կապված է մագնետիտ հանքանյութի հետ, իսկ 140000տ՝ պիրիտ և խալկոպիրիտ հանքանյութերի, որոնցից խալկոպիրիտ հանքանյութի հետ կորզվել է 36920տ, իսկ մյուսները՝ 28553տ թափվել է պոչամբարներ):

Ընդունվում է, որ ոսկին ամբողջությամբ կապված է պղնձի խալկոպիրիտ հանքանյութի հետ, քանի որ պիրիտի մեջ ոսկու գծով անալիզներ չեն կատարվել: Չետևապես 709,5 կգ ոսկուց

<sup>1</sup> Алоян П.Г., Геология горнорудных регионов Армении (повышение эффективности освоения рудных месторождений), Ереван, Геоид, 2001, 244 с.

խտանյութերի մեջ է անցել (կորզվել է) 514,4 կգ-ը, իսկ մնացածը՝ **195,1** կգ պղնձի թերկորզման հետևանքով թափվել է պոչամբար: Կորզման ենթակա 39,53տ արծաթի մի մասը՝ 0,0042% կապված է պիրիտ հանքանյութի հետ, որի քանակն էլ արդյունահանված 25,34 մլն տ հանքաքարերում կազմել է 238196տ (0,94%-ը), հետևապես պիրիտի հետ կապված արծաթի քանակը կազմել է 10,0տ, որն ամբողջությամբ թափվել է պոչամբարներ: Մնացած 29,53տ արծաթից պղնձի թերկորզման հետևանքով պոչամբար է թափվել 8,12տ, հետևապես պոչամբար թափված արծաթի ընդհանուր քանակը կազմել է 18,12տ: Կորզման ենթակա 4,56տ ռենիումի մի մասը՝ 0,00015%-ը կապված է պիրիտ հանքանյութի հետ, որի քանակը կազմել է 238196տ, որն էլ իր մեջ պարունակված 0,36տ ռենիումի հետ ամբողջությամբ թափվել է պոչամբար: Մոլիբդենիտ և խալկոպիրիտ հանքանյութերի հետ կապված 4,2տ ռենիումից նշված հանքանյութերի թերկորզման հետևանքով պոչամբար է թափվել 0,863տ, այսպիսով պոչամբար թափված ռենիումի ընդհանուր քանակը կազմել է 1,223տ:

Կորզման ենթակա 41,05տ սելենի մի մասը՝ 0,0079%-ը կապված է պիրիտ հանքանյութի (238196տ) հետ, որն իր մեջ պարունակվող՝ 18,82տ սելենի հետ թափվել է պոչամբար: Մնացած 22,23տ սելենից պղնձի և մոլիբդենի թերկորզման հետևանքով պոչամբար է թափվել 5,94տ: Այսպիսով պոչամբար թափված սելենի ընդհանուր քանակը կազմել է **24,76**տ:

Կորզման ենթակա 34,21տ տելուրի մի մասը՝ 0,0047%-ը կապված է պիրիտ հանքանյութի հետ, որն էլ իր մեջ պարունակվող՝ 11,2տ տելուրի հետ ամբողջությամբ թափվել է պոչամբար: Մնացած 23,01տ տելուրից պղնձի և մոլիբդենի թերկորզման հետևանքով պոչամբար է թափվել 6,15տ: Այսպիսով պոչամբար թափված տելուրի ընդհանուր քանակը կազմել է **17,35**տ:

Կորզման ենթակա 50,68տ բիսմութի մի մասը՝ 0,0063%-ը կապված է պիրիտի հետ, որն էլ իր մեջ պարունակվող 15,0տ բիսմութի հետ թափվել է պոչամբար: Բիսմութի մնացած 35,68տ քանակից պղնձի և մոլիբդենի թերկորզման հետևանքով պոչամբար է թափվել 9,54տ: Այսպիսով պոչամբար թափված բիսմութի ընդհանուր քանակը կազմել է **24,54**տ: Վանադիումը՝ 5017տ, սկանդիումը՝ 119,1տ, երկաթը՝ 285530տ, ծծումբը՝ 147180տ թափվել են պոչամբար:

1988-1990թթ. պոչամբար թափված տարրերի արժեքը՝ 2007թ. մարտ-ապրիլ ամիսների գներով կարող էր կազմել 691,518 մլն դոլար: Խտանյութերի վաճառքից ստացած հասույթը՝ նույն՝ 2007թ. գներով, կարող էր կազմել 546,4 մլն դոլար: Կորուստը (\$ինանսների գծով) այս պարագայում փաստացի սպասվելիք հասույթից մեծ է 1,26 անգամ:

Մեկ տոննա արդյունահանված և մշակված հանքաքարի հաշվարկով պոչամբար թափված տարրերի արժեքը 1988-1990թթ.՝ 2007թ. գներով կազմել է 24,448 դոլար:

1998-2000թթ. 3 տարիների ընթացքում Քաջարանի հանքավայրի ընդերքից արդյունահանվել է 17,959 մլն տ հանքաքար, որի հարստացումից ստացված խտանյութերի քանակը կազմել է.

- պղնձինը՝ 97528 տ, որի մեջ պղինձ մետաղի քանակը կազմել է 23907 տ (պղնձի միջին պարունակությունը խտանյութում կազմել է 24%),
- մոլիբդենինը՝ 15752 տ, որի մեջ մոլիբդեն մետաղի քանակը կազմել է 8000,5 տ (մոլիբդենի միջին պարունակությունը խտանյութում կազմել է 50,79%):

Արդյունահանված և մշակված 17,959 մլն տ հանքաքարերում կորզման ենթակա հիմնական մետաղների քանակները կազմել են. պղնձինը՝ 39286,8 տ, մոլիբդենինը՝ 10975,7 տ:

Հիմնական օգտակար տարրերի կորուստները կազմել են.

- պղնձինը՝  $39286,8 - 23907 = 15379,8$  տ, որը կազմել է կորզման ենթակա պղնձի 39,15%-ը (կորզումը կազմել է 60,85%),
- մոլիբդենինը՝  $10975,7 - 8000,5 = 2975,2$  տ, որը կազմել է կորզման ենթակա մոլիբդենի 27,11%-ը (կորզումը կազմել է 72,89%):

Ուղեցույց ընդունելով 1988-1990թթ. արդյունահանված և մշակված 25,34 մլն տ հանքաքարերից կորստի մատնված (պոչամբար թափված) հիմնական պղինձ և մոլիբդեն օգտակար տարրերի արժեքը միջին հավասարակշռված (պղնձի և մոլիբդենի համար համատեղ) կորստի քանակը (տոկոսով արտահայտված)՝ 25,76%, հաշվի առնելով նաև 1998-2000թթ. հիմնական

օգտակար տարրերի միջին հավասարակշռված կորստի քանակը (տոկոսով)՝ 36,52%, որը 1988-1990թթ. հիմնական օգտակար տարրերի միջին հավասարակշռված քանակից մեծ է 1,42 անգամ, հաշվարկենք 1988-2000թթ. արդյունահանված և մշակված 17,959 մլն տ հանքաքարերից կորստի մատնված (պոչամբար թափված) տարրերի արժեքը: Նշենք, որ 1988-1990թթ. բոլոր օգտակար տարրերի կորստի արժեքը՝ մեկ տոննա հանքաքարի հաշվարկով (2007թ. մարտ-ապրիլ ամիսներին գործող գներով) կազմել է 24,448 դոլար, հետևապես՝ 1988-2000թթ. արդյունահանված և մշակված 17,959 մլն տ հանքաքարերից կորստի մատնված օգտակար տարրերի արժեքը կկազմի.

$$17.959.000 \times 24,448 \times 1,42 = 623,467 \text{ մլն դոլար:}$$

Միևնույն ժամանակ նշենք, որ 1988-2000թթ. թողարկված պղնձի և մոլիբդենի խտանյութերի վաճառքից (նույն՝ 2007թ. գներով) լեռնահանքային ձեռնարկության ստացվելիք հասույթը կարող էր կազմել՝  $23907 \times 7465 \times 0,556 + 8000,5 \times 62200 \times 0,523 = 359,488$  մլն դոլար, որից էլ պարզ է դառնում, որ լեռնահանքային ձեռնարկության ֆինանսական կորուստը խտանյութերի վաճառքի պարագայում փաստացի ստացվելիք հասույթից մեծ է ավելի, քան 1,73 անգամ:

2003թ. Ջանգեզուրի կոմբինատը Քաջարանի հանքավայրի ընդերքից արդյունահանել և մշակել է 8,12 մլն տ հանքաքար և թողարկել է.

մոլիբդենի խտանյութ՝ 6800 տ, որտեղ մոլիբդենի քանակը կազմել է 3396,6 տ (կորզումը կազմել է 79,68%, իսկ կորուստը՝ 20,32%),

պղնձի խտանյութ՝ 41770տ, որտեղ պղնձի քանակը կազմել է 11449,16 տ (կորզումը կազմել է 69,8%, իսկ կորուստը՝ 30,2%):

Արդյունահանված և մշակված 8,12 մլն տ հանքաքարերում կորզման ենթակա հիմնական մետաղների քանակները կազմել են. պղնձինը՝ 16402,8 տ, մոլիբդենինը՝ 4262,8 տ:

Հիմնական օգտակար տարրերի կորուստները կազմել են.

$$\text{մոլիբդենինը՝ } 4262,8 - 3396,6 = 866,2 \text{ տ,}$$

$$\text{պղնձինը՝ } 16402,8 - 11449,16 = 4953,64 \text{ տ:}$$

Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 2003թ. տարեկան հաշվետվության (5<sub>րդ</sub>) և ՀՀ ՊԱԱ երկրաբանական՝ գիտությունների ինստիտուտի քիմիական լաբորատորիայի տվյալների հիման վրա մեր կողմից հաշվարկվել են 2003թ. հանքահարստացման հետևանքով պոչամբար թափված տարրերի քանակները, որոնք կազմում են.

մոլիբդենինը՝ 866,2տ (կոմբինատի տվյալներով), պղնձինը՝ 4953,64տ (կոմբինատի տվյալներով), ոսկունը՝ 16,81կգ, արծաթինը՝ 4,556տ, ռենիումինը՝ 2,3134տ (որից 0,1367տ կապված պիրիտ հանքանյութի հետ), սելենինը՝ 10,988տ (որից 7,2տ կապված պիրիտ հանքանյութի հետ), տելուրինը՝ 7,437տ (որից 4,28տ կապված պիրիտ հանքանյութի հետ), բիսմութինը՝ 10,417տ (որից 5,74տ կապված պիրիտ հանքանյութի հետ), կապարինը՝ 91,7տ (երկրաբանական գիտությունների ինստիտուտի լաբորատորիայի տվյալներով. այսուհետև բոլոր տվյալները կբերվեն նույնով), ցինկինը՝ 62,66տ, միկելինը՝ 2,72տ, կոբալտինը՝ 1,02տ, մագնեզիումինը՝ 49,4տ, ծծմբինը՝ 55203,5տ, երկաթինը՝ 105570,3 (որից 58464տ կապված մագնետիտ հանքանյութի, իսկ 47106,3տ՝ պիրիտ և խալկոպիրիտ հանքանյութերի հետ), վանադիումինը՝ 2611,7տ, սկանդիումինը՝ 43,5տ:

2003թ. պոչամբար թափված տարրերի արժեքը հաշվարկում ենք 2007թ. մարտ-ապրիլ ամիսներին՝ նախաճգնաժամային տարվա միջազգային շուկայում գործող գներով: Հաշվարկված տվյալները համեմատվելու են 2003թ. վաճառված խտանյութերից ստացված հասույթի հետ, որի քանակը ճշտվելու և վերահաշվարկվելու է 2007թ. գործող գներով:

**Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի ընդերքից 2003թ. արդյունահանված՝ 8,12 մլն տ հանքաքարերի մշակման հետևանքով պոչամբարներ թափված տարրերի գնահատումը**

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Պղինձ	տ	4953,64	7465	36,978,923
Մոլիբդեն	տ	866,2	62200	53.877.640
Ոսկի	կգ	16,81	31500	529.515
Արծաթ	տ	4,556	450000	2.050.200
Ռենիում	տ	2,3134	7777700	17.992.931
Սելեն	տ	10,988	52220	573.793
Տելուր	տ	7,437	116000	862.692
Բիսմութ	տ	10,417	24440	254.591
Կապար	տ	91,7	2000	183.400
Ցինկ	տ	62,66	3400	213.044
Նիկել	տ	2,72	44780	121.802
Կոբալտ	տ	1,02	66660	67.993
Մագնեզիում	տ	49,4	2250	111.150
Վանադիում	տ	2611,7	40000	104.468.000
Սկանդիում	տ	43,5	600000	26.100.000
Ծծումբ	տ	55203,5	650	35.882.275
Երկաթ	տ	105570,3	300	31.671.090
Ընդամենը				311.939.039

2003թ. Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից թողարկվել էին.

- պղնձի խտանյութ՝ 41770տ, որտեղ պղինձ մետաղի քանակը կազմել էր 11449,16տ (պղնձի պարունակությունը խտանյութում կազմել էր 27,41%),
- մոլիբդենի խտանյութ՝ 6800տ, որտեղ մոլիբդեն մետաղի քանակը կազմել էր 3396,6տ (մոլիբդենի պարունակությունը խտանյութում կազմել էր 49,95%):

Ստացված խտանյութերը միջազգային շուկայում վաճառելով լեռնահանքային ձեռնարկությունը ստացել էր 47,5 մլն դոլարի հասույթ (նշենք, որ 2003թ. պղնձի գինը միջազգային շուկայում կազմում էր 3000 դոլ մեկ տոննայի համար, իսկ մոլիբդենինը՝ 16000 դոլ.): Պղնձի գինը 2007թ. 2003թ. համեմատ աճել էր 2,488 անգամ, իսկ մոլիբդենինը՝ 3,887 անգամ: Պղնձի և մոլիբդենի գների միջին հավասարակշռված (թողարկված մետաղների քանակների հետ) աճը կազմել է.

$(3396,6 \times 3,887 + 11449,16 \times 2,488) : (11449,16 + 3396,6) = 2,81$  անգամ, հետևապես լեռնահանքային ձեռնարկության ստացած հասույթը՝ 2007թ. գներով հաշվարկված, կարող էր կազմել՝  $47,5 \times 2,81 = 133,475$  մլն դոլար, այն պարագայում, երբ նույն թվականին պոչամբար թափված տարրերի գինը կազմել է 311,939 մլն դոլար, որն էլ վերահաշվարկված հասույթից մեծ է մոտ 2,34 անգամ:

2007թ. Քաջարանի հանքավայրի ընդերքից արդյունահանվել և մշակվել է 9631,3 հազ. տ հանքաքար, որի հարստացումից ստացվել են.

- պղնձի խտանյութ՝ 39048 տ, որտեղ պղինձ մետաղի քանակը կազմել է 10933,4 տ (պղնձի պարունակությունը խտանյութում կազմել է 28%),
- մոլիբդենի խտանյութ՝ 7364,6 տ, որտեղ մոլիբդեն մետաղի քանակը կազմել է 3682,3 տ (մոլիբդենի պարունակությունը խտանյութում կազմել է 50%):

2007թ. արդյունահանված և մշակված 9631,3 հազ.տ հանքաքարերում կորզման ենթակա հիմնական պղինձ և մոլիբդեն մետաղների քանակները կազմել են. պղնձինը՝ 15392,65տ, մոլիբդենինը՝ 4809,064տ:

Հիմնական օգտակար տարրերի կորուստները կազմել են.

պղնձինը՝  $15392,65 - 10933,4 = 4459,25$ տ, որը կազմել է կորզման ենթակա՝  $15392,65$ տ պղնձի  $28,97\%$ , կորզումը կազմել է  $71,03\%$ ,

մոլիբդենինը՝  $4809,064 - 3682,3 = 1126,764$ տ, որը կազմել է կորզման ենթակա  $4809,064$ տ մոլիբդենի  $23,43\%$ -ը, կորզումը կազմել է  $76,57\%$ :

Ուղեցույց ընդունելով 2003թ. արդյունահանված և մշակված  $8,12$  մլն տ հանքաքարերից կորստի մատնված (պոչամբար թափված) հիմնական պղնձ և մոլիբդեն օգտակար տարրերի միջին հավասարակշռված կորստի չափը (տոկոսով)՝  $28,16\%$ , հաշվի առնելով նաև 2007թ. հիմնական տարրերի միջին հավասարակշռված կորստի չափը (տոկոսով)՝  $27,65\%$ , որը 2003թ. օգտակար տարրերի կորստի մատնված միջին հավասարակշռված քանակից փոքր է  $1,02$  անգամ, հաշվարկենք 2007թ. արդյունահանված և մշակված  $9,6313$  մլն տ հանքաքարերից կորստի մատնված օգտակար տարրերի արժեքը: Նշենք, որ 2003թ. օգտակար տարրերի կորստի արժեքը՝ մեկ տոննա հանքաքարի հաշվարկով կազմել է  $38,42$  դոլար, հետևապես՝ 2007թ. արդյունահանված և մշակված  $9,6313$  մլն տ հանքաքարերից կորստի մատնված (պոչամբար թափված) տարրերի արժեքը կկազմի.

$$9631300 \times 38,42 : 1,02 = 362,779 \text{ մլն դոլար:}$$

2007թ. լեռնահանքային ձեռնարկությունը խտանյութերի վաճառքից մոտավորապես ստացել է.

$10933,4 \times 7465 \times 0,556 + 3682,3 \times 62200 \times 0,523 = 165,167$  մլն դոլար: Պարզվում է, որ կորստի մատնված օգտակար տարրերի արժեքը  $2,2$  անգամ գերազանցում է լեռնահանքային ձեռնարկության հասույթին:

Քննարկման ներկայացված 8 տարիներին հիմնական օգտակար տարրերի (պղնձի և մոլիբդենի) թերկորզման հետևանքով պոչամբարներ թափված պղնձի կորուստը կազմել է հանքաքարերում առկա պղնձի քանակի  $30,09\%$ -ը, իսկ մոլիբդենինը՝  $22,23\%$ -ը (հաշվարկները կատարվել են արդյունահանված և մշակված հանքաքարերում առկա մետաղների և տոկոսներով արտահայտված կորուստների հավասարակշռման եղանակով):

2003թ. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի լաբորատորիայում կատարված անալիզներով, նույն թվականին Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից թողարկված խտանյութերում հայտնաբերվել են.

մոլիբդենի խտանյութում՝ ծծումբ՝  $34,5\%$ , երկաթ՝  $1,9\%$ , պղնձ՝  $0,6\%$ , նիկել՝  $0,16\%$ , կոբալտ՝  $0,06\%$ , ռենիում՝  $270$  գ/տ, սելեն՝  $327$  գ/տ, տելուր՝  $86$  գ/տ: Հաշվարկները ցույց են տալիս, որ նշված տարրերի քանակները մոլիբդենի խտանյութում ( $6800$  տ) կազմել են ծծումբինը՝  $2346$  տ, երկաթինը՝  $129,2$  տ (հիմնականում կապված է եղել մոլիբդենի խտանյութ անցած պղնձի խալկոպիրիտ հանքանյութի հետ), պղնձինը՝  $40,8$  տ, նիկելինը՝  $10,88$  տ, կոբալտինը՝  $4,08$  տ, ռենիումինը՝  $1836$  կգ, սելենինը՝  $2,224$  տ, տելուրինը՝  $0,585$  տ,

պղնձի խտանյութում՝ ծծումբինը՝  $33\%$ , երկաթինը՝  $26\%$ , կապարինը՝  $0,4\%$ , ցինկինը՝  $0,35\%$ , մոլիբդենինը՝  $0,09\%$ , սելենինը՝  $0,025\%$ , տելուրինը՝  $0,002\%$ , բիսմութինը՝  $0,005\%$ , մագնեզիումի օքսիդինը ( $MgO$ )՝  $0,46\%$  (մետաղական մագնեզիումինը՝  $0,276\%$ ): Նշված տարրերի քանակները պղնձի խտանյութում կազմել են. ծծումբինը՝  $13784$  տ, երկաթինը՝  $10860$  տ, կապարինը՝  $167$  տ, ցինկինը՝  $146,2$  տ, մոլիբդենինը՝  $37,6$  տ, սելենինը՝  $10,44$  տ, տելուրինը՝  $0,83$  տ, բիսմութինը՝  $2,09$ տ, մագնեզիումինը՝  $115,3$  տ:

Այս տվյալները հաշվի առնելով և հանքահարստացման գործընթացներում հիմնական պղնձ և մոլիբդեն տարրերի կորզման աստիճաններից ելնելով հաշվարկել ենք վերը թվարկված տարրերի քանակները հանքաքարերում: Դրանք կազմել են. մոլիբդենինը՝  $4383,9$  տ (Ջանգեզուրի կոմբինատի տվյալներով՝  $4262,8$  տ, տարբերությունը կազմում է  $+121,1$  տ, կամ՝  $2,8\%$ ), պղնձինը՝  $16453,8$  տ (Ջանգեզուրի կոմբինատի տվյալներով՝  $16402,8$  տ, տարբերությունը՝  $+51$  տ, կամ  $0,3\%$ ), ծծումբինը՝  $22623,5$  տ, երկաթինը՝  $15675,5$  տ, կապարինը՝  $238,7$  տ, ցինկինը՝

208,86 տ, նիկելինը՝ 13,6 տ, կոբալտինը՝ 5,1 տ, ռենիումինը՝ 2,295 տ, սելենինը՝ 17,68տ, տելուրինը՝ 1,921 տ, քիսմոտինը՝ 2,98 տ, մագնեզիումինը՝ 164,7 տ: Այս քանակները պարունակվել են 8,12 մլն տ հանքաքարերում, հետևապես դրանց տոկոսային պարունակությունները Քաջարանի հանքաքարերում կազմել են.

մոլիբդենինը՝ 0,054%, պղնձինը՝ 0,203%, կապարինը՝ 0,00294%, ցինկինը՝ 0,00257%, նիկելինը՝ 1,675 գ/տ, կոբալտինը՝ 0,628 գ/տ, ռենիումինը՝ 0,283 գ/տ, սելենինը՝ 2,177 գ/տ, տելուրինը՝ 0,237 գ/տ, քիսմոտինը՝ 0,367 գ/տ, մագնեզիումինը՝ 0,002%: Երկաթը և ծծումբը կապված են սուլֆիդային հանքանյութերի հետ, երկաթը՝ պղնձի խալկոպիրիտ և ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութերի (այստեղ չի հաշվառվում հանքաքարերում առկա մագնետիտ հանքանյութի հետ կապված երկաթը), իսկ ծծումբը՝ բոլոր սուլֆիդային հանքանյութերի՝ պղնձի խալկոպիրիտ, մոլիբդենի մոլիբդենիտ, կապարի գալենիտ, ցինկի սֆալերիտ, մկնդեդի, կոբալտի, նիկելի սուլֆիդների հետ, այդ իսկ պատճառով էլ դրանց (ծծմբի և երկաթի) տոկոսային պարունակությունները չեն համապատասխանի դրանց վերը նշված քանակներին. ծծմբի պարունակությունը Քաջարանի հանքաքարերում կազմում է 0,67%, իսկ երկաթինը՝ 0,56%:

Շատ տարօրինակ է, որ նիկելը և կոբալտը անցել են մոլիբդենի խտանյութի մեջ, բայց բոլորովին չեն անցել պղնձի խտանյութի մեջ (չենք կարծում, որ նիկելը և կոբալտը սերտորեն կապված են մոլիբդենի հանքանյութի հետ): Հանքավայրը հետազոտող գիտնական-երկրաբանները՝ Մաղաքյանը, Փիջյանը, Ֆարամազյանը և մյուսները, իրենց աշխատություններում չեն նկարագրում նիկելը և կոբալտը: Մեզ հետաքրքրում է, թե՛ դրանք ինչ ձևով, որ հանքանյութերով, կամ խառնուրդներով են ներկայացված (այս բացը հնարավոր կլինի լրացնել պոչանքները վերամշակելիս):

Մոլիբդենի խտանյութի մեջ հայտնաբերված կոբալտը և նիկելը կարող են լինել կոբալտին և գերսդորֆիտ հանքանյութերի տեսքով կամ դրանցից որևէ մեկի՝ պարունակելով մյուսի հիմնական տարրի խառնուրդ և, քանի որ նիկելի պարունակությունը մոլիբդենի խտանյութի մեջ մոտ 3 անգամ ավել է կոբալտի պարունակությունից, կարելի է ենթադրել, որ նշված տարրերը ներկայացված են գերսդորֆիտ (NiAsS) հանքանյութի տեսքով, որտեղ հիմնականը նիկելն է, իսկ կոբալտը նշված հանքանյութի (գերսդորֆիտի) մեջ ներկայացված է խառնուրդի տեսքով: Իսկ, թե ինչո՞ւ է այդ հանքանյութն անցնում մոլիբդենի խտանյութի մեջ և ոչ թե պղնձի, այդ հարցին կպատասխանեն հանքահարստացման գծով տեխնոլոգները: Մենք միայն կարող ենք ենթադրել, որ նշված հանքանյութը իր ֆլոտացիոն տեխնոլոգիական հատկություններով շատ ավելի մոտ է կանգնած մոլիբդենիտ հանքանյութին, քան պղնձի խալկոպիրիտին:

Ինչևհից, անկախ նրանից, թե ինչպիսի տեսքով են ներկայացված նիկելը, կոբալտը, կապարը, ցինկը, դրանք միևնույն է անցնում են ինչպես խտանյութերի, այնպես էլ հարստապոչերի մեջ: Խտանյութերի և հարստապոչերի մեջ դրանք անցնում են եթե ոչ շատ ավելի մեծ քանակներով, ապա, գոնե, հիմնական պղինձ և մոլիբդեն տարրերին ուղիղ համեմատական քանակներով: Քանի որ նիկելն ու կոբալտը հայտնաբերվել են մոլիբդենի խտանյութի մեջ, կարելի է ընդունել, որ դրանք խտանյութեր և հարստապոչեր են անցնում մոլիբդենին ուղիղ համեմատական քանակներով, իսկ կապարն ու ցինկը՝ պղնձին ուղիղ համեմատական քանակներով, քանի որ վերջիններս հայտնաբերվել են միայն պղնձի խտանյութում:

Ընդունենք, որ նշված հիմնական տարրերի (պղնձի և մոլիբդենի) հանքահարստացման գործընթացներում կորզմանն ուղիղ համեմատական կարգով խտանյութերի մեջ են անցնում դրանց հետ սերտորեն կապված՝ հարակից տարածված, տարրերը ևս (համեմայն դեպս այդպես է մեզ թելադրում առողջ դատողությունը): Պոչանքներ անցած հարակից տարրերի քանակների հաշվարկի համար նշենք դրանց տարածվածության աստիճանները (միջին պարունակությունները 1951-2007թթ. համար) հիմնական հանքաքարերում՝ հետախույզ-երկրաբանների տվյալներով.

պղնձի միջին պարունակությունը կազմում է 0,2223%, մոլիբդենինը՝ 0,0373%, ռենիումինը՝ 0,00016%, ոսկունը՝ 0,028 գ/տ, արծաթինը՝ 1,56 գ/տ, սելենինը՝ 1,62 գ/տ, տելուրինը՝ 1,35 գ/տ,

բիսմութինը՝ 2,0 գ/տ, նիկելինը՝ 1,675 գ/տ, կոբալտինը՝ 0,628 գ/տ, կապարինը՝ 0,00294%, ցինկինը՝ 0,00257%:

Ծծմբի հրաքարի անջատ խտանյութ չի ստացվում և այն ամբողջությամբ թափվում է պոչամբարներ իր հետ տանելով բոլոր հարակից և հիմնական բաղադրիչները:

Ծծմբի հրաքարի (պիրիտ հանքանյութի) մեջ հայտնաբերված են ռենիում՝ 0,00015%, սելեն՝ 0,0079%, տելուր՝ 0,0047%, բիսմութ՝ 0,0063%, արծաթ՝ 0,0042%:

Ծծումբ տարրի ընդհանուր պարունակությունից ելնելով մեր կողմից հաշվարկվել է ծծմբի հրաքարի (պիրիտի) քանակը և հանքաքարերում դրա միջին պարունակությունը, որը կազմել է 1,1223%:

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ամբողջ ժամանակահատվածում (1951 թվից մինչև 2009թ.) դրա ընդերքից արդյունահանվել և մշակվել է 318,2 մլն տ հանքաքար, որի մեջ պարունակվող օգտակար տարրերի քանակները կազմել են. պղնձինը՝ 707.358,6 տ, մոլիբդենինը՝ 118.688,6 տ, ռենիումինը՝ 50,91 տ (որից՝ 5,36տ պիրիտի մեջ), ոսկունը՝ 8909,6կգ, արծաթինը՝ 496,392տ, սելենինը՝ 515,484տ, տելուրինը՝ 429,57տ, բիսմութինը՝ 496,392տ, նիկելինը՝ 532,985տ, կոբալտինը՝ 199,83տ, կապարինը՝ 9227,8տ, ցինկինը՝ 8177,74տ: Նշված քանակներից հանքահարստացման գործընթացներում թերկորզման հետևանքով պոչամբարներ թափված տարրերի քանակները կազմել են. պղնձինը՝ 222747տ, մոլիբդենինը՝ 26194,6տ, ռենիումինը՝ 23,995տ, որից 5,36տ պիրիտ հանքանյութի հետ, սելենինը՝ 430,0տ, որից 282,1տ պիրիտի հետ, տելուրինը՝ 313,78տ, որից 275տ պիրիտի հետ, բիսմութինը՝ 296,44տ, որից 225տ պիրիտի հետ, ոսկունը՝ 2805,6կգ, արծաթինը՝ 306,3տ, որից 150տ պիրիտի հետ, նիկելինը՝ 117,63 տ, կոբալտինը՝ 44,1 տ, կապարինը՝ 2905,8 տ, ցինկինը՝ 2575,2 տ:

Պիրիտ հանքանյութի քանակը արդյունահանված 318,2 մլն տ հանքաքարերում կազմել է 318,2x1,1223:100=3571159 տ, որի հետ կապված ծծումբ տարրի քանակը կազմել է 1908,78 հազ. տ, իսկ երկաթինը՝ 1662,379 հազ. տ: Ծծումբ և երկաթ են պարունակվում նաև պոչամբարներ թափված պղնձի խալկոպիրիտ հանքանյութի մեջ, որոնց քանակները կազմել են երկաթինը՝ 195788 տ, ծծմբինը՝ 224806 տ: Ծծումբ է պարունակվում նաև մոլիբդենիտ, գալենիտ, սֆալերիտ և այլ սուլֆիդային հանքանյութերում, որի քանակը արդյունահանված, մշակված և պոչամբարներ թափված հանքաքարերում կազմում է 12207 տ:

Պոչամբարներ են թափվել նաև Քաջարանի հանքաքարերում առկա, բայց խտանյութեր չմտնող (խտանյութերը շրջանցող) մագնետիտ հանքանյութն ու դրա հետ սերտորեն կապված երկաթը, ինչպես նաև հանքաքարերում առկա սկանդիումն ու վանադիումն ամբողջությամբ: Պ.Ալոյանի (2001) տվյալներով Քաջարանի արդյունաբերական հանքաքարերում մագնետիտ հանքանյութի (երկաթաքարի) միջին պարունակությունը կազմում է 1% (երկաթ մետաղինը՝ 0,72%), իսկ վանադիումի պարունակությունը մագնետիտի խտանյութում՝ 2500 գ/տ: 749 խմբակային մնուշների անալիզների տվյալներով վանադիումի միջին պարունակությունը հանքաքարերում կազմում է 198 գ/տ:

Պ.Ալոյանի (1995, 2001)<sup>1</sup> հեղինակային հաշվարկով Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքաքարերում պարունակվող սկանդիումի պաշարները կազմում են 10,5 հազ.տ, որի հիման վրա մեր կողմից կատարված հաշվարկներով սկանդիումի պարունակությունը հանքաքարերում կազմում է 5,36 գ/տ:

Նշված պարունակությունների հիման վրա կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 1951թ. մինչև 2009թ. վերջն արդյունահանված և մշակված 318,2 մլն տ հանքաքարերում պարունակվել են. մագնետիտ հանքանյութի հետ կապված երկաթ՝ 2291000տ և վանադիում՝ 63000տ, սկանդիում՝ 1705,5տ:

<sup>1</sup> Алоян П.Г., Гукасян Ж.Г., Проект "Молибден". Организация производства молибденовой и попутной товарной продукции из одноименных концентратов и хвостов обогащения Зангезурского медно-молибденового комбината. Библиотека "Армнипроцвет-мет", Ереван, 1995.



Այսպիսով. 1951-2009թթ. արդյունահանված և մշակված 318,2 մլն տ հանքաքարերից պոչամբարներ թափված տարրերի ընդհանուր քանակները կազմել են. պղնձինը՝ 222747տ, մոլիբդենինը՝ 26194,6տ, ռենիումինը՝ 23,995տ, ոսկունը՝ 2805,6կգ, արծաթինը՝ 306,3տ, սելենինը՝ 430տ, տելուրինը՝ 313,78տ, բիսմութինը՝ 296,44տ, երկաթինը՝ 4149167տ, ծծմբինը՝ 2145793տ, վանադիումինը՝ 63000տ, սկանդիումինը՝ 1705,5տ, նիկելինը՝ 117,83տ, կոբալտինը՝ 44,1տ, կապարինը՝ 2905,8տ, ցինկինը՝ 2575,2տ:

Հաշվարկները ցույց են տալիս, որ անցած 58 տարիների ընթացքում Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի ընդերքից արդյունահանված և մշակված 318,2 մլն տ հանքաքարերից հանքահարստացման գործընթացներում օգտակար տարրերի չկորզման (պիրիտ և մագնետիտ հանքանյութերի և դրանց հետ սերտորեն կապված երկաթ և ծծումբ տարրերի, ինչպես նաև վանադիում, սկանդիում տարրերի) և թերկորզման հետևանքով պոչամբարներ թափված հարստությունների արժեքը՝ 2007թ. մարտ-ապրիլ ամիսներին և 2008թ. մայիսին (ծծմբի համար) միջազգային շուկայում գործող գներով, կազմել է 9.976,6 մլն ԱՄՆ դոլար (մեկ տարվա ընթացքում պոչամբարներ թափված տարրերի միջին արժեքը կազմել է 172,01 մլն դոլար):

1951-2009թթ. Քաջարանի հանքավայրի ընդերքից արդյունահանված և մշակված 318,2 մլն տ հանքաքարերից պղնձի և մոլիբդենի խտանյութերի տեսքով կորզվել է 2,35 մլն տ, հետևապես պոչամբարներ թափված «աղքատ» հանքաքարերի քանակը կազմել է 318,2–2,35 = 315,85 մլն տ:

*Աղյուսակ 2*

**Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 1951-2009թթ. աշխատանքային գործունեության արդյունքում պոչամբարներ թափված օգտակար տարրերի արժեքի հաշվարկը**

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Պղինձ	տ	222747	7465	1.662.806.355
Մոլիբդեն	տ	26194,6	62200	1.629.304.120
Ռենիում	տ	23,995	7777700	186.625.911
Ոսկի	կգ	2805,6	31500	88.376.400
Արծաթ	տ	306,3	450000	137.835.000
Սելեն	տ	430	52220	22.454.600
Տելուր	տ	313,78	116000	36.398.480
Բիսմութ	տ	296,44	24440	7.244.994
Երկաթ	տ	4149167	300	1.244.750.100
Ծծումբ	տ	2145793	650	1.394.765.450
Վանադիում	տ	63000	40000	2.520.000.000
Սկանդիում	տ	1705,5	600000	1.022.276.700
Նիկել	տ	117,83	44780	5.276.427
Կոբալտ	տ	44,1	66660	2.939.706
Կապար	տ	2905,8	2000	5.811.600
Ցինկ	տ	2575,2	3400	8.755.680
Ընդամենը				9.976.644.823

Այստեղից պարզվում է, որ խտանյութերի տեսքով կորզված «օգտակար» տարրերի քանակը կազմում է արդյունահանված և մշակված հանքաքարերի 0,74%-ը, իսկ պոչամբարներ թափվածինը՝ 99,26%-ը: «Հայգունմետոգիտմախագիծ» ինստիտուտի տեխնոլոգների կողմից ԽՍՀՄ տարիներին մշակվել և կիսագործարանային պայմաններում փորձարկվել է Քաջարանի պղնձամոլիբդենային հանքաքարերի պոչամբարների վերամշակման արդյունավետ տեխնոլոգիա, որն ապահովում է վանադիում պարունակող մագնետիտային հանքանյութի բարձրորակ խտանյութի ստացում՝ 64% երկաթի պարունակությամբ և երկաթի 75,0% կորզումով: Մշակված

տեխնոլոգիական սխեման նպաստում է հանքային հումքի ինչ-որ չափի համալիր օգտագործմանը և միջավայրի որոշակի նաքրությանը (համալիր մշակման գերագույն աստիճանին և միջավայրի կատարյալ նաքրությանը կարելի է հասնել պոչանքներից բոլոր օգտակար տարրերի 94-95 տոկոսով կորզելու միջոցով, որի համար ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիան ի վիճակի է մշակել համապատասխան տեխնոլոգիաներ):

«Երկրի հրովարտակ»<sup>1</sup> գրքույկի II բաժնի 6-րդ կետի բովանդակությունը համահունչ է մեր առաջարկությանը, որում ասված է՝ «Նվազագույնի հասցնել, վերամշակել և վերաօգտագործել արտադրության ու սպառման համակարգերում օգտագործված նյութերը, ապահովելով էկոհամակարգերի կողմից թափոնների յուրացման հնարավորություն»:

Պոչանքարներ թափված 315,85 մլն տ հանքաքարերում օգտակար տարրերի միջին պարունակությունները կազմում են. պղնձինը՝ 0,071%, մոլիբդենինը՝ 0,0083%, ռենիումինը՝ 0,076գ/տ, ոսկունը՝ 0,00895գ/տ, արծաթինը՝ 0,97գ/տ, սելենինը՝ 1,36գ/տ, տելուրինը՝ 0,993գ/տ, քիսմոտինը՝ 0,94գ/տ, երկաթինը՝ 1,314%, ծծմբինը՝ 0,68%, վանադիումինը՝ 0,02%, սկանդիումինը՝ 0,0054գ/տ, նիկելինը՝ 0,373գ/տ, կոբալտինը՝ 0,1396գ/տ, կապարինը՝ 9,2գ/տ, ցինկինը՝ 8,15գ/տ:

### **Եզրակացություններ և առաջարկություններ**

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքաքարերի թափոնները (պոչանքները) պարունակում են բավականին մեծաքանակ թունավոր տարրեր ու ծանր մետաղներ, որոնք՝ կորզելու պարագայում կարող են դառնալ օգտակար, իսկ պոչանքարներում մնալու պարագայում՝ թունավոր ու խիստ վտանգավոր շրջակա միջավայրի՝ մարդկանց ու կենդանիների համար: Պոչանքարներում նշված տարրերից բացի, թեկուզև աննշան քանակությամբ, այնուամենայնիվ առկա են նաև՝ կապար, ցինկ, կադմիում, մկնդեղ, պլատինոիդների խմբի մետաղներ, այդ թվում նաև ռադիոակտիվ օսմիում և այլ տարրեր: Նշված տարրերից սելենը, տելուրը և մկնդեղը թունավոր տարրեր են նույնիսկ իրենց միացությունների տեսքով, իսկ ծանր մետաղները՝ կապարը, ցինկը, կադմիումը, պղինձը, մոլիբդենը և ռադիոակտիվ օսմիումը՝ խիստ վտանգավոր են և մասամբ էլ թունավոր (կապարը, կադմիումը):

Նշենք, որ պոչանքարներ թափված՝ 315,85 մլն տ պոչանքներում առկա ծանր մետաղների և թունավոր ու խիստ վտանգավոր տարրերի, բացառությամբ ոսկու, արծաթի, երկաթի և ծծմբի, տարադրամային արժեքը կազմում է 6 մլրդ 149,3 մլն դոլար:

Առաջարկվում է.

1. մշակել և գործողության մեջ ներդնել պոչանքներից բոլոր օգտակար տարրերը խտանյութերի տեսքով կորզման (հանքահարստացման) ժամանակակից տեխնոլոգիաներ, այն հաշվով, որպեսզի պոչանքներից գերբարձր աստիճանով (94-95%-ով) կորզվեն առկա բոլոր օգտակար տարրերը,
2. ՀՀ Սյունիքի մարզում (մետաղական օգտակար հանածոների թիվ 1 շտեմարանի տարածքում) կառուցել համապատասխան հզորության ժամանակակից մետալուրգիական գործարան, որտեղ կարող են վերամշակվել ինչպես պոչանքներից ստացված, այնպես էլ գործող բոլոր հանքահարստացման ձեռնարկություններից ստացված խտանյութերն ու բարձր և գերբարձր (98%-ից ոչ պակաս) աստիճանի կորզվել խտանյութեր անցած բոլոր օգտակար տարրերը և, դրանց որոշակի մասը, զտելու և գերզտելու ցեխերով հանդերձ:

Ծանոթություն. անհրաժեշտ ենք համարում նշել, որ Քաջարանի հանքավայրի հանքաքարերում, հետևապես և վերջիններիս հարստացման պոչանքներում, հետախույզ-երկրաբանների կողմից հայտնաբերվել են խիստ վտանգավոր ռադիոակտիվ տարրեր (ուրանի հանքայնացումներ), որոնց նկատմամբ պահանջվում է առանձնահատուկ զգուշավորություն:

<sup>1</sup> Երկրի հրովարտակ. հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա ՀԿ, Երևան, 2003:

## **Оценка отходов обогащения руд Зангезурского медно-молибденового комбината и их экологических последствий**

### **Аннотация**

В статье рассматриваются количественные и качественные характеристики отходов обогащения руд Каджаранского месторождения, эксплуатируемого Зангезурским медно-молибденовым комбинатом. Рассматриваются также и связанные с этими отходами физические и финансовые потери полезных элементов, а также ущерб и угрозы, нанесенные окружающей среде. Расчеты показывают, что в течение 58-летней деятельности Зангезурского медно-молибденового комбината (с 1951 по 2009 г.), в процессе обогащения руд из-за недоизвлечения полезных элементов в окружающую среду (хвостохранилища) было выброшено богатства почти на сумму 10 млрд. долл США. Для наглядности заметим, что в течение этих 58 лет в хвостохранилища было выброшено 222.747 т меди, 26.194,6 т молибдена, 23,995 т рения, 2805,6 кг золота, 306,3 т серебра, 430 т селена, 313,78 т теллура, 296,44 т висмута, 4.149.167 т железа, 2.145.793 т серы, 63.000 т ванадия, 1705,5 т скандия, 117,83 т никеля, 44,1 т кобальта, 2905,8 т свинца, 2575,2 т цинка, большинство из которых – тяжелые металлы, особо опасные для животного мира (общее количество тяжелых металлов в хвостохранилищах составляет 4.469.830 т). Не менее (если не более) опасны элементы, обладающие ядовитыми свойствами, такие как селен и теллур, общее количество которых в хвостохранилищах составляет 743,78 т.

Hrachik Avagyan

## **Assessment of Ore-Enriched Scraps of Zangezur Copper Molybdenum Combine and Their Environmental Impact**

### **Abstract**

The article discusses the qualitative and quantitative characteristics of the scraps produced by the enrichment of ores exploited in Qajaran mine operated by Zangezur Copper Molybdenum Combine, loss of useful elements, and financial losses, threats to the environment and the environmental impact. The calculations show that during 58 years of exploitation (1951-2009) by Zangezur Copper Molybdenum Combine, owing to partial extraction of useful elements, 10 billion USD was wasted (the value of elements thrown into the basin): more than 4 million tons of heavy metals and 700 tons of elements with toxic characteristics that created 4 sources of environmental disasters.

## ՓՄՁ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Վերջին տնտեսական զարգացումները ստիպում են բարձրացնել այնպիսի հարցեր, որոնք կապված են ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման հնարավոր մոտեցումների հետ: Ելնելով այս ամենից կարևոր նշանակություն են ստանում ՓՄՁ-ների ֆինանսավորման հիմնախնդիրները, որոնք կարևոր դեր կարող են խաղալ ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման գործում<sup>1</sup>: Մյուս կողմից ՓՄՁ-ներն աշխատատեղ ստեղծող կարևորագույն օղակն են հանդիսանում տնտեսության մեջ, իսկ առանց ստեղծելու աշխատատեղեր ՓՄՁ հատվածը չի կարող հանդիսանալ այն շարժիչ ուժը, որը տնտեսությունը դուրս է բերում ճգնաժամային կամ անկման իրավիճակներից: Այս դերը ՓՄՁ հատվածը կարող է ստանձնել միայն այն պարագայում, երբ ունենա հնարավորություն, և նրա համար հասանելի լինեն արտաքին և լրացուցիչ ֆինանսական աղբյուրները: Այս համատեքստում կարևոր նշանակություն է ստանում այն նոր պարադիգմայի ուսումնասիրությունը, թե ինչպես է տեղի ունենում ՓՄՁ-ների վարկերի ստացումը՝ մակրոտնտեսական շոկերի պարագայում<sup>2</sup>: Այս խնդիրները կարևորվում են հատկապես ներկայիս ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, քանի որ դրանք շատ ՓՄՁ-ների համար արտահայտվում են առավել խորությամբ: Այս խնդիրները պետք է դիտարկել երկու հիմնախնդիրների տեսանկյունից, այն է՝ թե ինչպես են իրենց դրսևորում օտարերկրյա կապիտալով բանկերը, իսկ դրանք Հայաստանում կազմում են մոտ 75 տոկոս և մյուս կողմից ինչքանով են արդյունավետ գործում պետական երաշխավորման ծրագրերը:

Այս երկու հարցադրումներն այնքանով են կարևորվում, որքանով որ աշխարհի մի շարք երկրներ բախվում են նմանատիպ խնդիրների հետ և իրենց յուրահատուկ լուծումներն են փորձում տալ այս հարցերին:

Գաղտնիք չէ, որ ներկայիս ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ՓՄՁ սեկտորի աջակցությունը գտնվում է և՛ զարգացած, և՛ զարգացող երկրների ուշադրության կենտրոնում: Զարգացող երկրներում դա ակնհայտ է, քանի որ այնտեղ պետական կառավարման մարմինների ուշադրությունն առավելապես նպատակաուղղված է դեպի ՓՄՁ սեկտորը: Բայց այս ճգնաժամը ցույց տվեց, որ զարգացած մեծ տնտեսություն ունեցող երկրներում ևս ՓՄՁ-ները պակաս կարևորություն չունեն: Այնպիսի երկրում ինչպիսին ԱՄՆ-ն է ՓՄՁ հատվածն ունի լուրջ տնտեսական դեր, այն պարզ պատճառով, որ հանդիսանում է ավելի մեծ թվով աշխատատեղեր ստեղծող, և այս գործոնը պետական կառավարման մարմիններն օգտագործում են ճգնաժամի արդյունքում առաջացող գործազրկության հետևանքները կանխելու համար: Այն որ ՓՄՁ-ները հանդիսանում են աշխատատեղերի ստեղծման շարժիչ ուժ, ապացուցված է վերջին տասնամյակներում և դա ապացուցվեց նաև ճապոնիայում 1990-ականներին, երբ համաշխարհային տնտեսության մեջ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո սկսվեց ճգնաժամի մեծ ալիք:

Կա այնպիսի տեսակետ, որ հիմնականում մեծ տնտեսություն ունեցող երկրներն են կարողանում օրենսդրորեն լուրջ աջակցություն ցուցաբերել ՓՄՁ-ներին, այսպես՝ ԱՄՆ-ում նորաստեղծ կազմակերպությունները (start-up) կամ մինչև 5 տարի գործունեություն իրականացնողները մեծ տեսակարար կշիռ ունեն զուտ աշխատատեղերի ստեղծման ցուցանիշում, սակայն միտումներն այնպիսին են, որ մեծ կազմակերպությունները ևս փորձում են մեծաթիվ աշխատատեղեր ստեղծել և ետ չմնալ փոքրերից: Իհարկե, այստեղ շատ կարևոր նշանակություն է

<sup>1</sup> Huu Le Nguyen, Soren Kock (Department of Management and Organization, Hanken School of Economics, Vaasa, Finland), Managing SMEs' survival from financial crisis in a transition economy: a Chaos Theory approach, Published online, 16 p.

<sup>2</sup> Eleni Papaoikonomou & Pere Segarra & Xiaoni Li, Entrepreneurship in the Context of Crisis: Identifying Barriers and Proposing Strategies, Published online: 4 December 2011, # International Atlantic Economic Society 2011, 10 p.

ստանում նաև այդ կազմակերպությունների ոլորտային պատկանելիությունը, ինչպես նաև այն տնտեսական իրավիճակը, որում նրանք հայտնվել են ճգնաժամի արդյունքում, քանի որ այնպիսի երկիր, ինչպիսին ճապոնիան է, և որտեղ գործում է ցմահ աշխատանքի անցնելու սկզբունքը, ստիպված էր 2012թ. առաջին եռամսյակում օրենսդրորեն հնարավորություն տալ ազատել աշխատողներին, որն իհարկե, խիստ աննախադեպ է ճապոնական կազմակերպությունների համար<sup>1</sup>:

ՓՄՁ-ների գլխավոր խնդիրներից մեկն այն է, որ նրանք մեծ հնարավորություններ չունեն ֆինանսական ռեսուրսներ հայթայթելու գործում, քանի որ կապիտալի շուկայում նրանց մուտքը պայմանավորված է մեծ ծախսերի, ինչպես նաև կազմակերպությունների հասուն փուլում գտնվելու հետ, իսկ ՓՄՁ-ները դեռ ճանապարհ ունեն անցնելու, որպեսզի կարողանան, օրինակ, իրագործել արժեթղթերի առաջնային տեղաբաշխում (IPO): Հարցը նրանում է, որ մի շարք խոշոր կազմակերպություններ շատ դեպքերում վախենում են իրականացնել արժեթղթերի առաջնային տեղաբաշխում, քանի որ անհաջողություն ունենալու պարագայում կարող են վտանգել իրենց բիզնեսի հետագա զարգացումը կամ առաջընթացը: ՓՄՁ-ները զրկված լինելով կապիտալի շուկայում արժեթղթեր վաճառելու կամ կորպորատիվ պարտատոմսեր թողարկելու հնարավորությունից, իրենց հիմնական ֆինանսական խնդիրները փորձում են լուծել ավանդական ֆինանսական ինստիտուտների, այն է՝ բանկերի և վարկային կազմակերպությունների, մի խոսքով առևտրային կամ արտադրական բնույթի վարկերի միջոցով: Իհարկե, Հայաստանում իրականությունն այլ է, քանի որ բորսայական համակարգը զարգացած չէ, ինչպես նաև ՓՄՁ-ները չունեն համապատասխան գիտելիքներ և հմտություններ ֆոնդային բորսայից միջոցներ ներգրավելու համար, ապա խնդիրը տեղափոխվում է միայն բանկային և վարկային կազմակերպությունների շրջանակ, դեռ ավելին, այստեղ էլ սկսում է գործել մի երևույթ, ինչպիսին է միջոցներ հայթայթելու համար տարբեր նպատակներով (հիփոթեքային, գյուղատնտեսական և այլն), այլ նպատակներով օգտագործելը, այսինքն՝ վարկի միջոցով շատ դեպքերում չի ֆինանսավորվում կոնկրետ ՓՄՁ-ի գործունեությունը, այլ վարկը տրվում է այլ նպատակով, իսկ վարկառուն այն սկսում է օգտագործել ձեռնարկատիրական նպատակով:

Անգամ նորմալ տնտեսական իրավիճակներում վարկերի կամ լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների հայթայթումը ՓՄՁ-ների համար կարող է լինել բավականին խնդրահարույց, իսկ եթե իրավիճակները փոխվում են, և տնտեսությունը հայտնվում է ֆինանսական կամ տնտեսական ճգնաժամի պայմաններում, ապա խնդիրներն առավել սուր արտահայտված բնույթ են ստանում, քանի որ կա «վարկային ճգնաժամի» խնդիր, դրանք այն ժամանակահատվածներն են, երբ բանկերն ու վարկային կազմակերպությունները տնտեսության բարձր ռիսկային իրավիճակներում հայտնվելու պատճառով խստացնելով վարկերի տրամադրման պայմանները ժամանակավոր դադարեցնում են կամ 20%-ից ավելի նվազեցնում վարկերի տրամադրման ծավալները:

Հայաստանը նման խնդիրների բախվեց 2009թ. երկրորդ եռամսյակից սկսած, նաև տեղի ունեցավ հսկայական փոփոխություններ՝ կապված դրամով ստացված վարկերի և դոլարով տրված վարկերի տեսակարար կշիռների փոփոխության առումներով:

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկերի հանրագումարը 2007թ. կազմել է 464.8 մլրդ դրամ, որից տնային տնտեսություններին են հատկացվել 247.7 մլրդ դրամը, այսինքն՝ կեսից ավելին: 2008թ. նախաճգնաժամային տարում ընդհանուր բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերը կազմել են 692.9 մլրդ դրամ, որից տնային տնտեսություններին է տրվել 367.8 մլրդ դրամը: Ճգնաժամային 2009թ. ընդհանուր վարկերը կազմել են 785.5 մլրդ դրամ, իսկ տնային տնտեսությունների մասնաբաժինը եղել է 341.0 մլրդ դրամ, այսինքն՝ արդեն 2009թ. տնային տնտեսությունների վարկեր վերցնելու տեսակարար կշիռը կեսից ավելի քիչ է սկսել կազմել ամբողջական վարկերի կազմում: 2010թ. ընդամենը վարկերը հատեցին մեկ տրիլիոն դրամի սահմանագիծը և կազմեցին 1009.4 մլրդ դրամ, որից տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմում է 411.9 մլրդ դրամ: Պետք է նշել, որ տարեկան մոտ 200 մլրդ դրամով ավելացող

<sup>1</sup> Kazuo Ogawa, Takanori Tanaka, The global financial crisis and small- and medium-sized enterprises in Japan: how did they cope with the crisis? Springer Science+Business Media, LLC. 2012, 17 p.

վարկերի տեսակարար կշիռը 2009թ. աճեց ընդամենը 100 մլրդ դրամով, որն աճի տեմպերի մոտ 50% կրճատման հանգեցրեց, այսինքն՝ տնտեսությունը բանկային համակարգի կողմից զրկվեց լրացուցիչ 100 մլրդ դրամից, որը լուրջ հարված հասցրեց վարկային ռեսուրսների հաշվին ճգնաժամից դուրս գալու հնարավորություններից օգտվելու ցանկություն ունեցող ՓՄՁ-ներին:

2012թ. օգոստոսի դրությամբ վարկերը հատել են 1428.0 մլրդ դրամի սահմանագիծը<sup>1</sup>: Պետք է նշել, որ ՀՀ-ում ՓՄՁ-ների հատկացված վարկերի գծով տարվող առանձին վիճակագրություն չկա, այդ իսկ պատճառով բավականին դժվար է հստակ տալ այդ ոլորտում առկա պատկերը:

Խնդիրներից գլխավորը նրանում է, որ 2007-2012թթ. ընթացքում վարկերի տոկոսադրույքները, որոնք սահմանվել են առևտրային բանկերի կողմից, տատանվել են 15-20% միջակայքում: Դա նշանակում է, որ վարկեր ունեցող տնային տնտեսությունները, ձեռնարկությունները և այլն դժվարին վիճակում են հայտնվել, ինչպես նաև առաջացնել են տնտեսական ոչ համաչափ զարգացումներ: Եթե փորձենք կոպիտ հաշվարկներ կատարել, ապա տնային տնտեսությունները և ՓՄՁ-ները բավականին մեծ տոկոսներ են վճարում (220-280 մլրդ դրամ) ՀՀ գործող առևտրային բանկերին:

Կարևոր նշանակություն ունի նաև ճգնաժամի պայմաններում ՓՄՁ ոլորտի վրա տարբեր գործոնների ազդեցության գնահատումը, քանի որ ներկայիս ֆինանսատնտեսական ճգնաժամի թողած ազդեցություններից մեկը ՓՄՁ ոլորտի համար վարկային ռեսուրսների ոչ լիարժեք հասանելիությունն է և դրա հետ կապված ՓՄՁ-ների գործունեության շրջանակների կրճատումը: Սակայն գոյություն ունեն մի շարք ուղիներ, որոնք պատկերացնելու և դրանք ճիշտ օգտագործելու պարագայում կարող են ընդլայնել իրենց ֆինանսական ռեսուրսները:

Հաջորդ կարևորագույն հիմնահարցն այս ասպարեզում պայմանավորված է օտարերկրյա բանկերի հետ, քանի որ շատ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում բանկային համակարգի մեծ մասը կենտրոնացած է օտարերկրյա բանկերի ձեռքում, որն ամբողջությամբ փոխում է վերաբերմունքը ՓՄՁ-ների հանդեպ: Խնդիրը նրանում է, որ բանկերն այս պարագայում վերածվում են ոչ թե գործարար հատվածին աջակցող կառույցի, այլ իրականացնում են բարձր շահույթ հետապնդող և ՓՄՁ-ների շահերից չբխող բարձր տոկոսադրույքներով վարկեր տրամադրողների, իսկ Հայաստանում՝ վարկավորման տոկոսադրույքները միջին հաշվով տատանվում են 15-20%-ի շրջանակներում, իսկ նման պարագայում ՓՄՁ-ների շահութաբերությունը պետք է լինի շատ ավելի բարձր, հետևապես բարձր տոկոսադրույքները ստիպում են, որպեսզի ՓՄՁ-ների կայացման գործընթացը դադարի, ինչպես նաև ցածր շահութաբերություն ունեցող ցանկացած գործունեություն սեփական միջոցներ չունենալու պարագայում դատապարտված է չիրագործման, իսկ վերջինս ազդում է տնտեսական ակտիվության, ինչպես նաև ՀՆԱ-ի աճի տեմպերի անկման վրա:

Հաջորդ կարևորագույն խնդիրը պայմանավորված է պետական երաշխիքների տրամադրման հետ, որը խիստ մեծ կարևորություն ունի ՓՄՁ-ների կայացման և զարգացման գործում, այս հարցերը պետք է մանրամասնությամբ քննարկել՝ բացահայտելու համար ճգնաժամի հնարավոր ազդեցությունները ՓՄՁ-ների գործունեության վրա:

Հետաքրքիր է այն փաստը, որ Հայաստանում ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից բավականին փոքր ծավալ է կրում ՓՄՁ-ների աջակցությունը, քանի որ աջակցության ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող մասնաբաժինն ունեն տեղեկատվական և խորհրդատվական աջակցությունը՝ 3,588 դեպք, իսկ սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն՝ 17 և վարկային երաշխավորությունների տրամադրման՝ 11 դեպք: Վերջինս փաստում է այն մասին, որ լուրջ ֆինանսական աջակցություն ՀՀ ՓՄՁ-ները չեն ստանում:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 11.3%-ը գործում են երևան քաղաքում, իսկ 88.7%-ը՝ ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում: Այսինքն՝ այստեղ տարածքային համաչափ զարգացման կամ մարզերին աջակցության մոտեցումն է գործում:

<sup>1</sup> <http://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

**ՀՀ ՓՄՁ-ներին տրամադրված աջակցության ուղղությունները<sup>1</sup>**

Տրամադրված աջակցության ուղղություն	Առ 01.01.2012թ. բավարարված աջակցության հայտերի թվաքանակ
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	3,588
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	95
Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն	17
Թողարկվող արտադրանքի/նատուցվող ծառայությունների շուկաներ առաջնդման և արտահանմանն աջակցություն	47
Վարկային երաշխավորությունների տրամադրում	11
ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	22
<b>Ընդամենը</b>	<b>3,780</b>

Այնուամենայնիվ, փաստը մնում է այն, որ ՀՀ-ում ՓՄՁ հատվածի զարգացման համար պետական աջակցությունը նյութականացված բնույթ (ֆինանսավորում) այնքան էլ չունի, այս գործառնությունը իրենց վրա են կրում բանկերը, որոնք վարկավորման ծանր պայմաններով փորձում են տրամադրել վարկեր, իսկ այդ վարկերի մարման դժվարությունները մի շարք ՓՄՁ-ների համար ունենում են ոչ բարենպաստ ավարտ, այն է՝ սնանկացման մի շարք դեպքեր են գրանցվում:

Այսպիսով՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցություններն իրենց վրա զգացին աշխարհի և Հայաստանի մի շարք ՓՄՁ-ներ: Բավականին դժվարին իրավիճակում հայտնված ՓՄՁ-ներ ստիպված էին շատ դեպքերում ընտրություն կատարել գործունեության դադարեցման և մյուս կողմից գործունեությունը շարունակելու հարցում: Այդ իսկ պատճառով նրանց կողմից որդեգրվում էին ռազմավարություններ, որոնք շատ դեպքերում արդարացված չէին: Ինչ վերաբերում է ՓՄՁ-ների պետական աջակցությանը և ֆինանսավորմանը, ապա այստեղ խնդիրներն էական լուծում չստացան, որի արդյունքում հայաստանյան ՓՄՁ-ների մեծ մասը դեռևս շարունակում է վերականգնվել 2009թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի ուժեղ հարվածից հետո:

**Арман Даниелян**

**О проблемах взаимосвязи финансово-экономического кризиса и финансирования МСП**

**Аннотация**

Финансово-экономический кризис оказал негативное влияние на деятельность ряда МСП стран мира и Армении. Оказавшись в довольно сложной ситуации, МСП вынуждены были во многих случаях сделать выбор между прекращением своей деятельности или ее продолжением. В связи с этим с их стороны были выработаны стратегии, которые во многих случаях оказались неоправданными. Что касается задач государственной поддержки и финансирования МСП, то они не получили существенного разрешения, в результате чего по сей день большинство армянских МСП продолжает восстанавливаться от последствий сильного удара финансово-экономического кризиса 2009 г.

<sup>1</sup> <http://smednc.am/?laid=2&com=module&module=menu&id=359>

## On Issues of Interrelationship Between Sme Funding and the Global Financial Crisis

### Abstract

The SMEs worldwide and in Armenia were negatively affected by the Global Financial Crisis. The SMEs that experienced financial difficulties, in many cases, had to face the tough choice between continuing and closing the business. Therefore, they were adopting such strategies that later proved to be unjustified. Owing to lack of wide-scale SME funding programs and initiatives the majority of Armenian SMEs still continue recovering from the negative phase of the Global Financial crisis transmitted to Armenia in 2009.

**ԳՈՅԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
*ՏՊԾՏ, Կ. Գ. Ք., ԴՈՑԵՆՏ*

### ԱՌՈՂՋԱԿԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Տնտեսագիտական գրականության մեջ առողջապահության տնտեսական արդյունավետությունը վերլուծվել է մի շարք տեսանկյուններից և սովորաբար ցուցաբերելով ճյուղային մոտեցում, համարվել, առողջապահության էկոնոմիկայի ուսումնասիրության առարկա: Դա կարելի էր այդպես էլ դիտել, եթե առողջապահության արդյունավետություն ասելով հասկանանք այդ ճյուղի առանձին օղակների կազմակերպումն ու դրանց գործունեության գնահատումը, բնակչության սպասարկման նորմատիվների սահմանումը, առողջապահության համակարգի ֆինանսավորումն ու այդ միջոցների արդյունավետ օգտագործումը և այլն: Խնդիրը փաստորեն հանգեցվում է նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքի ձեռքբերման ընդհանրական սկզբունքին, որը կիրառելի է տնտեսության ցանկացած ճյուղում: Իհարկե, առողջապահության ոլորտում այս սկզբունքի կիրառումը պահանջում է այլ մոտեցում. «Առողջապահության գործում կատարվող տնտեսման հետ պետք է առանձնապես զգույշ լինել,- նկատել է Ն.Սիմաշկոն: Կարելի է ռիսկ անել տնտեսել տնտեսության մեջ, թեև ուզես և դա սպառնա «արտադրանքի որակի» որոշ իջեցում, բայց բոլորովին անթույլատրելի է խաղալ բնակչության կյանքի և առողջության «արտադրանքի» տնտեսման հետ»<sup>1</sup>:

Սույն հոդվածում մենք կանգ կառնենք աշխատանքային ռեսուրսների վերարտադրության, դրանց աշխատունակության պահպանման և օգտագործման հարցում առողջապահության ունեցած արդյունավետության վրա: Աշխատանքային ռեսուրսների քանակը, տեղաբաշխումն ու օգտագործումը պայմանավորված է տարբեր գործոններով, այդ թվում նաև բնակչության առողջական վիճակով: Այս իմաստով առողջապահության տնտեսական արդյունավետությունը կարելի է գնահատել բոլոր այդ երեք ուղղություններով, յուրաքանչյուր դեպքում կիրառելով հաշվարկման առանձնահատուկ մոտեցում:

Այսպես, աշխատանքային ռեսուրսների քանակական աճի առումով առողջապահության տնտեսական արդյունավետությունը կարելի է գնահատել հետևյալ ցուցանիշների բարելավման շնորհիվ ստացվող համախառն ազգային արդյունքով.

- մահացության կրճատում,
- ծնելիության գործակցի բարձրացում,
- կյանքի միջին տևողության աճ:

<sup>1</sup> Семашко Н.А., Все внимание рационализации. «Вопросы здравоохранения», М., 1929 N 10, с. 5.



Բոլոր այս դեպքերում էլ ապահովվում է մարդ-տարիների ավելացում, որի արդյունքում ստեղծված ՀՆԱ-ի աճը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$U = \sum_{i=1}^n \frac{\sum U_i}{N_i} \cdot S_i \cdot U_p$$

որտեղ՝

U-ն ՀՆԱ-ի աճն է,

ՀՆԱ<sub>i</sub>-ն i-րդ տարում արտադրված համախառն ներքին արդյունքն է,

N<sub>i</sub>-ն նույն տարում զբաղված աշխատանքային ռեսուրսների թիվը,

S<sub>i</sub>-ն i-րդ տարում տնտեսված մարդ-տարիների թիվը,

U<sub>p</sub>-ն մեկ աշխատողի աշխատանքի արտադրողականության աճի միջին տարեկան տեմպը:

Աշխատանքային ռեսուրսների արտադրության փուլում առողջապահության ունեցած տնտեսական արդյունավետության վերաբերյալ առկա են բազմաթիվ հաշվարկներ, որոնք, չնայած տարբեր մեթոդաբանություններին և հաճախ իրենց մոտավոր բնույթին, ընդհանուր պատկերացում են տալիս ստացված արդյունքների մասին: Օրինակ, ԱՄՆ-ում միայն բնակչության վաղաժամ մահացության մակարդակի իջեցման հաշվին ամեն տարի տնտեսվում է ՀՆԱ-ի 9 %-ը, ըստ Ա.Գ.Ստրոուսի հաշվարկների առողջապահության համար ծախսված յուրաքանչյուր 100 ռուբլուն ստեղծվում է 220 ռուբլուն համարժեք ազգային եկամուտ, իսկ Կուլագինայի հաշվարկների համաձայն մեկ նորածնի կյանքի փրկությունը կամ կնոջ եկամուտ՝ չհաշված աշխատանքի արտադրողականության հետագա աճը<sup>1</sup>:

Առողջապահությունը կարող է նպաստել նաև աշխատանքային ռեսուրսների ճիշտ տեղաբաշխմանը, որի արդյունավետության հարցը համեմատաբար քիչ է պարզաբանված: Մենք հիմնականում կանդիդատներ ենք աշխատանքային ռեսուրսների միջոցառումային բաշխման գործում առողջապահության ունեցած ազդեցության հաշվարկմանը: Գիտատեխնիկական առաջընթացը, փոխելով աշխատանքի բնույթը, մեծացնում է աշխատուժի առողջությանը ներկայացվող պահանջները: Դա պատճառ է դառնում մասնագիտական սահմանափակումների կիրառման համար, որը ստիպում է որոշել տվյալ մարդու համապատասխանությունն ընտրված մասնագիտությանը: Այստեղ առողջապահության դերը մարդկանց առողջական վիճակի գնահատման միջոցով մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը նպաստելն է: Դա թույլ կտա խուսափել սխալ ընտրության հետևանքով առաջացող բազմաթիվ կորուստներից, որով էլ կարելի է հաշվարկել ռեսուրսների տեղաբաշխման բնագավառում առողջապահության ունեցած տնտեսական արդյունավետությունը: Ընդհանուր առմամբ այդ կորուստները կարելի է խմբավորել երեք մասի: Նախ, աշխատուժի անհամապատասխանությունն ընտրված մասնագիտությանը կրճատում է աշխատանքի արտադրողականությունը, քանի որ մեծանում է հոգնածությունը՝ աշխատանքով անբավարարվածության զգացումի ճնշող ազդեցության ներքո: Երկրորդ, աճում է առողջական վիճակի հետագա վատթարացման հավանականությունը, որը մի կողմից բերում է աշխատածանակի կորուստների, իսկ մյուս կողմից՝ լրացուցիչ ծախսեր պահանջում առողջությունը վերականգնելու համար: Երրորդ, մասնագիտական անհամապատասխանությունը շատ հաճախ կարող է աշխատանքի բնույթի փոփոխության անհրաժեշտություն առաջացնել, որը պահանջում է կրթության լրացուցիչ ծախսեր: Այսպիսով, աշխատանքային ռեսուրսների բաշխման փուլում առողջապահության տնտեսական արդյունավետությունը կարող ենք որոշել որպես աշխատանքի արտադրողականության իջեցումը կանխելու և աշխատածանակի կորուստների կրճատման շնորհիվ ստեղծված ՀՆԱ-ի և առողջապահության ու կրթության վրա կատարվող լրացուցիչ ծախսերի տնտեսման շնորհիվ ստացված արդյունք, որը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևի օգնությամբ:

<sup>1</sup> Առողջապահության կառավարում, տնտեսագիտություն և ֆինանսավորում շուկայական հարաբերությունների պայմաններում, *Խաչատրյան Թ.* և ուրիշներ, Երևան, 2002, էջ 6-9:

$$S_p = \text{ՅՆԱ} + \text{Ծառ.} + \text{Ծկրթ.}$$

որտեղ՝

Տբ- ն աշխատանքային ռեսուրսների արդյունավետ բաշխման շնորհիվ տնտեսված արդյունքն է,

ՅՆԱ-ն աշխատանքի արտադրողականության իջեցումը կանխելու և աշխատաժամանակի կորուստները կրճատելու հետևանքով ստեղծված ազգային արդյունքն է,

Ծառ.-ը առողջապահության վրա ծախսվելիք լրացուցիչ գումարի մեծությունն է,

Ծկրթ.-ը կրթության համար կատարված լրացուցիչ ծախսերն են:

Տնտեսագիտական գրականության մեջ առանձնապես լայն չափերով վերլուծված է առողջապահության արդյունավետությունն աշխատանքային ռեսուրսների օգտագործման փուլում, որը կարելի է տարբերակել ըստ ներգործության մասշտաբների.

- առողջապահության մակրոտնտեսական արդյունավետություն,
- առողջապահության արդյունավետություն կոնկրետ ձեռնարկության մասշտաբով,
- առանձին առողջապահական միջոցառումների արդյունավետություն:

Հաշվարկման տեսակետից վերջինը կարելի է համեմատաբար հեշտ իրականացնել՝ սահմանագատելով կատարված ծախսերը ստացված արդյունքներից: Դա վերաբերում է ինչպես առանձին հիվանդությունների կրճատմանն ու լրիվ վերացմանը, այնպես էլ այդ նպատակով իրականացվող կանխարգելիչ միջոցառումների տնտեսական արդյունավետության հաշվարկմանը: Դեռևս անցյալ դարի 70-ական թվականներին Մ.Պ.Ռոյտմանի կատարած հաշվարկներով պոլիոմելիտի և դիֆթերիայի դեմ կատարված պատվաստումների ընդհանուր ծախսերի և այդ հիվանդությունների հետևանքով առաջացած կորուստների սպասվելիք մեծության միջև հարաբերությունը համապատասխանաբար կազմում է 1:42-ին և 1:37-ին<sup>1</sup>:

Աշխատուժի օգտագործման փուլում առողջապահության ունեցած տնտեսական արդյունավետության հաշվարկները հիմնվում են կամ աշխատաժամանակի կորուստների կրճատման կամ աշխատանքի արտադրողականության բարձրացման շնորհիվ տնտեսված գումարի որոշման վրա: Ընդ որում՝ աշխատաժամանակի կորուստների կրճատման ուղղությամբ առողջապահության միջոցառումների ազդեցությունը հանգեցվում է.

- հիվանդությունների հետևանքով առաջացող ժամանակավոր անաշխատունակության կրճատմանը,
- մասնագիտական հիվանդությունների կրճատմանն ու վերացմանը,
- արտադրական տրավմատիզմի և հաշմանդամության նվազմանը:

Առողջապահության համակարգի գործունեությունն առանձնակի արդյունավետություն է դրսևորում հիվանդությունների հետևանքով առաջացող ժամանակավոր անաշխատունակության կրճատման հարցում: Ըստ որոշ հաշվարկների անաշխատունակությամբ ուղեկցվող հիվանդացության իջեցման տնտեսական արդյունքը 8-10 անգամ գերազանցում է այն ծախսերին, որոնք կատարվել են արդյունաբերական ձեռնարկությունների բանվորների կենցաղային ու աշխատանքային պայմանների բարելավման և հիվանդների առողջացման համար: 1997 թվականին Վ.Պ. Կորչագինի կատարած հետազոտությունների համաձայն Ռուսաստանի Դաշնությունում աշխատունակության կորուստների պատճառներով չի թողարկվել 315 տրիլիոն ռուբլու ՅՆԱ կամ ՅՆԱ-ի 14 %-ը, որից 69,8 տրիլիոն ռուբլին՝ վաղաժամ մահացության, 83,7 տրիլիոն ռուբլին՝ աշխատող ազգաբնակչության ժամանակավոր անաշխատունակության և 134,9 տրիլիոն ռուբլին՝ հաշմանդամության հետևանքով<sup>2</sup>:

Աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման դեպքում առողջապահության տնտեսական արդյունավետությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն անաշխատունակության տևողության կրճատման հաշվին ստացված լրացուցիչ արդյունքները, այլ նաև հիվանդությունների բուժման համար կատարված ծախսերն ու սոցիալական

<sup>1</sup> Ройтман М.П. Экономика советского здравоохранения, М., 1973, С.15:

<sup>2</sup> Առողջապահության կառավարում, տնտեսագիտություն և ֆինանսավորում շուկայական հարաբերությունների պայմաններում, *Խաչատրյան Թ.* և ուրիշներ, Երևան, 2002, էջ 6:

ապահովագրության ֆոնդից կատարված հատկացումները, որոնք արվում են հիվանդաթերթիկների վճարման համար: Հաշվի առնելով բոլոր այս գործոնները, առողջապահության արդյունավետությունն աշխատանքային ռեսուրսների օգտագործման փուլում կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$So = \text{ժա.տ.} \times (\text{ՀՆԱօր.} + \text{Ծառ.} + \text{Սա.հ.}) - \text{Ծժ.ա.}$$

որտեղ՝

So-ն՝ աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման հետևանքով տնտեսված արդյունքի մեծությունն է,

ժա.տ.-ն ժամանակավոր անաշխատունակության տևողությունն է,

ՀՆԱօր-ը՝ համախառն ազգային արդյունքի միջին օրական մեծությունն է մեկ աշխատողի հաշվով,

Ծառ.-ը՝ հիվանդությունների բուժման համար առողջապահության կատարած օրական ծախսումների մեծությունը,

Սա.հ.-ն՝ սոցիալական ապահովագրության մեկ օրվա միջին հատկացումները հիվանդաթերթիկի դիմաց,

Ծժ.ա.-ն՝ ժամանակավոր անաշխատունակության կրճատման համար կատարված բոլոր ծախսերը:

Բոլոր այս բանաձևերը տալիս են մոտավոր հաշվարկներ, քանի որ ցուցանիշները հիմնականում միջինացված են, կամ դրանց մի մասն ընդհանրապես հաշվարկված չէ և ներկայացված է պայմանական մեծություններով: Սակայն աշխատանքային ռեսուրսների վերարտադրության առանձին փուլերում առողջապահության ունեցած տնտեսական արդյունավետության հաշվարկման այս և բազմաթիվ այլ բանաձևերի կիրառման նպատակն ի վերջո մեկն է. հիմնավորել ծառայությունների ոլորտի այս ճյուղի գործունեության կարևորությունն ու հատկացվող միջոցների նպատակահարմարությունը նաև տնտեսական առումով, ցույց տալ, որ դրանց արդյունավետ կիրառումը ոչ միայն կփոխհատուցի կատարված ծախսերը, այլ նաև կնպաստի լրացուցիչ արդյունքների ստեղծմանը:

**Гоарик Григорян**

## **Оценка экономической эффективности здравоохранения**

### **Аннотация**

Экономическая эффективность здравоохранения исследуется не с точки зрения отраслевой экономики, а с точки зрения рассмотрения проблемы по отдельным фазам воспроизводства, распределения и использования трудовых ресурсов. Соответственно этому в статье представляются методы расчета экономической эффективности здравоохранения.

**Goharik Grigoryan**

## **Evaluation of Economic Efficiency of the Healthcare**

### **Abstract**

The article departs from the traditional methods of evaluating the efficiency of the entire healthcare system, instead proposing to evaluate separately the efficiency of different stages of services' provision process; allocation and use of labor force. Based on the above-discussed approach, the article provides methodology for calculating the efficiency of the healthcare.

**ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌՈՂՋԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Առողջապահության ոլորտի զարգացումը ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից է: Դա պահանջում է համապատասխան պետական ծրագրերի իրականացում, որոնց նպատակն է վերջո առողջապահության ծառայությունների որակի բարելավումն ու դրանց մատչելիությունն է հատկապես նվազ ապահով խավերի համար: Հակառակ դեպքում հիվանդությունների թվի կրճատման և մարդկանց առողջական վիճակի բարելավման վերաբերյալ մենք կունենանք խիստ «լավատեսական վիճակագրություն»: Այդ մասին են վկայում Հայաստանում բնակչության ընդհանուր հիվանդացության վերաբերյալ ստորև բերվող տվյալները (հազար դեպք):

Տարեթիվը	1990	2000	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Հիվ. բանակը (հազ. դեպք)	2,397,7	1,059,7	1,039,3	1,015,4	1,075,2	1,208,4	1,235,2	1,322,2	1,444,7	1,481,5

Աղյուսակ 1<sup>1</sup>

Աղյուսակից հետևում է, որ, չնայած 2010 թվականին հիվանդացության դեպքերի աճին, այնուամենայնիվ, դրանք դեռ 38%-ով ետ են մնում 1990 թվականի մակարդակից: Զգալիորեն կրճատվել է ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ բնակչության միջին հաճախումների թիվը՝ 1990 թվականի 7,8-ից 2010 թվականին հասնելով 3,6-ի: Մինչդեռ իրական փաստերը վկայում են հակառակի մասին՝ կապված բնակչության կազմի և վերարտադրության տիպի փոփոխության բացասական միտումների հետ: Վերջին 20 տարիների ընթացքում ծնելիությունը նվազել է մոտ 2,5 անգամ, և բնակչության վերարտադրության տիպը պրոգրեսիվից վեր է ածվել ռեգրեսիվի: Եթե 1986 թվականին Հայաստանում ծնվել է 81 հազար երեխա, ապա 2001 թվականին ընդամենը 32 հազար, իսկ ծնելիության ցուցանիշը 1000 բնակչի հաշվով 24-ից իջել է մինչև 8,4-ի: Գիշտ է, 2001 թվականից հետո դիտվում է ցուցանիշների որոշակի բարելավում, սակայն այն դեռևս շատ ցածր է նախորդ մակարդակից: Այսպես, 2010 թվականին ծնունդների թիվը կազմել է 44825 երեխա, ընդ որում 2011 թվականին այս դրական միտումն ընդհատվել է, և նախորդ տարվա համեմատ ծնունդները նվազել են 3,1%-ով<sup>2</sup>: Հայաստանը դասվում է ցածր ծնելիություն ունեցող երկրների թվին: Բնակչության պարզ վերարտադրության համար մեկ կինը միջինը պետք է ունենա 2,2 երեխա, իսկ ՄԱԿ-ի տվյալներով այն Հայաստանում 1,74 երեխա է: Ծնելիության նվազումը, ինչպես նաև երիտասարդ բնակչության արտագաղթը բերում են բնակչության ծերացման: Հայաստանի բնակչության 14,6%-ը 60-ից բարձր տարիքի է, մինչդեռ բնակչությունը համարվում է ծերացած, եթե այդ ցուցանիշն անցնում է 12%-ը: Ըստ կանխատեսումների 2024 թվականին այն կհասնի 20%-ի:

Այս և բազմաթիվ այլ տվյալներ վկայում են այն մասին, որ ՀՀ առողջապահության ոլորտում առկա են անբարենպաստ միտումներ: Դրանք պայմանավորող գործոններից են.

- բնակչության եկամուտների ցածր մակարդակը, որը կրճատել է վճարովի ծառայությունների մատչելիությունը,
- առողջապահության ֆինանսավորման մակարդակը, որը նվազագույնի է հասցրել պրոֆիլակտիկ հետազոտությունների հնարավորությունը և հիվանդությունների ժամանակին բացահայտումը, ինչը դրանց բուժումը կդարձնի առավել հավանական՝ ավելի քիչ ֆինանսական միջոցներով,
- բնակչության թվաքանակի կրճատումը՝ կապված ծնելիության մակարդակի նվազման և հատկապես արտագաղթի հետ,

<sup>1</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԱՆ առողջապահության տեղեկատվական վերլուծության կենտրոն:  
<sup>2</sup> Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

- տվյալների գրանցման անճշտությունները, որոնք մեծ մասամբ պայմանավորված են վճարովի ծառայությունների բարձր գներով և բժիշկների ցածր վարձատրությամբ՝ պատճառ դառնալով չգրանցված «գործարքների» համար:

Այս և այլ պատճառներով արդյունքում ունենք բնակչության առողջական վիճակի իրական վատթարացում: Իսկ պետության կողմից բնակչության անապահով խավերին տրվող արտոնությունները, բժշկական անվճար ծառայությունները, սոցիալական փաթեթում առողջապահության համար նախատեսվող ծախսերը փոքր տեսակարար կշիռ ունեն:

Բնակչության ժողովրդագրական պատկերի փոփոխություններն ու առողջական վիճակի վատացումը պահանջում են առանձնահատուկ մոտեցումներ, որոնք իրենց արտահայտությունն են ստացել կառավարության 2013-2015 թվականների առողջապահության բնագավառի բարեփոխումների միջնաժամկետ ծրագրում: Այս ոլորտում պետական միջամտության հիմնական ուղղություններն են.

- բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը,
- պատվաստումների միջոցով վարակիչ հիվանդությունների կանխարգելումն ու տարածման սահմանափակումը,
- բուժօգնության առաջնային օղակի հետագա զարգացումը,
- բնակչության կողմից առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության սկզբունքով ծառայությունների մատուցումը,
- հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման ճանապարհով առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի շեշտադրումը,
- ընտանեկան բժշկության անկախ խմբային և անհատական պրակտիկաների ներդրումը,
- մոր և մանկան առողջության պահպանումն ու վերարտադրողական առողջության բարելավումը,
- սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններից բուժվողների բուժօգնության ապահովումը,
- բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային մասնագիտացված բժշկական օգնության ապահովումը,
- վարակիչ հիվանդությունների, այդ թվում ՄԻՎ/ԶԻՎՅ-ի/ կանխարգելումը և դրանց դեմ պայքարը,
- բնակչությանն անվճար և արտոնյալ պայմաններով դեղերով ապահովումը,
- դեղագործական նշանակության գործունեության կանոնակարգումը և վերահսկողությունը:

Այս խնդիրների իրականացումը պահանջում է առողջապահության համակարգի օպտիմալացում կադրային, նյութաֆինանսական մակարդակներով, ապակենտրոնացում և սեփականության ձևերի բազմազանություն, ոլորտի ֆինանսավորումն ապահովող աղբյուրների համակարգի կատարելագործում և, առաջին հերթին, ապահովագրական համակարգի կիրառում, որոնք թույլ կտան մոտենալ առողջապահության ոլորտի բարեփոխումների հիմնական նպատակների իրագործմանը,

Առողջապահության համակարգի բարեփոխումների թվում հատկապես կարևորվում է ֆինանսավորման աղբյուրների համակարգումը՝ ֆինանսական արդարացիության ու պաշտպանվածության տեսանկյունից: Դրանք կարելի է բաժանել չորս խմբի՝ բյուջետային ֆինանսավորում, տնային տնտեսությունների անձնական միջոցների հաշվին կատարվող ուղղակի ծախսեր, հասարակական կազմակերպությունների կողմից ստացվող միջոցներ և ապահովագրական վճարներ: 2001-2007 թվականների ընթացքում առողջապահության ընդհանուր ծախսերն աճել են 79 մլրդից մինչև 139 մլրդ դրամի, իսկ բացարձակ թվերով միջին տարեկան աճը կազմել է 10 մլրդ դրամ: Ընդհանուր ծախսերում բյուջեի հատկացումները 2001 թվականի 23,7%-ից 2007 թվականին հասել են 47,3%-ի, իսկ տնային տնտեսությունների ծախսերը 68,7%-ից իջել 48,2%-ի: Սակայն 2008 թվականին, կապված տնտեսական ճգնաժամի հետ, բյուջետային հատկացումները դարձյալ նվազել են, իսկ տնային տնտեսությունների ծախսերն՝ ընդհակառակը, աճել 2,6 մլրդ դրամով, որի պատճառով վերջիններիս տեսակարար կշիռը

դարձյալ աճել է մինչև 50,8%-ի<sup>1</sup>: Առողջապահության ոլորտի պետական ծախսերի մակարդակը ՀՆԱ-ի նկատմամբ 2013-2015թթ. միջնաժամկետ ծրագրով դրսևորում է նվազման միտում, որը բացատրվում է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի ավարտմամբ: Եթե 2009 թվականին դրանք կազմում էին ՀՆԱ-ի 1,74%-ը, ապա 2015 թվականին կկազմեն ընդամենը 1,31%-ը:

Առողջապահության արդյունավետությանը կարող է նպաստել բժշկական ապահովագրության կիրառումը և ընդհանուր ծախսերում դրա տեսակարար կշռի աճը, որը 2008 թվականի տվյալներով կազմել է ընդհանուր ծախսերի ընդամենը 0,2%-ը<sup>2</sup>: Ձարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ առողջապահության ֆինանսավորման աղբյուրների զգալի մասը ձևավորվում է ապահովագրական մուծումների հաշվին: Փորձի սուկ արձանագրության առումով նկատենք, որ ԱՄՆ-ում բոլոր ծախսերի 43 տոկոսը կազմում է պետական ապահովագրությունը, 33 տոկոսը՝ մասնավոր ապահովագրությունը, 24 տոկոսը՝ վճարում են անմիջական սպառողները: Կանադան իրականացնում է ազգային բժշկական ապահովագրություն, որի դեպքում կառավարությունն ապահովում է բժշկական ծառայությունների բազային հավաքածու, որը բնակչությանն է տրամադրվում անվճար կամ ցածր գներով, իսկ ծախսերը ֆինանսավորվում են հարկային մուտքերի, այլ ոչ թե ապահովագրական մուծումների հաշվին:

Հայաստանում ևս, հաշվի առնելով բնակչության տարբեր խավերի ֆինանսական վիճակների տարբերությունը, կարելի է բժշկական ապահովագրության համակարգում դիֆերենցում կատարել: Այս իմաստով, հաշվի առնելով հանրապետության հնարավորությունները, ավելի հավանական է ներկայանում կանադական տարբերակի առանձին տարրերի կիրառումը: Հանրապետության բյուջեն այսօր չունի այդ հնարավորությունները կամ էլ այդ բազային հավաքածուն կարող է բաղկացած լինել ծառայությունների այնպիսի նվազագույն քանակից, որը էական ոչ մի ազդեցություն չի կարող ունենալ ներկա իրավիճակի վրա: Ինչ վերաբերում է ապահովագրական համակարգին, ապա այն նպատակահարմար է բաժանել պետական և կամավոր ապահովագրության: Պետական ապահովագրության համակարգի մեջ կընդգրկվեն բնակչության անապահով խավերը, պահանջվող ֆինանսական միջոցները ձևավորելով պետական բյուջեի ներկայիս հատկացումների և պարտադիր բժշկական ապահովագրության վճարների հաշվին, որը պետությունը կսահմանի բոլոր կազմակերպությունների ու անհատների համար: Անհատներից դրանք նույնիսկ կարելի է գանձել եկամտահարկի ձևով, աշխատավարձի 2-3 տոկոսի չափով, որը կգումարվի այսօր գանձվող հարկերին, բայց ոչ թե կմուտքագրվի բյուջե, այլ պետական բժշկական ապահովագրության հիմնադրամին և կծախսվի այդ ծառայությունների նվազագույն փաթեթի իրականացման համար: Այս ձևով կարելի է բավարարել ոչ միայն հասարակության անապահով խավերի, այլ բոլոր անդամների նվազագույն պահանջարկն առողջապահական ծառայությունների նկատմամբ, քանի որ մուծումները կարվեն ամբողջ կյանքի ընթացքում, իսկ այդ ծառայություններից շատերը կարող են ընդհանրապես չօգտվել կամ էլ օգտվել խիստ հազվադեպ: Առավել նպատակային դարձնելու համար կարելի է այդ մուծումները կատարել անվանական սկզբունքով և, կախված աշխատավարձի չափից, ձևավորել տարբեր մեծության ապահովագրական ֆոնդեր, որը թույլ կտա օգտվել տարբեր ծառայություններից: Բացի այդ շահագրգռվածություն կառաջանա լրացուցիչ մուծումներ կատարել այդ ֆոնդերին՝ ծառայություններից օգտվելու շրջանակն ընդլայնելու նպատակով: Այսինքն՝ պարտադիր բժշկական ապահովագրությունից բացի կարելի է կիրառել նաև կամավոր ապահովագրության սկզբունքը, որն արդեն յուրաքանչյուր անհատ կիրականացնի՝ ելնելով իր ցանկությունից և ֆինանսական հնարավորություններից:

Առողջապահության համընդհանուր մատչելիությունն ապահովելու նպատակով պետությունը կարող է կիրառել «մասնակցի կամ վճարի» սկզբունքը, ըստ որի գործատուները պետք է ապահովեն իրենց աշխատողների բազային ապահովագրությունը /մասնակցի/ կամ վճարեն հատուկ հարկ՝ չապահովագրված աշխատողների համար /վճարի/: Ընդ որում՝ աշխատանքը

<sup>1</sup> Առողջապահության համակարգի գործունեության գնահատումը, Եր., 2005, էջ 45:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 45:

փոխելիս մարդիկ չպետք է կորցնեն ապահովագրությունը: Որպեսզի առողջապահական հիմնարկները չմեծացնեն ծախքերը և չփորձեն, մեծ գումարներ ստանալու ակնկալիքով, պարտադրել լրացուցիչ ծառայություններ, ապահովագրական կազմակերպությունները կամ պետական ապահովագրության հիմնադրամը փոխանցումները կարող են կատարել ըստ հիվանդությունների ախտորոշման, այսինքն՝ յուրաքանչյուր հիվանդության համար նախապես հաշվարկված կայուն գումարների:

Ինչ խոսք, բժշկական ապահովագրության սույն համակարգը չի կարող զերծ լինել թերություններից, սակայն կարող է նպաստել առողջապահության առջև դրված հիմնահարցերի լուծմանը:

**Гоарик Григорян**

## **Замечания о сфере здравоохранения**

### **Аннотация**

В статье выявлены проблемы, существующие в системе здравоохранения РА и основные направления реформирования этой сферы. Исследуются источники финансирования здравоохранения, цели и приоритеты среднесрочной затратной программы 2013-2015 годов.

**Goharik Grigoryan**

## **Comments on the State of Healthcare Sector of Armenia**

### **Abstract**

The article identifies issues prevailing in the Healthcare System of Armenia, and main directions for reforming the system. The article studied healthcare funding sources, objectives and priorities of Healthcare Sector Mid-term Reform Programs in 2013-2015.

### **ՀԱՍՏԵՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

*Մ Գ Ա Ա Մ. Զոթանյանի անվան  
փնտրեսագիտության ինստիտուտի հայցորդ*

## **ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՈԱՋԱՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՐԴԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Համաշխարհային տնտեսության զարգացման հանգուցակետում յուրաքանչյուր պետության տնտեսական կյանքի արմատական բարեփոխումների հիմնախնդիրը՝ արտաքին տնտեսական կապերի լիարժեք և մաքսիմալ օգտագործումն է՝ տնտեսության վերակառուցմամբ ու աշխատանքի միջազգային բաժանման խորացմամբ: Այսօր ժամանակի հրամայական է դարձել արտահանման ռազմավարության քաղաքականության հիմնական սկզբունքների մշակումը՝ ելնելով Հայաստանի տնտեսության զարգացման առանձնահատկությունների և տնտեսական կայունության վրա նրա ազդեցության գնահատումից:

Սակայն հայրենական ձեռնարկությունները բախվել են մի շարք հիմնախնդիրների հետ, որոնցից գլխավորը՝ մշակված արտահանման ռազմավարության բացակայությունն է: Ներկայումս ձեռնարկությունների գործունեությունը արտաքին շուկայում ընթանում է խիստ մրցակցության պայմաններում, և բացակայում է պետության անմիջական միջամտությունը, իսկ արտաքին շուկայում այն կարգավորում է միջկառավարական համաձայնագրերի օգնությամբ: Ըստ այդմ, նախկինում գոյություն ունեցող մոտեցումները՝ կապված խորհրդային արտահանող ձեռնար-

կությունների գործունեության հետ, ներկայումս կորցրել են իրենց արդիականությունը: Հարցի կարգավորման նպատակով անհրաժեշտ է հիմք ընդունելով գոյություն ունեցող օտարերկրյա փորձը մշակել արտահանման ռազմավարությունը՝ ելնելով Հայաստանի տնտեսության առանձնահատկություններից:

Վերջին ժամանակներում Հայաստանում նկատվում է արտահանման ակտիվացում: Անգամ այն ձեռնարկություններում, որտեղ իրականացվում էր արտահանումը, չկար մշակված հստակ արտահանման ռազմավարություն, իսկ ներքին շուկայում գործունեությունն ընթանում էր առավելապես պետության միջամտությամբ: Համապատասխանաբար, մոտեցումները և հետազոտությունները եկան այն համոզման, որ արտահանմանը միտված խորհրդային մոտեցումները կորցրին իրենց արդիականությունը, քանի որ ձեռնարկությունների արտահանման գործունեությունը ուներ բոլորովին այլ ուղղվածություն և կախված էր ոչ թե տնտեսական պայմաններից, այլ պետության անմիջական մասնակցությունից:

Արտահանման քաղաքականությունը ձևավորում է խնդիրների մի ամբողջություն, որը ներհատուկ է դեպի արտաքին շուկաներ կողմնորոշում ունեցող տվյալ կոնկրետ կազմակերպությանը: Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր կազմակերպության կայուն զարգացման հիմքը՝ երկարաժամկետ հեռանկարում արդյունավետ և գործող ռազմավարական պլանի առկայությունն է, հաշվի առնելով սպառողների պահանջները՝ արտադրանքի որակի և առաջարկվող ծավալների վերաբերյալ:

Առավել արդյունավետ արտահանման ռազմավարությունը կապված է առավել լուրջ դժվարությունների հետ, որոնք ի հայտ են գալիս արտասահմանյան շուկաներում ապրանքների իրացման հետ: Ապրանքի մուտքը դեպի այդ շուկաները պլանավորումը պահանջում է մի շարք արտաքին և ներքին գործոնների մանրամասն վերլուծություն, որոնք կարող են հիմք հանդիսանալ և նպաստել ներքին շուկայում կայուն դիրքի գրավմանը՝ դրանք հաստակ վերլուծության դեպքում, կամ էլ հակառակը, դժվարացնել խնդիրների իրագործումը պլանավորված շուկաներ դուրս գալու համար:

Ներկայումս հայաստանյան ձեռնարկությունները գրեթե չեն կիրառում համակարգված մոտեցումներ արտահանման ռազմավարության մշակման ընթացքում, որի արդյունքում արտահանման գործարքները կրում են միանգամյա բնույթ և հենվում են սպառողների ժամանակավոր պահանջումների բավարարման վրա: Մասնագիտացված արտահանման ծառայությունների բացակայությունը, որոնք կարող են էապես օգնել նպատակային արտահանման ռազմավարության մշակմանը, ազդեցություն է գործում միջազգային շուկաներում կազմակերպությունների հնարավոր աճի վրա՝ կապված միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների մասնակցության հետ:

Արտահանման ռազմավարության մշակման խնդիրները և հարցերը քննարկվել են Ի. Անսոֆի, Ֆ. Կոտլերի, Գ. Գորդոնի, Գ. Մինգբերգի, Ա.Թմսոնի, Ջ. Ստիկլանդի, Մ. Մեսկոնի, Պ. Դրաքերի, Ա.Նունովի, Ն. Տրենեկի, Պ. Ջավյալովի և Վ.Դեմիդովի աշխատություններում:

Կազմակերպության վրա ազդում են արտաքին միջավայրի բազմաթիվ գործոններ, որոնցից յուրաքանչյուրի դերն ու նշանակությունը տարբեր է: Ընդգծելով արտաքին միջավայրի ներգործության կարևորությունը, Ջորջ Շտեյները և Ջոն Մայները «Կառավարման քաղաքականություն և ռազմավարություն» աշխատության մեջ նշում են, որ եթե նախկինում ձեռնարկության ղեկավարությունը իր ուշադրությունը կենտրոնացնում էր արտաքին միջավայրի սոսկ տնտեսական և տեխնիկական փոփոխությունների վրա, ապա ժամանակակից պայմաններում կադրերին ներկայացվող պահանջների, սոցիալական արժեքների, քաղաքական ուժերի և այլ գործոնների փոփոխությունը ձեռնարկության ղեկավարությանը պարտադրում է ընդլայնել արտաքին միջավայրի գործոնների հաշվառման մասնաբաժինը:


Կ. Բոունների կողմից առաջարկված արտաքին միջավայրի գործոնների մոդելը<sup>1</sup>, կարծում ենք իրենից ներկայացնում է Պորտերի կողմից առաջարկված 5 մրցակցային ուժերի առավել

1 Боумэн К. Основы стратегического менеджмента./Пер. с англ. под ред. Л.Г.Зайцева, М.И.Соколовой. - М.: Банки и биржи, ЮНИТИ, 1997. - 175 с.



զարգացված հիմնադրույթը: Այդ համատեքստում արտաքին միջավայրի հինգ գործոններից երեքը, մակրոմիջավայրում ազդեցություն են գործում կազմակերպության վրա մրցակցային ուժերի կողմից (գծապատկեր 1):

Գծապատկեր 1



Նշենք, որ Պորտերը մրցակցային առավելության բաղադրիչներ է համարում գործոնային պայմանները, պահանջարկը, հարակից և սպասարկող ճյուղերում իրավիճակը և վերջապես, ֆիրմայի ռազմավարությունը, ներքին շուկայում մրցակցային միջավայրի առկայությունը: Երկրորդ բաղադրիչը՝ պահանջարկը, ֆիրմայի զարգացման որոշիչն է: Այդ դեպքում, արտաքին շուկայի ներուժային կարողություններից ներքին պահանջարկի փոխադարձ կախվածության աստիճանը վճռականորեն ազդում է ֆիրմայի վիճակի վրա: Երրորդ բաղադրիչը ենթադրում է հարակից և սպասարկող ճյուղերի՝ համապատասխան սարքավորումներով ապահովվածությունը, մատակարարների, առևտրային, ֆինանսական կառույցների հետ սերտ համագործակցությունների առկայությունը: Ֆիրմային ռազմավարությունը և ներքին շուկայում մրցակցային իրավիճակը նույնպես համարվում են մրցակցային առավելության ապահովման կարևոր բաղադրիչներ: Ֆիրմայի կողմից ընտրված մրցակցային իրավիճակը և կազմակերպական կառուցվածքը ոչ միայն անհրաժեշտ ճկունություն են հաղորդում ֆիրմայի գործունեությանը, այլև ստեղծում են անհրաժեշտ նախադրյալներ՝ ազգային առևտրում բարեհաջող գործունեության համար: Լուրջ խթան է ներքին շուկայում բավարար մրցունակությունը: Ընդ որում, եթե վերջինս ապահովվում է միայն պետության մասնակցությամբ, ապա դա կարող է հանգեցնել ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Այս բաղադրիչները առանձին և բոլորը միասին, որպես համակարգ, ստեղծում են այն միջավայրը, որտեղ ծնվում և գործում են տվյալ երկրի ֆիրմաները:

Ռազմավարական կառավարման ոլորտում այնպիսի տնտեսագետներ, ինչպիսիք են Դ.Դենիելսը, Լ.Ռադեբան, Ա.Թոմպսոնը գտնում են, որ կազմակերպության վրա արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը և կազմակերպության գործունեության առանձին գործողություններ կրում են մեկ մակարդակի բնույթ: Դ.Դենիելսը առանձնացնում է արտաքին միջավայրի աշխարհագրական, պատմական, քաղաքական, իրավական, տնտեսական և մշակութային գործոններ<sup>1</sup>:

Գծապատկեր 2-ում ներկայացված են Ա.Թոմպսոնի և Ա.Ստրիկլենդի կողմից առաջարկվող այն ելակետային գործոնները, որոնք ազդում են ռազմավարության ընտրության վրա: Ներկայացված գծապատկերը հնարավորություն է տալիս ոչ միայն առանձնացնել արտաքին և ներքին գործոնները, որոնք ազդեցություն են գործում կազմակերպության ռազմավարության վրա, այլ նաև որոշել դրա մշակման բազային հիմնադրույթները: Հեղինակների կողմից առանձ-


<sup>1</sup> Дэниелс Джон Д., Радеба Ли Х. Международный бизнес: внешняя среда и деловые операции./Пер. с англ., 6-е изд. - М.: Дело, 1998. - 456 с.

նացված գործոնները բավականաչափ ճկուն են և ինֆորմատիվ: Սակայն ռազմավարության մշակման ընթացքում մաթեմատիկական մեթոդների կիրառությունը նշված գործոնների դեպքում, օրինակ սեփական ձգտումները և կորպորատիվ կուլտուրան, կարող է լինել բավականաչափ բարդ ու դժվար:

Համաձայն նշված մոտեցման առանձնացվում են արտաքին գործոնների երկու մակարդակներ՝ ուղղակի՝ միկրոմիջավայր և անուղղակի ներգործության՝ մակրոմիջավայրի գործոններ:

**Գծապատկեր 2**

**Գործոններ, որոնք ազդում են կազմակերպության ռազմավարության ընտրության վրա<sup>1</sup>**



Պետք է ուշադրություն դարձնել, որ արտաքին գործոնների երկու մակարդակները զգալիորեն առավելություն են ստանում նաև ներքին շուկայում աշխատելիս: Նշված տեսանկյունից արտահանման ռազմավարության վրա ազդեցություն են գործում միկրոմիջավայրի և մակրոմիջավայրի գործոնները՝ ինչպես արտահանող կազմակերպության երկրում, այնպես էլ ներմուծվող երկրում:


Այսպիսով, արտահանման ռազմավարությունը մշակելիս, կարծում ենք, առավել նպատակահարմար է կիրառել արտաքին գործոնների 4 մակարդակներից կազմված մոդելը (գծապատկեր 3): Նշված մոդելը հնարավոր է կիրառել արտահանման ռազմավարության մշակման ընթացքում էական գործոնների բացահայտման նպատակով:

Ինչպես արդեն նշել ենք, արտահանման ռազմավարությունն իրենից ներկայացնում է մասնավոր ռազմավարությունների համախմբում: Այսպիսով, արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը ընդհանուր արտահանման ռազմավարության վրա կարող է բնութագրվել դրա առանձին մասնավոր արտահանման ռազմավարություններով: Մասնավոր արտահանման ռազմավարության իրականացման ընթացքում արտահանող կազմակերպության երկրում դրա վրա անմիջականորեն մեծ ազդեցություն են գործում արտահանվող ապրանքի արտադրության համար անհրաժեշտ տարբեր հումքերի մատակարարները:

Նշենք, որ արտահանողի երկրում միկրոմիջավայրի գործոնների շարքում չեն ենթադրվում տեղական օրենսդրական մարմինները, քանի որ Հայաստանում, ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի երկրների, այդ գործոնի ազդեցությունը բավականին քիչ է:

<sup>1</sup> Герчикова И.Н. Менеджмент: Учебник. - 3-е изд., перераб. и доп. - М.: Банки и биржи, ЮНИТИ, 1997. - с. 701

**Կազմակերպության արտահանման ռազմավարության վրա արտաքին գործոնների ազդեցության չորս մակարդականի մոդելը**



Արտահանող երկրում մակրոմիջավայրի գործոնների շարքում մենք առանձնացնում ենք տնտեսական, քաղաքական և իրավական գործոնները: Արտահանողի երկրում մասնավոր արտահանման ռազմավարության վրա միկրոմակարդակում ազդեցություն են գործում մրցակիցները և սպառողները, իսկ մակրոմակարդակում՝ քաղաքական, տնտեսական, իրավական և սոցիալ-մշակութային գործոնները:

Ենթադրում ենք, որ յուրաքանչյուր նշված գործոնների ազդեցությունը կազմակերպության մասնավոր արտահանման ռազմավարության վրա միանշանակ չէ: Առավել էական գործոնների բացահայտման նպատակով անհրաժեշտ է իրականացնել դրանց ազդեցության աստիճանի քանակական գնահատում: Յուրաքանչյուր գործոն, ինչպես նաև կազմակերպության մասնավոր արտահանման ռազմավարությունները կարող են բնութագրվել մի շարք քանակական ցուցանիշներով: Մասնավոր արտահանման ռազմավարության քանակական ցուցանիշ կարող է ծառայել մրցակցային արտահանվող շուկայում դիտարկվող ապրանքի վաճառքի ծավալը:

Տարբեր ճյուղերում և ոլորտներում ձեռնարկությունների համար ռազմավարական պլանավորման ժամանակային դիապագոնի աստիճանակարգված ժամկետները և մոտեցումները՝ կախված տնտեսական զարգացման գործոններից, քննարկվել են Ա. Մարշալի, Մ. Բուրդայի, Փ. Սամուելսոնի, Յուկաչիցի և այլոց աշխատություններում:

Ընդհանուր առմամբ, ամփոփելով կատարված բոլոր հետազոտությունները նշված խնդիրների վերաբերյալ, որոնք ուղղված են արտահանման ռազմավարության մշակմանը և պլանավորմանը, պետք է նշել, որ նշված բոլոր խնդիրների, գործոնների յուրացումը, վերլուծությունը վերաբերում է հիմնականում կազմակերպության ընդհանուր պլանավորմանը: Ընդ որում, գործոնները և պահուստները, որոնք ազդում են կազմակերպության գործունեության վրա, նշվում են որպես կազմակերպության ռազմավարության երկրորդային գործոններ, և դրանց ազդեցությանը չի տրվում բավարար ուշադրություն, և տարբեր շուկաներում արտահանման ռազմավարության պլանավորման ընթացքում չի իրականացվում դիֆերենցիալ աստիճանակարգվածություն:

Արտաքին շուկաներում աշխատանքը ներքին շուկաների համեմատությամբ առանձնանում է բարձր ռիսկով, որոնք պայմանավորված են տարբեր սոցիալ-մշակութային, տնտեսական, քաղաքական, գործոններով և այլ երկրներում գործող իրավական մեխանիզմով: Այս տեսանկյունից յուրաքանչյուր անգամ արտահանման ռազմավարությունը մշակելիս պետք է գնահատել, թե որքանով կարող են ազդել այս կամ այն ներքին գործոնները արտաքին շուկաներում:

Կազմակերպության ռազմավարության դերի բնորոշման նպատակով արդյունավետ արտահանման գործունեության կառուցման սահմաններում, ելնելով կատարված գիտական հետազոտություններից կարելի է բնորոշել «արտահանման ռազմավարությունը» որպես հիմնավորված ծրագրային գործողություններ, որոնք բնութագրում են արտաքին շուկայում կազմակերպության նպատակային, շահավետ և առաջնահերթ ուղղությունները՝ կազմակերպության գոյություն ունեցող ռեսուրսների սահմաններում՝ ելնելով միջազգային շուկաների պահանջներից:

**Гамлет Тадевосян**

### **Основные проблемы современной методологии в разработке стратегии экспорта, в контексте воздействия внешних факторов**

#### **Аннотация**

В данной статье исследуются методологические проблемы разработки стратегии экспорта в современных условиях, акцентируя роль воздействия внешних факторов. В частности, подчеркивается степень воздействия внешних факторов на разных уровнях деятельности компании и дается оценка их воздействия.

**Hamlet Tadevosyan**

### **Modern Methodological Issues on Designing Export Strategy in the Framework of External Environment Factors**

#### **Abstract**

The article studies methodological issues of designing export strategy by private companies in the modern world, stressing the role of impact of the external factors. In particular, the article highlights the impact the external environment factors have on different company performance areas, and assesses the impact.

**ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԽՐԱԽՈՒՄՍԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Երկրի տնտեսական զարգացման հիմնախնդիրը միշտ գտնվել է տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Դրան անդրադարձել են գրեթե բոլոր տնտեսագիտական դպրոցների ներկայացուցիչները՝ ինչպես դասականները, քեյնսականները, այնպես էլ մերօրյա տնտեսագետները: Ներկայիս գլոբալացման պայմաններում տնտեսական զարգացմանը նպաստող ներքին գործոններից զատ մեծ կարևորություն են ստանում նաև արտաքին գործոնները: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր երկրի ներտնտեսական բարենպաստ զարգացումները իրենց արտացոլումն են ստանում արտաքին տնտեսական կապերում արտահանման բազմազանեցված (այսուհետ՝ դիվերսիֆիկացված) կառուցվածքի, դրա տեսականու ընդլայնման և որակի բարձրացման, գլոբալ մրցակցային առավելություններ ունեցող ապրանքների արտադրության և արտահանման, ինչպես նաև ներմուծման կառուցվածքի արդյունավետացմանն ուղղված փոփոխությունների միջոցով: Տվյալ հետազոտության շրջանակներում մենք կանդրադառնանք արտահանման խթանման համար անհրաժեշտ այն գործիքակազմի մշակմանը, որը դեռևս չի կիրառվում ՀՀ-ում:

Ներկայումս ՀՀ արտաքին առևտրի և հատկապես՝ արտահանման կառուցվածքը դեռևս հեռու է երկարատև կայուն տնտեսական աճի ապահովման հիմք հանդիսանալուց:

**ՀՀ արտահանման կառուցվածքը՝ ըստ հիմնական ապրանքախմբերի  
(2000-2011թթ., տոկոսներով)<sup>1</sup>**

Ապրանքային խմբի անվանումը	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Պատրաստի սննդի արտադրանք	9.1	14.0	10.8	10.5	9.6	9.9	9.6	12.5	16.5	14.3	13	13.8
Հանքահումքային մթերքներ	12.4	11.1	8.3	7.3	13.8	9.6	13.9	15.1	16.3	18.9	27.3	30
Թանկարժեք քարեր և մետաղներ	40.4	35.9	51.1	51.2	41.4	34.5	30.6	18.1	16.3	15	13.3	14.8
Ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանից	14.7	8.3	8.9	13.2	19.0	33.1	28.5	33.9	32.4	33.1	32.9	27.4
<b>Ընդհանուր</b>	<b>76.6</b>	<b>69.3</b>	<b>79.1</b>	<b>82.2</b>	<b>83.9</b>	<b>87.1</b>	<b>82.6</b>	<b>79.6</b>	<b>81.5</b>	<b>81.3</b>	<b>86.5</b>	<b>86</b>

ՀՀ-ում արտահանումը 2000-2011թթ. բավականին բարձր աստիճանի կենտրոնացվածություն ուներ (աղյուսակ 1)<sup>1</sup>՝ 4 ապրանքախմբերի (թանկարժեք քարեր և մետաղներ, ոչ թանկարժեք մետաղներ, պատրաստի սնունդ, հանքահումքային ապրանքներ) միջինում բաժին էր ընկնում արտահանման 84%-ը: Ընդ որում, արտահանման կենտրոնացվածությունից բացի հարկ է նշել, որ արտահանման մեջ գերակշռում է միջանկյալ հումքը, որի արտադրությունում ստեղծվող ավելացված արժեքի կշիռը խիստ սահմանափակ է և բացի այդ, այն ենթակա է միջազգային գների մշանակալի տատանումներին, ինչն էլ ավելի է մեծացնում արտահանման խոցելիությունը: Ուստիև ՀՀ արտահանման խթանման քաղաքականության կոնտեքստում առաջնային ենք համարում արտահանման դիվերսիֆիկացիայի խնդրի լուծումը, որի համար, ինչ խոսք, նախ և առաջ անհրաժեշտ է միջազգայնորեն մրցունակ ապրանքների թողարկումը: Այս խնդրի լուծման նպատակով ներկայումս ՀՀ կառավարությունը իրականացնում է մի շարք քայլեր, որոնք, կարծում ենք, կտան անհրաժեշտ արդյունք: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ միջազգայ-

<sup>1</sup> Հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից՝ ըստ ՀՀ ԱՎԾ հրապարակումների:

նորեն մրցունակ արտադրանք թողարկելուն զուգահեռ անհրաժեշտ է մտածել մեխանիզմներ դրա արտահանմանն օժանդակելու համար, որպեսզի կարողանանք ապահովել տնտեսական աճով առաջնորդվող արտաքին առևտրի աճ:

Ներկայումս ՀՀ կառավարությունն արդեն իսկ իրականացնում է զգալի մեխանիզմներ արտահանման խթանման նպատակով, ինչպիսիք են արտահանման ուղղվածություն ունեցող ձեռնարկություններին տրամադրվող արտոնյալ վարկերը, ֆակտորինգը, պետական երաշխիքները, արտահանման ապահովագրության պետական ֆինանսավորումը և այլն: Արտահանման ծավալների ավելացման նպատակով ձեռնարկություններին տրամադրվում են նաև հարկային արտոնություններ՝ ԱԱՀ-ի ետվերադարձ, որը սակայն, դեռևս զգալիորեն տևական գործընթաց է իրենից ներկայացնում: Նշենք, որ ԱԱՀ-ի ետվերադարձման ուշացումը համարժեք է լրացուցիչ թաքնված հարկազանձմանը արտահանողից: Ուստի կարծում ենք, որ տվյալ մեխանիզմն անհրաժեշտ է վերանայել գործընթացի տևողությունը հնարավորինս կրճատելու նպատակով:

Այսօր ՀՀ-ում կիրառվող արտահանման աջակցմանն ուղղված տնտեսական քաղաքականությունը անհամեմատ բարելավված է՝ համեմատած մոտ 10 տարի առաջ իրականացվող քաղաքականության հետ, այդուհանդերձ՝ կան զգալի բացթողումներ և թերացումներ, որոնք էլ անհապաղ լուծում են պահանջում՝ ՀՀ տնտեսության հետագա կայուն զարգացում ապահովելու նպատակով:

Տվյալ հետազոտության շրջանակներում, սակայն, կփորձենք համաշխարհային փորձի հետազոտման արդյունքում առաջարկել ՀՀ արտահանման խթանման իրական և իրագործելի հիմնադրույթներ, ինչպես նաև առաջարկել արտահանման և տնտեսական աճին նպաստող ներմուծմանն ուղղված տնտեսական քաղաքականության քայլերի ամբողջություն:

Գաղտնիք չէ, որ ներկայումս արտահանման շուկաների վերաբերյալ համակարգված տեղեկատվությունը Հայաստանում բացակայում է, ինչն էլ մեծապես խոչընդոտում է արտահանման հնարավոր աճին՝ իր հերթին նպաստելով նաև հնարավոր տնտեսական աճի տեմպերի դանդաղեցմանը: Ուստի, արտահանմամբ պայմանավորվող տնտեսական աճը Հայաստանում իրականություն դարձնելու նպատակով կարևորում ենք վերոնշյալ խնդրի լուծումը:

Ապրանքների արտահանմանն օժանդակելու նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ է արտասահմանում ստեղծել ներկայացուցչություններ, որոնց միջոցով հայկական արտադրող ընկերությունները կարող են իրականացնել մարկետինգի և իրացման կազմակերպումը ներկայացուցչության գտնվելու վայրում: Ընդ որում՝ ներկայացուցչությունները կարելի է ստեղծել արտերկրում գործող հայկական դեսպանատներին կամ հյուպատոսություններին կից, որոնց վրա էլ կդրվի տեղում հայ արտադրողների արտադրանքի առաջխաղացումն ապահովող գործառույթ: Ներկայացուցչությունը հայ արտադրողներին կտեղեկացնի նաև իր գտնվելու վայրում կազմակերպվող առևտրային ցուցահանդեսներին, դրանց մասնակցության ձևերին, ինչպես նաև միասնական հայկական տաղավարով հանդես կգա ցուցահանդեսին՝ ներկայացնելով այն հայկական ընկերությունների արտադրանքը, որոնք անձամբ ներկա չեն գտնվում ցուցահանդեսին: Ներկայացուցչության գործունեության կարևոր բաղադրիչ կլինի այն, որ ներկայացուցչությունը, նախապես ստանալով պատվերներ, դրանք կներմուծի ընդհանուր տեղեկատվական բազա, որից հետո ապրանքը կառաքվի համապատասխան ներկայացուցչության պահեստ ու իրացման կետեր: Այսպիսով՝ նախ և առաջ հայկական ընկերությունները ստիպված չեն լինի առանձին-առանձին մարկետինգային հետազոտություններ իրականացնել՝ խնայելով ինչպես ֆինանսական միջոցներ, այնպես էլ ժամանակ և մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև կխուսափեն հեռավորության պատճառով շատ հաճախ սխալ մարկետինգային ռազմավարության ընտրությունից: Հայաստանյան բարիքի արտահանման համար այս մոդելի կիրառումը կարող է շատ արդյունավետ լինել: Ներկայումս Հայաստանը առևտրային ներկայացուցիչ ունի Բրյուսելում (Եվրամիության անդամ երկրներում ՀՀ առևտրային ներկայացուցիչ) և Մոսկվայում (ՌԴ-ում ՀՀ առևտրային ներկայացուցիչ), սակայն հասկանալի է, որ ներկայացուցչությունների քանակը դեռևս շատ հեռու է բավարար լինելուց, իսկ, առավել ևս, ներկայումս դրանք չեն իրականացնում այն գործառույթները, որոնք մենք առաջարկել ենք: Նշենք, որ մեր

կողմից առաջարկվող ներկայացուցչությունների մոդելը ենթադրում է ԱՄՆ առևտրի նախարարության կողմից բավական հաջողությամբ իրականացված և մինչ օրս իրականացվող քաղաքականության տեղայնացումը Հայաստանում<sup>1</sup>:

Այժմ անդրադառնանք աշխարհագրական տեսանկյունից դրանց ստեղծման առաջնահերթությանը և ֆինանսավորման խնդիրներին: Բնականաբար, դատելով տնտեսական արդյունավետության տեսանկյունից, կարող ենք նշել, որ Հայաստանը չի կարող աշխարհի բոլոր երկրներում կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում ստեղծել ներկայացուցչություններ, ուստի անհրաժեշտ է դրանք ստեղծել ըստ ՀՀ արտահանման ներկայիս գործընկեր երկրների և մոտ ապագայում արտահանման հնարավոր շուկաների կոնտեքստում: Այսպիսով՝ նախ և առաջ անհրաժեշտ ենք համարում ներկայումս ՀՀ երկու առևտրային ներկայացուցչությունների գործունեության և գործառույթների վերափոխում՝ որպես հիմնական գործառույթ ընտրելով ՀՀ արտահանման խթանումը: Ընդ որում, կարծում ենք, որ Ռուսաստանում գտնվող առևտրային ներկայացուցչությունը պետք է պատասխանատու լինի ԱՊՀ երկրների շուկաների ուսումնասիրության և դրանցում հայկական ապրանքների առաջխաղացման համար (առաջնահերթության սկզբունքով՝ կարող ենք նշել, որ առաջնահերթ պետք է ուսումնասիրվեն Ռուսաստանի, Բելառուսի և Ուկրաինայի, հետո նոր մյուս ԱՊՀ երկրների շուկաները, քանզի ՀՀ հիմնական արտահանման համար կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում ԱՊՀ երկրներից կարևորվում են այդ երեքի շուկաները): Ավելի երկարաժամկետ հեռանկարում կարող ենք առաջարկել ԱՊՀ երկրների շուկաների ուսումնասիրության համար ստեղծել ևս մեկ ներկայացուցչություն, սակայն սա դեռևս առաջնային անհրաժեշտություն չունի: Բելգիայում գտնվող ներկայացուցչության հիմնական ֆունկցիան պետք է լինի Եվրամիության երկրների շուկաների ուսումնասիրությունը և դրանցում հայկական ապրանքների առաջխաղացումը (առաջնահերթության սկզբունքով՝ կարող ենք նշել, որ առաջնահերթ պետք է ուսումնասիրվեն Բելգիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների, Ֆրանսիայի, Իսպանիայի, Շվեյցարիայի և Բուլղարիայի շուկաները, հետո նոր մյուս ԵՄ երկրներին): Առավել երկարաժամկետ հեռանկարում՝ ՀՀ արտահանման ծավալների և աշխարհագրության ընդլայնման պարագայում կարող ենք առաջարկել ԵՄ մի քանի երկրում բացել ներկայացուցչություններ՝ տարածքի մոտիկության սկզբունքից ելնելով: Բելգիայի առևտրային ներկայացուցչությունը պատասխանատու կլինի Բելգիայում, Գերմանիայում, Նիդեռլանդներում և մոտակա այլ երկրներում (կախված հետագայում ԵՄ շուկաների շրջանակում ՀՀ արտահանման աշխարհագրական դիվերսիֆիկացիայից) հայկական ապրանքների արտահանման առաջխաղացման համար, նոր ներկայացուցչություններ կստեղծվեն Ֆրանսիայում՝ Ֆրանսիայի, Իսպանիայի, Շվեյցարիայի, Իտալիայի և մոտակա այլ երկրների համար, Բուլղարիայում՝ Բուլղարիայի, Հունաստանի և մոտակա այլ երկրների համար, անհրաժեշտության դեպքում նաև՝ Մեծ Բրիտանիայում: Թեպետ կարճաժամկետ և միջնաժամկետ ժամանակահատվածում անհրաժեշտ է բավարարվել Բելգիայում գտնվող ներկայացուցչության գործունեությամբ: Ըստ առաջնահերթության՝ կարծում ենք, ներկայումս հարկավոր է առևտրային ներկայացուցչություններ բացել նաև ԱՄՆ-ում՝ ԱՄՆ-ի և Կանադայի շուկաների համար և Լիբանանում՝ Մերձավոր Արևելքի շուկաների համար<sup>2</sup>: Իսկ Իրանի և Վրաստանի շուկաների ուսումնասիրությունով, կարծում ենք պետք է զբաղվի ԶՀԳ-ն, որը կհանդիսանա նաև որպես բոլոր ներկայացուցչությունների գործունեությունը համակարգող և վերահսկող մարմին<sup>3</sup>:

<sup>1</sup> ԱՄՆ-ի առևտրի նախարարությունը ունի հատուկ ստեղծված «Առևտրային ծառայություն» ստորաբաժանումը, որի մոտ 2500 աշխատակիցներ գտնվում են աշխարհի շուրջ 70 երկրներում և իրականացնում են մեր կողմից առաջարկվող ներկայացուցչությունների համանման ֆունկցիաներ:

<sup>2</sup> Այսօր ոլորտի արտահանման հիմնական շուկա են հանդիսանում ԱՊՀ երկրները, հատկապես՝ ՌԴ-ն, իսկ ԱՄՆ-ի, Մերձավոր Արևելքի և Եվրամիության շուկաներ կատարվող արտահանումների ծավալները բավականին փոքր են, սակայն ունեն աճի լուրջ հեռանկարներ:

<sup>3</sup> Կարծում ենք, որ ներկայացուցչությունների վերահսկման համար առանձին մարմնի ստեղծման անհրաժեշտություն չկա, պարզապես կարելի է ԶՀԳ-ն վերապրոֆիլավորել հիմնականում որպես արտահանման խրախուսման համար պատասխանատու կառույց, սակայն, եթե կառավարությունը արտահանման խթանման և ներկայացուցչությունների վերահսկման նոր մարմնի ստեղծման անհրաժեշտություն տեսնի, ապա Իրանի և Վրաստանի շուկաների ուսումնասիրությունը կիրականացնի այդ մարմինը:

Արտահանման խթանման կազմակերպության և դրան կից ներկայացուցչությունների գործունեության ֆինանսավորման համար մենք ուսումնասիրել ենք նման կազմակերպությունների ֆինանսավորման միջազգային փորձը և դրանց առաձին տարրերի համադրմամբ առաջարկել ԶՀ ներկայիս պայմաններում դրա տեղայնացման հնարավոր առավել արդյունավետությունն ապահովող տարրերակ<sup>1</sup>:

Ներկայացուցչությունների գործունեության ֆինանսավորումը, կարծում ենք, սկզբնական շրջանում պետք է իրականացվի պետական միջոցների հաշվին, իսկ հետագայում արդեն պետական և մասնավոր ֆինանսավորման զուգորդմամբ հետևյալ մեխանիզմով. սկզբում անհրաժեշտ է պետական միջոցներով կազմակերպել ըստ առաջնահերթության առաջնային համարվող ներկայացուցչությունների գործունեությունը, այնուհետև, երբ այս գործընթացը կտա իր արժանի արդյունքը՝ ձեռնարկությունները հստակ տվյալներ կունենան արտահանման արդեն իսկ հետազոտված շուկաների մասին և կընդլայնեն արտահանումը, կառաջանա անհրաժեշտություն ներկայացուցչությունների աշխարհագրության ընդլայնման համար, այդ պարագայում արդեն ձեռնարկությունները ևս պատրաստ կլինեն մասհանումներ տրամադրել իրենց շահույթից այս գործընթացին աջակցելու նպատակով, այսպես ասած՝ այսօր փոքր ներդրում կկատարեն վաղը արտահանման մեծ շուկայի մասին տվյալներ, հետևաբար և՛ ավելի մեծ հասույթ ստանալու նպատակով:

Ինչ խոսք, Հայաստանում ներկայումս արտահանման խրախուսման նպատակով բավականին քայլեր են արվում, սակայն դրանցից որոշները դեռևս անհրաժեշտ արդյունավետություն չեն ապահովում: Ուստի, կարևորում ենք արտահանման խթանման նոր միջոցների ներդրմանը զուգահեռ կատարելագործել նաև արդեն իսկ առկա միջոցառումները: Օրինակ՝ «Լավագույն արտահանող ձեռնարկություն» հավաստագիր տալու փոխարեն (ԶՀ առևտրաարդյունաբերական պալատը (այսուհետ՝ ԱՊ) 2006թ. սկսած տրամադրում է նման հավաստագրեր) կարելի է արտահանման լավագույն արդյունք (վերջինը կարելի է ինդեքսավորել ըստ արտահանվող արտադրանքի կառուցվածքի փոփոխության, արտահանման աշխարհագրության փոփոխության և արտահանման ծավալի փոփոխության) ցուցաբերած մի քանի ձեռնարկության տրամադրել արտոնություն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են աշխատողների մասնագիտական վերապատրաստման ծախսերի մասնակի փոխհատուցում, արտահանման ուղղվածության վարկերի, լիզինգի մասնակի փոխհատուցում, հարկային բեռի թեթևացում և այլ աջակցություն՝ կախված ձեռնարկության գործունեության ոլորտից:

Իհարկե, հասկանալի է, որ վերոնշյալ քաղաքականությունն ամբողջությամբ և համակարգված հնարավոր չի լինի իրականացնել առանց այդ քաղաքականությունն իրականացնող և դրա համար պատասխանատու կազմակերպության ստեղծման: Ուստի, արտահանման խրախուսման ծրագրերի իրականացման գործառույթը անհրաժեշտ ենք համարում վերագրել որևէ

<sup>1</sup> Արտերկրում ունեցած ներկայացուցչությունների առաջարկվող մոդելի միջոցով արտահանման խթանման հաջող փորձ է արձանագրել Շվեյցարիան: Ընդ որում, Շվեյցարիայում դրանց գործունեությունը համակարգում է կիսապետական մի կառույց (OCEK), որը 35%-ով ֆինանսավորվում է պետական բյուջեից, իսկ 65%-ը կազմում են դրա ծառայություններից օգտվողի կողմից իրականացված վճարումներն ու մասհանումները: Հարկ է նշել, որ ներկայացուցչությունների միջոցով արտահանման խթանման փորձ կիրառում է նաև Հնդկաստանը, որն առաջարկում է ներկայացուցչությունների ֆինանսավորման մեկ այլ հետաքրքիր տարրերակ. էքսիմ բանկի միջոցով արտոնյալ վարկային գծեր են տրամադրվում արտերկրում գտնվող ներկայացուցչություններին՝ իրենց տեղակայման վայրում հնդկական ապրանքների ներմուծմանն աջակցելու համար: Սակայն, կարծում ենք, որ ֆինանսավորման նշված երկու տարրերակներից Հայաստանում կիրառելու տեսանկյունից առավել ձեռնտու կլինի առաջին տարրերակը, քանզի երկրորդի նկատմամբ վերահսկողություն իրականացնելը բավական դժվար կլինի և կպարունակի կոռուպցիոն ռիսկեր:

Ֆինանսավորման մեկ այլ եղանակ կարող է հանդիսանալ կանադական արտահանման խթանման գործակալության փորձը, որը մասնավոր կազմակերպություն է, ունի սեփական կապիտալ և իր գործունեությունն իրականացնում է առևտրային սկզբունքով՝ վարկավորումն իրականացնում է բանկային տոկոսադրույքով, իսկ արտահանման վարկերի ապահովագրության պարագայում զանձում է միջնորդավճար: Բնականաբար, բացի ֆինանսավորումից տրամադրում է նաև արտահանման շուկաների վերաբերյալ խորհրդատվություն, իսկ ֆինանսավորման համար ռեսուրսներ հայթայթում է կազմակերպության ներդրումների ներգրավման ստորաբաժանումը, որը համաշխարհային ֆինանսական շուկաներում արժեթղթեր է վաճառում: Նշենք, որ արտահանման խթանման կազմակերպության նման ֆինանսավորում մեր կողմից ընդունելի է մասամբ, քանզի կարծում ենք, որ զոնե սկզբնական շրջանում այդ կազմակերպությունը պետք է լինի պետության վերահսկողության ներքո՝ վերահսկողության մեխանիզմների արդարացի գործունեության համար, և, բացի այդ, համաշխարհային ֆինանսական շուկաներից ֆինանսական միջոցների ներգրավումը բավականին բարդ կլինի կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում, ուստիև սկզբնական շրջանում կազմակերպությունը կֆինանսավորվի պետական միջոցներով՝ աստիճանաբար զուգորդելով այն մասնավոր ընկերությունների մասհանումներով:



կոնկրետ կազմակերպության (մեր կարծիքով առավել նպատակահարմար կլինի, եթե դրանով զբաղվի Ջարգացման հայկական գործակալությունը), որն իր գործունեությունը կհամակարգի ՀՀ էկոնոմիկայի, ֆինանսների, արտաքին գործերի նախարարության, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և արտահանմանն այս կամ այն չափով նպաստող այլ կազմակերպությունների հետ<sup>1</sup> մշակելով և պարբերաբար թարմացնելով Արտահանման խրախուսման ռազմավարական ծրագիր: Ներկայումս և՛ էկոնոմիկայի նախարարության, և՛ ՋՀԳ (Ջարգացման հայկական գործակալություն), և՛ ԱԱՊ գործառույթների մեջ ներառված է արտահանման խրախուսման գործառույթը, սակայն, ըստ էության, այն ըստ արժանվույն չի իրականացվում հենց այն պատճառով, որ դրա համար պատասխանատու են միմյանցից անկախ կառույցներ: Հենց այս նկատառումներով էլ անհրաժեշտ է տվյալ գործառույթը տրամադրել մեկ կառույցի, որը կզբաղվի տարբեր ոլորտների համար SWOT-վերլուծությունների, բենչ-մարկետինգի և դրանց հիման վրա էլ՝ արտահանման ռազմավարությունների մշակմամբ, կհամակարգի արտերկրում ստեղծված ներկայացուցչությունների գործունեությունը, անհրաժեշտության պարագայում աուսորսինգի կարգով առանձին քաղաքականությունների մշակումը կպատվիրի մասնավոր ընկերությունների:

Բազմաթիվ զարգացող երկրներ արտահանման խրախուսման կազմակերպություններ ստեղծել են որպես իրենց արտահանման ազգային ռազմավարությունների մի անհրաժեշտ ու անբաժանելի մաս<sup>2</sup>: Օրինակ, Հվ. Կորեայում հայտնի է Կորեայի առևտրի խթանման կորպորացիան (KOTRA), Թայլանդում՝ Արտահանումների խթանման վարչությունը, Սինգապուրում՝ Առևտրի զարգացման խորհուրդը (TBD) և այլն: Դրանց նպատակը հիմնականում պոտենցիալ արտահանողներին օժանդակելն է՝ իրենց ապրանքների համար շուկաներ գտնելու, ինչպես նաև միջազգային շուկայում պահանջարկ վայելող ապրանքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու միջոցով:

Անդրադառնալով արտահանման խթանման հիմնախնդիրներին՝ չենք կարող ուշադրությունից բաց թողնել ներմուծմանն ուղղված տնտեսական քաղաքականությունը, քանզի ներմուծման ոչ ճիշտ քաղաքականությունը կարող է սահմանափակել հնարավոր արտահանման և տնտեսական աճի ավելացման տեմպերը:

Ներմուծման և տնտեսական աճի փոխկապվածությունը ուսումնասիրել են տարբեր տնտեսագիտական դպրոցների ներկայացուցիչներ: Դեռևս մերկանտիլիստները պնդում էին, որ տնտեսական աճի համար նպաստավոր է միայն հումքի և միջանկյալ ապրանքների ներմուծումը, և առաջարկում էին սահմանափակել վերջնական ապրանքների ներմուծումը: Այս սկզբունքը մասնակիորեն ընդունվում է նաև մինչ օրս. որոշ երկրներ տնտեսական աճի ապահովման հիմքում դնում են ներմուծման փոխարինման քաղաքականությունը: Ինչ խոսք, կարող ենք պնդել, որ ներմուծման փոխարինման քաղաքականությունը կնպաստի տնտեսական աճին: Սակայն հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի նման փոքր տնտեսություն և համեմատաբար սակավ ռեսուրսներ ունեցող երկրում հնարավոր չէ ներմուծումը փոխարինել տեղական արտադրությամբ տնտեսության բազմաթիվ ճյուղերում, դա կարելի է իրականացնել միայն համեմատական և մրցակցային առավելություն ունեցող ոլորտներում: Բացի այդ ներմուծման մրցակից ճյուղերի պաշտպանությունը կարող է վերածվել մշտական երևույթի, որը մեծ ռիսկայնություն կպարունակի արտաքին առևտրի հետագա զարգացման համար: Չնայած պետք է փաստել, որ ներմուծման որոշակի պաշտպանությունը նույնիսկ օգտակար է արտահանման խթանման համար: Սա, իհարկե, վերաբերում է ներմուծման կրիտիկական ծավալին, որը

<sup>1</sup> Ներկայումս ՀՀ արտահանման խթանմանն այս կամ այն չափով նպաստում են հետևյալ կազմակերպությունները՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, Ջարգացման հայկական գործակալություն, Բիզնեսի աջակցման կենտրոն, Չեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ, ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն, Եվրոպալատ, հայ-ամերիկյան առևտրային պալատ, Ինժեներների և գիտնականների հայ-ամերիկյան միություն, Արդյունաբերողների և գործարարների միություն, Ոսկերիչների և ադամանդագործների միություն, «Էքսպոմեդիա» ցուցահանդեսների նախագծման կենտրոն, «Մաստեր» մարկետինգային կենտրոն, «Լոգոս-Էքսպո» կենտրոն, ExLab, USAID (CAPS, ASME), Millennium Challenge Cooperation, EBRD, GTZ, World Bank, CIB (Centre for the Promotion of Imports from developing countries) և այլն:

<sup>2</sup> Lederman D., Olarreaga M., Payton L. "Export promotion agencies: What works and what does not", Trade Note 30, The World Bank, 2006, p. 1.

հնարավոր չէ փոխարինել տեղական արտադրանքով կամ էլ արտահանվող ապրանքների արտադրության համար անհրաժեշտ հումքի ներմուծմամբ:

Սակայն դեռևս անպատասխան է մնացել մեկ այլ հարց: Արդյո՞ք հնարավոր է ներմուծման աճի արդյունքում հասնել տնտեսական աճի, և եթե այո, ապա հատկապես ո՞ր ապրանքախմբերի ներմուծմանն է դա վերաբերում: Շատ տնտեսագետների կարծիքով ներմուծման աճը կարող է հանգեցնել տնտեսական աճի տեմպերի մեծացմանը, եթե ներմուծման մեջ գերակշռում են միջանկյալ ապրանքներն ու հումքը<sup>1</sup>: Որոշ հեղինակներ էլ պնդում են, որ նույնիսկ սպառողական ապրանքների ներմուծման աճը կարող է նպաստել տնտեսական աճին այն պատճառով, որ ներմուծման հետ մրցող տեղական արտադրողները ստիպված կլինեն ներդնել նոր տեխնոլոգիաներ՝ աճող ներմուծմանը դիմակայելու համար, ինչի արդյունքում էլ արտադրությունը կաճի<sup>2</sup>: Այսպիսով՝ մի կողմից ներմուծման աճը խոչընդոտում է տնտեսական աճին, իսկ մյուս կողմից էլ հատկապես բարձր տեխնոլոգիաների ներմուծումը խթանում է ինչպես տնտեսական աճը՝ տնտեսական աճի ինտենսիվ գործոնների վրա ազդելու միջոցով, այնպես էլ նպաստում է արտահանման աճին<sup>3</sup>:

Այս առումով կարող ենք պնդել, որ մեր երկրում պետք է մանրամասն և բազմակողմանի հաշվարկների միջոցով հայտնաբերվեն ներմուծման այն խմբերն ու արտադրանքի այն ծավալները, որոնք արդյունավետորեն չեն կարող արտադրվել երկրում բնակլիմայական, ռեսուրսատարության, տեխնիկատեխնոլոգիական և այլ պատճառներով: Վերջինս էլ կհայտարարվի որպես ՀՀ տնտեսության համար ներմուծման կրիտիկական ծավալ, և կմշակվի տնտեսական աճ ապահովող ներմուծման ռազմավարություն, որի կառուցվածքում, ըստ ամենայնի, գերակշռող մաս կկազմեն բարձր տեխնոլոգիաները, մեքենա-սարքավորումները և միջանկյալ հումքը:

Ներկայումս որոշ ապրանքախմբերի ներմուծման ծավալները (հիմնականում՝ սպառողական) շարունակում են կրճատվել՝ կապված ներքին շուկայում ներմուծման փոխարինիչների արտադրության շարունակական ավելացմամբ<sup>4</sup>: Այսպիսով, բնակչության պահանջները աստիճանաբար բավարարվում են տեղական կաթնամթերքի, մսամթերքի, ձվի, ծխախոտի, հրուշակեղենի, զարեջրի, հյութերի և այլնի արտադրության շնորհիվ: Սակայն որոշ սննդամթերքների արտադրությունը երկրում, տնտեսական և այլ հանգամանքներից ելնելով, անհնար է, օրինակ՝ սուրճ, բրինձ, ձավարեղեն, կակաո, ուստի դրանց ներմուծումը անհնարին է փոխարինել<sup>5</sup>:

Ներմուծմամբ առաջնորդվող տնտեսական աճի ապահովման առումով առաջարկում ենք արտադրական նպատակով նորագույն տեխնոլոգիաներ և մեքենա-սարքավորումներ ներմուծող կազմակերպություններին ոչ միայն տրամադրել հարկային արտոնություններ, ինչն արդեն անում է ՀՀ կառավարությունը, այլև տրամադրել նրանց ներմուծման ֆակտորինգ միայն այդ ապրանքների ներմուծման նպատակով: Դրանք ՀՀ կներմուծվեն՝ ֆակտորինգային ֆինանսավորում ստանալով բանկի կամ ֆակտորինգային ընկերության կողմից, իսկ այն ձեռք բերող ընկերությունը դրա համար կվճարի միայն սարքավորումը գործարկելուց հետո, այսինքն՝ ձեռնարկությանը հնարավորություն կստանա առկա ֆինանսական միջոցները թողնել շրջանառության մեջ մինչև սարքավորման շահագործման հնարավորության պահը, ինչն էլ կմեծացնի ձեռնարկություն գործունեության արդյունավետությունը:

Բացի այս, տնտեսական աճի ապահովման տեսանկյունից ներմուծման քաղաքականությանն անդրադառնալիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ՀՀ մաքսային քաղաքականությանը, որը դեռևս միտում չունի կատարյալի: Կան զգալի թերություններ, որոնք անհապաղ պետք է շտկվեն նախքան տնտեսական աճ ապահովող վերոնշյալ ներմուծման ռազմավարության մշակումը:

<sup>1</sup> ERD Working Paper No. 103, "Could Imports be Beneficial for Economic Growth? Some Evidence from Republic of Korea", ADB, October 2007, p.11.

<sup>2</sup> "The Effect of Imports and Exports on Total Factor Productivity in Korea", Sangho KIM, Hyunjoon LIM and Donghyun PARK, 2002, p.7

<sup>3</sup> "Exports, Imports, and Economic Growth in South Asia: Evidence Using a Multivariate Time-series Framework", MUSLEH-UD DIN, The Pakistan Development Review 43: 2 (Summer 2004) pp. 105-124, p.8-18.

<sup>4</sup> ՀՀ բնակչության սպառման մեջ հիմնական տեսակարար կշիռ ունեցող ապրանքների արտահանման և ներմուծման հակվածությունները ներկայացված են Հավելված 9-ում:

<sup>5</sup> *Թորոյան Թ.*, Միջազգային տնտեսագիտություն. առևտուր և ֆինանսներ, Երևան, 2005, էջ 343:

Նախ և առաջ հարկ է ուշադրություն դարձնել որոշակի ապրանքախմբերի մաքսադրույքների, որոնք այնքան էլ արդարացված չեն: Ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի (այսուհետ՝ ԱՏԳԱ) «բանջարեղեն, ուտելի արմատապտուղներ և պալարապտուղներ» ապրանքախմբի ներմուծման մաքսատուրքը սահմանված է 10%: Այս խմբի ապրանքների մեջ մտնում են գյուղատնտեսական մթերքներ, որոնց մեծ մասի արտադրության համեմատական առավելություններ ՉՅ-ում առկա են: Գյուղատնտեսական մշակաբույսերի մի մասն էլ՝ ցիտրուսները, մերձարևադարձային մրգերն ու պտուղները, որոնք ՉՅ-ում չեն արտադրվում, նույնպես հարկվում են 10% մաքսատուրքով<sup>1</sup>: Նույնը վերաբերում է «շաքար, շաքարից պատրաստված մթերքներ», «կակաո, կակաոյից պատրաստված մթերքներ», «սուրճ, թեյ, մատե և համեմունքներ» ապրանքախմբերին: Մենք առաջարկում ենք տարբերակված մոտեցում ցուցաբերել Հայաստանում արտադրվող կամ արտադրության հնարավորություն ունեցող ապրանքների և բնակլիմայական պայմանների պատճառով տեղում արտադրության հնարավորություն չունեցող ապրանքների միջև. արտադրվողների համար մաքսադրույքը կարելի է պահպանել ներկայիս մակարդակի վրա՝ 10%, իսկ չարտադրվողի համար՝ 0% կամ զրոնե նվազ, քան 10%:

Ինչ վերաբերում է զրոյական դրույքաչափով հարկվող ապրանքներին, ապա դրանք հիմնականում արդյունաբերական նշանակության ապրանքներ են:

Այսպիսով, առաջարկում ենք մաքսային արտոնություններ տրամադրել հետևյալ խումբ ապրանքներին.

- ապրանքներ, որոնք բնակլիմայական պայմանների պատճառով հնարավոր չէ արտադրել, օրինակ՝ ցիտրուսային, տրոպիկական մրգեր, սուրճ, թեյ, կակաո, բրինձ և այլն,
- ապրանքներ, որոնց արտադրությունը երկրում արդյունավետ չէ կամ վնասում է շրջակա միջավայրին, օրինակ՝ ածուխ և քարածուխ, մի շարք քիմիական ապրանքներ և այլն,
- երկրի արդյունաբերության ավանդական ճյուղերի համար հումք հանդիսացող ապրանքներ, որոնց արտադրությունը երկրում արդյունավետ չէ մեծ ծախսատարության պատճառով, օրինակ բամբակ և այլն,
- սոցիալական նշանակության ապրանքներ, ինչպիսիք են զրքեր, ֆիլմեր և այլն,
- վերոնշյալ կետերից մեկին կամ մի քանիսին բավարարող ապրանքներ:

Մաքսային արտոնություններ չտրամադրել (կիրառել ԱՀԿ-ի պահանջներին համապատասխանող առավելագույն կամ զրոնե ոչ նվազագույն մաքսադրույք) հետևյալ ապրանքախմբերի համար

- ապրանքներ, որոնց արտադրությունը երկրում հնարավոր և արդյունավետ է, օրինակ՝ միս, մսամթերք, բնակլիմայական պայմաններին համապատասխանող միրգ, բանջարեղեն և այլն
- մարդու առողջությանը վնաս հասցնող ապրանքներ, օրինակ՝ ծխախոտ և այլն:

Ինչպես նաև միջանկյալ մաքսադրույքներ է պետք սահմանել այն ապրանքների ներմուծման վրա, որոնց արտադրությունը երկրում ներկայումս բացակայում է և կարճաժամկետ ու միջնաժամկետ ժամանակահատվածների համար չի նախատեսվում<sup>2</sup>, և որոնց սպառող են հանդիսանում հիմնականում միջինից բարձր եկամուտ ունեցող սպառողական խմբերը, օրինակ X զումարից ավել արժողությամբ ավտոմեքենաները:

Սրանից բացի անհրաժեշտ է որակական ստանդարտների կիրառմամբ սահմանափակել նաև անորակ ու առողջության համար վնասակար հատկապես սննդամթերքի և հագուստեղենի ներմուծումը:

<sup>1</sup> ՉՅ մաքսային օրենսգիրք, Երևան 2001թ.:

<sup>2</sup> Խոսքը վերաբերում է նաև միևնույն ապրանքի, օրինակ՝ հեռուստացույց, տարբեր արժողության ապրանքատեսակների վրա տարբերակված մաքսադրույք կիրառելուն. ճոխության իրերի պարագայում ավելի բարձր, իսկ հակառակ դեպքում ավելի ցածր մաքսադրույք կամ դրա բացակայություն:

Առաջարկում ենք ԱՀԿ համաձայնագրերով թույլատրվող առավելագույն մաքսեր սահմանել նաև արտահանվող հումքի նկատմամբ, որի վերամշակումը երկրում միանգամայն հնարավոր է, օրինակ՝ հանքահումքի նկատմամբ:

Այսպիսով, ուսումնասիրելով համաշխարհային փորձը, դիտարկելով ՀՀ արտահանման կառուցվածքը, առկա խնդիրները, ինչպես նաև տնտեսական աճի վրա արտահանման հնարավոր ազդեցությունը, փորձենք ներկայացնել ՀՀ արտաքին առևտրի արդյունավետ քաղաքականության հետևյալ հիմնադրույթները, որոնք կնպաստեն հետագա կայուն տնտեսական աճի ձեռքբերմանը.

- Նախ՝ պետք է կատարվի արտահանման դիվերսիֆիկացիա, ինչպես տեսականու, այնպես էլ աշխարհագրական կառուցվածքի տեսանկյունից:
- Արտահանման քաղաքականության երկրորդ անհրաժեշտ պայմանը արտահանման ֆինանսական լծակների առկայությունն է, ինչպիսիք են արտահանման ուղղվածություն ունեցող ձեռնարկություններին տրամադրվող արտոնյալ վարկերը, ֆակտորինգը, պետական երաշխիքները, արտահանման ապահովագրության պետական ֆինանսավորումը և այլն: Ձեռնարկությունների վարկավորումը կարելի է իրականացնել ներդրումային ֆոնդերի աջակցությամբ, որոնց միջոցների զգալի մասը պետք է ձևավորվի պետության, իսկ մյուս մասը՝ այլ տնտեսվարող սուբյեկտների հաշվին: Արտահանման ծավալների ավելացման նպատակով ձեռնարկություններին անհրաժեշտ է տրամադրել նաև հարկային արտոնություններ: Մասնավորապես, անհրաժեշտ է նյութական շահագրգռվածություն առաջացնել արտահանողի մոտ ԱԱՀ-ի վերադարձի գործընթացի արագացման միջոցով: ԱԱՀ-ի ետվերադարձման ուշացումը համարժեք է լրացուցիչ թաքնված հարկազանձմանը արտահանողից:
- Արտահանման խթանման հաջորդ պայմանն է արտերկրյա շուկաներ ներթափանցելու գործում պետության աջակցությունը՝ մեր կողմից արդեն իսկ առաջարկված արտահանման տեղեկատվական բազայի ստեղծման, ներկայացուցչությունների ցանցի ընդլայնման, միջազգային առևտրային ցուցահանդեսներին մասնակցությանն աջակցման և վերոնշյալ այլ միջոցներով: Պետությունը կարող է նաև մասնակիորեն իր վրա վերցնել արտահանվող ապրանքների գովազդային ծախսերը: Այդ նպատակով կարող են կազմակերպվել գովազդային հեռուստահաղորդաշարեր, որոնք կհեռարձակվեն արբանյակային հեռուստաալիքներով:
- Արտահանման խթանման ճկուն քաղաքականությունը չորրորդ գործոնն է, որ պայմանավորում է դրա արդյունավետությունը և հաջողությունը:
- Այնուհետև, անհրաժեշտ ենք համարում արտահանման տնտեսական գոտիների ստեղծումը, որի սկիզբն արդեն իսկ դրել է ՀՀ կառավարությունը:
- Հաջորդ անհրաժեշտ միջոցառումը արտահանման խթանման նպատակով մեր կողմից առաջարկված մեխանիզմով լավագույն արտահանող ձեռնարկություններին պարզաստրման տրամադրումն է:
- Բացի այդ, արտահանման և տնտեսական աճ ապահովելու նպատակով անհրաժեշտ է պետության ոչ հարկադրական միջամտությամբ օտարերկրյա ուղղակի ներդրումներն ուղղորդել տվյալ ժամանակահատվածում տնտեսության թիրախային համարվող ոլորտ՝ այսպիսով աստիճանաբար զարգացնելով և դիվերսիֆիկացնելով ինչպես արտադրությունը, այնպես էլ՝ արտահանումը:
- Ինչպես նաև, արտահանման խթանման և տնտեսական աճի ապահովման տեսանկյունից անհրաժեշտ ենք համարում միջազգային գներով ներմուծման հասանելիությունը մեր կողմից առաջարկված ներմուծման կրիտիկական ծավալի որոշման և ներմուծման մաքսատուրքերի տարբերակման միջոցով:

**Торос Торосян, Лилит Сарксян**

**Возможности применения международного опыта  
по стимулированию экспорта в РА**

**Аннотация**

В статье на основе изучения международного опыта по стимулированию экспорта предлагаются конкретные формы стимулирования экспорта в РА, одновременно предлагаются необходимые мероприятия в области импортной политики, которые способствуют экономическому росту.

**Thoros Thorosyan, Lilit Sargsyan**

**Application of Export Promotion Best Practices in Armenia**

**Abstract**

By studying the best practices worldwide, the article proposes specific measures to be implemented for export promotion, and required measures to be addresses by the import policy to ensure economic growth.

**ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ**

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**ԼԻԱՆԱ ԱԶԱՏՅԱՆ**

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՅԱՐՅԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Գիտատեխնիկական առաջընթացի ապահովումը հանրապետության ազրոպարենային ոլորտում պահանջում է ստեղծել գիտության, արտադրության փոխհարաբերությունների կարգավորման և կառավարման այնպիսի համակարգ, որը զգալիորեն նպաստելու է շուկայական հարաբերությունների զարգացման գործընթացին:

Գյուղատնտեսության համակարգում արդյունավետ կառավարումը կարելի է ապահովել տնտեսավարման գիտական այնպիսի սկզբունքների հիման վրա, որոնք պայմանավորված են շուկայական հարաբերությունների զարգացմամբ և համապատասխանում են կառավարման արդի խնդիրներին ու եռայանը:

Տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է 1996 թվականին և շուրջ տասնհինգ տարվա պատմություն ունեցող համակարգը դեռևս կատարելագործման և զարգացման կարիք ունի: Առկա բազմաթիվ հիմնախնդիրների կողքին կարելի է նշել նաև տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության անկատարությունը, ինչը պայմանավորված է տարբեր պատճառներով՝ ՀՀ ոչ լիակատար լինելով, օրենսդրության բացերով, ավանդույթների և համապատասխան մեխանիզմների բացակայությամբ:

Տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումը մեծապես նպաստում է հասարակության մեջ ժողովրդավարական գործընթացների զարգացմանը, որի կարևոր բաղադրիչներից է քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը: Հայաստանում միայն վերջին տարիներին են սկսել այդ ուղղությամբ աշխատանքների կատարման գործընթացը, որի իրականացման համար անհրաժեշտ է լայնորեն ներկայացնել տեղական ինքնակառա-

վարմանը քաղաքացիների մասնակցության հարցերը, ցույց տալ կիրառման մեխանիզմները գործնականում, դրական ու բացասական կողմերը:

Այս բոլորն իրենց էությամբ կարևոր նշանակություն ունեն տեղական մակարդակում ժողովրդավարության զարգացման համար, քանի որ հանրային մասնակցությունը դյուրացնում է հասարակության կողմից պետական քաղաքականության ընկալումը, հանրային ծառայությունները դարձնում է արդյունավետ, ամրապնդում է պետության, այդ թվում նաև տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների հարաբերությունները, խրախուսում է հասարակության մեջ քաղաքացիների ակտիվ մասնակցությունը: Այս տարրերը միասին ապահովում են առավել ամուր և հզոր ժողովրդավարություն և նպաստում քաղաքացիական հասարակության ձևավորմանը:

Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, հանդիսանում է տեղական ինքնակառավարման համակարգի կարևոր բաղադրիչներից մեկը: Առանց տեղական ինքնակառավարման համակարգի բավարար զարգացման, առանց տեղական մակարդակում որոշումների կայացման, քաղաքացիների մասնակցության բավարար մակարդակի ապահովում որոշակի դժվարություններ են առաջ բերում ժողովրդավարության հաստատման և կարգավորման հարցերում:

Համեմատության առումով ներկայացնենք այն իրողությունը, որ արևմտյան երկրներում քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, համարվում է որպես ընդհանուր հասարակության և տեղական ժողովրդավարության անբաժանելի մասը: Ժողովրդավարությունը լայն հասկացություն է, որը հնարավոր չէ պատկերացնել առանց հասարակական գործընթացներին այն մարդկանց ներգրավվածության, որոնք հանդիսանում են հանրային որոշումների և ծրագրերի հիմնական շահառուները:

Հանրային կառավարման հիմնական և կարևոր մասնակիցները դրանք այն քաղաքացիների խմբերն են, որոնք կարող են լինել ինչպես հասարակական կազմակերպություններ, ունենալով որոշակի առաքելություններ և նպատակներ, այնպես էլ ուղղակի ձևավորված մարդկանց խմբեր՝ իրենց կոնկրետ շահերով: Այս իմաստով անհրաժեշտ է, որ մինչև տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների խմբերի միջև քննարկումների անցկացումն ու համագործակցության ձևավորումը, անհրաժեշտ է, որպեսզի հստակեցված լինեն այդ խմբերը և սահմանված պահանջները:

Հարկ ենք համարում նշել, որ տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցությունը կարող է տեղի ունենալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով դրանց գործունեության հետևյալ բնագավառներում՝

- քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն,
- ֆինանսներ,
- հասարակական կարգի պահպանություն,
- պաշտպանության կազմակերպում,
- քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն,
- հողօգտագործում,
- տրանսպորտ,
- առևտուր և ծառայություններ,
- կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ,
- առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ,
- աշխատանք և սոցիալական ծառայություն,
- գյուղատնտեսություն,
- բնություն և շրջակա միջավայրի պահպանություն:

Կառավարման ապակենտրոնացված համակարգում գործում է հետևյալ մոտեցումը. համայնքի յուրաքանչյուր բնակիչ իր համայնքի տերն է, համայնքնային խնդիրների արդյունավետ լուծման ամենաշահագրգիռ անձը և, բնականաբար, նա էլ պետք է մասնակցի համայնքի կառավարման ու զարգացման գործընթացին՝ իր մասնակցությունը բերելով համայնքային խնդիրների լուծմանը:

Քաղաքացիների մասնակցությունը կարող է լինել՝

- **ակտիվ**, երբ քաղաքացիները ուղղակիորեն մասնակցում են ՏԻՄ-երի աշխատանքներին՝ ազդեցություն ունենալով հանրային որոշումների վրա,
- **պասիվ**, երբ քաղաքացիները պարզապես հաճախում են հանրային հանդիպումներին՝ ՏԻՄ-երի նոր ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն, կամ մասնակցում են միայն ընտրությունների:

Ընդհանրապես, քաղաքացիներին, ըստ իրենց մասնակցության աստիճանի, լինում են ակտիվ կամ պասիվ: Քաղաքացիների մասնակցային գործողությունները կամավոր գործընթաց են, մասնակցության չափը կախված է և՛ ձևավորված տեղի մշակույթից, և՛ անձի խառնվածքից, և՛ առկա պայմաններից, և՛ իրավիճակից: Քաղաքացիների ակտիվության խրախուսման և նրանց մասնակցային գործողությունների մղման հարցում մեծ դեր ունեն ՏԻՄ-երը: Քաղաքացիների մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքում ստեղծում է նաև ինքնարտահայտման նոր ուղիներ ու հնարավորություններ:

Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը բազմաթիվ դրական ակնկալիքներ է բերում: Այն տեղական իշխանություններին հնարավորություն է տալիս ընդունել ավելի կշռադատված որոշումներ՝ առավել հանգամանալից ուսումնասիրելով հանրության կողմից բարձրացված հիմնահարցերը: Տեղական իշխանությունների կողմից մշակված նախագծերն ու ընդունած որոշումներն ավելի իրատեսական են դառնում հանրության համար, երբ նրանք մասնակից են լինում դրանց նախապատրաստմանը: Ավելին, մասնակցային հնարավորությունները շահագրգռում են մարդկանց և ակտիվ խմբերին՝ էլ ավելի խորությամբ ներգրավվելու համայնքային գործընթացներին՝ ստանձնելով պատասխանատվություն ու հաշվետվողականություն տեղական իշխանությունների հետ: Հանրության տեսանկյունից, քաղաքացիների ներգրավումը որոշումների կայացման գործընթացի վաղ շրջանում օգնում է ավելի լավ հասկանալու խնդիրները կամ ծրագրերը, հնարավորինս խուսափելու բախումներից և գալու ընդհանուր համաձայնության: Դա հատկապես վերաբերում է այն որոշումներին, որոնք ուղղակի ազդեցություն ունեն քաղաքացիների վրա: Նախապես ներգրավելով նոր քաղաքականությունների և ծրագրերի մշակման աշխատանքներում՝ կարելի է երաշխավորել, որ նրանց բարձրացրած հարցերը լսելի են եղել և տեսակետները հաշվի առնվել՝ և դրանով ավելի լավ պաշտպանելով հանրային ընդհանուր շահերը: Ընդհանուր առմամբ, քաղաքացիների ներգրավումը որոշումների կայացման գործընթացում տեղական իշխանություններին դարձնում է ավելի բաց, թափանցիկ և հասանելի:

Քաղաքացիների մասնակցության ձևի ընտրության ռազմավարությունը կախված է նրանից, թե քաղաքացիների ներգրավմամբ տեղական ինքնակառավարման մարմինները ի՞նչ նպատակներ են հետապնդում: Դրանց թվին են դասված՝

- տեղեկացնել քաղաքացիներին տեղական իշխանությունների նոր նախաձեռնությունների մասին և ապահովել նրանց մշտական տեղեկացվածությունը ՏԻՄ-երի գործողությունների վերաբերյալ,
- խորհրդակցել քաղաքացիների հետ, որպեսզի պարզվի նրանց կարծիքը տեղական իշխանությունների նոր նախաձեռնությունների վերաբերյալ՝ նրանց մասնակից դարձնելով որոշումների կայացման գործընթացին,
- ձեռք բերել քաղաքացիներից տեղեկատվություն, որպեսզի ընդլայնվի տեղեկատվության աղբյուրների շրջանակը,
- ներգրավել քաղաքացիներին համայնքի պլանավորման գործընթացում, որպեսզի նրանք մասնակցեն համայնքի հետագա ռազմավարությունների և զարգացման ծրագրերի մշակմանը,
- ապահովել քաղաքացիների հետ հետադարձ կապ, որպեսզի պարզվի տեղական իշխանությունների նախաձեռնությունների ազդեցությունը քաղաքացիների վրա և ճշտվեն հետագա գործողությունները,

- Երգրավել քաղաքացիներին որոշումներ կայացնելու գործընթացում՝ ապահովելով նրանց ուղղակի մասնակցությունը խորհուրդներում, խորհրդատվական հանձնաժողովներում կամ աշխատանքային խմբերում:

Խորհրդատվական հանձնաժողովը քաղաքացիների որոշակի խումբ է, որի նպատակն է ՏԻՄ-երին խորհրդատվություն տրամադրել համայնքի որոշակի խնդրի լուծման ուղիների բարելավման վերաբերյալ: Եթե քննարկված նախորդ միջոցները իրազեկման կամ երկխոսության մղող միջոցներ էին, ապա սա կոնկրետ գործողությունների մղող միջոց է, և քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում հասնում է առավելագույնի:

Խորհրդատվական հանձնաժողովն ստեղծվում է համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի որոշմամբ կամ կարգադրությամբ, և որի կազմում ընդգրկվում են ակտիվ քաղաքացիներ, փորձագետներ, համայնքի հասարակական և մասնավոր հատվածների շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ըստ նրանց փորձագիտական կարողությունների և հեղինակության: Հաստատվում է այդ հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և գործունեության ժամանակացույցը: ՏԻՄ-երի կողմից առաջադրված քննարկման ենթակա խնդիրների լուծման ուղիների վերաբերյալ վերջիններիս պարբերաբար ներկայացվում են եզրակացություններ ու առաջարկություններ: Խորհրդատվական հանձնաժողովը ժամանակավոր բնույթ է կրում և ՏԻՄ-երի կողմից սահմանված առաջադրանքները կատարելուց հետո դադարեցնում է իր գործունեությունը:

Աշխատանքային խումբը ստեղծվում է կոնկրետ հիմնախնդրի վրա աշխատելու համար:

Քաղաքացիների կողմից տեղական ինքնակառավարման մասնակցությանը նպաստում են տեղեկատվական տեխնոլոգիաները: Մինչև վերջին ժամանակներս տեղական իշխանությունների և քաղաքացիների ավանդական հաղորդակցությունը եղել է միակողմանի և հիմնված ՁԼՄ-ների վրա (թերթ, ռադիո և հեռուստատեսություն)՝ քաղաքացիներին տեղյակ պահելով տեղական ինքնակառավարման հետ կապված որոշակի հիմնախնդիրներին: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներկայիս ձեռքբերումները հեռահաղորդակցման նոր հնարավորություններ են ապահովում:

Քանի որ տեղեկատվության համար համացանցն ավելի ու ավելի է կիրառելի դառնում, տեղական իշխանությունները կարող են զգալի միջոցներ խնայել աշխատակազմի ժամանակի և թղթի տնտեսման առումով:

ՏԻՄ-երը համայնքային գործընթացներում քաղաքացիների մասնակցությունը ընդլայնելու նպատակով կարող են կիրառել բարձր տեխնոլոգիաներ (մալուխային հեռուստատեսություն, համացանց և այլն):

Դրա իրականացման տարածված ձևերն են.

**ա) Տեղեկատվության տարածում մալուխային հեռուստատեսությամբ, այդ թվում՝**

հայտարարություններ, տեղեկատվություն տարբեր միջոցառումների վերաբերյալ, համայնքի ավագանու նիստերի ուղիղ հեռարձակում կամ տեսագրության ցուցադրում, հեռուստատեսային ծրագրեր, որոնք պարունակում են ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ մեկնաբանություններ և վերլուծություններ, հարցազրույցներ ՏԻՄ-երի ու քաղաքացիների հետ և այլն:

**բ) Համայնքի վեբ կայք, ըստ որի** համայնքը կարող է ստեղծել իր պաշտոնական վեբ կայքը, որի միջոցով, ՏԻՄ-երը կարող են բազմաբնույթ տեղեկատվություն տրամադրել, քաղաքացիներին իրենց գործունեության մասին, հասանելի դարձնել նրանց համար համայնքային կարևոր փաստաթղթերը առանց այցելելու քաղաքապետարան, գյուղապետարան, ինչպես նաև հասանելի դարձնել նաև մշակութային միջոցառումների ժամանակացույցը և յուրօրինակ կապով գովազդել համայնքը՝ գործարար շրջանակների ներդրումների կամ զբոսաշրջիկների ներգրավման նպատակով: Ժամանակակից ինտերնետային կայքերը, բացի տեղեկատվության աղբյուր լինելուց, հետադարձ կապի լավ միջոց են: Շատ կայքեր հնարավորություն են տալիս այցելուներին՝ առցանց ռեժիմով շփվելու իշխանության ներկայացուցիչների հետ, նրանց հարցեր ուղղելու, մասնակցելու հարցումներին: Կայքը կարող է ունենալ ինտերակտիվ գործիքներ՝ ֆորումներ, բլոգներ, որտեղ կարող են քննարկվել



համայնքային նշանակության տարբեր հարցեր: Վեբ կայքի միջոցով կարող է ապահովվել բնակիչների հետ հետադարձ կապը:

գ) **Էլեկտրոնային հաղորդակցություն քաղաքացիների հետ.** Էլեկտրոնային նամակի միջոցով, որպես այլընտրանքային տարբերակ, քաղաքացիները կարող են ՏԻՄ-երից տեղեկանալ համայնքային ծառայությունների մատուցման հետ կապված հիմնախնդիրների մասին, ներկայացնել տարատեսակ դիմումներ և բողոքներ: Եվ հակառակը՝ ՏԻՄ-երն ունենալով բնակիչների էլ. փոստերի հասցեները, կարող են դրանք օգտագործել որպես տեղեկատվության տրամադրման այլընտրանքային և քիչ ծախսատար տարբերակ: Քաղաքացիները կարող են տեղեկացվել նախատեսվող միջոցառումների ժամկետներին, ստանալ ՏԻՄ-երի կողմից մշակված համայնքային նշանակության տարբեր տեղեկաթերթեր և այլն:

դ) **Սոցիալական ցանցեր.** Ինտերնետի ընձեռած հնարավորություններից է, երբ մարդիկ, գրանցվելով որևէ ցանցում և ձևավորելով խմբեր՝ ըստ հետաքրքրությունների, քննարկում են որևէ հրատապ հիմնախնդիր, պայմանավորվում համատեղ քայլերի մասին: Սոցիալական ցանցերը հնարավորություն են տալիս ազատորեն արտահայտել տարբեր տեսակետներ, կազմակերպել ակցիաներ ու համատեղ գործողություններ: Եթե ինտերնետը հասանելի է, ապա լրացուցիչ դրամական միջոցներ չի պահանջվում:

Գիտատեխնիկական առաջընթացի կարևոր նախապայմաններից է նաև տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցությունը:

Գյուղացիական տնտեսությունների ինքնակառավարումը նշանակում է դրանց գործունեության անմիջական վարում, տվյալ տնտեսության անդամների և նրանց կողմից ընտրված ղեկավարի կողմից:

Այսպիսով, քաղաքացիների մասնակցությունն օգնում է որոշումների կայացմանը, համայնքում բարելավում է հանրային փոխըմբռնումը, համագործակցությունը և գնահատումն այն ամենը, ինչ անում են տեղական իշխանությունները, կրճատում է բախումները, աջակցություն է ապահովում նոր ծրագրերի իրականացման համար, նպաստում է բնակչության մոտ առաջացված խնդիրների ու տեսակետների նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորմանը և բաց ու թափանցիկ տեղական ինքնակառավարմանը: Քաղաքացիական ներգրավվածությունը հասարակության մեջ փոփոխությունների գործընթաց է, որը ենթադրում է, որ ավանդական շահագրգիռ կողմերի հետ մեկտեղ գործընթացներին սկսում են մասնակցել այլ կողմեր ևս՝ այդ թվում՝ քաղաքացիներ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ:

**Шушаник Костанян, Лиана Азатян**

### **Участие граждан в регулировании путей и основных вопросов местного самоуправления**

#### **Аннотация**

В статье изучаются вопросы совершенствования системы местного самоуправления, в частности, включения граждан общины в принятых решениях.

Участие граждан в самоуправлениях улучшает осуществление новых программ открыто и прозрачно в решениях местного самоуправления.

**Shushanik Kostanyan, Liana Azatyan**

### **Issues on Participation of Community Residents in the Decision Making processes of Local Self-Government Bodies and Regulation Approaches**

#### **Abstract**

The article presents approaches to the improvement of the local-self-government system, mainly participation of the local community residents in the decision-making process. Participation of residents will improve the implementation process of new programs undertaken; will increase transparency.

**ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ**

*ՆՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**ՌՈՒՋԱՆԱ ԱԼՈՅԱՆ**

*ՆՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**ՀՀ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐԵԼԱՅՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ  
ԶՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՄՍԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԲԱՑԱՅԱՅՏՄԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒՇՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Գյուղատնտեսությունը Հայաստանում հողային ռեսուրսների հիմնական «սպառողն» է, և միայն վարելահողերը զբաղեցնում են հանրապետության գյուղնշանակության հողերի մոտ 21,3%-ը:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական հողատեսքերի օգտագործման առումով առավել կարևորվում է վարելահողերի արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը: Ցանքատարածությունների և առկա վարելահողերի տարածքների համադրումը ցույց է տալիս, որ վարելահողերի զգալի մասը նպատակային չի օգտագործվում, որը հանրապետության գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի օգտագործման առավել ընդգծված հիմնախնդիրներից է: Այդ են վկայում 2007-2010թթ. հանրապետության վարելահողերի օգտագործման վիճակը բնութագրող տվյալները (տե՛ս աղյուսակ 1-ում):

*Աղյուսակ 1*

**ՀՀ վարելահողերի օգտագործման մակարդակը 2007-2010թթ. տվյալներով**

Տարիները	Վարելահողերի տարածքն ըստ ՀՀ հողային հաշվեկշռի, հա	Օգտագործվող վարելահողերի տարածությունը, հա	Նպատակային չօգտագործվող վարելահողերի տարածքը, հա	Վարելահողերի օգտագործման մակարդակը, %
2007	452100,0	305983	146117	67.7
2008	450360,0	304459	145901	67.6
2009	449410,0	300014	149396	66.8
2010	448517,6	283277	165240.6	63.2
<b>Միջինը</b>	450096.9	298433.3	151663.6	66.3

Ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ հանրապետությունում վարելահողերի օգտագործման վիճակը բավականին վատթար է: Այսպես՝ 2007-2010թթ. միջին տվյալներով վարելահողերի օգտագործման միջին մակարդակը կազմում է 66.3 %: Այսինքն, վերջին չորս տարիներին նպատակային չօգտագործվող վարելահողերի տարածքները միջին հաշվով կազմել են 151.7 հազ. հա, չնայած այդ վարելահողերի շուրջ 70 %-ից հավաքվում է խոտ (օգտագործվում է որպես խոտհարք):

Առավել կարևոր ենք համարել ներկայացնել վարելահողերի օգտագործման վիճակն ըստ հանրապետության մարզերի:

Իրականում նպատակային չօգտագործվող վարելահողերի զգալի մասը տարերայնորեն օգտագործվում է որպես խոտհարք՝ խոտ ստանալու համար, որը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված 2009թ. տվյալներով հանրապետությունում կազմել է 108.6 հազ. հա, որից հավաքվել է 376.4 հազ. տոննա խոտ, ապահովելով միջին հաշվով 34.6 ց/հա բերքատվություն: Ըստ մարզերի խոտի ստացման համար (որպես խոտհարք) օգտագործվող վարելահողերի տարածքը ներկայացվում է աղյուսակ 2-ում:

Վարելահողերի օգտագործման մակարդակն ըստ ՀՀ մարզերի 2010թ. տվյալներով

ՀՀ մարզերը և Երևան համայնքը	Վարելահողերի տարածքը ըստ 2010թ. հողային հաշվեկշռի միջին տվյալների, հա	Օգտագործվող վարելահողերի տարածությունը ըստ 2010թ. տվյալների, հա	Նպատակային չօգտագործվող վարելահողերի տարածությունը, հա	Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, %
Արագածոտն	53912.7	32167	21745.7	59.7
Արարատ	25968.5	20301	5667.5	78.2
Արմավիր	41695.7	27412	14283.7	65.7
Գեղարքունիք	80967.3	70196	10771.3	86.7
Լոռի	41987.6	23279	18708.6	55.4
Կոտայք	37842.7	13038	24804.7	34.5
Շիրակ	79950.3	51281	28669.3	64.1
Սյունիք	43783.1	26327	17456.1	60.1
Վայոց ձոր	16205.5	4476	11729.5	27.6
Տավուշ	25223.0	14106	11117	55.9
Երևան	981.2	694	287.2	70.7
<b>Ընդամենը հանրապետություն</b>	<b>448517.6</b>	<b>283277</b>	<b>165240.6</b>	<b>63.2</b>

Չօգտագործվող վարելահողերից խոտի ստացման համար մնացել է ընդհանուր վարելահողերի 24.2 տոկոսը (տե՛ս աղյուսակ 3-ը) և այն հատկապես բարձր է եղել Սյունիքի, Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի մարզերում: Արդյունքում միջին հաշվով 1 հա-ից ապահովվել է ընդամենը 3.46 տոննա խոտ, որի դիմաց ստացած հասույթը կազմել է շուրջ 41.5 հազ. դրամ (1 կգ 12 դրամ իրացման դեպքում):

Խոտի համար (որպես խոտհարք) օգտագործվող վարելահողերը 2009թ. տվյալներով

ՀՀ մարզերը	Վարելահողերի տարածքը ըստ 2009թ. հողային հաշվեկշռի միջին տվյալների, հա	Խոտի համար (որպես խոտհարք) օգտագործվող վարելահողերը 2009թ. տվյալներով, հա	Խոտի տեսակարար կշիռը վարելահողերի մեջ, %
Արագածոտն	53904.8	17492	32.45
Արարատ	26120.0	100	0.38
Արմավիր	41980.3	2360	5.62
Գեղարքունիք	80966.4	25500	31.49
Լոռի	41992.0	10429	24.84
Կոտայք	37878.2	4868	12.85
Շիրակ	79838.2	25590	32.05
Սյունիք	43790.4	14457	33.01
Վայոց ձոր	16203.8	208	1.28
Տավուշ	25288.9	7649	30.25
Երևան	1443.2	-	0.00
<b>Ընդամենը հանրապետություն</b>	<b>449406.3</b>	<b>108653</b>	<b>24.18</b>

Գյուղատնտեսական հողատեսքերի՝ հատկապես վարելահողերի նպատակային չօգտագործման պատճառները բազմազան են: Ուստի ելնելով դրանց բացահայտման կարևորությունից կատարվել են տարբեր ուսումնասիրություններ, մասնավորապես՝ «Տնային տնտեսությունների

կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը», որն իրականացվել է 2004 և 2007 թվականներին, համապատասխանաբար, և ըստ վերլուծության արդյունքները հողերի չօգտագործման պատճառների մասնաբաժիններն են եղել՝

- բնակավայրերից հեռու գտնվելը 2004թ.՝ 5.1% և 2007թ.՝ 10.8 %,
- հողն անորակ է, 16.0 և 12.7 %,
- ոռոգման բացակայությունը՝ 21.8 և 20.3 %,
- շահավետ չէ՝ 13.9 և 18.9 %,
- մշակելը ֆինանսապես ոչ մատչելի է՝ 27.4 և 18.1 %,
- վատառողջություն՝ 10.7 և 12.2 %,
- այլ պատճառներով՝ 5.1 և 7.0 %:

Այսպիսով, մարզերից ստացված տվյալների ամփոփումից բացահայտվել է, որ վարելահողերի նպատակային չօգտագործման դրդապատճառների մեջ առավել ընդգծված է գյուղացիական տնտեսությունների ֆինանսական միջոցների անբավարարվածությունը, որոնց կշիռը միջինացված տվյալներով 18.9 տոկոս է, իսկ ըստ մարզերի տատանվում է 8-23 տոկոսի սահմաններում: Հաջորդը, առավել մեծ ազդեցություն ունեցող պատճառներից է ցածր եկամտաբերությունը, որի միջին ցուցանիշը կազմել է 17.0 տոկոս և ըստ մարզերի տատանվում է 1-36 տոկոսի սահմաններում: Մյուս, առավել մեծ ազդեցություն ունեցող գործոնը դա վարկերի ձեռք բերման դժվարամատչելիությունն է, որի կշիռն միջին ցուցանիշը կազմել է 13.3 տոկոս և ըստ մարզերի տատանվում է 3-19 տոկոսի սահմաններում: Միաժամանակ, վերոնշյալներին համահունչ էական ազդեցություն ունի նաև մեքենայական աշխատանքների դժվարամատչելիությունը, հողակտորների կտրտվածությունը, ոռոգման ջրի բարձր գինը, գյուղատնտեսական արտադրանքի իրացման դժվարությունները, որոնց կշիռն միջին ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 8.6; 8.2; 7.3 և 6.8 տոկոս:

*Աղյուսակ 4*

**Վարելահողերի չօգտագործման պատճառները՝ ըստ ՀՀ մարզերի**

(%)

Պատճառները	ՀՀ մարզերը											
	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Միջինը	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1	Գյուղացիական տնտեսությունների ֆինանսական միջոցների անբավարարվածությունը	23	15	23	21	18	21	19	24	17	8	18.9
2	Հողակտորների կտրտվածությունը	10	1.5	3.5	9.5	14	10.5	5	14	9	5	8.2
3	Հողակտորների հեռավորությունը	7	2.5	6	10.5	16	6	5	5	8	5	7.1
4	Ցածր եկամտաբերությունը	10	19	12	16	20	15.5	36	20	20	1	17.0
5	Սահմանամերձ տարածքների վտանգավորությունը	0	0.5	0	5	0	0	0	1	3	55	6.5
6	Մեքենայական աշխատանքների դժվարամատչելիությունը	13	11	6	5	5	20	5	7	13	1	8,6
7	Ոռոգման ջրի բարձր գինը	11	15	6	5	4	8.5	2	3	2	16	7,3
8	Վարկերի ձեռքբերման դժվարամատչելիությունը և բարձր տոկոսադրույքը	19	12	12	21	10	6.5	15	15	19	3	13,3

Պատճառները	ՀՀ մարզերը										
	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Սիզիոն
9 Խորհրդատվության և տեղեկատվության անբավարարությունը	2	2.5	2.5	3	1	4	1	1	1	0,5	1,9
10 Գյուղատնտեսական արտադրանքի իրացման դժվարությունները	1	18	23	0	7	3	8	4	4	0,5	6,9
11 Այլ պատճառներ	4	3	6	4	5	5	4	6	4	5	4.6
<b>Ընդամենը</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100.0</b>

Եական նշանակություն ունի սահմանամերձ տարածքների վտանգվածությունը, որը հատկապես սրված է ՀՀ Տավուշի մարզում, և որի տեսակարար կշիռը կազմում է 55 տոկոս: Հողային ռեսուրսների, մասնավորապես՝ վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման առումով անհրաժեշտ է մի շարք պետական միջոցառումների իրականացում, որոնք հիմնականում հանգում են հետևյալին:

- Գյուղատնտեսության հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման առումով կարևորվում է գյուղատնտեսությունում վարկավորման բնագավառում քաղաքականության վերանայումը, մասնավորապես՝ վարկերի մատչելիության բարձրացումը, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը: Անհրաժեշտ է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շարունակումը և դրա աշխարհագրության ընդլայնումը: Ծրագրում ներառելով գյուղատնտեսության համար առավել անբարենպաստ՝ սահմանամերձ, բարձր լեռնային տարածաշրջանները: Վերջինս, որպես պետական կարգավորման լծակ կարող է արդյունավետ կիրառվել ոչ միայն վարելահողերի օգտագործման մակարդակի բարձրացման, այլև գոտիական մասնագիտացման նախընտրելի ուղղությունների խթանման համար:
- Բուսաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացման համար կարևորվում է սերմնաբուծության ներդրման համակարգը: Վարելահողերի օգտագործման առումով առանձնակի կարևորվում է հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմնաբուծության համակարգի զարգացումը, որի արդյունքում հնարավոր կլինի մատչելի դարձնել բարձր բերքատվություն ապահովող սերմացուի մատակարարումը ագրարային ոլորտի տնտեսավարողներին:
- Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման առումով կարևորվում է արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի բարելավումը: Վերջինս իրատեսական է համարվում դրամաշնորհային ծրագրերով ներմուծված տեխնիկական սպառողական կոոպերատիվներին, ասոցիացիաներին, միություններին մատչելի գներով տրամադրումը, լիզինգային ծրագրերի իրականացումը, տեխնիկա արտադրող արտասահմանյան խոշոր ընկերությունների կողմից տրամադրվող ապրանքային վարկերի միջոցով դրա մատակարարումը:
- Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման համար կարևորվում է բուսաբուծական մթերքների իրացման խնդրի լուծումը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է համարվում գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկաների համակարգի աստիճանական ձևավորումը, տվյալ բնագավառում միջնորդ օղակների (հավաքման կետերի), տեղեկատվական կենտրոնների ձևավորումը և այլն: Վերջինս իր գործունեությունը պետք է իրականացնի հանրապետությունում ձևավորվող «Լոգիստիկ կենտրոնի» հետ:
- Գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման ուղղությամբ կարևորվում է գյուղատնտեսական հողատեսքերի հատկանիշների պահպանումը: Այստեղ միջո-

ցառումները պետք է ուղղվեն գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության ագրոտեխնիկական պահանջների կատարմանը և ցանքաշրջանառության կիրառմանը, որտեղ իր դերը պետք է ունենա խորհրդատվական համակարգի բարելավումը: Նշված ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել հանքային պարարտանյութերի և այլ ռեսուրսների մատչելիության բարձրացման պետական ծրագրեր:

- Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել մասնատված հողակտորների համատեղ օգտագործման և խոշորացման, հողերի միավորման ծրագրեր: Առանձնակի տեղ պետք է հատկացնել գյուղատնտեսական հողերի համատեղ օգտագործման և խոշորացման մեխանիզմներին, մասնավորապես վերջինիս խթանմանը տարբեր լծակների (վարկեր, դրամաշնորհներ, պետական ծրագրեր) կիրառման միջոցով: Գյուղատնտեսական հողերի նպատակային օգտագործման առումով հրատապ է դարձել գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման համար նախադրյալների ստեղծումը և համակարգի ներդրումը: Ապահովագրական համակարգի ներդրման առաջին քայլերից մեկը պետք է լինի ըստ գոտիների գյուղատնտեսության տարբեր ճյուղերում ապահովագրական ռիսկերի գնահատման ծրագրի իրականացումը, որը հիմք կհանդիսանա ապահովագրության ոլորտում ներառվող ենթաճյուղերի առաջնահերթության, ապահովագրական վճարների սահմանման, դրանց համալրման մեխանիզմների մշակման և գործունե համակարգի ներդրման մոտեցումների համար:
- Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացմանը կնպաստի գյուղատնտեսությունում ռիսկերի մեղմմանն ուղղված այլ պետական ծրագրերի իրականացումը, մասնավորապես՝ բույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների դեմ պայքարը, հողերի մելիորատիվ վիճակի պահպանումը և հակահեղեղային միջոցառումները, ագրոքիմիական հետազոտությունների և դրանց արդյունքների կիրառման արդյունավետության բարձրացումը:
- Կարևոր է համարվում գյուղատնտեսության համար առավել անբարենպաստ գոտիներում հողի մշակության համար նպատակային սուբսիդավորման ծրագրերի իրականացման վերականգնումը և դրանց կիրառման մեխանիզմների կատարելագործումը, ծրագրի իրականացման աշխարհագրության ընդլայնումը: Վերջինս զգալիորեն կնպաստի հացահատիկային, կերային մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի մշակության տարածքների ավելացմանը և արդյունքում՝ վարելահողերի միավոր տարածքից հասույթի ավելացմանը: Նշված ուղղությամբ 2007-2009թթ. իրականացված ծրագրերի արդյունքները հետևյալն են՝
  - ա) Ըստ ԱՎԾ-ի տվյալների ուսումնասիրությունների 2007թ. աջակցության ծրագրից օգտված համայնքներում 2007 թվականին 2006 թվականի համեմատությամբ ցանքատարածությունների աճը կազմել է՝ աշնանացան ցորենի գծով 136.9 % և գարնանացան գարու գծով 118.4 %: Միայն 2007թ. 457 հա-ի վրա կատարվել է աշնանացան ցորենի ավելի ցանք քան 2006 թվականին, որից ստացվող բերքը կազմել է 1165.4 տոննա, արժեքային առումով՝ 139.8 մլն դրամ: Միաժամանակ, 737 հա-ի վրա կատարվել է գարնանացան գարու ավելի ցանք քան 2006 թվականին, որից ստացված բերքը կազմել է 1842,5 տոննա, արժեքային առումով՝ 202.7 մլն դրամ: Արդյունքում աշնանացան ցորենի և գարնանացան գարու համախառն արտադրանքի ընդհանուր հավելվածը կազմել է 342.5 մլն դրամ, որը կրկնակի անգամ գերազանցում է պետական աջակցության գումարին:
  - բ) 2008թ. հիմնական օժանդակություն ստացած մարզերում մշակաբույսերի տարածքները 2008 թվականին գերազանցել են նախորդ տարվա մակարդակը 8.5 %-ով, ցանքատարածությունների աճը կազմել է 5909.7 հա, այն դեպքում, երբ հանրապետության առումով գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները չեն ավելացել: Պետական աջակցությամբ ցանված մշակաբույսերի համախառն արտադրանքի աճը կազմել է 9.0 %:

Միաժամանակ, համախառն արտադրանքի աճը գնահատվել է 2450.4 մլն դրամ, որը գերազանցում է պետական աջակցության գումարին 56.6 %-ով:

- զ) Պետական աջակցություն ստացած նախկին տարածաշրջաններում (Արագած, Մարտունի, Ճամբարակ և Աշոցք), որտեղ գրեթե բոլոր համայնքները այդ ծրագրում ընդգրկված են եղել ինչպես 2008թ. այնպես էլ 2009թ.: Համեմատության առումով աշնանացան և գարնանացան գարու ու ցորենի ցանքատարածությունները 2009թ. գերազանցել են 2008թ. նակարդակը 78.3 %-ով և կազմել են 15050 հա (ցանքատարածությունների բացարձակ աճը՝ 6611 հա): Միայն վերոնշյալ տարածաշրջաններում համախառն բերքի հավելումը գնահատվել է 15.9 հազ. տոննա, արժեքային արտահայտությամբ՝ 1.8 մլրդ դրամ (գերազանցում է պետական աջակցության գումարը):

Այսպիսով, հաշվի առնելով ուսումնասիրվող հիմնախնդիրները կապված ՀՀ գյուղացիական տնտեսություններում վարելահողերի նպատակային չօգտագործման հիմնական գործոնների բացահայտման հետ, գալիս ենք այն եզրակացության, որ միայն պետական աջակցության և իրականացվող միջոցառումների նկատմամբ վերահսկողության միջոցով հասանելի կլինի վարելահողերի աստիճանաբար նպատակային օգտագործումը:

**Шушаник Костанян, Рузанна Алоян**

### **Пути решений и изучения выявленных факторов в нецелевых использованиях пахотных земель в с-х предприятиях РА**

#### **Аннотация**

В системе изучены причины неиспользованных пахотных земель фермерских хозяйств. В повышении уровня пахотных земель важно пересмотреть политику кредитования, улучшить обслуживание средств производства, решить проблемы реализации продукции и увеличения государственного субсидирования приграничных районов.

**Shushanik Kostanyan, Ruzanna Aloyan**

### **Factors Determining Misuse of the arable land by Armenian Farmings and Solutions to Increase the Rate of Use**

#### **Abstract**

The article studies the factors that determine misuse of arable land by Armenian farmings. In order to increase the rate of use of the arable land the authors propose the following: revise lending policy of banks and credit organizations; provide more subsidies to farmers of the bordering communities; access to new markets for agricultural products; and machinery and equipment.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ**

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը շարունակում է մնալ համացանցում ամենափնտրվող բառակապակցություններից մեկը: Ըստ համացանցային վիճակագիրների, «ճգնաժամ» բառի 10 հարցումներից 9-ը ուղղակիորեն առնչություն է ունեցել հենց համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պատճառների բացահայտման, մարդկային կյանքի վրա դրանց ազդեցության, հետևանքների հաղթահարման և ճգնաժամի զարգացման հետագա միտումների հետ: Գիտական ոլորտում արձանագրվեց նոր միտում. գրեթե բոլոր հետազոտությունները, անկախ նրանից դրանք տնտեսական վերլուծություններ էին, թե ոչ, երևույթները դիտարկվում էին հենց ֆինանսատնտեսական ճգնաժամի դիտակետից: Սակայն եթե որոշ հետազոտություններում ֆինանսատնտեսական ճգնաժամին հղում կատարելը զուտ հետազոտական նյութին արդիականություն հաղորդելու արհեստական միջոց էր, ապա ցանկացած երկրի, և առավել ևս Հայաստանի, արտաքին առևտրին առնչվող վերլուծություններն այս ենթատեսքատում միայն օբյեկտիվ անհրաժեշտություն են՝ ոլորտի հետագա զարգացումները կանխատեսելու և դրանք առավել բարենպաստ նպատակաուղղելու տեսանկյունից:

Իր տեսակով համապարփակ ճգնաժամը յուրաքանչյուր երկիր յուրովի հաղթահարեց՝ պայմանավորված տնտեսական խոցելիության տարբեր աստիճաններով: Թեև ճգնաժամից էապես տուժեցին նաև զարգացած այնպիսի երկրներ, որոնք տնտեսական խոցելիության տեսանկյունից այնքան էլ անբարենպաստ վիճակում չեն գտնվել (օրինակ, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և այլն)<sup>1</sup>: Որպես «կովկասյան վագր»<sup>2</sup>, որն աշխարհաքաղաքական բազում խնդիրներ ունի հիմնական հարևան երկրների հետ, Հայաստանի համար կարևոր էր ճգնաժամն ավելի սահուն հաղթահարել: Ճգնաժամի սկզբնական փուլում տեսակետ էր շրջանառվում, թե այն շրջանցելու է Հայաստանը, ավելի ուշ արդեն սկսեցին կատակել, թե այն թափանցելով Հայաստան, զարմացել է, թե մինչ այդ ինչ-որ մեկն արդեն եղել է այդ երկրում: Այս իմաստով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ֆինանսատնտեսական ճգնաժամի տարածաշրջանային ազդեցության հարցը, թե ինչու այն առավել բացասական հետևանքներ ունեցավ հատկապես Հայաստանում, որտեղ իրական ՀՆԱ-ի կրճատումը 2009թ. կազմել է 14.2%, այն դեպքում, երբ Վրաստանում այն ընդամենը 3.8% էր, իսկ Ադրբեջանում գրանցվել է տնտեսական աճ՝ 9.3%-ով, թեև դուլարային արժեքով (ընթացիկ շուկայական գներով) ՀՆԱ-ի կրճատումը տեսանելի է եղել երեք երկրներում էլ. Հայաստանում՝ 25.8%<sup>3</sup>, Վրաստանում՝ 16%<sup>4</sup>, Ադրբեջանում՝ 10%<sup>5</sup>:

Հիմք ընդունելով 2007թվականը<sup>6</sup> որպես մինչճգնաժամային տարի, փորձենք պարզել անդրկովկասյան պետությունների ելակետային պայմանները՝ վերլուծությունն իրականացնելով տնտեսական խոցելիության մակարդակը բնորոշող այն ցուցանիշներին համապատասխան, որոնք անմիջական առնչություն ունեն եկզոգեն շուկերին դիմակայման հետ:

<sup>1</sup> Այստեղ անհրաժեշտ է մի ճշգրտում կատարել. տնտեսական խոցելիության գաղափարն ի սկզբանե կիրառվել է փոքր, զարգացող երկրների առնչությամբ՝ որպես արտաքին բացասական ազդեցություններից կորուստներ կրելու հավանականության ցուցանիշ, և որպես այսպիսին, զարգացած երկրներն այդ ցուցանիշով չեն դասակարգվել, ՄԱԿ-ի կողմից առաջարկված այդ դասակարգման մեջ ընդգրկված չեն նաև անդրկովկասյան հանրապետությունները:

<sup>2</sup> 2005թվականին Համաշխարհային բանկը, ներկայացնելով Հայաստանի 15 տարիների զարգացման վերաբերյալ զեկույց, այն վերնագրեց «Կովկասյան վագրի մռնչումը», և թեև շատ վերլուծաբաններ հաճախ քամահարանքով են վերաբերվում տրված բնորոշմանը, այնուամենայնիվ, անժխտելի է այն փաստը, որ առանց նախազգային խոշոր պաշարների, շրջափակման և դժվար աշխարհաքաղաքական կացության մեջ գտնվող Հայաստանը կարողացել էր 10 տարի շարունակ արձանագրել երկնիշ տնտեսական աճ:

<sup>3</sup> Հաշվարկը կատարվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2011 տվյալների հիման վրա, էջ 234:

<sup>4</sup> [www.geostat.ge](http://www.geostat.ge) Gross Domestic Product of Georgia in 2009

<sup>5</sup> [http://www.azstat.org/statinfo/system\\_nat\\_accounts/en/index.shtml#](http://www.azstat.org/statinfo/system_nat_accounts/en/index.shtml#) Gross domestic product

<sup>6</sup> Թեև համարվում է, որ ճգնաժամն սկսվել է հենց 2007թ., այնուամենայնիվ, այն որպես երևույթ գիտակցվեց միայն 2008-ին, իսկ դրա հետևանքներն ազգային տնտեսությունների վրա ակնհայտ դարձան միայն 2009 թ. սկզբին:



Որպես օրինաչափություն, **տնտեսության փոքրությունը** (փոքր բնակչությամբ և տարածքով, բնառեսուրսային ներուժով) հաճախ պայմանավորում է տնտեսական կառուցվածքի թույլ դիվերսիֆիկացիան և խիստ կախվածությունն արտաքին մատակարարման և սպառման շուկաներից: Թեև, ինչպես վկայում է բազմաթիվ երկրների օրինակը (Շվեյցարիա, Իսրայել, Սինգապուր), իրականում տնտեսության փոքրությունը բնավ էլ չի պայմանավորել ճգնաժամն այս կամ այն կերպ հաղթահարելու կարողությունը, միաժամանակ տեսակետ կա, որ փոքր երկրները նույնիսկ որոշակի առավելություններ ունեն արտահանմանն ուղղված տնտեսության կառուցվածքի ձևավորման<sup>1</sup>, հետևաբար նաև՝ ճգնաժամին առավել ճկուն դիմակայելու առումով: Ուստի, շրջանցելով տնտեսության փոքրության հայտանիշը, դիտարկենք, թե **տնտեսության դիվերսիֆիկացիայի**, ապա նաև՝ **արտաքին շուկաներից կախվածության** տեսանկյունից ինչպիսի վիճակում էին գտնվում անդրկովկասյան պետությունները: Վերջիններիս ՅՆԱ կառուցվածքի վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ երկրներն իրականում բավական նման են, համեմայնդեպս, տնտեսության դիվերսիֆիկացիայի առումով դժվար է ասել, թե որ երկիրն է ավելի լավ վիճակում գտնվել: Այնուամենայնիվ, ըստ տնտեսագետների որոշ դիտողությունների, վրացական տնտեսությունն համեմատաբար ավելի դիվերսիֆիկացված է, քանի որ ՅՆԱ հիմնական մասը, ավելի քան 60%-ը, ձևավորվում է ծառայությունների ոլորտում: Սակայն մենք առավել հակված ենք վրացական տնտեսության կառուցվածքը «ցածրորակ» է գնահատելուն<sup>2</sup>, թեև ուզ այն պատճառով, որ այն ավելացված արժեքի ստեղծման հարցում նկատելիորեն զիջում է հարևան երկրներին: Ադրբեջանում, որտեղ տնտեսության նույնիսկ ոչ-նավթային համարվող ճյուղերն անմիջական առնչություն ունեն նավթագազային ոլորտի հետ, իսկ արդյունաբերական արտադրանքի աճի 94%-ն ապահովում է հենց նավթարդյունաբերությունը, տնտեսության դիվերսիֆիկացիայի մասին ակնարկ անգամ լինել չի կարող: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ՅՆԱ կառուցվածքում առաջին հայացքից երկու անհանգստացնող հանգամանք կա՝ գյուղատնտեսության ոլորտի՝ 18.2% և շինարարության ոլորտի՝ 24.5% զգալիորեն մեծ տեսակարար կշիռները: Չնայած ՄԱԿ-ի Ջարգացման քաղաքականության հանձնաժողովը գյուղատնտեսության մեծ տեսակարար կշիռը համարում է տնտեսական խոցելիության կարևորագույն գործոն (հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոլորտն առավել կախված է տարերային աղետներից, գների սեզոնային տատանումներից և այլն), մեր կարծիքով, Հայաստանի պարագայում, գյուղատնտեսության զարգացումն որոշակի ռազմավարական նշանակություն ունի՝ կապված պարենային անվտանգության հետ: Նկատենք, որ 2009թ. գյուղատնտեսության ոլորտը ոչ միայն անկում չարձանագրեց, այլ հակառակը, նախորդ տարվա հետ համադրելի գներով հաշվարկման դեպքում՝ 5.9% աճ<sup>3</sup>: Հարևան երկրների հետ համեմատությունն այս առումով հօգուտ Հայաստանի է. Վրաստանում օրինակ (թեև օրինակի տրամաբանությունը նույնը կլիներ նաև Ադրբեջանի համար), գյուղատնտեսության ոլորտը 2007թ. արտադրել է ՅՆԱ-ի ընդամենը 9%, այն դեպքում, երբ բնակչության գրեթե կեսը համարվում է գյուղաբնակ, ավելին, տնտեսապես ակտիվ բնակչության հիմնական մասը՝ 56%-ը, զբաղված է հենց գյուղատնտեսության ոլորտում, այն դեպքում, երբ այստեղ ոլորտի զարգացման համար բնակլիմայական պայմանները շատ ավելի բարենպաստ են, քան Հայաստանում: Փաստորեն, գյուղատնտեսության ոլորտում զարգացումները հարևան երկրների համեմատ Հայաստանում կարելի է առավել արդյունավետ համարել:

Ինչ վերաբերում է ՅՆԱ կառուցվածքում շինարարության չափազանց մեծ տեսակարար կշիռն, ապա դա իսկապես խնդիր էր Հայաստանի համար և ոչ միայն տնտեսության դիվերսիֆիկացիայի առումով: Նախ սխալ պիտի դիտել այն կարծիքը, թե շինարարության ոլորտը ոչ մի կապ չունի համաշխարհային տնտեսության հետ, մինչդեռ իրականում այդ կապն է պայմանավորել ոլորտի արագ տեմպերով զարգացումը: Իրականում, էլիտար շինարարությանն ուղղորդ-

<sup>1</sup> Shumacher E., Small is Beautiful: Economics As if People Mattered. New York, 1973, pp 63-64.

<sup>2</sup> Չորջ Բերուլավայի այն կարծիքի համամասնությամբ, որ Վրաստանի տնտեսական աճը ցածր որակի է, քանզի այն կապված չէ բարձր տեխնոլոգիական ոլորտում ներդրումների, նորամուծությունների, նոր աշխատատեղերի բացման, փոքր և միջին բիզնեսի զարգացման հետ: Այս մասին առավել մանրամասն տե՛ս. Конкуренентоспособность человеческих ресурсов. Опыт Грузии. [http://www.ca-c.org/c-g/2010/journal\\_rus/c-g-1-2/10.shtml](http://www.ca-c.org/c-g/2010/journal_rus/c-g-1-2/10.shtml)

<sup>3</sup> Ցուցանիշը ներկայացված է համադրելի գներով, աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2011, էջ 252:

վող ներդրումների զգալի մասը (տարբեր գնահատումներով 70-90%) ֆինանսավորվում էր դրամական մասնավոր փոխանցումների հաշվին, այսինքն՝ արտերկրում որոշակի եկամուտներ ապահոված սփյուռքի ներկայացուցիչները ցանկանում էին անշարժ գույք ձեռք բերել նաև հայրենիքում: Փաստորեն, ոլորտի զարգացումը թելադրված չէր տնտեսության ընդհանուր զարգացմամբ և հետևաբար չէր ենթադրում բնակչության եկամուտների աճի հետ համաչափություն: Դեռևս այդ հանգամանքն էլ կործանարար եղավ Հայաստանի տնտեսության համար, քանի որ առաջինն անշարժ գույքի շուկային հարվածած ֆինանսատնտեսական ճգնաժամը ներդրողներին ստիպեց հետ կանչել ոլորտում ներդրված միջոցները, արդյունքում շինարարության ոլորտը որի բաժինը ՀՆԱ-ում կազմում էր 25%, կրճատվեց ավելի քան 58%-ով, պայմանավորելով 14.2% ընդհանուր տնտեսական անկումը: Ի դեպ գրեթե նույն պատճառներով, շինարարության ոլորտի զգալի կրճատում արձանագրվեց նաև Վրաստանում և Ադրբեջանում: Պարզապես Ադրբեջանի ՀՆԱ կառուցվածքում դա տեսանելի չէ, քանի որ նավթագազային սեկտորի կրճատումն ավելի զգալի էր, և տեսկարար կշիռների վերաբաշխումը հոգուտ շինարարության ոլորտի է տեղի ունեցել:

Անդրկովկասյան պետությունների միջև նմանությունն ակնհայտ է նաև *արտաքին շուկաներից կախվածության* առումով, թեև Ադրբեջանը, շնորհիվ հարուստ ածխաջրածնային պաշարների, ի տարբերություն Վրաստանի և Հայաստանի, մշտապես ունեցել է դրական առևտրային հաշվեկշիռ: Երեք երկրներում էլ 2007թ. արտահանումն ունեցել է զուտ հումքային ուղղվածություն. Ադրբեջանի արտահանման մոտ 85%-ը եղել են արդյունաբերական պաշարներ (նավթագազային հանքահումքային արտադրանք և ոչ թանկարժեք մետաղներ), Հայաստանում արդյունաբերական պաշարների արտահանումը կազմել է 73% (սև և գունավոր մետաղներ, հանքահումքային ապրանքներ, ադամանդ<sup>1</sup>), իսկ Վրաստանում՝ 65% (երկաթի համաձուլվածք, անմշակ ոսկի, մետաղի ջարդոն, պղնձի հանքաքար և այլն): Բացի այդ, երեք երկրներն էլ գրեթե հավասարաչափ կախված են ներմուծվող պատրաստի սննդի արտադրանքից, որը խիստ բացասական գործոն է տնտեսական, մասնավորապես՝ պարենային անվտանգության տեսանկյունից: Կարևորվում է նաև *ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների ներմուծումից* երկրների *կախվածությունը*: Այս առումով, թվում է՝ շահեկան դիրքերում է Ադրբեջանը, որի համեմատ Հայաստանը և Վրաստանը մեծապես կախված են վառելիքային ռեսուրսների ներմուծումից, սակայն խնդրի առավել խորքային վերլուծությունը բացահայտում է, որ ադրբեջանական արտահանման ծայրահեղ թույլ դիվերսիֆիկացիան ինքնին ամբողջ տնտեսությունը խիստ կախվածության մեջ է դնում արտաքին շուկերից: Այսպես 2008թ. թռիչքային տեմպերով (գրեթե 8 անգամ՝ 6 մլրդ \$-ից մինչև 48 մլրդ \$) աճած Ադրբեջանի արտահանման 97.1%-ն ապահովել է «հանքային վառելանյութը», իսկ արդեն 2009թ. համաշխարհային շուկայում նավթի գների կտրուկ անկումը արտահանումը կրճատեց մոտ 3.5 անգամ, գրեթե նույնքան, որքան և նավթի համաշխարհային գների անկումն էր, ընդ որում բնամթերային տեսքով նավթի արտահանումը շարունակել է աճել:

Էներգակիրների էժանացումն ամենևին էլ չխթանեց իրական արտադրությունը դրանց ներկրումից կախված Հայաստանում և Վրաստանում: Իրավիճակի նմանությունն այստեղ էլ ակնառու էր. օրինակ, «մետաղ պարունակող հանքանյութի և մետաղի ջարդոնի» արտահանումը ֆիզիկական ծավալներով աճել է 2008-2009թթ., բայց արժեքային առումով՝ նվազել, իսկ գունավոր մետաղների դեպքում՝ թեև արտահանման ծավալների նվազում չի եղել, սակայն ֆիզիկական և արժեքային ցուցանիշների աճի միջև առկա է զգալի անհամամասնություն<sup>2</sup>: Արտահանման ապրանքային կառուցվածքի դիվերսիֆիկացիայի տեսանկյունից Հայաստանը և Վրաստանը բավական նման են եղել, սակայն, եթե հաշվի առնենք, որ ի տարբերություն Հայաստանի, Վրաստանն արտահանմանն ուղղված տնտեսության կառուցվածքի ձևավորման

<sup>1</sup> Ինչպես հայտնի է, ադամանդը Հայաստան է ներմուծվում անմշակ տեսքով, բայց նույնիսկ վերամշակումից հետո, այն չի կարելի համարել պատրաստի արտադրանք, քանի որ պատվիրատու երկրներում այն օգտագործվում է վերջնական ոսկերչական ապրանքների արտադրության գործընթացում:

<sup>2</sup> ՀՀ արտաքին առևտուրը 2007-2010թթ. ըստ «Միջազգային առևտրի ստանդարտ դասակարգման» դասկարգչի ենթաբաժինների, էջ 29-30: [http://www.armstat.am/file/article/ft\\_2nish\\_10\\_4.pdf](http://www.armstat.am/file/article/ft_2nish_10_4.pdf)

համար բավարար նպաստավոր պայմաններ (օրինակ, ելք դեպի ծով, հարևանների հետ լուրջ հիմնախնդիրների բացակայություն<sup>1</sup>, օտարերկրյա ներդրումների զգալի ներհոսք և այլն) ունենալով հանդերձ արտահանման աճն ապահովել է հիմնականում ապրանքների վերարտահանման հաշվին, ապա կարելի է ասել, որ հարևանների հետ համեմատությամբ, ինչպես դիվերսիֆիկացիայի, այնպես էլ կառուցվածքի առումով Հայաստանի արտահանումը որոշակիորեն ավելի արդյունավետ է եղել:

Փաստորեն, ճգնաժամի հետևանքով, 2009թ. երեք երկրներում արտահանման ծավալների կրճատումը համահունչ է եղել ներկայացված իրավիճակին. Ադրբեջանում արտահանումը 2008թ. համեմատ կրճատվել է 69.2%-ով, Հայաստանում՝ 32.8%-ով, Վրաստանում՝ 25%-ով: Սակայն, եթե համարենք, որ Հայաստանում արտահանման ծավալների անկումն սկսվել էր դեռևս 2008-ից (8%), ապա պարզ է դառնում, որ արտահանման ծավալների կրճատումը ճգնաժամի հետևանքով ավելի մեծ է եղել: 2009-ին նկատելիորեն կրճատվել են նաև ներմուծման ծավալները. Վրաստանում՝ 29%-ով, Հայաստանում՝ 25%-ով, Ադրբեջանում՝ 15.5%-ով, և այդ միտումները լավագույնս արտացոլում են երկրների կախվածությունը ներմուծումից և խոցելիությունն արտաքին շուկերի նկատմամբ: Թեև տնտեսության ոչ արդյունավետ կառուցվածքի հետ միաժամանակ ներմուծման նման կրճատումն այլ՝ դարձյալ կարևոր պատճառ ուներ, այն է՝ **ֆինանսավորման արտաքին աղբյուրներից կախվածությունը**, որը դիտարկվում է երկու տեսանկյունից. նախ տնտեսությունում ներդրումների ֆինանսավորման, ապա նաև՝ արտաքին մասնավոր տրանսֆերտների առումով: Հենց մասնավոր փոխանցումներն էլ ապահովում են արտարժույթի որոշակի ներհոսք և հսկայական նշանակություն ձեռք բերում երեք երկրներում ներմուծման նկատմամբ պահանջարկի ձևավորման գործում: Ինչ խոսք, արտարժույթի անհրաժեշտ քանակի ապահովման հարցում Ադրբեջանն ավելի կայուն աղբյուր ունի՝ ածխաջրածնային պաշարները, սակայն վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ արտասահմանից մասնավոր փոխանցումները նույնպես զգալի են՝ 2008թ. ավելի քան 1 մլրդ դոլար և էապես պայմանավորում են բնակչության կենսամակարդակը: Գրեթե նույնքան են եղել նաև դեպի Վրաստան զուտ տրանսֆերտները, այն դեպքում, երբ Հայաստանում դրանք կազմել են ավելի քան 2 մլրդ դոլար: Այդ իսկ պատճառով էլ մասնավոր տրանսֆերտների կրճատումը (Վրաստանում 18%, Ադրբեջանում՝ 30%, Հայաստանում 35%) առավել հիվանդագին հետևանքներ ունեցավ հենց Հայաստանում: Ինչ վերաբերում է օտարերկրյա ուղղակի ներդրումներին, ապա 2009թ. Հայաստանում դրանք կրճատվեցին 26%-ով (ընդ որում, ըստ առանձին ճյուղերի ներդրումների կրճատումը շատ ավելի խորն է եղել, օրինակ մետաղագործական արդյունաբերությունում՝ 92%, իսկ շինարարությունում 88%), Ադրբեջանում՝ 20%-ով, իսկ Վրաստանում՝ արդեն 60%-ով: Ներդրումների նման աննախադեպ կրճատման ֆոնի վրա ակնկալվող տնտեսական անկումը սակայն Վրաստանում այնքան էլ մեծ չէրավ՝ պայմանավորված Վրաստանին տրվող մեծածավալ ֆինանսական օգնություններով՝ իբրև 2008 թվականի աշնանը Ռուսաստանի հետ պատերազմական գործողությունների հետևանքով վնասների հաղթահարման նպատակով: Տրված գրանտներն և օգնությունները ոչ միայն փոխհատուցեցին ներդրումների կրճատումը, այլ նաև՝ զգալիորեն գերազանցեցին դրանք՝ ստեղծելով տնտեսության զարգացման համար նոր խթաններ: Այդ էր պատճառը, որ ավելի ուշ վերլուծություններում սկսեց շրջանառվել այն կարծիքը, որ ռուս-վրացական պատերազմը փրկեց վրացական տնտեսությունը<sup>2</sup>:

Արտարժույթի ներհոսքի անհրաժեշտությանն անդրադարձն ինքնաբերաբար հանգեցնում է տնտեսական խոցելիությունը պայմանավորող մեկ այլ կարևոր հանգամանքի՝ **նսկու-արտարժույթային պահուստների առկայության** և դրանց վրա ճգնաժամային երևույթների ազդեցության ուսումնասիրությանը: Այս գործոնն ամենաուղղակի կերպով առնչություն ունի արտաքին առևտրաշրջանառության հետ, քանի որ պայմանավորում է տնտեսությունում փոխարժեքի քաղաքականությունը: Պարզ է, որ ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում կապիտալի

<sup>1</sup> Քանի որ ելակետային է համարվել 2007 թվականը, ապա ռուս-վրացական հակամարտությունը, որի ելքը 2008-ի օգոստոսյան պատերազմը եղավ, հաշվի չի առնվել:

<sup>2</sup> Экономике Грузии спасла война. <http://bizzone.info/articles/1258592529.php>

ներհոսքի, արտահանման ծավալների և մասնավոր փոխանցումների կրճատումը չէր կարող չանդրադառնալ երկրների պաշտոնական պահուստների վրա: Հայաստանում արտարժույթային պահուստների կրճատումը սկսվում է դեռևս 2008թ. սկզբից՝ հունվարից մինչև դեկտեմբեր կրճատվելով մոտ 15%-ով<sup>1</sup>, նույն ժամանակաշրջանում դուլար/դրամ փոխարժեքը գրեթե փոփոխության չի ենթարկվել՝ մնալով 1 դուլարը 306 դրամի շրջակայքում: Եթե հաշվի առնենք, որ արտահանման ծավալների կրճատման հետևանքով արտարժույթի ներհոսքը կրճատվել էր, ապա ակնհայտ է դառնում, որ փոխարժեքի պահպանման համար ԿԲ պետք է դիմեր ինտերվենցիաների: Արտարժույթային պահուստների կրճատումը շարունակվում է նաև 2009թ. հունվար և փետրվար ամիսներին՝ ավելի զգալի 19%-ով: Սարտ ամսից ՀՀ ԿԲ-ն պաշտոնապես անցավ լողացող փոխարժեքի քաղաքականությանը, և դրանը դնված 20%-ով, իսկ մինչև տարեվերջ փոխարժեքն արդեն 1 դուլարի համար 380 դրամ էր: Ոսկու-արժույթային պաշարներն սկսեցին աստիճանաբար աճել, թեև 2009թ. օգոստոսից նկատելիորեն աճեցին նաև SDR-ով պահուստները՝ համարժեքությամբ 2.4 մլն դուլարից հասնելով 107 մլն դուլարի, որը պայմանավորված էր Համաշխարհային բանկի կողմից ֆինանսական ճգնաժամի հետևանքները հաղթահարելու նպատակով տրված վարկային միջոցների աճով: 2009թ. արտարժույթային պահուստների կրճատում արձանագրվեց նաև Ադրբեջանում՝ ավելի քան 1 մլրդ դոլարով<sup>2</sup> դարձյալ փոխարժեքի պահպանման նպատակով, թեև գրեթե բոլոր տարիներին Ադրբեջանում խնդիրը եղել է մանաթի արժևորումը (պայմանավորված նավթադոլլարների մեծ ներհոսքով), որն էլ հանգեցրել էր «հոլանդական հիվանդության» խորացմանը: Բազմաթիվ փորձագետների կարծիքով, մանաթի փոխարժեքի պահպանման քաղաքականությունը արդարացված չէր, քանի որ ճգնաժամը հնարավորություն էր ընձեռել վերջապես աշխուժացնել տնտեսության ոչ նավթային հատվածը: Վրաստանում, արդեն հայտնի պատճառներով, միջազգային պահուստների աճը 2009թ. նախորդ տարվա համեմատ աննախադեպ էր՝ 42.5%-ով<sup>3</sup>, ընդ որում դրանց կրճատում չի արձանագրվել նաև նախորդ տարիներին, թեև Վրաստանի Ազգային բանկը նույնպես փոխարժեքի պահպանման համար զգալի ինտերվենցիաներ է իրականացրել մինչև 2008թ. աշունը, որից հետո վրացական լարին նույնպես դնված 15%-ով:

Տնտեսագետները մատնանշում են նաև տնտեսական խոցելիությունը պայմանավորող այլ գործոններ, ինչպիսիք են օրինակ, երկրների սահմանափակ ռեսուրսային ապահովվածությունը, միջազգային զների վրա ազդելու անկարողությունը, աշխարհագրական հեռացվածությունն առևտրային խոշոր կենտրոններից, ներդրումների սահմանափակ հնարավորությունները, պետական կառավարման հետ կապված խնդիրները և այլն, որոնց առանձին չենք անդրադարձել, համարելով, որ դրանք հիմնականում կախյալ են արդեն դիտարկված գործոններից: Այնուամենայնիվ, առանձնացնենք ևս մի կարևոր գործոն, որն իր բնույթով ոչ տնտեսական է՝ **երկրի կախվածությունը տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումներից**: Հայտնի է, որ աշխարհաքաղաքական իրավիճակը անդրկովկասյան փոքրիկ տարածաշրջանում խիստ անկայուն է. մասնավորապես, տարածաշրջանի երկրների զարգացման վրա իր ազդեցությունն են ունեցել և շարունակում են ունենալ արցախյան պատերազմը, ռուս-վրացական հակամարտությունը, ամերիկա-իրանական «միջուկային» տարածայնությունները և այլն: Օրինակ, 2008թ. օգոստոսին ռուս-վրացական ռազմական բախման հետևանքով կորուստներ ունեցան նաև Հայաստանն ու Ադրբեջանը, որոնց համար Վրաստանը տարանցիկ է համարվում: Դժվար է գերազանահատել Ռուսաստանի աշխարհաքաղաքական ազդեցությունը տարածաշրջանում: Այն իր հսկայական դերն ունի նաև տնտեսական ոլորտում. հենց միայն այն պատճառով, որ մասնավոր փոխանցումների գերակշիռ մասը երեք երկրներ էլ հոսում են Ռուսաստանից: Տարածաշրջանում ազդեցիկ լինելու լուրջ հավակնություններ ունի նաև Թուրքիան, որը հիմնական առևտրային գործընկեր է Վրաստանի և Ադրբեջանի համար, և թեև հայաստանյան տնտեսավարողները վաղուց արդեն գտել են շրջափակումը շրջանցելու ճանապարհները և կարող են

<sup>1</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագիր-2008, էջ 18:

<sup>2</sup> Աղբյուրը՝ Global development finance. External debt of developing countries. The World Bank. pp 72:

<sup>3</sup> Աղբյուրը՝ Annual report-2010, National bank of Georgia, pp. 52:

զարգանալ նաև այդ պայմաններում<sup>1</sup>, այնուամենայնիվ, անժխտելի է, որ ճգնաժամի ազդեցությունը ՀՀ արտաքին առևտրի և ամբողջ տնտեսության վրա այդքան բացասական չէր լինի տնտեսական շրջափակման բացակայության պարագայում: Բացի այդ, երեք երկրների արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքի ուսումնասիրությունը թույլ է տալիս հիմնավորապես եզրակացնել, որ անկախ դրանցում առկա տարաբնույթ խնդիրներից, տնտեսական առանձնահատկություններից ու ռեսուրսային ներուժի տարբերություններից արտաքին աշխարհը տնտեսական առումով գրեթե չի դիֆերենցում հարաբերությունների կառուցման մոտեցումները, քանի որ, ի վերջո, բոլոր հակասություններով հանդերձ այդ երկրները հանդես են գալիս որպես փոքր տարածաշրջանի որոշակի մաս: Այս նկատառումը հատկապես կարևորվում է գործընկերների ընտրության տեսանկյունից արտաքին առևտրի հետճգնաժամային զարգացումներն ուղղորդելիս:

Համաաշխարհային տնտեսությունը շարունակում է ջղածգվել ֆինանսատնտեսական ճգնաժամի ծանր հետևանքներից, բազմաթիվ երկրներում դեռևս չեն վերականգնվել մինչճգնաժամային տնտեսական ցուցանիշները: Օրինակ, Հայաստանում տնտեսական աճը 2010-ին 2.1% էր, իսկ 2011-ին՝ 4.6%<sup>2</sup>, սակայն 2009թ. անկումն այնքան խորն էր, որ 2008-ի մակարդակը դեռևս անհասանելի է, թեև անվանական ՀՆԱ-ն 2008թ. համեմատ աճել է 250 մլրդ դրամով: Վրաստանում 2010թ. արձանագրվել է 6.4% տնտեսական աճ, իսկ 2011-ին՝ 7%, Ադրբեջանում՝ համապատասխանաբար՝ 5% և 0.2%: Ադրբեջանի տնտեսական աճի տեմպերի նվազումը պայմանավորված է եղել նավթի և գազի արդյունահանման ծավալների կրճատմամբ, որն ադրբեջանական մեկնաբանմամբ նպատակ է ունեցել նվազեցնել տնտեսության կախվածությունը նավթագազային ոլորտից: Նկատենք, որ 2011թ. արդյունաբերական արտադրանքի 14.1% աճի տեմպերով Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում առաջինն է եղել, Վրաստանում այն կազմել է 11.8%, այն դեպքում, երբ Ադրբեջանում 5% անկում է գրանցվել: Արդեն 2010թ. նավթի և մետաղների համաաշխարհային շուկաներում գների մինչճգնաժամային մակարդակի վերականգնումը դիտարկվող երեք երկրների համար էլ արտաքին առևտրի ծավալների աճի խթան հանդիսացավ: Վրաստանում արտահանումն աճեց մոտ 39.7%-ով<sup>3</sup>, Հայաստանում՝ 42.2%-ով, իսկ Ադրբեջանում՝ 45%-ով: Թեև Հայաստանն ու Վրաստանը՝ որպես մեծ քանակությամբ նավթ և գազ ներմուծող երկրներ, մեծացրին նաև առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը, չնայած ներմուծման գների աճի էֆեկտն ինչ-որ առումով փոխհատուցվեց արտահանվող ապրանքների գների աճի էֆեկտով: Որպես անդրկովկասյան երկրներում հետճգնաժամային առաջընթացի վրա ազդող գործոն կարևորվում է հատկապես Ռուսաստանում տնտեսական աճի ցուցանիշը՝ ինչպես 2009թ., այնպես էլ 2010թ.՝ 4.3%<sup>4</sup>, որի արդյունքում դարձյալ նկատելիորեն մեծացան այդ երկրից դրամական փոխանցումները:

Եթե անդրադառնալու լինենք ճգնաժամի դասերին, ապա հարկ է նկատել, որ 2010-2011թթ. երկրների արտաքին առևտրում, որևէ էական փոփոխություն տեղի չի ունենում ոչ ապրանքային, ոչ էլ աշխարհագրական դիվերսիֆիկացիայի առումներով: Այնուամենայնիվ, փոքր տեղաշարժերը ՀՆԱ կառուցվածքում (օրինակ Հայաստանում շինարարության տեսակարար կշռի կրճատում մինչև ՀՆԱ 12%, Ադրբեջանում՝ ծառայությունների, իսկ Վրաստանում՝ արդյունաբերության ոլորտի տեսակարար կշռների ավելացումը և այլն) գուցե և որոշակի միտումներ են ենթադրում:

<sup>1</sup> Տեսակետը պատկանում է Համաաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի տնօրեն Օուլեսյա Սաադաթին:

<sup>2</sup> Եվ դա այն դեպքում, երբ շինարարության ոլորտը 12.5% անկում է գրանցել:

<sup>3</sup> Թեև Վրաստանում արդեն 2011 թվականին արտահանման ծավալները դարձյալ կրճատվեցին 12%-ով:

<sup>4</sup> Աղբյուրը՝ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/rs.html>.

## Влияние экономического кризиса на внешнеторговые региональные тенденции

### Аннотация

Мировая экономика до сих пор борется с последствиями финансового кризиса. Каждая из стран Закавказья преодолела кризис по-своему в зависимости от особенностей структуры экономики. В статье проведен анализ по основным факторам экономической уязвимости, с целью исследования воздействий кризиса на внешнюю торговлю в Закавказском регионе.

Gayane Harutyunyan

## The Impact of Economic Crisis on Regional Foreign Trade Patterns

### Abstract

The Global Economy is still fighting the effects of the Global Financial Crisis. Each of the South-Caucasian countries has overcome the Crisis differently, depending on the structure of national economy. The article analyses the main vulnerability factors of economy in order to study the impact of the Crisis on foreign trade in the South-Caucasus Region.

### ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ. գ. թ.

## ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսությունը երկրի տնտեսական առանցքային ոլորտներից մեկն է: Ագրոպարենային համակարգը հանրապետության համախառն ներքին արդյունքի շուրջ 35 տոկոսն է կազմում, այդ թվում՝ գյուղատնտեսությունը մոտ 25 տոկոսը:

Ագրոպարենային ոլորտում գործում է շուկայական հարաբերություններով ընթացող ազատական տնտեսական համակարգ, որտեղ ներառված են մոտ 340 հազար գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Հայաստանի գյուղատնտեսական հունք վերամշակող արդյունաբերությունը տնտեսության կարևորագույն և բարձր արդյունավետությամբ աշխատող ճյուղերից է: Այն իր ուրույն տեղն ունի բնակչության պարենային ապահովության, գյուղական բնակչության զբաղվածության և եկամուտների ապահովման գործում: Վերջին հինգ տարիներին (2007-2011թթ.) միջին հաշվով նրան բաժին է ընկնում երկրի համախառն ներքին արդյունքի 4.8 տոկոսը:

Փոքր հողակտորների վրա արդյունավետ տնտեսավարման համար, գյուղատնտեսական հունք վերամշակող արդյունաբերության ոլորտի զարգացման կարևոր նախապայմաններից են ինչպես գյուղատնտեսական բնույթի արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների արդիականացման, վարկավորման և ռիսկերի ապահովագրման, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման փոփոխությունների անհրաժեշտությունը, այնպես էլ մրցունակության բարձրացումը և տնտեսավարման բազմաձևության սկզբունքով կոոպերացիայի զարգացումը:

ՀՀ-ում արդյունաբերության ճյուղում գյուղատնտեսական հունք վերամշակող կազմակերպությունների տեսակարար կշիռը 2011 թվականին, մի շարք միջոցառումների, այդ թվում՝

շուկայական ենթակառուցվածքների ստեղծման, մեծածավալ ներդրումների և օրենսդրական դաշտի բարելավման շնորհիվ, կազմել է 35.0 տոկոս:

Ազրովերամշակման արդյունաբերության կայուն զարգացումը շատ կարևոր է, քանի որ դրանից կախված զարգանում են նաև գյուղատնտեսության մյուս հիմնական ճյուղերը՝ բուսաբուծությունը և անասնաբուծությունը: Ավելին, այն էլ ավելի է կարևորվում, քանի որ ընդգրկում է սննդարդյունաբերության՝ խաղողի, պտուղ-բանջարեղենի և կաթի վերամշակման ենթաճյուղերը, ինչպես նաև ծխախոտի արտադրությունը, որոնք արտահանման ուղղվածություն ունեն:

Գյուղատնտեսական հումքի իրացման, արտադրության ճիշտ կազմակերպման և արտադրության ծավալների կայուն զարգացման գրավական է հանդիսանում պայմանագրային փոխհարաբերությունների ձևավորումն ու իրականացումը գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջև, որոնք պետք է նպաստեն վարկավորման մատչելիությանը, ռիսկերի նվազեցմանը և վճարային կարգապահության բարձրացմանը: Պայմանագրային հարաբերությունները ձեռնտու են վերամշակող կազմակերպություններին, քանի որ նրանք են ապահովվում և՛ անհրաժեշտ երաշխավորված հումքի քանակով, և՛ տվյալ կազմակերպությունում աշխատող մարդկանց երկարաժամկետ զբաղվածությամբ:

Մինչև 2011թ. ըստ ԱՎԾ տվյալների, խաղող և պտուղ-բանջարեղեն վերամշակող մոտ 30 ընկերություններ գյուղացիական տնտեսությունների հետ կնքել են 8028 պայմանագրեր: Գյուղատնտեսական հումքի մթերումների և սննդամթերքի արտադրության ծավալների ավելացման համար կարևորվում են շուկայական հարաբերությունների, մրցակցության խորացման, նոր արտադրական կազմակերպությունների ստեղծման, դրանց վերազինման ու նոր տեխնոլոգիաների ներդրման (կամ էլ առկա տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման). արտադրանքի որակի բարելավման և արտահանման ծավալների ավելացման հիմնախնդիրները, որոնց իրականացումը հնարավոր է պետական աջակցությամբ մեծածավալ ներդրումների, համատեղ գործունեությամբ կազմակերպությունների ստեղծման և վարկերի ներգրավման միջոցով: Հիմք ընդունելով վերոհիշյալների կարևորությունը և դրանց իրականացման անհրաժեշտությունը, գյուղատնտեսական հումքի վերամշակման համակարգի պետական աջակցության ուղղություններից են՝

- հումք արտադրողների և վերամշակողների միջև կոոպերացիայի ձևավորումը.
- շուկային արագ հարմարվող փոքր արտադրությունների ստեղծումը.
- մասնագիտական կադրերի պատրաստումը.
- տեղեկատվության տարածումն ու արմատավորումը, մարքեթինգային և գիտական հետազոտությունների ընդլայնումը.

Վերջին տասնամյակում ազրովերամշակման համակարգում ավելացել են արտադրական հզորությունների օգտագործումը, որի արդյունքում մեղմացել է գյուղատնտեսական հումքի մթերումների հիմնախնդիրը: Վերջին 5 տարիների ընթացքում հանրապետությունում գործում են վերագործարկված կամ նոր ստեղծված մոտ 40 պահածոների, 45 գինեգործական, 280 կաթի, 7 մսի, 4 ծխախոտի վերամշակման կազմակերպություններ: Վերամշակման համակարգի ակտիվացումը և արտահանման ծավալների ավելացումը նպաստել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների աճին և ապրանքայնության մակարդակի բարձրացմանը, որն էլ որոշ չափով կավելացնի գյուղացիական տնտեսությունների դրամական հոսքերը և վերարտադրողական կարողությունները:

2011 թվականին հանրապետությունում մթերվել է մոտ 168.3 հազ. տոննա պտուղ, բանջարեղեն և խաղող (մոտ 186.9 մլրդ. դրամ) այդ թվում՝ 33.3 հազ. տոննա պտուղ-բանջարեղեն (մոտ 2,1 մլրդ. դրամ) և 135.0 հազ. տոննա խաղող (մոտ 16.8 մլրդ. դրամ): Թարմ պտուղ-բանջարեղենի առաջարկը որոշ չափով զիջել էր ներքին շուկայի պահանջարկին, որն էլ իր հերթին ազդել էր գյուղատնտեսական մթերքների գների բարձրացմանը:

Վերջին 5 տարվա գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրատեսակների արտադրության մթերման ծավալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

**Հայաստանի Հանրապետությունում 2007-2011թթ. միջին հաշվով կատարած գյուղատնտեսական հումքի գնումների ծավալները և կառուցվածքը**

Տարիներ	Պտուղ		Բանջարեղեն		Խաղող	
	հազ. տ.	տես. կշիռ %	հազ. տ	տես. կշիռ %	հազ. տ	տես. կշիռ %
2007	14.8	23.4	57.1	27.3	144.4	21.4
2008	19.4	30.6	39.0	17.7	137.4	20.4
2009	11.2	17.7	32.3	15.4	127.7	19.0
2010	3.6	5.7	29.7	14.2	135.0	20.0
2011	14.3	22.6	51.0	24.4	129.0	1402
Ընդամենը	63.3	100.0	209.1	100.0	673.5	100.0

2011թ. գնվել է 129.0 հազ. տոննա խաղող և 65,3 հազ տոննա պտուղ-բանջարեղեն, որն իրականացվել է մոտ 40 ընկերության կողմից: Խաղողի 1կգ գնվել է մոտ 130 դրամ, նախորդ տարվա 124.4 դրամի դիմաց:

Ագրարային ոլորտում որոշ բարենպաստ պայմաններ կան գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերանշակման և արտահանման ուղղությամբ: Ավելի կոնկրետ՝ 1) գործող և նոր գործարկվող գործարաններում նոր տեխնոլոգիաների կիրառումը, մեներջմանը և մարքեթինգային ծառայությունների զարգացումը բարձրացրել են թողարկվող արտադրանքի մրցունակությունը, 2) ընդլայնվել են վերանշակող արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկվող արտադրանքի սպառման շուկաները, որն արդյունք է արտադրանքի որակի բարձրացման, ապրանքային տեսքի բարելավման, ստանդարտացման և սերտիֆիկացման ուղղությամբ իրականացված աշխատանքների:

Արտաքին ապրանքաշրջանառության կառուցվածքում պարենամթերքի ներմուծման և արտահանման ծավալները արժեքային արտահայտությամբ 1/6-ից ավելին են:

**2010-2011թթ. գյուղատնտեսական արտադրանքի արտահանման և ներմուծման ծավալները ըստ ապրանքախմբերի<sup>1</sup>**

(հազ. դոլար)

	Արտահանում			Ներմուծում		
	2010թ.	2011թ.	Աճի տեմպը	2010թ.	2011թ.	Աճի տեմպը
Ընդամենը	170491.8	237521.2	139.3	673546.2	782254.2	116.1
այդ թվում՝						
Կենդանական ծագման արտադրանք	23.552.1	30070.6	127.7	101448.5	133495.7	131.6
Բուսական ծագման արտադրանք	15.845.0	23509.6	148.4	214070.2	242302.6	113.2
Կենդանական և բուսական յուղեր և ճարպեր	29.1	25.3	86.9	49217.1	57987.0	117.8
Պատրաստի սննդի արտադրանք	131065.6	183915.7	140.3	308810.4	348468.9	112.8

Արտահանման և ներմուծման վերաբերյալ պատկերացում է տալիս գյուղատնտեսական ծագման մթերքների ներմուծման և արտահանման ծավալները արժեքային արտահայտությամբ (աղյուսակ 2)

Ըստ ԱՎԾ տվյալների, 2010թ. արտահանման ծավալների 57 տոկոսը կազմել են ալկոհոլային խմիչքները: Արտահանվել են բնական հյութեր, պտղի, բանջարեղենի պահածոներ, պանրի տարբեր տեսակներ և այլն:

Կենդանական և բուսական ծագման արտադրատեսակների արտահանման ծավալները արժեքային արտահայտությամբ ավելացել են համապատասխանաբար 127.7 և 148.4 տոկոսով:

<sup>1</sup> ՀՀ ԱՎԾ, Երևան, 2010-2011թթ.:



Գյուղատնտեսական հունքի վերամշակումից ստացված մի շարք կարևորագույն ապրանքատեսակների արտադրության ծավալներ ունեցել են աճի միտում (աղյուսակ 3): Պահածոների արտադրությունը 2011թ. կազմել է նախորդ տարվա համեմատ 145.4 տոկոս, մակարոնեղենը՝ 120.1 տոկոս, բուսական յուղը՝ 67.3 տոկոս, և օդին և օդու-լիկյորային արտադրանքը՝ 76.9 տոկոս, գինին՝ 106.3 տոկոս, գարեջուրը՝ 96.0 տոկոս, բնական հյութեր՝ 124.7 տոկոս:

*Աղյուսակ 3*

**ԱՆՈՒՆՈՒՄՆԵՐ, ԽԱՄԻՋՆԵՐ և ԺՄԱԽՈՏԱՅԻՆ արտադրատեսակներ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները<sup>1</sup>**

	2010թ.	2011թ.	2011թ. 2010թ. նկատմամբ տոկոս
Միս, տոննա	54497.3	55852.0	102.5
Սսամթերք, ներառյալ երշիկեղեն, տոննա	3953.5	4539.7	114.8
Մսի կիսապատրաստուկներ տոննա	544.6	487.2	89.5
Պանիր, տոննա	17047.1	17525.0	102.8
Կաթ մլն լիտր	299.9	301.3	100.5
Սածուկ, տոննա	3054,	3518.8	115.2
Թթվասեր, տոննա	3152.	2864.1	90.8
Կաթնաշոռ, տոննա	736,1	946.9	128.6
Պաղպաղակ, հազ. լիտր	3312.9	3480.8	105.1
Պահածո, տոննա	8025.0	11668.1	145.4
Ալյուր, տոննա	155737.7	156007.4	100.2
Չավարեղեն, տոննա	527.5	746.1	141.4
Հաց, հազ. տոննա	297.9	297.9	100.0
Հրուշակեղեն, տոննա	11589.4	12926.2	111.5
Մակարոնեղեն, տոննա	2704.6	3247.9	120.1
Մարգարիմային արտադրանք, տոննա	237.4	85.9	36.2
Շաքարավազ, տոննա	32508.4	72159.4	2.2 անգամ
Բուսական յուղ, տոննա	1034.3	696.5	67.3
Կենդանական յուղ, տոննա	950.4	809.9	85.2
Օդի և օդու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր	11911.7	9157.6	76.9
Կոնյակ, հազ. լիտր	12624,1	15341.5	121.5
Գինի, հազ.լիտր	5812.0	6177.7	106.3
Շամպայն գինի, հազ. լիտր	618.2	623.1	100.8
Գարեջուր, հազ. լիտր	15352.7	14744.3	96.0
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ լիտր	38232.1	41218.3	107.8
Բնական հյութեր, հազ լիտր	11689.5	14571.6	124.7

Ներկա վիճակում գինեգործության զարգացման միակ ուղին, միջազգային շուկայում սեփական հունքի հիման վրա մրցունակ արտադրանքի զարգացումն է, որը պահանջում է վերանայել այգիների տեղաբաշխումը, խաղողի սորտային կազմը, գինեգործության և խաղողագործության զարգացման ուղղությունները: Վերջիններիս զարգացման համար անհրաժեշտ է տեղական և արտաքին ներդրումների համար բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորում, հունքի արտադրության և վերամշակող համատեղ կազմակերպությունների ստեղծման խթանում:

Ըստ ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի տվյալների, մի շարք անհրաժեշտ պարենամթերքի ինքնաբավարարության մակարդակը դեռ ցածր է: Այսպես, կարտոֆիլ՝ 100.0 տոկոս, բանջարեղեն՝ 98.2 տոկոս, միրգ՝ 80.8 տոկոս, բուսական յուղ՝ 4.1, ձու՝ 99.2 տոկոս, կաթ՝ 97.2 տոկոս, միս տավարի՝ 84,8, խոզի՝ 39.9, ոչխարի՝ 100.0, հավի՝ 12.3 տոկոս:

2011թ. Հայաստանի առևտրի հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 2708 մլն. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա 2822մլն. ԱՄՆ դոլարի դիմաց: Իսկ գյուղատնտեսական ծագման արտադրանքի առևտրի հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 503 մլն. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա 544.8 մլն ԱՄՆ. դոլարի դիմաց:

<sup>1</sup> ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2011թ., էջ 16:

Այս իրավիճակը պահանջում է տեղական արտադրանքի մրցունակության բարձրացում, տեղական արտադրողների շահերի պաշտպանություն և արտահանման արտադրանքի ծավալների ավելացման միջոցառումներ: Մրցունակությունը բարձրացնելու համար ագրոպարենային ոլորտը պետք է կարևորի տեղական սպառողների սննդամթերքի անվտանգությանն առնչվող պահանջները և մրցակցությունը, ինչպես ներկրվող ապրանքների, այնպես էլ արտահանման դեպքում ապրանքների համար պահանջվող որակական ստանդարտները: Անհրաժեշտ է ներքին և արտաքին շուկաներում վերամշակումից ստացված արտադրատեսակների մրցունակությունը բարձրացնելու նպատակով փոխշահավետ կապերի ընդլայնում, Անկախ Պետությունների Զանազործակցության (ԱՊԶ) և այլ երկրներում, ցուցահանդեսներին մասնակցության, տեղեկատվական միասնական դաշտի ձևավորման և տնտեսավարող սուբյեկտների համար տեղեկատվության մատչելիության ապահովում:

Գյուղատնտեսական հումքի վերամշակման արտադրության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ են՝

- ոլորտի արտադրության զարգացում և վերամշակող կազմակերպությունների ռացիոնալ տեղաբաշխում,
- արտադրության առաջավոր տեխնոլոգիաների ներդրում և արտադրանքի մրցունակության բարձրացում,
- մարքեթինգային աջակցություն և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացման խթանում:
- ներդրումներ կատարելու համատեղ արտադրական կազմակերպություններ ստեղծելու համար, պետության անմիջական միջամտություն:

Այսպիսով, կարևորելով գյուղմթերք արտադրողից մինչև սպառողը շղթայի գործունեության բարելավումը և կիրառման բնագավառների հիմնախնդիրների լուծման նշանակությունը, անհրաժեշտություն ենք համարում իրականացնել՝

- գյուղմթերքներ գնող- իրացնող կոոպերատիվների ձևավորման աջակցություն,
- պետության միջամտությամբ գյուղատնտեսական մեծածախ շուկաների, հավաքման կետերի ստեղծում և դրանց կարողությունների ընդլայնում,
- նպատակային մատչելի վարկերի և դրամաշնորհային ծրագրերի միջոցով գյուղատնտեսական մթերքների տեսակավորման, փաթեթավորման և փոխադրման միջոցներով վերագինման աջակցություն,
- գյուղմթերքների վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրական գործունեության աջակցություն և նորերի ստեղծման ծրագրերի իրականացում,
- գյուղատնտեսական արտադրանքների, հատկապես՝ թարմ մրգերի և բանջարեղենի միջնորդավորված վաճառքի սահմանափակում:

Միաժամանակ, գյուղատնտեսական մթերք վերամշակող արդյունաբերական կազմակերպություններին անհրաժեշտ են՝ նոր տեխնոլոգիաների ներդրման, արտադրված արտադրանքի շուկայահանման, մթերքների անվտանգության պահանջների ապահովման համար պետական աջակցության գործուն մեխանիզմների ներդրում, որը կխթանի օրգանական գյուղատնտեսական հումքի վերամշակման, բարձրորակ ալկոհոլային խմիչքների, հատկապես՝ կոնյակի, բնական հյութերի, տոմատի մածուկի, պահածոների և չոր մրգերի արտադրության ավելացմանը, որոնք իրենց որակական բարձր հատկանիշների շնորհիվ մեծ հնարավորություններ կունենան արտահանման ընդլայնման իմաստով:

Գյուղատնտեսության վերամշակող արդյունաբերության զարգացումը կապված է ոլորտի իրավական հիմքի ձևավորման, ներդրումների բարենպաստ պայմանների ապահովման, գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման, ճիշտ մասնագիտացման և տեղաբաշխման, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության խթանման, գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրման, սննդամթերքի անվտանգության և մասնագիտական խորհրդատվական համակարգի զարգացման հետ:

## **В работе представлены основные направления развития и улучшения перерабатывающей промышленности сельскохозяйственного сырья РА**

### **Аннотация**

Обосновано, что развитие сельскохозяйственной перерабатывающей промышленности связано с формированием правовой основы сферы, обеспечением благоприятных условий для вложения инвестиций, развитием сельскохозяйственной инфраструктуры, правильной специализацией и размещением, со стимулированием экспорто-ориентированного производства, внедрением научных достижений и новых технологий, с улучшением безопасности продовольствия, формированием специализированной консультационной системы.

Ключевые слова: перерабатывающая промышленность, реализация сырья, повышение качества продукции, страхование рисков, экспорт, импорт.

**Lena Hovhannisyan**

## **Main Directions of Agriprocessing Industry Development in Armenia**

### **Abstract**

The article portrays main directions of agriprocessing industry development. The author justifies that the development of agriporcessing industry is related to the design of respective legislations and laws regulating the industry; improvement of business climate for attracting investments; improvement of agricultural infrastructure; specialization and distribution to promote export-oriented production; application of new technology and R&D results; food safety improvement; and establishment of specialized consulting agencies.

Key Words: agriprocessing industry, sales of agricultural raw materials, product quality improvement, agricultural insurance, export, import.

**ԱՏՈՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ.*

**ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ.*

**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ<sup>1</sup>**

Արդյունաբերական սեփականության իրավունքների ամրագրումը և տրամադրումը, որպես մտավոր սեփականության օբյեկտների կառավարման կարևոր բաղկացուցիչներ, մեծ դեր ունեն ընկերությունների շուկայական ռազմավարության մեջ: Սեփականության իրավունքների հատկորոշման մեջ կարևոր տեղ է հատկացվում ապրանքային նշաններին, որոնց նկատմամբ իրավունքների տնօրինումը հնարավորություն է ընձեռում ընկերությանը ձեռք բերել մրցակցային առավելություններ և տարբերակվել մյուս ընկերություններից: Ապրանքային նշանների օգնությամբ սպառողը կարողանում է տարբերել մի կազմակերպության ապրանքներն ու ծառայությունները մեկ այլ կազմակերպության ապրանքներից ու ծառայություններից: Ապրանքային նշանների նկատմամբ սեփականության իրավունքների ամրագրումը միաժամանակ ընկերությունների տեխնոլոգիական ռազմավարության ու շուկայական դիրքավորման կայուն երաշխիքներից է: Ապրանքային նշանների դերը կարևոր է նաև նրանով, որ մի կողմից դրանք ծառայում են որպես տեղեկատվության և գովազդի միջոց, մյուս կողմից՝ հանդիսանում են կազմակերպության կարողությունների և համբավի խորհրդանիշը:

Ապրանքային նշանների կարևորագույն գործառնություններից մեկը նորարարությունների և նոր արտադրանքի շուկայական հարմարեցման (ադապտացման) գործընթացի դյուրինացումն է ու խթանումը: Սովորաբար նորությունները բավականին դժվար են ընկալվում և հարմարվում շուկային, հատկապես եթե դրանք ներկայացված են լինում նորահայտ ընկերությունների կողմից: Հակառակ դրան հայտնի ապրանքային նշանների ներքո հանդես եկող նորությունները ոչ միայն հեշտ են մուտք գործում շուկա, այլև դրանց նորամուտը ցանկալի է սպառողների կողմից, քանի որ սպառողները վստահություն ունեն այդ ապրանքանիշերի նկատմամբ: Նման օրինակ կարող է ծառայել հանրահայտ Apple ապրանքանիշը, որի նորությունները շուկայում սպասվում են, իսկ ընկերությունը իր կողմից միշտ շուկային ներկայանում է նոր որակյալ արտադրանքով:

***Իրավիճակը ՀՀ ապրանքանիշերի շուկայում***

Ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների և աշխարհագրական նշումների իրավական պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունն սկսել է ձևավորվել 1995 թվականից<sup>2</sup>, որի հետագա փոփոխությունները նպատակաուղղվել են օրենսդրության կատարելագործմանը, հաշվի առնելով ՀՀ միջազգային պայմանագրերի պահանջները, միջազգային առաջավոր փորձը և օրենքի կիրարկման պրակտիկայում առաջացած խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Համաձայն ՀՀ «Ապրանքային նշանների մասին» օրենքի<sup>3</sup>՝ ապրանքային և սպասարկման

<sup>1</sup> Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԳՊԿ - ԲՀ ՀՀԲՀ «ՀՀ և Բելառուսի շուկայի սուբյեկտների գործունեության միջազգայնացումը երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներդրման, հարմարեցման և ներդրման բնագավառում» 11 Ե-09 թեմայի ֆինանսավորման շրջանակներում:  
<sup>2</sup> ՀՀ կառավարության որոշում «Ապրանքային և սպասարկման նշանների ժամանակավոր կանոնակարգը հաստատելու մասին», 19 օգոստոսի 1995թ. N 4:  
<sup>3</sup> «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի ապրիլի 29-ի ՀՅ-59-Ն օրենք, ՀՀ Օրենք «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ընդունված է 2011 թվականի հունիսի 11-ին:

նշանները (այսուհետ՝ ապրանքային նշան) այն նշաններն են, որոնցով որևէ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ապրանքները և ծառայությունները համապատասխանաբար տարբերվում են այլ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի նույնատիպ ապրանքներից և ծառայություններից: Ապրանքային նշան կարող են լինել բառային (ներառյալ՝ բառեր, թվեր, տառեր, անուններ, կարգախոսներ), պատկերային, ծավալային (ապրանքի փաթեթավորումներ, ապրանքի արտաքին տեսքը և մակերևույթը), ձայնային և պատկերմամբ (գրառմամբ) ներկայացվող այլ նշաններ կամ դրանց համակցությունը, հոտային ապրանքային նշաններ և այլն:

Ապրանքային նշանը կարող է գրանցվել իրավաբանական անձի կամ կազմակերպության անունով, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անունով: Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը ծագում է դրան իրավական պահպանություն տրամադրելու պահից և պատկանում է դրա սեփականատիրոջը: Ապրանքային նշանի սեփականատերն ունի այն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու, ինչպես նաև այլ անձանց կողմից դրա օգտագործումն արգելելու բացառիկ իրավունք:

Գրանցված ապրանքային նշանի սեփականատերը բացառիկ իրավունք ունի երրորդ անձանց առևտրային գործունեության ընթացքում արգելել առանց իր թույլտվության ապրանքային նշանի կամ դրանով մակնշված ապրանքի օգտագործումը: Ըստ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի՝ ապրանքային նշանի սեփականատերը ինքը պետք է փնտրի և հայտնաբերի իր ապրանքային նշանի ապօրինի օգտագործողին և դիմի դատարան օգտագործումն արգելելու և վնասի հատուցման պահանջներով:

Ապրանքային նշանը սպառողին հնարավորություն է ընձեռում հեշտությամբ տարբերակել այն ապրանքը, որից իրենք գոհ են և կուզենան հետագայում կրկին օգտագործել: Հաջողված ապրանքանշանը հիմք է ծառայում մրցակցային առավելությունների ձեռքբերման և առանցքային դեր է խաղում կազմակերպության շուկայավարության գործում՝ սպառողների մոտ բարձրացնելով կազմակերպության հեղինակությունը: Սպառողները իրենց հերթին զգայական կապվածություն են ցուցաբերում որոշակի ապրանքային նշանների հանդեպ՝ հիմնվելով դրանց ցանկալի որակների կամ հատկանիշների վրա և սպասում այդ ապրանքանիշի ներքո հետագա բոլոր նորույթներին:

Ապրանքային նշանների գրանցումը բոլոր երկրներում իրականացվում է գրեթե համանման սկզբունքներով և եղանակով: ՀՀ-ում ապրանքային նշանի գրանցման լիազոր մարմին է համարվում էկոնոմիկայի նախարարության Ստավոր սեփականության գործակալությունը: Ապրանքային նշանը գրանցելուց հետո տրվում է գրանցման վկայական, որը ուժի մեջ է 10 տարի և որը կարելի է երկարաձգել վճարելով երկարաձգման համար պահանջվող պետական տուրքը:

Ապրանքային նշանի գրանցման համար պահանջվող ժամանակը տարբեր երկրներում տարբեր է, որը հիմնականում տատանվում է 3 ամսից մինչև 2 տարի՝ կախված նրանից, թե ինչ ժամանակահատվածում է ապրանքային նշանների գրանցման մարմինն իրականացնում ապրանքային նշանի ըստ էության փորձաքննությունը: Հայաստանի Հանրապետությունում հայտարկվող նշանի փորձաքննությունն անցկացվում է նախնական փորձաքննությունն ավարտվելուց հետո 3-ամսյա ժամկետում: Նշանի գրանցման համար անհրաժեշտ է վճարել պետական տուրք, որի չափը կախված է ապրանքների և դասերի քանակից: Նշենք նաև, ըստ օրենսդրության՝ շատ երկրներում, ինչպես նաև Հայաստանում, ապրանքային նշանի գրանցման հայտը ներկայացնելու համար չի պահանջվում ապրանքային նշանի հավատարմատար կամ գործակալ վարձել:

ՀՀ-ում ապրանքային նշանի գրանցումը իրականացվում է երկու ընթացակարգերով՝ ազգային ընթացակարգ և միջազգային ընթացակարգ: Ազգային ընթացակարգի համաձայն ապրանքային նշանների գրանցման դիմումը ներկայացվում է Ստավոր սեփականության գործակալություն՝ պահանջվող լեզվով լրացնելով համապատասխան հայտը և վճարելով սահմանված պետական տուրքերը:

Միջազգային ընթացակարգով ապրանքային նշանների գրանցման դեպքում ՀՀ-ն հետևում է Մադրիդյան համաձայնագրին<sup>1</sup>: Համաշխարհային ապրանքանիշերի գրանցման Մադրիդյան համաձայնագիրը ստորագրվել է 1981թ. և գործում է մադրիդյան արձանագրության (1989) հիման վրա: Հայաստանի Հանրապետությունը նույնպես մադրիդյան համակարգի անդամ է և ապրանքային նշանը հնարավոր է գրանցել նաև օգտվելով մադրիդյան համակարգից (գործում է ՄՍՀԿ ներքո) համակարգի անդամ ավելի քան 70 երկրներում: Այս համակարգը կառավարվում է WIPO միջազգային բյուրոյի<sup>2</sup> կողմից, որը գտնվում է ժնևում: Միջազգային բյուրոն վարում է միջազգային գրանցումների վերաբերյալ տվյալների պաշտոնական հավաքածու Մադրիդյան համաձայնագրի և Մադրիդյան համաձայնագրի արձանագրության սահմանած կարգով:







Մադրիդյան համակարգի գլխավոր առավելությունն այն է, որ ապրանքային նշանի իրավատերը կարող է գրանցել իր ապրանքային նշանը բոլոր այն երկրներում, որոնք համակարգի անդամ են, լրացնելով մեկ միջազգային հայտ՝ մեկ լեզվով, նախատեսված ժամկետում և վճարելով սահմանված տուրքերը: Հայտի լրացման ձևը առկա է նաև միջազգային բյուրոյի կայքում<sup>3</sup>:

Նշենք նաև, որ ՀՀ ապրանքային նշանների տրամադրման ժամանակ օգտվում են Նիցցայի դասակարգչից՝ ապրանքային նշանի պատկանելիք դասը որոշելու համար<sup>4</sup>: Նիցցայի դասակարգիչը հիմնադրված է նշանների գրանցման համար ապրանքների և ծառայությունների Միջազգային դասակարգման Նիցցայի համաձայնագրով<sup>5</sup>, որն ստորագրվել է 1957թ. հունիսի 15-ին՝ հետագա փոփոխություններով և լրացումներով և ներառում է 45 դաս:





Ապրանքային նշանների արժեքային չափորոշիչները կարող են տրվել հենց դրամական արտահայտությամբ: Մանրակրկիտ մշակված և ընտրված ապրանքային նշանը արժեքավոր ներդրում է շատ կազմակերպությունների համար: Ժամանակի ընթացքում այն կարող է դառնալ կազմակերպության ամենարժեքավոր ակտիվը: Այսպես՝ ըստ INTERBRAND ընկերության՝ Coca-Cola և IBM ապրանքանշանները արդեն մի քանի տարի է ինչ առաջնորդում են ամենարժեքավոր բրենդների շարքը<sup>6</sup>: Այս ապրանքային նշանների արժեքը կազմում է համապատասխանաբար 71,8 և 69,9 միլիոն ԱՄՆ դոլար: Աղյուսակ 1-ում ներկայացնենք 2011թ. համաշխարհային 10 ամենարժեքավոր բրենդների ցուցակը ըստ INTERBRAND ընկերության<sup>7</sup>:

**Աղյուսակ 1**

**2011թ. համաշխարհային 10 ամենարժեքավոր բրենդները**

	Ապրանքանիշ	Երկիր	Ոլորտ	Բրենդի արժեքը (մլն. դոլար)	Նախորդ տարվա փոփոխությունը
1		ԱՄՆ	Ըմպելիքներ	71,861	2%
2		ԱՄՆ	Բիզնես ծառայություն	69,905	8%
3		ԱՄՆ	Համակարգչային ծրագրեր	59,087	-3%
4		ԱՄՆ	Համացանցի ծառայություններ	55,317	27%
5		ԱՄՆ	Տարբեր	42,808	0%
6		ԱՄՆ	Ռեստորաններ	35,593	6%

1 <http://www.wipo.int/madrid/en/>  
 2 <http://www.wipo.int>  
 3 <http://www.wipo.int/wipolex/en/details.jsp?id=11497>  
 4 <http://www.aipa.am/am/nice/>  
 5 Nice Agreement Concerning the International Classification of Goods and Services for the Purposes of the Registration of Marks , June 15, 1957  
 6 <http://interbrand.com>  
 7 <http://interbrand.com/en/best-global-brands/best-global-brands-2008/best-global-brands-2011.aspx>

	Ապրանքանիշ	Երկիր	Ոլորտ	Բրենդի արժեքը (մլն. դոլար)	Նախորդ տարվա փոփոխությունը
7		ԱՄՆ	Էլեկտրոնիկա	35,217	10%
8		ԱՄՆ	Էլեկտրոնիկա	33,492	58%
9		ԱՄՆ	Մեդիա	29,018	1%
10		ԱՄՆ	Էլեկտրոնիկա	28,479	6%

Աղյուսակ 1-ում բերված ապրանքային նշանների ամենագլխավոր առավելությունն այն է, որ սպառողները գնահատում են դրանք, դրանց հեղինակությունը, համբավը և մի շարք ցանկալի որակներ, որ նրանք կապում են նշանի հետ և պատրաստ են ավելի շատ վճարել այն արտադրանքի համար, որի ապրանքային նշանը ծանոթ է իրենց, և որն արդարացնում է իրենց սպասումները:

Հայաստանյան պարագայում առանձին ապրանքանիշերի արժեքային արտահայտության մասին որևէ պաշտոնական տեղեկատվություն չկա: Սակայն ըստ ՀՀ Մտավոր սեփականության գործակալության՝ Հայաստանում որպես հանրահայտ ապրանքային նշաններ գրանցել են «Արարատ», «Ընտիր», «Ախթամար», «Վասպուրական», «Դվին» նշանները, որոնք պատկանում են «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ին<sup>1</sup>: Հայտնի ապրանքային նշանների շարքին են պատկանում նաև ծխախոտի մի շարք ապրանքանիշեր, ինչպիսիք են «Գրանտ տորակո», «Գառնի», «Էրեբունի», «Գրանդ քենդի» հրուշակեղենի ապրանքանիշը, «Նոյ» հանքային ջուրը և այլն:

Նշենք, որ նախկին ԽՍՀՄ երկրների փլուզումից հետո մի շարք ապրանքային նշաններ որդեգրվեցին տարբեր ընկերությունների կողմից, որը հնարավորություն տվեց արդեն հանրահայտ ապրանքանիշը կիրառել որպես ընկերության ապրանքային նշան՝ պահպանելով որակական և ձևային հատկանիշները: Օրինակ հայտնի «Միշկա կոստլապիյ», «Ալյոնկա», «Կարակում», «Ձուլոտոյ պետուշոկ» քաղցրավենիքները որդեգրվեցին նախկին ԽՍՀՄ մի շարք պետությունների ընկերությունների կողմից (ՀՀ-ում՝ «Գրանդ քենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ): Սակայն Հայաստանում կան նաև նորաստեղծ հանրահայտ ապրանքային նշաններ, ինչպիսիք են՝ «Հայ-կոլա», «Կիլիկիա» և այլն:

PMR բրիտանա-ամերիկյան վերլուծական կազմակերպության<sup>2</sup> տվյալներով՝ 2009թ. ռուսաստանյան լավագույն ապրանքային նշան է համարվում «Բալթիկա» գարեջրի ապրանքանիշը, որի արժեքային արտահայտությունը կազմում է 76.8 մլն ռուբլի (2.5 մլն դոլար), որին հաջորդում է «Ձուլոտայա մարկա» ալկոհոլային խմիչքների ապրանքանիշը: Վերջին տասնամյակում ռուսաստանյան հայտնի ապրանքային նշանների շարքին են դասվում նաև «ԼԱԴԱ» ավտոարտադրության, «Ալյոնկա» ապրանքանիշերը, Լուկոյլ և Գազպրոմ նավթ/գազ արդյունահանող ընկերությունները և այլն: Աղյուսակ 2-ում ներկայացված են 2009թ. 10 լավագույն ռուսաստանյան բրենդները ըստ PMR վերլուծական կազմակերպության, որտեղ չափանիշ է ընդունվել վաճառքի ծավալները: Ինչպես տեսնում ենք այստեղ նույնպես, ինչպես Հայաստանում, գերիշխում են ալկոհոլային խմիչքների ապրանքանիշերը:

<sup>1</sup> <http://www.aipa.am/am/well/>

<sup>2</sup> <http://www.russiaretail.com/80154/Most-popular-brands-in-Russia-in-2009.shtml>

2009թ. 10 լավագույն ռուսաստանյան ապրանքանշանները

	Բրենդի անվանումը	Ոլորտ	Արտադրող	2009թ. վաճառք (ռուբլ. մլն)
1	Բալտիկա	գարեջուր	Carlsberg	76.8
2	Չեյոնայա մարկա	օղի	CEDC	29.6
3	Պրոստոկվաշինո	կաթնամթերք	Unimik	24.2
4	Կլինսկոյա	գարեջուր	SUN InBev	23.4
5	Դոմիկ վ դերեվնե	կաթնամթերք	Wimm-Bill-Dann	22.6
6	Օստանկինո	մսամթերք	Ostankino Meat Processing Plant	22.6
7	Չուրո	կաթնամթերք	Wimm-Bill-Dann	19.5
8	Պուտինկա	օղի	Vineksim	19.2
9	Յավա	ծխախոտ	British American Tobacco	18.8
10	Սիբիրսկայա կարոնա	գարեջուր	SUN InBev	16.4

Դիտարկենք նաև ԱՊՀ երկրներից բելառուսական լավագույն ապրանքանիշերը: Ըստ Բելառուսիայի ազգային մտավոր սեփականության կենտրոնի, 2009թ. հանրահայտ բելառուսական ապրանքային նշանները ներկայացված են աղյուսակ 3-ում<sup>1</sup>:

2009թ. հանրահայտ բելառուսական ապրանքային նշաններ

Ընկերության անվանում	Հայտնի ապրանքային նշանը	Արտադրանքի տեսակը
«Միլավիցա» ՓԲԸ	Milavica	ներքնազգեստ
«Ատլանտ» ՓԲԸ	«Атлант»	կենցաղային տեխնիկա
«Սավուշկին պրոդուկտ» ՍՊԸ	«Савушкин продукт», «Монтик», «Наслаждение», «Актив Стиль», «На хлебушек», «Ласковое лето» и «На100ящий»	կաթնամթերք
«Վելբոմ»	velcom™, ПРИВЕТ™	բջջային կապ
«Սանտա Բրեմոն» ԲԲԸ	«Матис», «Икра № 1», «Икрима», «Морячок», «Санта Бремор», «Бремор», «Юрки», «Бабушка Аня», «Эники-беники», «Эконом Маркет», «Санта», «Топ», «Soletto».	ծկնատեսակ
«Պիվզավոդ Ալիվարիա» ՍՊԸ	«Оливария»	գարեջուր
«Կոմունարկա» ԲԲԸ	«Шоколадные бутылочки», «Грильяж в шоколаде», «Алёнка», «Красная шапочка»	քաղցրավենիք/հրուշակեղեն
«Սպարտակ» ՍՊԸ	«Спартак»	քաղցրավենիք/հրուշակեղեն

Վերոհիշյալ ձեռնարկությունները իրենց բնագավառում համարվում են որակյալ արտադրանքի զարգացման և հաջողակ մարքեթինգային գործունեության տիպային օրինակներ: Նրանք ունեն նաև առավել շոշափելի արդյունքներ մտավոր սեփականության պահպանման ոլորտում: Օրինակ՝ ժամանակակից ձեռնարկություն «Սանտա Բրեմոն» ԲԲԸ Բելառուսիայի տարածքում գրանցել է 105 ապրանքային նշաններ, ունի մոտ 70 միջազգային գրանցումներ աշխարհի 11 երկրներում: «Կոմունարկա» ԲԲԸ-ն բելառուսական շուկայում հանդիսանում է ավելի քան 80 ապրանքային նշանների սեփականատեր, ռուսական շուկայում՝ մոտ 11 ապրանքային նշանների սեփականատեր, ունի 34 միջազգային ապրանքանշաններ, որոնք գրանցված են 7 երկրներում:

Վերջին 4-5 տարվա ընթացքում Բելառուսիայում գրանցված ապրանքային նշանների քանակը մեծացել է մոտ 50%-ով: Նշենք, որ 2009թ. սկզբին բելառուսական շուկայում գրանցված 85 հազ. ապրանքային նշաններից 12,5 հազ.-ը պատկանում են տեղական ընկերություններին,

<sup>1</sup> <http://www.belgopatent.org.by>  
<http://www.medusa.com.by/news/9060300.html>



իսկ մնացածը՝ արտասահմանյան ձեռնարկություններին: Նշենք նաև, որ Բելառուսիայի պարագայում հայտնի ապրանքանիշերի ոլորտները ինչպես տարբեր են (ի տարբերություն Հայաստանի և Ռուսաստանի Դաշնության, որտեղ գերիշխում էին ավիոհոլային խմիչքները), այնպես էլ դրանցից ոմանք՝ տեխնոլոգիամետ: Ընդգծենք նաև, որ զարգացած երկրների հայտնի ապրանքային նշանները ավելի միտված են դեպի տեխնոլոգիապես արտադրանքի: Այսպես օրինակ՝ ճապոնիայում «TOYOTA»-ն և «HONDA»-ն, Գերմանիայում՝ «BMW»-ն ավտոաշխարհի ամենահայտնի բրենդներից են, Հարավային Կորեայում «SAMSUNG»-ը էլեկտրոնիկայի ոլորտի հայտնի բրենդներից մեկն է և այլն: Վերոհիշյալ բրենդները ընդգրկված են նաև 2011թ. 100 լավագույն ապրանքանիշերի ցանկում<sup>1</sup>:

Ներկայացնենք վերջին տարիների հայաստանյան ապրանքային նշանների գրանցման համառոտ վիճակագրությունը և դինամիկան<sup>2</sup>:

*Աղյուսակ 4*

**ՀՀ-ում 2005-2010թ. գրանցված ապրանքային նշանների քանակը ըստ երկրների**

	2005		2006		2007		2008		2009		2010	
	Ը.Ա.Ը.	Մ.Հ.	Ը.Ա.Ը.	Մ.Հ.	Ը.Ա.Ը.	Մ.Հ.	Ը.Ա.Ը.	Մ.Հ.	Ը.Ա.Ը.	Մ.Հ.	Ը.Ա.Ը.	Մ.Հ.
Հայաստան – AM	1089	-	945	-	882	-	939	-	1115	-	1266	-
ԱՄՆ – US	153	106	187	150	153	149	142	188	203	154	185	238
Ռուսաստանի Դաշնություն – RU	20	132	17	206	53	332	43	278	26	289	28	308
Գերմանիա – DE	13	219	14	240	80	427	17	342	15	262	15	178
Բելառուս – BY	-	-	-	6	-	19	3	38	3	48	-	35
Իտալիա – IT	1	99	5	156	5	213	1	184	2	134	11	138
Հունգարիա – HU	-	18	2	55	-	309	1	84	-	138	1	78
Միացյալ Թագավորություն GB	11	45	16	95	78	58	13	98	112	85	57	124
Շվեյցարիա – CH	6	153	37	190	65	300	57	268	26	186	57	258
Չինաստան – CN	5	103	12	140	12	118	10	168	3	185	4	234
Վրաստան – GE	-	-	11	8	9	17	16	38	3	32	8	11
Ճապոնիա	23	25	24	42	18	37	27	87	41	82	36	58
Ուկրաինա – UA	2	41	42	55	26	23	6	112	24	125	33	131
Ֆրանսիա – FR	7	110	5	145	3	213	4	168	4	182	22	148

\* Ը.Ա.Ը. - Ըստ ազգային ընթացակարգի, Մ.Հ. - Մադրիդյան համաձայնագրով

Ներկայացնենք այն ապրանքատեսակներն ըստ դասերի, որոնք, ըստ երկրների ավելի շատ են ապրանքային նշանների հայտեր ներկայացնում և գրանցվում ՀՀ-ում: Ուսումնասիրությունները իրականացրել ենք 2005-2006թթ. և 2010-2011թթ. համար, որի ընթացքում բացահայտվել են որոշակի հատկանշական գծեր ապրանքային նշանների գրանցման հայտատուների ոլորտում: Հետազոտությունը իրականացվել է ըստ ՀՀ Մտավոր սեփականության գործակալություն տեղեկատուների<sup>3</sup>:

2005-2006թթ. բավականին մեծ են 30-րդ դասին պատկանող ապրանքանիշերի գրանցումները: Դրանցից կարելի է առանձնացնել հայրենական հայտատուներից «Սուիթ լենդ» հայ-ֆրանսիական ՀՉ ՍՊԸ և «Գրանդ քենդի» հայ-կանադական ՀՉ ՍՊԸ ընկերությունները: Օրինակ, «Սուիթ լենդ» ՍՊԸ-ի կողմից գրանցվել են մի շարք սուրճի տեսականու ապրանքանիշեր և

<sup>1</sup> <http://interbrand.com/en/best-global-brands/best-global-brands-2008/best-global-brands-2011.aspx>

<sup>2</sup> <http://www.aipa.am/am/statistics/>

<sup>3</sup> <http://www.aipa.am/am/Official/>

քաղցրավենիքի տեսականիներ (Ալյոնկա հանրահայտ ապրանքանիշը): «Գրանդ քենդի» ՍՊԸ-ի կողմից նույնպես կան գրանցված հայտնի կոնֆետների ապրանքանիշեր, որոնցից են «Միշկա կոսոլապիյ», «Բելոչկա», «Կարակում», «Ռսկե բանալի» և այլն: Օտարերկրյա հայտատուներից կարելի է առանձնացնել «Մարս» Ինքորփորեյթիդ ամերիկյան ընկերությունը՝ իր հայտնի «Մարս», «Թվիքս» և այլ քաղցրավենիքներով, ինչպես նաև սուրճի տեսականիով:

Հաջորդ, առավել հաճախ հանդիպող դասերը (դաս 33 և 32) պատկանում են ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներին: Այստեղ կան ինչպես հայրենական, այնպես էլ ոչ հայրենական արտադրողների կողմից գրանցված ապրանքանիշեր: Հայրենական արտադրողներից կարելի է առանձնացնել «Մապ» ՓԲԸ, «Երևանի գարեջուր» ՓԲԸ, «Ավշարի գինու գործարան» ՍՊԸ, «Շահունյան-վին» ՍՊԸ, «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ և այլն, որոնց արտադրանքը աչքի է ընկնում որակական և ձևային առանձնահատկություններով, և որոնք ունեն գրանցված մի շարք հայտնի ապրանքային նշաններ: Գրանցվող ապրանքային նշանների այս դասում բավականին մեծ է նաև ռուսաստանյան արտադրողների տեսակարար կշիռը: Մասնավորապես «Գրուպա պրեդպրիյատիյ ՕՍՏ» ՓԲԸ, «Ռեիոն-ԷՄ» ՓԲԸ, «Պիվո-վարենայա կոմպանիա «Բալտիկա» ԲԲԸ (BALTICA ապրանքանիշ), որոնք ունեն գրանցված մի շարք օղիների և գարեջրի ապրանքանիշեր (դաս 32 և 33): 2005թ. իր հայտնի COCA COLA ապրանքանիշն է գրանցել նաև «Դը կոկա-կոլա քամփնի» ամերիկյան հայտնի ընկերությունը (դաս 32՝ ոչ ալկոհոլային ըմպելիքներ):

Ապրանքանիշերի գրանցման հաջորդ ակնառու դասերից է դաս 34-ը (սիգարետներ, ծխախոտ, ծխախոտային արտադրանք, ծխելու պիտույքներ, վառիչներ, լուցկի): Այստեղ նույնպես կան մի շարք հայտնի հայրենական ապրանքանիշեր, որոնց արտադրողներն են «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ, «Գրանդ տոբակո» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ, ինչպես նաև ոչ հայրենական արտադրողներ Բրիթիշ Ամերիքն Թեբեոու (Բրենդս) Լիմիթիդ (Միացյալ Թագավորություն), Ամերիքն-Սիգրեթ Քամփնի (Օվերսիգ) Լիմիթիդ (Չինաստան):

Հատկանշական է նաև ՀՀ-ում մի շարք ամերիկյան դեղագործական ընկերությունների կողմից գրանցված դաս 5-ին պատկանող ապրանքանիշերը, որոնք, նույնպես մեծ տեսակարար կշիռ են կազմում Հայաստանում: Այսպես «Դը Փրոքթեր ընդ Գեմբլ Քամփնի», «ՕՍԻ Ֆարմասյութիքլզ», Ինք., «Շերինգ-Փլաու Էնիմալ Հելթ» Բորփորեյշն, «Փֆայզր Փրոդաքթս» Ինք., «Ֆարմասիա ընդ Ափշոն» Քամփնի, «Էլի Լիլի ընդ» Քամփնի ընկերությունների կողմից գրանցվել են մի շարք դեղագործական և դեղային պատրաստուկների ապրանքանիշեր: Այս ոլորտում 2005թ. հայաստանյան ընկերությունների կողմից գրանցված ապրանքանիշերը գրեթե բացակայում են:

2005թ. գրանցվել է նաև ուկրաինական հայտնի «Շեդրիյ դառ» ապրանքանիշը, որի ներքո ներկայացված են բազմաթիվ դասերի պատկանող ապրանքատեսակներ (դաս 29՝ միս, ձուկ, թռչնամիս և որսամիս, 30-32 դասեր՝ գարեջուր. հանքային և գազավորված ջրեր, դաս 33, դաս 39՝ տրանսպորտ և այլն):

Հետաքրքրական են նաև մի շարք գիտատար դասերին պատկանող հայտատուները և նրանց կողմից գրանցվող ապրանքանիշերը, որոնց մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում ճապոնական ընկերությունները: Այսպես «Ալքոն Ինքորփորեյթիդ» ճապոնական ընկերությունը գրանցել է իր ապրանքանիշերը ըստ դաս 9-ի (կապի սարքավորումներ, մասնավորապես՝ ընդունահաղորդիչներ, կապի ռադիոընդունիչներ. ռադիոհաճախականության ընդունիչներ, ռադիոհեռախոսներ, շարժական ընդունահաղորդիչներ, ընդունահաղորդիչներ ծովային և օդային կապերի հաճախականության համար և այլն): «Կոնիկա Մինոլտա Հոլդինգզ» ընկերությունը իր ապրանքային նշանները գրանցել է ըստ դաս 1-ի (քիմիական ռեակտիվներ, քիմիական նյութեր լուսակայված լուսանկարչական ժապավենների, թղթերի և թիթեղների, պոլիգրաֆիական ժապավենների և բժշկական ռենտգենյան ժապավենների մշակման համար), «ՆԹԹ ԴոբոՄո», Ինք.-ը ըստ դաս 9-ի (գիտական, ծովային, երկրաբաշխական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, օպտիկական, կշռման, չափման, ազդանշանման, հսկման (ստուգման), փրկության և ուսուցման սարքեր ու գործիքներ, էլեկտրականության հաղորդման, միացման, փոխակերպ-

ման, կուտակման, կարգավորման կամ վերահսկման սարքեր և գործիքներ), ՆԱԲ Լթդ.՝ ըստ դաս 7 և 12-ի (մեքենաներ և հաստոցներ, շարժիչներ, վերգետնյա տրանսպորտային միջոցների մեխանիզմների տարրեր):

Տեխնոլոգիաների ոլորտում գրանցվող ապրանքանիշերի շարքում կան նաև ռուսաստանյան հայտատուներ (օրինակ՝ «Տեխնոնիկոլ» ՓԲԸ՝ ըստ դաս 17, 19 և 37-ի), ինչպես նաև հայրենական հայտատուներ («Նսասոֆտ» ՍՊԸ՝ ըստ դաս 9 գիտական, ծովային, երկրաբաշխական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, օպտիկական, կշռման, չափման, ազդանշանման, հսկման (ստուգման), փրկության և ուսուցման սարքեր ու գործիքներ, «Նարեներգո» ՍՊԸ՝ ըստ դաս 39, էներգիայի բաշխում):

Եթե 2005-2006թթ. ՀՀ-ում գրանցվող ապրանքային նշանները հիմնականում պատկանում էին դաս 32, 33-ին (ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ), դաս 34-ին (ծխախոտային արտադրանք) և դաս 30-ին (հրուշակեղեն), ապա վերջին տարիներին նկատվում են կառուցվածքային լուրջ փոփոխություններ: Նշենք որ ապրանքանիշերի գրանցումը սկսել է առավել տարբերակվել, և առավել հաճախ հանդիպում են նաև այլ դասեր, ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա հայտատուների կողմից:

Այսպես, 2010-2011թթ. առավել հաճախ հանդիպող դասերի թվին են պատկանում դաս 3 և 5-ը, և եթե 2005-2006թթ. այս դասում գերակշռող են արտասահմանյան հայտատուները (ԱՄՆ), ապա ներկայումս կան նաև մի շարք հայաստանյան հայտատուներ: Դրանց թվին են պատկանում «Արսանիտ» ՍՊԸ, «Դանաֆարմ» ՍՊԸ, «Նատալի ֆարմ» ՍՊԸ (Natali Pharm ապրանքանիշ), «Արփիմեդ» ՍՊԸ, «Տոնուս-լես» ՍՊԸ, «Սիկոնե» ՍՊԸ, որոնք մասնագիտացված են դեղագործական և անասնաբուժական պատրաստուկների, հիգիենիկ միջոցների և պատրաստուկների ոլորտում և ունեն գրանցված մի շարք ապրանքանիշեր: Այս ոլորտում աճել են նաև օտարերկրյա հայտատուները, որոնց թվին են դասվում «Մերի Քեյ ինք.»-ը իր հայտի «Mary Key» ապրանքանիշով (ԱՄՆ, ըստ դաս 3-ի), «Յունիֆարմ ինք.» (ԱՄՆ, ըստ դաս 3, 5), «Ձիմոգենետիկս, ինք.» (ԱՄՆ, ըստ դաս 5), «Ձենգիմ Քորփորեյշն» (ԱՄՆ, ըստ դաս 5), շվեյցարական ընկերություններ «Շերինգ-Փլաու Լթդ.», «Նովարթիս ԱԳ», «Վիֆոր (Ինթրնեյշնլ) ԱՋ /Լթդ/Ինք/» (ըստ դաս 5-ի), ճապոնական ընկերություններ «Յունի-Չարմ քորփորեյշն», «Աստելլաս Ֆարմա Ինք.»: Մի շարք հայտնի դեղորայքային ապրանքանիշեր գրանցվել են Միացյալ Թագավորության (Ուորլդ Մեդիսին Լթդ, Ռոտաֆարմ Լիմիթիդ), ֆրանսիական (ՈՒՊՍԱ Քոնսեյ, ֆրանսիական կորպորացիա, Լաբորատորիե ՀՐԱ-ՖԱՐՍԱ), ռուսական («Նիժֆարմ» ԲԲԸ, «Ալմագ-Ս» ՍՊԸ «КРАСНАЯ ЛИНИЯ» ապրանքանիշով), վրացական («Բերթա Լթդ»), ուկրաինական («Գալիչֆարմ»), «Աստելլաս Դոյչլանդ ԳմբԻ» և մի շարք այլ օտարերկրյա ընկերությունների կողմից:

Նշենք որ 2011թ. Հայաստանում գրանցվել է նաև ճապոնական հայտնի ապրանքանիշ «HELLO KITTY»-ին, «Սանրիո քանփնի» ՍՊԸ, որը բացի ըստ դաս 3-ի և 5-ի, գրանցել է իր ապրանքանիշը նաև ըստ դաս 9-ի, 10-ի (վիրաբուժական, բժշկական, ատամնաբուժական և անասնաբուժական սարքեր), դաս 24, 25-ի (գործվածքներ և մանածագործական ապրանքներ, հագուստ, կոշիկեղեն, գլխարկներ), դաս 28-ի (խաղեր և խաղալիքներ, տիկնիկներ):

Հաջորդ դասը, որում նկատվում է բավականաչափ առաջխաղացում, դաս 9, ինչպես նաև դասեր 38-ը և 42-ն են, որոնց կարելի է համարել գիտատար դասեր, քանի որ այս դասերը ներառում են համակարգչային ապարատային արտադրանքը, հաղորդագրությունների և ցանցերի անվտանգության սարքերը, էլեկտրական և էլեկտրոնային հաղորդակցական և հեռահաղորդակցական սարքերը և սարքավորումները և այլն: Նկատենք, որ այս ոլորտում նույնպես մեծացել է հայաստանյան հայտատուների քանակը:

Այսպես, օրինակ, «Առնոռան» ՍՊԸ, «Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ ապրանքային նշաններ են գրանցել ըստ դաս 9-ի (հեռահաղորդակներ և ռադիոհաղորդակներ, փոքր ավտոմատ հեռախոսային կայան, ռադիոկապի հատուկ միջոցներ և հանգույցներ, հեռուստատեսային ալեհավաք և այլն), «Մեդարմ» ՍՊԸ-ն՝ ըստ դաս 42-ի (գիտական և տեխնոլոգիական ծառայություններ և հետազոտություններ և դրանց հետ կապված մշակումներ. արդյունաբերական վերլուծումներ և հետազոտություններ, համակարգչային

ապարատների և ծրագրերի մշակում և կատարելագործում), «Յուքոն» ՍՊԸ-ն՝ ըստ դաս 38-ի (հեռահաղորդակցություն) և այլն: Կան նաև այնպիսի հայկական ընկերություններ, որոնք ապրանքային նշաններ են գրանցել ըստ տարբեր դասերի: Օրինակ, «Իմէքս գրուպ» ՍՊԸ-ը, որին պատկանում է ԻԴԵԱԼ ՅԱՄԱԿԱՐԳ հայտնի ապրանքանիշը, մի շարք ապրանքային նշաններ է գրանցել ըստ դաս 9-ի, դաս 2-ի (ներկեր, արծնուկներ, լաքեր), դաս 4-ի (տեխնիկական յուղեր և (թանձր) քսուքներ), դաս 7-ի (մեքենաներ և հաստոցներ, շարժիչներ), դաս 8-ի (ծեռքի գործիքներ, դանակավոր իրեր, պատառաքաղներ և գդալներ, սառը զենք), դաս 11-ի (լուսավորման, ջեռուցման, շոգու արտադրման, սննդամթերքի ջերմամշակման, սառեցման, չորացման, օդափոխման, ջրաբաշխման և սանիտարատեխնիկական սարքեր) դաս 17-ի (կաուչուկ, ռետին, գուտապերչ, ասբեստ, փայլար և այդ նյութերից պատրաստված իրեր) դաս 19-ի (ոչ մետաղյա շինանյութեր) և այլն:

Վերջին տարիներին Հայաստանում ըստ դաս 9-ի ապրանքային նշաններ են գրանցել նաև մի շարք հանրահայտ միջազգային ընկերություններ: Այսպես, ամերիկյան ընկերություններից կարող ենք նշել «Գուգլ Ինք.»-ի «ANDROID» ապրանքանիշը (դաս 9. ապարատային և ծրագրային արտադրանք), «Սիսքոու Թեքնոլոջի, Ինք.» հանրահայտ CISCO ապրանքանիշով, (դաս 9՝ համակարգչային ապարատային արտադրանք. հաղորդագրությունների և ցանցերի անվտանգության սարքեր, դաս 42՝ երրորդ անձանց համար խորհրդատվական ծառայություններ համակարգչային ապարատային և ծրագրային համակարգերի մշակման, ընտրության, կիրառման, կառավարման և օգտագործման բնագավառում, տեխնիկական և այլն), «Հյուլիթ-Փեքարդ Դիվելոպմենթ Քամփնի, Լ.Փ.» HP ապրանքանիշով (դաս 9՝ համակարգչային ապարատային արտադրանք, համակարգչային ծրագրային արտադրանք, համակարգիչներին կից սարքեր), «Քուալթոն Ինքորփորեյթիդ» և «Յունիվերսալ Սիթի Սթուդիոս», LLLՓ ընկերությունները (դաս 38՝ հեռահաղորդակցություն, հեռահաղորդակցության տրանսդրման ծառայություններ. հեռուստատեսային հեռարձակման ծառայություններ) և այլն:

Հեռահաղորդակցության ոլորտում պետք է նշել ևս երեք ճանաչված ապրանքանիշեր՝ «Բիլայն»-ը (ռուսաստանյան) և «Օրանժ»-ը (Միացյալ Թագավորության), ինչպես նաև «ՎիվաՍել» հայաստանյան ապրանքանիշը: Ըստ դաս 9-ի գրանցվել է նաև BLACKBERRY հայտնի ապրանքանիշը «Րիսըրչ Ին Սոուլշըն Լիմիթիդ» ընկերության կողմից, ճապոնական TDK (ՏԴԿ Կաբուշիկի Կաիշա (ՏԴԿ Քորփորեյշն)) և SONY (Սոնի Քորփորեյշն) ապրանքանիշերը, թայվանական GYGABITE (Գիգա-Բայթ Թեքնոլոջի Քո., ՍՊԸ) և HTC (ԷյչԹիՍի Քորփորեյշն) ապրանքանիշերը, ինչպես նաև մի շարք չինական հայնտի ապրանքանիշերը (օրինակ Մայքրո-Սթար Ինթերնեյշնլ Քո., Լթդ կողմից գրանցված MSI ապրանքանիշը):

Հատկանշական է, որ վերջին տարիներին մեծ է նաև ավտոմոբիլային ոլորտում գրանցվող ապրանքանիշերի քանակը, որտեղ նույնպես ապրանքային նշանների հայտեր են ներկայացվել և գրանցվել մի շարք աշխարհահռչակ բրենդներ: Այստեղ մեծ տեսակարար կշիռ են կազմում ճապոնական և չինական արապրանքանիշերը: ճապոնական ապրանքանիշերից կարելի է նշել Տոյոտա Ջիդոշա Կաբուշիկի Կաիշա (Տոյոտա Մոթոր Քորփորեյշն) ընկերության TOYOTA ապրանքանիշը, Նիսան Ջիդոշա Կաբուշիկի Կաիշա (Նիսան Մոթոր Քո., ԼԹԴ) ընկերության NISSAN TIDA ապրանքանիշը, որոնք գրանցել են ըստ դաս 12-ի՝ ավտոմեքենաներ և դրանց մասեր, կառուցվածքների տարրեր և կողմ մասեր:

Չինական ընկերություններից ըստ դաս 12-ի ապրանքային նշաններ են գրանցել «Հիգեր Բաս Քամփնի Լիմիթիդ», (HIGER ապրանքանիշ-ավտոմեքենաներ, տրանսպորտային միջոցներ), «Չոնգքինգ Յուան Իննըվեյշն Թեքնոլոջի քո., Լթդ.» (Լոկոմոտիվներ, փոխադրամիջոցների մեղմիչներ, ավտոմեքենաների շասիներ, փոխադրամիջոցների անիվներ), Բաոթոու Բեյ Բեն Հեվի-Դյուբի Թրաք Քո., Լթդ (ամբարձիչով (վերհանով) սայլակներ, լազարեթային ֆուրգոններ (տրանսպորտային միջոցներ), ջրելու մեքենաներ, ավտոբուսներ, բեռնատար ավտոմոբիլներ):

Այս դասում կան նաև Կերայի Հանրապետության (Կիա Մոթորս Քորփորեյշն՝ KIA ապրանքանիշ), ԱՄՆ-ի (Ջեներալ Մոթորս LLՔ), ինչպես նաև բելառուսական (Պրոիզվոդստվեննոյե

Ռեսպուբլիկանսկոյե ՌԲՆիտարնոյե Պրեդպրիյատիե Օպիտնիյ զավոդ «Նեման») հայտնի ապրանքանիշեր, որոնք ճանաչում են ստացել Հայաստանում:

Հաջորդ դասը, որին ուզում ենք անդրադառնալ, վերաբերում է ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներին: Եթե այս ոլորտում ապրանքային նշանների գրանցումները գերակշռում էին 2005-2006թթ., ապա վերջին տարիներին դրանց տեսակարար կշիռը նվազել է, և պետք է նկատել, որ մեծացել են նաև ոչ ալկոհոլային խմիչքների ապրանքանշանները, ինչպես նաև ըստ դաս 21-ի տարաների ձևերի ապրանքանշանները (օր՝ Արարատի կոնյակի գործարան «Ա.Կ.Զ.» մի շարք հայտեր է ներկայացվել տարալի ձևի գրանցման համար): Ըստ դաս 33-ի ապրանքային նշաններ գրանցել են ինչպես հայկական ընկերությունները՝ Երևանի «Արարատ» կոնյակի-գինու-օղու կոմբինատ ԲԲԸ, «Պարագոն իմպորտ» ՍՊԸ, «Շուստով» առևտրի տուն ՓԲԸ, «Երևանի գարեջուր» ՓԲԸ, «Վեդու գինու գործարան» ԲԲԸ, «Մապ» ՓԲԸ, այնպես էլ ռուսաստանյան ընկերություններ՝ «Պիվովարեննոյե օբյեկտներին» «Կրասնիյ Վոստոկ-Սոլոդովպիվո», ԲԲԸ, «Վեստ Գրուպ» ՍՊԸ, «Պիվովարնյա Մոսկվա-Էֆես» ՓԲԸ: Ըստ այս դասի կան նաև գրանցված ամերիկյան (Դայջեո Նորթ Ամերիկա, Ինք.), ֆրանսիական, ուկրաինական և մի շարք այլ ընկերություններ:

Ըստ դաս 32-ի (ոչ ալկոհոլային խմիչքներ)՝ գրանցվել է աճ և կառուցվածքային փոփոխություն: Մի շարք հայկական նորաստեղծ ապրանքային նշանների կողքին («Արզնի գրուպ» ՍՊԸ՝ ԱՐՁՆԻ ապրանքանիշ, «Ջերմուկ գրուպ» ՓԲԸ՝ ԲՅՈՒՐԵՂ ապրանքանիշ, «Արարատ» սննդի կոմբինատ ՍՊԸ ԱՐԱՐԱՏ ապրանքանիշ), հայտնվել են նաև օտարերկրյա ապրանքանիշեր (օր՝ «ՆԱՏՍԱՒՏԱՐԻ» վրացական ապրանքանիշ և «Pepsi» ամերիկյան ապրանքանիշ):

Սննդի ոլորտում նույնպես կան կառուցվածքային փոփոխություններ: Եթե 2005-06թթ. այստեղ գերակշռում էին ըստ դաս 30-ի ապրանքային նշանները, ապա վերջին տարիներին ապրանքային նշաններ են սկսվել գրանցվել նաև ըստ դաս 29-ի (պահածոյացված, սառեցված, չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր և բանջարեղեն, միս, ձուկ, թռչնամիս և որսամիս): Այսպես, այս ոլորտում հայտնի հայկական ապրանքանիշեր են ԱՎՇԱՐ-ը («Ավշար պրոդ» ՍՊԸ), ԿՈՎԻԿԸ-ը («Աշտարակ կաթ» ՓԲԸ): Ըստ դաս 29-ի մի շարք ապրանքանիշեր են գրանցել նաև «Կարոլինա» ՍՊԸ, «Հիքսոս» ՍՊԸ, «Եվրոպրոդուկտ» ՍՊԸ հայկական ընկերությունները: Ըստ դաս 29-ի ապրանքանշաններ կան նաև օտարերկրյա հայտատուների կողմից, որոնցից կարելի է առանձնացնել ամերիկյան «Մարս Ինքորփորեյթիդ» ընկերությունը, բելառուսական «Սավուշկին փրոդուկտ» ԲԲԸ-ն իր հանրահայտ «Սավուշկին փրոդուկտ» ապրանքանիշով, ուկրաինական Պիվոբեզավկոգոլնիյ կոմբինատ «Սլավուտիչ» և այլն:

Ըստ դաս 30-ի հայկական ընկերություններից կարելի առանձնացնել «Գրանդ քեմդի» հայկանադական ՀՀ ՍՊԸ (պաղպաղակների ապրանքանիշեր), «Մանչո գրուպ» ՍՊԸ, «Էկոֆուդ» ՍՊԸ, իսկ օտարերկրյա հայտատուներից նշենք ուկրաինական հայտնի «Կոնդիտերսկայա Կորպորացիյա «Ռոշեն» (ROSHEN ապրանքանիշ) և «Խարկովսկայա բիսկվիտնայա ֆաբրիկա» ընկերությունները, ռուսական «Մոսկովսկի պիչչեվոյ կոմբինատ «Կրեկեր» ԲԲԸ, ամերիկյան «ԲՈՒՓ Հոլդր ՍՊԸ» (Բասկին Ռոբբինս պաղպաղակների հայտնի ապրանքանիշ) և այլն:

2005-06թթ. գերակշիռ մաս կազմող ծխախոտային արտադրանքի (դաս 34-ի) ոլորտում մի շարք հայկական ընկերությունների կողքին («Գրանդ տոբակո» հայկանադական ՀՀ ՍՊԸ, «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ), ավելացել են նաև ճապոնական (Ջփեն Թեբոու Ինք. – Winston ապրանքանիշ), գերմանական (Ռեմոսմա Սիգարետենֆաբրիկեն ԳմբՀ, Style slim ապրանքանիշ), ամերիկյան (Բրիթիշ Ամերիքն Թեբոու (Բրենդս) Ինք., – PALL MALL, Vogue ապրանքային նշաններ), շվեյցարական (Ֆիլիփ Մորիս Փրոդաքթս Ս.Ա.) ընկերություններ իրենց հանրահայտ ապրանքային նշաններով: Եվ, չնայած այս ոլորտում ապրանքային նշանների առատության և հայտատուների բազմազանության, ըստ դաս 34-ի ապրանքային նշանների տեսակարար կշիռը զգալիորեն նվազել է:

Պետք է նշել, վերջին տարիներին ապրանքային նշաններ են սկսել գրանցվել ըստ դաս 24-ի և 25-ի: Այստեղ երևան են եկել ինչպես հայկական նորաստեղծ ապրանքանիշեր «Ազնեսա» Արտադրական Կոոպերատիվ (դաս 24՝ գործվածքներ և մանածագործական ապրանքներ, դաս

25՝ հագուստ, կոշիկներ, գլխարկներ) և «Արտսոքս» ՍՊԸ (դաս 25՝ զուգագուլպաներ, հագուստ, կոշիկներ, գլխարկներ): Սակայն այս ոլորտում ապրանքային նշաններ են սկսվել գրանցել նաև օտարերկրյա հայտնի ընկերություններ, ինչպիսիք են օրինակ ֆրանսիական «Պիեռ Բալմենյն Ս.Ա.» կամ Միացյալ Թագավորության «Բիեյչես Լիմիթիդ» ընկերությունները:

Հատկանշական են նաև մի շարք ապրանքային նշանների գրանցում ըստ դաս 16-ի (թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր), որոնցից հայտնի են «Կլեոպատրա» ՍՊԸ-ն (ԿԼԵՈՊԱՏՐԱ ապրանքանիշ), «Վարդանյաններ» ՍՊԸ, «Ինվեսթմենթ մեդիա գրուպ» ՍՊԸ: Օտարերկրյա հայտատուներից այս դասում հայտնի է ուկրաինական «Կիևսկիյ կարտոննո-բումաժնիյ կոմբինատ» ընկերությունը:

Վերջին տարիներին մեծ են նաև ֆինանսական ոլորտում գրանցվող ապրանքային նշանները ըստ դաս 36-ի: Այստեղ ապրանքային նշաններ գրանցող ընկերություններից կարելի է նշել «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ, «Ամերիա ինվեստ» ՓԲԸ, բանկային ոլորտում հայտնի «Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ, «Անելիք բանկ» ՓԲԸ, «Ինելկոբանկ» ՓԲԸ և այլն: Այս դասում Հայաստանում գրանցվել են նաև մի շարք համաշխարհային ճանաչում ստացած ապրանքանիշեր, ինչպիսիք են օրինակ ամերիկայի AMERICAN EXPRESS (Ամերիքն էքսպրեսս Սարքեթինգ ընդ Դիվելփմենթ Քորփ.) և DISCOVER (Դիսքավեր Ֆայնենշըլ Սըրվիսիս) ապրանքանիշերը:

Պետք է նշել նաև, որ մեր հետազոտության ընթացքում հանդիպել են նաև այլ հայտնի ապրանքային նշաններ, որոնց դասին պատկանող ապրանքային նշանները տեսակարար փոքր կշիռ էին կազմում, սակայն դրանք ճանաչված ապրանքանշաններ են հայաստանյան շուկայում: Օրինակ՝ «ԳԱԶՊՐՈՍ» ԲԲԸ ռուսաստանյան ընկերությունը ունի գրանցված մի շարք ապրանքանիշեր ըստ դաս 1-ի՝ քիմիական նյութեր, դաս 4-ի՝ տեխնիկական յուղեր և (թանձր) քսուլքներ, դաս 37-ի՝ շինարարություն, նորոգում, դաս 39-ի՝ տրանսպորտ (փոխադրումներ), ապրանքների փաթեթավորում և պահպանում, դաս 40-ի՝ նյութերի մշակում, դաս 42-ի՝ նավթի հանքավայրերի հետազոտում շահագործման նպատակով, նավթահորերի հսկում, գազի հանքավայրերի հսկում:

**Атом Маргарян, Сусанна Хачатрян**

### **Товарные знаки в системе международного трансфера технологии**

#### **Аннотация**

В статье обосновано положение, согласно которому спецификация прав собственности на товарные знаки является стабильным гарантом рыночной позиционирования и технологической стратегией компаний. Роль товарных знаков также заключается в том, что, с одной стороны, они служат в качестве средства информации и рекламы, с другой стороны, являются символом возможностей и репутации организации. Успешный товарный знак является основой конкурентного преимущества компании и играет ключевую роль в организации маркетинга.

В статье анализирован рынок товарных знаков Армении, в частности, развитие этого рынка под влиянием технологических факторов.

**Atom Margaryan, Susanna Khachatryan**

### **Trademarks in the System of International Technology Transfer**

#### **Abstract**

The article justifies the condition according to which the registration of intellectual property rights on trademarks is a firm guarantee for companies' technology strategies and positioning. The role of trademarks is of importance, since, on the one hand, the trademarks are means of information and ads, and on the other hand, they are the symbols of company's capabilities and reputation. Successful trademarks enable companies to gain competitive advantage and play key role in marketing strategies of enterprises.

The article analyzes the Armenian trademarks market, namely its development path is lieu of impact of technology factors.

**ԱՏՈՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

*Մ Գ Ա Ա Մ. Լոթոսանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտ, ՄԴՏ*

**ՀԱՍՄԻԿ ԶՈՒՅԱՐՅԱՆ**

*Մ Գ Ա Ա Մ. Լոթոսանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտ, ՄԴՏ*

**ՀՀ ՆՈՐԱՐԱՐՈՒԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՍԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Նորարարությունը տեխնոլոգիական և կազմակերպական նոր լուծումների և մեթոդների կիրառման միջոցով սպառողական արժեքի բարելավմանը կամ սկզբունքորեն նոր բարիքների ստեղծմանն ուղղված գործընթաց է, որի արդյունքում բարձրանում է շուկայում և հասարակության մեջ արդեն իսկ գոյություն ունեցող ապրանքների և ծառայությունների որակական մակարդակը, ինչպես նաև առավել արդյունավետ է դառնում տարաբնույթ գործընթացների, տեխնոլոգիաների կամ գաղափարների կիրառումը: «Նորարարություն» հասկացությունն էականորեն տարբերվում է «գյուտ» հասկացությունից. եթե նորարարությունը արդեն իսկ գոյություն ունեցող գաղափարի կամ մեթոդի բարելավման արդյունք է, ապա գյուտն ուղղակիորեն պայմանավորված է գաղափարի կամ մեթոդի ստեղծմամբ կամ հայտնագործմամբ:

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը որպես գյուտ դիտարկում է ցանկացած բնագավառի տեխնիկական լուծում, որը վերաբերում է արտադրանքին (մասնավորապես՝ սարքին, նյութին, կենսատեխնոլոգիական արգասիքին) կամ եղանակին (նյութական միջոցների օգնությամբ նյութական օբյեկտի վրա գործողությունների իրականացման գործընթացին)<sup>1</sup>: ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության տվյալների համաձայն 2011թ. գործակալություն է ներկայացվել գյուտերի և օգտակար մոդելների 188 հայտ (2010թ.՝ 187), որից 166-ը՝ ազգային հայտատուներից (2010թ.՝ 177), իսկ 22-ը՝ օտարերկրյա հայտատուներից (2010թ.՝ 10): 2011թ. արտոնագիր տալու մասին որոշում ստացած հայտերի թիվը 173 է (2010թ.՝ 151): 2011 թվականի տվյալների համաձայն ՀՀ 2580 գյուտի արտոնագրերից ՀՀ տարածքում գործում են 298-ը, իսկ օգտակար մոդելի 276 արտոնագրերից գործում են 102-ը:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը որպես ինովացիոն գործունեություն դիտարկում է գիտական արդյունքների օգտագործմանը, նոր արդյունքների ստացմանը, թողարկվող արտադրանքի որակի բարձրացմանը և ծախսերի նվազեցմանն ուղղված գործունեությունը<sup>2</sup>: Ինչպիսին էլ լինի գիտության և նորարարական գործունեության միջև կապը, ոչ պակաս կարևոր է դրանց առևտրայնացման հավանականությունը կամ շուկայի կողմից իրացված լինելը: Դեռևս 2006թ. մայիսի 23-ին ընդունված «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը որպես ինովացիոն գործունեության պետական աջակցության նպատակ սահմանում է ինովացիոն գործունեության համար տնտեսական, իրավական և կազմակերպական պայմանների ապահովումը:

Նույն օրենքը որպես պետական ինովացիոն քաղաքականության խնդիրներն առանձնացրել է՝

- ա) պետական ինովացիոն քաղաքականության գերակայությունների սահմանումը,
- բ) տնտեսության տեխնոլոգիական վերազինմանը և ինովացիոն ենթակառուցվածքների ստղծմանն ու զարգացմանը նպաստելը,

<sup>1</sup> <http://www.aipa.am/am/legislation/41/2/#pin>  
<sup>2</sup> <http://www.edu.am>

- գ) ինովացիոն գործունեության ոլորտում գիտության, կրթության, արտադրության և ֆինանսավարկային կառույցների համագործակցության իրավական հիմքերի ստեղծումը<sup>1</sup>:  
Ինովացիոն գործունեության պետական աջակցության հիմնական ուղղություններն են՝
- ա) վեճուրային, ներդրումային հիմնադրամների ստեղծման և ինովացիոն գործունեության համար բարենպաստ իրավական դաշտի ստեղծումը,
- բ) ֆինանսական և ներդրումային աջակցության երաշխիքների տրամադրումը,
- գ) պետական գույքի օգտագործման իրավունքի տրամադրումը,
- դ) ինովացիոն ենթակառուցվածքների՝ գիտաինովացիոն կենտրոնների, հիմնադրամների, տեխնոպարկերի, բիզնեսի ինկուբատորների ստեղծմանն ու զարգացմանն աջակցությունը.
- ե) ինովացիոն գործունեություն իրականացնող կադրերի պատրաստմանը, վերապատրաստմանը և որակավորման բարձրացմանն աջակցությունը<sup>2</sup>:

2011թ. փետրվարի 17-ին ՀՀ կառավարության N6 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգը», որի հիմքում դրվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության մասնակցությամբ իրականացվող համակարգաստեղծ նախաձեռնությունները, ինչպես նաև ազգային ինովացիոն համակարգի ձևավորումն ապահովող իրավական դաշտի, բիզնես կարողությունների, կրթության, ինովացիոն և ֆինանսական ենթակառուցվածքի զարգացմանն ու բարեփոխմանն ուղղված այլ նախագծեր: ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգում գործող ենթակառույցների շարքում առանձնանում է Նորանուծության և ձեռներեցության ազգային կենտրոնը (ՆՁԱԿ), որի հիմնական նպատակն է տեխնոլոգիաների փոխանցման գործուն մեխանիզմների ձևավորումն ու ներդրումը, գիտատեխնիկական տեղեկատվության և գրադարանային ծառայությունների մատուցումը: Կենտրոնը հարթակ է հանդիսանում նորարարների և ձեռներեցների միջև երկարաժամկետ հարաբերությունների ձևավորման համար: Կազմակերպության առաքելությունն է՝ աջակցել մտավոր սեփականության առևտրայնացմանը, գիտատար մշակումների և առաջատար տեխնոլոգիաների շուկայի ձևավորմանը, ինչպես նաև օտարերկրյա և միջազգային համապատասխան ենթակառուցվածքների հետ համագործակցությանը<sup>3</sup>:

ՆՁԱԿ-ն որոշ տվյալներ է տրամադրում ՀՀ-ում մշակված ինովացիոն ծրագրերի վերաբերյալ, սակայն դրանք ամփոփ տվյալներ չեն, այլ մշակումների վերաբերյալ տեղեկատվություն, որը որոշ նորարարական ծրագրերի հեղինակներ տրամադրում են կենտրոնին՝ ֆինանսական միջոցների ներգրավման և նոր գործընկերների ձուլաբերման նպատակով: Տեղեկատվական այս հարթակը հնարավորություն է տալիս հավանական գործընկերներին նախնական պատկերացում կազմել մշակված նորարարական արդյունքի վերաբերյալ:

Նորարարական ծրագրերը ներկայացված են ըստ դրանց մշակման փուլերի՝

- *առկա է արտադրություն/վաճառքի փոքր ծավալ, նախնական կոմերցիոն գործունեություն, սկզբնական շրջան՝ գաղափար, գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական մշակումներ,*
- *պահանջվում է լրամշակում, լրացուցիչ գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, փորձարդյունաբերական աշխատանքներ/փորձարկումներ,*
- *պահանջվում են ներդրումներ արտադրություն/գիտաարդյունաբերական աշխատանքներ սկսելու համար,*
- *առկա է արտադրություն/վաճառքի փոքր ծավալ, նախնական կոմերցիոն գործունեություն, սկզբնական շուկա, ընդլայնման համար պահանջվում են ներդրումներ,*
- *կայացած է, իրացման նոր շուկաների որոնում<sup>4</sup>:*

Այս տեղեկատվական հարթակում կարելի է ծանոթանալ բազմաթիվ նորարարական ծրագրերի և դրանց վերաբերյալ ստանալ հակիրճ ու ամբողջական տեղեկատվություն: Սակայն,

<sup>1</sup> <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2624&lang=arm>  
<sup>2</sup> <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2624&lang=arm>  
<sup>3</sup> <http://www.mineconomy.am>  
<sup>4</sup> <http://www.innovcentre.am>



տնտեսության մեջ այս ոլորտի ընդգրկման ծավալների ամբողջական գնահատումը բավականաչափ վիճարկելի է, քանի որ, չկան դրանց գնահատման հստակ չափանիշներ և մեխանիզմներ, ընդ որում՝ այս խնդիրն առկա է նաև զարգացման բարձր մակարդակ ունեցող տնտեսություններում:

Նորարարական գործունեության արդյունքների վերաբերյալ ամփոփ ցուցանիշների ստացումը նախ և առաջ պայմանավորված է այս ոլորտի գնահատման մեթոդների և չափանիշների մշակմամբ: Ընդ որում, գնահատել անհրաժեշտ է ոչ միայն առանձին ֆիրմայի նորարարական գործունեությունն, այլև անհրաժեշտ են մեթոդներ, որոնք թույլ կտան առանձին ֆիրմաների տրամադրած ցուցանիշների հիման վրա գնահատել ողջ տնտեսության նորարարական գործունեության արդյունքները: Սա իր հերթին ենթադրում է վիճակագրական ցուցանիշների նոր խմբի անհրաժեշտություն, որոնք հնարավորություն կտային ձեռք բերել տվյալներ՝ տնտեսության տարբեր ոլորտներում նորարարական գործունեության բաշխվածության վերաբերյալ:

Միջազգային փորձը առաջարկում է մի շարք մոտեցումներ. առավել տարածվածներից են տրամադրված արտոնագրերի թվաքանակի և գիտահետազոտական գործունեության ծավալների գնահատման ցուցանիշների կիրառումը: Սակայն արտոնագրերի թվաքանակի օգտագործման մեթոդը սահմանափակ է, քանի որ այն թույլ չի տալիս պարզել, թե դրանց որ մասն է կիրառելի և հետաքրքիր շուկայի համար, այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է գնահատել նորարարական ծրագրերի առևտրայնացման մակարդակը: Մեկ այլ մոտեցմամբ, որպես նորարարությունների գնահատման չափանիշ, դիտարկուվում է գիտահետազոտական գործունեության ոլորտում կատարված ծախսերի մակարդակը: Նորարարական գործունեության գնահատման առավել իրատեսական եղանակ է առաջարկվում Ռիչարդ Ադամսի կողմից<sup>1</sup>. համաձայն այս մոտեցման՝ նորարարական գործունեության գնահատումը պետք է իրականացվի ֆիրմաների միջև հարցաթերթիկների միջոցով հարցումների անցկացմամբ: Ըստ հեղինակի՝ այս մեթոդը թույլ կտա պարզել ոչ միայն նորարարական ֆիրմաների՝ ըստ տնտեսության ճյուղերի բաշխվածության աստիճանը, այլև աշխարհագրական տեղաբաշխվածության համապատկերը:

Մյուս կողմից պետք է պարզել նաև, թե կոնկրետ ֆիրմայի կողմից տվյալ նորարարական ծրագրի կիրառումն ինչպիսի ֆինանսատնտեսական փոփոխությունների է հանգեցրել՝ գնահատելով ներդրման արդյունավետությունը: Այսպիսով, նորարարական գործունեությունը գնահատելու համար անհրաժեշտ տեղեկատվության ստացումը պահանջում է նախ տվյալների հավաքագրման մեխանիզմի, ապա նաև տվյալների վերլուծության և ամփոփման եղանակների ու մեթոդների մշակում:

Հայաստանի Հանրապետությունում նորարարական գործունեությունը բնութագրող ամփոփ տվյալներ չեն տրամադրում ո՛չ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, ո՛չ ոլորտին առնչվող որևէ այլ կազմակերպություն: Դա որոշակիորեն պայմանավորված է այն հանգամանքով, որ ոլորտին առնչվող ենթակառուցվածքները գտնվում են ձևավորման փուլում, մասամբ էլ այն պատճառով, որ դրանք ունեն առևտրայնացման ցածր մակարդակ:

Բնականաբար, ոլորտի նկարագիրն առավել պարզ կլիներ, եթե որոշ նորարարական մշակումների կամ գրանցված գյուտերի թվաքանակից բացի, հասանելի լինեին ներդրումների իրականացման ծավալներին վերաբերող տվյալները: Այնուհանդերձ, ոլորտին առնչվող կառույցների տրամադրած տեղեկատվության ամփոփումը թույլ է տալիս ենթադրել, որ գործունեության այս տեսակն ունի ոչ միայն ներդրումների և ֆինանսական միջոցների կարիք, այլև այնպիսի մեխանիզմների, որոնք թույլ կտային արտադրանքը հասանելի դարձնել շուկայի նպատակային հատվածներին, ընդ որում՝ ինչպես տեղական, այնպես էլ՝ միջազգային:

ՆՁԱԿ-ի նորարարական ծրագրերի առաջարկը ներկայացնող տեղեկատվական հարթակը ոլորտի արտադրանքն առավել հասանելի է դարձնում շահագրգիռ անձանց՝ թույլ տալով on-line ռեժիմում ծանոթանալ նորարարական ծրագրերին: Բայց և այնպես, դա պահանջվում է որոշակի ժամանակահատված կատարված քայլերի արդյունավետությունը գնահատելու համար, ինչպես

<sup>1</sup> The distribution of innovation activity across UK industry, Final Report, Richard Adams University of Exeter, MAY 2011.

նաև հասկանալու, թե հայկական նորարարական արդյունքների շուկան որքանով է մրցունակ և զարգացման ինչ հեռանկարներ ունի:

Նորարարական գործունեությունը գնահատող բարձր վարկանիշ ունեցող ցուցանիշներից մեկը գլոբալ նորարարական համաթիվն (ԳՆՀ) է<sup>1</sup>: Այն մի շարք ենթացուցիչներից կազմված ցուցանիշ է, որը առավել ընդհանուր նկարագիր է տալիս տվյալ երկրի նորարարական շուկայի հնարավորությունների, ինչպես նաև՝ բիզնես միջավայրի, ինստիտուցիոնալ համակարգի, ենթակառուցվածքների առկայության և նորարարական գործունեությունը պայմանավորող այլ կառուցվածքների զարգացման առկա մակարդակների վերաբերյալ:

ԳՆՀ-ի ցուցանիշով Հայաստանն աշխարհի 141 երկրների շարքում զբաղեցնում է 69-րդ տեղը: Չնայած, որ սա բավականին բարձր ցուցանիշ է, հատկապես, եթե հաշվի առնենք, որ Հայաստանը դասվում է միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների շարքին, սակայն այս ամփոփ ցուցանիշը նախ և առաջ բնութագրում է տվյալ երկրի պոտենցիալ կարողությունները: Այսինքն՝ այն նորարարական գործունեության զարգացումը ապահովող ենթակառուցվածքների համապարփակ նկարագիր է, և ԳՆՀ-ի բավականաչափ բարձր ցուցանիշն առավելապես կարող է լինել հենց մեծ պոտենցիալ հնարավորությունների արդյունք, քան՝ բուն նորարարական գործունեության հետևանք: Սա, թերևս այն է, ինչ նկատվում է հենց Հայաստանի Հանրապետության պարագայում. այլ կերպ ասած՝ արտոնագրված գյուտերի թվաքանակը կամ նորարարական բազմաթիվ ծրագրերի առկայությունը դեռևս չի ենթադրում դրանց՝ շուկայի կողմից իրացում կամ յուրացում: Սա խնդիր է, որը նույնքան կարևոր է, որքան բուն նորարարական կամ գիտահետազոտական գործունեության դրական ելքը:

Հայաստանի Հանրապետության պարագայում հատկանշական է այն, որ կապը նորարարական, ինչպես նաև գիտահետազոտական ինստիտուտների և տնտեսության գործարար հատվածի միջև շատ թույլ է զարգացած: Այսինքն՝ գիտահետազոտական ուսումնասիրությունների և նորարարական մշակումների զգալի մասը պահանջարկ չունի ներքին շուկայում, իսկ օտարերկրյա ներդրումների և ֆինանսական միջոցների ներգրավումը ոչ միայն մրցունակ շուկայական արտադրանքով է պայմանավորված, այլև՝ համապատասխան ենթակառուցվածքների առկայությամբ և զարգացմամբ: «Գլոբալ նորարարական համաթիվ-2012» զեկույցի<sup>2</sup> համաձայն՝ ՀՀ գիտահետազոտական հաստատությունների գործունեության ընդամենը 4.2%-ն է ֆինանսավորվում արտերկրյա աղբյուրներից, այսինքն՝ ոլորտի նկատմամբ արտասահմանյան կապիտալի հետաքրքրությունն այնքան էլ բարձր չէ: Ինչ վերաբերում է բիզնեսի կողմից գիտահետազոտական գործունեության զարգացման, ինչպես նաև այդ գործունեության ֆինանսավորման ցուցանիշներին, ապա նույն աղբյուրը Հայաստանի համար որևէ տվյալ չի հրապարակում:

ՀՀ-ում նորարարական ծրագրերն ընդգրկում են մի շարք ոլորտներ, հատկապես՝ արդյունաբերական արտադրություն, ավտոմատացում/ռոբոտատեխնիկա, մետաղագործական արտադրություն, շինարարություն, տրանսպորտ, էներգետիկա, գյուղատնտեսություն, անտառատնտեսություն, ձկնորսություն, հեռահաղորդակցություն, կապ, միկրոէլեկտրոնիկա, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն:

Բնականաբար մրցունակ նորարարական արտադրանքը համապատասխան արդյունավետ և նպատակայնորեն գործող ենթակառուցվածքների առկայության արդյունք է: Սա է պատճառը, որ «Գլոբալ նորարարական համաթիվ- 2012» զեկույցում կարևոր տեղ է հատկացվում նորարարությունը պայմանավորող գործունեության ոլորտներին, ինչպիսիք են՝ գիտահետազոտական գործունեությունը, համալսարաններ – արդյունաբերություն համատեղ հետազոտությունները (ի դեպ, այս ցուցանիշով Հայաստանը 98-րդ տեղն է զբաղեցնում 141 երկրների շարքում), արտադրական միավորումների (կլաստերների) առկայությունը, օտարերկրյա աղբյուրներից ֆինանսավորվող գիտահետազոտական գործունեությունը և այլն: Այսինքն՝ գործունեու-

<sup>1</sup> Նորարարական գործունեության գնահատման ուղղված INSEAD (բիզնեսի եվրոպական ինստիտուտի) և մտավոր սեփականության միջազգային ինստիտուտի համատեղ հետազոտության արդյունքները ներկայացնող ամփոփ ցուցանիշ է:

<sup>2</sup> <http://www.globalinnovationindex.org>

թյան բոլոր այն ոլորտները, որոնք հարթակ են նախապատրաստում նորարարական գործունեության զարգացման համար:

ԳԻՉ-ի ցուցանիշով աշխարհում առաջատար եռյակի մեջ մտնում են Շվեյցարիան, Շվեդիան և Սինգապուրը, ընդ որում՝ այս երկրներն առաջատար եռյակի կազմում են նաև «գիտելիքներ և տեխնոլոգիական ելքեր» համաթվի ցուցանիշով:

Աղյուսակ 1

Տարածաշրջանի երկրների գլոբալ նորարարական համաթիվը (ԳՆՉ)-2012<sup>1</sup>

Երկիր	ԳԳԻ-7	Հաստատու- կայաններ	Մարդկային կապիտալ և հետազոտ- ություններ	Ենթակա- ռուցվածք	Շուկայական փորձ	Բիզնես փորձ	Մուտք	Փոտենցիալների և տեխնո- լոգիաների կիրառումը	Ստեղծ- ագործ ելքեր	Արժեք եղբեր	Արդյունա- վորում
Հայաստան	34.5	61.5	32.5	29	37.8	34.8	39.1	31.7	28	29.8	0.8
Վրաստան	34.3	65.2	29.6	29.4	50.3	34	41.7	29.5	24.2	226.8	0.6
Ռուսաստանի Դաշնություն	37.9	49.1	43.8	37.8	35	44.3	42	38.4	29.1	333.8	0.8
Բելառուսիա	32.9	41.5	42.7	34.5	36.9	33.1	37.7	34.5	21.8	228.1	0.7
Ուկրաինա	36.1	40	42.2	27.1	38.7	42.3	38	39.2	29.2	34.2	0.9
Ղազախստան	31.9	64.5	31.2	37.3	34	40.2	41.4	23.8	21	22.4	0.5
Ադրբեջան	30.4	49.5	30	26.2	44.9	33.5	36.8	20.5	27.5	24	0.7
Թուրքիա	34.1	50	31.8	34.0	39.4	32.5	37.5	27.8	33.7	330.7	0.8

Այսպիսով, հայկական նորարարական շուկայում առկա են հետևյալ խնդիրները՝

- Կառուցվածքային, ինչը ենթադրում է՝ շուկան գտնվում է նոր զարգացման փուլում և ունի ոչ միայն ֆինանսական միջոցների ներգրավման խնդիր, այլև համապատասխան ենթակառուցվածքների զարգացման անհրաժեշտություն՝ մասնավորապես պայմանավորված այնպիսի մեխանիզմների ստեղծմամբ, որոնք թույլ կտան մշակումների արդյունքներն առավել հասանելի դարձնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին նպատակային շուկաների համար,
- զնահատման, այսինքն՝ անհրաժեշտ է մշակել ինչպես տեղեկատվության հավաքագրման, այնպես էլ դրա մշակման և ամփոփման եղանակների ու մեթոդների համակարգ, որը թույլ կտար զնահատել՝
  - ✓ նորարարական գործունեություն իրականացնող ֆիրմաների աշխարհագրական բաշխվածությունը,
  - ✓ նորարարական գործունեության բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի,
  - ✓ զնահատել նորարարական գործունեության արդյունավետությունն ամբողջ տնտեսության համար:

Ակնհայտ է, որ անցումային փուլում գտնվող երկրներում, այդ թվում և Հայաստանում, նորամուծությունների սահուն և արդյունավետ ընթացքը ապահովող հիմնական օղակը պետք է լինի պետական կառույցը: Նույնիսկ ամենազարգացած երկրներում տնտեսության արդիականացման ռազմավարական ուղղությունների ձևավորման վրա պետությունը վճռորոշ ազդեցություն ունի, թեև, մասնավոր նորարարական ձեռնարկչությունն է կրում նորացման հիմնական ծանրությունը: Յուրաքանչյուր կոնկրետ ձեռնարկատեր, ավելի ստույգ՝ կառավարիչ, ինքն է շարունակ մտահոգ, որպեսզի պատշաճ մրցունակություն ունենա, այլապես, նորույթների ներդրման մեջ առավել հաջողակ մրցակիցները, ի վերջո, նրան դուրս կմղեն իր զբաղեցրած շուկայական հատվածներից:

Հետևաբար, նորամուծությունների ներդրման ենթակառուցվածքի ձևավորման հարցում պետության հիմնական խնդիրը պետք է լինի այնպիսի բարենպաստ շարժառիթների ու ներքին

<sup>1</sup> <http://www.globalinnovationindex.org/>

խթանների (մոտիվացիաների) միջավայրի ձևավորումը, որը հնարավոր դարձնի գիտատեխնոլոգիական շղթայի բոլոր օղակների սուբյեկտների մոտ շահերի ներդաշնակեցումը և, ի վերջո, մտավոր սեփականության արդյունքների նկատմամբ բարձր պահանջարկի ձևավորումը: Այս պայմաններում պետության առաջին խնդիրը պետք է լինի նորամուծություններին բարենպաստող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունումը: Կարելի է փաստել, որ այս առումով Հայաստանում բավարար օրենսդրական հիմք է ստեղծվել: Նախ, ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը սահմանել է մտավոր սեփականության արդյունքների ստեղծման, պաշտպանության և ներդրման (առևտրայնացման) հիմնարար չափորոշիչները<sup>1</sup>: Դրանց հիման վրա Ազգային ժողովը ընդունել է մտավոր գործունեության առանձին տեսակների արդյունքների շարժին առնչվող հարաբերությունները կանոնակարգող օրենքների ամբողջական փաթեթը<sup>2</sup>: Մյուս կողմից, նորամուծությունների ենթակառուցվածքի ձևավորման առումով կարևոր է ոչ միայն բարենպաստ օրենսդրական միջավայրի ձևավորումը, այլև այնպիսի ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծումը, երբ այդ օրենքների պահանջները կիրառվեն առավելագույն արդյունավետությամբ: Դրան պետք է հավելել նաև նորամուծությունների կառավարման ոլորտում պատշաճ գիտելիքներ, փորձ ու հմտություններ ունեցող կառավարիչների պատրաստումը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սուր մրցակցության պայմաններում սկզբունքային նորույթներ պարունակող գյուտերի միայն 6-8 տոկոսն է վերածվում նոր ապրանքների, ծառայությունների կամ գործընթացների<sup>3</sup>:

Այստեղից հետևում է, որ հարկավոր է նորույթների առաջխաղացման արդեն նախնական փուլում ունենալ դրանց առևտրայնացման այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ տան գնահատել ու հաշվարկել այս կամ այն նորույթի շուկայական իրացման կամ առևտրայնացման աստիճանը: Ընդհանրապես, ցանկալի է, որպեսզի այդ մեխանիզմը կիրառելի լինի նորամուծությունների ընդհանուր շղթայի բոլոր փուլերի նկատմամբ, ինչը թույլ կտա ժամանակին դադարեցնել շահույթի հեռանկար չունեցող նորույթների առաջխաղացումը: Փորձը ցույց է տալիս, որ գիտահետազոտական և փորձնական ստորակտորական աշխատանքների յուրաքանչյուր հաջորդ փուլին անցնելիս կատարվող ծախսերը մեկ կարգով մեծանում են<sup>4</sup>: Այդ պատճառով անհեռանկար մշակումների ժամանակին դադարեցումը կարող է ոչ միայն հսկայական նյութական, ֆինանսական և մտավոր ռեսուրսներ խնայել, այլ հնարավոր դարձնել այնքան թանկ ժամանակի տնտեսումը:

Ընդհանուր առմամբ, նորամուծությունների արդյունավետ ենթակառուցվածքի ստեղծման համար տևական ժամանակ է անհրաժեշտ: Ջարգացած երկրներում նման ենթակառուցվածքների ստեղծման վրա պահանջվել է 10-15 տարի: Սակայն Հայաստանում նորամուծությունների ենթակառուցվածքների որոշ տարրեր ստեղծվել են դեռևս ԽՍՀՄ օրոք, ասենք, գիտահետազոտական ինստիտուտների և կոնստրուկտորական-տեխնոլոգիական բյուրոների ցանցերը: Դրանք ժառանգվել են նախկին համակարգից: Սակայն առկա կառույցները միանգամայն անբավարար են: Ժամանակակից իմաստով նորամուծությունների արդիական ենթակառուցվածք ձևավորելու համար զգալի ռեսուրսներ ու հետևողական ջանքեր են անհրաժեշտ ինչպես միկրոայնպես էլ՝ մակրոմակարդակների վրա:

Բնականաբար, արդյունավետորեն գործող և միջազգային չափանիշներով մրցունակ ենթակառուցվածքի ստեղծումը բարդագույն խնդիր է, սակայն, լուծման առումով, բոլորովին էլ՝ ոչ անհնար: Պարզապես, նման կառույցի ձևավորումը պետք է դրվի պետության տնտեսական քաղաքականության առաջնահերթությունների շարքում: Մեզանում բավականին երկչոտ փորձեր են արվում ինֆորմացիոն տեխնոլոգիաների հիմքի վրա ստեղծել տեխնոպարկ, որի շրջանակներում պետք է ձևավորվեն ոչ միայն նորամուծությունների ստեղծման, այլև ուսումնական

<sup>1</sup> «ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք», Երևան 1998թ., 799 էջ:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> В.Г.Зинов. «Интеллектуальные ресурсы. Интеллектуальная собственность. Интеллектуальный капитал.» М.: АНХ, 2000. ст. 78-79.

<sup>4</sup> Տե՛ս В.Г.Зинов. «Интеллектуальные ресурсы. Интеллектуальная собственность. Интеллектуальный капитал.» М.: АНХ, 2000 ст. 57.

ենթակառուցվածքները: Հատկապես այս վերջին խնդրի լուծումը հույժ կարևոր է, քանզի հաճախ մեզանում ոչ թե նորությունների, այլ՝ դրանց նյութականացման-առևտրականացման ծրագրերի կառավարիչների պակաս է զգացվում:

Վերջ ի վերջո, ցանկացած ներդրողի գրավում է ոչ միայն և, ոչ այնքան, նորությունների ներդրում ենթադրող ծրագրերը, այլև այն մարդկանց ու մասնագետների պատրաստվածության աստիճանը, ովքեր պատրաստ են կյանքի կոչել այդ ծրագրերը: Այստեղ հատկապես կարևորվում է նորությունների առևտրայնացմանը, շուկա արտածմանը ու շահույթների հետադարձ հոսքերի առաջացմանն ընդունակ բարձրակարգ մասնագետների պատրաստումը:

Բնականաբար, պահանջվող չափանիշներին համապատասխանող մասնագետների հիմնական խնդիրը պետք է լինի ձեռնարկատիրական շահույթների գոյացման առումով շոշափելի հեռանկար խոստացող, մրցունակ նորարարական նախագծերի ընտրությունը: Այս առումով չափազանց կարևոր է, թե նորամուծությունների կառավարման ոլորտի մասնագետը կամ հենց ինքը՝ մենեջերը որքանով է կարողանում ճշգրիտ կանխատեսել ու գնահատել այս կամ այն նորության առևտրականացման ռիսկերը:

Այլ կերպ, նորության ներդրման հաջողությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ըստ ներդրման փուլերի ինչպե՞ս են գնահատվում նրանցից յուրաքանչյուրում ակնկալվող հատույցի մեծությունը կամ հնարավոր կորստի հավանականությունը: Ռիսկային ներդրման բոլոր գումարելիներն, այդպիսով, առանձին-առանձին, իսկ հետո նաև՝ ամբողջության մեջ գնահատվելով ու համադրվելով տալիս են նորության առևտրայնացման հաջողության բանաձևը: Իսկ ռիսկերը գնահատելու նպատակով մասնագիտացված հզոր փորձագիտական-խորհրդատվական կառույցների ձևավորումը հույժ կարևոր խնդիր է: Եթե կատարված նորամուծային առաջարկի հեղինակը ակնկալում է ծրագրի իրականացումը լրիվ կամ մասնակիորեն ֆինանսավորել պետության միջոցների հաշվին, բնականաբար, պետությունը պետք է ստեղծի նման կառույցներ, որոնց ձեռնահաս գնահատականից կախված կլինի այս կամ առաջարկի ֆինանսավորման հնարավորությունը կամ՝ մերժումը:

**A. Маргарян, А.Джугарян**

## **Трансформация инновационного сектора Армении в контексте международных сопоставлений**

### **Аннотация**

В статье обсуждаются вопросы трансформации армянской инновационно-технологической сферы. Рассматриваются вопросы коммерциализации инновационных продуктов в контексте обеспечения законодательно-правовой среды и образования институциональных инфраструктур. Анализируются возможности и проблемы государственно-частного сотрудничества в сфере технологических инноваций. На основе анализа Глобального Инновационного Индекса (ГИИ) выявляются преимущества и недостатки армянской инновационной сферы.

**A.Margaryan, A.Juharyan**

## **The Transformation in Armenian Innovation Sector in Context of International Comparisons**

### **Abstract**

In this paper the problems of the transformation of Armenian innovation technology sector are discussed. Herein the commercialization problems of innovation products are considered in context of existence of the required legislative jurisdiction environment and the formation of institutional infrastructure. Possibilities and the problems of the public-private partnership in the innovation technology sector are analyzed in this paper. Advantages and disadvantages of Armenian innovation sector are researched based on Global Innovation Index (GII) analysis.

**ՀՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ԶԵՆՔԱՅԻՆ ԻՆՏԻԿԱՏՈՐՆԵՐԸ  
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՎ**

Տնտեսական աճը և զարգացումը միայն ավանդական մակրոտնտեսական ցուցանիշներով (ՀՆԱ, ՀԱԱ, բնակչության 1 շնչին ընկնող եկամուտ և այլն) բնութագրելը կարող է հանգեցնել էկոլոգիական լուրջ հետևանքների:

Ամերիկյան հայտնի տնտեսագետ-էկոլոգ Դալին նշել է. «Քանի դեռ մարդկային բարեկեցության չափը որոշվում է ավանդական մակրոցուցանիշներով, փոփոխությունների ճանապարհին գոյություն կունենան հսկայական խոչընդոտներ: Շուկան տեսնում է միայն արդյունավետությունը, բայց ոչ արդարությունն ու կայունությունը»<sup>1</sup>: Պահանջվում է տնտեսական աճի և առաջընթացի ցուցանիշների էկոլոգիական ճշգրտում:

Անցումը տնտեսական աճի կայուն զարգացման մոդելին անհրաժեշտ է դարձնում էկոլոգիական գործոնը մտցնել հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների համակարգ: Գլոբալ և ազգային մակարդակներով զարգացման վիճակը և դինամիկան բնութագրելու համար անհրաժեշտ են համալիր և ընդհանրացված ցուցանիշներ: Այդպիսիք են կայուն զարգացման ինդիկատորները և ինդեքսները, որոնք պետք է ներառվեն կայուն զարգացման միջազգային և ազգային ծրագրերի, տնտեսության զարգացման պլանների, շրջակա միջավայրի պահպանության պլանների մեջ:

Առաջին անգամ կայուն զարգացման ինդիկատորների մշակման անհրաժեշտությունը նշվել է «21-րդ դարի օրակարգում», որն ընդունվել է 1992թ. Ռիո-դե-ժանեյրոյում կայացած ՄԱԿ-ի շրջակա միջավայրի մասին վեհաժողովում:

Կայունության ինդիկատորները պետք է բավարարեն հետևյալ հիմնական չափանիշներին.

- հնարավոր լինի օգտագործել ազգային մակրոմակարդակով,
- համատեղեն էկոլոգիական, սոցիալական և տնտեսական բաղադրիչները,
- լինեն պարզ և ունենան միանշանակ բացատրություն,
- ունենան քանակական արտահայտություն և գիտական հիմնավորվածություն,
- հիմնվեն գոյություն ունեցող վիճակագրության համակարգի վրա և չպահանջեն նշանակալից ծախսեր տեղեկատվության հավաքման և հաշվարկների համար,
- լինեն ներկայացնելի միջազգային համեմատությունների համար,
- ունենան գնահատման հնարավորություն ժամանակային զարգացման մեջ,
- ունենան սահմանափակ թիվ և այլն:

Կայուն զարգացման ինդիկատորների հիմնախնդրի մշակումը դարձել է բազմաթիվ զարգացած երկրների և միջազգային կառույցների հետազոտական թեմատիկայի բաղկացուցիչ մասը և լինելով համալիր և թանկ գործընթաց, պահանջում է մեծ քանակությամբ տեղեկատվություն, որի ստանալը ոչ միայն բարդ է, այլ հաճախ նաև անհնար (օրինակ, ըստ շատ էկոլոգիական պարամետրերի):

Մեթոդոլոգիական և վիճակագրական խնդիրների հաշվարկի բարդության պատճառով (կապված տեղեկատվության անբավարարության, էկոլոգիական տվյալների և բնական ռեսուրսների հյուսման արժեքային հաշվարկման, էկոլոգիական վնասի, ժամանակի ընթացքում առողջության և ռեսուրսների արդյունավետության վրա աղտոտումների ազդեցության հաշվի առնման հետ և այլն) աշխարհում բացակայում է համընդհանուր ինտեգրալ ինդիկատորի ցուցանիշը, մինչդեռ այն կարող է լինել տնտեսական աճը և տնտեսական բարեկեցությունը

<sup>1</sup> Daly H. Ecological Economics and the Ecology of Economics. Essays in criticism. Edward Elgar Publishing, Cheltenham, UK, 1999.

բնութագրող ՀՆԱ-ի, ՀԱԱ-ի, ազգային եկամտի ցուցանիշների առավել տարողունակ համարժեքը: Մշակումները շարունակվում են:

Համաշխարհային բանկը (ՀԲ) յուրաքանչյուր տարի հրապարակում է «Փոքր կանաչ գիրքը», որի մեջ ամփոփված են ավելի քան 200 երկրների կտրվածքով բնական ռեսուրսների չափման, արժեքի և ռացիոնալ օգտագործման տվյալներ: ՀԲ-ի «Փոքր կանաչ գրքի» 2012թ. վերջին խմբագրման ժողովածուի մեջ ընտրվել են կայուն զարգացման երկու կարևոր ինտեգրալ ինդիկատորներ՝ **ճշգրտված զուտ ազգային եկամուտ (ANI–Adjusted net national income)** և **ճշգրտված զուտ խնայողություններ (ANS – Adjusted Net Saving)** ցուցանիշները<sup>1</sup>:

Ճշգրտված զուտ ազգային եկամուտը (**ANI**) որոշվում է համախառն ազգային եկամտից հանելով հիմնական կապիտալի մաշվածությունը և բնական ռեսուրսների հյուծումը: Ավանդական մակրոտնտեսական ցուցանիշի (**ՀԱԵ**) և էկոլոգիապես ճշգրտվածի (**ANI**) միջև տարբերությունները մի քանի երկրների համար ներկայացված են աղյուսակ 1-ում:

*Աղյուսակ 1*

**Համախառն ազգային եկամտի և ճշգրտված զուտ ազգային եկամտի տարբերությունները աշխարհի մի շարք երկրներում 2007-2010թթ.<sup>2</sup>**

Դ/Ը	Երկիր	2007			2008			2009			2010		
		ՀԱԵ, մլրդ ԱՄՆ դոլար	ճշգրտված զուտ ազգային եկամուտ, մլրդ ԱՄՆ դոլար	տարբերությունը, %	ՀԱԵ, մլրդ ԱՄՆ դոլար	ճշգրտված զուտ ազգային եկամուտ, մլրդ ԱՄՆ դոլար	տարբերությունը, %	ՀԱԵ, մլրդ ԱՄՆ դոլար	ճշգրտված զուտ ազգային եկամուտ, մլրդ ԱՄՆ դոլար	տարբերությունը, %	ՀԱԵ, մլրդ ԱՄՆ դոլար	ճշգրտված զուտ ազգային եկամուտ, մլրդ ԱՄՆ դոլար	տարբերությունը, %
1.	Ադրբեջան	28.0	12.4	<b>55.7</b>	43.6	20.4	<b>53.2</b>	40.8	25.2	<b>38.2</b>	49.4	25.9	<b>47.6</b>
2.	ԱՄՆ	14 097.1	12 233.1	<b>13.2</b>	14 390.9	12 337.4	<b>14.3</b>	13 938.4	12 053.1	<b>13.5</b>	14 635.6	12 453.3	<b>14.9</b>
3.	Ավստրալիա	821.0	631.7	<b>23.1</b>	1 022.6	772.2	<b>24.5</b>	898.9	724.0	<b>19.5</b>	1 094.5	863.2	<b>21.1</b>
4.	Հայաստան	9.5	8.4	<b>11.6</b>	12.1	10.8	<b>10.7</b>	8.8	7.8	<b>11.4</b>	9.7	8.6	<b>11.3</b>
5.	Ճապոնիա	4 502.4	3 613.7	<b>19.7</b>	5 009.0	3 994.2	<b>20.3</b>	5 170.1	4 475.8	<b>13.4</b>	5 628.0	4 841.4	<b>14.0</b>
6.	Նորվեգիա	392.2	89.3	<b>77.2</b>	451.8	316.6	<b>29.9</b>	376.9	282.8	<b>25.0</b>	422.8	321.5	<b>24.0</b>
7.	Չինաստան	3 501.9	2 973.6	<b>15.1</b>	4 539.5	3 718.3	<b>18.1</b>	4 998.6	4 278.3	<b>14.4</b>	5 956.3	5 013.1	<b>15.8</b>
8.	Ռուսաստան	1 269.0	883.4	<b>30.4</b>	1 626.0	1 211.6	<b>25.5</b>	1 182.5	956.3	<b>19.1</b>	1 431.1	1 049.8	<b>26.6</b>
9.	Սլովակիա	81.5	66.9	<b>17.9</b>	91.4	78.9	<b>13.7</b>	82.5	69.2	<b>16.1</b>	81.9	74.8	<b>8.7</b>
10.	Ֆրանսիա	2 627.4	2 281.5	<b>13.2</b>	2 881.7	2 486.6	<b>13.7</b>	2 668.0	2 286.5	<b>14.3</b>	2 597.7	2 253.0	<b>13.3</b>

ՀԱԵ-ի և էկոլոգիապես ճշգրտված ՀԱԵ-ի միջև տարբերությունը 2007-2010թթ. Հայաստանի համար համեմատաբար փոքր է և միջին հաշվով կազմում է 11%, իսկ Ադրբեջանի համար՝ մոտ 48%, հիմնականում ի հաշիվ էներգակիր ռեսուրսների բարձր հյուծման: Ջարգացած երկրներից համեմատաբար փոքր տարբերություն ունեն ԱՄՆ-ը, Ճապոնիան, Ֆրանսիան, իսկ Նորվեգիայի համար բարձր է հիմնականում նավթ ռեսուրսի հյուծման պատճառով: Ջարգացող երկրներից Չինաստանն ունի փոքր տարբերություն, իսկ Ռուսաստանը՝ բարձր:

Համաշխարհային բանկի մասնագետների կողմից առաջարկվել և հաշվարկվել է նաև կայուն զարգացման ճշգրտված զուտ խնայողությունների ինտեգրալ ինդիկատորը (**ANS**), որը ազգային խնայողությունների կուտակման իրական արագությունն է՝ բնական ռեսուրսների հյուծումը և շրջակա միջավայրի աղտոտումներից էկոտնտեսական վնասը համապատասխան ձևով հաշվառելուց հետո:

<sup>1</sup> <http://data.worldbank.org/news/little-green-data-book-2012>

<sup>2</sup> Աղյուսակը կազմված է <http://data.worldbank.org/indicator/NY.ADJ.NNTY.CD> աղբյուրի տվյալներով:

Ճշգրտված զուտ խնայողությունների ցուցանիշի հաշվարկը առանձին երկրներում, 2008թ., ՀՆԱ-ի նկատմամբ %-ով<sup>1</sup>

Երկիրը		NNS	EE	ED	MD	NFD	CO <sub>2</sub> D	PMD	ANS
		զուտ ազգային խնայողություններ	կրթության ծախսեր	էներգակիր ռեսուրսների հյուծում	համընթաց ռեսուրսների հյուծում	անտառների հյուծում	անտառների հյուծում	վնասված կառուցվածքային արտադրանքների վնաս	ճշգրտված զուտ խնայողություններ (10=3+4-5-6-7-8-9)
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ադրբեջան	50,70	2,03	51,39	0,00	0,00	1,16	0,30	-0,13
2	ԱՄՆ	-1,36	4,79	1,93	0,11	0,00	0,31	0,14	0,93
3	Ավստրալիա	18,13	5,11	4,12	3,76	0,00	0,29	0,02	15,04
4	Բրազիլիա	5,79	4,77	2,73	2,26	0,00	0,19	0,15	5,23
5	Թուրքիա	5,89	3,68	0,32	0,05	0,00	0,28	0,58	8,33
6	Կանադա	9,40	4,78	5,53	0,64	0,00	0,31	0,06	7,63
7	Հայաստան	18,14	2,22	0,00	0,77	0,00	0,33	1,17	18,08
8	Հնդկաստան	29,68	3,17	4,86	1,42	0,78	1,16	0,47	24,17
9	Ղազախստան	32,75	4,41	31,28	1,83	0,00	1,42	0,11	2,52
10	Ճապոնիա	12,59	3,17	0,02	0,00	0,00	0,19	0,26	15,29
11	Մոնղոլիա	16,83	4,61	5,94	9,24	0,00	1,66	1,58	3,02
12	Նորվեգիա	26,19	6,03	15,90	0,01	0,00	0,08	0,01	16,22
13	Չադ	-6,38	1,17	43,66	0,00	0,00	0,05	0,96	-49,89
14	Չինաստան	43,82	1,80	6,74	1,70	0,00	1,26	0,81	35,11
15	Չիլի	11,37	3,60	0,26	14,32	0,00	0,31	0,45	-0,36
16	Պերու	12,70	2,50	1,44	6,19	0,00	0,27	0,33	6,97
17	Ռուսաստան	20,39	3,54	20,47	1,00	0,00	0,85	0,07	1,55
18	Սլովակիա	-83,93	3,70	0,08	0,00	0,36	0,39	0,00	-81,06
19	Սոդոմոնի կղզիներ	70,84	3,83	0,00	0,00	19,43	0,44	0,09	54,80
20	Վրաստան	-1,85	2,78	0,20	0,00	0,00	0,33	0,74	-0,33
21	Ֆրանսիա	4,88	5,05	0,03	0,00	0,00	0,10	0,01	9,8
22	Ուզբեկստան	32,03	9,37	51,09	0,00	0,00	4,01	0,38	-14,07

Հնարավոր է, երբ տնտեսական աճի պայմաններում բնական կապիտալի հյուծումը և էկոլոգիական գործոնի հաշվառումը կարող է բերել ՀՆԱ-ի նշանակալից փոքրացմանը, ընդհուպ մինչև հավելաճի բացասական արժեքների: Օրինակ, եթե 2008թ. Ադրբեջանի տնտեսությունը ունեցել է 10,8% տնտեսական աճ, ապա ճշգրտված խնայողությունները ցույց են տվել հակառակ միտումը՝ իջնելով 0,13%-ով, հիմնականում էներգակիր ռեսուրսների՝ նավթի և գազի հյուծման հաշվին: Էներգակիր ռեսուրսների հյուծումը կազմել է ՀՆԱ-ի 51,4%-ը և գերազանցել զուտ ազգային խնայողությունները:


Հայաստանի ճշգրտված զուտ խնայողությունների և նրա բաղադրիչների դինամիկան 1993-2008թթ. ներկայացված է գծապատկեր 1-ում, որի վերլուծությունը ցույց է տալիս, որ ճշգրտված զուտ խնայողությունները ունեցել են բացասական մեծություն 1993-2001թթ., որից հետո աճել են և նախաձգնաժամային տարիներին հասել մինչև 21 տոկոսի: Այդպիսի դրական աճը կայունության առումով պայմանավորված է հիմնականում զուտ ազգային խնայողությունների աճով:

Հայաստանի հանքային ռեսուրսների հյուծումը 1993-2008թթ. ունի աճի միտում: Կայունության առումով դա բացասական է, և նույն ժամանակահատվածում ճշգրտված զուտ խնայողությունների դրական դինամիկան պայմանավորված է զուտ ազգային խնայողությունների առաջանցիկ աճով հանքային ռեսուրսների հյուծման նկատմամբ:

<sup>1</sup> Աղյուսակը կազմված է <http://go.worldbank.org/3AWKN2ZOYO> աղբյուրի վերջին տվյալների հիման վրա:



Հայաստանի ճշգրտված զուտ խնայողությունների և նրա բաղադրիչների դինամիկան 1993-2008թթ., ՀՆԱ-ի նկատմամբ %- ու<sup>1</sup>



Հայաստանը չնայած այլ երկրների հետ համեմատության մեջ համարվում է կայուն՝ վերոհիշյալ 2 ինտեգրալ ինդիկատորների գնահատականով, բայց հանքային ռեսուրսների հյուժման աճի դինամիկան մտահոգության տեղիք է տալիս և կայունության բարձրացման նպատակով անհրաժեշտ է այդ ռեսուրսների հյուժումը փոխհատուցել մարդկային և ֆիզիկական կապիտալում ներդրումների աճով, ինչպես նաև չվերականգնվող ռեսուրսների վաճառքից եկամուտների մի մասն ուղղել վերականգնվող բնական կապիտալի մեծացմանը: Այդ նպատակով առաջարկում են մի շարք երկրների օրինակով Հայաստանում ստեղծել «Չվերականգնվող մետաղական ռեսուրսների արդյունահանումից ապագա սերունդների համար հատուկ ֆոնդ», որին կատարվող հատկացումների ընդերքօգտագործողի պարտականությունը կներառվի ընդերքօգտագործման պայմանագրում:

Նորվեգիան, ԱՄՆ-ը և նավթ արդյունահանող մի շարք երկրներ ստեղծել են այդպիսի հատուկ ֆոնդեր և կատարում են հաստատուն հատկացումներ հյուժվող վառելիքաէներգետիկ ռեսուրսների արդյունահանումից: Այս «կայունացնող» քաղաքականությանը հետևած Ռուսաստանի դրական փորձը կարող է օգտակար լինել Հայաստանի և ԱՊՀ մյուս, հատկապես անկայուն երկրների համար:

Հայաստանում մասամբ նման ֆոնդի դեր կատարում է «Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխը», որը ստեղծվել է 2002թ. «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքով՝ 65-րդ հոդվածի պահանջներին համապատասխան<sup>2</sup>: Նշված դրամագլխում կուտակվում են գումարներ հանքարդյունահանման աշխատանքների ավարտից հետո շրջակա միջավայրին հասցված վնասների վերականգման նպատակով: Կոնցեսիայի

<sup>1</sup> Գծապատկերը կառուցված է <http://go.worldbank.org/3AWKN2ZOYO> աղբյուրի վերջին տվյալների հիման վրա:

<sup>2</sup> «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին ՀՀ օրենք», ընդունված 05.11.2002թ.:

մասին օրենքը ուժը կորցրել է նոր «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի ընդունմամբ, և դրամագլխի ստեղծումը ներկայումս կարգավորվում է վերջինիս 69-րդ հոդվածով<sup>1</sup>: Օրենքի թերություն պիտի դիտել այն, որ նրանում միայն հաշվի է առնվում շրջակա միջավայրին հասցված էկո-տնտեսական վնասը, իսկ հանքային չվերականգնվող ռեսուրսների հյուծումը և ապագա սերունդների պահանջմունքների բավարարման հնարավորության չփոքրացման կայուն զարգացման սկզբունքը անտեսվել է:

Մեր կողմից առաջարկվող «Չվերականգնվող մետաղական ռեսուրսների արդյունահանումից ապագա սերունդների համար հատուկ ֆոնդի» ստեղծումը հնարավորություն կտա մետաղական ռեսուրսների հյուծումը փոխհատուցել մարդկային, ֆիզիկական և վերականգնվող բնական ռեսուրսներում համարժեք ներդրումներով, որը կնպաստի երկարաժամկետ կայուն տնտեսական աճին:

Ելակետ ունենալով համաշխարհային փորձը, մեր կողմից մշակվել է Հայաստանի կայուն զարգացման գերակա հենքային ինդիկատորների համակարգ մակրոտնտեսական և լեռնամետալուրգիական արդյունաբերության մակարդակներով՝ հիմք ունենալով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, բնապահպանության նախարարության և Համաշխարհային բանկի տվյալները<sup>2</sup>:

*Աղյուսակ 3*

**ՀՀ կայուն զարգացման գերակա հենքային ինդիկատորների համակարգը մակրոտնտեսական և լեռնամետալուրգիական ճյուղի մակարդակներով**

Հիմնախնդիրներ	Ինդիկատորներ	Ինդիկատորի արժեքը	Ինդիկատորի դիմամիկան	Դիմամիկայի գնահատականը	
1	2	3	4	5	
<b>ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱԿՐՈՎԱԿ</b>					
<b>Բնական ռեսուրսների հյուծում:</b>  <b>Հիմնական կապիտալի մաշվածություն, տեխնոլոգիական մակարդակ:</b>  <b>Կրթություն:</b>  <b>Շրջակա միջավայրի աղտոտում: Թափոններ: Արտամետոմներ: Եկոտնտեսական վնաս: Կլիմայի փոփոխություն:</b>  <b>Բնակչության առողջություն:</b>  <b>Տնտեսության կառուցվածք:</b>	<b>Ինտեգրալ ինդիկատորներ</b>	<b>1. ճշգրտված զուտ ազգային եկամուտ (ANI – adjusted net national income)</b>	<b>2010թ.</b> <b>8.6 մլն.</b> <b>ԱՄՆ դոլար</b>	<b>2007թ.</b> <b>մակարդակի նկատմամբ</b> <b>2.4%-ով աճ</b>	Դրական
		<b>2. ճշգրտված զուտ խնայողություններ (ANS – adjusted net saving)</b>	<b>2008թ.</b> <b>18.08%</b> <b>ՀՆԱ-ի նկատմամբ</b>	<b>1993թ.</b> <b>նկատմամբ</b> <b>35.2%-ով աճ</b>	Դրական
<b>Բնական ռեսուրսների հյուծում:</b>  <b>Տեխնոլոգիական մակարդակ:</b>  <b>Շրջակա միջավայրի աղտոտում: Թափոններ: Արտամետոմներ:</b>  <b>Տնտեսության կառուցվածք:</b>		<b>3. Բնատարության ինդիկատորներ</b>			
		<b>3.1. Բնակչության 1 շնչին ընկնող տարեկան արտադրված էներգիան</b>	<b>2010թ.</b> <b>1992 կվտ/ժ</b>	<b>1993թ-ից՝</b> <b>կայուն աճի դիմամիկան</b>	Բացասական
		<b>3.2. ՀՆԱ-ի միավորին ընկնող մթնոլորտ արտամետված վնասակար նյութերը</b>	<b>2010թ.</b> <b>75,4</b> <b>կգ./մլրդ.ՀՆԱ</b>	<b>2006թ.</b> <b>նկատմամբ աճել է 38%-ով</b>	Բացասական
		<b>3.2. 1 շնչին ընկնող պինդ թափոնների քանակը</b>	<b>2010թ.</b> <b>5.3 տոննա/մարդ</b>	<b>2005թ.</b> <b>նկատմամբ</b> <b>51%-ով աճ</b>	Բացասական

<sup>1</sup> «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրք, ընդունված 28.11.2011թ.:

<sup>2</sup> [www.armstat.am](http://www.armstat.am), [www.mnp.am](http://www.mnp.am), [www.worldbank.org/](http://www.worldbank.org/)

Հիմնախնդիրներ	Ինդիկատորներ	Ինդիկատորի արժեքը	Ինդիկատորի դինամիկան	Դինամիկայի գնահատականը
Բնակչության առողջություն:	3.3. ՀՆԱ-ի միավորին ընկնող պինդ քափոնների քանակը	2010թ. 1.8 կգ / ԱՄՆ դոլար	2005թ. նկատմամբ նվազել է 18%-ով	Դրական
Կլիմայի գլոբալ փոփոխություն: Էկոտնտեսական վնաս: Շրջակա միջավայրի աղտոտում: Արտանետումներ: Տեխնոլոգիական մակարդակ:	4. Ջերմոցային գազերի արտանետումներ 4.1. CO <sub>2</sub> -ի արտանետումներ	2008թ. 5.55 մլն. տոննա	1994թ. նկատմամբ 1,87 անգամ աճ	Բացասական
	4.2. CO <sub>2</sub> -ի արտանետումների վնասը ՀՆԱ-ի նկատմամբ	2008թ. 0.33 %	1993թ. նկատմամբ նվազել է 4.2 անգամ	Դրական
Հիմնական կապիտալի նորացում: Տեխնոլոգիական մակարդակ: Վթարներ և աղետներ:	5. Հիմնական կապիտալի նորացման գործակից	2010թ. 11%	1994թ. նկատմամբ աճել է 1,5 անգամ	Միտումը դրական, բայց ցածր մակարդակ
Կենսաբազմազանության և էկոհամակարգերի գործառույթների պահպանում	6.1. Հատուկ պահպանվող բնական տարածքների մակերեսը	2010թ. 249,4 հազ.հա	2008թ. նկատմամբ աճել է 8,5%-ով	Դրական
	6.2. Անապատացման ենթակա հողեր	2010թ. 86,5%	աճի դինամիկա	Բացասական
	6.3. Անտառածածկ տարածքներ	2010թ. 305,5 հազ.հա	1990թ. նկատմամբ կրճատվել է 25%-ով , 2008թ. նկատմամբ կրճատվել է 1%-ով	Բացասական
Բնակչության կենսամակարդակ:	7.1. Բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ	2010թ. 1075,4 հազ.դր., (2878 ԱՄՆ դոլար)	Աճի դինամիկա	Միտումը դրական, ցածր մակարդակ
	7.2. ՀՀ միջին ամսական անվանական աշխատավարձ	2011թ. 115265դր	Աճի դինամիկա	Միտումը դրական, ցածր մակարդակ
<b>ԼԵՆԱՍԵՏԱԼՈՒԳՎԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ</b>				
Հանքային ռեսուրսների հյուծում: Տեխնոլոգիական մակարդակ: Տնտեսության կառուցվածք:	1. Բնատարության ինդիկատորներ 1.1. Հանքային ռեսուրսների հյուծում (MD – Mineral depletion)	2008թ. 0.77% ՀՆԱ-ի նկատմամբ	1994թ.-ի նկատմամբ աճել է 4 անգամ	Բացասական
	1.2. ԼՄ արտադրանքի մասնաբաժինը արդյունաբերության մեջ	2011թ.՝ 32,9%	Աճի դինամիկա	Բացասական
Վթարներ և աղետներ: Էկոլոգիական վնաս: Հիմնական կապիտալի նորացում: Տեխնոլոգիական մակարդակ	2. Հիմնական կապիտալի նորացման գործակից	2010թ. 13%	1994թ.ի նկատմամբ աճել է 1,5 անգամ	Միտումը դրական, ցածր մակարդակ
Տեխնածին աղետներ: Շրջակա միջավայրի աղտոտում: Թափոններ: Էկոլոգիական վնաս: Հող: Կենսաբազմազանության և էկոհամակարգերի գործառույթների պահպանում	3.1. ԼՄ արտադրանքի 1 միավորին ընկնող պինդ քափոնների քանակը	2010թ. 0,53կգ/դր	Աճի դինամիկա	Բացասական
	3.2. Հանքարդյունաբերությանը հանձնված հողերի մակերեսը	2011թ. 9700 հա, որից խախտված հողեր՝ 8275 հա	Աճի դինամիկա	Բացասական
	3.3. Պոչամբարների տակ ընկած հողերի մակերեսը	2010թ. 1400 հա	Աճի դինամիկա	Բացասական
	3.4. Պոչամբարներում տեղադրված քափոնների ծավալը	2010թ. 220 մլն մ <sup>3</sup> պոչամբարներ	Աճի դինամիկա	Բացասական
Բնակչության կենսամակարդակ	4. ԼՄ ոլորտի միջին անվանական աշխատավարձը	2011թ. 232000 դր	ՀՀ միջինից բարձր է 201%-ով, աճի դինամիկա	Դրական

Հենքային գերակա ինդիկատորները ընտրված են այնպես, որպեսզի բնութագրեն ՀՀ ժամանակակից տնտեսության և լեռնամետալուրգիական ճյուղի առանձնահատկությունները: Աղյուսակ 3-ում քննարկվում են գերակա հենքային էկո-տնտեսական ինդիկատորները և նրանց մոդիֆիկացիաները, քանակական արժեքները, դինամիկան և դինամիկայի գնահատականը: Ինդիկատորների համակարգը կառուցված է «հիմնախնդիրներ-ինդիկատորներ» կտրվածքով: Հիմնախնդիրների բաժնում տրվում են էկոլոգիական, տնտեսական ու սոցիալական պրոբլեմները, որոնք առավել հրատապ են երկրի համար, և ինդիկատորները պետք է արտացոլեն դրանք: Ինտեգրալ ինդիկատորները ամփոփ պատկերացում են տալիս երկրի կայունության մակարդակի մասին: Հայաստանի զարգացող տնտեսության համար հրատապ է բնաշահագործող ճյուղերի՝ լեռնամետալուրգիայի, էներգետիկայի տեսակարար կշիռների մեծացումը և շրջակա միջավայրի վրա այդ ճյուղերի բացասական ազդեցության աճը (բնատարության ինդիկատորներ): Երկրում դեռևս ցածր է տեխնոլոգիական մակարդակը, մեծ է ֆիզիկական կապիտալի մաշվածությունը (հիմնական կապիտալի նորացման ինդիկատոր): Գլոբալ պրոբլեմատիկան իր արտացոլումն է գտել էկոհամակարգային գործառույթների, կենսաբազմազանության պահպանման և ջերմոցային գազերի արտանետումների ինդիկատորներում: Բնակչության կենսամակարդակի սոցիալական հիմնախնդիրը ներկայացվել է եկամուտների ինդիկատորով:

Հարկ է նշել, որ ինդիկատորների համակարգը անշարժ համակարգ չէ, գտնվում է շարունակական մշակման գործընթացում և ճշգրտվում է միտումների և հիմնախնդիրների փոփոխության դեպքում:

**Сара Мкртчян**

## **Приоритетные базовые индикаторы устойчивого развития РА на уровнях макроэкономики и горнометаллургической промышленности**

### **Аннотация**

Исходя из международного исследовательского опыта, в работе разработана система индикаторов устойчивого развития РА на уровнях макроэкономики и горнометаллургической промышленности. Индикаторы устойчивости описывают экономические, экологические и социальные аспекты устойчивого развития. Они могут быть использованы в процессах определения уровня устойчивости в стране и в отрасли, и при разработке соответствующей стратегии.

**Sara Mkrtchyan**

## **Two-layer (Macroeconomy and Mining Industry) System of indicators for Sustainable Development of Armenia**

### **Abstract**

Based on the research done by many renowned foreign scholars the article proposes a new two-layer system of indicators for sustainable development of Armenia: Macroeconomic Layer and Mining Industry Layer. Sustainability Indicators explain economic, environmental and social aspects of the sustainable development. They can be used to determine the nation's level of economic and industry's sustainability; and in designing respective strategies as well.

## **ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ МАЛОГО И СРЕДНЕГО БИЗНЕСА В ИННОВАЦИОННОЙ СИСТЕМЕ РА**

За рубежом вопросы функционирования и поддержки малого, среднего инновационного бизнеса хорошо изучены, и действует ряд эффективных программ его поддержки. Однако, внедрение зарубежного опыта в Армении не даст результатов, аналогичных западным. Для приспособления экономических инструментов к условиям нашей страны необходимо изучение специфики малых и средних инновационных предприятий в период реформирования переходной инновационной системы.

Важнейшим фактором перехода Армении на путь инновационного развития является возможность привлечения долгосрочных финансовых ресурсов, в целях развития приоритетных проектов. Финансирование инновационной деятельности необходимо активизировать путем использования конвертируемых в акции облигаций, поскольку для эмитента ценных бумаг конвертируемые облигации могут выступать лишь как способ погашения кредитной задолженности в период кризиса, путем замены долговых обязательств по облигациям долевыми ценными бумагами.

Необходимо также всячески использовать возможности внутреннего рынка синдицированного кредитования. В этих целях главной задачей законодательных и регулирующих органов должна стать дальнейшая проработка законодательных вопросов, связанных с синдицированным кредитованием. При этом меры по управлению рисками при реализации программ синдицированного кредитования необходимо разрабатывать Центральному банку Армении совместно с ведущими банками.

Для эффективного использования возможностей долгового финансирования необходимо также обеспечить надежность рейтинговых оценок заемщиков, совершенствование национальной системы рейтингования и повышение качества процессов оценки.

Следует отметить, что международные рейтинги, присваиваемые заемщикам и финансовым инструментам, используются для привлечения финансовых ресурсов на международных рынках капитала. Поэтому они являются достаточным критерием для оценки кредитного качества эмитента ценных бумаг на внутреннем рынке.

Малый и средний бизнес стратегически важен для Армении. Он должен составлять хотя бы 50% от ВВП (отметим, что удельный вес малого и среднего бизнеса в ВВП Армении в 2010 году составил 43% против 42,5% в 2009 году). Необходимо целенаправленное развитие малого и среднего бизнеса, особенно в части сервиса и обслуживания большого бизнеса. К сожалению, у нас пока не работает связка «малый, средний бизнес – большой бизнес», так как крупный бизнес пока не стремится сотрудничать с малым, средним и тянет на себя даже то, что мог бы переложить на малый и средний бизнес.

На долю малых и средних предприятий в структуре экспорта Армении приходится не более 15% (около 200-300 млн. долларов), и этот показатель не растет. Не меняется также сама структура экспорта, которая состоит в основном из группы 25 товаров, производимых преимущественно крупным бизнесом. Реформы правительства, направленные на поддержку малого и среднего бизнеса, пока не дали ощутимых результатов, а эффективность организаций по поддержке МСБ составляет всего 1%.<sup>1</sup> В частности, упомянем о Центре поддержки

---

<sup>1</sup> «Деловой экспресс» №35(980), 15 июля 2012г., стр. 1.

малого предпринимательства и Армянском агентстве развития, которые финансируются из бюджета.

Проблема даже не в организациях бизнес-поддержки, а в самих малых и средних предприятиях, которые не конкурентоспособны на рынке и имеют слабую мотивацию или неспособность к развитию. При этом существует 30 фондов поддержки малого и среднего бизнеса. Реформы правительства встречают сопротивление со стороны провластных структур, например реформы Министерства экономики РА наталкиваются на сопротивление Государственного комитета по госдоходам.

Все малые предприятия, действующие в настоящее время в инновационной сфере страны, можно разделить на две основные группы: предприятия, созданные при базовых научно-исследовательских институтах или вузах, и самостоятельные структуры. К первой группе малых предприятий относятся фирмы, которые были основаны сотрудниками научно-исследовательских институтов или вузов, а также компании, владеющие лицензиями на ключевые технологии базовой организации. Большинство малых инновационных фирм относится именно к этому, первому типу. Финансирование «при» научно-исследовательских институтах предоставляет им целый ряд преимуществ: позволяет относить на более поздние сроки платежи за аренду и коммунальные услуги, использовать имеющиеся ранее связи института с партнерами и заказчиками, его научным потенциалом, его брендом (товарным знакам) при продвижении своих разработок, опытно-экспериментальную базу, а также, получать через базовую организацию часть государственного заказа. Надо учесть, что самостоятельных малых фирм значительно меньше, они выживают благодаря своему профессионализму, надежности и способности найти свою «нишу» на рынке научной продукции.

Основными факторами, которые препятствуют развитию малых инновационных предприятий, являются неразвитость инфраструктуры: финансовой, производственной, кадровой, высокий уровень налогов, недостаток оборотных средств, ограничение спроса промышленными предприятиями.

В основном малые фирмы ведут свой бизнес непрозрачно, затрудняются в составлении бизнес-плана, опасаются передавать фирмы в управление внешним менеджерам и запрашивают 51- процентный пакет акций. Далее, во многих фирмах даже не решен вопрос о принадлежности прав на интеллектуальную собственность, и до недавнего времени лишь незначительное количество малых фирм уделило должное внимание данному вопросу.

Важным фактором в достижении успеха малых инновационных предприятий является наличие группы участников, исполнителей и высокая квалификация менеджеров, то есть их организаторов. Однако квалификация персонала, хотя и важный компонент, но, к сожалению, не может полностью компенсировать ни недостаток финансирования, ни неблагоприятную законодательную среду. Последнее подтверждается отрицательной динамикой развития малого инновационного бизнеса.

По данным официальной статистики Армении, которая учитывает только количественное распределение предприятий, осуществляющих научно-технические работы по министерствам и ведомствам, зарегистрированных в секторе «Научно-технические работы», число этих предприятий постоянно снижается. Если в 2005г. было зарегистрировано 102 предприятия, то к 2007г. их стало немногим более 89., а к 2011..г. их количество снизилось до 81. Между тем малые предприятия активно работают и в различных министерствах и ведомствах страны. В министерстве экономики сосредоточено было в 2002 г. около 18 предприятий, а в 2010 г. - 13, в Министерстве сельского хозяйства соответственно 10 и 8, а в Национальной Академии Наук РА - 42 и 31<sup>1</sup>. Однако точных данных о числе и динамике

---

<sup>1</sup> «Социально-экономическое состояние РА», 2011г. январь-июль, с.184 и «Социально-экономическое состояние РА», 2009г., с.186.

малых инновационных предприятий нет, и можно с определенной степенью уверенности судить только о тенденциях, но не конкретных цифрах.

Сокращение числа малых и средних предприятий может быть объяснено рядом причин. Во-первых, произошло исчерпывание запаса прежних разработок, вокруг которых и формировались малые фирмы. Вследствие этого в последние годы выявилась тенденция возврата коллективов малых фирм в структуру тех организаций, от которых они когда-то отделились. Во-вторых, стало значительно строже действующее законодательство, а также усилился контроль.

Наряду с этим нормативно-правовая база не стала прозрачнее. Так, сейчас государственные научно-исследовательские учреждения могут быть соучредителями предприятия, но при этом не могут вносить учредительский пай, даже из внебюджетных средств, а также в форме нематериальных активов (интеллектуальной собственности). Такая неоднозначность приводит к тому, что число создаваемых малых предприятий при научных организациях и вузах, большинство из которых является государственными учреждениями, сокращается. Одновременно несовершенство законодательства стимулирует развитие таких схем образования малых инновационных предприятий, при которых базовая организация несет фактические потери своей научно-инновационной системы. Это происходит, например, в случае создания малых предприятий частными лицами - работниками государственных научно-исследовательских институтов и вузов. Они сохраняют личные контакты с руководством базовой организации и реализуют разработки Института (вуза) на стороне.

Сфера деятельности малых фирм очень разнообразна и сложно выделить наиболее доминирующие области. Примерно в равной степени часто встречаются разработчики программных продуктов, производители лекарств и медицинских препаратов, а также фирмы, продвигающие новые производственные технологии.

Обычно происходит постепенный переход от внутреннего к зарубежному рынку, однако есть прецеденты движения в обратном направлении – от внешнего рынка к внутреннему. Это те случаи, когда потребители технологий на отечественном рынке более настороженно относились к продукции малых фирм, чем их зарубежные конкуренты.

В современных условиях формирование малой наукоемкой фирмы может происходить одним из ниже перечисленных методов:

- ученые создают малую фирму, а затем пытаются найти потребителей (покупателей) разработки своей технологии. Выделение в самостоятельную фирму продиктовано необходимостью сохранить научную школу и квалифицированных специалистов;
- создание фирмы предваряется патентованием разработки, а начало работы малого предприятия связано с осведомленностью лицензионной политикой. После выполнения данного этапа создается собственное производство;
- ученые оставляют науку, начинают заниматься торгово-посреднической деятельностью, формируя первоначальный капитал, для создания малого инновационного предприятия;
- представители бизнеса, заинтересованные в производстве наукоемкой продукции, изучают потребности рынка, находят разработчиков, развивают научно-исследовательские и опытно-конструкторские работы для организации собственного производства.

Как свидетельствует история развития многих малых и средних инновационных предприятий, происхождение начального капитала может быть многообразным, но доминируют при этом собственные средства организаторов фирмы. Состав источников финансирования, по мере снижения частоты их использования, включает: собственные средства организаторов малой фирмы; средства «бизнес-ангелов»; банковский кредит; средства федерального бюджета; средства заказчиков (причем, заказ делается не фирме, а

ученым, пока они еще находятся в составе научно-исследовательских институтов); средства регионального бюджета.

Расширение же рынка обычно происходит либо за счет диверсификации деятельности, либо путем выхода на внешний рынок. Причем, последнее происходит через использование таких механизмов, как партнерство с западными фирмами –дистрибьюторами (посредниками); знакомство с потенциальными заказчиками на выставках и конференциях; освоение новых ниш (рынков) вслед за западными партнерами, являющимися лидерами определенных рынков.

В процессе освоения зарубежных рынков отечественные фирмы сталкиваются с немалыми проблемами. Одна из нетрадиционных проблем – недоверие западных потребителей к производимой продукции: в некоторой мере сохраняется отношение к товарам и технологиям как к ненадежным и неудобным в эксплуатации.

В большинстве случаев, если для потенциальных (реальных) зарубежных клиентов очевидны конкурентные преимущества предлагаемой продукции (технологии), то они либо предлагают ведущим специалистам переехать за рубеж, либо получить контрольный пакет акций фирмы. Отстояв свои позиции, малая фирма переходит к дальнейшему этапу своего развития.

В настоящее время возросла роль максимального внедрения передового опыта в части использования предметов труда, новейших материалов в процессе обновления и модернизации. Это в свою очередь требует пересмотра порядка формирования и использования оборотных средств.

Возможны два пути решения данной проблемы:

- сократить до минимума сырьевые запасы и быть в полной зависимости от поставщиков;
- перейти на более дешевое отечественное сырье.

Первый путь позволит выпускать продукцию в уже привычном ценовом диапазоне (охвате, масштабе), но из-за высокой цены возникают трудности с ее реализацией, а это ведет к сокращению торговых площадей и количества торговых точек предприятий-производителей.

Расширение спроса на сырье неизбежно должно привести сначала к количественным и к качественным изменениям, созданию полноценной отечественной сырьевой базы. Процесс этот скорее эволюционный, чем революционный. Длительность этого процесса зависит от финансовой поддержки со стороны государства, применения экономических стимулов для повышения инновационной активности предприятий. Считаем целесообразным создание корпораций, в состав которых входили бы не только производители качественных материалов, но и потребители таких материалов.

Таким образом, инновационное развитие отраслей экономики является требованием современности. Оно невозможно без деятельного участия (содействия) государства, разработки и реализации стратегических планов развития, принятия безотлагательных мер по финансированию инноваций.

Развитие малых инновационных фирм имеет общие свойства и специфические особенности. К общим свойствам относятся:

- большинство фирм опираются (основаны) на отечественные научные школы (лабораторий, кафедр научно-технических организаций и вузов), которые развивали теоретические исследования, имеющие прикладной потенциал;
- у значительного большинства малых инновационных предприятий – изначальная ориентация на внутренний рынок. Поскольку для выпускаемой ими продукции внутренний рынок является недостаточно емким, а объемы продаж растут высокими темпами, то некоторые фирмы не заинтересованы в выходе на зарубежный рынок;
- наличие руководителя - ученого или бизнесмена, который должен быть также хорошим менеджером;



- высокая мотивированность персонала фирм к работе, готовность переживать тяжелые периоды и неудачи вместе с фирмой;
- в процессе развития фирм происходит движение от знаний и навыков производства отдельных деталей (компонентов, комплектующих) к производству изделия в целом;
- рост фирм за счет создания вспомогательных служб (сервисных, маркетинговых) и собственного производства и системы подготовки кадров;
- постоянное изучение зарубежного опыта в области менеджмента, сбыта, ценовой политики, сервисного обслуживания;
- постепенная диверсификация рынка. Ориентация при этом на разные отрасли, если вид выпускаемой продукции (технологии) это позволяет;
- освоение различных ценовых стратегий, форм реализации продукции ;
- решение имущественного вопроса через выкуп на определенном этапе развития арендуемых площадей, поскольку аренда создает неустойчивое положение из-за зависимости от политики арендатора.

Особенности же малых инновационных фирм обусловлены, во-первых, тем, что их достижения и развитие достигаются в основном от случайных, не систематизируемых факторов, интуиции, угаданной конъюнктуры, во-вторых, роль выставок и ярмарок в поиске заказчиков и инвесторов неоднозначна. Большие результаты приносит участие в специализированных выставках, однако не каждое малое предприятие имеет возможность на затраты в престижной международной выставке.

Таким образом, основные проблемы малых инновационных предприятий связаны с недостатком источников финансирования, особенно на начальном этапе становления фирмы, а также с лимитированными возможностями для расширения бизнеса в случае его успешного развития.

Направление поощрения развития малых инновационных фирм - это передача в безвозмездное пользование стабильно развивающимся малым предприятиям пустующих сегодня цехов, помещений заводов и научно-исследовательских институтов с перспективой их выкупа в течение 15 лет. Известно, что организация производства на арендуемых площадях очень рискованна. Как показывает опыт развития малых инновационных фирм, внезапное прекращение арендных отношений по инициативе арендодателей, влекущее за собой убытки малых предприятий, - не такое уж редкое явление. Нерешенность имущественных вопросов сдерживает также развитие всей производственно-технологической инфраструктуры (инновационно-технологических центров, технопарков). Механизмы передачи основных фондов из вузов или академических организаций (являющихся государственными учреждениями с правом оперативного управления имуществом) отсутствуют, поэтому в настоящее время расширение инновационной инфраструктуры происходит за счет застройки пустующих земель либо достройки незавершенного строительства. В связи с этим необходима разработка нормативно-правовых процедур передачи имущественных комплексов.

По имеющимся оценкам, малыми предприятиями в США производится в 4 раза больше новинок в расчете на одного занятого, чем в крупных компаниях, а затраты на одного инженера или исследователя - вдвое ниже. Около половины патентов принадлежат независимым изобретателям и мелким предприятиям, поэтому венчурное предпринимательство получает широкое распространение. Так, концерн «Дженерал электрик» связан с более чем 200 независимыми исследовательскими фирмами, фактически целиком работающими на его потребности. Ежегодный объем капвложений венчурных фондов США оценивается в 3-10 млрд. дол.

Проанализировав основные направления финансирования инновационной экономики Армении нужно отметить, что в условиях отставания РА от развитых стран главенствующую

роль в переходе на инновационный путь развития должен взять на себя государство, что обеспечит его осуществление по следующим направлениям:

- определение стратегических направлений развития экономики и общества;
- формирование институциональной инфраструктуры и механизмов инновационной активности среди предпринимателей.

Развитие инновационной экономики требует от государства создания научно-исследовательских центров, центров аккумулирования и перераспределения денежных средств, особых экономических зон.

Ввиду повышенного риска и высоких затрат на первоначальных этапах инновационной деятельности, именно государству следует инициировать процессы фундаментальных и прикладных научных исследований по стратегическим направлениям развития экономики и общества. В дальнейшем возможно привлечение частных инвесторов в высокорискованные проекты по проведению прикладных научных исследований и разработок.

По нашему мнению, необходимо создавать стимулы, в том числе финансовые, по вовлечению фирм в инновационную деятельность. Экономический интерес частных фирм в создании инноваций может заключаться в предоставляемых им налоговых льготах, льготном кредитовании инновационных проектов, а также государственных гарантиях по реализации инновационных продукций. Целесообразно применение контрактного финансирования фирм в рамках целевых программ поддержки инноваций, введение системы таможенных льгот отечественным экспортерам высокотехнологичной продукции, приобретение за счет бюджетных средств зарубежных лицензий, патентов, технологий.

**Ալվարդ Զատիկյան**

### **Փոքր և միջին բիզնեսի զարգացման առանձնահատկությունները ՀՀ նորարարական համակարգում**

#### **Ամփոփագիր**

Հոդվածում քննարկվում են ՀՀ անցումային տնտեսության նորարարական համակարգի առանձնահատկությունները, քննարկվում են դրա կայացման յուրահատկությունը ժամանակակից փոքր նորարար ձեռնարկությունների պայմաններում: Ձևակերպվել են հստակ առաջարկություններ արդյունավետ և արտադրական ենթակառուցվածքներ ստեղծելու ուղղությամբ, որոնք կխթանեն փոքր և միջին նորարար ձեռնարկություններին:

**Alvard Zatikyan**

### **Peculiarities of SME development within the Framework of the National Innovation System of Armenia**

#### **Abstract**

The article discusses the peculiarities of the innovation system of Armenia with economy in transition; analyzes the specifications of the building process of the System and its modern role for small innovative enterprises. Specific recommendations are proposed in order to create an efficient and productive infrastructure and enabling factors to support innovative SMEs.

## **СТРАТЕГИЧЕСКОЕ ПЛАНИРОВАНИЕ ИННОВАЦИОННЫХ ПРОЦЕССОВ ПРОМЫШЛЕННЫХ ПРЕДПРИЯТИЙ АРМЕНИИ**

Для развития промышленных предприятия Армении в период кризиса, требуется разработка основных видов стратегий. Поэтому необходимо создание таких механизмов, использование которых позволит с помощью внедрения инвестиций эффективно использовать потенциал предприятий и самой отрасли. Так, например, на долю горнодобывающей промышленности выпадает 17.8 % от общего объема промышленного производства, при этом число очень малых действующих предприятий составляет 38,2%, малых -45,4%, средних -5% и 11,4% крупных предприятий. Фактически, в данной промышленности число малых и средних предприятий составляет 88.6%, причем на их долю выпадает лишь 5.4% промышленного производства<sup>1</sup>. Реализация основных видов стратегии связана со стратегией финансовых вложений, возможностями их источников финансирования и возникшими рисками. В промышленных предприятиях при формировании источников финансирования на долю собственных средств выпадает 40%, банковских долговременных вкладов -10%, вложения прочих предприятий -5%, частного бизнеса -2%, иностранных вложений -31%, средств из местного бюджета -12%<sup>2</sup>. В связи с создавшейся ситуацией возникает необходимость развития стратегического планирования, которое в общем виде представляет собой комплекс действий и решений, предпринятых руководством предприятий промышленности Армении, и которые ведут к разработке специфических стратегий, предназначенных для того, чтобы помочь предприятиям достичь своих целей. Более детально стратегическое планирование характеризуется как процесс, в котором рациональный анализ сложившейся ситуации и будущих возможностей ведет к формулированию долгосрочных намерений, стратегий, целей, мероприятий с учетом возможных шансов и рисков, которые, к сожалению, недостаточно учитываются в Армении. С точки зрения технологии стратегическое планирование определяется как:

1. итеративный процесс, включающий в себя определение стратегических целей;
2. разработка стратегий по достижению поставленных целей;
3. распределение необходимых для реализации ресурсов.

Стратегическое планирование призвано выявлять, анализировать, и, насколько это возможно, прогнозировать экономическое, политическое, техническое и общественное окружение, в котором функционирует предприятие. Оно игнорирует детали, рассчитано на длительный срок, нацелено на рынок. Стратегическое планирование является связующим звеном между основополагающей стратегией предприятий и краткосрочным, детальным, оперативным планированием. Выделим основные отличия вышеуказанных видов планирования: в стратегическом планировании значительно большую роль играют субъективные ценностные установки менеджера; общий возможный диапазон альтернатив в стратегическом планировании значительно шире, чем в оперативном; стратегическое планирование в большей степени, чем оперативное, характеризуется неопределенностью; риски в рамках стратегического планирования оценить сложнее; для стратегического планирования необходима большая информация об условиях окружающей среды, в то время как оперативное планирование в большей мере базируется на внутрифирменном анализе, а также на

<sup>1</sup> Промышленность Армении, Ереван, 2010.

<sup>2</sup> ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թվականի հունվար-մարտին, Երևան, 2012:

информации о совершившихся событиях; стратегическое планирование охватывает обычно более длительный период, чем оперативное, однако может охватывать и очень короткий отрезок времени; стратегическое планирование охватывает обычно предприятие в целом и все его активы, в то время как оперативное планирование направлено на осуществление исполнительских задач нижестоящими организационными звеньями: стратегические планы структурируются обычно в глобальном масштабе и содержат по сравнению с оперативными меньше деталей.

Перечислим основные компоненты стратегического планирования:

- что планируется – долгосрочная стратегия производства и поведения на рынке (5-10 лет),
- кто планирует – руководство предприятия (управляющий директор, члены правления),
- основы планирования – анализ окружения (конъюнктура, актуальный технический уровень, политическая и культурная сферы, правовые основы) и анализ деятельности предприятия (ресурсы, конкуренция),
- цели планирования – выбор и концентрация на основных целях для обеспечения долгосрочных преимуществ в конкурентной борьбе и отдельные стратегические цели (например, определенная доля рынка, лучшее соотношение “цена – выручка”, наилучший сервис).

Стратегическое планирование основано на разработанной систематике и четкой логике действий, предпринимаемых на его стадиях. Однако оно отнюдь не исключает рационального мышления, приложения приемов творческого анализа и синтеза. Стратегии предприятия разрабатываются, формируются и располагаются в иерархической взаимосвязи в вертикальном и горизонтальном разрезах. При этом масштабы планируемого стратегического образования весьма различаются в зависимости от типа и размера предприятия, от его предпринимательских намерений. Формализованным результатом стратегического планирования, который сводит воедино его объекты, их цели, стратегии развития и ресурсы, необходимые для достижения целей, является стратегический план. Начальным этапом стратегического планирования является выявление “узких мест” в реализации масштабных намерений предприятия, сдерживающих выход на достижение стратегических горизонтов. Это производится путем анализа ситуации в рамках отдельных проблем, либо комплексно в разрезе всего диапазона существующих проблем. Для этого целесообразно разработать каталог инновационных проблем, решение которых требует соответствующие стратегические нововведения. Эта задача имеет особенно важное значение, потому что непрерывность возникновения инновационных проблем стратегического характера представляет собой обязательное условие любого динамично развивающегося предприятия.

На основе каталога выявленных проблем осуществляется стратегическое управление инновационной деятельностью предприятия. Каталог служит связующим звеном между перспективными целями и намерениями, предпринимательской политикой и стратегическом облике предприятия с одной стороны, и стратегиями реализующими их целевыми программами, комплексными планами – с другой.

Источниками формирования исходного каталога проблем являются результаты комплексного анализа предшествующей инновационной деятельности, комплексный прогноз развития предприятия, результаты оценки сильных и слабых его сторон, данные экспертного опроса руководителей, специалистов функциональных и производственных подразделений.

Как и для стратегического управления инновационным процессом в целом, так и для разработки комплексного прогноза экономического и социального развития предприятия используется поэтапный метод прогнозирования. Он включает содержательное и формализованное описание прогнозируемого объекта и общие контуры возможного выхода на решение инновационной проблемы. Цель прогноза состоит в выявлении проблемных ситуаций, которые могут возникнуть в процессе развития предприятия и установлении их влияния на

прогнозируемое состояние системы, а также фиксации сильных и слабых мест в этом процессе.

Комплексный прогноз включает краткое структурированное описание объекта прогнозирования, механизм его функционирования и развития, систему ограничений, подробное описание и интерпретацию разработанных сценариев и соответствующих им тенденций развития с указанием возможных в будущем проблемных ситуаций. Проблемы, выявленные в результате комплексного анализа инновационной деятельности, прогнозирования и экспертного прогноза, подлежат идентификации, в процессе которой одинаковые из них объединяются, а второстепенные исключаются. При этом нововведение рассматривается прежде всего как процесс творческого решения вновь возникающих проблем, поэтому в центре внимания здесь должны находиться вопросы активизации творческой деятельности участников реализации нововведений. Для этого используются различные методы, например “мозговая атака”, морфологический анализ, синтезирующий метод и т.д.

При проведении анализа усилия экспертов направлены на выявление сильных и слабых мест по двум направлениям – в среде окружения и внутри предприятия. Прежде всего следует уделять внимание анализу окружения, в котором оно находится. Стоит тщательно изучить шансы и факторы риска на рынке, т.е. собирать и оценивать информацию, поступающую извне.

Ориентация действий предприятия на специфические условия окружающей его среды является органически присущим принципом любого стратегического планирования. Информация о наиболее существенных условиях окружающей среды и об их ожидаемых изменениях представляет собой своего рода “сырье” для стратегических решений. Под условиями окружающей среды понимаются те ее характеристики, которые извне противостоят предприятию и должны быть учтены при стратегическом планировании. Основные требования к проводимому в этой области анализу в широком смысле заключаются в том, чтобы выявить шансы и надвигающиеся извне риски. Для этого необходимо иметь ответы на следующие вопросы.

- В каких экономических и технических условиях оперирует предприятие?
- Какая конкурентная ситуация в данный период преобладает?
- Какие усилия необходимо приложить предприятию, чтобы овладеть конкурентной ситуацией?
- Какой спектр стратегий для реализации предпринимательских намерений предприятия приобретает значение при сложившихся технических, экономических, социальных, политических и других тенденциях развития окружающей среды?

Проявление условий окружающей среды, имеющее значение для стратегического планирования на предприятии, может быть охарактеризовано следующим образом:

1. **Политическое и правовое окружение.** Само собой разумеется, что предприятия должны учитывать государственное и региональное законодательство. Например, знание национальных (при заключении экспортных сделок) и международных норм и правил по охране окружающей среды необходимы при планировании продукции и производственного оборудования. Большое значение имеют также налоговое законодательство для предприятий, положения и законы о таможенных пошлинах; обязательная ответственность производителя за свой продукт, а также положения о регистрации фирм и трудовое законодательство. Кроме того, необходимо быть в курсе политических событий с целью их вовлечения в стратегические планы.

2. **Экономическое окружение.** Под экономическим окружением понимаются те влияющие факторы, которые определяют общеэкономическое развитие страны, рынков сбыта и снабжения. Решение о масштабах, глубине анализа и прогноза экономических условий окружающей среды зависит от характера и интенсивности зависимости предприятий от этих

факторов. В области общеэкономического развития объектом анализа являются:

- развитие валового национального продукта (реальное и номинальное);
  - численность и структура народонаселения (возрастная пирамида, число домашних хозяйств, региональное развитие);
  - численность и структура трудоспособного населения, включая региональное развитие;
  - темпы роста промышленного производства, в том числе в разрезе предприятий важнейших промышленных отраслей;
  - динамика доходов и их использование;
  - индекс стоимости жизни;
  - динамика инвестирования в сферы, важные с точки зрения предприятия;
  - развитие государственного сектора (дотации, субвенции, налоги, программы поддержки).
- Целью анализа является получение исчерпывающих ответов на следующие вопросы:
- готовность к потреблению: потребители используют только часть своих доходов на потребление, другую же часть они откладывают. Какую именно долю составляет эта сумма и куда поступают средства, предназначенные на потребление?
  - государственный сектор: какие налоги и сколько следует платить, какие существуют государственные программы содействия?
  - проценты: в силу того, что проценты оказывают большое воздействие на финансирование инвестиций, актуальное и перспективное развитие процентных ставок имеет большое значение;
  - цены на энергоносители, например актуальные и ожидаемые цены на нефть.

В международной торговле (экспорт, импорт) предприятия должны изучать развитие соответствующих показателей зарубежных стран, например курсы обмена валюты.

Важное значение имеет отраслевой аспект анализа экономических условий. Под отраслевым развитием следует понимать все факторы окружающей среды, которые влияют на предпринимательскую ситуацию в данной конкретной отрасли народного хозяйства, то есть в совокупности предприятий, выпускающих такую же аналогичную продукцию. Полученные путем анализа данные служат, в первую очередь, для сравнения развития собственного предприятия со среднеотраслевым уровнем. Следует, однако, иметь в виду, что отраслевые показатели представляют собой лишь усредненные величины и, следовательно, могут служить только в качестве изначального ориентира. В состав отраслевого анализа, например, входят:

- общий оборот отрасли;
- динамика оборота в разрезе групп продукции;
- динамика производительного труда.

При углубленном анализе предметом исследования могут быть, например, тенденции концентрации и диверсификации, развитие кооперации, изменения в размерах предприятия, численность и особенности конкуренции и др. Анализ рынков сбыта охватывает область спроса и конкурентную ситуацию. Исследованию спроса предшествует сегментация рынка по группам потребителей, региональным факторам, путям сбыта. Анализ потенциала рынка в широком смысле показывает, сколько единиц продукта можно продать, если: 1) все мыслимые покупатели располагают необходимыми средствами; 2) "созрели" для приобретения данного продукта, то есть развили в себе осознанную потребность его покупки. Отсюда предметами анализа являются масштабы и рост рынка, доля рыночного участия предприятия, динамика цен и доходов.

К числу побочных анализируемых факторов можно отнести, например, следующие: действующие тарифы, темпы инфляции, демографические перемены, моду, сезонность, политические события и др. Таким образом, предметом этой стадии анализа, в первую

очередь, является получение следующей информации: оборот предприятий-конкурентов, число работающих, мощности, доля их рыночного участия, продуктный диапазон, преимущества географического размещения, специфические качества выпускаемой продукции.

Для оценки конкурентоспособности продукции может быть использован следующий перечень вопросов:

- располагает ли данное предприятие продукцией, хорошо идущей на рынке?
- как быстро растет рынок сбыта данного предприятия?
- располагает ли оно собственной торговой конторой и сетью коммерческих представительств?
- имеет ли предприятие ведущее положение на рынке?
- имеет ли свой рынок данная отрасль промышленности?
- является ли его фабричная марка популярной?
- имеет ли его продукция перспективу разностороннего развития?

В то время как ситуация на рынках сбыта связана с потоками поставок и услуг по пути “от предприятия”, анализ рынков поставщиков охватывает потоки в обратном направлении. Важнейшими рынками поставщиков для предприятия являются: рынки сырья, рынок труда, рынки вспомогательных материалов и полуфабрикатов, рынок средств инвестирования, рынок капитала, источники обеспечения энергией.

Предметом анализа рынков поставщиков и их развития является количество и качество получаемых товаров, их применимость с точки зрения технологического развития, условия цены и поставки, существующие или ожидаемые риски в системе поставки, а также существующие и потенциальные поставщики.

**3. Технологическое окружение.** Любая технологическая революция в таких областях, как микроэлектроника, робототехника, лазерная техника и геновая инженерия, дает предприятию не только новые шансы, но и связана со значительным риском. Поэтому вопросы НТП и приобретения патентов и лицензий заслуживают самого большого внимания.

Анализ и прогнозы условий технологического окружения в первую очередь имеют значение для промышленных предприятий, подверженных быстрым технологическим изменениям. Предметом анализа технологического окружения этих предприятий является уровень техники и технологии, как совокупность технологических знаний о продуктах и производственных методах, которые либо уже повсеместно известны, либо еще находятся в разработке. По отношению к продукции различают базисные новации, имеющие целью создание нового продукта и улучшающие новации. Предметом анализа может быть жизненный цикл продукта, период времени между изобретением (инвенция) и выходом его на рынок (инновация), а также так называемые инновационные лаги (время цикла исследование - производство).

В области производственных методов анализ учитывает изменения технологии и техники в более узком смысле, а именно тенденции механизации и автоматизации, изменения в используемых производственных материалах, а также в средствах измерений и испытаний.

Анализ внешнего окружения показывает, каковы шансы и факторы риска у предприятия на рынке, а именно, что оно должно учитывать; анализ же предприятия выявляет его внутренние сильные и слабые места и показывает, что предприятие должно делать. Сильные и слабые места предприятия всегда носят относительный характер. Ответ на вопрос, достаточно ли собственного капитала, зависит от объема наличного собственного капитала в сравнении с конкурентами. Сравнение с другими предприятиями, с самым сильным и с самым слабым конкурентом, предполагает соответственно разделение анализа предприятия на две части:

1. Анализ ресурсов, который говорит о потенциале предприятия.

## 2. Анализ конкурентов, который сравнивает собственный потенциал с потенциалом предприятий-конкурентов.

Под анализом потенциала ИП понимается оценка его ресурсов с точки зрения возможности их использования для принятия стратегических решений. Целостная его характеристика может быть получена путем анализа сильных и слабых мест ИП, который предполагает получение информации по следующим направлениям:

- маркетинг (рыночная деятельность ИП, ценовая политика продвижения продукции, организация сбыта, уровень платежеспособного спроса, наличие экспортной продукции и т.д.);
- производство (состояние и уровень использования существующих мощностей, производительность, технологическая культура, наличие поставщиков, выпускающих продукцию, доступную по цене и приемлемую по качеству и т.д.);
- НИОКР, оформленные патентами, авторскими свидетельствами и т.д.;
- финансы (капитал и его структура, показатели рентабельности, ликвидности, устойчивости, оборачиваемости и т.д.), состояние расчетов и платежей;
- персонал (профессионально-квалификационный состав, мотивация к трудовой деятельности, взаимоотношения в коллективе, социальное партнерство, социальные льготы, пособия и т.д.);
- управление и организация (организационная структура ИП, информационные потоки, планирование и контроль, финансовый менеджмент и т.д.);
- наличие и масштабы непроизводственной деятельности (объекты социально-культурного и бытового назначения и жилищно-коммунального хозяйства и т.п.).

Углубленному анализу при комплексной оценке потенциала ИП подлежит его финансовое состояние, важнейшим показателем которого является финансовая устойчивость.

Объективную оценку финансовой устойчивости можно получить на основе финансовых коэффициентов (автономии, финансовой зависимости, маневренности, структуры долгосрочных вложений, долгосрочного привлечения заемных средств, соотношения собственных и привлеченных средств).

Кроме того используются показатели оценки имущественного положения ИП (сумма хозяйственных средств, находящихся в распоряжении предприятия; доля активной части основных фондов; износа; обновления; выбытия основных средств).

При оценке ликвидности и платежеспособности используются показатели величины собственных оборотных средств и маневренности функционального капитала, коэффициенты: покрытия, быстрой ликвидности и абсолютной ликвидности (платежеспособности).

К обобщающим показателям, характеризующим степень благополучия жизнедеятельности ИП, относятся: прибыль; рентабельность собственного капитала, продукции, основного капитала, основной деятельности; период окупаемости собственного капитала и др.

Завершающим этапом стратегического планирования инновационного процесса является разработка инновационных стратегий и механизм их реализации. При разработке инновационных стратегий необходимо учесть их следующие особенности:

1. Предприятия находятся под влиянием изменений в окружающей среде. Они могут сами формировать эти изменения своим активным воздействием либо откликнуться в форме реакции (стратегии приспособления). Изменения окружающей среды могут быть уже наступившими или еще только ожидаемыми.
2. Дается возможность установить, каким образом можно ввести в действие имеющийся потенциал с учетом существующих и ожидаемых в будущем сильных и слабых сторон с тем, чтобы выполнить намерения предприятия.
3. Предприятия дают лишь общее направление, по которому они должны развиваться и поэтому дополняются мероприятиями тактического порядка.



4. Цель стратегий предприятия – формирование устойчивого потенциала успеха с учетом его преимуществ перед конкурентами.

Таким образом, любая стратегия будет признана успешной только в том случае, если полученные в процессе ее реализации результаты окажутся максимально приближенными к запланированной цели. Поэтому стратегический план всегда содержит в себе в качестве обязательного компонента сферу оперативных задач, обеспечивающих практическую целостность и завершенность реализации стратегического замысла, то есть его воплощение.

**Sարյանա Օհանյան**

### **ՀՀ արդյունաբերական ձեռնարկությունների նորամուծության գործընթացների ռազմավարական պլանավորումը**

#### **Ամփոփագիր**

ՀՀ արդյունաբերական ձեռնարկությունների բարելավման խնդիրների լուծումը պահանջում է ձեռնարկությունների նորամուծության գործընթացների ռազմավարության հիմնական ձևերի մշակում և պլանավորում:

Այդ պատճառով անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնց կիրառումը թույլ կտա կանխատեսել ձեռնարկության արդյունավետ օգտագործման ուղիները, ինչի մասին էլ խոսվում է տվյալ հոդվածում:

**Tatyana Ohanyan**

### **Strategic Planning of Innovation Processes of Industrial Companies of Armenia**

#### **Abstract**

The article describes the stages strategic innovation planning to be adopted by the industrial companies of Armenia in order to improve their overall performance. The author proposes various mechanisms to be adopted at different stages of innovation process to ensure better performance.

**ИРИНА ТАРАНЯН**

*Младший научный сотрудник  
Института экономики им. М.Котаняна НАН РА*

### **СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ФИНАНСИРОВАНИЯ ДОРОЖНОГО ХОЗЯЙСТВА В РА**

Для Республики Армения, как страны со слабо развитой сетью железных дорог, обусловленной сложным горным рельефом, и не имеющей выхода к морю, автомобильные дороги имеют важное стратегическое и экономическое значение. Они обеспечивают 59 % пассажироперевозок и около 90% грузоперевозок страны. От уровня транспортно-эксплуатационного состояния и развития сети автомобильных дорог во многом зависит решение стоящих перед РА важнейших государственных задач, таких как достижение устойчивого роста экономики страны, повышение конкурентоспособности отечественных производителей за счет снижения транспортных издержек и затрат времени на перевозки, развитие туризма, мобильность, деловая активность и занятость населения, сокращение уровня бедности и улучшение качества жизни населения, а также укрепление национальной безопасности и обороноспособности страны. Выполняя функции межрегионального и межгосударственного

моста, автодорожная сеть непосредственно влияет на активизацию торговли и способствует интеграции Армении с мировой экономической системой в условиях глобализации.

С оживлением экономики республики и ростом спроса на транспортные услуги, проблемы состояния, эксплуатации и развития дорожной сети приобретают особую значимость. В настоящее время РА имеет относительно развитую сеть автомобильных дорог, которая от вида разрешенного использования подразделяется на автомобильные дороги общего пользования и автомобильные дороги необщего пользования. На долю первых приходится 84,9 % всех автомобильных дорог. Общая характеристика сети автомобильных дорог общего пользования приведена в таблице 1.

**Таблица 1**

**Общая характеристика сети автомобильных дорог общего пользования РА<sup>1</sup>**

Показатели	1995г.	2005 г.	2012 г.**	2012 г. к 1995 г.,%
Эксплуатационная длина всех автомобильных дорог, всего, км	11542	10296	9500*	79,1
В том числе				
Общего пользования	7713	7515	7743,8	100,4
Из них:				
Межгосударственного значения	1419	1561	1686,5	118,8
доля в сети общего пользования,%	18,4	20,8	21,8	
Республиканского значения	2567	1832	4040,0	157,3
доля в сети общего пользования,%	33,3	24,4	52,2	
Местного значения	3727	4122	2017,3	54,2
доля в сети общего пользования,%	48,3	54,8	25,5	
Из общей протяженности автомобильных дорог дороги с твердым покрытием, всего, км	9690,8	7012,5	8400**	86,6
Густота автомобильных дорог с твердым покрытием, км, на 1000 км <sup>2</sup>	325,8	235,8	282,4	
Из них:				
Общего пользования	250,8	227,3	260,4	

**Примечание.** \* [www.economy.gov.ru/wps/wcm/connect/.../armeniya\\_011211.doc](http://www.economy.gov.ru/wps/wcm/connect/.../armeniya_011211.doc).

\*\* [www.activelogistic.ru/102-armenia.html](http://www.activelogistic.ru/102-armenia.html).

\*\*\* Программа среднесрочных государственных расходов РА на 2013-2015 гг.

Судя по таблице 1, протяженность автомобильных дорог общего пользования в РА за 17 лет увеличилась лишь на 0,4%. Обращает на себя внимание положительная тенденция с показателем «дороги межгосударственного значения», протяженность которых возросла на 18,8%. Их доля в автодорожной сети общего пользования за этот период увеличилась с 18,4% до 21,9%. Увеличение длины дорог республиканского значения в 1,6 раза связано с тем, что в январе 2008 г. из-за недостаточного уровня финансирования дороги областного и общинного значения длиной в 2224 км получили статус дорог республиканского значения, что означал переход ответственности за их сохранность и эксплуатацию от областных администраций к Министерству транспорта и связи, как уполномоченного органа Правительства.

Более точный показатель, характеризующий реальное положение дел с дорогами – это количество дорог с твердым покрытием, приходящихся на 1000 км<sup>2</sup> территории. Данные за анализируемый период свидетельствуют о том, что с 1995 г. по 2012 г. в результате сокращения в целом общей протяженности автомобильных дорог, в том числе с твердым покрытием, густота дорог в Армении в расчете на 1000 км<sup>2</sup> уменьшилась, хотя по плотности автомобильных дорог общего пользования с твердым покрытием на 1000 км<sup>2</sup> территории Армения среди стран СНГ занимает 4-е место (259 км) и 7-е место по протяженности на

<sup>1</sup> Статистические ежегодники Армении, 2001г., 2009г.

1000 жителей (2,37 км). Заметим, в среднем по странам СНГ эти показатели составляют соответственно 55,9 км и 4,5 км на 1000 км<sup>2</sup>. Чем больше плотность и выше качество сети автомобильных дорог на территории, тем богаче страна и ее граждане.<sup>1</sup>

Автомобильные дороги межгосударственного и республиканского значений, составляющие основу дорожной сети общего пользования, в силу своей стратегической значимости находятся в сравнительно лучшем состоянии, чем дороги местного значения. Основные магистрали и связующие автомобильные дороги страны, созданные в 1950-1980гг., в настоящее время в целом восстановлены как за счет бюджетных средств, так и внешних источников финансирования, в частности, иностранных грантов и льготных кредитов. Ключевую роль в сохранении в надлежащем состоянии и развитии существующей сети автомобильных дорог сыграли принятие и реализация трех взаимодополняющих программ: «Автомагистрали Армении» (1995г.-2000г.), «Транспорт» (2000-2004г.) и Программа дорожного строительства фонда «Линси» (2001-2003гг). За счет инвестиционных вложений в 1995-2004 гг. были восстановлены 1400 км дорог государственного значения, а также десятки мостов, произошло резкое улучшение состояния основной сети автомобильных дорог, в результате чего годовые эксплуатационные расходы транспортных средств от \$150 млн. США в 1995 г. сократились до \$40 млн в 2003г. Почти вдвое сократились общие транспортные расходы, за счет увеличения средней скорости движения значительно сократилось время движения. Международный показатель ровности дорожного покрытия с 7,8 мм/м в 1995 г. снизился до 3,5 мм/м в 2003 г.<sup>2</sup> В последующие годы, благодаря целенаправленным и эффективным восстановительным мероприятиям правительства РА, были построены сотни километров новых дорог и восстановлены существующие дороги, а также несколько десятков мостов, сданы в эксплуатацию ряд тоннелей. Только в 2008-2010 гг. в Армении было построено втрое больше дорог, чем в течение 10 лет, предшествующих 2008 году, был осуществлен капитальный ремонт 1155 км дорог, что составляло около 15% всей сети. Показатель ровности дорог с 7,8 мм/м в 1998 г. снизился до 4,0 мм/м в 2010 г. Из всей сети автомобильных дорог общего пользования 97% имеют твердое покрытие, в том числе 78% - усовершенствованное. По сравнению с республиканскими дорогами, дороги межгосударственного значения полностью заасфальтированы и в основном соответствуют международным стандартам.

Несмотря на существенное улучшение состояния основных магистралей республики, основной проблемой дорожной отрасли сегодня является ускоренный износ дорожного покрытия, самого первого и наиболее незащищенного элемента дорожной одежды. По оценкам ГНО «Директорат Армянских автомобильных дорог», на сегодня лишь 15% дорог межгосударственного значения имеют хорошее дорожное покрытие. У 75% покрытие находится в удовлетворительном состоянии, у 10% - в плохом.<sup>3</sup> Как известно, автомобильные дороги и инженерные сооружения на них в процессе эксплуатации подвергаются многолетнему и многократному воздействию природно-климатических факторов, транспорта и хозяйственной деятельности человека. На качество дорог республики большое влияние оказывают перепады температур. В условиях палящего солнца и достаточно резких зимних холодов, на большинстве республиканских трасс дорожное покрытие в прямом смысле этого слова сравнялось с землей от эксплуатации. Из-за сложного рельефа и особенностей грунта, отдельные участки межгосударственных дорог из Армении в Грузию и Иран становятся непроходимыми, основной причиной которого являются оползни - вечный бич наших дорог. Разрушающее воздействие на дороги оказывают атмосферные осадки и поверхностный сток воды.

<sup>1</sup> О состоянии и развитии автомобильных дорог СНГ. [www.e-cis.info/foto/pages/19824.doc](http://www.e-cis.info/foto/pages/19824.doc)

<sup>2</sup> Программа среднесрочных государственных расходов Республики Армения на 2013-2015 гг.

<sup>3</sup> Հայաստանի տրանսպորտի ոլորտի զարգացման ռազմավարություն 2020: Երևան, 2008թ.:

На износ дорожного покрытия определяющим образом влияет наблюдаемый в республике за последние годы резкий рост интенсивности движения, обусловленный с преобладанием в транспортном потоке количества легковых автомобилей, находящихся в личной собственности граждан, которые составляют наибольший удельный вес в составе полумиллионного автомобильного парка. Для наглядности заметим, что если в 2005 г. из ввезенных в Армению 19187 автомобилей 16484 были пассажирские, 2703 -грузовые, то в 2011 г. из ввезенных 29,4 тыс. автомобилей пассажирскими были 26,4 тыс, грузовыми – 3тыс. Интенсивному разрушению автомобильных дорог способствует и наличие сегодня в растущем транзитном потоке тяжеловесного подвижного состава с осевой нагрузкой до 13 тонн, который к тому же нередко бывает перегружен на 20-30%.

Автомобильные дороги межгосударственного значения республики, спроектированные на грузоподъемность 11,5 тонн, а остальные дороги – на 10 тонн, не выдерживают машины с таким весом. Заметим, что сегодня из Ирана в Армению ежедневно едут автомобили, превышающие 15 тонн и один проезд такого транспортного средства в 4 раза увеличивает износ дорог. В результате многих сотен и тысяч нагрузок, а порой и перегрузок покрытия, а иногда и не очень высокого изначального качества материалов или неполноценного и неравномерного выполнения определенных дорожно-строительных операций, особенно уплотнения, на асфальтобетонном покрытии с течением времени возникают всевозможные дефекты, деформации и разрушения. За многие годы эксплуатации объемы остаточных деформаций в дорожных конструкциях могут нарастать, и дороги устаревают физически. Кроме того, за долгий срок службы дорог происходит также их моральный износ, особенно второго вида, обусловленный постоянным ростом технических параметров транспорта, вследствие чего повышаются требования к геометрическим параметрам и транспортно-эксплуатационным характеристикам дорог.

Из-за несоответствия технического состояния дорог, интенсивности движения и осевым нагрузкам ухудшаются основные эксплуатационные характеристики транспорта и, как следствие, увеличивается транспортная составляющая в себестоимости продукции, что снижает конкурентоспособность отечественных производителей.

Что касается дорог местного значения, то они находятся в особо удручающем состоянии. Из-за недостаточного уровня финансовых вложений, необходимых для сохранения и ремонта сельских дорог, на протяжении двух последних десятилетий, а также того факта, что еще в советские времена многие из них, особенно в отдаленных общинах, были не особенно благоустроены, ныне они стали и вовсе непроходимыми. Впрочем, проблема не только в плохих дорогах, но и в негативных экономических последствиях, вызванных их качеством. Именно из-за плачевного состояния дорог, связывающих деревни с основными магистралями, фермеры не могут вовремя доставить свой урожай на рынок, неся при этом колоссальные убытки. По подсчетам экспертов, потери сельчан превышают 40% урожая, а в некоторых общинах и вовсе достигая 80%.<sup>1</sup> Незрелость сети автомобильных дорог усугубляет проблемы в социальной сфере, в связи с этим в значительной мере сдерживается развитие сельских населенных пунктов, сокращается сельскохозяйственное производство, происходит отток населения, вымирание деревень, сел, поселков, особенно отдаленных и приграничных. Поэтому восстановление сельских дорог, где проживает около трети населения страны, является одним из приоритетных направлений деятельности Правительства Армении в сфере дорожного строительства, и оно изыскивает средства на их благоустройство даже в условиях кризиса. Стратегическая направленность идеи восстановления дорог «жизненно важного значения» заключается в том, чтобы обеспечить в

---

<sup>1</sup> См. там же.

любую погоду каждую сельскую общину нормальной дорожной связью или с райцентрами или с дорогами межгосударственного или республиканского значения.

С учетом состояния дорожной сети РА в настоящее время задача повышения транспортно-эксплуатационных характеристик существующих дорог, приведения их в соответствие с требованиями движения и дальнейшего совершенствования становится более важной, чем строительство новых дорог. В сложившейся ситуации своевременное, полное и качественное выполнение комплекса работ по ремонту и содержанию автомобильных дорог является важнейшим условием обеспечения их сохранности, повышения безопасности движения и экологической безопасности объектов, долговечности и надежности автомобильных дорог, эффективности обслуживания пользователей и оптимизации расходования средств. Опыт показывает, что экономическая отдача средств, вложенных в ремонт и содержание дорог, в 2-3 раза превышает экономический эффект от каждого рубля, вложенного в строительство новых дорог. В результате проведения ремонтов возмещается физический износ дороги, возникающий в процессе их производственного потребления в качестве основных фондов транспорта, а в процессе содержания дороги создаются и поддерживаются условия эксплуатации, при которых скорость износа будет наиболее замедленной. В республике из работ по содержанию дорог особенно большой социально-экономический эффект дают мероприятия по зимнему содержанию дорог, т.е. очистки дорог от снега и обработки их противогололедными материалами. При этом весь эффект от реализации дорожных работ образуется в основном у пользователей автомобильными дорогами.

Обеспечение сохранности сети автомобильных дорог и инженерных сооружений на них в соответствии с проектными уровнями в РА осуществляется в рамках программ «Капитальный ремонт дорог государственного значения», «Сохранение и эксплуатация дорог государственного значения» и «Капитальный ремонт транспортных объектов», успешная реализация которых зависит напрямую от объемов финансирования и стратегии распределения финансовых средств в условиях ограниченных объемов. Многогранность проблем дорожной отрасли РА требует ее надлежащего финансирования, однако, сегодня, доля ВВП, идущая на нужды транспортной отрасли республики, не достигает и 1% при среднем уровне этого показателя в развитых странах мира 3-5 %. Существующий и предполагаемый, согласно стратегии развития транспорта РА на период 2020 г., объем финансирования транспортного сектора (около 1,5 % от ВВП) из государственного бюджета нам представляется относительно очень низким, а сам уровень финансирования можно охарактеризовать как критический. При недостаточном финансировании дорожного хозяйства особенно большое значение имеет соблюдение пропорций средств, выделяемых на строительство и на эксплуатацию автомобильных дорог, который в разных странах имеет различный характер. В РА из-за недостаточных объемов финансирования сегодня мало внимания уделяется программам среднесрочного и долгосрочного развития сети автомобильных дорог. Приоритетной деятельностью всей дорожной отрасли является обеспечение сохранности и улучшение транспортно-эксплуатационного состояния дорог, так как бесперебойное содержание дорог и вовремя произведенный ремонт в конечном итоге не только минимизируют расходы отрасли за счет снижения дорогостоящего ремонта, но и снижают затраты пользователей дорожной сети.

Таблица 2

Ассигнования из госбюджета в дорожной отрасли РА за 2006-2012 гг. (млн. драм)<sup>1</sup>

Показатели	2006г.	2008г.	2010г.	2011г.	2012г.
Расходы на транспортную сферу	19093.8	26335.4	34013.8	36617.6	54021.5
Расходы на дорожную отрасль	18225.6	19938.5	7957.5	9468.9	9548.9
В том числе:					
Капитальный ремонт дорог государственного значения	12617.4	12.648.5	2000.0	3775.0	3845.5
Доля в бюджетных расходах	66.1	48.0	5.9	10.3	7.1
Доля в общих расходах дорожной отрасли	69.2	63.5	25.1	39.9	40.3
Эксплуатация и содержание дорог государственного значения	5054.8	6190.0	5525.5	5510.4	5548.9
Доля в бюджетных расходах	26,5	23,5	16.2	15.0	10.0
Доля в общих расходах дорожной отрасли	27.7	31.0	69.4	58.2	58.1
Капитальный ремонт транспортных объектов	553.4	1100.0	432.0	183.5	154.4
Доля в общих расходах дорожной отрасли	3.0	5.5	5.5	1.9	1.6

Анализ объемов финансирования и структуры расходов в дорожной отрасли РА (см. таблицу 2) свидетельствует о том, что при увеличении в целом объемов финансирования из госбюджета на транспортную сферу в 2,8 раза за период 2006-2012 гг., расходы на дорожную отрасль при этом сократились почти в 2 раза. Проведенный анализ структуры расходов дорожной отрасли показал, что с 2006г. до 2010 г. работы по капитальному ремонту и реконструкции дорог государственного значения занимали преобладающее значение. Их доля в общих расходах транспортной отрасли за последние 6 лет в среднем составляла 57.4 % , а в расходах дорожной отрасли – 67,7%. Однако в последние три года (2010-2012 гг.) удельный вес расходов на капитальный ремонт дорог резко снизился (до 5,9% в 2010г, 10,3% в 2011 г. и 7% в 2012г.) при одновременном увеличении доли затрат на ремонт и содержание дорог с 27,7% в 2006г. до 58,1% в 2012 г. в общих расходах дорожной отрасли. Как видим, центр тяжести в дорожной деятельности постепенно перешел от строительства к эксплуатации дорог, повышению их технического уровня и эксплуатационного состояния, капитальности дорожных одежд, реконструкции дорог и мостов. На первое место вышли задачи повышения скорости, удобства и безопасности движения, инженерного оборудования и обустройства и другие задачи, составляющие комплекс эксплуатационного содержания. В то же время снижение доли затрат на ремонт и содержание дорог в общих затратах транспортной отрасли с 26,5% в 2006 г. до 10% в 2012 г. означает, что при растущих объемах инвестиций на транспортную сферу выделяется недостаточно средств на содержание и ремонт дорог. Тот факт, что доля расходов на содержание и ремонт дорог снижается, сам по себе говорит об ухудшении содержания дорог. Недофинансирование дорожной отрасли приводит к несоблюдению межремонтных сроков, накоплению из года в год количества неотремонтированных участков, требующих в последующем их полной реконструкции, которая стоит в три раза дороже, чем их регулярные ремонт и содержание. Так, в 90-х годах из-за отсутствия регулярных работ по ремонту и содержанию дорог республики, согласно расчетам, если средняя стоимость восстановления 1 км участка дороги в 1994 г. составляла 13500\$ США, то из-за отсутствия вложений в 1997 г. она достигла 39293\$ США.<sup>2</sup>

За счет финансирования затрат на выполнение ремонтных работ на автомобильных дорогах из бюджета происходит возмещение износа автомобильных дорог общей сети,

<sup>1</sup> ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության բյուջետային հատկացումները 2006-2012 թթ.:

<sup>2</sup> Программа среднесрочных государственных расходов Республики Армения на 2006-2008 гг.

который, как правило, не отражается на себестоимости перевозок. В дорожном хозяйстве, в отличие от других отраслей экономики, отсутствует непосредственная связь между износом (мерой потребления) дорог и размером средств, направляемых на их содержание и воспроизводство, что затрудняет поддержание соответствия между интенсивностью и характером ремонтных и реконструктивных воздействий на дорогу и теми требованиями, которые предъявляет к дороге подвижной состав. Передача в бюджет дорожного хозяйства, по сути, означает отрыв дорог от их пользователей. Внешне расходы на финансирование автомобильных дорог покрываются за счет бюджета, но на самом деле – за счет части поступлений, получаемых бюджетом от пользователей дорогами – от автотранспорта. Традиционное финансирование из бюджета, по сути, «общий котел», в котором нет взаимосвязи между целевыми сборами с пользователей автодорог и расходами на дорожное хозяйство. Эти сборы просто поступают в «единую кассу», которая распределяется между различными направлениями бюджетных расходов. Основным недостатком существующего порядка финансирования – недостаточная стабильность и предсказуемость объемов расходов бюджета, направляемых на дорожное хозяйство. Размеры фактически выделяемых средств зависят от наполняемости бюджета и социально-экономических приоритетов органов государственной власти и ежегодно подвергаются корректировке. При этой форме финансирования у дорожного хозяйства относительно низкий рейтинг по сравнению с другими статьями бюджетных расходов, и оно оказывается среди первых статей, сокращаемых при напряжениях в бюджете. То есть, фактически дороги финансируются по «остаточному» принципу, а необходимо финансирование по принципу «достаточности». Такая форма финансирования, конечно, не может способствовать не только повышению эффективности содержания и своевременности ремонта дорог, но и развитию дорожных организаций, их модернизации и приобретению новой техники.

Излишняя забюрократизированность процедур планирования и осуществления расходов на строительство и реконструкцию объектов при необходимости получения множества согласований и разрешений крайне затягивает начало финансирования объектов, и, как следствие, не всегда эффективно расходуются средства. Сегодня в рамках действующего бюджетного финансирования допускается и активно применяется изъятие неизрасходованных средств в конце текущего финансового года в доходы бюджетов, что создает ложные стимулы для органов управления дорожного хозяйства, поскольку основной задачей становится не оптимальное использование финансовых ресурсов на конкретные дорожные объекты, а их максимально оперативное расходование. Годичный бюджетный цикл не позволяет гарантировать финансирование при заключении государственных контрактов на весь период реализации проектов, вызывая необходимость ежегодного заключения дополнительных соглашений с подрядчиками, сдвиги сроков завершения работ, что в свою очередь приводит к увеличению стоимости строительных работ.

Из сказанного следует, что дорожному сектору РА сегодня нужна система финансирования с горизонтом, выходящим за пределы одного бюджетного года, и она должна обеспечить создание устойчивых, долгосрочных источников финансирования дорожных работ, исходя из справедливого принципа «пользователь платит», напрямую связанную с суммарной нагрузкой на дорожную сеть. Реализация этого принципа предусматривается посредством целевых дорожных налогов (платежей, сборов, тарифов), которые являются по своей сути превращенной формой платы за пользование автомобильными дорогами. Целевые дорожные налоги отражают:

1. **Платность доступа к использованию сети дорог.** Платежи за право доступа к дорожной сети выступают в форме налогов, которые взимаются с автовладельцев или эксплуатантов по факту владения (приобретения, пользования) транспортными средствами. Администрирование таких платежей производится в увязке с государственной регистрацией

транспортных средств и/или прохождением регулярных технических осмотров. Обычно такие платежи дифференцированы по мощности и грузоподъемности автомобиля и не зависят от фактического пробега автомобиля, т. е. представляют собой условно-постоянную часть налогообложения владельца (эксплуатанта) автомобиля. Зарубежный опыт показывает, что транспортный налог обеспечивает до 25% консолидированных расходов на дорожное хозяйство.

**2. Платность фактического использования сети дорог**, который реализуются в виде сборов с автовладельцев или эксплуатантов переменной (покилометровой) части платежей, включенной в цену моторных топлив, то есть в зависимости от фактического пробега транспортного средства, уровня разрушающих воздействий на дорожную одежду и искусственные сооружения, выполненной транспортной работой и т.п. Порядок установления и взимания переменной (покилометровой) части платежей автовладельца (эксплуатанта) зависит от технически исполнимого и социально-экономически приемлемого для общества механизма измерения фактического объема пользования сетью дорог. В настоящее время и на обозримую перспективу единственно реальным порядком установления и взимания переменной части платежей является налоговый порядок, основанный на налогообложении моторных топлив (а также масел и других эксплуатационных материалов). При этом объем потребления топлива принимается как косвенный измеритель фактического объема использования сетью. Эти платежи, повсеместно называемые «road money», обеспечивают в зарубежной практике 70% консолидированных расходов на дорожное хозяйство.

Установление номенклатуры и ставок дорожных налогов должно рассматриваться как процедура рыночного ценообразования на услуги автомобильных дорог, обеспечивающего обоснованное распределение бремени расходов на дорожное хозяйство и достижение динамического равновесия между спросом на пользование автодорогами и предложением услуг, ограниченным протяженностью и пропускной способностью сети. Номенклатура и ставки целевых дорожных налогов должны максимально отражать объемы предоставляемых пользователям услуг и компенсировать наносимый ими автодорогам ущерб. Практическая реализация принципа должна быть увязана как с уровнем автомобилизации в стране, так и с возможностью населения полностью оплачивать стоимость дорожных услуг.

Затраты на содержание и развитие дорожной сети должны покрываться через налоги, а также неналоговые поступления от эксплуатации дорог и имущества автомобильных дорог. Для аккумуляции средств в целях финансирования автодорог необходимо создать систему целевых источников в виде бюджетных или внебюджетных фондов, построенных по иерархическому принципу.

Создание в отрасли дорожного фонда с наличием собственных доходных источников обеспечит:

- стабильность выделения ассигнований на ремонт и содержание дорог,
- возможность гарантированного финансирования заключенных контрактов на дорожные работы и реализации программ дорожных работ путем гарантированного переноса остатков ассигнований, не использованных в текущем году, на очередной финансовый год,
- увеличение объемов финансирования дорожного хозяйства за счет привлечения неналоговых источников,
- расширение использования механизмов долгосрочных контрактов и контрактов «жизненного цикла» на строительство, ремонт и содержание дорог в целях повышения качества и долговечности автомобильных дорог,
- прозрачность бюджетных расходов,
- приведение транспортно-эксплуатационного состояния дорог в соответствие с нормативными требованиями, а также расширение дорожной сети,



- активное участие пользователей дорог в процессе контроля качества предоставляемых дорожных услуг .

Так или иначе, по нашему мнению, РА со временем придет к общепринятой международной практике финансирования дорожных работ через дорожные фонды, так как имеются предпосылки для их достойного формирования. Это наблюдаемый в стране высокий уровень автомобилизации населения и наличие достаточных источников для пополнения фондов. Источниками формирования фондов могут быть целевые пользовательские налоги, а также неналоговые доходы от эксплуатации и использования имущества автомобильных дорог общего пользования, объединяющие доходы, полученные от компенсации ущерба, наносимого автомобильным дорогам автотранспортными средствами, перевозчиками тяжеловесные и крупногабаритные грузы, а также доходы от таможенных пошлин на ввозимые автомобили, часть прибыли страховых компаний от страхования автогражданской ответственности, доходы от размещения рекламы, часть штрафов за нарушение правил дорожного движения, и др. Образование Дорожного фонда – явление положительное лишь потенциально. Многое в его полезности будет зависеть от достаточности, отработанности механизма сбора средств и исключения случаев использования властями любого уровня средств фондов не по назначению, кроме случаев чрезвычайных ситуаций.

**Իրինա Տարանյան**

**Ճանապարհային տնտեսության ֆինանսավորման համակարգի կարարելագործումը ՀՀ-ում**

**Ամփոփագիր**

Ուսումնասիրելով ՀՀ ավտոճանապարհային ցանցի վիճակը և զարգացման աստիճանը, ինչպես նաև վերլուծելով ճանապարհային ոլորտի ծախսերի կառուցվածքը, հոդվածում առաջարկվում է ստեղծել ճկուն ռազմավարություն իրականացնող ճանապարհային հիմնադրամ՝ «վճարում է օգտագործողը» սկզբունքի կիրառմամբ, ճանապարհային ենթակառուցվածքի առավել արդյունավետ զարգացման, ինչպես նաև միջոցների նպատակային օգտագործման համար:

**Irina Taranyan**

**The Improvement of Funding System of Road Industry in Armenia**

**Abstract**

By studying the state of ground transport network, quality and density of roads, and analyzing expenditure structure of Road sector, the article proposes establishment of Road fund implementing flexible strategy “Beneficiary Pays” pricing approach at the core to ensure more efficient development of Road infrastructure, and resource allocation, as well.

# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

## ԴԱՎԻԹ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

ՏՏ ԳԱԱ Մ. Լոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի սաստիքաներ

### ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Հայաստանի Հանրապետությունում համայնքների զարգացման անհամաչափության հաղթահարումը երկրում ընթացող բարեփոխումների կարևորագույն մասն է, որի կատարելագործումը սերտորեն կապված է համայնքների դերի և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացման հետ: Ներկայումս առկա են համայնքների զարգացման ինչպես տնտեսական, սոցիալական, այնպես էլ կազմակերպա-իրավական հիմքեր: Միաժամանակ, դրանց հետագա կատարելագործումն այսօր կենսական նշանակություն է ձեռք բերում՝ պայմանավորված երկրում և տարածաշրջանում տեղի ունեցող նոր զարգացումներով, տնտեսության որոշակի առանձնահատկություններով և տնտեսական գլոբալացման մշտուններով: Հետևաբար, կարևոր է շարունակել տնտեսագիտական ուսումնասիրությունները, որոնք կնպաստեն տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանն ու արդյունավետ սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

Թեև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը դրսևորեց շուկայական տնտեսության բազմաթիվ խոցելի կողմեր, այնուհանդերձ, ազգային տնտեսությունների զարգացման միջազգային փորձը վկայում է, որ ապակենտրոնացված կառավարման պարագայում համայնքների զարգացման արդյունավետությունն անհամեմատ ավելի բարձր է, քան վարչաիրամայական կառավարման պայմաններում: Ուստի այն ենթադրում է տեղական ինքնակառավարման ինստիտուտի ձևավորում՝ անհրաժեշտ իրավական, տնտեսական և սոցիալական հիմքերի ապահովման պայմաններում: Հատկանշական է, որ տեղական ինքնակառավարման հիմքերը եվրոպայում սկսել են ձևավորվել դեռևս վաղ միջնադարում: Եվրոպական մի շարք երկրներում իրականացված բարեփոխումների շնորհիվ այն դարձավ ընդհանուր կառավարման կարևորագույն բաղկացուցիչը, որն, իր հերթին, նպաստեց կառավարման արդյունավետության բարձրացմանը: Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացումը պայմանավորված էր նաև այն առաջընթացով, որ արձանագրվեց Ֆրանսիայում, երբ առաջին անգամ սահմանադրորեն ամրագրվեցին համայնքի կարգավիճակը և դրա հիմնական լիազորությունները:

Շուկայական, մրցակցային տնտեսության պայմաններում ապակենտրոնացման և վարչաիրամայական կառավարման համակարգում տեղական ինքնակառավարման սկզբունքային տարբերությունները սկիզբ են առնում կազմակերպաիրավական հետևյալ խնդիրներից: Կենտրոնացումը կառավարման կազմակերպման ձև է, որի դեպքում պետությունը կառավարում է մինչև նկատմամբ հիերարխիկ ենթակայության տակ գտնվող մարմինների գործունեությունը: Ինչ վերաբերում է ապակենտրոնացմանն, ապա այն, ըստ էության, լիազորությունների փոխանցումն է կենտրոնից դեպի տեղեր, որը հիմնականում իրականացվում է երկու ճանապարհով: Առաջին դեպքում կենտրոնի որոշ լիազորություններ փոխանցվում են տեղերում կենտրոնը ներկայացնող պետական պաշտոնյաներին (ուղղահայաց ապակենտրոնացում), իսկ երկրորդ դեպքում կենտրոնի լիազորությունները փոխանցվում են կենտրոնական իշխանության հիերարխիկ ենթակայության տակ չգտնվող մարմիններին, որոնք սովորաբար ընտրվում են շահագրգիռ քաղաքացիների կողմից: Այդ առումով, ապակենտրոնացումը ոչ թե քաղաքական, այլ կառավարչական բնույթի բարեփոխում է, որի դեպքում կառավարման օղակը մոտենում է

տվյալ տարածքում բնակվող մարդկանց և նրանց հոգսերին: Ապակենտրոնացման երկու ձևերի ընդհանրությունը կայանում է նրանում, որ տեղական ինքնակառավարման մարմինները չեն ստանում լրացուցիչ իշխանություն, այլ ընդամենն այդ պարագայում տեղի է ունենում պետության լիազորությունների որոշակի օտարում՝ ի օգուտ տարածքային կառավարման մարմնի, որը օժտված է վարչական բնույթի իշխանությամբ և կառավարման համապատասխան լծակներով:

Փորձը ցույց է տալիս, որ ապակենտրոնացման առաջին ձևի դեպքում իշխանության վերաբաշխում չի լինում, քանի որ լիազորությունները պահպանվում են կենտրոնի և տեղերում նրանց ներկայացուցիչների մոտ: Այսինքն, ապակենտրոնացման դեպքում պետության կողքին գոյություն ունեն այլ իրավաբանական անձինք, որոնք գործող օրենսդրությամբ իրավասու են լուծել որոշակի վարչական խնդիրներ: Դրանցից շատերն ունեն հստակ տարածքային հիմքեր և կոչվում են տարածքային կոլեկտիվներ՝ համաձայն ֆինանսական իրավունքի տեսության: Ապակենտրոնացման լավագույն ձևը գործառույթների բաշխումն է կենտրոնի և տեղական կառավարման մարմինների միջև՝ կիրառելով փոխլրացման սկզբունքը: Ըստ այդմ, վերին օղակին պետք չէ հանձնարարել այն, ինչն ավելի լավ կարող է կատարել կառավարման ստորին օղակը:

Եվրոպական բազմաթիվ երկրներում տասնիններորդ դարի սկզբին տեղական ինքնակառավարվող միավորների նախատիպը համայնքներն էին, որի հիմքում դրված էր ինքնակառավարվող ազատ համայնքի տեսությունը: Դրան հաջորդեց նոր՝ ինքնակառավարման հասարակական տեսությունը: Այս շրջանում որոշակիորեն կատարելագործվեց և մեծ տարածում ստացավ բնական իրավունքի տեսությունը, որի սկզբունքներն, ինչպես հայտնի է մշակվել են բրիտանացի Ջոն Լոկի (1632-1704թթ.) կողմից: Նրա կարծիքով՝ ժողովուրդը, անտարակույս, ինքնիշխան է: Նա իր բնական իրավունքի մի մասը հանձնում է պետությանը, որպեսզի վերջինս երաշխավորի իր մյուս բնական իրավունքները<sup>1</sup>:

Տեղական ինքնակառավարման հասարակական տեսության զարգացումը պատմականորեն ուղեկցվում էր տասնիններորդ դարի երկրորդ կեսին բազմաթիվ երկրներին բնորոշ քաղաքական և տնտեսական ներքին և արտաքին հակասություններով, որի արդյունքում ձևավորված միջավայրը Եվրոպայում հանգեցրեց ինքնակառավարման նոր՝ պետական տեսության մշակմանն ու արմատավորմանը: Հիշյալ տեսության համաձայն նպատակահարմար չէ կենտրոնական իշխանությունների միջոցով տեղական որոշ խնդիրների իրականացումը, հետևաբար, վերջիններս պետական կառավարման այդ գործառույթները, պետք է հասցնեն տեղական համայնքներին, որոնց կենսագործման համար էլ կազմակերպվում է տեղական ինքնակառավարման համակարգը:

Այսպիսով, եթե տասնիններորդ դարի առաջին կեսին տեղական խնդիրները լուծելու գործում առաջնային էր համարվում համայնքների ինքնուրույնությունը՝ այն դիտելով որպես կարևոր համաժողովրդական արժեք, ապա դրան հաջորդող ժամանակաշրջանում որպես առաջնային արժեք դիտվեցին տեղական իշխանությունների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնումը և պետության օժանդակությունն ու վերահսկումը, որպեսզի այդ ծառայությունները մատուցվեն երկրում ընդունված չափանիշներին համապատասխան: Այսպիսով, ընդլայնվեցին տեղական իշխանությունների գործառույթները և դրանց վրա միաժամանակ մեծացավ կենտրոնական իշխանության ազդեցությունը:

Հաշվի առնելով տեղական ինքնակառավարման հարուստ փորձը և դրա կիրառման առավել արդյունավետ օրինակներ, կարևոր է պարզել, թե որ չափով է այն պետական կառավարման մաս կազմում, և որքան է դրա ինքնուրույնությունը: Վերլուծությունները ցույց են տալիս, որ տեղական ինքնակառավարումը՝ որպես տեղական նշանակության խնդիրներ լուծելու ունակ համակարգ, աստիճանաբար հարթում է իր ճանապարհը<sup>2</sup>: Միաժամանակ, ակնհայտ է այդ

<sup>1</sup> Селичмен Б., Основные течения современной экономической мысли, М. 1968, էջ 80, 82;

Փիլիսոփայական բառարան, Եր. 1975, էջ 69, 183:

<sup>2</sup> «Բյուջետային գործընթացի և ֆինանսական կայունության գնահատման հիմնահարցերը տեղական ինքնակառավարման համակարգում» Գ. Հարությունյան, «Տնտեսագետ» իրատարակչություն, Եր. 2007, էջ 64:

համակարգի, դրա կարողությունների նկատմամբ առկա է որոշակի անվստահություն: Սա, իր հերթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ, մի կողմից, ինչպես զարգացող, այնպես էլ որոշ զարգացած երկրներում օրենսդրորեն լիարժեք ապահովված չէ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված պատասխանատվության հիմնավոր ծավալը, որի արդյունավետ իրականացումը երաշխավորված կլինի տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական, տնտեսական, աշխատանքային և այլ ռեսուրսներով: Մյուս կողմից, լիարժեքորեն մշակված չեն այն մեխանիզմները, որոնք կապահովեն հանրային ծառայությունների մատչելիության արդյունավետությունը տվյալ համայնքում բնակվող մարդկանց համար: Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում, մասնավորապես Լեհաստանում, դրանց ֆինանսավորվումն իրականացվում է մի կողմից, կենտրոնացված՝ պետական, մյուս կողմից՝ համայնքային բյուջեների եկամուտների հաշվին:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա համայնքային կյանքի այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ կրթությունը, մշակույթը, ջրամատակարարումը, աղբահանությունը, տրանսպորտը, բնակֆոնդի շահագործումը և այլն, պահանջվում են ֆինանսական ավելի մեծ ռեսուրսներ, քան դրանք օբյեկտիվորեն ձևավորվում են համայնքներում տեղական բյուջեների տեսքով: Հարցի լուծումը պահանջում է կամ համայնքի պատասխանատվության ծավալների կրճատում, կամ էլ տեղական ֆինանսական հնարավորությունների մեծացում՝ համայնքին ամրագրված հարկերի, տեղական տուրքերի և վճարների ընդլայնման, դրանց դրույքաչափերի վերանայման, ինչպես նաև պետության կողմից հատկացվող դոտացիաների ծավալների մեծացման ճանապարհով: Այստեղ կարևորվում է համայնքների կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների գնահատման նորմատիվ-մեթոդաբանական բազայի մշակումը, ինչպես նաև՝ ֆինանսական համահարթեցման արդարացի համակարգի ձևավորումը:

Եզակի չեն դեպքերը, երբ տեղական ինքնակառավարման համակարգի նկատմամբ առաջանում է անվստահություն նաև ֆինանսական ռեսուրսների փոշիացման առումով: Դրա պատճառը համայնքային ծառայությունների մատուցման հստակ մեխանիզմների բացակայությունն է, որը հնարավորություն չի տալիս ապահովել վերջիններիս որակյալ իրականացումը: Այս ամենը վկայում է, որ ապակենտրոնացման հետագա խորացումը պայմանավորված է, նախ և առաջ, տեղական ինքնակառավարման մարմինների ունակությամբ և կարողությամբ՝ համայնքներում ապրելու համար բավարար պայմաններ ստեղծելու գործում:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման ռազմավարության կարևոր ուղղություններից է երկրում կառավարման կենտրոնացման ու ապակենտրոնացման միջև արդյունավետ հարաբերակցության ստեղծումը: Մի կողմից՝ միշտ էլ առկա է կենտրոնի որոշակի վերահսկողություն, առանց որի կազմակերպական օղակները պարզապես կմեկուսանան և կգործեն ոչ լիարժեք համաձայնեցված, մյուս կողմից՝ տեղական մակարդակում պահանջվում է գործողությունների որոշակի ազատություն, առանց որի կտրուկ կսահմանափակվի տեղական ինքնակառավարմանը բնորոշ բազմաթիվ գործառույթների իրականացումը: Տնտեսագիտական սուր բանավեճերի առարկա է մնում այն հարցը, թե ինչպես պետք է դրանք զուգակցել կամ հաշվեկշռել առավելագույն արդյունավետության հասնելու համար:

Ապակենտրոնացումն, անկախ երկրի տնտեսական զարգացման մակարդակից, իշխանության և տարբեր գործառույթների կատարման իրավասությունների փոխանցումն է կառավարման վերին մակարդակներից ավելի ստորին մակարդակներ, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմիններին: Ապակենտրոնացումը նպատակաուղղված է պետության և հասարակության միջև պատմականորեն առաջացած հակասության վերացմանը, իսկ տեղական ինքնակառավարման զարգացումը ուղղակիորեն կապված է ապակենտրոնացման ձևերի ու մեթոդների հետագա կատարելագործման հետ:

Կենտրոնական կառավարման մարմիններից տեղական ինքնակառավարման մարմիններին իրավասությունների հանձնումը գործնականում նպատակ է հետապնդում հանգուցալուծել այնպիսի կենսական խնդիրներ, ինչպես օրինակ՝

- համայնքի անդամների գործունեության և համայնքի կառավարմանը նրանց մասնակցության ակտիվության բարձրացումը,
- տեղական մակարդակում գիտելիքների և տեղեկատվության օգտագործման մակարդակի բարձրացումը,
- տեղական մակարդակում նոր ռեսուրսների հայտնաբերում և բնակչությանը ծառայությունների էլ ավելի լավ մատուցումը,
- կառավարման թափանցիկության և արդյունավետության բարձրացումը,
- ժողովրդավարության խորացումն ու տարածումը տեղական մակարդակում,
- գյուղական համայնքների զարգացումը և քաղաքների բեռնաթափումը:

Այս ամենով հանդերձ, կարևոր է պարզել, թե կառավարման որ մակարդակում ավելի արդյունավետ կարող են իրականացվել հանրային կառավարման տարբեր գործառույթները: Ինչ վերաբերում է գործառույթների կատարման իրավասությունների տրամադրմանը, ապա այն պետք է սահմանվի համապատասխան իրավասորենսդրական հիմքերով<sup>1</sup>: Տեղական ինքնակառավարման բնագավառում պետական իշխանությունն օժտված է հետևյալ իրավասություններով.

- տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենքների ընդունում և դրանցում փոփոխությունների կատարում,
- պետական սեփականություն հանդիսացող օբյեկտները համայնքային սեփականությանը հանձնելու իրավական կարգավորում,
- օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին անհրաժեշտ նյութական և ֆինանսական միջոցների հատկացում,
- պետական բյուջեի և համայնքների բյուջեների միջև փոխհարաբերությունների կարգավորում,
- պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին տրված լիազորությունների իրականացման համար կատարված ծախսերի փոխհատուցում,
- տեղական ինքնակառավարում իրականացնող քաղաքացիների իրավունքների կարգավորում և պաշտպանություն,
- տեղական ինքնակառավարման ֆինանսական ինքնուրույնության պետական երաշխիքների ապահովում,
- տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ քաղաքացիների ընտրական իրավունքների պետական երաշխիքի սահմանում,
- տեղական ինքնակառավարման իրավունքի դատական պաշտպանության կարգի սահմանում,
- օրենքների խախտման համար տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության սահմանում,
- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կարգավորում:

1995թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ընդունեց Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքը: Համաձայն այդ օրենքի Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են՝ մարզերը, համայնքները, մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքը և նրա թաղային համայնքները: Մարզերում և Երևան քաղաքում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարում: Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանվեց տասը մարզի և մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքի:

Հայաստանի մարզերն են՝ Արագածոտն (մարզկենտրոնը՝ Աշտարակ), Արարատ (մարզկենտրոնը՝ Արտաշատ), Արմավիր (մարզկենտրոնը՝ Արմավիր), Գեղարքունիք (մարզկենտրոնը՝ Գավառ), Լոռի (մարզկենտրոնը՝ Վանաձոր), Կոտայք (մարզկենտրոնը՝ Հրազդան), Շիրակ

<sup>1</sup> Michael Lewisback. "The Relative Importance of Socio-economic and Political Variables in Public Policy", American Political Review, Vol. 62. (June 1997), pp. 559-566.

(մարզկենտրոնը՝ Գյումրի), Սյունիք (մարզկենտրոնը՝ Կապան), Վայոց Ձոր (մարզկենտրոնը՝ Եղեգնաձոր), Տավուշ (մարզկենտրոնը՝ Իջևան):

ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Տեղական ինքնակառավարման» մասին օրենքի համաձայն տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ և օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինների համայնքային խնդիրները լուծելու և համայնքի սեփականությունը տնօրինելու՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և օրենքով երաշխավորված իրավունքը և համայնքի կարողությունն է:

Համաձայն ՀՀ Սահմանադրության և գործող օրենսդրության, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական և պետության կողմից պատվիրակված: Սեփական լիազորությունները բաժանվում են պարտադիր և կամավոր լիազորությունների: Պետության կողմից լիազորություններն ամբողջովին և պարտադիր ֆինանսավորվում են պետության բյուջեից՝ պետության պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին: Պարտադիր և պետության պատվիրակված լիազորությունները ենթակա են համայնքի կողմից առաջնահերթությամբ և օրենքով սահմանված կարգով կատարման: Կամավոր լիազորություններն իրականացվում են համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և ավագանու սահմանած կարգով:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով համայնքային բյուջեները բաժանվում են վարչական և ֆոնդային մասերի, որոնք ունեն եկամուտների ձևավորման տարբեր աղբյուրներ և ծախսերի իրականացման տարբեր ուղղություններ:

Համայնքների բյուջեների վարչական մասից ֆինանսավորվում են պարտադիր և կամավոր լիազորությունների իրականացման հետ կապված ընթացիկ, բյուջետային փոխառությունների մարման և պետության պատվիրակված լիազորությունների կատարման ծախսերը<sup>1</sup>: Համայնքային բյուջեների ծախսային ուղղությունների ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր, կամավոր ու պատվիրակված լիազորություններով պայմանավորված ընթացիկ ծախսերի շրջանակները բավականին լայն են: Դրան հակառակ, բավականին նեղ են այդ ծախսերի իրականացման ֆինանսական հնարավորությունները՝ հատկապես Երևան քաղաքից դուրս գտնվող և առավել ևս գյուղական համայնքների մասով: Ուստի, ինչպես արդեն նշվել է, անհրաժեշտ է ֆինանսական ապահովվածություն չունեցող ծախսային լիազորությունների մի մասը տեղական ինքնակառավարման մարմիններից օրենսդրորեն փոխանցել իշխանության կառավարման հանրապետական մարմիններին կամ համայնքների բյուջեներին ամրագրել եկամտի առավել ռեալ և ընդգրկուն աղբյուրներ: Հակառակ դեպքում տեղական ինքնակառավարման մարմինները օրենքի լիարժեք գործողության պայմաններում, կարող են դառնալ մշտական քննադատության թիրախ, առավել ևս, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների մեծ մասի (սանմաքրում, ասֆալտապատում, աղբահանություն և այլն) գծով ո՛չ օրենսդիր և ո՛չ գործադիր մարմինների մակարդակով ծառայությունների միավորի բնեղեն ու արժեքային նորմատիվներ սահմանված կամ հաստատված չեն:

Համայնքի վարչական բյուջեն կարող է նաև օգտագործվել բյուջեով չնախատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման համար:

Ներկայումս հանրապետությունում գործող երկաստիճան կառավարման համակարգի պայմաններում տարածքային կառավարումն ուղղված է կառավարության տարածքային քաղաքականության կենսագործմանը:

Տարածքային կառավարման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները՝

1. պետական կառավարման մարմինների լիազորությունների մի մասի ապակենտրոնացումը՝ դրանք փոխանցելով մարզպետարաններին,
2. պետական կառավարման ապահովումը մարզի տարածքում,

<sup>1</sup> Տես Հավելված 1:

3. մարզում գործող տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համակարգումը՝ օրենսդրությամբ սահմանված շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային բաժանման արդյունքում մի շարք համայնքներում առաջ եկան խնդիրներ՝ կապված ֆինանսական միջոցների սղության, կառավարման թույլ մեխանիզմների, կենտրոնից ունեցած հեռավորության և մի շարք այլ գործոնների հետ: Պետությունն իր կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում փորձում է հնարավորինս լուծում տալ այն խնդիրներին, որոնք ծագել են տեղական ինքնակառավարման մարմինների կառավարման համակարգում: Այս պարագայում նկատելի առաջընթաց կա ճանապարհաշինության և դրանց վերանորոգման ուղղությամբ: Տեղական համայնքների տնտեսությունների զարգացման տեսանկյունից արդյունավետ հանգուցալուծման կարիք ունի նաև հողի հարկի և գույքահարկի, ինչպես նաև ոռոգման ջրի վարձի հավաքագրման գործընթացը: Փորձը ցույց է տալիս, որ հիշյալ հարկերի և տուրքերի գծով համայնքային բյուջեների մուտքերը ակնկալվածից զգալիորեն ցածր են, ինչն էլ ավելացնում է կախվածությունը կենտրոնացված պետական բյուջեից:

**Давид Тер-Гуланян**

### **Равномерное развитие общин как важная предпосылка развития экономики страны**

#### **Аннотация**

В данной статье автор исследует и комплексно обобщает теоретические и методологические подходы к анализу причин неравномерности развития общин и на основе этого предлагает новый подход к совершенствованию механизмов финансово выравнивания, совокупности разнонаправленных взаимосвязей общин и их кооперации. Вместе с тем на основе систематизации результатов теоретических разработок иностранных и отечественных экономистов, уточнено экономическое содержание неравномерного развития общин, проанализированы системные признаки углубления неравномерности развития, определены ее элементы, структура взаимосвязей. Наконец, на основе анализа экономических реформ в РА определены факторы и проблемы, оказавшие влияние на процесс формирования конкурентной среды, развитие конкуренции между общинами в республике, разработаны подходы и механизмы по их решению.

**David Ter-Gulanyan**

### **Proportional Development of Communities as an Important Precondition for Country's Economic Development**

#### **Abstract**

Issues related to the proportional growth of communities and reduction of their disparities are discussed in the article. It also conveys analysis of issues related to the changes of public management and public administration while making transition from planned economy to a free market. The government's role is specially emphasized due to various risks that are associated with economic and political reforms. Municipal government is well familiar with the social, economic, cultural and other needs of communities and is, therefore, more capable to resolve them, considering local conditions and overall requirements related to principles of democratic governance. Therefore, success stories and latest achievements in changes of public administration and municipal management are considered and analyzed in the article. Particularly, a special emphasis is given to the history of forming the foundations of municipal governance in other countries which needs a special consideration.

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ առավել կայացած համայնքներ ունեցող երկրներն ունեն հարուստ և ֆինանսական համահարթեցման իրականացման փորձ: Մեզ համար առանձնահատուկ և հետաքրքիր է եվրոպական երկրների փորձն ու կիրառվող մեխանիզմները, որոնք համապատասխանեցված են «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի» պահանջներին: Եվրոպական երկրների մեծ մասը համահարթեցնում է ոչ միայն եկամուտները, այլև հաշվի է առնում համայնքների ծախսային առանձնահատկությունները: Համահարթեցման դոտացիաները տրամադրվում են ինչպես բոլոր համայնքներին, այնպես էլ միայն միջինից (կամ ինչ-որ մակարդակից) ցածր ֆինանսական ներուժ ունեցողներին: Բոլոր երկրները ձգտում են ֆինանսական համահարթեցումը իրականացնել հնարավորինս պարզ բանաձևի միջոցով, որը ցանկացած համայնքին հնարավորություն կտա ինքնուրույն հաշվարկել դոտացիաները:

Ֆինանսական համահարթեցման դոտացիաները Եվրամիության անդամ մի շարք երկրներում հատկացվում են պետական բյուջեի միջոցներից, սակայն կան երկրներ, որտեղ այդ միջոցները համալրվում են առավել հարուստ համայնքների եկամուտներից (բացասական դոտացիա): Այն երկրներում, որտեղ համայնքների գերակշռող մասի համար տեղական ինքնակառավարման մարմիններին ամրագրված սեփական եկամուտները չեն բավարարում ֆինանսավորել պարտադիր լիազորություններին ուղղված ծախսերը, համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի մի մասը համայնքներին հատկացվում է ուղղակի համամասնային համալրման սկզբունքով:

Ֆինանսական համահարթեցման համակարգի արդյունավետության բարձրացման ուղիներից մեկը համայնքներին դոտացիաների հատկացումն է՝ դրանց ծախսային պահանջները գնահատման արդյունքների հիման վրա: Հիմնախնդրի լուծման այդպիսի մոտեցման արդարացիության հիմնավորումն իր արտացոլումն է ստացել աշխարհի շատ երկրների միջբյուջետային հարաբերություններում, որոնց հիմքում դրված ծախսային նորմատիվները հաշվարկվում են երկու տարբեր մոտեցումներով. հանրային ծառայությունների անհրաժեշտ չափորոշիչների փորձագիտական գնահատմամբ և ըստ համայնքների՝ հանրային ծառայությունների նվազագույն ծավալի ծախսերի սահմանմամբ:

Երկրորդ մոտեցումը, օրինակ, լայն կիրառություն է ստացել *Ավստրալիայում*՝ նպաստելով տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման տարբերությունների նվազեցմանը: Ավստրալիայում ծախսային նվազագույն նորմատիվներ սահմանված են ծախսային 11 ուղղությունների գծով, որոնց հիմքում դրված է գործոնների մի ամբողջ խումբ, մասնավորապես՝

- կրթությունը, որի գծով նվազագույն ծախսերի սահմանման գործոններ են բնակչության թիվը, բնակչության սեռատարիքային կազմը, միգրացիան, բնակչության ցրվածությունը, տնտեսական պայմանները, ուսման փուլերի արժեքը, արտադրության գործոնների գները, շրջակա միջավայրը, ծառայությունների մատուցման սանդղակը, բնակչության ժողովրդագրական կազմը, ժամանակավորապես բնակվող անձանց թիվը, ուրբանիզացիայի մակարդակը և այլն,
- բարեկարգումը և տարածքի զարգացումը, որոնց գծով նվազագույն ծախսերի սահմանման գործոններն են արտադրության գործոնների գները, հողային իրավունքները, պետության մայրաքաղաքի՝ հատուկ կարգավիճակի առկայությունը, բնակչության ժողովրդագրական կազմը, տարածքի զարգացման մակարդակը և այլն,



- մշակույթը և հանգիստը, որոնց գծով նվազագույն ծախսերի սահմանման գործոններ են միգրացիան, բնակչության ցրվածությունը, սրբավայրերի ու մշակույթի օբյեկտների առկայությունը, բնակչության ժողովրդագրական կազմը, ուրբանիզացիայի մակարդակը, բնական միջավայրը և այլն:

*Մեծ Բրիտանիայում* օգտագործվում է ծախսային նորմատիվների հաշվարկման ռեգրեսիվ վերլուծությունների մեթոդը, որի օգնությամբ որոշվում են տարածքային միավորների պահանջմունքի վրա ազդող գործոնները, իսկ ռեգրեսիայի գործակիցներն օգտագործվում են որպես կշիռներ<sup>1</sup>: Ընդ որում, ծախսային առանձին հողվածների համար կշիռները որոշվում են փորձագիտական գնահատման մեթոդով:

Շատ ավելի պարզ է ծախսային նորմատիվների հաշվարկման *կանադական* համակարգը, որի պայմաններում կրթական ու առողջապահական նպատակներով տրամադրվող տրանսֆերտները հաշվարկվում են տվյալ ծառայությունների գծով մեկ շնչի հաշվով ծախսային պահանջմունքների գնահատման հիման վրա՝ համայնքներից պահանջելով պահպանել ծառայությունների մատչելիությունը և չափորոշիչներին առնչվող որոշ սկզբունքներ<sup>2</sup>: Մինչդեռ *Դանիայում* ծախսային նորմատիվները հավասարեցվում են երկրի համար հաշվարկված նմանատիպ ծառայությունների մատուցման միջին ծախսերին<sup>3</sup>: Դրանց հաշվարկման համար օգտագործվում են տարբեր գործոններ<sup>4</sup>, որոնց կշիռներն ավելի հաճախ որոշվում են ռեգրեսիվ վերլուծության միջոցով:

*Իսպանիայում* ֆինանսական օգնությունը հաշվարկվում է 6 ցուցանիշների հիման վրա. բնակչության թիվը, տարածքի մակերեսը, Մադրիդից տարածաշրջաններ տեղափոխված պետական հիմնարկների թիվը, հեռավորությունը Մադրիդից, բարեկեցության հարաբերական մակարդակը և ֆիսկալային ներուժը: Ընդ որում, առաջին չորս գործոնները, որոնք արտացոլում են տարածքային միավորների ծախսային պահանջմունքները, ունեն ամենաբարձր կշռային գործակիցները<sup>5</sup>, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ Իսպանիայում ևս համահարթեցման տրանսֆերտների հաշվարկման համար անուղակիորեն կիրառվում են ծախսային նորմատիվները:

*Շվեդիայում* ևս տարածքային միավորների միջև ֆինանսական օգնության բաշխման ընթացքում օգտագործվում են ծախսային նորմատիվներ, որոնց հաշվարկման նպատակով կիրառվում են հանրային ծառայությունների մատուցման արժեքային տարբերություններն արտացոլող ցուցանիշներ: Օրինակ, այն համայնքներում, որտեղ բարձր է ծերերի տեսակարար կշիռը, առողջապահական ծառայությունների նկատմամբ պահանջարկը կլինի բարձր: Իսկ այնտեղ, որտեղ բարձր է դպրոցահասակ երեխաների տոկոսը, բարձր կլինեն կրթական ծախսերը:

*Պորտուգալիայում* ևս ֆինանսական օգնության բաշխման համակարգը ենթադրում է ծախսային նորմատիվների օգտագործում: Նորմատիվները որոշվում են մի ամբողջ շարք արժեքային ցուցանիշների հիման վրա՝ հետևյալ կերպ. տրանսֆերտների 45%-ը հատկացվում է բնակչության թվից ելնելով, 15%-ը հավասարապես բաժանվում է տարածքային միավորների միջև, 15%-ը հատկացվում է ըստ մակերեսի, 5%-ը՝ ըստ երեխաների թվի, 5%-ը հատկացվում է դժվարամատչելի տարածքներին, իսկ 5%-ը՝ հարկային թույլ բազա ունեցող շրջաններին: Հիմնականում գործոններն ընտրվում են այնպես, որ դրանք արտացոլեն տվյալ տարածքում ծառայությունների մատուցման ծախսերը:

<sup>1</sup> Jackman R. "Estimating Expenditure Needs: The Use of Regression Analysis in England and Wales". in Measuring Local Government Expenditure Needs, The Copenhagen Workshop, (OECD: Paris) 1981, pp. 21-38.

<sup>2</sup> Clark, Douglas H. "The Fiscal Transfer System in Canada." In Ahmad, Ehtisham., ed. 1997. Financing Decentralized Expenditures. Brookfield, Vermont: Edward Elgar, pp. 70-102.

<sup>3</sup> Lotz j. "Denmark and Other Scandinavian Countries: Equalization and Grants", In Ahmad, Ehtisham., ed. 1997. Financing Decentralized Expenditures. Brookfield, Vermont: Edward Elgar, pp. 184-212.

<sup>4</sup> Lotz j. "Denmark and Other Scandinavian Countries: Equalization and Grants", In Ahmad, Ehtisham., ed. 1997. Financing Decentralized Expenditures. Brookfield, Vermont: Edward Elgar, pp. 202.

<sup>5</sup> Brosio, Giorgio. "Financing Regional and Local Governments Italy and Spain." In Ahmad, Ehtisham., ed. 1997. Financing Decentralized Expenditures. Brookfield, Vermont: Edward Elgar. pp. 213-233.

Համահարթեցման տրանսֆերտները ծախսային նորմատիվների հիման վրա են հաշվարկվում նաև Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի նախկին համայնավարական երկրներում: Այսպես, *Բուլղարիայում* ֆինանսական համահարթեցման նպատակով կիրառվում է «նորմատիվային սուբսիդիան», որը հաշվարկվում է ռեզրեսիոն վերլուծության արդյունքում գնահատվող ծախսային նորմատիվների միջոցով: Որպես գործոններ՝ դիտարկվում են մուլտիգիպալ կազմավորման բնակչության թիվը, մեկ բնակչի հաշվով եկամուտը, գյուղերի և ավանների քանակը, հիվանդների, չաշխատող միայնակ մայրերի, հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը և այլն<sup>1</sup>:

*Չեխիայում* չնայած տրանսֆերտները բավականաչափ համեստ դեր են խաղում տեղական իշխանության մարմինների ծախսային պահանջումների ֆինանսավորման մեջ, և հիմնական շեշտը դրվում է հարկերից մասհանումների վրա, այդուհանդերձ, ստորին մակարդակի բյուջեներին տրանսֆերտների հատկացումը ևս իրականացվում է տարատեսակ ցուցանիշների օգնությամբ տեղական մարմինների ծախսային պահանջումների գնահատման միջոցով<sup>2</sup>:

Վերը նշվածը վկայում է, որ աշխարհի առաջավոր երկրներում տրանսֆերտների տրամադրումը համայնքներին իրականացվում է բյուջեների ծախսային պահանջումների հիման վրա, որի գնահատումը հիմնականում կատարվում է ծախսային նորմատիվների միջոցով: Վերջինս նպաստում է հատկացվող ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացմանը և տարածքային միավորների զարգացման համահարթեցմանը:

Կարևոր է նաև հաշվի առնել տարբեր երկրների ուսանելի փորձը համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման բնագավառում: Արևմտյան Եվրոպայի երկրներից համագործակցության նման օրինակներ առկա են Մեծ Բրիտանիայում, որտեղ միացյալ իրականացվում են այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են՝ հասարակական տրանսպորտը, հակահրդեհային ծառայությունը և աղբահանությունը: Ֆինլանդիայում, նմանապես, տեղական իշխանությունները ձևավորում են միասնական մարմիններ առողջապահության, սոցիալական ապահովության և մասնագիտական կրթության ոլորտներում: Ֆինլանդիայում գործում է 262 միջհամայնքային խորհուրդ, որոնք համագործակցում են էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, մասնագիտական կրթության և այլ ոլորտներում: Սակայն, նրանց աշխարհագրական սփռվածությունը տարբեր է, օրինակ՝ հաշմանդամների աջակցության նպատակով ստեղծված խորհուրդները գործում են երկրի ամբողջ տարածքում, իսկ որոշ հարցերով խորհուրդներ կարող են ձևավորվել միայն հարևանությամբ գտնվող համայնքների միջև: Դանիայի Յյերինգ քաղաքում, թափոնների վնասագերծման գործարանի համատեղ կառուցման և շահագործման նպատակով, չորս համայնքների կողմից ստեղծվել է ընկերություն:

Իրավական տեսանկյունից միջհամայնքային խորհուրդները հանդես են գալիս որպես առանձին վարչական և ֆինանսական միավորներ, սակայն նրանք օժտված չեն սեփական հարկեր սահմանելու իրավունքով և ձևավորում են իրենց բյուջեն պետական դրամաշնորհներից և համայնքների ներդրումներից, որոնց դրույքաչափերը սահմանվում են մասնակից համայնքների կողմից: Նման օրինակներ գոյություն ունեն են նաև Կենտրոնական Եվրոպայի այն երկրներում, որտեղ համայնքները հիմնականում ավելի մեծ են, օրինակ՝ Բուլղարիայում և Լեհաստանում:

Ե՛վ Բուլղարիայում, և՛ Լեհաստանում միջհամայնքային համագործակցության ոլորտներից, պետական իշխանությունների կողմից, ամենից շատ աջակցություն է ստացել համագործակցությունը պինդ թափոնների վնասագերծման բնագավառում: Լեհաստանում կատարված ուսումնասիրությունների համաձայն, այդ ծառայությունից դրական տնտեսական արդյունք է ստացվում, երբ դրանից օգտվողների թիվը հարյուր հազարից փոքր չէ:

Որոշ ծառայությունների իրականացման ժամանակ (օրինակ՝ թափոնների վնասագերծում, ջրամատակարարում, աղտոտված ջրի մաքրում) միջհամայնքային առևտրային ձեռնարկու-

<sup>1</sup> Bulgaria Ministry of Finance. "Methodology of Determining Budgetary Relationships", May 2001, [www.minfin.gov.bg](http://www.minfin.gov.bg).

<sup>2</sup> Organization for Economic Cooperation and Development. 1994. State Budget Support to Local Governments, (Paris: OECD), G. Marcoued.

թյուններն ավելի ճկուն և հեշտ են իրականացնում այն, քան տեղական ձեռնարկությունները: Գոյություն ունեն նաև համագործակցության օրինակներ՝ տեղական տնտեսության զարգացման աջակցության և բնապահպանության բնագավառներում:

Փոքր համայնքների միջև ասոցիացիաների ստեղծման մի այլ ուղղություն է տարածաշրջանի տնտեսական զարգացման աջակցությունը որևէ բնագավառում (օրինակ, զբոսաշրջություն): Չեխիայի Հանրապետությունում, փոքր հարևան համայնքների միջև համագործակցության փոխարեն, շատ հաճախ այդ ծառայությունները մատուցվում են տեղական կենտրոնի կողմից, որը սպասարկում է ոչ միայն իր քաղաքացիներին, այլ նաև հարևան գյուղերի բնակիչներին: Գյուղական համայնքները չեն մասնակցում այդ ծառայությունների ֆինանսավորմանը, բայց այսպիսի պայմանավորվածությունը նշանակում է, որ գյուղական բնակչությունը չունի հնարավորություն ազդելու այդ ծառայությունների իրականացման ձևի վրա:

Միջհամայնքային համագործակցության օրինակները ոչ միշտ են հանգեցնում բավարարողյունքների: Որպեսզի համագործակցությունը իրականում գործի և դառնա արդյունավետ, անհրաժեշտ է որոշակի հիմնախնդիրների լուծում: Այս հանգամանքը պահանջում է առանձին համայնքների փոխզիջումներ որոշակի շահերի հարցում: Տեղական ղեկավարները պետք է պայմանավորվեն համագործակցության շուրջ, որը որոշակի դեպքերում ազդում է իրենց անձնական իշխանական ամբիցիաների վրա:

Լիազորությունների համատեղ իրականացումը և ֆինանսական ներդրումները, պահանջում են որոշ գործառնության ծախսերի կատարում, որոնք բխում են կազմակերպարարական բարդ կառուցվածքից: Հետևաբար, դժվար է ակնկալել, որ սպասվող օգուտը կապահովի բավարար շարժառիթներ, և կամավոր համագործակցությունը լուծում կտա այն բոլոր խնդիրներին, որոնք կապված են փոքր համայնքների ֆինանսական անբավարար միջոցների հետ: Համագործակցության զարգացումը կենտրոնական կառավարության կողմից խթանման կարիք ունի: Սլովակիայի փորձագետները նույնիսկ առաջարկում են համայնքների միջև համագործակցության օրենքով ամրագրված, որոշակի պարտադիր ձևեր: Վերլուծելով որոշ երկրների փորձը, կարելի է եզրահանգել, որ միայն կամավոր բնույթի խթաններն ակնհայտորեն բավարար չեն: Դժվար է գտնել ֆինանսական խթանների օրինակներ նաև Լեհաստանում, որտեղ համայնքներն, ընդհանուր առմամբ, մեծ են և Սլովակիայում, որի վարչական միավորները շատ փոքր են: Եվ հակառակը, Բուլղարիայում, որտեղ համայնքների չափերը հարաբերականորեն մեծ են, կառավարությունը առաջարկում է հատուկ դրամաշնորհներ՝ աղբահանության ոլորտի միասնական զարգացման նպատակով: Այդ դրամաշնորհները ծածկում են տվյալ ծրագրի կապիտալ ներդրումների մեծ մասը: Համագործակցության աջակցմանն ուղղված առավել բարդ մոդել առաջարկված է Հունգարիայում, որտեղ 500-ից պակաս բնակիչ ունեցող գյուղերը կարող են դրամաշնորհներ ստանալ միայն այն դեպքում, եթե նրանց պատկանում է նոտարական գրասենյակ կամ էլ նրանք մատուցում են որոշ ծառայություններ ասոցիացիաների միջոցով: Ոչ վաղ անցյալում իրականացվում էր դպրոցական ավտոբուսների գնման հատուկ դրամաշնորհ: Դա հնարավորություն էր ստեղծելու վերացնել փոքր գյուղերում ծախսատար փոքր դպրոցները և կզարգացներ տրանսպորտային համակարգի հնարավորությունները, որպեսզի երեխաներին հնարավորություն ընձեռվեր հաճախել ավելի հեռավոր դպրոցներ: Ինչևէ Հունգարացի փորձագետները պնդում են, որ համակարգը ոչ այնքան հետևողական է: Ասոցիացիաների կայացմանն ու զարգացմանը խոչընդոտում է փոքր համայնքներին տրամադրվող դրամաշնորհները, քանի որ դրանք թուլացնում են համագործակցելու շարժառիթները: Այսպես՝ օրինակ, նույն դպրոցական ավտոբուսների գնման դրամաշնորհը չի կրում հետևողական բնույթ, այն չի լուծում բնակչության առօրյա գործունեությանն առնչվող տրանսպորտային համակարգին առնչվող խնդիրները:

Համայնքային ասոցիացիաներն ի սկզբանե ձևավորվել են վարչական, այնուհետ նաև այլ խնդիրների լուծման շուրջ: Ինչպես վերը նշված է, մի շարք երկրներում կենտրոնական իշխանությունների կողմից առաջարկվում է համագործակցություն՝ հատուկ ուղղվածությամբ

դեպի վարչական ծառայությունների ապահովումը: Առավել ցայտուն դա արտահայտված է Յունգարիայում, որտեղ 1000-ից պակաս բնակիչ ունեցող համայնքներին առաջարկվում է ձևավորել համատեղ նոտարական գրասենյակներ: Այդ գրասենյակները պետք է ապահովեն ծառայությունների մատուցումը մի քանի փոքր համայնքների համար: Իրականում, փոքր համայնքների միայն 2/3-ն է մտնում այդպիսի համագործակցության մեջ: Ավելին, վերջին մի քանի տարիների ընթացքում, նոտարական գրասենյակների թվի լճացում է դիտվում և նույնիսկ՝ նվազում: 1997-ին, միացյալ գրասենյակների ամրապնդման և լրացուցիչ աջակցություն ցուցաբերելու նպատակով, ստեղծվեց սուբսիդավորման հատուկ համակարգ: 2000-ին այս համակարգը առաջարկվեց որպես նորմատիվային: Այդպիսով, նախորդ տասնամյակում նկատված համատեղ գրասենյակների թվի նվազման հետևողական միտումը կասեցվեց: Միացյալ գրասենյակներ հիմնականում գործում են 1000-2000 բնակչության առկայության դեպքում, այլ ոչ թե 5000, ինչպես դա առաջարկվում էր կառավարության կողմից: Յունգարիայում առկա են նաև ծառայությունների համատեղ իրականացման այլ ոլորտներ՝ ինչպես օրինակ, մանկապարտեզները և միջնակարգ դպրոցները: 1999-ին երեխաների ավելի քան 7 %-ը այցելում էին համատեղ կառավարվող մանկապարտեզներ և դպրոցներ: Յունգարիայում գործում է մոտ 1400 ասոցիացիա, որոնց մեծամասնության գործունեությունը սկսված է մեկ գործառույթի իրականացման վրա: Հաճախ նրանք ստիպված են լինում համագործակցել, եթե, օրինակ, առկա են ընդհանուր ենթակառուցվածքներ, որոնք չեն կարող բավարար կերպով սպասարկվել մեկ համայնքի կողմից: Համայնքների համագործակցության մասին նոր օրենսդրությունն իր դրական ազդեցությունն է ունենում այն տարածաշրջաններում, որտեղ մեծ թիվ են կազմում փոքր համայնքները: Դա վկայում է համագործակցության անհրաժեշտության մասին: Համեմատելով երկրի տարբեր տարածաշրջաններ, երևում է, որ Մեծ Դաշտավայրի համեմատաբար մեծ գյուղերում ասոցիացիաների անհրաժեշտությունն ավելի փոքր է, քան Տրանսդանուբիայում և Յուսիսային Յունգարիայում: Համայնքների ասոցիացիաների մի այլ տեսակ են՝ ինստիտուցիոնալ վերահսկման նպատակով ստեղծված ասոցիացիաները, հիմնականում դա վերաբերում է միջնակարգ կրթության ոլորտին: 1996-ին առկա էր 489 այդպիսի ասոցիացիա: Համեմատաբար քիչ է աղբահանության և ենթակառուցվածքների սպասարկման հարցերով զբաղվող ասոցիացիաների թիվը՝ ընդամենը 51:

Ելնելով Հայաստանում համայնքների խոշորացման հարցի կարևորությունից՝ ստորև ներկայացված են տվյալներ որոշ երկրներում համայնքների խոշորացման վերաբերյալ: Պարզվում է, որ նախորդ շուրջ կես դարի ընթացքում մի շարք երկրներում տեղի են ունեցել համայնքների թվի կտրուկ փոփոխություններ: Մանրամասն դիտարկելով Լատվիայի և Էստոնիայի փորձը՝ կարելի է ասել, որ համայնքների խոշորացումը բավականին զգայուն հարց է և հաճախ մերժվում է թե՛ բնակչության և թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ հիմնականում անձնական շահադիտական նկատառումներից ելնելով:

Յունաստանում 1997 թվականին Համայնքների ազգային միության արտակարգ կոնգրեսի կողմից հաստատվեց տեղական ինքնակառավարման առաջին մակարդակի վերակազմավորման կառավարության ծրագիր: Այսպես կոչված, «Կապոդիստրիաս ծրագիրը» (“Capodistrias Plan”) իրենից ներկայացնում էր ոչ միայն համայնքներն իրար միացնելու, այլ նաև ազգային և տարածքային զարգացման և աշխատանքների հնգամյա ծրագիր (1997-2001թթ.): «Կապոդիստրիաս ծրագրի» իրականացման արդյունքում համայնքների ընդհանուր թիվը կրճատվեց ավելի քան 80 %-ով: Այս ցուցանիշը կարող էր նույնիսկ ավելի մեծ լինել, եթե Աթենքի ու Սալոնիկի մետրոպոլիտենները, որոնք դուրս մնացին խոշորացումների ծրագրից և ընդգրկվում են ավելի քան 150 համայնքներ, չընդգրկվեին խոշորացման ցուցանիշի հաշվարկի մեջ: Համայնքների բնակչության միջին թիվը մոտավորապես 1600-ից կտրուկ աճեց մինչև ավելի քան 11000, միաժամանակ, յուրաքանչյուր պրեֆեկտուրայում համայնքների միջին թիվը 116.5-ից նվազեց մինչև 20.66:

Լատվիայի տարածքի մեծ մասը ներկայումս նոսր է բնակեցված: 2.35 միլիոն բնակչության 1/3-ը բնակվում է Ռիգայում: 1.23 միլիոն լատվիացիներ բնակվում են 64,000 ք.կմ տարածքում: Նշված տարածքը հավասար է Իռլանդիայի չափերին: Լատվիայի բնակչությունը միտում ունի վերաբնակվելու առավել խիտ բնակեցված տարածքներում: Նշվածն իր ազդեցությունն ունի համայնքների բնութագրի վրա: Ընդամենը 25 համայնքներ ունեն 10,000-ից ավելի բնակչություն: 23 համայնքների բնակչության թիվը կազմում է յուրաքանչյուրում 5,000-10,000 մարդ: Համայնքների 70 %-ն ունի ավելի քան 2,000 բնակիչ, և համայնքների 1/3-ի բնակչության թիվը 1,000-ից պակաս է: Լատվիայի ազգաբնակչության շուրջ 20 %-ը բնակվում է 2,000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքներում: Կոպիտ հաշվարկներով Լատվիայի բնակչության 1/3-ը բնակվում է 5,000-ից փոքր բնակչություն ունեցող համայնքներում: 1989-2001 թթ. ընթացքում Լատվիայի բնակչության թիվը նվազել է 13 %-ով, մեծամասամբ գյուղական շրջաններում: Համայնքները չխոշորացնելու պարագայում շատ փոքր համայնքների թիվը հավանաբար կավելանա: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա մշակվել են 4 չափորոշիչներ, ըստ որոնց պետք է իրականացվի համայնքների խոշորացումը: Դրանք են.

1. Բնակչության նվազագույն թիվը պետք է լինի 5,000 մարդ:
2. Պետք է առկա լինի զարգացած կենտրոն առնվազն 2,000 բնակչությամբ:
3. Հեռավորությունը կենտրոնից չպետք է գերազանցի 30 կմ-ը:
4. Պետք է առկա լինեն համայնքի բոլոր մասերը կենտրոնին կապող ճանապարհներ:

Էստոնիայի համայնքների թիվը կազմում է 253 (47 քաղաքային և 206 գյուղական): Բոլոր համայնքների գրեթե կեսի բնակչության թիվը 2,000-ից պակաս է: Էստոնիայում նախապատվությունը տրվում է տարածքային բարեփոխումների խառը, այն է՝ «մտրակի և բլիթի» քաղաքականությանը: Էստոնիայի կառավարությունը 1998 թվականի գարնանը հայտարարեց, որ մինչև 2002 թվականի աշունը կիրականացվի համայնքների կամավոր խոշորացում: 2002 թվականի աշնանից հետո կիրականացվի պետության կողմից պարտադրված խոշորացում: Համայնքների խոշորացումը կատարվեց՝ հիմք ընդունելով հետևյալ չափորոշիչները.

1. Ընդհանուր առմամբ, համայնքի բնակչության թիվը պետք է գերազանցի 3.500-ը:
2. Քաղաքի հարևանությամբ գտնվող գյուղական համայնքների բնակչության թիվը պետք է լինի առնվազն 4,500:
3. 10,000-ից պակաս բնակչությամբ բնակավայրերն ու քաղաքները պետք է դասվեն գյուղական համայնքների խմբին:
4. Տեղական ինքնակառավարման միավորը պետք է ձևավորվի որպես մեկ ամբողջություն՝ մեկ կամ մի քանի միմյանց հետ սերտ փոխհարաբերությունների մեջ գտնվող բնակավայրերով:
5. Այն դեպքում, երբ որևէ չափի համայնքի բնակավայրերից որևէ մեկն ավելի սերտ կապեր ունի հարևան համայնքի և ոչ թե իր համայնքի մյուս բնակավայրերի հետ, ապա այդ բնակավայրը պետք է միավորվի հարևան համայնքի հետ:

Համաձայն կառավարության 2001-ի հունիսի 5-ի «Վարչատարածքային բաժանման վերակազմակերպումը նախաձեռնելու մասին» հրամանի, գործող 247 համայնքների փոխարեն պետք է ստեղծվեին 108 համայնքներ: Հետագա փորձը ցույց տվեց համայնքների ներկայացուցիչների բացասական վերաբերմունքը խոշորացման վերաբերյալ: Սա նշանակում է, որ համայնքները բարեփոխման ընթացքի և դրական ելքի առումով վստահության կարիք ունեն: Եվ այս գործընթացը պետք է սահմանվի իրավական ուժ ունեցող փաստաթղթերով: Եթե քաղաքական գործիչները վստահ չեն բարեփոխման անհրաժեշտության համար, և վախենում են ոչ ժողովրդավարական որոշումներ կայացնելուց, ապա բարեփոխումը չի իրականացվի: Համաձայն Էստոնիայի վարչատարածքային բաժանման մասին օրենքի, համայնքի ավագանին նախքան խոշորացման մասին որոշում ընդունելը պարտավոր է «բացահայտել բնակչության կարծիքը»: Սակայն օրենքում նշված չէ, թե ինչպես դա անել: Ուստի ավագանին կարող է ընտրել ոչ թե հանրաքվե անելու ուղին, այլ բնակչության կարծիքին ծանոթանալ հանրային լսումների,

հարցազրույցների, հարցաթերթիկների և այլ միջոցներով: Ավագանին կարող է որոշումն ընդունել ինքնուրույն, քանի որ ավագանու անդամներն ընտրվում են բնակչության կողմից և ներկայացնում են բնակչության կարծիքը: Հանրաքվեն ունի հստակ առավելություն այն առումով, որ այն հանդիսանում է ուղղակի ժողովրդավարական գործիք:

Միջազգային փորձը վկայում է, որ մի շարք խնդիրների լուծման արդյունավետությունը տեղերում պայմանավորված է նրանով, որ տարածքային կառավարման մարմինները ոչ միայն տարածքային առումով ավելի մոտ են բնակչությանը, այլև լավ իրազեկված են մարդկանց հոգսերի, տեղի պայմանների և հնարավորությունների մասին, ուստի կարող են ավելի արագ արձագանքել տարբեր խնդիրներին, որոնք առաջանում են տարածքային մակարդակում: Եվրամիության անդամ երկրներում իշխանություններին հասցեագրված բնակիչների բողոքների մեծ մասը լուծվում է հենց տարածքային կառավարման մակարդակում: Տեղական ինքնակառավարման մարմինները հնարավորություն ունեն ասպիտակելու համայնքում գործող տարբեր ծառայությունների հորիզոնական ինտեգրումը և կոորդինացումը, դրանց գործունեությունը նպատակամղելու միասնական հիմնախնդրի լուծմանը, ինչը, վերջին հաշվով, հանգեցնում է համայնքի սոցիալ-տնտեսական և մշակութային համալիր զարգացմանը: Այս առումով ուսանելի փորձ է կուտակվել, մասնավորապես, ԱՄՆ-ում: Ամերիկայի Միացյալ Նահանգները դաշնակցային սահմանադրական հանրապետություն է բաղկացած 50 նահանգներից: Անկախությունը հռչակվեց 1776թ. հուլիսի 4-ին, իսկ 1787թ. սեպտեմբերի 17-ին դաշնային համաձայնագրով նահանգները միացան, մեկ հանրապետություն կազմելով<sup>1</sup>: ԱՄՆ-ում, օրինակ՝ Միսսուրի նահանգից սկսած 1875թ. նահանգները սկսեցին փոխել իրենց սահմանադրություններն այնպես, որ դրանք սկսեցին ներառել բնակավայրերի ինքնակառավարման փաստը<sup>2</sup>: Այսօր շատ նահանգներ ունեն ինքնակառավարմանը վերաբերող այս կամ այն սահմանադրական նորմեր: Այդ նորմերից, մեծամասնության համաձայն բնակավայրի բնակիչներն իրենք են կազմում և հաստատում իրենց օրենսգիրքը, որը նրանց համար ծառայում է որպես սահմանադրություն:

Միջազգային փորձը վկայում է, որ արդյունավետ է հատկապես հանրային այնպիսի կառավարման համակարգը, որն ուղղված է որոշակի խնդիրների լուծմանը: Փոփոխությունները կյանքում և աշխատանքում անդրադառնում են հասարակության կյանքի գրեթե բոլոր կողմերի վրա և, հետևաբար նաև կառավարման բոլոր մակարդակների վրա: Վերլուծելով գլոբալ տեխնոլոգիաների ազդեցությունը մեր կյանքի վրա՝ դոկտոր Ջերի Դ.Մակկալեբը ԱՄՆ-ի օրինակով հիմնավորել է, որ մարդիկ պետք է միավորվեն լուծելու համար այն խնդիրները, որոնք, ըստ էության, չեն ճանաչում տարածքային սահմաններ<sup>3</sup>:

Տարբեր երկրներում, անկախ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակներից, որոշ համայնքներ ավելի հարուստ են մյուսներից և ի վիճակի են ինքնուրույն կառավարել իրենց գործերը: Մյուսներն ավելի մեծ կախվածություն ունեն կենտրոնական իշխանությունից ստացվող օգնությունից: Սակայն, ընդհանուր առմամբ, վերջին տարիներին ավելի ակնառու է դառնում տարածքային կառավարման մարմինների իշխանության աճի տեմպերը: Այս ամենն, իր հերթին, պայմանավորված է յուրաքանչյուր համայնքի բնակչության քանակից և զբաղեցրած տարածքից:

Հայաստանում, ինչպես հայտնի է, համայնքները միմյանցից խիստ տարբերվում են նաև բնակչության թվով: Համանման խնդիր գոյություն ունի նաև այլ երկրներում<sup>4</sup>: Օրինակ, համայնքի բնակչության միջին թիվը Չեխիայում 1680 մարդ է, Սլովակիայում՝ 1846, Հունգարիայում՝ 3290, ՀՀ գյուղական համայնքներում՝ 1443: Հազարից պակաս բնակչություն ունեցող համայնքներն այս երկրներում համապատասխանաբար կազմում են ամբողջի՝ 79,8%, 68,5%, 52,6%-ը, ՀՀ-ում՝ 52,5%-ը<sup>5</sup>: Ինչպես հայտնի է, համայնքի բնակչության թիվն ըստ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի, համարվում է համայնքներին տրվող լրավճարների չափի

<sup>1</sup> [www.en.wikipedia.org/wiki/United\\_States](http://www.en.wikipedia.org/wiki/United_States)

<sup>2</sup> Decentralization of the Socialist State. Washington D. C. 1995, p.32.

<sup>3</sup> <http://usinfo.state.gov/journals/itdhr/0499/ijdr/ijdr0499.htm>

<sup>4</sup> Հանրային քաղաքականության վերլուծություն: Ե., «Պետական ծառայություն» հրատարակչություն, 2005, էջ 152:

<sup>5</sup> Օրդյան է., Մանուկյան Հ., Աղքատության նվազեցման հիմնախնդիրները ՀՀ համայնքներում, Երևան, ՄԻԺ հրատ., 2001, էջ 16:

հաշվարկման գործոն: Այս առումով առաջադրված հիմնախնդրի կարգավորման համար ակնհայտ է դառնում, որ վարչատարածքային համակարգում անհրաժեշտ է իրականացնել բարեփոխումներ՝ խոշորացման միջոցով կրճատել դրանց թվաքանակը:

Նկատի ունենալով համայնքների խոշորացման հիմնախնդրի սոցիալ-քաղաքական ասպեկտներն, անհրաժեշտ է դրան մոտենալ փուլային սկզբունքով՝ կատարել համայնքների խոշորացման վերաբերյալ համայնքների բնակչության կարծիքների սոցիոլոգիական հետազոտություն և արդյունքների ամփոփման հիման վրա մշակել ռազմավարության հայեցակարգ: Հիմնախնդրի լուծման համար օգտակար կլինի նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը<sup>1</sup>:

Շվեդիայում 1951 թվականից սկսած մինչև 1999 թվականը համայնքների թիվը 2498-ից կրճատվել է մինչև 289-ի՝ 1952 թվականին կազմելով 1037, 1971-ին՝ 464 համայնք: Շվեդական ամենափոքր համայնքն ունի 3.000, իսկ ամենամեծը՝ Ստոկհոլմը՝ 700.000 բնակիչ:

Դանիայում 1970 թվականին իրականացված վարչատարածքային բարեփոխումների արդյունքում 1.300 համայնքների թիվը կրճատվեց և հասցվեց 275-ի (ներառյալ Կոպենհագենը և Ֆրեդերկսբուրգը):

Ներկայումս Դանիայում համայնքների 43,6%-ն ունեն 5-10 հազար բնակիչ: Ամենամեծ համայնքն ունի 282.100, իսկ ամենափոքրը՝ 2.400 բնակիչ:

Գերմանիայում 1965-1975 թվականներին տեղի ունեցան համայնքային բարեփոխումներ, որոնց նպատակն էր մեծ քաղաքներին իր անընդհատ աճող բնակչության համար զարգացման ավելի լայն հնարավորություններ ընձեռելը և միաժամանակ գյուղական բնակավայրերում տարածքային կառավարումն ուժեղացնելը: Այդ ժամանակահատվածում արևմտագերմանական համայնքների թիվը 24.000-ից նվազեց մինչև 8.500: Ամենաարմատական բարեփոխումը, այս առումով, իրականացվեց Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիայում, որտեղ համայնքների թիվը նվազեց 6 անգամ:

Լեհաստանում պետական իշխանության մարմինների վարչական բարեփոխումների ընթացքում փոփոխվեց երկրի դեռևս 1975-ից գործող տարածքային բաժանումը, երբ ողջ երկիրը բաժանված էր 49 վոյեվոդությունների և մոտավորապես երկուսուկես հազար համայնքների: Բարեփոխումները նախատեսում էին նախ կրճատել վոյեվոդությունների թիվը, որոնք չափազանց շատ էին ժողովրդավարական և ապակենտրոնացված պետության համար և հիմնադրել իշխանության տարածքային մարմինների երկրորդ մակարդակը նույնպես՝ օկրուգը:

Սեյմի որոշման համաձայն 1998թ. ամռանը Լեհաստանը 1990թ. հունվարի 1-ի դրությամբ վարչականորեն բաժանվեց 16 վոյեվոդությունների և 373 օկրուգների, ներառյալ 65 քաղաքային օկրուգները: Միաժամանակ լուծարվեցին 268 տարածքային ներկայացուցչությունները, և դրանց գործառույթների մեծ մասը փոխանցվեցին նոր օկրուգներին:


Էստոնիայում համայնքների թիվը 1890-ին 1000-ից նվազեց 387-ի, իսկ 1938-39 թվականներին դարձավ ընդամենը 281:

Անդրադարձը համայնքների խոշորացման ոլորտում տարբեր երկրներում տարվող քաղաքականությանը և ձեռք բերված արդյունքներին հավաստում է, որ համայնքների խոշորացմանն ուղղվելիք քաղաքականությունը մեր երկրում հնարավորություն կտար խուսափել ֆինանսական միջոցների փոշիացումից, միավորված միջոցների հաշվին լուծել փոքր համայնքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարձրացնել միջոցների օգտագործման արդյունավետությունը:

Համայնքները միմյանցից խիստ տարբերվում են նաև բնակչության թվաքանակով: Համեմատության համար Հայաստանում միջին հաշվով մեկ համայնքում բնակվում է 3547 մարդ, առանց Երևան քաղաքի՝ 2330, իսկ միայն գյուղական համայնքներում՝ 1346 մարդ: Ընդ որում, մինչև 100 բնակիչ ունեցող կա 36 համայնք, 101-ից 200 բնակիչ ունեցող՝ 60, 201-ից 500 բնակիչ ունեցող՝ 176, 501-ից 1000 բնակիչ ունեցող՝ 185, 1001-ից 3000 բնակիչ ունեցող՝ 318, 3001-ից բարձր բնակիչ ունեցող՝ 96 գյուղական համայնք:

<sup>1</sup> Ղազարյան Է., Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման կատարելագործման հայեցակարգային ուղղությունները: Երևան, «Դար», 2004, էջ 63, 66 74, 81, 83:

Համայնքներն՝ ըստ բնակիչների թվաքանակի



ՀՀ օրենսդրությամբ տարածաբանաբանական մարմինների լիազորություններն ունեն համընդհանուր և համահավասար բնույթ և տարածվում են բոլոր համայնքների վրա՝ անկախ դրանց մեծությունից և բնակչության թվից: Առաջին հայացքից ժողովրդավարական և արդարացի թվացող այս դրույթն իրականացման ընթացքում հանդիպում է մեծ դժվարությունների: Փոքր, գաճաճ համայնքները, իսկ դրանց տեսակարար կշիռը, ինչպես երևաց բերված տվյալներից, բավականին բարձր է, որպես կանոն չեն կարողանում իրացնել իրենց վերապահված լիազորությունները, որոնց պատճառով պարտադիր և պետության կողմից պատվիրակված բազմաթիվ լիազորություններ մնում են չկատարված: Արդյունքում համայնքի բնակչության սոցիալական, կոմունալ-կենցաղային, մշակութային և կենսականորեն կարևոր այլ խնդիրներն ստանում են անբավարար լուծում: Այլ խոսքով, օրենսդրորեն ապահովելով բնակավայրերի տարածքային կառավարման իրականացման իրավունքը, հաշվի չի առնվել համայնքների՝ այդ իրավունքի իրականացման ունակությունը, առանց որի իրավունքը կրում է դեկլարատիվ բնույթ<sup>1</sup>:

Գրականության մեջ ձևավորվել են համայնքների խոշորացման ձևերի և կարգավիճակի վերաբերյալ որոշ մոտեցումներ<sup>2</sup>: Ըստ դրանց համայնքները օրենքով կարող են միավորվել, եթե դրանց բնակավայրերը միաձուլվել են հետևյալ դեպքերում՝ համայնքների կամավոր նախաձեռնությամբ՝ ավագանիների այդ մասին ընդունած որոշումների հիման վրա կամ՝ ելնելով հասարակության շահերից, կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ. եթե տեղական ընտրությունների արդյունքում համայնքում երկու անգամ անընդմեջ չի ձևավորվում տարածքային մարմիններից մեկը: Գոյություն ունի փոքր համայնքների հիմնախնդիրների լուծման մի այլ ուղի ևս՝ միջհամայնքային միավորումների ստեղծումը, որն առանձին վերլուծության առարկա է:

Տեղական ինքնակառավարման աջակցության կարևոր բնագավառներից է տարածքային մակարդակի աջակցությունն՝ ըստ ֆինանսավորման և ֆինանսական գործունեության համար կայուն և հուսալի մեթոդների կիրառման: Չնայած այն ծրագրերը, որոնց շրջանակներում իրականացվել էին նպատակների ավելի քան 75%-ը, արդեն կրճատվել են, սակայն հաջողակ ծրագրերի բացարձակ թիվը ցուցանիշների մեծությամբ մնում է անփոփոխ: Մի քանի ծրագրերի հաշվետվություններում արձանագրվել է, որ նախատեսված ստուգումը չի իրականացվել բյուջետային ներդրումների կրճատման պատճառով: Կարևոր ձեռքբերումներից մեկը կայուն ֆինանսական աղբյուրների մեջ տարածքային մարմինների կառավարման հասանելիության ընդլայ-

<sup>1</sup> Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանի Հանրապետությունում: Մարդկային զարգացման ազգային զեկույց (UNDP), Հայաստան, 2001 էջ 59:

<sup>2</sup> «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում»: Քաղաքականության տարբերակներ և ուղիներ: Եր., Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2004, էջ 93:



նումն է (2000-2003թթ. միջին ցուցանիշը կազմել է 46%): Այս բնագավառում գործունեության ցածր արդյունքները վկայում են լուրջ խնդիրների մասին, որոնց հետ առնչվում են տարածքային կառավարման մարմինները կայուն ֆինանսավորման աղբյուրների այլընտրանքների կառավարման հասանելիության դեպքում:

**Давид Тер-Гулянян**

### **Возможности применения международного опыта сокращения неравномерности общин**

#### **Аннотация**

Статья посвящена изучению теоретических, методологических, законодательных, организационных и институциональных проблем неравномерности развития общин в РА и разработке концептуальных и конкретных механизмов и мероприятий по их разрешению. В работе особое внимание уделено теоретико-методологическим и научно-практическим вопросам, связанным с усовершенствованием политики по сокращению неравномерности развития общин и повышением уровня благоприятствования конкурентной среды в сельских общинах в Республике Армения. Также уделяется особое внимание изучению поучительного зарубежного опыта и перспективам его применения в Армении с учетом местных особенностей.

**David Ter-Gulanyan**

### **Prospects of Use of International Experience of Reducing Disparities in Communities' Development**

#### **Abstract**

The article provides the analysis of issues related to changes in public management and public administration from planned economy to free market. The role of government is especially emphasized due to various risks that are associated with economic and political reforms. Municipal government is well familiar with the social, economic, cultural and other needs of communities and is therefore more capable to resolve them, considering local conditions and overall requirements related to principles of democratic governance. Therefore, success stories and latest achievements in changes of public administration and municipal management are considered and analyzed in this article. Particularly, a special emphasis is given to the history of forming the foundations of municipal governance in the United States, Italy, Switzerland and other countries.

# ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԻՆԵ ԱՂԱՅԱՆ

ՆՊԾՆ, Կ. Գ. Ք., դոցենտ

## ՀԱՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍԱՆՏԻՋՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

XIX դարի 70-ական թվականները բեկումնային էին հայ իրականության համար: Երկրամասը դիմորոշվում էր դեպի կապիտալիստական տնտեսաձևը: Վերանում էին ավատական հարաբերությունները: Օրակարգում էր դրված հին տնտեսական կացութաձևերի պատմական գոյության իրավունքը: Այս իմաստով բացառիկ արժեք է ներկայացնում հայտնի տնտեսագետ Սողոմոն Եղիազարյանի՝ Անդրկովկասի հաստատությունների պատմության հետազոտությանը նվիրված աշխատությունը<sup>1</sup>, որով նպատակ էր հետամտում ուսումնասիրել գյուղական համայնքի ու քաղաքային ցեխային կազմակերպությունների՝ համքարությունների պատմական հետազոտումը, նրանց կառուցվածքը, տնտեսական ու սոցիալական կացության նկարագիրը:

XIX դարի երկրորդ կեսին համայնքը դարձել էր հայ պատմական մտայնության հիմնական հարցերից մեկը: Նոր հասարակական հարաբերությունների պայմաններում հատկապես առանձնահատուկ նշանակություն էր ստացել համայնական կացութաձևի գոյության խնդիրը: «Մենք,- գրում է Ս.Եղիազարյանը,- ... առաջին անգամ փորձ ենք անում տալ գյուղական համայնքի յուրահատուկ կազմակերպության ուրվագիծը»<sup>2</sup>: Իր վրա կրելով ռուս հայտնի տնտեսագետ Մ. Կովալևսկու ազդեցությունը, Եղիազարյանը գտնում է, որ համայնական հողատիրությունը հատուկ է եղել բոլոր ազգերին նրանց զարգացման սկզբնական շրջանում: Եղիազարյանը չի համաձայնում այն տեսակետի հետ, թե հայ ժողովրդին բնորոշ է հողատիրության միայն համայնական ձևը: Նրան չի զարմացնում այն, որ գյուղացիները իրենց հատկացված հողի նկատմամբ բացի տիրապետման և օգտագործման իրավունքից այլ իրավունքներ չունեն և մեծ համոզվածությամբ նկատում, թե ինչքան էլ շարունակվի գյուղական համայնքի գոյությունը, այն չի կարող փոխակերպվել կամ անցնել սեփականության իրավունքի: Այս առումով առաջ է քաշում մի տեսակետ, թե գյուղական բնակչությունը պետք է շատ ծանոթանա օրենքներին, ինչի արդյունքում նրա մոտ ավելի կուժեղանա այն մտայնությունը, թե պետական հողերը նրան են հատկացվում միայն օգտագործման նպատակով, որոնց կամայական օտարումը արգելվում է օրենքով: Թերևս սա է պատճառը, որ նա հակադրվում է այն հետազոտողներին, որոնք հողի օգտագործման իրավունքը հիմնավորում են սովորության իրավունքի միջոցով, իբրև թե գյուղացիական դասին ընդհանրապես խորթ է հողի մասնավոր սեփականությունը հասկացությունը, որ հայ ժողովրդին բնորոշ էր միայն համայնական հողօգտագործումը, որ ցանկացած հող համարվում է հասարակության սեփականություն: «Որ համայնքը երբևիցե գոյություն ուներ և գոյություն ունի ոչ միայն Հին Հայաստանի կազմի մեջ մտնող Անդրկովկասի շրջաններում, այլև ամբողջ Պարսկաստանում և Փոքր Ասիայում, դա փաստ է», - նկատում է Ս.Եղիազարյանը: Մյուս կողմից էլ ավելացնում, թե. «մասնավոր հողային սեփականության միաժամանակյա գոյությունը նույնպես կասկածի ենթակա չէ»<sup>3</sup>:

Գյուղական համայնքի նկարագրի, էության ուսումնասիրության հարցում հայ տնտեսագետը հատկապես կարևորում էր համայնական հողօգտագործման խնդիրները: Հայաստանում վերջինիս հիմքը համփա-չարեքային համակարգն էր: Մեկ համփայի հողաբաժին ստանում էին 16 շունչ ունեցող ընտանիքները, դրանից քիչ, բայց զույգ թվով ընտանիքները համապատաս-

<sup>1</sup> С.А.Егизаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч.1 и 2.

<sup>2</sup> С.А.Егизаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч.1, Сельская община, Казань, 1889,стр.1.

<sup>3</sup> Սույն տեղում, էջ 151:

խանաբար ստանում էին 3/4, 1/2, 1/4 և 1/8 համփա: Կենտ թվով ընտանիքներին լրացուցիչ տրվում էր մեկ շնչի հողաբաժին: Հողերի տարբերակման այս եղանակը Ս.Եղիազարյանը համարում էր արհեստական, գտնելով, որ դա ավելի շուտ արվել է հողաբաշխման հարմարության գարծնական նկատառումներից ելնելով: Համփայի տնտեսական էության բացահայտումը ելակետային նշանակություն ուներ գյուղական համայնքի հողօգտագործման հարաբերությունների վերլուծության համար, ուստի այն ոչ միայն աննկատ չմնաց Ս.Եղիազարյանի կողմից, այլև դարձավ նրա հետազոտությունների հիմնական հարցերից մեկը: Նա չի համաձայնում Ս.Ջելինսկու կողմից համփան «վճարունակություն» դիտելու մտայնությանը և նկատում, որ համփան մեծ հողաբաժին էր ստանում ոչ թե այն պատճառով, որ ավելի շատ հարկեր ու պարհակներ ուներ, այլ այն պատճառով, որ համայնքի մյուս անդամների համեմատ մեծ հողաբաժին ուներ: Այսինքն՝ ոչ թե հողի չափն է կախված հարկերի չափից, այլ ընդհակառակը, հարկերի չափը՝ հողաբաժնի մեծությունից: Հետագայում համփան բաժանվում է առանձին մասերի, դրանով իսկ խախտելով ընտանիքի հողաբաժնի ու վճարունակության ուղիղ համեմատական կապը: Այս առումով միակողմանի պիտի դիտել նաև Ս.Եղիազարյանի՝ վճարունակությունը միայն հողաբաժնի մեծությունից ածանցելու մտայնությունը: Պատմահասարակական պայմաններն աստիճանաբար ենթադրում էին անցում տնտեսության բնաիրային ձևից ապրանքայինին, ինչի արդյունքում հողերի վերաբաժանման համփայի կարգը տեղիք էր տալիս լուրջ տնտեսական հակասությունների, նպաստելով գյուղի սոցիալական ու դասակարգային շերտավորմանը: Լավագույն հողերը կենտրոնանում էին ունևոր գյուղացիների ձեռքում, որն ուղեկցվում էր գյուղացիության քայքայմամբ, վաշխառուական կապիտալի աշխուժացմամբ և, որ ամենավտանգավորն էր՝ տարագնացության ուժեղացմամբ: Ս. Եղիազարյանի կարծիքով համփային համակարգի թերությունները հնարավոր է վերացնել «աչալուրջ վերահսկողության և տեղական կառավարությունների ժամանակին միջամտության» շնորհիվ: Գյուղական համայնքի հարցերում նրա վրա նկատելի էր նարոդնիկության ազդեցությունը: Համփաչարեքային համակարգը նրա համար ծառայում էր որպես համայնքի հետագա հարատևությունն ապահովելու միջոց: Այս իմաստով, տնտեսագետը կարծես շրջանցում է պատմահասարակական պայմանները, որոնք համայնքի քայքայումը դարձնում էին օրինաչափ: Համայնական տնտեսաձևի սոցիալական համակարգի ոչնչացումը պայմանավորված էր արտադրողական ուժերի զարգացման հետևանքով նրա անդամների գույքային ու սոցիալական շերտավորմամբ: Ս.Եղիազարյանը տեսնում էր, որ «համայնական հողատիրությունը աստիճանաբար քայքայվում է»<sup>1</sup>, բայց և հավատալով նրա կենսունակությանը, առաջարկում է գյուղացիներին տրամադրել ձեռնտու վարկ, նրանց ծանոթացնել գյուղատնտեսական գիտություններին, ներդնել արտադրության առաջավոր եղանակներ, սահմանափակել հողերի առքն ու վաճառքը<sup>2</sup>, կարգավորել հողերի վերաբաժանման ժանկետներն ու հավասարակշռել բնակչության աճի և համայնքի աշխատանքային հնարավորությունները<sup>3</sup> և այլն: Նրա առաջարկած «հիմնավոր միջոցները» հաշվի չէին առնում հայկական իրականության մեջ դրանք կիրառելու հնարավորությունները:

Ս.Եղիազարյանն անդրադարձել է նաև քաղաքային ցեխային կազմակերպությունների՝ համքարությունների վերլուծությանը: Կապիտալիստական հարաբերությունները քայքայում էին ոչ միայն գյուղական համայնքի, այլև արտադրության համքարական տնտեսաձևի հիմքերը: Համքարությունների ծագման հարցի վերաբերյալ Ս.Եղիազարյանի մոտ չկա միասնական տեսակետ: Որոշակի տեղ հատկացնելով տնտեսական ու համքարության անդամների կրոնական ու էթնիկական ընդհանրության գործոններին, նա ավելի շատ հակված էր ընդունելու «պետական» տեսությունը, ըստ որի համքարությունները արդյունք են պետության զուտ ֆինանսական ու ոստիկանական նկատառումների: Մյուս կողմից զարգացնում է մեկ այլ թեզ, ըստ որի դեռևս շատ հին ժամանակներից սկսած մարդկանց ներհատուկ ինքնապահպանման և ինքնապաշտպանության զգացումները ստիպել են միավորվելու: Սկզբում դա դրսևորվել է

<sup>1</sup> Նույն տեղում, էջ V:

<sup>2</sup> Ս.Եղիազարյան, Ֆեոդալական հողատիրությունը Եվրոպայում և մեր երկրի հայաբնակ մասերում և մեր գյուղացու այժմյան տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1882, էջ 22:

<sup>3</sup> С.А.Егизаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч.1, Сельская община, Казань, 1889,стр.66.

արյունակցական համայնքների ձևով, որոնց հետագա քայքայումը բնականորեն առաջացրեց «արհեստական միությունների» ստեղծման պահանջը: Բնական, թե արհեստական այդ միությունները ենթադրում էին որոշակի տնտեսական, հոգևոր կամ կրոնական շահեր: Ի վերջո, հայ տնտեսագետը հանգում է այն տեսակետին, թե Անդրկովկասի համքարությունները «Միջնադարյան ցեխերին լիովին նույնանման ու միատեսակ ընկերություններ են, որ նրանց միջև եղած նմանությունները «հաճախ ապշեցուցիչ են» և նույնիսկ «զանազան սովորույթների ու ծեսերի մանրամասնությամբ»<sup>1</sup>, իսկ մյուս կողմից ավելացնում, որ անդրկովկասյան համքարություններում կրոնական տարրն ավելի էր զարգացած: Ջբաղմունքի միասեռությունը, ադմինիստրացիայի, դատարանի, հատկապես պաշտամունքի ընդհանրությունն ամբողջ միությանը հաղորդում էր եղբայրության բնույթ: Համքարությունը փակ միավորում չէր, այն ուներ դեմոկրատական բնույթ: Եղիազարյանը հակված էր գունազարդելու համքարական միությունը որպես պառլամենտի դեմ փայլուն միջոցի, որպես մրցակցությունից ազատ, հավասարության ու եղբայրության կազմակերպություններ, որոնցում «դեմոկրատական ոգին ... ներծծված էր ներքին կյանքի բոլոր ոլորտները»<sup>2</sup>: Ակներև է, որ Ս.Եղիազարյանի հայացքներն ուղղված էին դեպի նահապետական մանրապրանքային արտադրածը: Նշելով դրանց պատմական դատապարտվածությունը, որ 70-ական թվականներից ֆաբրիկային արտադրությունն ինտենսիվ ձևով քայքայում ու դուրս էր մղում համքարություններին, այնուամենայնիվ, նա դրանցում փորձում էր գտնել հասարակական շահերի ներդաշնակություն: Տնտեսագետը չէր նկատում կապիտալիզմի առաջադիմական ուղղվածությունը և փաստորեն ձգտում էր իր բարոյական իդեալը կառուցել միջնադարյան անցյալի սոցիալական կարգի վրա; Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ նարոդնիկների նման «հարձակումներ» չէր գործում կապիտալիզմի վրա կամ էլ առաջարկում կանխել այդ զարգացումը: Նա չնկատեց պատմականորեն դատապարտված համքարական կազմակերպությունների և կապիտալիստական արտադրատեղանակը միացնող ներքին կապերը, որ համքարություններն իրականացնելով մանր ապրանքային արտադրություն, նախադրյալներ էին ստեղծում ունեցվածքային շերտավորման համար: Անտարակույս, համքարությունները որոշակի դրական դեր են խաղացել ապրանքադրամական հարաբերությունների զարգացման բնագավառում, սակայն իրենց գոյության որոշակի աստիճանում վեր էին ածվում հասարակական առաջադիմության արգելակիչ ուժի, խոչընդոտում արտադրության կապիտալիստական տնտեսաձևի զարգացումը, տեխնիկական առաջադիմությունը, արհեստականորեն կասեցնում արտադրության ընդլայնման մասշտաբները:

Իր աշխատանքներում Ս.Եղիազարյանը փորձում էր նոր իրադրության հետ կապակցել և պահպանել պատմական շրջափոխությանը դիմակայած տնտեսական հաստատությունները: Նա տեսնում էր վերջիններիս քայքայումը, բայց և փորձում էր դիմակայել զարգացման տրամաբանությանը: Հաճախ նա նշում է փաստը, առանց խորանալու այն ծնող շարժառիթների մեջ: Նրա դիտողություններում երևույթները չեն զուգորդվում հասարակական առաջընթացի քննությամբ: Ուստի և տնտեսական զարգացման նրա հայեցողությունը ձեռք է բերում ռոմանտիկական բովանդակություն:

**Марине Агаян**

## **Из истории армянского экономического романтизма**

### **Аннотация**

В статье подвергаются критическому анализу экономические взгляды известного экономиста Согомона Егиазаряна об общинных и амкарских экономических укладах в соприкосновении с экономическим романтизмом, как одного из течений всемирной экономической мысли.

<sup>1</sup> С.А.Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. II, Городские цехи, Казань, 1891, стр. II.

<sup>2</sup> Սույն տեղում, էջ 58,59:

## From the History of the Armenian Economic Romanticism

### Abstract

The article adopted a critical approach in studying the views of the famous economist, Soghomon Eghiazaryan on the economic order in the rural communities and urban guilds in relation to one of the branches of the economic thought, Economic Romanticism.

### ՆԱՐԻՆԵ ԱՐՈՆՑ

ՄԱՐԻՆԵ ԱՐՈՆՑ, *ստիստիկոս*

### ԳԼՈՒԲԱԼԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՆՈՐ ԱՇԽԱՐԻԻ ՀԱՐԱՑՈՒՅՑ

Գլոբալացում հասկացության ժամանակակից իմաստը աշխարհի տարբեր երկրների տնտեսական համակարգերի, տնտեսությունների փոխկապակցվածության, փոխազդեցության և փոխկախվածությունների գործընթացն է, որը զարգացման տարբեր մակարդակներ, հասարակական - քաղաքական, սոցիալական և տնտեսական տարբեր համակարգեր ունեցող երկրներում բերում է գործարարությամբ զբաղվելու նույնանման չափանիշների և պայմանների: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի սահմանման՝ գլոբալացումը ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև կապիտալի շուկաների ինտեգրման ինտենսիվության աճն է:

Համաձայն ավելի ընդարձակ մեկնաբանության գլոբալացումը սառը պատերազմի ավարտից հետո գերիշխող միջազգային համակարգ է: Այն իրենից ներկայացնում է ազգային տնտեսությունների միաձուլումը մեկ միասնական համաշխարհային համակարգի մեջ, որը հիմնված է կապիտալի արագ տեղաշարժի, աշխարհի տեղեկատվական հրապարակայնության, տեխնոլոգիական արագ թարմացման, սակագնային խոչընդոտների նվազեցման, ապրանքների և կապիտալի շարժի ազատականացման, գիտատեխնիկական հեղափոխության, միջազգային սոցիալական շարժումների, տրանսպորտային նոր միջոցների, հեռահաղորդակցության տեխնոլոգիաների իրականացման, միջազգային կրթության վրա: Այս սահմանման մեջ առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում կորպորատիվ, հասարակության և պետական մակարդակներում իրականացվող արտադրության, կառավարման, կազմակերպչական և հեռահաղորդակցման գործընթացներում նոր տեխնոլոգիաների կիրառմանը:

Ամերիկացի հայտնի տնտեսագետ Ֆրիդմանը գլոբալացումը սահմանում է որպես շուկաների, ազգային պետությունների և տեխնոլոգիաների անսահման ինտեգրում, որը թույլ է տալիս անհատներին, կորպորացիաներին և պետություններին հասնելու աշխարհի ցանկացած վայր ավելի արագ, ավելի հեռու, ավելի խորը ու ավելի էժան է, քան երբևէ<sup>1</sup>:

Գլոբալացումը նշանակում է ազատ շուկայական կապիտալիզմի տարածումը աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Այն ունի տնտեսական կանոնների իր սեփական հավաքածուն, որը հիմնվում է ազգային տնտեսությունների բացահայտման, ապակայունացման և մասնավորեցման մեջ՝ նրանց մրցունակության ամրապնդման և օտարերկրյա կապիտալի համար ավելի գրավիչ դառնալու նպատակով: Գլոբալացումը ենթադրում է ինքնիշխան պետությունների հնազանդությունը ենթադրող որոշակի կանոնների և պարտականությունների առկայություն: Շուկաների և մշակույթի գլոբալացմանը զուգընթաց գլոբալացումը բացահայտող նեոլիբերալիստական տեսությունը ենթադրում է առանձին երկրների ինքնիշխանության (սուվերենության) մարում և բացարձակ նոր տիպի «աշխարհի քաղաքացու» ձևավորումը, ուն հավատար-

<sup>1</sup> Илларионов А. Фридман и Россия: Судьба великого экономиста как ответ на вопрос, почему одни страны процветают, а другие приходят в упадок // Публикации Института Катона. — 2007 г.

մութիւնն ուղղված է արդէն ոչ թե առանձին կառավարություններին, այլ ապապետական կառույցներին:

Գլոբալացման գործընթացի ավելի մանրամասն նկարագրությունը ներառում է երեք հավասարակշռությունների համադրություն: Առաջին. ազգային պետությունների ավանդական աշխարհաքաղաքական հավասարակշռությունը: Այս առումով Միացյալ Նահանգները իր գերտերության ֆունկցիաները իրականացնում է թե՛ Մերձավոր Արևելքի և այլ երկրներին «զսպելու», թե՛ Կենտրոնական Եվրոպայում Ռուսաստանի դեմ ՆԱՏՕ-ի ընդլայնման և թե այլ ձևերով: Գլոբալացված համակարգում երկրորդ հավասարակշռությունը կայանում է ազգային պետությունների և գլոբալ շուկաների միջև՝ ապրանքադրամային փոխանակությունների համակարգի մեջ, որպէս աշխատանքի միջազգային բաժանման մեջ փոխկապակցված մասնակիցների: Երրորդ հավասարակշռությունն անհատների և ազգային պետությունների միջև ծագած հավասարակշռությունն է: Անհատները գլոբալ դարաշրջանում միջազգային ասպարեզում կարող են գործել աննախադէպ արդյունավետ: Ջ. Ուիլիամսը համացանցի միջոցով կազմակերպել է հազարից ավելի հասարակական կազմակերպությունների փոխգործունեությունը և 1997թ. ստացել է Նոբելյան մրցանակ հակահետևանքային ականների դեմ պայքարի համար: Արդյո՞ք հարկ է նշել, որ նման իրադարձություն նախկինում հնարավոր չէր պատկերացնել:

Գլոբալացումը ներկայացվում է որպէս կենսամակարդակի բարելավմանը ուղղված բարձր գրավիչութեամբ, ուժ տվող, աներևակայելի գրավիչ ճանապարհ: Արդի առավել զբաղեցնող հարցը մարդկության ապագա մոդելի հարցն է, թե ինչով է փոխարինվելու ներկան:

Գլոբալացման հետազոտողները տարբեր կերպ են մեկնաբանում միջազգային մերձեցման իրադարձություններն ու ժամկետները: Դեռևս Սոնտեսքյուն «Օրենքների ոգու մասին» աշխատությունում լավատեսորեն նշել է. «Երկու ժողովուրդները, շփվելով միմյանց հետ, դառնում են փոխկապակցված, և եթե առաջինը շահագրգռված է վաճառել, ապա երկրորդը հետաքրքրված է ձեռք բերել, և նրանց միությունը հիմնված է փոխադարձ անհրաժեշտություն վրա»<sup>1</sup>: Այնուամենայնիվ, համաշխարհային մերձեցումը «հեղափոխական» արագ տեմպերով տեղի է ունեցել միայն երկու անգամ:

Գլոբալացման առաջին փուլը գլոբալ մասշտաբով առևտրի և ներդրումների տարածման ակտիվ փուլ էր, երբ տասնիններորդ և քսաներորդ դարերի սահմանագծին ներգաղթածները անցան օվկիանոսն առանց մուտքի արտոնագրի: Շնորհիվ շոգենավի, հեռախոսի, հոսքագծի, տելեգրաֆի և երկաթուղու աշխարհը գլոբալ մասշտաբով արտաքին առևտրի ու ներդրումների միջոցով թևակոխեց ակտիվ փոխմերձեցման փուլը: Որպէս գլոբալացման առաջին ալիքի երաշխավոր հանդես էր գալիս Մեծ Բրիտանիան, որպէս ամենահզոր ծավային, արդյունաբերական և ֆինանսական պետություն:

Գլոբալացման առաջին տասնամյակների գաղափարախոսները դարձան Ռ. Կոբլեն<sup>2</sup> և Ջ. Բրայթը, որոնք շատ տնտեսագետների և արդյունաբերողների համար մեծ խանդավառանքով հիմնավորեցին այն միտքը, որ ազատ առևտուրը անշրջելիորեն կխթանի համաշխարհային տնտեսական աճը, և փոխկախվածության վրա հիմնված աննախադէպ բարգավաճման արդյունքում մարդիկ կնոռանան հակամարտությունների մասին:

Հակամարտությունների հակասում ունեցող համաշխարհային միջավայրի վրա գլոբալացման օգտակար ազդեցության գաղափարը առավել լայն ճանաչում է ստացել Ն. Էնջելի «Մեծ պատրանք» (1909թ.) գրքում<sup>3</sup>: Հեղինակը, Առաջին համաշխարհային պատերազմը սկսելուց դեռևս հինգ տարի առաջ, հիմնավորում էր աշխարհում արդէն ձևավորված տնտեսական փոխկապակցված կապերի արդյունքում գլոբալ հակամարտությունների առաջացման անհնարինությունը, որպէս թե Մեծ Բրիտանիան և Գերմանիան, արտաքին քաղաքականության մեջ լինելով հակամարտող կողմեր, սակայն որպէս խոշոր տնտեսական գործընկերներ ոչ մի

<sup>1</sup> Все шедевры мировой литературы в кратком изложении. Сюжеты и характеры. Зарубежная литература XVII–XVIII веков / Ред. и сост. В. И. Новиков. — М.: Олимп : АСТ, 1998. — 832 с.

<sup>2</sup> **Бастия Фредерик** Кобден и Лига. Движение за свободу торговли в Англии / Пер. с франц. Ю. А. Школенко. — Челябинск: Социум, 2003. — 732 с.

<sup>3</sup> **Уткин А.И.** Глобализация: процесс и осмысление, <http://nashaucheba.ru>

իրավիճակում չեն մասնակցի իրար դեմ ուղղված պատերազմական գործողություններին: Պատերազմը հերքեց այդ կանխատեսումները, և գլոբալացման գործընթացը կարծես դադարեց:

Գլոբալացման երկրորդ ակիբի ժամանակագրությունը հատկացվում է 1970- ականներին՝ երկու համաշխարհային պատերազմներից և Մեծ դեպրեսիայից տասնամյակներ հետո, որը կապված է համակարգչային գիտության և հեռահաղորդակցության մեջ կատարված հեղափոխությունների հետ:

Այնուհանդերձ գլոբալացման գործընթացների նոր բնույթը: Աշխարհը քսաներորդ դարի վերջին «փոքրացավ»: Վերջին երեսուն տարիների ընթացքում գերծայնային ինքնաթիռները համախմբեցին, մոտեցրին բոլոր մայրցամաքները: Դարի ավարտին ազատ շուկայական, լիբերալ քաղաքական կարգով երկրներում ապրող բնակչությունը հասավ 28 տոկոսի, իսկ արտաքին ներդրումների ծավալը՝ 644 մլրդ ԱՄՆ դոլարի: Դարի ավարտը հատկանշվեց աշխատանքի համաշխարհային բաժանման և արտահանման գերակայություններով: Համաշխարհային արտահանման ծավալները եթե կես դար առաջ կազմում էին 53 մլրդ ԱՄՆ դոլար, ապա դարավերջին հասան ավելի քան 7 տրիլիոն ԱՄՆ դոլարի:

Կյանքը սկսեց կարգավորել տեղեկատվությունը: Գլոբալացման առանձնահատկությունը դարձան համակարգչայնացումը, մանրաթելային օպտիկան, արբանյակների միջոցով կապը և Ինտերնետ հասանելիությունը: Կյանքի նոր տերերը դարձան համաշխարհային տեղեկատվական և հաշվողական տեխնիկայի հենասյուները: Միայն համակարգչային ծրագրեր արտադրող այնպիսի ընկերություն, ինչպիսին «Microsoft»-ն է, ներկայումս արտադրում է ավելի շատ, քան հսկա «General Motors»-ը, «Ford»-ը և «Chrysler»-ը միասին:

Գլոբալացման ծավալման նախապայմաններն իրենց ուրվագծերի մեջ հանգում են հետևյալին.

- Խորհրդային Միության և սոցիալիստական երկրների ճամբարի փլուզումը: Աշխարհաքաղաքական կառուցվածքում արմատական փոփոխությունները հանգեցրել են աշխարհում միջազգային ուժերի հավասարության խախտման: Պլանային տնտեսության վերացումով աշխարհը վերածվեց շուկայական տնտեսության: Ինչպես նկատում է գլոբալացման հետազոտողներից Էմանուել Վայնշտեյնը. «Խորհրդային Միության փլուզումը նշանավորում է քաղաքական - մշակութային դարաշրջանի ավարտը, որի ընթացքում մարդիկ հավատում էին, որ ֆրանսիական հեղափոխության կարգախոսները արտացոլում են տևական պատմական ճշմարտությունը, և եթե ոչ այժմ, ապա շատ մոտ ապագայում նրանք պետք է անպայմանորեն իրականություն դառնան»<sup>1</sup>:
- Տեղեկատվական հեղափոխության տարածումը՝ էլեկտրոնային տնտեսությունների, էլեկտրոնային ֆինանսական ենթակառուցվածքների, էլեկտրոնային փողերի, էլեկտրոնային կառավարությունների ձևավորման: Սա հանգեցրել է ազգային պետության արժեքի ու նշանակության նվազման և նրա գործառույթների թուլացման:
- XX դարի վերջում համաշխարհային տնտեսության մեջ անդրազգային կորպորացիաների դերի ուժեղացման: Նրանցից ամենահզորները վերահսկում են Արևմուտքի երկրներում օտարերկրյա ուղղակի ներդրումների ավելի քան 90%-ը և «երրորդ աշխարհի» երկրների տնտեսություններում իրականացվող ներդրումների գրեթե 100% -ը:
- Գլոբալացման գործընթացներին միջազգային մի շարք կազմակերպությունների և հաստատությունների աշխատանքը, որոնք «կոչված են աջակցել հետպատերազմյան շրջանում ձևավորված նոր տնտեսական կարգը և կանխել ռեսուրսների ու սպառման շուկաների վերաբաշխումը այն մասնակիցների միջև, ովքեր մտնում են առաջատար երկրների խմբի մեջ, ինչպես նաև նրանց միջև, ովքեր ցանկանում են ազատվել իրենց տնտեսական և քաղաքական կախվածությունից՝ օգտագործելով արագացված արդիակա-

<sup>1</sup> Валлерстайн И. *После либерализма* / Пер. с англ. М. М. Гурвица, П. М. Кудюкина, Л. В. Феденко под ред. Б. Ю. Кагарлицкого. — М.: Едиториал УРСС, 2003. — 256 с.

նացման մեխանիզմները: Նրանց թվում, առաջին հերթին, պետք է նշել, ԱՄՆ-ի, Համաշխարհային բանկը և ԱՀԿ-ը»:

- Ի վերջո, արդիականության և լուսավորության գաղափարախոսությունն նախագծի փլուզումը, որն ակնհայտորեն պարզ դարձավ 90-ական թվականներին: Դրա վկայությունն է լուսավորության հիմնարար գաղափարախոսության՝ ռացիոնալիզմի սկզբունքի այլասերումը պրոգրեսիվիզմի և տեխնոլոգիզմի հանգեցնելով բնապահպանական աղետների: Առաջացել է ահռելի ճեղքվածք սպառողական հասարակության «միաչափ» մարդու տեխնոլոգիական ակտիվության և ներքին հոգևոր դատարկության միջև:

**Нарине Адонц**

## **Глобализация как парадигма нового мира**

### **Аннотация**

Проблема глобализации сегодня – самый актуальный вопрос, обсуждаемый самыми различными специалистами – политологами, экономистами, социологами, философами, даже географами. В статье автор ссылается к различным комментариям термина “глобализация”. Осуществлен краткий исторической экскурс предварительных условий по стадиям глобализации, развития и развертывания.

**Narine Adonc**

## **Globalization as a New World Paradigm**

### **Abstract**

The issue of Globalization is the most vital topic discussed by political scientists, economists, sociologists, philosophers, and even geographers. In the article, the author refers to various interpretations of the term “globalization”, provides the short history of how the globalization evolved: initial conditions and development pattern

### **ԹԱՄԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրթսեր գիտաշխատող, ասպիրանտ*

## **ՀԱՄԱՇԽԱՐԻԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ**

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն իր բացասական ազդեցությունը թողեց և հիմա էլ շարունակում է թողնել համաշխարհային տնտեսության զարգացումների վրա: Այդ ամենի մասին են վկայում աշխարհում տեղի ունեցող տնտեսական զարգացումները: Այս ամենով հանդերձ գնալով մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն հիմնախնդիրները, որոնց բախվում են տնտեսությունները ճգնաժամերի ժամանակ, և այն մեխանիզմները, որոնք պետք է ուղղված լինեն դրանց լուծմանը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը մեկ անգամ ևս վեր հանեց համաշխարհային տնտեսության կարգավորման մեխանիզմների թուլությունը: Վերջինիս ազդեցությունն հիմնականում արտահայտվեց զարգացած երկրների ֆինանսական համակարգերում ծագած խնդիրներով, մասնավորապես բանկային համակարգի ռիսկերի նկատմամբ թույլ վերահսկողությունը, ֆոնդային շուկաների ինքնակարգավորման անկատար լինելը, իսկ ՀՀ-ում վերջինս խոր ազդեցություն թողեց իրական հատվածի վրա:

Միջազգային փորձը ցույց տվեց, որ բանկային ոլորտում ևս ճգնաժամային երևույթները



բնորոշ են ոչ միայն զարգացած և անցումային տնտեսություն ունեցող երկրներին, այլ նաև զարգացած երկրներին:

Բանկային ճգնաժամերը՝ որպես ֆինանսական ճգնաժամերի տեսակ, հանդիպում են հիմնականում տնտեսական անկումների ժամանակ և ընդգրկում են բանկերից համատարած ավանդների պահանջումը (bank runs), որն ազդում է եզակի բանկերի վրա, բանկային խուճապներ (bank panics), որն ազդում է շատ բանկերի վրա և համակարգային բանկային ճգնաժամեր, երբ երկիրը կանգնում է դեֆոլտի առջև և ֆինանսական կազմակերպությունները հանդիպում են իրենց պարտավորությունների մարման հետ կապված դժվարությունների:

Այսպես, 2007թ. ԱՄՆ-ում սկիզբ առած բանկային ժգնաժամի (ինչը հիփոթեքային վարկավորման շրջանում առաջացած ճգնաժամի հետևանք էր) առաջացման պատճառները շատ ավելի խոր էին և հետևյալն էին՝

- մի քանի խոշոր ընկերությունների մեկը մյուսի ետևից կործանումը,
- մի քանի ֆոնդային շուկաներում գրանցված գործարքների կտրուկ անկումը և այլն:

Հիփոթեքային վարկեր տրամադրելու մեթոդները, նախկինում ձեռք բերված բնակարանների զանգվածային վաճառքը հանգեցրին նրան, որ առաջացավ բնակարանային շինարարության ճգնաժամ, որն էլ համարվում է ճգնաժամի առաջին փուլը: Այն սկսվեց 2007թ. գարնանը և ավարտվեց մեկ տարի անց, երբ 2008թ. մարտին կանխվեց ԱՄՆ-ի խոշորագույն ներդրումային բանկերից մեկի՝ Bear Sterns-ի, սնանկացումը: 2007-2009թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ծագման դրդապատճառները վերլուծաբանները որոնում են ամերիկյան անշարժ գույքի շուկայում, որտեղ էլ 2006թ. իրականացվեց կործանարար քաղաքականություն:

Այսպես, խոշորագույն բանկերի կորուստներն արդեն գերազանցում են 320 մլրդ. ԱՄՆ դոլարը, և վերլուծաբանների կարծիքով կարող են աճել մինչև 1,5-2 անգամ: Ամենաշատ կորուստները գրանցեցին ամերիկյան բանկային հոլդինգները՝ Citigroup, Merrill Lynch, Bank of America, շվեյցարական UBS և անգլիական HSBC, որոնց շուկայական կապիտալացումը վերջին մեկ տարում ընկավ 40-60%<sup>1</sup>:

Ֆինանսական ճգնաժամի կիզակետում հիմնականում հայտնվեցին 4 հսկա կորպորացիաներ՝ Fannie Mae-ն, Freddie Mac-ը, Lehman Brothers-ը և American International Group-ն, որին էլ անմիջապես հաջորդեց ԱՄՆ-ի հիփոթեքային արժեթղթերի վարկանիշային գնահատականի իջեցումը մինչև «բարձր ռիսկային»:

2008թ. սեպտեմբերին ԱՄՆ-ի ամենախոշոր և հին բանկերից մեկը՝ Lehman Brothers-ը, իրեն սնանկ հայտարարեց, որն էլ հետազոտողների մեծ մասի կարծիքով համարվում է ճգնաժամի երրորդ փուլի սկիզբը: Վերջինիս անմիջապես հաջորդեցին ֆինանսական շուկաների կաթվածը, ներդրողների զանգվածային արտահոսքերը ներդրումային ֆոնդերից և այլն: Lehman Brothers բանկի համար ամենադժվարին պահին J. P. Morgan բանկն իր հաշվեհամարներով անցնող հաշիվների ապահովման համար պահանջեց լրացուցիչ 5 մլրդ. ԱՄՆ դոլար: Այդ ամենից հետո Lehman Brothers բանկին այլ բան չէր մնում, քան հայտարարել իր լուծարման մասին:

Լուծարումից մեկ օր առաջ Lehman Brothers բանկն ուներ Fitch և Mood's վարկանիշային գործակալությունների կողմից տրված բավականին բարձր վարկանիշներ, համապատասխանաբար, A+ և A2: Լուծարման և բոլոր գործարքների դադարեցման մասին հայտարարելու պահին առկա էին 140 հազար չվճարված գործարքներ, 7 հազար կոնտրագենտներ ամբողջ աշխարհում, այդ թվում՝ 30 կոնտրագենտներ Ռուսաստանում, որոնց հետ գործարքները չէին ավարտվել:

Ֆինանսական ճգնաժամը շատ արագ տեղափոխվեց նաև այլ երկրներ՝ Մեծ Բրիտանիա, Ճապոնիա, Գերմանիա: Հիմնականում սրանք այն երկրներն էին, որոնք ավելի մեծ ներդրումներ էին կատարել ԱՄՆ-ի հիփոթեքային շուկայում: Մասնավորապես, մեծ վնասներ կրեց եվրոպական USB բանկը՝ ունենալով ակտիվների ծավալի էական նվազում 2008թ. վերջին:

Դրան հետևեց Morgan Stanley բանկի նկատմամբ սպեկուլյատիվ հարձակումը, որտեղից մասսայաբար ինստիտուցիոնալ հաճախորդները սկսեցին դուրս հանել իրենց միջոցները:

<sup>1</sup> Jonathan Hobbs, How Many Banks Does Your Liability Own? (September 2011): New York: Black Rock, p. 2.

Նշված բանկին փրկեց այն, որ նա կարողացավ գտնել ներդրողի ի դեմս Mitsubishi UFJ ընկերության, որը գնեց բանկի 21% կապիտալը 9 մլրդ. ԱՄՆ դոլարով<sup>1</sup>:

Մի շարք մասնագետներ (Caprio և Klingebiel, 1996)<sup>2</sup> բանկային ճգնաժամը դիտարկում են որպես՝

- ֆինանսական գործունեություն իրականացնելու անկարողություն, երբ բանկային ոլորտի էական մասը համարվում է ոչ վճարունակ, բայց բաց է մնում:
- ֆինանսական խուճապ (Calomiris և Gorton, 1991)<sup>3</sup>, երբ բանկի պարտատերերը հանկարծակի պահաջում են, որ բանկը փոխակերպի իրենց պարտքային պարտավորությունները կանխիկի որոշակի աստիճանի:

Բանկային ճգնաժամերը գնալով դառնում են ավելի հաճախակի և խիստ: ԱՄՅ–ի անդամ երկրների 3/4-ն ունեցել են բանկային ոլորտի էական խնդիրներ սկսած 1980-ական թթ.: Բանկային ճգնաժամերին հաճախ նախորդում է ֆինանսական ազատականացումը: Բանկային ճգնաժամերն հատկապես ավելի խիստ են ընթանում զարգացող երկրներում: Խստությունը հիմնականում պայմանավորված է կապիտալի արտահոսքով: Հետազոտողներն առանձնացնում են բանկային ճգնաժամերի մի քանի փուլեր ու տեսակներ, որոնց մասին կխոսենք ստորև: Բանկային ճգնաժամերը կարող են առաջանալ կամ ինքուրույն կամ արժութային ճգնաժամի հետ միաժամանակ (կրկնակի ճգնաժամեր), կամ որպես կրկնակի պարտքային ճգնաժամ (1970-2002թթ. ընթացքում տեղի են ունեցել 63 պարտքային ճգնաժամեր ըստ Beim and Calomiris, 2001, World Bank 2002, Sturzenegger and Zettelmeyer 2006, և ԱՄՅ–ի զեկույցի) կամ երկուսն էլ միաժամանակ: Բանկային ճգնաժամերի մեծ մասը կրկնակի ճգնաժամերն են: Մի շարք հետազոտողներ որպես արժութային ճգնաժամի սկիզբ են ընդունում տեղական արժույթի արժեզրկման որոշակի չափը<sup>4</sup>, իսկ Լևին և Ռիին սկիզբ են համարում այն պահը, երբ ԱՄՅ–ն օգնություն է տրամադրում որևէ երկրի՝ անկախ այն հանգամանքից ճգնաժամը սկսվել է այդ երկրում կամ էլ հիմնադրամը ճգնաժամը կանխելու համար վարկ է տրամադրում: 1970-2007թթ. ընթացքում տեղի են ունեցել շուրջ 208 արժութային ճգնաժամեր: 1997-1998թթ. ասիական ճգնաժամի արդյունքում Thai բանկի կործանումը խոշոր արժութային ճգնաժամի արդյունք էր:

Որպես բանկային ճգնաժամերի առաջացման պատճառ կարող են լինել՝

- բանկի առանձնահատկությունները,
- ոչ արդյունավետ կառավարումը,
- մակրոտնտեսական գործոնները,
- իրական փոխարժեքի արժևորումը,
- արժեթղթերի և անշարժ շուկայի գները,
- կապիտալի արտահոսքը և այլն:

Բանկային ճգնաժամերի հիմնական ցուցանիշներ են համարվում՝

#### **Ֆինանսական ոլորտ՝**

- ներքին վարկավորում/ ՅՆԱ,
- ավանդի տոկոսադրույք,
- վարկավորման տոկոսադրույք:

#### **Արտաքին հատված՝**

- արտահանում,
- ներմուծում,
- ընթացիկ հաշվի մնացորդ/ ՅՆԱ,
- կարճաժամկետ կապիտալ/ ՅՆԱ,
- ՕՈՒՆ/ՅՆԱ և այլն:

<sup>1</sup> Предтеченский А . Построение системы управления рисками в условиях кризиса: стратегия и тактика// Банковское дело, 2009, N4, с. 14-18.

<sup>2</sup> IMF Working Paper, Systemic Banking Crises, A New Database ,November 2008, Prepared by Luc Laevan and Fabian Valencia, p.5.

<sup>3</sup> Նույն տեղում՝ էջ 5.

<sup>4</sup> Reinhart, Carmen and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton, New Jersey: Unirted States, pp.5-6, Jeffrey and Rose, Andrew (1996), "Currency Crashes in Emerging Markets: An Empirical Treatment", US Federal Reserve Board's International Finance Discussion Papers, Working Paper 534, p.4 և այլն:

Ըստ Ռեյնհարթի և Ռոգոֆֆի<sup>1</sup> տարբեր ճգնաժամերի միջև մեկ ընդհանուր բան կա՝ մեծ չափի հասնող պարտքի կուտակում՝ պարտքի կոմուլյատիվ աճ՝ (պարտք/ՀՆԱ հարաբերակցության փոխարեն): Ըստ Ռեյնհարթի և Ռոգոֆֆի (2009) սահմանման<sup>2</sup> ՀՀ-ում արձանագրվել է արժույթային ճգնաժամ, որը պայմանավորված է եղել արտաքին շոկերով:

*Աղյուսակ 1*


**Ֆինանսական ճգնաժամերի հաճախականությունը**

Տարի	Բանկային ճգնաժամեր	Արժույթային ճգնաժամեր	Պարտքային ճգնաժամ	Կրկնակի ճգնաժամեր	Եռակի ճգնաժամեր
1970					
1971		1			
1972		15			
1973		1			
1974					
1975		5			
1976	2	4	1		
1977	2	1	1		
1978		5	3		
1979		3	2		
1980	3	4	3	3	
1981	3	9	6	1	
1982	5	5	9	1	1
1983	7	12	9	2	1
1984	1	10	4		
1985	2	10	3		
1986	1	4	3		
1987	6	6		1	
1988	7	5	1		
1989	4	8	3	1	1
1990	7	10	2		
1991	10	6		1	
1992	8	9	1	1	
1993	7	8		1	
1994	11	25		2	
1995	13	4		2	
1996	4	6		1	
1997	7	6		4	
1998	7	10	2	3	3
1999		8	2		
2000	2	4			
2001	1	3	2	1	1
2002	1	5	4		
2003	1	4	1	1	1
2004		1	1		
2005		1			
2006					
2007	2				
<b>ԸՆԴԱՄԵՆՆՆ</b>	<b>124</b>	<b>208</b>	<b>63</b>	<b>26</b>	<b>8</b>

<sup>1</sup> Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton New Jersey: United States, xxv.


<sup>2</sup> Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton New Jersey: United States, (463p.)

Միաժամանակյա ճգնաժամեր<sup>1</sup>



Բանկային ճգնաժամերի համար ընդհանրական է այն, որ նրանց նախորդում է արժուքային և պարտքային ճգնաժամերը (Kaminsky and Reinhart, 1999; Reinhart and Rogoff, 2011): Միևնույն երկրում բանկային ճգնաժամերի 16%-ին նախորդում են արժուքային ճգնաժամերը և միայն 5%-ին են նախորդում պարտքային ճգնաժամերը:

Արժուքային և պարտքային ճգնաժամերի ժամանակացույցի համեմատությունը բանկային ճգնաժամերի հետ



Չնայած ձեռնարկված միջոցառումներին, միջազգային ֆինանսական շուկան առայժմ չի կայունանում: Ավելին, աստիճանաբար ճգնաժամի մեջ են ներքաշվում նոր երկրներ և ֆինանսական հաստատություններ:

Այժմ ստորև ներկայացնենք բանկային համակարգերի ճգնաժամերը 2007-2011թթ. կտրվածքով:

Վերջին տարիներին շատ երկրներ բախվել են համակարգային բանկային ճգնաժամերի՝ պահանջելով կատարել մեծածավալ վերակառուցման աշխատանքներ իրենց ֆինանսական համակարգերում: Հիմնականում այդ աշխատանքները մեծածավալ ծախսերի հետ են կապված եղել՝ գերազանցելով ՀՆԱ-ի 50%-ը:

<sup>1</sup> IMF Working Paper, Systemic Banking Crises Database An Update, 2012, Luc Laeven and Fabian Valencia, p.12.

Աղյուսակ 2-ում ներկայացված են նաև այն դեպքերը, երբ ճգնաժամից անմասն չեն մնացել նաև հարակից երկրները (սահմանային դեպքեր):

Աղյուսակ 2

**Համակարգային բանկային ճգնաժամերը 2007-2011թթ.<sup>1</sup>**

Երկիր	Ճգնաժամի սկիզբ	Համակարգային ճգնաժամի սկիզբ	Լրացուցիչ իրացվելիության աջակցություն	Պարտավորությունների երաշխիքներ	Վերակազմավ. ծախսեր	Ակտիվների գնումներ	Ազգայնացում
<b>Համակարգային դեպքեր</b>							
Ավստրիա	2008	2008	✓	✓	✓		✓
Բելգիա	2008	2008	✓	✓	✓		✓
Դանիա	2008	2009	✓	✓			✓
Գերմանիա	2008	2009	✓	✓			✓
Հունաստան	2008	2009	✓	✓	✓		
Իսլանդիա	2008	2008	✓	✓	✓		✓
Ղազախստան	2008	2010			✓		
Լատվիա	2008	2008	✓	✓			✓
Լյուքսեմբուրգ	2008	2008	✓		✓		✓
Սոնդոլիա	2008	2009	✓		✓		✓
Նիդերլանդներ	2009	2011	✓	✓	✓	✓	✓
Նիդեռլանդներ	2008	2008	✓	✓	✓		✓
Իսպանիա	2008	2011	✓	✓	✓		
Ուկրաինա	2008	2009	✓	✓	✓		✓
Միացյալ Թագ.	2007	2008	✓	✓	✓		✓
ԱՄՆ	2007	2008	✓	✓	✓	✓	✓
<b>Սահմանային դեպքեր</b>							
Ֆրանսիա	2008		✓	✓			
Հունգարիա	2008		✓	✓			
Իտալիա	2008		✓	✓			
Պորտուգալիա	2008		✓	✓			
Ռուսաստան	2008		✓	✓			
Սլովենիա	2008		✓	✓			
Շվեդիա	2008						
Շվեյցարիա	2008		✓			✓	

Աղյուսակ 3

**Բանկային ճգնաժամերի ժամանակացույցը և ծախսերը 1970-2011թթ.<sup>2</sup>**

Երկիր	Սկիզբ	Ավարտ	Արդյունքի կորուստ	Բյուջետային ծախսեր	Իրացվելիության պիկ	Իրացվելիության աջակցություն	Պետական պարտքի աճ	Դրամական էքսպանսիա	Վարկային բում
1	2	3	4	5	6	7	8	9	10
Հայաստան	1994	1994	-	-	41.4	23.0	-	-	0
Ադրբեջան	1995	1995	-	-	127.6	84.5	0.9	-	-
Վրաստան	1991	1995	-	-	-	-	-	-	0
Բելառուս	1995	1995	-	-	35.8	-	-16.5	-	0
Ղազախստան	2008	-	0.0	3.7	5.5	5.0	9.1	3.3	0
Ռուսաստան	1998	1998	-	0.1	23.7	21.1	-7.1	-	0
Ռուսաստան	2008	-	0.0	2.3	24.8	23.9	6.4	1.0	1
Թուրքիա	1982	1984	35.0	2.5	71.7	29.3	12.3	2.4	1
Թուրքիա	2000	2001	37.0	32.0	20.5	15.2	15.3	-	1

<sup>1</sup> IMF Working Paper, Systemic Banking Crises Database An Update, Prepared by Luc Laeven and Fabian Valencia, June 2012, p.6.

<sup>2</sup> IMF Working Paper, Systemic Banking Crises Database An Update, Prepared by Luc Laeven and Fabian Valencia, June 2012, p. 24-26.


Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ վերջին տասնամյակների ընթացքում բանկային ճգնաժամերի գերակշիռ մասը տեղի են ունեցել այն ժամանակ, երբ տրամադրվող վարկերի ծավալներն աճել են: Մյուս կողմից ոչ բոլոր վարկային բույներն են բերել բանկային ճգնաժամերի: Չնայած այն հանգամանքին, որ վարկային բույների ժամանակ բանկային ճգնաժամի հանդես գալու հավանականությունը աճում է 50-70%-ով, պատմության մեջ միայն վարկային բույների 20%-ն են բերել ֆինանսական ճգնաժամերի: Այսպես, Բարաջասի և այլոց կարծիքով 135 վարկային բույներից միայն 23-ն են ավարտվել բանկային ճգնաժամերով<sup>1</sup>: Մասնավորապես, Ռուսաստանի պարտատոմսերի շուկայի անվճարունակությունը (1998թ.), ինչպես նաև Թուրքիայի բանկային համակարգի (2000թ.) և Արգենտինայի ֆինանսական ճգնաժամը (2000-2002թթ.):

Ճգնաժամի համաշխարհային բնույթ կրելը բնականաբար իր ազդեցությունը չէր կարող չթողնել նաև մեր տնտեսության, այդ թվում՝ բանկային համակարգի վրա: Ճգնաժամի առաջին նշաններն ԶԶ-ում ի հայտ եկան 2008թ. նոյեմբերի վերջերին, երբ միջազգային շուկաներում կտրուկ իջավ մեր երկրից արտահանվող պղնձի խտանյութի գինը: Ֆինանսատնտեսական ճգնաժամը ԶԶ-ում առավել զգացնել տվեց 2009թ., երբ կրճատվեցին նաև արտասահմանից, մասնավորապես ՌԴ-ից տրանսֆերտների ծավալը: Սա թերևս կարելի է համարել ԶԶ-ում ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման առաջին և կարևորագույն պատճառը:

Ֆինանսական ճգնաժամի ազդեցությամբ պայմանավորված ԶԶ ֆինանսական համակարգում տեղի ունեցող զարգացումները տարան նրան, որ բանկերի ավանդների կառուցվածքում 2008թ. սեպտեմբերից կտրուկ փոփոխվեց դրամով և դոլարով ավանդների համամասնությունը՝ ի օգուտ արտարժույթով ավանդների: Դեդոլարացման քաղաքականության արդյունքում հաջողվեց արտարժույթով ավանդների կշիռը հասցնել մինչև 35%<sup>2</sup> :

*Գծապատկեր 3*

**ԶԶ բանկերում ավանդների դինամիկան և կառուցվածքը**



Իսկ վարկավորման ընդհանուր ծավալը 2009թ. հունվարից սկսեց կրճատվել ամսական 1-2%-ով<sup>3</sup>:

Լողացող փոխարժեքին անցնելու հետևանքով բանկերը միայն մեկ օրում՝ մարտի 3-ին 4.7<sup>4</sup> մլրդ դրամի վնաս կրեցին, ինչը հիմնականում պայմանավորված էր դրամով ավանդները դոլարով վերածնակերպելու հանգամանքով: Բայց այս վնասը խոշոր բանկերի համար զգալի կորուստ չէ և չի կարող որևէ ազդեցություն ունենալ բանկային համակարգի իրացվելիության մակարդակի վրա: Բանկերը նախորդ տարիների շահույթի հաշվին այն արագ կվերականգնեն:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի լուրջ ազդեցությունը բոլոր երկրների տնտեսությունների վրա միատեսակ չդրսևորվեց: Չնայած նրան, որ ճգնաժամը համընդհանուր

<sup>1</sup> Barajas, Adolfo, Giovanni Dell' Ariccia and Andrei Levchenko (2007), "Credit Booms: The Good, the Bad, and the Ugly", Washington, DC: International Monetary Fund, p. 8.

<sup>2</sup> Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն, Հայաստանի տնտեսության վրա տնտեսական ճգնաժամի ազդեցության իրավիճակային գնահատում, Երևան, 2009թ., էջ 23:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>4</sup> «Հայաստանի գրուցակից» թերթ, 04.05.2009, էջ 1:

բնույթ էր կրում, յուրաքանչյուր պետություն, ելնելով իր առանձնահատկություններից, ինքն է որոշում, թե ինչպես հաղթահարել այն:

Այս ամենից ելնելով՝ համառոտ ներկայացնենք այն առաջարկությունները, որոնք հնարավորություն կտան հնարավորինս նվազագույն կորուստներով դուրս գալ ճգնաժամից.

- բանկային համակարգի և բանկային ռիսկերի վերահսկման և կառավարման համակարգի ուժեղացում, ինչպես նաև անշարժ գույքի շուկայում վերահսկողության իրականացում,
- հնարավորինս նվազեցնել մեր երկրի կախվածությունը տրանսֆերտներից,
- վերականգնել Հայաստանի արտահանման հնարավորությունները՝ կապված արտահանվող ապրանքների պահանջարկի և գների նվազման հետ, փոխարենն ուշադրության կենտրոնում պահել ՓՄՁ-ին, որոնք զբաղվում են արտահանմամբ,
- ապահովել շուկայական գործընթացների նկատմամբ տեղեկատվության հասանելիություն:

**Тамара Арутюнян**

### **Причины и последствия глобального финансового кризиса в мире**

#### **Аннотация**

Финансовый кризис США постепенно начал распространяться по всему миру. В статье были изучены причины кризиса, их предпосылки, а также этапы и негативные проявления кризиса в мире и в экономике РА.

Степень влияния всемирного финансового кризиса на экономику Республики Армения была слаба в нескольких областях по ряду причин. Во-первых, кризис сократил объем денежных переводов из-за рубежа. Во-вторых, ипотечный рынок в Армении не взаимосвязан с международными рынками, которые испытывают финансовый кризис. В-третьих, банковская система Армении не имела проблемы ликвидности на первом этапе кризиса.

**Tamara Harutyunyan**

### **Cause Roots and Impact of the Global Financial Crisis Worldwide**

#### **Abstract**

The financial crisis originated in the United States, and then was transmitted virtually to the rest of the world. The main cause roots of the Crisis, negative impact on the World Economy, and on Armenia, in particular, are studied in the article.

The impact of the Global Financial Crisis on some industries of the economy was weak due to the following: first, remittances declined; second, the mortgage market in Armenia, per se, was underdeveloped with weak ties to the international markets, experiencing negative impact of the Crisis; and third, banking system in Armenia didn't report liquidity problem during the first phase of the Crisis.

**ՃՂՆԱԺԱՄԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ**

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի (ՀՖՃ) տարբեր երկրներում սոցիալական ազդեցության գնահատման համար մի շարք հայեցակարգային մոդելներ են առաջարկել Համաշխարհային բանկը (ՀԲ), Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) և այլ միջազգային կառույցներ և հետազոտական ընկերություններ: Առաջարկված հայեցակարգային հիմքերը հիմնականում առանձնացնում են տարբեր ճգնաժամի սոցիալական ազդեցության փոխանցման ուղիներ (ներկայացված են առանձին կամ որպես մեկ ընդհանուր խումբ), որոնք ազդում են տնային տնտեսությունների բարեկեցության վրա՝ որդեգրած ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունների պատճառով: Ինչ վերաբերում է ՀՖՃ-ի մակրոտնտեսական ազդեցությանը, ապա այստեղ հիմնականում ներկայացնում են ճգնաժամի փոխանցման «ֆինանսական» և «իրական» մեխանիզմները (կախված երկրի զարգացման մակարդակից), դրանց փոփոխությունները, ինչպես նաև ներկայացվում է ՀՆԱ-ի և որոշ մակրոտնտեսական ցուցանիշների (պետական պարտք, իրական աշխատավարձ, ՍԳԻ և այլն) փոփոխությունը: Իսկ ՀՖՃ-ի ազդեցությունը հիմնականում ներկայացվել է առանձին երկրների կամ մի քանի երկրների օրինակով, որոնք տնտեսական զարգացման մոտ մակարդակ ունեն: Առանձին նաև դիտարկվում է ընկերությունների (նաև ՓՄՁ-ների) վրա ՀՖՃ-ի ազդեցությունը:

Սակայն նշված մոտեցումները չեն դիտարկում ՀՖՃ-ի իրական ՀՆԱ-ի վրա ազդեցությունը տնտեսության հիմնական մասնակիցների (կառավարություն, մասնավոր ընկերություններ, տնային տնտեսություններ) վրա փոխանցված ազդեցության ներքո, և ինչպես է դրանց որդեգրած արձագանքը կամ ճգնաժամի հաղթահարման ռազմավարություններն ազդում իրական ՀՆԱ-ի փոփոխության վրա: Մյուս կողմից կարևորվում են այն սկզբնական պայմանները, որոնք առկա են տնտեսության տարբեր մասնակիցների մոտ նախքան ճգնաժամը, քանի որ դրանցով է պայմանավորված լինելու ինչպիսին կլինի հիմնական մասնակիցների արձագանքը, որով էլ պայմանավորված է լինելու ազդեցությունն իրական ՀՆԱ-ի վրա: Այդ իսկ պատճառով հողվածի նպատակն է ներկայացնել նոր հայեցակարգային մոդել՝ տնտեսության հիմնական մասնակիցների սկզբնական պայմանների պարագայում, դիտարկել ՀՖՃ-ի ազդեցությունը իրական ՀՆԱ-ի վրա՝ ի պատասխան տնտեսության հիմնական մասնակիցների վրա ՀՖՃ-ի տարբեր փոխանցման մեխանիզմներով փոխանցված ազդեցության:

Տնտեսության հիմնական մասնակիցները խոցելի են «իրական» փոխանցման մեխանիզմների կամ էլ «ֆինանսական» համարվող օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) հոսքերի նկատմամբ: Այդ իսկ պատճառով փոխանցման մեխանիզմները նաև որոշում են տարբեր մասնակիցների խոցելիության աստիճանը ճգնաժամի ազդեցության նկատմամբ: Հաշվի առնելով տարբեր հեղինակների կամ կազմակերպությունների կողմից դեպի ցածր եկամուտներ ունեցող<sup>1</sup> կամ զարգացող երկրների, ինչպես նաև դեպի Հայաստան նշված փոխանցման ուղիները (տե՛ս աղյուսակ 1) և «խոցելիությունից դեպի ճգնաժամ» բնութագրիչների հայեցակարգային մոդելը<sup>2</sup>, մեր կողմից առաջարկվում է դիտարկել դեպի ՀՀ իրական հատված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի փոխանցման հինգ մեխանիզմ (արտահանման 4 ապրանքների խումբ<sup>3</sup>, զբոսաշրջություն<sup>4</sup>, դեպի ՀՀ իրական հատված ՕՈՒՆ-ի հոսքերը, ընթացիկ պետական

<sup>1</sup> ՀՆԱ-ի մեկ շնչի հաշվով:  
<sup>2</sup> Islam, Iyanatul, (2009). *The Global Economic Crisis and Developing Countries: Transmission Channels, Fiscal and Policy Space and the Design of National Responses*, ILO Employment Working Paper No. 36, ILO, Geneva, pp5-6.  
<sup>3</sup> Պատրաստի սննդի արտադրանք, հանքահումքային արտադրանք, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր:  
<sup>4</sup> Զբոսաշրջիկների կողմից ՀՀ-ից գնված ապրանքների կամ իրենց մատուցած ծառայությունների վրա կատարվող ծախսերը:



կառավարման տրանսֆերտներ<sup>1</sup>, և գործոնային եկամուտներ և՛ ընթացիկ մասնավոր տրանսֆերտներ<sup>2</sup>):<sup>3</sup>

Այս ուղիներից յուրաքանչյուրը տարբեր կերպ է ազդում յուրաքանչյուր տնտեսության հիմնական մասնակցի վրա: Ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտները հիմնականում ազդում են կառավարության վերջնական ծախսերի վրա, գործոնային եկամուտները՝ տնային տնտեսությունների վրա, մինչդեռ զբոսաշրջությունը, ՕՈՒՆ-ը և արտահանման ծավալները՝ մասնավոր ընկերությունների վրա:

Ինչ վերաբերում է նախնական պայմաններին, ապա ՉԲ-ն (2008թ.)<sup>4</sup> և մի շարք աշխատություններ առաջարկել են հիմնականում որպես սկզբնական մակրոտնտեսական համարվող պայմաններ դիտարկել բյուջեի և ընթացիկ հաշվի պակասորդները: Ինչ վերաբերում է տնային տնտեսություններին և մասնավոր ընկերություններին, այս մասնակիցների սկզբնական պայմաններին անդրադարձ չի եղել: Որպես այդպիսին սկզբնական պայմանները համարվում են սահմանափակումներ, քանի որ դրանցով ևս պայմանավորված է լինելու մասնակիցների արձագանքը (ՉՖՆ-ի ազդեցության պայմաններում): Որպես տնային տնտեսությունների և մասնավոր ընկերությունների սկզբնական պայմաններ առաջարկում ենք դիտարկել պարտքերն ու վարկերը, քանի որ դրանք ևս կկրճատեն տնային տնտեսությունների կողմից կատարվող վերջնական սպառման ծախսերը, իսկ մասնավոր ընկերություններ կկրճատեն կապիտալ ներդրումները և նյութական շրջանառու միջոցների պաշարները:

*Աղյուսակ 1*

**Համաշխարհային ֆինանսատնտեսական անկման կամ ճգնաժամի փոխանցման ուղիները դեպի զարգացող երկրներ և Հայաստան<sup>5</sup>**

Դեպի զարգացող երկրներ ՉՖՆ-ի իրական հատված փոխանցման ուղիները	Դեպի ՀՀ իրական հատված ՉՖՆ-ի փոխանցման ուղիները
Առևտուր (մետաղների, համաժողովրդական և գյուղմթերքի գներ, ծառայություններ (զբոսաշրջություն))	Տրանսֆերտներ
Առևտրի պայմաններ	Արտահանման պահանջարկի կրճատում
Միգրացիա և տրանսֆերտներ կամ դրամական փոխանցումներ	Հանձնարարների, մետղաների գների անկում
Օտարերկրյա զարգացման օգնություն (ODA)	Զբոսաշրջություն
Օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ)	Օտարերկրյա օգնություն (պետական աջակցության կամ օժանդակության հոսքեր)
	ՕՈՒՆ և մասնավոր կապիտալ

Որպես հայեցակարգային հիմք, որտեղ հաշվի են առնվում սկզբնական պայմանները և փոխանցման մեխանիզմները, համարվում է Իսլամի (2009թ.)<sup>6</sup> մոտեցումը, որի հիմքում ընկած է

<sup>1</sup> Տեխնիկական օգնություն, ֆինանսական օգնություն և հումանիտար օգնություն (դեղորայք, սնունդ, հագուստ, պլյուր, ցորեն, բրինձ և այլն):

<sup>2</sup> Զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների փոխանցումներ, ներառյալ սահմանային աշխատողների, աշխատողների դրամական փոխանցումներ, այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտներ:

<sup>3</sup> Ընթացիկ տրանսֆերտների ընտրությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ այն ուղղակիորեն ազդում է տնտեսական ակտիվության վրա:

<sup>4</sup> The World Bank, (2008). *Weathering the Storm: Economic Policy Responses to the Financial Crisis*, *mimeo*, World Bank, Washington DC: United States, pp3-5.

<sup>5</sup> Աղբյուր՝ Overseas Development Institute (2009) 'The Global Financial Crisis and Developing Countries: Synthesis of the Findings of 10 Country Case Studies', Working Paper No. 306, London, UK, pp2-17: UN-OHRLS, (2009) *The Impact of The Global Financial and Economic Crisis on the Least Developed Countries*, United Nations Office of the High Representative for the Least Developed Countries, Landlocked Developing Countries and Small Island Developing States, New York: Unites States, pp7-21: Islam, Iyanatul, (2009). *The Global Economic Crisis and Developing Countries: Transmission Channels, Fiscal and Policy Space and the Design of National Responses*, ILO Employment Working Paper No. 36, ILO, Geneva, p7: International Monetary Fund (2009b) 'The Implications of the Global Financial Crisis for Low-Income Countries', IMF, Washington D.C: Unites States, pp15-21: UNDP (2010), *Poverty and Social Impact Analysis of the Global Economic Crisis: Synthesis Report of 18 Country Studies*, New York: USA, p6: UN WFP VAM Food Security Analysis, (2009). *Rapid Assessment of the Impact of the Global Financial Crisis in Armenia*, Rome: World Food Programme, VAM Food Security Analysis, p12: [http://siteresources.worldbank.org/INTECA/Resources/Sudharshan\\_Eng.pdf](http://siteresources.worldbank.org/INTECA/Resources/Sudharshan_Eng.pdf) (վերջին այցելություն՝ սեպտեմբերի 3, 2012թ.): [http://www.pf-armenia.org/fileadmin/pfa\\_uploads/CRISIS\\_REPORT-FINAL.pdf](http://www.pf-armenia.org/fileadmin/pfa_uploads/CRISIS_REPORT-FINAL.pdf) (վերջին այցելություն՝ սեպտեմբերի 3, 2012թ.):


<sup>6</sup> Islam, Iyanatul, (2009). *The Global Economic Crisis and Developing Countries: Transmission Channels, Fiscal and Policy Space and the Design of National Responses*, ILO Employment Working Paper No. 36, ILO, Geneva, pp5-6.

ՀԲ (2008թ. և 2009թ.)<sup>1</sup> և ԱՄՀ (2009թ.)<sup>2</sup> մոտեցումները և այլ աշխատություններ: Սակայն այստեղ ևս չեն դիտարկվում տնային տնտեսությունների և մասնավոր ընկերությունների սկզբնական պայմանները, մինչդեռ տնային տնտեսությունների և ընկերությունների սկզբնական պայմանները ևս որոշիչ են լինելու տնտեսական աճի մակարդակի պահպանման և պետական բյուջեի չափի և ծախսերի ուղղվածության փոփոխության կարողության համար աղքատության մակարդակի ավելացումը կանխելու տեսանկյունից:

Այդ իսկ պատճառով առաջարկում ենք կիրառել «ՀՖՃ մակրոտնտեսական ազդեցություն՝ խոցելիություն սկզբնական պայմանների առկայությամբ» հայեցակարգային հիմքը մակրոտնտեսական ազդեցության գնահատման համար (տե՛ս գծապատկեր 1): Առաջարկվող ՀՖՃ-ի փոխանցման մեխանիզմներն ազդում են տնտեսության հիմնական մասնակիցների՝ տնային տնտեսությունների, կառավարության և մասնավոր ընկերությունների վրա (տարբեր ուղիները տարբեր կերպ, օրինակ՝ պատրաստի սննդի արտահանումը՝ մշակող ընկերությունների վրա, տրանսֆերտներն առաջին հեթրին տնային տնտեսությունների վրա, որոնք իրենց սկզբնական պայմաններից ելնելով որդեգրում են տարբեր ճգնաժամերի հաղթահարման ռազմավարություններ (ծախսերի կրճատում, եկամուտների ավելացում (ՀԲ, 2010թ.)<sup>3</sup>):

Գծապատկեր 1

**«ՀՖՃ մակրոտնտեսական ազդեցություն՝ խոցելիություն սկզբնական պայմանների առկայությամբ» հայեցակարգային հիմքը**



<sup>1</sup> The World Bank (2009) *The Global Economic Crisis: Assessing Vulnerability with a Poverty Lens*, February, Washington DC, pp.1-4: The World Bank, (2008). *Weathering the Storm: Economic Policy Responses to the Financial Crisis*, mimeo, World Bank, Washington DC: United States, pp3-5:  
<sup>2</sup> International Monetary Fund (2009) *World Economic Outlook: Crisis and Recovery*, IMF, Washington D.C: Unites States, pp133-170:  
<sup>3</sup> The World Bank. (2011), *The Jobs Crisis: Household and Government Responses to the Great Recession in Eastern Europe and Central Asia*, Washington, DC, pp33-37.

Տնային տնտեսությունների կողմից ծախսերի կրճատումը, ընկերությունների կողմից կատարվող ներդրումների կրճատումը, նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն, կառավարության կողմից ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված միջոցների, սոցիալական ծախսերի փոփոխությունն ի պատասխան ճգնաժամի ազդեցությանը (ճգնաժամի հաղթահարմանն ուղղված որդեգրած ռազմավարություններ) ազդում են ներքին պահանջարկի և զուտ արտահանման փոփոխության վրա, որի հետևանքով արձանագրվում է իրական ՀՆԱ-ի կրճատում:

Այսպիսով՝ կարծում ենք, որ մեր կողմից առաջարկվող հայեցակարգային հիմքը հնարավորություն է տալիս իրական ՀՆԱ-ի վրա ազդեցությունը գնահատել տնտեսության հիմնական մասնակիցների ազդեցության ներքո՝ պայմանավորված սկզբնական պայմանների և ՀՖճ-ի տարբեր փոխանցման ուղիների ազդեցությամբ, և այն ավելի համապարփակ է: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ընդգրկուն ներկայացնել ՀՖճ-ի ազդեցությունը և կարող է կիրառվել ցանկացած երկրի դեպքում, սակայն հնարավոր է, որ փոխանցման մեխանիզմները նույնը չլինեն՝ կախված երկրի զարգացման աստիճանից:

**Анна Макарян**

### **Концептуальная модель оценки макроэкономического воздействия кризиса**

#### **Аннотация**

В статье рассматривается новая концептуальная модель оценки влияния Глобального финансового кризиса на реальный объем ВВП страны, посредством воздействия путей распространения кризиса на главных экономических агентов, на которых, в свою очередь, влияют их первоначальные условия. В статье предлагаются перечень путей распространения кризиса на РА и первоначальные условия, влияющие на главных экономических агентов.

**Anna Makaryan**

### **A Conceptual Framework for Assessing the Macroeconomic Impact of the Crisis**

#### **Abstract**

The article proposes a new conceptual framework for assessing the impact of the Global Financial Crisis (GFC) on the real GDP of Armenia via the impact transmitted to main economic actors (households, firms and the government) through various channels that are affected by their respective initial conditions. The article identifies the channels that transmitted the GFC to Armenia and proposes initial conditions that affect main economic actors.

**ՃՈՒՑԱՄԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

Ժամանակակից պետության և հասարակության գերակա նպատակը տնտեսական կայուն և երկարատև տնտեսական աճի ապահովումն է և հասարակության յուրաքանչյուր անդամի համար բարեկեցիկ և ապահով կյանքի պայմաններ ստեղծելը: Այս նպատակների իրագործման համար պետական իշխանությունները ստեղծում են տնտեսական բարենպաստ գործունեության պայմաններ, ընդունում համապատասխան նորմատիվ իրավական ակտեր, պետական կարգավորող մակրոտնտեսական քաղաքականության միջոցով ապահովում են ազգային եկամտի հնարավորինս արդարացի վերաբաշխում՝ հոգուտ շուկայական տնտեսական հարաբերությունների անմիջականորեն չմասնակցող հասարակության սուբյեկտների, ինչպես նաև ապահովում են շուկայի ինքնակարգավորվող կառույցների գործունեությունը և զարգացումը: Պետական իշխանությունները տնտեսական զարգացման քաղաքականության տեսլականներից և ազգային շահերից ելնելով ստեղծում են տարածաշրջանային, միջազգային տնտեսական համագործակցության և փոխօգնության կազմակերպություններ՝ ժամանակավոր կամ մշտական գործող կառույցների ձևով ու ակտիվորեն մասնակցում տնտեսական հարաբերությունների ընդլայնմանը: Սակայն, հարկ է նշել, որ թվարկված դրական այս բոլոր քայլերը, ինչպես նաև տնտեսական համընդհանուր զարգացումը, ժամանակ առ ժամանակ, ուղեկցվում է տնտեսական անկումներով և ճգնաժամերով:

«Ճգնաժամ» բառը լատիներեն «crisis» բառի թարգմանությունն է, որը բառացիորեն լատիներեն նշանակում է «անցումային կետ»: Այստեղ, անդրադառնալով տնտեսական պարբերաշրջանի փուլերին, կարելի է նկատել, որ, իրոք, տնտեսական վերելքի մի որևէ կետից անցում է կատարվում տնտեսական պարբերաշրջանի հաջորդ հատվածին՝ անկման փուլին: Գոյություն ունեն տնտեսական ճգնաժամերի բազմաթիվ սահմանումներ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում այս երևույթը: Բերենք տնտեսագիտական գիտական գրականության մեջ տնտեսական ճգնաժամերին տրված մի շարք սահմանումներ:

Տնտեսական ճգնաժամերը տնտեսական համակարգի կամ դրա մեկ կամ մի քանի հատվածների հավասարակշռության երկարատև խախտումներ են, որոնք էապես ազդում են տնտեսության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Այդպիսի ցուցանիշներից կարելի է նշել՝ համախառն ներքին արդյունքը, գործազրկության մակարդակը, տնտեսական ակտիվության ինդեքսը, գների մակարդակը: Հարկ է նշել, որ տնտեսական ճգնաժամերը վերլուծելու և դրանց առանձնահատկությունները պարզելու համար անհրաժեշտ է ոչ միայն դրա պատճառների, այլ նաև այն բացասական ազդեցությունների նույնչափ մանրակրկիտ վերլուծությունը, որ դրանք թողնում են տնտեսության վրա:

«Ճգնաժամը հասարակական արտադրության ծավալների և տնտեսավարող սուբյեկտների վճարունակ պահանջարկների մեծության բռնի համապատասխանեցման շուկայական մեխանիզմ է: Դա տնտեսության գերարտադրության վիճակ է, որը խորապես ցնցում է ամբողջ տնտեսական համակարգը՝ թե հորիզոնական, և թե ուղղահայաց հարթություններում՝ վերևից ներքև»<sup>1</sup>:

«Տնտեսական ճգնաժամը՝ երկրի տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացումն է, որն ի հայտ է գալիս արտադրության զգալի անկումով, ստեղծված արտադրական կապերի

<sup>1</sup> Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), խմբ.՝ տ.գ.դ., պրոֆ. Գ.Ե. Կիրակոսյանի և տ.գ.թ., պրոֆ. Ի.Ե. Խլիաթյանի, Եր., «Տնտեսագետ», 2009, 752 էջ, 601-603 էջեր:

խախտումներով, ընկերությունների սնանկացումներով, գործազրկության աճով և դրանց արդյունքում՝ կյանքի կենսամակարդակի և բարեկեցության անկումով»<sup>1</sup>:

«Ճգնաժամը դա սոցիալ-տնտեսական համակարգում հակասությունների ծայրաստիճան սրացումն է, որը սպառնալիքներ է ներկայացնում արտաքին միջավայրում դրա կենսագործունեությանը»<sup>2</sup>:

Տնտեսական ճգնաժամերը միշտ գտնվել են տնտեսագետների սևեռուն ուշադրության կենտրոնում և, բնականաբար, հաշվի առնելով այդ երևույթների բացասական ազդեցությունները, այլ կերպ լինել չէր էլ կարող: Սակայն, այստեղ հարկ է նշել, որ տարբեր տնտեսագիտական դպրոցներ տարբեր կերպ են որակում և բացատրում տնտեսական ճգնաժամերը:

«Տնտեսական ճգնաժամերի ելությունը կայանում է շուկայում համախառն վճարունակ պահանջարկի նկատմամբ ապրանքային գերարտադրության, հասարակական կապիտալի վերարտադրության գործընթացի խախտումների, ընկերությունների զանգվածային սնանկացումների, գործազրկության աճի և այլ սոցիալ-տնտեսական ցնցումներում»<sup>3</sup>:

Տնտեսական ճգնաժամերի առաջացման հնարավորությունը և ամփոսափելիությունը պայմանավորված են ապրանքների արտադրության և դրանց սպառման միջև եղած մշտական հակասություններով: Շուկայական տնտեսության զարգացմանը զուգընթաց, ապրանքային և փողի շրջանառության ծավալների մեծացումը ավելի սուր են դարձնում վերոհիշյալ հակասությունների բնույթը:

Ճգնաժամերի պատճառները շատ տարբեր կարող են լինել: Մասնավորապես, դրանք կարող են լինել ինչպես օբյեկտիվ՝ կապված տնտեսության վերազինման ու նորացման հետ, այնպես էլ սուբյեկտիվ՝ կապված տնտեսական կառավարման քաղաքականության մեջ տեղ գտած սխալների և բացթողումների հետ:

Ճգնաժամերի պատճառները կարող են լինել արտաքին և ներքին: Արտաքին պատճառները մեծապես կախված են համաշխարհային տնտեսության մեջ տեղ գտնող մակրոտնտեսական զարգացումներից, ապրանքների և ֆինանսական ակտիվների միջազգային շուկաներում գնագոյացման առանձնահատկություններից, համաշխարհային վճարամիջոց հանդիսացող արտարժույթների գնողունակությունից և միջազգային ֆինանսական շուկաներում դրանց փոխարժեքների փոփոխման միտումներից, ինչպես նաև միջազգային մրցակցային դաշտում տիրող իրավիճակից:

Ներքին պատճառները կապվում են երկրի ներսում ձևավորված տնտեսական իրավիճակի ու տնտեսվարող սուբյեկտների տնտեսական հարաբերությունների, տնտեսության կառավարման պետական քաղաքականության, տնտեսության իրական հատվածի գործունեության առանձնահատկությունների, սպառման ծավալների, եկամուտների մակարդակի և այլ գործոնների հետ:

Երբեմն, մասնագիտական գրականության մեջ տնտեսական ճգնաժամը ներկայացվում է որպես ապրանքների և ծառայությունների շուկաներում համախառն առաջարկի և համախառն պահանջարկի անհավասարակշռության դրսևորում: Այսօրինակ ճգնաժամերը սկզբնական շրջանում մինչ արդյունաբերական տնտեսության կայացումը հանդես էին գալիս, հիմնականում, որպես գյուղատնտեսական արտադրանքի թերարտադրության ճգնաժամեր, իսկ արդեն 19-րդ դարի կեսերից՝ արդյունաբերական արտադրության և համախառն վճարունակ պահանջարկի մշտապես կրկնվող անհավասարակշռության երևույթներ:

Տնտեսական ճգնաժամերը իրենց բնույթով բազմաթիվ են: Դրանք կարելի է դասակարգել տարբեր չափանիշներից ելնելով:

Ըստ տնտեսության իրական հատվածի գործունեության արդյունքների հետ կապի՝ տարբերակում են գերարտադրության և թերարտադրության ճգնաժամեր: Գերարտադրության ճգնաժամի դեպքում շուկաներում ապրանքների զգալի ավելցուկ է կուտակվում՝ դրանց

<sup>1</sup> Экономика. Учебник./ Под ред. А.И. Архипова, А.Н. Нестеренко, А.К. Большакова. – М.: «ПРОСПЕКТ», 1999. – 800с.

<sup>2</sup> Эндрю Абель, Бен Бернанке Макроэкономика. - М.: Питер, 2008. - с. 111.

<sup>3</sup> Райзберг Б.А., Лозовский Л.М., Стародубцева Е.Б. Современный экономический словарь. – М.: ИНФРА-М, 1997. – 496 с.

նկատմամբ իրական համախառն վճարունակ պահանջարկի համեմատ: Այս տիպի ճգնաժամեր առաջանում են ազատ շուկայի պայմաններում իրական պահանջարկի ծավալի ոչ ճշգրիտ իմացության և համախառն արտադրանքի ոչ ճշգրիտ պլանավորման արդյունքում: Կոնկրետ արտադրողին հայտնի չէ, թե ինչքան է անհրաժեշտ շուկային իր արտադրանքից: Նշենք, որ առաջին գերարտադրության ճգնաժամերն առաջացել են Անգլիայում՝ դեռևս 17-րդ դարում: Շուկայական տնտեսության զարգացմանը զուգընթաց այս ճգնաժամերը սկսեցին կրել պարբերական բնույթ և ներկայումս հանդիսանում են տնտեսական պարբերաշրջանի փուլերից մեկը:

Թերարտադրության ճգնաժամի դեպքում, դիտվում է հակառակ պատկերը. շուկայում իրական համախառն պահանջարկը մեծապես գերազանցում է իրական համախառն առաջարկին:

Ըստ իրենց տևողության՝ ճգնաժամերը լինում են երկարաժամկետ ու կարճաժամկետ:

Երկարաժամկետ ճգնաժամերը տևում են մինչև 5 և ավելի տարիներ, իսկ կարճաժամկետ ճգնաժամերը, որպես կանոն, 1-ից 2 տարի:

Ըստ տնտեսության տարբեր հատվածների ընդգրկվածության՝ առանձնացվում են տնտեսական, ֆինանսական, ֆինանսատնտեսական, սոցիալական և սոցիալ-տնտեսական ճգնաժամեր: Տնտեսական ճգնաժամն ընդգրկում է միայն տնտեսության իրական հատվածը, ֆինանսականը՝ միայն ֆինանսական հատվածը, ֆինանսատնտեսականը՝ սկզբնական շրջանում ընդգրկում է ֆինանսական հատվածը, այնուհետև՝ նաև տնտեսության իրական հատվածը: Սոցիալական և սոցիալ-տնտեսական ճգնաժամերն ընդգրկում են բացի տնտեսությունից նաև երկրի և հասարակության սոցիալական ոլորտները:

Ըստ ֆինանսական շուկաների տարբեր հատվածների ընդգրկվածության և դրամական հոսքերի առանձնահատկությունների՝ գոյություն ունեն վարկային, բանկային, արժույթային, իրացվելիության ճգնաժամեր: Վարկային ճգնաժամն արտահայտվում է վարկերի խիստ պակասորդով և դրանց դժվար հասանելիությամբ, բանկայինը՝ բանկային համակարգի անկայունությամբ և դրա կաթվածահար վիճակով, արժույթայինը՝ արտարժույթի շուկաներում փոխարժեքների զգալի տատանումներով և դրանց գնողունակության անկումներով, իսկ իրացվելիության ճգնաժամը՝ կանխիկ փողերի խիստ պակասորդով:

Ըստ տնտեսության մեկ կամ մի քանի հատվածների ընդգրկվածության՝ առանձնացվում են ճյուղային, միջճյուղային և համընդհանուր:

Ճյուղային ճգնաժամն ընդգրկում է տնտեսության մեկ ճյուղ, միջճյուղայինը՝ մի քանի ճյուղեր, համընդհանուրը՝ տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը:

Ըստ տարածաշրջանային ընդգրկվածության ճգնաժամերը լինում են՝ ներերկրյա, տարածաշրջանային, համաշխարհային:

Ներերկրյա ճգնաժամերը տեղ են գտնում կոնկրետ երկրի տարածքում՝ հանդիսանալով զուտ տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացումների արդյունք: Տարածաշրջանային ճգնաժամերը ընդգրկում են որոշակի տարածաշրջանում գտնվող մի քանի երկրներ: Համաշխարհային ճգնաժամերն ընդգրկում են աշխարհի գրեթե բոլոր երկրների ինչպես առանձին ճյուղեր, այնպես էլ ամբողջ տնտեսությունը:

Ըստ ժամանակի ընթացքում կրկնվելու հատկանիշի՝ ճգնաժամերը դասակարգվում են մշտական, մասնակի, սեզոնային:

Մշտական ճգնաժամերը ժամանակի ընթացքում կրկնվելու հատկություն ունեն: Իսկ մասնակի ճգնաժամերը՝ յուրահատուկ են և իրենց բնույթով կրկնվող չեն: Սեզոնային ճգնաժամերը պայմանավորված են բնակլիմայական գործոնների ազդեցություններով, որոնք պարբերաբար խաթարում են տնտեսական բնականոն գործունեությունը: Որպես օրինակ կարելի է բերել գյուղատնտեսության մեջ երաշտների կամ կարկտահարման հետևանքով առաջացող կորուստները և դրանց հետևանքները:

Ըստ առաջացող հիմնախնդիրների բարդության և ընդգրկվածության ճգնաժամերը կարելի է դասակարգել մակրոճգնաժամեր և միկրոճգնաժամեր: Մակրոճգնաժամերին բնորոշ է հիմնախնդիրների բազմազանություն, դրանցում ընդգրկված բազմաթիվ տնտեսական և սոցիալ-

լական ոլորտներ, իսկ միկրոճգնաժամերին՝ եզակի խնդիրներ և ընդգրկված առանձին որևէ սոցիալ-տնտեսական ոլորտ: Սակայն, հարկ է նշել, որ միկրոճգնաժամերը իրենց ազդեցությունը փոխանցելով նաև տնտեսության մյուս հատվածներին՝ կարող են վերածվել մակրոճգնաժամերի: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ տնտեսության բոլոր տարրերը խիստ փոխկապակցված են և գտնվում են մշտական փոխազդեցության մեջ:

Ըստ տնտեսական անկումների բնույթի և տնտեսական հարաբերությունների վրա ունեցած ազդեցությունների՝ տնտեսական ճգնաժամերը կարելի է դասակարգել որպես պարբերաշրջանային, միջանկյալ և կառուցվածքային:

Պարբերաշրջանային ճգնաժամերը պայմանավորված են տնտեսության մեջ պարբերաշրջանների առկայության հետ: Տնտեսական ճգնաժամը՝ տնտեսական պարբերաշրջանի տնտեսական անկման փուլի սկզբից մինչև տնտեսական անկման հատակն ընկած հատվածն է: Միջանկյալ ճգնաժամերը ինքնաբուխ կերպով, ժամանակ առ ժամանակ, առաջացող տնտեսական ակտիվության և արտադրության տատանումներն են, որոնք որոշակի ժամանակով, սակայն, ոչ երկարատև, ընդհատում են տնտեսական վերելքը և աշխուժացումը: Ի տարբերություն ցիկլային ճգնաժամերի՝ սրանք, որպես կանոն, չեն բերում նոր ճգնաժամերի առաջացման, կրում են տեղայնացված բնույթ և երկարատև չեն:

Կառուցվածքային ճգնաժամերը՝ տնտեսության մեջ միջնյուղային անհամաձայնությունների աստիճանական և երկարատև կուտակման հետևանք են և բնութագրվում են տվյալ պահին արտադրության կառուցվածքի և ռեսուրսների արդյունավետ օգտագործման պայմանների փոփոխությունների միջև անհամապատասխանությամբ: Սրանք, որպես կանոն, կրում են երկարատև բնույթ, և վերջիններիս լուծման համար պահանջվում է երկարատև ժամանակահատված, որպեսզի տնտեսական հարաբերությունները հարմարվեն վերարտադրության գործընթացի նոր պայմաններին: Կառուցվածքային ճգնաժամի վառ օրինակներ են հումքային և էներգետիկ ճգնաժամերը: Մասնավորապես, այդպիսի ճգնաժամերից կարելի է առանձնակի նշել 1970-ական թվականներին տեղ գտած էներգետիկ ճգնաժամը, որի արդյունքում երկրների տնտեսություններին մոտ 5 տարի պահանջվեց հարմարվելու էներգակիրների նոր գնային պայմաններին, որոնք բարձրացան մոտ 4-5 անգամ:

Ըստ սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգում ունեցած ազդեցությունների և առաջացող հիմնախնդիրների տարբերակման՝ կարելի առանձնացնել տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական, կազմակերպչական, հոգեբանական ճգնաժամերի առանձին խմբեր: Տնտեսական ճգնաժամերն արտացոլում են երկրի տնտեսության, ինչպես նաև առանձին տնտեսվարող ընկերությունների տնտեսական գործունեության մեջ առկա սուր հակասությունները: Սոցիալական ճգնաժամերը արտացոլում են տնտեսական հարաբերությունների տարբեր մասնակիցների և խմբերի շահերի անհամապատասխանությունների բացասական դրսևորումները: Կազմակերպչական ճգնաժամերն առաջանում են երկրի տնտեսության, ինչպես նաև առանձին տնտեսական օղակների կազմակերպչական կառուցվածքի գործունեության և վերահսկողական մեխանիզմների անկատարության հետևանքով:

Տեխնոլոգիական ճգնաժամերը նոր տեխնոլոգիական նորամուծությունների հետ են կապվում, երբ շուկան ակնհայտ նոր տեխնոլոգիական լուծումների կարիք ունի:

«Հոգեբանական ճգնաժամերը կապված են սթրեսների, լարվածության, վախի, անվստահության, անբավարարվածության հետ: Դրանք հասարակության, կոլեկտիվի և տարբեր այլ խմբերի սոցիալ-հոգեբանական կլիմայում առաջացող ճգնաժամերն են»<sup>1</sup>:

Ըստ առաջացման անմիջական պատճառների՝ ճգնաժամերը կարելի է դասակարգել՝ բնական, հասարակական, էկոլոգիական: Բնական ճգնաժամերը առաջանում են մարդկության կյանքի բնական պայմաններից և այդ պայմաններում նրանց գործունեությունից: Հասարակական ճգնաժամերը կապվում են հասարակական հարաբերությունների տարբեր ձևերի արտահայտման հետ: Էկոլոգիական ճգնաժամերն առաջանում են բնակլիմայական պայմանների փոփոխություններից՝ կապված մարդու գործունեության արդյունքների հետ:

<sup>1</sup> Эндру Абель, Бен Бернанке Макроэкономика. - М.: Питер, 2008. - с. 115.

ճգնաժամերը կարող են լինել ինչպես կանխատեսելի, այնպես էլ անսպասելի: Նաև կարող են լինել ինչպես ակնհայտ, այնպես էլ թաքնված կամ լատենտային:

Սրանք այն հիմնական չափանիշներն են, որոնց հիման վրա սովորաբար դասակարգվում են ճգնաժամերը: Թեև, ուսումնասիրությունների առանձնահատկություններից և անհրաժեշտությունից ելնելով, դրանք կարելի է դասակարգել նաև այլ չափանիշերով:

**Карен Саргсян**

## **Природа, разновидности и классификация кризисов**

### **Аннотация**

В статье обсуждаются экономические кризисы и их отрицательные последствия на экономической системе. Кризисы классифицируются по разным критериям в зависимости от цели исследования. В данной статье представлены основные критерии, которые используются в экономической науке для классификации и идентификации кризисов.

**Karen Sargsyan**

## **The Entities of Crises, Their Types and Classifications**

### **Abstract**

Economic crises and their negative impacts on economic system is discussed in this article. Crises are classified with different criteria depending on aim of the investigation. The general criteria which is used in economics for classification of crises is represented in the article.

### **ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ.*

### **ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, պ. գ. թ.*

## **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՈՒՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ**

Տնտեսական համակարգը մշտապես զարգացում է ապրում, և այդ երևույթը ժամանակի ընթացքում իրենից ներկայացնում է պարբերաշրջանային գրծընթաց: Տնտեսական համակարգը երբեք հանգիստ վիճակում չի գտնվում: Տնտեսական ակտիվության և տնտեսության արդյունավետության մակարդակը ժամանակին համաքայլ բարձրանում է: Իհարկե, ակներև է, որ տնտեսական զարգացումը երկարատև ժամանակահատվածում վերընթաց բնույթ ունի, սակայն, ցավոք սրտի, պետք է նշել, որ այդ զարգացումը համաչափ և սահուն կերպով տեղի չի ունենում: Չնայած տնտեսության արդի ժամանակակից համակարգին և դրա կարգավորման փաստին, տնտեսական վայրիվերումները, ժամանակ առ ժամանակ, ուղեկցում են հասարակության ու տնտեսության զարգացմանը և յուրաքանչյուր անգամ նոր մարտահրավերներ ներկայացնում շուկայի մասնակիցներին և պետական իշխանություններին:

Համաշխարհային արդյունաբերական զարգացած տնտեսության կայացման շուրջ երկդարյա պատմության ընթացքում աշխարհի բազմաթիվ երկրներում տեղի են ունեցել ճգնաժամեր, որոնց արդյունքում նկատվել են արտադրության կտրուկ անկումներ, ապրանքների հսկայածավալ ավելցուկային կուտակումներ, գների կտրուկ տատանումներ, բանկային և



ֆինանսական այլ հատվածների փլուզումներ, փոխադարձ պարտավորությունների կուտակումներ, բազմաթիվ ընկերությունների սնանկացումներ և տարաբնույթ այլ բացասական երևույթներ:

Տնտեսական վերընթաց զարգացման առանձին հատվածներում տնտեսական վերելքը կամ աճը կարող է փոխարինվել տնտեսական անկումով, իսկ տնտեսական աճը, արտադրության և զբաղվածության բարձր տեմպերն ու տնտեսության համընդհանուր զարգացումը՝ ՀՆԱ ծավալների կրճատումներով, արտադրության ծավալների անկմամբ, գործազրկության աճով և այլ բացասական երևույթներով:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ երկրների ազգային տնտեսությունները չեն կարողացել խուսափել նշված բացասական երևույթներից, որոնք բացառիկ խորությամբ և ուժգնությամբ կրկնվել են համաշխարհային արդյունաբերական տնտեսության զարգացման ողջ ընթացքում՝ ժամանակ առ ժամանակ: Այդուհանդերձ, երկարատև ժամանակահատվածներում համաշխարհային տնտեսությունը ձեռք է բերել զարգացման ավելի բարձր մակարդակ, ինչն ակնհայտ է տնտեսական հիմնական ցուցանիշների վերլուծության արդյունքներով:

Վերը նշված հանգամանքները գտնվել են շուրջ երկդարյա տնտեսագիտական ուսումնասիրությունների թիրախում: Նշված ուսումնասիրությունները և վերլուծությունները հաստատում են այն փաստը, որ տնտեսությունը զարգանում է ոչ թե ուղղագիծ, այլ պարբերաշրջանների ձևով: Սա նշանակում է, որ տնտեսությունը միշտ վերելքի փուլում չի գտնվում և որոշակի ժամանակահատվածների ընթացքում գտնվում է մերթ զարգացման գագաթնակետի հատվածում, մերթ տնտեսական անկման հատվածում:

Ելնելով այդ հանգամանքից՝ տնտեսագիտությունը քննարկում է օրգանապես կապված երկու հասկացություն՝ *պարբերաշրջան* (ցիկլ) և *տրենդ*:

«Ցիկլ» բառը հունական ծագում ունի, որը թարգմանաբար նշանակում է «շրջան» (այստեղից էլ՝ հայերեն «պարբերաշրջան»), ինչը ենթադրում է, որ տնտեսական համակարգերը ժամանակի ընթացքում վերադառնում են իրենց նախորդ՝ տնտեսական հավասարակշռության վիճակներին: «Տրենդ» բառը թարգմանաբար նշանակում է «հակում», «միտում», որի բնորոշ հատկանիշներից մեկը երկարաժամկետությամբ է: Քանի որ տնտեսական զարգացման արդյունքները երկարաժամկետ առումով ունեն աճի միտում, ապա տնտեսական համակարգերի տրենդը, որի առավել ցայտուն օրինակը ՀՆԱ-ի աճն է, վերընթաց գծի տեսք է ստանում: Ուրեմն, վերելքից վերելք կամ անկումից անկում ընկած ժամանակահատվածը կոչվում է պարբերաշրջան, որի վերին ու ներքին կետերի և տրենդի միջև եղած հեռավորությունով չափվում է պարբերաշրջանային տատանումների աստիճանը: Տնտեսական պարբերաշրջանությունը ազգային տնտեսության պարբերաբար կրկնվող հավասարակշռության խախտումներն են, որոնք ուղեկցվում են արտադրության և համախառն պահանջարկի կրճատումներով, իսկ հավասարակշռության վերականգնման ժամանակ՝ դրանց աճով<sup>1</sup>:

Տնտեսական պարբերաշրջանի տնտեսագիտական բովանդակության վերաբերյալ տնտեսագետների շրջանում առկա են տարակարծություններ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

- տնտեսական պարբերաշրջանները՝ իրական ՀՆԱ-ի մեջ արտահայտված գործարար ակտիվության մակարդակի պարբերաբար տատանումներն են,
- պարբերաշրջանները ժամանակի որոշ կտրվածքներում տնտեսության կրկնվող վիճակներն են, որոնք բնութագրվում են մակրոտնտեսական միևնույն չափորոշիչներով,
- տնտեսական պարբերաշրջանները տնտեսական համակարգի հավասարակշռության պարբերաբար կրկնվող խախտումներն են, որոնք հանգեցնում են տնտեսական գործունեության ակտիվության խիստ կրճատման, անկումների ու ճգնաժամերի<sup>2</sup>:

Տնտեսական պարբերաշրջանը կարելի է ներկայացնել նաև որպես մի ճգնաժամից մինչև մյուս ճգնաժամն ընկած ժամանակահատվածը:

<sup>1</sup> Шимов В.Н. Мировой финансово-экономический кризис: последствия и пути их преодоления // Белорусский экономический журнал. - 2009. - №2. - с. 2-9.

<sup>2</sup> Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), խմբ.՝ տ.գ.դ., պրոֆ. Գ.Ե. Կիրակոսյանի և տ.գ.թ., պրոֆ. Ի.Ե. Խլիլաթյանի, Եր., «Տնտեսագետ», 2009, 752 էջ, 601-603 էջեր:

Դասական տնտեսական պարբերաշրջանների մեջ առանձնացնում են չորս հիմնական հատվածներ<sup>1</sup>: Դրանք են.

1. տնտեսական վերելք կամ պիկ
2. տնտեսական անկում
3. անկման հատակ
4. աշխուժացում

Տնտեսական պարբերաշրջանի առաջին փուլը վերելքն է: Այս փուլում տնտեսական զարգացման բարձր տեմպերն արտահայտվում են նոր ապրանքների ի հայտ գալով, նոր ընկերությունների ստեղծումով, տնտեսական նորամուծությունների աճով, կապիտալ ներդրումների աճով, տոկոսադրույքի և աշխատավարձի բարձր մակարդակով: Սակայն, հենց այս հատվածում էլ ի հայտ են գալիս ապրանքային պաշարների զգալի ավելցուկներ, իսկ բանկերը սկսում են անհանգստանալ իրենց հաշվեկշռի բավական «լարված» վիճակից՝ կապված մեծածավալ վարկային պորտֆելի ռիսկայնության հետ: Այսպիսով, տնտեսական վերելքը, որը տնտեսությունը զարգացման նոր մակարդակի է հասցնում, համապատասխան հող է նախապատրաստում տնտեսական ճգնաժամի ի հայտ գալու համար:

Տնտեսական պարբերաշրջանի երկրորդ փուլը՝ տնտեսական անկումն է: Այս փուլում տեղի է ունենում արտադրության և գործարար ակտիվության զգալի կրճատում, գների անկում, ապրանքների ավելցուկները զգալի չափերով աճում են, գործազրկությունը նույնպես աճում է, մեծանում է սնանկացող ընկերությունների թիվը: Միաժամանակ, հարկ է նշել, որ տնտեսության տարբեր ճյուղերի վրա տնտեսական ճգնաժամի ազդեցությունը տարբեր է լինում: Մասնավորապես, լայն և մշտական սպառման ապրանքների ու ծառայությունների ճյուղերում արտադրության ծավալները անհամեմատ ավելի քիչ չափերով են կրճատվում և, բանականաբար, այս ճյուղերը քիչ են տուժում տնտեսական ճգնաժամներից: Պարբերաշրջանների և ճգնաժամների ազդեցությունը տարբեր է նաև՝ կախված տվյալ ճյուղի մենաշնորհային կամ ոչ մենաշնորհային լինելուց: Եթե բարձր մոնոպոլիզացված ճյուղերում՝ չնայած պահանջարկի և արտադրության կրճատմանը, գները համարյա չեն իջնում, ապա, կապիտալի ցածր կենտրոնացվածություն ունեցող ճյուղերում պահանջարկի թեկուզ ոչ մեծ կրճատումը բերում է գների զգալի անկման: Ակնհայտ է, որ տնտեսության այս կամ այն ճյուղում մենաշնորհ ունեցող ընկերությունները շատ թեթև են տանում ճգնաժամի բացասական ազդեցությունները:

Տնտեսական պարբերաշրջանի երրորդ փուլը՝ դեպրեսիան է կամ «անկման հատակը»: Այս փուլը կարող է երբեմն բավական երկար ժամանակ ընդգրկել՝ մեկուկեսից մինչև երեք տարի: Այդ ժամանակահատվածում տեղի է ունենում տնտեսության, այսպես կոչված, հարմարեցում՝ նոր ստեղծված տնտեսական իրավիճակին և շուկայում ձևավորվող պահանջարկին՝ տնտեսական նոր հավասարակշռության վիճակի գալու համար: Այս փուլին բնորոշ են, գործարար ակտիվության պակասը, անվստահությունը՝ նոր ներդրումներ իրականացնելու համար: Գործարարների հավատը նոր տնտեսական իրավիճակին շատ դանդաղ կերպով է վերականգնվում, ուստի նրանք գերադասում են ցածր ռիսկային ներդրումները, չնայած այն հանգամանքին, որ գները և շուկայական պայմանները արդեն կայունանում են: Հիմնականում, այս փուլում տեղի է ունենում տոկոսադրույքների անկում:

Չորրորդ փուլը աշխուժացումն է: Մեծ ծավալներով աճում են կապիտալ ներդրումները տնտեսության իրական հատվածի տարբեր ոլորտներում, էապես աճում է համախառն պահանջարկը, դրա հետ մեկտեղ նաև գները: Ընդլայնվում են արտադրության ծավալները և զբաղվածությունը, աշխուժանում է հատկապես արտադրության միջոցներ մատակարարող ընկերությունների գործունեությունը: Այս փուլում ստեղծվում են նոր ընկերություններ: Աճում է նաև տոկոսադրույքի մակարդակը: Այս փուլն ավարտվում է մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների նախաճգնաժամային մակարդակին հասնելով: Այս փուլին հաջորդում է նոր՝ համեմատաբար ավելի բարձր մակարդակի, քան նախկին պարբերաշրջանի վերելքի փուլը:

<sup>1</sup> <http://worldcrisis.ru>

Այնուհետև, տնտեսական զարգացման նոր գալարապտույտը սկսում է իր հերթական ընթացքը, և նոր ճգնաժամի առաջացման համար նոր հող է նախապատրաստվում:

Տնտեսության ցիկլային կամ պարբերաշրջանային զարգացումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

- Շուկայական տնտեսության ինքնակարգավորման անկատարելությունը: Բարձր տնտեսական զարգացման տեմպերի առկայության պարագայում լրացուցիչ ռեսուրսներ են ներգրավվում արտադրության ոլորտներ, որոնք, իրենց հերթին, ստեղծում են հավելյալ եկամուտներ՝ տնտեսվարողների համար: Սակայն, երբ շուկայում համախառն սպառումը արդեն հագեցնում է, ապա արտադրողները ակնթարթորեն չեն կարող այդ իրողությանը արձագանքել: Որոշակի ժամանակային միջակայք է անհրաժեշտ, որպեսզի տեղեկատվությունը հասնի նրանց: Այդ իսկ պատճառով այդ ժամանակահատվածում դեռևս կարտադրվեն ավելցուկային ապրանքներ:
- Տնտեսության ճյուղային կառուցվածքի անհամասնությունները: Տնտեսության ճյուղերից մի մասի հնացումը, նոր ճյուղերի ստեղծումը, մյուսների զարգացումը, արտադրական ռեսուրսների տարածքային բաշխվածության առանձնահատկությունները պատճառ են դառնում տնտեսության անհամասնության, դրա անհամաչափ զարգացման և արտադրության անկումների:
- Հիմնական կապիտալի շարժի առանձնահատկությունները: Գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում նոր տեխնոլոգիական լուծումներ են առաջարկվում արտադրական գործընթացի կազմակերպման և իրականացման համար: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում հիմնական միջոցների մի մասը փոխարինել նորերով՝ ինչպես բնական, այնպես էլ բարոյական մշակվածության պատճառով: Այս երևույթը արտադրության միջոցների արտադրություններում առաջացնում է պարբերաշրջանային երևույթներ: Նման երևույթներ տեղ են գտնում նաև լայն սպառման ապրանքների արտադրություններում ներդրումների իրականացման գործընթացում: Ներդրումների պարբերական աճը բազմարկիչ ազդեցություն է ունենում այդ արտադրությունների համար և հետագայում նաև՝ ամբողջ տնտեսության համար:
- Հիմնական կապիտալի արժեքի շարժի բնույթը: Գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում աշխատանքի արտադրողականության աճը բերում է կապիտալի տեղաշարժերի դեպի ավելի արդյունավետ տնտեսական ոլորտներ<sup>1</sup>:

Սակայն, պետք չէ դիտարկել տնտեսական պարբերաշրջանները և ճգնաժամերը միայն որպես տնտեսական գործոնների ազդեցությունների հետևանք: Կան նաև այլ՝ արտաքին, այսպես կոչված, «էքստերնալ պատճառներ»: Դրանք այն արտաքին գործոններն են, որոնք գտնվում են տնտեսական համակարգի սահմաններից դուրս, ինչպես, օրինակ, հեղափոխությունները, պատերազմները, բնական աղետները, ժողովրդագրական փոփոխությունները, նոր ռեսուրսների հայտնաբերումը, գիտատեխնիկական նորամուծությունները: Գոյություն ունեն նաև գործարար ակտիվության սեզոնային տատանումներ, ինչպես օրինակ, գնումների մեծ աճը Սուրբ Ծննդյան, Նոր Տարվա և Սուրբ Ջատիկի նախաշեմին: Այս իրողությունները բերում են տնտեսական ակտիվության տարեկան տատանումների՝ հատկապես մանրածախ առևտրում<sup>2</sup>:

Ներկայումս, տնտեսագիտության մեջ դիտարկվում են տնտեսական պարբերաշրջանների մի շարք տարատեսակներ՝

1. կարճաժամկետ,
2. միջնաժամկետ կամ արդյունաբերական,
3. միջնաժամկետ՝ կառուցվածքային,
4. երկարաժամկետ:

Կարճաժամկետ պարբերաշրջանի միջին տևողությունը, ըստ գնահատումների, կազմում է մոտ երեք տարի կամ մի փոքր դրանից երկար: Սակայն, հարկ է նշել, որ գոյություն ունեն նաև

<sup>1</sup> <http://worldcrisis.ru>

<sup>2</sup> Экономическая теория: Учебное пособие / С.С. Носов. -М.: Экономистъ, 2003, с. 324.

մեկ տարի տևողությամբ պարբերաշրջաններ, որոնք առաջանում են, հիմնականում, բնակչի-  
մայական պայմանների փոփոխություններից և ժամանակի գործոնից:

Միջնաժամկետ կամ արդյունաբերական պարբերաշրջանները, ինչպես փորձը ցույց է  
տալիս, տևում են, որպես կանոն, 7-ից 12 տարի: Այս պարբերաշրջաններին բնորոշ են երկա-  
րատև տնտեսական հավասարակշռության խախտումները և արտադրության ոլորտում  
համամասնական փոփոխությունները:

Կառուցվածքային պարբերաշրջանները տևում են միջինը մոտ 15 տարի և կապված են  
հիմնական կապիտալի համալրման հետ: Սակայն, գիտատեխնիկական առաջընթացի պայման-  
ներում այս պարբերաշրջանների տևողությունը կրճատման միտում ունի:

Մեծ պարբերաշրջանները տևում են մոտ 50-60 տարի և պայմանավորված են, հիմնակա-  
նում, գիտատեխնիկական առաջընթացով: Այս պարբերաշրջանները շատ հաճախ անվանում են  
«Կոնդրատևյան պարբերաշրջաններ»՝ ի պատիվ ռուս հայտնի տնտեսագետ Նիկոլայ Կոնդրա-  
տևի, ով առաջինը հայտնաբերեց դրանք և տվեց դրանց տնտեսագիտական մեկնաբանությունը:

Այսպիսով, տնտեսական պարբերաշրջանները հանդես են գալիս որպես ազգային ու  
համաշխարհային տնտեսության շարժի յուրահատուկ դրսևորումներ և ժամանակի ընթացքում  
փոփոխվում են՝ տնտեսության տարերային շուկայական կարգավորման և պետական իշխանու-  
թյունների միջամտությունների փոխներգործության արդյունքում:

**Карен Саргсян**

**Армен Саргсян**

## **Циклы развития экономической системы и причины их возникновения**

### **Аннотация**

Экономические циклы являются закономерным явлением в течение всей истории  
развития индустриальной капиталистической экономики. В данной статье рассматриваются  
основные фазы экономических циклов и их особенности. В статье также представлены  
основные причины возникновения экономических циклов.

**Karen Sargsyan**

**Armen Sargsyan**

## **The Cycles of Development of the Economic System and the Reasons Causing Them**

### **Abstract**

Economic cycles are natural phenomena during the whole history of the development of  
capitalistic industrial economy. The main phases of the economic cycles and their peculiarities are  
discussed in this article. The main reasons causing economic cycles are represented in this article  
as well.

## **НОВЫЙ МИРОВОЙ ЭКОНОМИЧЕСКИЙ ПОРЯДОК: ТЕНДЕНЦИИ И РАЗВИТИЯ**

Мировой финансовый кризис, который начался осенью 2008 года ускорил процесс, который ведет к глобальной экономической перестройке и формированию нового мирового экономического порядка. Есть разные подходы и понимания проблемы перестройки мировой экономики. Некоторые считают, что в мире существует некая теневая «Элита Власти», которая держит в своих руках контрольный пакет акций всей мировой экономики, формирует основные мировые процессы, назначает и смещает национальные правительства, развязывает войны, назначает цены, определяет приоритетные направления науки и курсы национальных валют. Такие интерпретации имеют исторические корни и свидетельствуют о существовании в разные времена всякого рода тайных обществ или каст «посвященных», которые тщательно охраняли секреты власти и знания, играя ключевую роль в наиболее важных эпизодах истории человечества, начиная с Великой французской революции и победой большевиков в России в октябре 1917 года и кончая противостоянием сверхдержав и пр. Наша задача не раскрытие сути тайных обществ и их роли в мировой цивилизации (масоны, тамплиеры, розенкрейцеры, иллюминаты («просвещенные»), Ку-клукс-клан, «Золотая Заря», «Общество Туле», «Аненербе», «Наследие предков» и др.). Более важным представляется задача выявления основных очертаний структуры, известной под именем мирового правительства, что стала вырисовываться еще в конце прошлого столетия. Прототипом такого правительства может служить созданный в 1954 году Бильдербергский клуб с помощью мировой политической, финансовой, промышленной элиты. В 1973 году сформировалась Трехсторонняя комиссия с доминирующей ролью «тройки»: США, Англии и Японии.

Созданный в 1968г. Римский клуб поставил перед собой цель широкомасштабных социально-экономических исследований и эффективное использование ресурсов мирового сообщества для решения глобальных проблем. Была поставлена задача создания над-национального глобального Мирового Правительства, Мирового парламента, что позволило бы устранить различия в валютах, военных потенциалах, налогах на импорт и экспорт. В свою очередь, это может предотвратить войны и межнациональные конфликты с помощью образования таких институтов, как Мировые вооруженные силы, Мировая полиция, Мировая финансовая система, а также с помощью контроля над производством ядерного оружия, ядерной энергетики, ракетно-космической техники. При этом, основным принципом реализации отмеченных проектов является космополитизм. Однако, современные процессы в мировой экономике ярко подтверждают мысль о том, что наряду с процессом глобализации происходит процесс регионализации, что проявляется в формировании и развитии региональных союзов. Более того, после распада Советского Союза и, тем самым, крушения двухполюсного мира, происходит постепенный переход от однополюсного мира к многополюсному миру.

Об установлении нового мирового экономического порядка нами было заявлено более десяти лет назад. Об этом позже заявил бывший премьер-министр Великобритании Гордон Браун на мировом экономическом форуме в Давосе в январе 2009 года. К этому выводу приходят также многие руководители стран Запада, а также стран, с переходной экономикой. Программным документом, отражающим интересы многих постсоветских стран можно считать также статью Президента Казахстана Н. Назарбаева, опубликованную в «Российской газете» в феврале 2009 года, а уже в январе 2012 года был предложен новый проект «Г-глобал».

Переход к многополюсному миру сопровождается разными политическими и экономическими катаклизмами. Всеобщий процесс экономической глобализации является в каком-то смысле противовесом непрерывно протекающему процессу формирования региональных стратегических альянсов. Если в первом случае способствующими факторами являются свободная торговля и постепенные шаги международных организаций по устранению торговых запретов, то второй случай, очевидно, включает защиту общих интересов отдельных государств или отраслей экономики и политические элементы государственной поддержки. Основные тенденции влияния мировой экономики, в той или иной форме, воздействуют на все известные четыре формы экономического сотрудничества.

С распадом централизованной плановой экономики началось перераспределение зон влияния сверхдержав. Членство новых независимых государств в международных организациях посредством последних способствует не только устранению изоляции этих государств от мирового рынка, но также в общей сложности положительно воздействует на принятие благоприятных решений в пользу вышеупомянутых государств в данных структурах. Новый международный экономический порядок формируется в соответствии с общими требованиями как развивающихся, так и наших, в прошлом коммунистических, а ныне – новых независимых государств. В ряде экономических исследований делается попытка предвидеть тенденции и перспективы нового международного экономического строя и возможность сообразовывания задач государственного протекционизма и стратегических альянсов в процессе становления нового экономического порядка. На эти проблемы обращается внимание, в частности, на последних ежегодных встречах в Давосе. На таких встречах, в числе других вопросов, формируется подход к допустимым пределам образования самостоятельных (национальных) экономик на основе сравнительных преимуществ многополюсного мира. Несмотря на это, во многих программах формирования национальных хозяйств до сих пор не выявлена четкая ориентация страны на тот или иной полюс мировой экономики. Более того, в макроэкономических программах не предусмотрены в полной мере нынешние перемены, основные тенденции и возможные их воздействия на национальные хозяйства. В результате, в первые годы независимости в ряде постсоветских стран выявились определенные трудности при выборе членства во Всемирной Торговой Организации или Едином Таможенном Союзе СНГ.

С целью повышения эффективности и комплексности экономических реформ, проводимых в указанных странах, необходимо анализировать этот процесс, разрабатывать новую экономическую политику государства, придавая большое значение оздоровлению инвестиционной среды. Выявление основных тенденций мировой экономики, роли государственного протекционизма и стратегических альянсов в процессе становления нового экономического порядка, а также иностранных инвестиций и внешней торговли дают возможность не только делать прогнозы о возможном развитии мировой экономики, но и с помощью оценки сравнительных преимуществ выявить место и роль национального хозяйства как на разных уровнях международного экономического сотрудничества, так и в отдельных стратегических альянсах и международных структурах.

В условиях постепенно углубляющейся взаимозависимости национальных хозяйств, перемены, которые происходят в одной стране или в альянсе стран, имеющих значительные сдвиги в развитии, рано или поздно приводят к аналогичным переменам и в других странах. В итоге, образуются общие тенденции, которые не могут не влиять на среду международного предпринимательства. Изменения в этой среде, в свою очередь, обязательно требуют пересмотра подходов к управлению национальными хозяйствами. Иными словами, современные тенденции приводят к необходимости формирования нового, более приемлемого для международного сообщества, экономического порядка. Это, в

первую очередь, касается роли государства и государственного вмешательства, имея целью улучшения, общего климата развития международных экономических отношений.

Разные проявления государственного вмешательства служат, в частности, основой для опровержения известных постулатов классической экономической школы о том, что цены образуются и меняются в результате конкуренции. Обоснованием этого могут служить примеры, которые можно видеть не только в развивающихся, но и в промышленно развитых странах. В США, Канаде, Германии и в других странах Запада не конкуренция, а государство определяет максимальные и минимальные цены некоторых товаров и услуг. Например, минимальная заработная плата, максимальный уровень аренды квартир и коммерческих объектов, минимальный уровень цен стоматолога, услуги парикмахера, и т.п., определяются соответствующими федеральными или местными законами и не подлежат произвольным изменениям в результате рыночной конкуренции. Примечательно, что такое регулирование цен - совсем не новое явление. Оно имело место в период промышленной революции, в первые годы рождения капитализма, распространяясь в разных странах на различные сферы экономики. Закономерно, что правительство страны со сравнительно низким уровнем развития может определить цены на более широкий круг товаров и услуг до приобретения полноценной конкурентоспособности. Одновременно, не стоит упускать из виду, что цены могут быть благоприятными не столько для потребителя, но и для определенных кругов, обеспечивая им как среднюю норму прибыли, так и сверхприбыль. В этом смысле возрастает роль государственного вмешательства, направленного на ограничение монополий в рыночной экономике, применение антимонопольных законов и на вопросы, связанные с их применением. Государственное вмешательство в различных своих формах проявления в последнее время имеет тенденцию к возрастанию.

**Таблица**

**Изменения в государственном регулировании\***

	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999
Количество стран, представивших поправки к законам, регулирующим инвестиционную среду	35	43	57	49	64	65	76	60	63
Количество законодательных поправок, направленных на:	82	79	102	110	112	114	151	145	140
1 стимулирование иностранных инвестиций	80	79	101	108	106	98	135	136	131
2 создание препятствий для иностранных инвестиций	2	-	1	2	6	16	16	9	9

Указанные вопросы являются объектами исследований теорий Майкла Портера, Эли Гекшера, Роберта Рейха, Бертиля Олина, Бредли Шилера и других. Они рассматриваются в них в тесной взаимосвязи с проблемами роли современного государства, форм участия различных государств в мировой экономике, а также с основными тенденциями внутри мировой экономики, в частности, с выявлением и реализацией относительных преимуществ страны в соответствии с требованиями нового экономического порядка. С другой стороны, современные теории исходят из старых экономических учений – раннего меркантилизма, монетаризма, зародившихся в начале 16 века. Причисляя их практически к одним из основных компонент экономической политики, экономический прогресс той или иной страны будет обусловлен только простейшими методами – стимулированием экспорта и замещением импорта. Одновременно, без меркантилистских предрассудков, возможны также примеры развития национальной экономики и приобретения новых, мощных партнеров.

Надо заметить, что новые тенденции не ограничиваются только экономической сферой. Очевидно определенное влияние нового экономического порядка на политику общественных отношений и глобальные передвижения - даже на этапе формирования. С этой точки зрения трудно не согласиться с тем тезисом Андрея Козминского, согласно которому влияние очевидно и в связи с происхождением новых идеологий, и в связи с их практической реализацией. Последующие после холодной войны годы доказали, с одной стороны необходимость использования всех форм собственности, а с другой стороны – неизбежность ущербов, связанных с господством общественной собственности. Многолетняя мировая взаимозависимость рыночных хозяйств сильно повлияла на административно-плановую систему и привела к распаду советской империи. Эта тенденция в дальнейшем привела и к созданию Содружества Независимых Государств - благодаря совместным усилиям ряда бывших социалистических стран, находящихся на начальном этапе создания и развития рыночной экономики.

Все это влияет как на деловую среду, так и на систему образования с точки зрения подготовки специалистов, которые должны работать в новых условиях хозяйствования. Измененная идеология рано или поздно находит свое выражение в процессе преподавания новых предметов, в издании новых учебников и в области образования и науки.

Важно также рассмотрение современных теорий международной торговли с точки зрения возможностей их практического применения. Одновременно устанавливается связь современных теорий (в том числе учений, удостоенных Нобелевской премии) с теориями сравнительных и абсолютных преимуществ Адама Смита и Давида Рикардо, которые сформировались в 18 веке и дали наиболее реальную оценку самой сущности торговли. Эволюционное развитие основных теорий, касающихся международной торговли продолжается уже более четырёх с половиной веков. В частности, теория меркантилизма, которая сформировалась в Англии в середине 16-ого века, по сути своей была первой комплексной попыткой сделать теоретическое обобщение и выводы о тенденциях во внешней торговле. Она, в свою очередь, повлияла на разные направления внешней и внутренней экономической политики многих государств. Тенденцию крайней приоритетности экспорта в тот исторический период можно объяснить преобладающей в Европе в то время биметаллической денежной системой. Золото и серебро, как приемлемые средства оплаты, вызвали определенный интерес как в отношении добычи этих металлов, так и в отношении возможности их накопления. Экономически сильные и более развитые страны всячески старались расширить сферу своего влияния, взамен экспорта, получая большие количества золота и серебра (в дальнейшем только золота). Они старались ограничить импорт, имея целью сокращение вывоза этих металлов из страны. Такой односторонний подход, конечно, не был выгоден всем сторонам и не стимулировал международную торговлю, в частности, не увеличивал ее объемы. „Золотая лихорадка” обеспечила более выгодное положение только для некоторых стран, подняв их авторитет, одновременно увеличивая очевидную зависимость от них других стран. Теория британского экономиста Томаса Муна по настоящее время, в современном комплексе международных отношений, продолжает оставаться одной из основ экономической политики многих стран. Ошибочным представляется мнение о том, что только современные условия международной торговли вынудили экономистов искать новые пути для свободной торговли и здоровой конкуренции. Еще в 1752 другой британец – представитель классической политэкономии Дэвид Хьюм - опроверг предыдущую теорию данного периода и пытался обосновать теорию о том, что на самом деле в торговле между двумя странами ни одна из сторон не может иметь односторонние выгоды, если рассматривается сравнительно долгий период торговых отношений. Согласно Хьюму, доход одной страны в международной торговле обусловлен потерей доходов другой страны. И хотя теория нулевого результата подвержена обоснованной критике и была



опровергнута выдающимися представителями классической школы (в первую очередь А. Смитом и Д. Рикардо), однако еще рано говорить о полном поражении последователей Хьюма. Они пытаются не только делать теоретические обобщения, исходя из стратегических направлений и практических результатов внешней политики некоторых стран, но и сами активно участвуют в разработке и осуществлении вышеупомянутой стратегии, часто занимая ответственные посты в сфере экономического менеджмента.

Давние противники в торговых войнах направляют стрелы взаимных обвинений в адрес друг друга. В частности, по убеждению выдающихся американских политиков, нынешняя политика Японии - это ярко выраженное проявление неомеркантилизма. Япония с одной стороны пытается выглядеть сторонником свободной торговли. С другой же стороны - под покровительством правительства Японии некоторые отрасли экономики "закрываются" для внешней конкуренции и свободной торговли. Если рассмотреть неомеркантилизм как одно из более очевидных явлений, то можно сделать следующие выводы: на президентских и парламентских выборах в разных странах часто достигают успехов политические деятели, пропагандирующие национальные идеологии и обещающие новые рабочие места. Когда эти предвыборные программы представляет кандидат в президенты страны, обещая лучше всех защищать интересы народа, то после его избрания на этот пост, правительству страны не остается альтернативы, кроме как выработать соответствующую стратегию и осуществлять ее. Поэтому, видимо, правилен вывод, что выборы выигрывают гибкие политические деятели, а за их программы в дальнейшем отвечают экономисты и правительства, сменяющие друг друга.

Возникает также необходимость изучения результатов динамичных изменений, имеющих место в результате свободной торговли, вызывающей новый спрос на рабочую силу и инвестиционный капитал. Шведские экономисты Эли Гекшер (1919 г.) и Бертил Олин (1933 г.) выдвинули теорию наличия производственных факторов, согласно которой страны должны экспортировать такие товары, для производства которых имеются необходимые факторы и можно получить низкую себестоимость. В то же время, импортировать надо такие товары, для производства которых или отсутствуют необходимые факторы, или они производятся по высокой себестоимости. В отличие от теории Рикардо, в международной торговле учитывается наличие производственных факторов данной страны. Надо заметить, что, наряду с некоторыми достоинствами, теория Гекшера плохо прогнозирует будущее, а теория Рикардо более приемлема для прогнозирования тенденций международной торговли и для разработки соответствующих программ.

В середине 1960 годов массовое распространение получила теория жизненного цикла продукта Раймонда Вернона. Согласно этой теории, в XX веке США стала родиной производства ряда новых товаров (компьютеров, фотоаппаратов, видеокамер, полупроводников, копирующих инструментов и т.д.). Теория Р. Вернона показывает логическую связь явлений и фиксирует экономические закономерности, характерные для определенного промежутка времени. Эта теория является справедлива в основном для послевоенного периода, а, точнее, для 1945-1975 гг., когда значительная часть товаров впервые создавалась и производилась в США. В дальнейшем появились страны, в частности, Япония, Германия, Англия, Франция и др., где стало возможным производство тех же товаров по сравнительно низкой себестоимости. Что касается нынешних условий, то, согласно многим исследованиям, образовались две закономерности. Первая - благодаря рекламе и другим необходимым шагам осуществляется одновременное представление и производство нового товара, а также массовое его потребление. Сегодня товар производится или собирается в одной стране и экспортируется на некоторые рынки. Что касается роли США в производстве ряда товаров, то теория Вернона в какой-то степени потеряла свою силу. Другая закономерность касается не столько готовых товаров, сколько необходимого оборудования для их произ-

водства. Отношения развивающихся стран с развитыми странами в основном имеют тенденцию в сторону изменения структуры внешней торговли в направлении от обмена готовых товаров за сырье и материалы до импорта оборудования для производства этих товаров. Рано или поздно, получив эту возможность, развивающиеся страны заменяют импортируемые товары производством собственных товаров, которые, при условии обеспечения должного уровня качества, становятся более конкурентоспособными, благодаря сравнительно низким ценам. В итоге товары, произведенные в развивающихся странах вытесняют товары, экспортируемые из развитых стран. Причём, не только из рынка данной страны, но и, благодаря конкурентоспособности и низким ценам, это становится возможным и на рынках других стран. Наконец, в результате развертывания свободной и беспрепятственной торговли, становится возможным даже вытеснение товарами, производимыми развивающимися странами своих аналогов, производимых в развитых странах, где и производятся средства производства этих товаров. Это явление становится похожим на эффект австралийского бумеранга. Это и является одной из основных причин того, что развитые страны более осторожно подходят к переговорам с развивающимися странами по их заявкам на «оборудование в обмен на сырье».

В экономической литературе распространена и новая теория торговли. В начале 70-х годов многие экономисты с некоторым недоверием стали относиться к той обоснованной теории, согласно которой при больших объемах производства уменьшается прибыль. Мировой спрос на товары некоторых отраслей промышленности может помочь только ограниченному количеству предприятий. Важным также является преимущество появления первым в данной отрасли. Выбрав этот путь конкуренции, сегодня две из трех компаний по производству самолетов являются американскими. Новая теория противоречит теории Гекшера, но соответствует теории сравнительных преимуществ, в большей мере доказывая жизнеспособность последней. Одновременно трудно сделать какие-либо выводы о том, насколько может быть эффективна новая теория торговли в объяснении сущности и характера международной торговли и в осуществлении новых тенденций прогнозирования. Более того, новая теория пока не подтверждается практическими данными, чтобы стать убедительной, либо чтобы с серьезными основаниями доказать обратное.

Насколько все это важно в реальной жизни для реализации практических программ? Очевидны как минимум три основные стороны, имеющие практическое значение: фактор местности, фактор появления первым в данной отрасли и фактор политики. Фактор местности более удачно можно представить на примере малогабаритных компьютеров (laptop): технологический дизайн осуществляется в США, стандартные части производятся в Тайване и Сингапуре, а готовая продукция собирается в Мексике. Что касается фактора первого вступления, то в этом вопросе Япония опередила США и Европу. Современные теории используются крупными компаниями в лоббистской деятельности для влияния на правительство. Это, в свою очередь, находит свое отражение в политике государства: свободной торговли или протекционизма. С целью сокращения и устранения государственной опеки, пропагандистская активность предпринимательских структур по отношению к правительствам разных стран помогает сохранять существующую структуру свободной торговли. В результате либерализации торговли повышаются абсолютные объемы экспорта. Причем, замечается следующая тенденция: уменьшение удельного веса сырья и горючего в мировой торговле сопровождается ростом удельного веса готовых продуктов и услуг.

Таким образом, рассмотренные теории имеют свои как положительные, так и отрицательные, а также теоретические и прикладные стороны. Несмотря на то, что для внешней экономической политики трудно выбрать какую-нибудь одну теорию, для каждой данной ситуации, для достижения собственного успеха и для укрепления основ нового экономического порядка, важно использовать наиболее приемлемые стороны разных элементов теорий.

В настоящее время все чаще приходится говорить не столько о свободной, сколько о справедливой конкуренции. В мировой экономике становятся популярными современные проявления субсидированной внешней торговли и государственного протекционизма, проявления новых форм и методов реализации конкурентных преимуществ. В этой связи, а также по поводу основных тенденций, проявляющихся на данном этапе развития, необходимо учитывать мнения видных экономистов. До сих пор между руководителями развитых и развивающихся стран преобладают противоречия в вопросе о возможности обеспечения экономической и политической независимости страны с одной стороны, и об активном участии во всемирном процессе экономической интеграции - с другой стороны. После второй мировой войны было замечено значительное уменьшение торговых барьеров, что в основном являлось причиной двух процессов. Во-первых, из-за подписанного после войны Генерального соглашения о торговле и тарифах (ГАТТ), в рамках которого более 100 стран, на основе принципов взаимности и исключения дискриминации, отменили налоги на импорт и экспорт на основе двухсторонних, а потом и многосторонних торговых переговоров. Эта тенденция продолжается и сегодня в виде шагов, предпринимаемых Всемирной Торговой Организацией (ВТО), и носит всеобщий и глобальный характер. Другой подход торговой либерализации, главным образом на региональном уровне, включает программы торговых преференций, где торговые налоги сокращаются только в рамках стран-участниц. Из этого следует вывод, что иногда приходится использовать элементы дискриминации в отношении третьих стран. В ограниченных кругах реализация таких программ приводит к экономическому слиянию. В течение последних пяти десятилетий наиболее известны Североамериканская зона свободной торговли (НАФТА), Европейское Экономическое Сообщество (ЕЕС) и Европейская Ассоциация Свободной Торговли (ЕФТА), которые сегодня слились воедино в рамках Европейского Союза (ЕС), особенно после замены национальных валют единой валютой – евро. Из развивающихся стран наиболее известны Ассоциация Стран Юго-Восточной Азии (АСЕАН), Ассоциация Свободной Торговли Латинской Америки (ЛАФТА), три аналогических альянса в Африке и другие. Практическое применение экономического учения выражается также в том, что политические перемены последних лет заметно повлияли на динамичное развитие мировой экономики в целом. В частности, в результате разрушения коммунистической системы и двухполюсного мира, а также других явлений, стала еще более актуальной теория конвергенции Джона Гелбрейта, которая в свое время была подвергнута критике не только в учебниках по политэкономии в СССР и в восточно-европейских странах, но и в работах западных теоретиков в 1970х -1980х годах. Теория конвергенции сегодня стала популярной как на Востоке, так и на Западе.

Таким образом, либерализация торговли предполагает две основных формы. Первая форма включает сокращение торговых ограничений, импортных и экспортных тарифных ставок, что исходит из принципа исключения дискриминации, применяемого мировым торговым сообществом. Другой подход, имеющий географический характер, больше распространен в Европейском Союзе, в рамках которого страны-представители разрабатывают и реализуют программы преференциальной торговли, развития и кооперации.

Для многих развитых стран импорт конкурентоспособных товаров, удовлетворяя потребности населения своими доступными ценами, в то же время, отрицательно влияет на экономику, сокращая местное производство аналогичных товаров, увеличивая безработицу, вывоз капитала из страны, и, соответственно, уменьшая денежную массу. Это приводит к увеличению цен, потере места на мировом рынке и т.д. Эти аргументы более популярны именно в период экономического кризиса, когда значительно возрастает уровень безработицы.

Другой аргумент касается проблем регулирования внешней торговли и отрицательных платежных балансов с помощью импортных ограничений. Еще один аргумент, оправдывающий государственный протекционизм, касается стратегических отраслей промышленности

и тех производств, которые обеспечивают национальную и экономическую безопасность и защищенность страны.

Какие выводы можно сделать из перечисленных аргументов теоретиков, выступающих за государственный протекционизм и за свободную торговлю? Насколько целесообразен отказ от импорта готовых продуктов и замена их продуктами местного производства, имеющими более высокую себестоимость? Когда и как применять налоги на импорт и экспорт, количественные ограничения торговли, нетарифные механизмы торговых запретов? Отвечая на эти и другие, производные от них вопросы, важно руководствоваться принципами экономической эффективности, отделяя их от политических причин и мотивов.

Если в какой-нибудь отрасли хозяйства, требующей долговременных инвестиций, неожиданно будут введены новые ограничения, то такие изменения могут непосредственно повлиять на авторитет государства, нанося большой урон и экономике, и уровню жизни населения.

Те проявления государственного протекционизма, которые направлены на покрытие дефицита торгового баланса, также нуждаются в дополнительном анализе. Исследования в этой области дают основания для следующего вывода: разница в экспортно-импортных сделках в торговле товарами отнюдь не отражает реальную картину экономической мощи страны. Например, результаты, полученные от инвестиций в разные отрасли экономики США различными странами, суммарно и количественно в несколько раз превышают дефицит внешнеторгового баланса США.

К этому можно добавить и результаты нигде не зарегистрированных негосударственных частных инвестиций, которые также имеют позитивное влияние на экономическую безопасность, уровень жизни населения и на темпы роста экономики.

Имея влияние на значительную долю уставных капиталов Всемирного Банка и Международного Валютного Фонда, США вместе со своими политическими союзниками, с момента основания этих организаций, вели финансово-экономическую политику, благоприятную для данной политической ориентации в отношении развивающихся и различных постсоциалистических стран. Членство новых стран с рыночной ориентацией в международных организациях сегодня существенно изменило удельный вес развивающихся стран. В целом, развивающиеся страны, имея больше голосов в МВФ и ВБ, в состоянии, совместно с демократическими и независимыми странами, иметь большое влияние на процесс принятия решений, в итоге нацеливая их на интересы развивающихся стран. Таким образом, в течение времени, развивающиеся страны могут лоббировать свои интересы в целях получения льготных кредитов и в других вопросах.

Важно также рассмотрение процесса экономического слияния современных форм завоевания новых рынков и стратегических альянсов, учитывая возможные риски и недостатки указанных явлений. В целом, все типы экономической интеграции напрямую зависят от двух важных тенденций, характеризующих международный бизнес – глобализации и регионализации. Обе, в свою очередь, имеют тенденцию взаимопроникновения разных элементов и рассматриваются вместе с экономической политикой государства.

В настоящее время основными путями выхода на внешний рынок являются: экспорт товаров и услуг, реализация совместных программ, лицензирование, формирование сети реализации продукции, создание совместных предприятий с местными компаниями, основание представительств или дочерних компаний. Экспорт является наиболее распространенным и древним из отмеченных видов. Многие из нынешних компаний-гигантов начали свой путь завоевания новых рынков именно с экспорта. В то же время следует обратить внимание на различия политических и экономических условий в развитых и развивающихся странах, что не дает возможности последним не только реализовать свои конкурентные преимущества на внешних рынках, но и успешно конкурировать с искусственно занижен-

ными ценами субсидированных товаров и услуг, поступающих извне. Следовательно, необходимо обратить внимание на факторы, определяющие роль развивающихся стран в мировой экономике, в меняющихся условиях международной торговли, ставшими актуальными в образовании нового экономического порядка. Благодаря своей господствующей роли, группа развитых стран использует перемены в мировой экономике и политике в свою пользу. Выражая свое недовольство и объединив силы, развивающиеся страны еще в 1964г. присоединились к призыву Конференции торговли и развития ООН (UNCTAD). С ее помощью в последние годы значительно сократились торговые ограничения в торговле с развивающимися странами, стабилизировались цены на товары первой необходимости и на сырье, увеличились размеры материальной помощи развивающимся странам. Это осуществляется со стороны Организации экономического сотрудничества и развития (OECD), члены которой (30 стран) каждый год безвозмездно предоставляют один процент своего годового дохода развивающимся странам. Несмотря на это, многие развитые страны считают, что нет необходимости формирования нового экономического порядка, и что развивающиеся страны должны постепенно сами улучшить свое состояние, а не требовать быстрого роста национальных хозяйств. Такой подход полностью понятен, так как 3/4 экспорта развивающихся стран приходится на развитые страны, а из импортированных ими товаров составляет в денежном выражении 70% от общих ввозов развивающихся стран.

Характерно, что после второй мировой войны до начала 90-х в двухполюсном политическом мире не было особо крупных потрясений и сдвигов. Но после краха социалистической системы было положено начало не только ориентаций (которые, в принципе, начались в 1980-ых годах в Восточной Европе), но и формированию многополюсного мира, которое продолжается до настоящего времени. Такие внутриэкономические задачи, как инфляция, безработица, социальная напряженность, которые исходят из неудовлетворительного уровня прогресса ожидаемым результатам, вместе с сокращением объемов внутреннего рынка, спадом темпов торговли, отрицательными последствиями неплатежеспособности, негативно влияют также на внутривнутриполитические и внешнеэкономические отношения.

В создавшихся условиях растет роль международных организаций, особенно в политическом диалоге „Восток-Запад”, что превращается в экономический диалог и сотрудничество для получения нового качества и использования его для установления и развития взаимовыгодных связей. По оценкам экспертов, связи между развитыми и развивающимися странами в ближайшем будущем не потерпят серьезных изменений. Но можно ожидать сравнительно быстрые темпы экономического роста одних развивающихся стран по сравнению с другими, имея в виду их конкурентные преимущества, участие в стратегических альянсах и эффективную экономическую политику. С использованием национальных конкурентных преимуществ отправка большей части товаров будет концентрироваться в тех странах, где имеются наиболее эффективные производства с использованием недорогой и качественной рабочей силы, сырья, новых технологий, инноваций, новых способов организации производства и других важных факторов.

В условиях нового экономического порядка особенно обострится ценовая конкуренция, из которой выйдут победителями компании, которые предлагают товары с наименьшими разнищами цен. Одновременно, как и сейчас, в ближайшее время будет очень трудно предвидеть конкурентную цену новых товаров и услуг, в зависимости от возможного спроса на них. Компания, которая выпускает новую продукцию, не сможет долго держать высокую цену, так как найдутся конкуренты, которые предложат заменяющие продукты по более низким ценам. В международном ценообразовании большую роль будет играть также изменение валютного курса. Последние события, связанные с мировым финансовым кризисом 2008-2009гг. показали, что резкое изменение валютного курса может существенно

повлиять на конкурентоспособность многих товаров. В этом смысле создается также некая зависимость от политики национальных правительств в вопросах государственной поддержки и протекционизма для выбора путей выхода из экономического тупика.

Прошлое постепенно теряет свое значение как основа для прогнозирования будущего. Старые враги сегодня выступают как партнеры и союзники. Новый международный экономический порядок предлагает новые условия сотрудничества, принимая за основу идею сокращения непредсказуемости в будущем, одновременно, по мере возможности, стараясь поднимать политическую и экономическую стабильность во всем мире.

Убежден, что идеи, которые содержатся в предложенном “Проекте Г-глобал” не только своевременны, но и весомерно аргументированы и обоснованы. Более того, считаю важным подчеркнуть, что новый мировой экономический порядок станет реальностью лишь тогда, когда его установлением займутся не одни развитые страны, а все мировое сообщество. Надо признать полным провалом работу UNCTAD, которая так и не сумела реально содействовать процессу формирования нового мирового экономического порядка. Эта организация, созывая форумы раз в четыре года, ограничивается одними докладами и рекомендациями, которые принимаются развитыми странами в той мере, в какой они соответствуют их интересам. В остальном они просто игнорируются. Более того, деятельность этой организации в какой-то мере повторяет и дублирует функции ВТО, которая также имеет свои недостатки в управлении, в то же время обладает силой принуждения своих решений и правил игры вплоть до экономических санкций.

Вопреки усиливающейся тенденции глобализации, наблюдаются попытки совершенствования моделей развития национальных хозяйств, в лучшем случае – региональных образований типа ЕС. Так и не наблюдается никакой координации или попыток управления мировым хозяйством. Доллар, будучи мировой валютой, управляется финансовым менеджментом одной страны, а другая мировая валюта евро управляется региональными структурами. Очевидно, что настоящий выход из глобального финансового тупика возможен только тогда, когда в процессе управления мировым хозяйством будут участвовать также развивающиеся страны. В этом отношении, одобряя “Проект Г-глобал”, хочется верить, что именно такие страны как Казахстан, которые на деле доказали эффективность выбранного пути экономического развития, вправе инициировать глобальные экономические перемены и выступать в роли регионального лидера в деле установления нового мирового экономического порядка. Наконец, виртуальный Бреттон Вудс, или реально действующая международная организация, главной целью которой должен быть именно новый порядок, должна находиться не в развитых странах, вдали от реально заинтересованных сил и основных игроков – развивающихся стран, а со временем и может носить и ротационный характер.

Всем известен девиз “спасение утопающих – дело рук самих утопающих”, однако успех процесса сильно зависит также от последовательности.

## **Թարու Մանասերյան**

### **Միջազգային նոր տնտեսակարգ. միտումներ և զարգացումներ**

#### **Ամփոփագիր**

Համաշխարհային տնտեսության ներսում միջազգային առևտուրը, միջպետական համագործակցության բազմակողմ հարաբերությունները մշտապես կրում են տարատեսակ գործոնների անմիջական ազդեցությունը, և միջազգային տնտեսակարգի ձևավորումը դարձել է հրամայական: Պայմանների փոփոխություններն, իհարկե, նոր երևույթ չեն և դրանցից չպետք է խուսափել, քանի որ ճկուն քաղաքականություն որդեգրելիս վերջիններս կարող են օգտագործվել ի նպաստ երկրի տնտեսության և տարբեր կողմերի միջև նոր, փոխշահավետ կապերի հաստատման:

Նոր տնտեսակարգի կայացման գործում մեծ ներգործություն ունի միջազգային ֆինանսական միջավայրը, ուր հարցերի հարցը վճարունակության, արտաքին պարտքի խնդիրն է: Ըստ

որում, աճում է ոչ միայն զարգացող, այլև զարգացած երկրների կողմից կուտակված արտաքին պարտքը: Արտաքին պարտքը թույլ է տալիս արտաքին առևտրային բանակցություններում պարտքը մարող երկրից պահանջել հնարավորին չափ ցածր գներ՝ ապրանքների և ծառայությունների տեսքով դրա փոխհատուցման համար: Սա, իր հերթին, ապակայունացնում է տվյալ երկրների ներքին շուկան, իջեցնում (հիմնականում՝ զարգացող երկրների) տնտեսական աճի տեմպերը, կրճատում արտահանման կարողությունը, բացասաբար ազդում ապրանքների մրցունակության վրա: Միաժամանակ, զարգացած երկրները, գիտակցելով ազգային և տնտեսական անվտանգության հիմնահարցերի կարևորությունը, ինչպես նաև զարգացող երկրների շուկաների ապակայունացման դեպքում տնտեսական առաջընթացի սեփական հնարավորությունների սահմանափակվածությունը, շահագրգռվածություն ունեն զարգացող երկրների պարտքի ներման միջոցով ձեռք բերելու համագործակցության նոր որակ և արդյունքներ:

**Tatoul Manasserial**

## **The New Economic Order: Trends and Developments**

### **Abstract**

Global financial crisis had expedited the process leading to the establishment of the new economic order. Our goal is to identify the key features of the new economic order that shape the international business at sub-national, national and international levels and reveal the interaction of these factors in a dynamic political context. This, in turn, allows us to project various scenarios of growth for developed and developing countries in diverse political environments. We attempt to analyze the main challenges in globalization and fair competition in the world economy in conjunction with the major trends in developing countries and the call for the new economic order with the emergence of trade blocs. These topics are discussed considering the current issues of inflation, unemployment, budget deficits, environment, energy, poverty, trade, growth and development.

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ**

**ԳԻՐՔ 2**

Հրատարակչության խմբագիրներ՝  
Նյութերի հավաքագրող՝  
Համակարգչային ձևավորումը՝

Ա. Սահակյան, Ա. Հովակիմյան  
Ա. Զատիկյան  
Մ. Համբարձումյանի

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ  
Հասցեն՝ 0037, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փ. 15

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60×84 1/8:  
Ծավալը՝ 41 պայմ. տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100 օրինակ:

**Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:**